This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

WIDENER LIBRARY
HX 7UVC 1
Digitized by Google

OL 41905.52

VE RI TAS

HARVARD
COLLEGE
LIBRARY

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

# ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

Digitized by Google

Digitized by Google

# ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

# ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

## *ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ*

ԱՐՁԱԿ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԿՐԿԻՆ ԲԱՂԴԱՏԵԱԼ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԵԱԼ ԽՆԱՄՕՔ
ԸՆԴ ԲՆԱԳՐԱՑՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1887

Digitized by Google

~~GL~~ ~~41~~ 500.20.30 —

CL 41905.52

HARVARD
UNIVERSITY
LIBRARY
MAY 3 1961

Digitized by Google

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եռանդն յանուց հետէ արծարծեալ յազգիս 'ի բանասիրութիւն և 'ի կիրթ ախորժակս, յորդորէ զմեզ օժանդակել ջանից նորա՝ ըստ մերումս կարի, մանաւանդ առ 'ի դիւրութիւն վարժարանաց և վարժապետաց։ Յայտնի է ամենեցուն, զի 'ի դեղեցիկ և 'ի ճարտարաճիւս շարադրութիւն՝ ոչ բաւեն քերականութիւնք և բառարանք և կանոնք քերթողականք. այլ պարտ է քերականին վերծանել առաջի աշակերտի ընտիր շարադրածս նախնեաց, և տոգորել 'ի նոսին, որպէս զի ըստ այնոցիկ և շարադրածք իւր յաջողեսցին։ Քերականական շարադրութիւն ոչ 'ի ճոխութեան և 'ի խրթնութեան բառից է, այլ յընտրութեան նոցին. ոչ յանսովոր ձևս իմն բանից, այլ 'ի ճարտար հիւսուած նոցին, զորս է ուսանել յօրինակագիր մատեանս։ Յաստուածաշունչ գիրս մեր, յորս են ամենայն ազգի ազգի մատենագրութիւնք, պատմականն և վարդա

պերճական, ճարտասանականն և բանաստեղծական, վսեմն և գեղեցիկ, խիստն և փափուկ, չեն 'ի նոսա բաղ խրթինք և ձևք շարագրութեան անսովորք. զի ընտրելագոյն բնականն է և ինքնազարդ գեղեցկութիւն։ — Ջսոյն է իմանալ և զճարտասանութենէ. զի ոչ 'ի բոմբիւնս բանից, և արուեստակեալ ձևոց, ոչ 'ի հետազօտեալ իմաստս և յասիական ճոռոմ և ճամարտակ բացատրութիւնս է ճարտարխօսութիւն, այլ յընտրութեան բանից և ձևոց, իմաստից և բացատրութեանց, զորս դիւրագոյն է օրինակօք ուսանել։ Գիտէ և համբակ հռետորականին, զի պարտ է ատենախօսի անդէն 'ի սկզբան յայտ առնել զպատճառս առաջիկայ ճառին, և համառօտել զպատմութիւն իրացն՝ զորոց է վէճն և դատաստան, և զկարևորութիւն նոցին յայտնել, որպէս զի առաւելագոյն մտադրութեամբ լուիցեն ունկնդիրք։ Այլ գիտել զկանոնս զայս սակաւ ինչ զօրէ։ Կիկերոնին յառաջաբան յաղագս Միլոնի ճառին՝ յոյժ առաւել օգնէ առ այս, քան զամենայն կանոնս։ — Նոյնպէս և 'ի վերջաբանին՝ յայտ է՝ զի պարտ է քաջի ատենախօսի բովանդակել կարճ 'ի կարճոյ զամենայն փաստաբանութիւն իւր, և մանաւանդ յուզել զկիրս ունկնդրաց. և ըզսոյն զայս է ուսանել 'ի նմին ճառի։ — Օրէնք են նամակագրութեան գոլ հակիրճ ըստ ոճոյն, և ընտանեկան՝ առանց հանդէս առնելոյ նամակագրին իւրումն հանճարոյ. զայս ևս է ուսանել յօրինակս անդ, մանաւանդ Կիկերոնին և Սեւինեայ տիկնոջ։ Զնոյն իմա և զայլոց ազգի ազգի մատենագրութեանց. զի յօրինակս անդ ուսանին համբակք զորպէսն 'ի գործ դնելոյ զկանոնս. զի այլ է գիտել օ-

Digitized by Google

րինակ իմն՝ զձեւս տառից, և այլ ձեւագրել զայնս, որ յաջողէ օրինակաւ և վարժիւք գեղեցկագիր գրչի։ — Այսորիկ աղագաւ զառաջիկայ մատեանս երկասիրեալ տամք 'ի լոյս՝ առ 'ի վարժ ճարտասանից, ծաղկաքաղ յընտիր մատենագրաց։ Եւ քանզի ոչ է գտանել առ մերազնեայս՝ ամենայնի օրինակ պատկանաւոր, մանաւանդ ատենականին և նախերգանաց, նամականւոյ և սոցին նմանեաց, հարկ եղև յօտար ազգաց տալ առ այժմ զսոցին ճաշակ. զորոյ զփորձ առեալ ընդունելութեան 'ի մերայոցն, ոչ դանդաղեսցուք տալոյ ընդ հուպ և 'ի մերոց անտի նախնեաց ընտիր ծաղկաքաղ։

Digitized by Google

## ԿԱՆՈՆՔ

# ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Յամենայն ժամանակի եղեն արք՝ որ զօրութեամբ ճարտարախօսութեան գիտացին իշխել այլոց. սակայն քաջ մատենագիրք և քաջ ճարտարախօսք 'ի ծաղկեալ ևեթ դարս կացին: Ճշմարիտ ճարտարախօսութիւն չյաջողէ առանց կրթութեան հանճարոյ և իմացականին հրահանգաց. զի խոյր մեծ է ընդ այս և ընդ բնականն այն դիւրութիւն խօսելոյ, որ ձիրք ևեթ բնութեան է՝ տըւեալ որոց զօրաւոր են կիրք, հլու զգայարանք, և աշխոյժ խանդ մտաց: Սոքա զգան սաստկապէս, ըմբռնեն ոչ ինչ նուազ, բացատրեն ազդողաբար, նիւթական ևեթ տպաւորութեամբ ներգործեն յայլս զեռանդումն իւրեանց և զզգացմունս: Մարմին առ մարմին խօսի անդ. շարժմունք և նշանք առհասարակ գործակից լինին 'ի նոյն: Ի՞ւ շարժի ամբոխն և ձգի զհետ. իւ առաւելագոյնք 'ի մարդկանէ յողդողդին և համոզին. սաստիկ իմն կամ 'որոտաճայթիկ բարբառով, աղդու և 'ի դէպ շարժուածով,

Digitized by Google

տրտում տրտում և քաղցրաքաղցր բառից հնչմունք: Այլ առ-
հասարակ այնոցիկ՝ որոց անկատարելի են միտք, կերթ անար-
ժանք և փոփոխուն զգացութիւնք, առ որս ոչ գնան յեղ-
յեղմունք ձայնի, շարժմունք և անուշ բառից հնչմունք,
պարտ է գիտել ըստ օրինի կարգաւ և կապակցութեամբ
ընծայեցուցանել նոցա զբանն. չէ բաւական բաղխել
զունկն նոցա և զոչս գրաւել, պարտ է յոգիս նոցա ազ-
դել, և շարժել զսիրտ՝ առ միտս նոցա խօսելով:

Զոր ոճն առեալք, ոչ այլ ինչ է՝ բայց կարգ և կենդա-
նութիւն խմաստից, որ եթէ իցեն քաջ կապակցեալ և
կուռ զհետ միմեանց ածեալ՝ առաւել ոճ ազդու, զօրաւոր և
հաստիքոճ. իսկ եթէ յամր յաջորդեն խմաստք և 'ի ձեռն բա-
ռից եւեթ կցորդին, որչափ և ընտիրք իցեն, առաւել ոճ հա-
պաղ, թոյլ և դանդաղ:

Յառաջ քան զկարգն որով ունիմք յանդգնեալ ասել
զխորհուրդս, պարտ է միւս ևս կարգ հանրագոյն և հաս-
տատագոյն ունել զխառնուր առաւելութեանց և խմաստից,
առհմանելով ըստ այսմ զխառնուր կարգաւորութեան զանե-
գի նոցա՝ յորում առաւելակութեանն պարտ է բովանդա-
կել, և ընդարձակութեան նորա զաղ 'ի յայտ: Զայս առա-
ջին նախագիծ յար 'ի միտ ունելով, յաջողէ առհմանել
ըստ չափու զմիջոցս եկամուտ և յարակից խմաստից՝ որք
ունիցին լինել զայնս: Զօրութեան հանճարոյ է յանդգնեալ
ասել զայս առանձնայն հանդիսական և զանազանական խմաստս
ըստ իւրեանց խոկական երկրաւոր: Ամենաճառութը ընդարձա-
կութեամբ պարտ է զանազանել զամենայն խմաստս 'ի բնական-
ացոյց. և կարգաւորութեան՝ զոր վարժիւք մատենագրու-
թեան է առանձնայ, զուշակէ զաորդաւորս այսր առանձնայնի
զարթուցութեան մասանց: Եթէ առաւելագոյնութիւնն փոքու
ինչ ընդարձակ իցէ կամ բազմամասնեայ, դժուարին է
միով ամփոփութեամբ ամփոփել զայն կամ համառօտն 'ի
միջոց կալ այնոցիկ՝ նախնիքին միով ձգտմամբ հանճարոյ. և
յետ զճառս իսկ քաջ ածելոյ՝ դուն ուրեք յաջողէ ընկալ-
նել զառանձնայն մասունս նորա: Արդ ոչ է մարթ ըստ ար-

ժամ բաւականին պարապել յայն. և այսուիկ ևեթ է հնար հաստատել, ընդարձակել և ամրանալ զիմաստս. և որչափ յաւելուցու ոք տալ իմաստից այսոցիկ ոյժ և հաստատութիւն, նոյնչափ դիւրագոյն լիցի ապա իրացուցանել զայնոցիկ բացատրութիւն:

Սակայն ծրագիրս այս ոչ է ոճ, այլ խարիսխ նորին՝ որ 'ի վեր ունի զայն, վարէ և ուղղէ զշարժմունս նորա և նուաճէ զայն ընդ օրինօք. առանց այսորիկ մոլորի և քաջ մատենագիր. գրիչ նորա խաղայ առանց առաջնորդի, և տիպս բանից անկանոնս և ձևս տարաձէպս ըստ դիպուածոյ անճահագրէ: Որչափ և պայծառք իցեն երանգք զորս 'ի կիր առնու, որչափ և գեղեցիկ զմասունսն յօրինեացէ, եթէ բոլորն խիստ իցէ կամ հազիւ զգալի, ոչ է քաջ մատենագրութիւնն: Այսր աղագաւ որք հանգոյն խօսիցն իւրեանց մատենագրեն, թէպէտ և կարի քաջ խօսողք իցեն, այլ չեն բարւոք մատենագիրք. և որք առաջնումն բոցոյ երևակայութեան հպատակին, չկարեն պահել զայն անշէջ. որք երկնչինն թէ գուցէ անկցին 'ի մտաց նոցա իմաստք անկցորդք դիւրաշաւէք, և որք յայլ և այլ ժամանակս գրեն հատուածս այլ և այլ, չկարեն երբեք զօդել զայնոսիկ ընդ իրերաց առանց բռնադբօս ձևոց. անգամանց. և համառօտ ասացեալ, են իսկ յոլով ճառք կարկատունք, այլ սակաւք յոյժ միաձոյլք:

Սակայն ամենայն առաջարկութիւն մի ինչ է, և որչափ իսկ իցէ ընդարձակ, մարթ է ամփոփել զայն 'ի մի ճառ: Դժուարք, հանգիստք և հատուածք չունին տեղի՝ բայց ուր զայլ և այլ իրաց իցեն ճառք, և կամ ուր զմեծամեծ դժուարին և զանազան իրաց առաջի կայցէ ճառել, և խոչ ընդ առն համեմատոյ ընդ առաջ ելանիցէ բազմապատկութիւն իրաց և հարկ յարակից հանգամանաց: Ապա թէ ոչ՝ բաժանմունք յոլովք փոխանակ ամբակուռ գործելոյ զճառն՝ քակեն զմիութիւն նորա: Հասարակագոյն առ աչս թուի մատեանն, այլ ծրագիր մատենագրին նախամանայ, ոչ տպաւորի 'ի միտս ընթերցողին, և չկարէ իսկ

լինել զգալի, բայց շարայարութեամբ խօսից, բարեյարմար կապակցութեամբ իմաստից, տակաւ 'ի լոյս գալով տաւաջարկութեանն, աստիճանաւ աճմամբ և միօրինակ յառաջատութեամբ, զորս դադարումն եղծանէ կամ թուլացուցանէ:

Ընդէ՞ր գործք բնութեան ամենակատարք են. զի իւրաքանչիւր յայնցանէ է մի ինչ ամբողջ, և գործէ ըստ միտրնջենադիր ծրագրի, առանց բնաւ խոտորելոյ յայնմանէ: Պատրաստէ նա լռելեայն զսերմանս իւրոցն արգասեաց, և յօրինէ միով ներգործութեամբ զնախագիծ բնաւից էից, աճեցուցանէ զնոսա, կատարելագործէ 'ի սահմանեալ ժամանակի յարատև շարժմամբ. հիացուցանէ գործն, այլ զրոշմ աստուածային, զորոյ բերէ նա յինքեան զտիպ՝ պարտի գործել զհիացումն զայն: Միտք մարդկեղէն չկարեն ստեղծանել ինչ, և ոչ ածել ինչ 'ի լոյս, բայց բեղնաւորեալ 'ի փորձոյ և 'ի խորհելոյ. տարրմանք արտադրութեանց նորա են հմտութիւնք իւր: Եթէ նմանող լինին նա բնութեան յերկս և 'ի վաստակս իւր, եթէ ամբառնայ հայեցողութեամբ 'ի զնին գերակաց ճշմարտութեանց, եթէ միախառնութեամբ կցորդէ զայնս և կազմէ նոքօք մի ինչ և միակարգ, կանգնէ 'ի վերայ անսասան հիմանց արձանս անմահականս:

Առ թերութեան ծրագրին, և վասն ոչ բաւականապէս խելամտելոյ իրին՝ զորմէ ճառէ, գտանի որ տարակուսեալ, և չգիտէ ուստի զձեռն սկսանել: Առաջին լինին նմա իմաստք բազումք. այլ զի չէ նորա համեմատեալ զայնս և կարգաւորեալ, չգիտէ զո՛ր ումեք նախակարգել, և կայ մնայ տարակուսեալ: Այլ որոյ յօրինեալ իցէ զծրագիրն, և ժողովեալ և կարգաւորեալ զամենայն իմաստս կարևորս նիւթոյն, գիտէ նա զգրիչ 'ի ձեռն առնուլ, զգայ զի հասեալ են երկանք մտացն 'ի ծնունդ, ստիպի ածել զայն 'ի լոյս, և ախորժանօք բուռն հարկանէ 'ի գրել. իմաստք կուռ զհետ միմեանց յաջորդեն, և ոճ նորա յաջողէ բնական և դիւրին. ախորժանացն

Digitized by Google

զհետ գան աշխարհք, ափունս ընդ ամենայն, և շունչ իմն և հոգի ամենայն բազմութեանցն տան. ամենայն ինչ անդ եւս քան զեւս կենդանանայ, յեղանակ ճառին ամբառ-նայ, իմաստք իւրաքանչիւր պայծառանան, և զգացումն կցորդեալ ընդ լուսոյ՝ ահեցուցանէ զայն, ածէ տանի յառաջ, և յաստեղաց անտի յանեղին ցոլացուցանէ, և լուսաւոր և ցանկալի զոհն յօրինէ։

Չիք ինչ որ այնպէս զջերմութիւն ճառիցն եղկացու-ցանէ, որպէս իղձ՝ ամենայն ուրեք տիպս բանից պերճա-զարդս յաճախելոյ. չիք ինչ որ այնպէս աղօտացուցանէ զլոյսն՝ որում պարտ է հաւասարապէս զամենայն մա-սունս ճառին ճառագայթիւքն լուսաւորել, որպէս կայծք որ 'ի բաղխմանէ բառից ընդ իրեարս թօթափին, և որք հազիւ խաղեալ զաչս՝ թողուն զնոսա 'ի խաւարի։ Ի-մաստք են գեղափայլք՝ որք ներհակութեամբ եւեթ փայ-լեն. կողմնակի ածին 'ի լոյս տարակոյսք, այլոց դիմացն կալով 'ի ստուերի. և բազում այն է, զի դէմք նոցա որ ածին 'ի լոյս՝ են մի յանկեանցն, յորում միտք որչափ դիւրաւ զբօսանին՝ նոյնչափ տառեալ հեռանան 'ի գլխա-ւոր դիմացն, ընդ որս առնել են հասարակաց միտք նկա-տել զիրս։

Չիք ինչ հակառակ ճշմարիտ ճարտարախօսութեան, որպէս 'ի կիր առնուլ իմաստս նրբինս և զհետ լինել թեթև և անօգուտ խորհրդոց՝ որոց չիք հաստատութիւն, և որք որպէս թիթեռն ոսկւոյ կանխելոյ, կորստեամբ եւեթ հաստատութեան առնուն փայլումն։ Վասն որոյ որչափ տառեալ յաճախէ համեմատութիւն նուրբ և փայլուն, այնչափ նուազէ ճառին ոյժ և լոյս, եռանդն և ոճ։ Բայց միայն եթէ այն իցէ հիմն ճառին, և մատենագրին չկայցէ այլ ինչ առաջի՝ բայց զուարճացուցանել, յայնժամ արուես-տըն զաւզնաքեայս առնելոյ՝ դժուարագոյն թերևս պատա-հէ քան զարուեստ մեծամեծս խօսելոյ։

Չիք ինչ հակառակ բնականին գեղոյ քան զնիգն՝ զիրս սովորականս և հասարակս՝ ճամարտակօքն բազմապատե-

լոյ, որ նուաստացուցանէ յոյժ զմատենագիրն։ Ոչ միայն չզգուշանալոյ ոք ընդ նա, այլ և ատաղէ զկորուստ ժամանակին խաղալոյ նորա ընդ վանկս՝ առ ՚ի դրուցել ոչ ինչ աւելի քան զոր ամենայն ումեք է առել։ Այս թերութիւն է ամենայն մասաց մշակելոց, որոց ճոխութիւն մեծ է բառից, այլ ոչ և իմաստից. վասն որոյ վատառակեն նոքա ՚ի վերայ բառից, և համարին սոսկ իմաստս՝ զձև բանիցն փոփոխելով, և յառակապանել՝ եղծանելով զբնիկն բարբառ և զնշանակութիւնս բառից կամակորելով։ Այսպիսիք չունին ինչ ոճ, կամ միայն զատուածր նոցին. պարտ է ոճոյ դրոշմել զիմաստս՝ իսկ նոքա բառս ևեթ գիտեն գծագրել։

Պարտ է ապա առ ՚ի քաջ մատենագրել՝ գիտել լաւ զնիւթ ճառին, խորհել յայն առ ՚ի նկատել յայտնապէս ՚ի նմա զկարգ իմաստից, շարայարել զայնս չղթայաձեւ՝ օղիցն առհասարակ մէն մի իմաստս բերելով. և յանձնել ՚ի ձեռն գրչին՝ ածել զայն ընդ նոյն կարգ իմաստից, մի ներել նմա հեռանալ անտի, մի յաւելուլ աւելորդ, այլ ընթանալ միօրինակ ընդ առաջարկեալն սահմանեալ նմա։ Յայսմ իսկ է անսայթաքութիւն ոճոյ, և այս կացուցանէ զմիտութիւն նորա, ուղղէ զգնացս, և յօրինէ զայն ճշգրիտ և պարզ, հաստատ և բացայայտ, կենդանի և կորովաբեալ։ Յայս նախկին կանոն՝ թերագրեալ ՚ի հանճարոյ, եթէ յաւելցի փափկութիւն և ամբարձումն, քաջ ընտրութիւն բացատրութեանց, և մտադրութիւն՝ հասարակաց անուանց գիրս խորաքննելեաց անուանելոց, եղանի ոճն ընտիր. իսկ եթէ յաւելցի և անփառասիրութիւն ընդ նախկին բերումն, արհամարհութիւն փայլման, և անհողդողդելի ընդդիմութիւն զուարճախօս երկդիմութեան, եղանի ոճն ծանր և մեծավայելուչ։ Ի վերայ այսորիկ եթէ ոք մատենագրեսցէ որպէս խորհի, և իցէ համոզեալ յոր ինչ զայլս կամի համոզել, այս անկեղծութիւն ընդ անձին՝ որ վասն այլոց զարդ է զգաստաշարժ վայելչութիւն և զնշմարտութիւն ոճոյ, տայցէ նմա յառաջ բերել զամենայն առ-

դասախ իւր, միայն եթէ զներքին հաւանութիւն իւր մի՛ կարի իմն եռանդմամբ 'ի յայտ ածիցէ, և ամենայն ուրեք բերցէ յինքեան զանկեղծութիւն քան զխստահութիւն, զողջմտութիւն քան զաստակութիւն:

Կանոնք չկարեն լինել զտեղի հանճարոյ. եթէ չիցէ հանճար, ընդունայն են կանոնք: Քաջ մատենագրել՝ է քաջ իսկ խորհել, քաջ զգալ, և քաջ զխորհուրդն 'ի յայտ ածել. է ունել միանգամայն միտս, հոգի և ախորժակս: Ոճ է՝ զամենայն իմացականին զօրութիւնս միանգամայն 'ի կիր արկանել. իմաստք ևեթ կազմեն զհիմն ոճոյ. բարեյարմարութիւն բառից յաւելեալ 'ի նոյն՝ արդասիք են զգայուն զգայարանաց. շատ է խուն ինչ զգայութիւն ունել լսելեաց՝ առ 'ի խորշելոյ 'ի չյարմարութենէ ձայնից, և կրթել և կատարելագործել զայնս ընթերցմամբ քերթողաց և ճարտասանից՝ առ 'ի նմանող լինել նիւթաբար քերթողական դաշնաւորութեանց և ճարտասանական դարձուածոց: Այդ նմանողութիւն չէ և չէ ստեղծանել, որով և յարմարութիւն ձայնից չէ ինչ հիմն կամ կազմութիւն ոճոյ, և գտանի 'ի ճառս իսկ թափուրս յիմաստից:

Ցեղանակ ճառին ոչ այլ ինչ է, բայց ճահաւորութիւն ոճոյ ընդ իրացն՝ զորոց ճառքն են: Ոչ է պարտ այնմ գոլ երբեք բռնազբօս. պարտի բնաւորապէս յիսկութենէ իրացն գալ յառաջ, և պատշաճել հանրական իմաստից ճառին: Եթէ մատենագիրն 'ի հանրագոյն իմաստս 'ի վեր ամբառնայ, և իրքն իսկ բարձրագոյնք իցեն, 'ի նոյն բարձրութիւն և յեղանակ ճառին թուի ամբառնալ. և եթէ հանճար մատենագրին կալեալ զայն 'ի բարձրութեան անդ՝ տայ իրաց իւրաքանչիւր լոյս պայծառ, և զգեղ երանգոյ ազդուութեան ծրագրին, և միանգամայն առացեալ՝ յանդիման առնէ զիմաստս իւրաքանչիւր բացայայտ և կենդանի նմանութեամբ և կազմէ յիւրաքանչիւր զուգորութենէ իմաստից՝ պատկեր ներդաշնակ և խօսուն, անդ յեղանակ ճառին ոչ բարձր ևեթ՝ այլ և վսեմ հանդիսանայ:

Digitized by Google

Քաղ մատենագրութիւնք այնոքիկ ևեթ են՝ որ միան յազգէ յազգ. ամբաւ հնութիւն, նորանշան իրք, գիտք իմն նորանորք ոչ երաշխաւորեն զնոցայն անմահութիւն։ Եթէ զմանաւանց իրաց իցեն ճառք, և առանց կիրթ ախորժակաց գրեալ, առանց ազնուականութեան և հանճարոյ, կորիցեն. զի զհնութիւնս, զգործս և զգիտս դիւրին է բառնալ առնուլ 'ի կիր ածել, և բարւոք ևս ճարտարագոյն ձեռաց մարթ է զայնոսիկ 'ի գործ արկանել։ Այս ամենայն արտաքոյ են մարդոյ. իսկ ոճ յինքեան իսկ 'ի մարդումս է, և ոչ է մարթ բառնալ զայն 'ի նմանէ, ոչ ածել այլուր և ոչ այլայլել։ Եթէ ուրուք բարձր է ոճ, ազնուական և վսեմ, գովեսցի նա յամենայն ժամանակի. զի ճշմարտութիւն ևեթ է տևող և յարակայ. արդ ոճոյ գեղեցկութիւն յանբաւ ճշմարտութեանցն է՝ զորս բարձեալ բերէ յինքեան։ Իմանալի գեղեցկութիւնք առհասարակ՝ որ ենն 'ի նմա, և համօրէն մասունք՝ յորոց կազմի, են ճշմարտութիւնք չահաւէտք, գուցէ և պատուականագոյնք մարդկեղէն մտաց քան զճշմարտութիւնսն՝ որք զնիւթոյ ճառիցն զհիմն յարդարեն։

Վսեմութիւն 'ի բարձրագոյն նիւթս ևեթ ճառից կարէ կալ։ Բանաստեղծութիւն, պատմութիւն և իմաստասիրութիւն, երեքին իսկ զնոյն իրաց ճառեն, և իրքն մեծ յոյժ, ասեմ իսկ զմարդ և զհամագոյս։ Իմաստասիրութիւն նկարագրէ զհամագոյս, իսկ բանաստեղծութիւն նկարէ և գունագեղէ. նկարէ նա և զմարդ և մեծացուցանէ զնա և գեր 'ի վերոյ ամբառնայ՝ դիւցազունս և դիս 'ի մարդկանէ ստեղծանելով։ Պատմութիւն զմարդ ևեթ նկարագրէ, և ցուցանէ զնա որպէս և էն. և ըստ այսմ՝ յեղանակ պատմագրին ոչ երբեք եղանի վսեմ, բայց 'ի նկարագրել զաւագագոյնս 'ի մարդկանէ, և 'ի յանդիման առնել զմեծամեծ գործս, զմեծամեծ արութիւնս, զմեծամեծ յեղափոխութիւնս. իսկ այլ ամենայն ուրեք շատ է՝ զի իցէ ծանր և մեծավայելուչ։ Յեղանակ իմաստասիրին՝ մարթի իսկ գոլ վսեմ 'ի ճառել նորա զօրինաց բնու-

թեան, զհամազգոյից, զանսահման համապարփակ վայրէ, զնիւթոյ, զշարժմանէ և զժամանակէ, զհոգւոյ, զմարդկեղէն մտաց, զզգայութենէ և զկրից. իսկ այլ ամենայն ուրեք շատ է զի իցէ ազնուական և բարձր։ Այլ յեղանակ ճարտասանին և քերթողի՝ ուր զմեծամեծ իրաց խօսին՝ միշտ իսկ պարտի զոյն վառել, զի 'ի ձեռս նոցա է յաւելուլ 'ի մեծութիւն իրացն երանգս յեղյեղմանս և երևոյթս որչափ հաճոյ իցէ նոցա. և քանզի հասանէ նոցա նկարագրել միշտ և մեծացուցանել զիրս՝ զորոց խօսին, պարտ է նոցա ամենայն ուրեք 'ի կիր արկանել զամենայն զօրութիւն, և հանդէս-առնել ամենայն ընդարձակութեան հանճարոյ իւրեանց։

ԳԻՒՏԵԱՆ

Ի ճառն յօգանագոյ Գաղղիական Ճեմարանին։

# ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

# ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

## ՊԱՏՄԱԿԱՆՔ

### ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

#### ԳԱՅՈՒԿԵՐՔ ԱՌ ԱՅՍ

*Կիկերոն սահմանէ զայն բացատրութիւն իրաց՝ որ իսկակիցք են առաջարկութեան, կամ եկամուտք, այլ պատկանաւորք այնմ և յարակիցք։*

*Երեք ինչ կարևոր են պատմութեան. զի իցէ համառօտ, բացայայտ և հաւանական։*

*Պատմութիւն համառօտ է և ճշգրիտ, եթէ ոչ 'ի բացում սկսեալ և ոչ 'ի բաց ընդարձակի քան զպահանջեալն յառաջարկութեննէն. եթէ թողու 'ի բաց զմանրապատում հանգամանս, որ բովանդակութեան իրացն ևեթ պէտք իցեն բացատրութեան. թէ ոչ արտաքոյ առաջարկութեան եղանէ. թէ տայ և զլռեալն 'ի միտ առնուլ. եթէ լռէ ոչ միայն զվնասակարս գատին, այլ և զանպիտոյս. եթէ միանգամ ևեթ ասէ զկարևորն, և եթէ ոչ աւելի ինչ ասէ։*

*Պատմութիւն բացայայտ է, յաւելու նոյն ինքն, եթէ իրքն յիւրեանց տեղւոջն իցեն և 'ի բնական կարգին. եթէ*



Digitized by Google

չիցէ ինչ 'ի նմա մթին և պատ 'ի պատ, ոչ արտաուղիւ ոչ 'ի ցանկալեաց ինչ մոռացեալ, աւելի ինչ քան զոր խընդրէ ոք գիտել. զի զնոյն հանգամանս համառօտութեան պահանջէ և բացայայտութիւն. քանզի յաճախ առ երկարաբանութեան քան առ մթութեան գտանի պատմութիւնն դժուարիմաց: Պարտ է ոչ ինչ նուազ փոյթ ունել և յստակութեան բառից իւրաքանչիւր, և լուսաւորութեան բացատրութեանց առ հասարակ. և է այս հասարակաց կանոն ամենայն ազգի ճառից:

Առ 'ի հաւանական առնելոյ զպատմութիւն՝ պարտ է առաջի առնել զիրսն որպէս է տեսանել 'ի բնութեան. դիտել զպատշաճս նկարագրի, բարուց, և հանգամանաց իւրաքանչիւր ուրուք. միաբանել զպատմութիւն ընդ հանգամանս տեղւոյն, և պահու՝ յորում այն անցք անցեալ իցեն, և ժամանակի՝ որ 'ի կատարումն իրացն իցէ կարևոր. և առնուլ 'ի հաւաստիս զհասարակաց զրոյցս և զնոցին իսկ ունկնդրաց կարծիս: Պարտ է դարձեալ, յաւելուլ նոյն ինքն, յեռուլ զպատմութիւն՝ ուր ոչ առնանէ ճառին, և մի՛ ուր ոչ ինչ օգնէ առաջարկութեան, այլ 'ի ճահ պատկանաւորել զայն և յօգուտ 'ի կիր արկանել:

Պատմութիւն ածէ վնաս 'ի յանդիման առնել եղեան ինչ ծանր իսկապէս, զոր առաջ հարկ իցէ թեթևացուցանել անմեղադրութեամբ և պատճառաբանութեամբ: Եթէ դէպք պահանջիցեն զայն, պարտ է ճարտարութեամբ այսր անդր 'ի ջատագովութեան յեռուլ զմասունըս իրացն, իւրաքանչիւր մասին պատճառս ընդդէմ դնել 'ի նուազումն եղեռանն, հետ ընդ հետ ապեղանի 'ի վերայ վիրացն ածեալ, և պաշտպանութեամբն զատելի գործոյն մեղմեալ զտպաւորութիւն: Պատմութիւն չէ իմիք պիտանացու, ուր հակառակորդին ցուցեալ իցէ ըղդէպս որպէս կամք էին մեզ տեսանել, կամ ուր ծանօթ իցեն իրքն ունկնդրաց, և ուր չիցէ ինչ մեզ փոյթ այլազգ զիրսն յանդիման առնել:

Իսկ ոչ ըստ պահանջելոյ դատին է պատմութիւն, ուր

Digitized by Google

ատենաբանն յանդիման անձինց բացայայտ եւ պայծառ երանգովք որ ինչ ոչն է 'ի նպաստ իւր, եւ լաւ կամ թողու 'ի մթան որ ինչ իւր է նպաստաւոր: Հակառակ այսմ թե-րութեան համեմար ճարտարախօսին քօղարկէ ըստ կարի զամբաստանեալսն, հարեւանցի անցեալ զնոքօք՝ եթէ չիցէ մարթ լռել զայնս, եւ յենու եւ ճոխաբանէ 'ի մասունս եւթ նպաստաւորս:

Սքիմբք պարզ օրինաք յաջողեաց Կիկերոնի գալ՝ ոչ տասցից համեմարեղագոյն, զի այս բնութեան է շնորհ, այլ նրբագոյն եւ ճարտարագոյն 'ի հրապարակախօսս:

Ի պատմութեան որպէս եւ յայլ մասունս ճառին ազդէ յոյժ անուղղակի յուզումն կրից, առանց զգացուցանելոյ զունկնութիւն ուղղակի յուզման կրից: Ընդմտանէ սա, թափ անցանէ, տիրէ մեղմով 'ի սիրտս, եւ գերէ զնոսա յանզգաստից, այնչափ առաւել վստահ յարգաւխ ճգան-ցըն՝ որչափ թուի չգործել ինչ ճիգն: Որպէս վկայ եւեթ իրացն խօսի ատենաբանն. եւ ուր իրքն ինքնին ահարկու են կամ գորովական, կամ դրդեն 'ի ցասումն եւ յատե-լութիւն, քաջ զգուշանայ չխառնել 'ի պատմութիւն իւր զկիրս՝ զորս կամի զարթուցանել 'ի լսողս: Ցանդիման առնէ զնկարագիր զօրութեան եւ տկարութեան, անիրա-ւութեան եւ անմեղութեան. ցուցանէ ոչ ինչ աւելի քան զընկճել հզօրին զտկարն, եւ զտկարին անկանել ընդ նո-վաւ հեծեծանօք. եւ որքան պարզ յայտ առնէ, այնչափ առաւել շարժէ զլսողս:

Ի շարժել զկիրս անուղղակի՝ ոչ 'ի վտանգ արկա-նէ ատենաբանն զպաշտօն իւր եւ զդատ:

Պատմութիւն, յայտարարութիւն, նկարագիր, զորս առնէ, կարեն աւելի կամ նուազ յուզել զկիրս՝ առանց ինչ հետեւանաց: Այլ յորժամ ինքնին շարժեալ 'ի կրից՝ ջանայ շարժել զմեզ եւ չկարէ, եւ ձախողակի ամենայն ինչ զնովաւ կայ անզգայ եւ ինքն միայն իցէ յուզեալ, ներհա-կանսն այսուիկ ծաղր կացուցանէ զառաջարկութիւն իւր կարեւոր, նուաստ զճարտասանութիւն իւր, եւ յամե-

նայն զօրութենէ մերկ զհնարս իւր: Ապա առ անվրէպ պատրաստելոյ զազդումն ուղղակի շարժութեան կրից, պէտք են նախ զանուղղակի շարժումն ածանել 'ի կիր, և յուզել այնուիկ զկիրս ունկնդրաց: Եւ իբրև սաստկանին, և հծծիւն արտմտութեան լինի լսելի, կամ արտասուք կարեկցութեան թանան զաչս, յայնժամ ճարտասանին պարտ է խառնիլ 'ի խուռն նոցա և բերել յանձին զյոյզըս կրից առաւել քան զնոսա, զորս 'ի ցասումն կամ 'ի գութ շարժէ: Զի ոչ ևս յայնժամ ինքն թուի շարժել զնոսա, այլ մանաւանդ ածանել 'ի նոցանէ շարժումն. ոչ ևս 'ի կիրս իւր լինի անձնատուր, այլ 'ի կիրս լսողաց. և 'ի խառնելն 'ի նոսին՝ յաղթէ նմա ձգել զնոսա զհետ: Ուղղակի շարժութեան կրից կէտ վտանգաւոր և փափուկ այն է՝ զի յանձնականն վարկ հաստատեալ կայ իսկապէս, և կարօտի ազդեցութեան բարուց այնորիկ որ ունիցի յուզել զկիրս: Մի միայն մտածութիւն պատահական խափանելով զազդեցութիւնն զայն 'ի միտս լսողաց՝ եղծանէ զայն:

ՄԱՐՄՈՆԴԵԼ. Տարերք Բանաստեղծութեան:

---

## ՆԱԽԱՄԱՐԴՆ ՊԱՏՄԷ ԶԱՌԱՋԻՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԵՒ ԶԶԳԱՑՈՒՄՆ ԵՒ ԶԴԱՏՈՒՄՆ ՈՐ ՅԵՏ ՍՏԵՂԾՄԱՆՆ

Տակաւին 'ի յուշ ինձ դառնայ վայրկեանն հրճուալից և անդոհական, յորում ծանեայ զառաջինն զիմս նորանշան էութիւն. ոչ գիտէի թէ զինչ իցեմ, ուր իցեմ և ուստի գայցեմ: Ի բանալ աչացս զեղան յիս զգայութիւնք. լոյս և կամար երկնից, երկիր դալարի և ջուրք բիւրեղեայք զբաւէին զանձն իմ և շնչէին յիս հոգի և

անձանց բնակչացն աղբերին յիս։ Կարծէի զառաջինն ե-թէ էակքս համօրէն յիս ինքն իցեն, և միայն անձինս համարէի զնոսա։

Ցանկալ հաստատէի 'ի նորածին յայս կարծիս, և ահա դարձուցի զաչս իմ յաստուածն լուսապայծառ. նշոյլք նորա շլացուցին զաչս իմ, և յանկարծօրէն փակեցի զարտեւանունս իմ, և ցաւեաց ականոցքս։

Ցայնժամ պահու մթութեան՝ համարեցայ եթէ ահա կորուսի զիմս էութիւն։

Իբրև մինչդեռ լքեալ և ընդարմացեալ խորհէի ընդ յեղափոխութիւն անձինս, և ահա ձայն յունկն իմ հնչեաց. ատաչք թռչնոց և սօսափիւն հողմոց զաշնակաւորս իմն յօրինէին նուագս, որոց քաղցրութիւն աղդէր 'ի մտաւոր հոգւոյս. ընդ երկար լսել ունկնդրէր, համոզակեր լինէի անձին եթէ ես ինքն իցեմ այն զաշնակաւորութիւն։

Այն ինչ մտախորհ հիացեալ կայի ընդ նորագաստուրս այս կենդանութիւն, և 'ի մոռացօնս ինձ դառնայր լոյս՝ որ կանխաժամօք միայն էր էութեանս, և ահա բացան անդրէն աչք իմ. ով քանի խնդութիւն էր ինձ 'ի դտանել անդ միւսանգամ զնշուլագեղ զարարածս, և խինդք որոտիս անցին զանցին քան որ 'ի նախկին զգայութեանս, և զագարեցան առ վայր մի զբօսանք ձայնից։

Շրջեցի զաչս իմ 'ի տեսիլ բիւրուց էակաց, և 'ի միտ առի փաղփաղանս եթէ հնար էր ինձ կորուսանել և գտանել զնոսին, և թէ էր յիս զօրութիւն ըստ կամի եղծանելոյ և միւսանգամ վերստանղծելոյ զայս գեղեցիկ միայն խնոյ էութեանս, որ թէպէտ թուէր ինձ անբաւ 'ի մեծութեան վասն բիւրապատիկ փոփոխմանց լուսոյն և երփներանգ գունոց, բայց համարէի համբարեալ զնոսա 'ի միայն ալրեք էութեանս։

Ցանկալ անհագլալլակ աչօք նկատէի և անխղղով լսէի, և ահա սիրք թեթևընթաց և զովացիկ էած ինձ բուրմունքս անուշից, որք զուարթացուցին զոգւոյ իմ և ազդեցին յիս սէր և զգացմունս առ անձն իմ։

Ծփեալ 'ի համայն ազգմանցս, և յորդորեալ 'ի հաճոյից չքնաղ և վսեմագերձ էութեանս՝ յանկարծ 'ի վեր վազեցի և թուէի վարեալ յանծանօթ իմն զօրութենէ։ Քայլ մի յառաջեալ, անդէն զկայ առեալ արձանացայ, 'ի նորաքանչ դրից մարմնոյս հարեալ յապշութիւն. կարծէի փախչել յինէն գոյութեանս, և տեղափոխութիւնս իմ խառնակեաց զէս համօրէն. կարծէի եթէ ամենայն ինչ խառն 'ի խուռն կուտիցի։

Տարեալ զձեռս իմ 'ի գլուխս՝ շօշափէի զճակատն իմ և զաչս, և ընդ բովանդակ մարմինս իմ յածէի. և համարեցայ յայնժամ թէ ձեռն իմ իցէ առաջին գործարան էութեանս. զգայութիւնք որ նովաւ՝ ճշգրտագոյնք էին և անթերիք. որով և վայելքն գերազանցք քան զհաճոյս՝ զորս ազդէին յիս լոյսն և ձայն, մինչ զի կամակար մատուցի զանձին առաջնորդութիւն յայս հաստատուն մասն իմոյ էութեանս, և գիտացի եթէ տակաւ ընդարձակէին խորհուրդք մտացս և խակութիւնք լինէին։

Զոր ինչ ձեռամբ շօշափէի 'ի մարմնի իմում՝ թուէր իմն իմում ձեռին զգայութիւն ընդ զգայութեան հատուցանել, և յոր հպէի՝ կրկին պատկեր մտաց ազդէր 'ի հոգի։

Վաղվաղակի 'ի միտ առի անյապաղ՝ եթէ զօրութիւն զգայութեան ծաւալեալ էր ընդ անձն իմ բովանդակ, և ծանեայ զսահման իմոյ էութեանս, զոր յառաջին անպարագիր համարէի։

Ցիս ինքն զաչս իմ դարձուցեալ՝ մեծատարր զանձն իմ վարկանէի, մինչ զի այլ ամենայն առարկայք զորս նկատէի՝ թուէին առ նովաւ կէտք մանունք լուսանշոյլք։

Հարուստ ժամս հիացեալ պշնուր ընդ անձն իմ, և ակնկառոյց լեալ ընդ ձեռն իմ՝ զշարժուածս նորին զննէի, և անհեթեթս իմաստասիրէի զամենայնէ. համարէի եթէ շարժուած ձեռացս էութիւն իմն էր փախստական, և նմանօրինակ իրաց անանձրպետ յաջորդութիւն. և այն ինչ մերձեցուցեալ յաչս իմ զձեռս, և ահա մեծացաւ

նա քան զմարմինս իմ բովանդակ, և թագուցեալ ծածկեաց յաչացս զյողովադոյնս յարարածոց:

Վարանեալ սկսայ 'ի միտս իմ՝ մի՛ գուցէ կեղակարծ ինչ իցէ որ յաչս զգայութիւն. զի ուսեալ միանգամ ճշմարտապէս եթէ ձեռն իմ մասն ինչ փոքրիկ էր մարմնոյս, չկարէի 'ի միտ առնուլ՝ եթէ զիարդ մարթ էր նոմին այնչափ մեծանալ մինչև անհեթեթ թուել ինձ մեծութեամբն: Վասն որոյ եդի 'ի միտս իմ շօշափականին ևեթ լինել ապաստան՝ որով ցարդ չէր իմ պատրեալ, և անձնապահ լինել յայլ ամենայն զգայութեանց և յէութեանց:

Օգտամատոյց եղև ինձ խորհուրդս. զի այն ինչ առառեալ ընթանայի բարձրադլուխ և երկնադէմ, ընդհարայ մեղմով ընդ ծառ մի արմաւենի. ահաբեկ ընկրկեալ ձգեցի զձեռն իմ յէակն օտարոտի, զոր և այնպէս գատեցայ, զի զգայութիւն ընդ զգայութեան ոչ փոխանակեաց. 'ի բաց փախեայ 'ի նմանէ պակուցմամբ, և զայն առաջին նուագ 'ի միտ առի՝ եթէ գոն այլ էակք արտաքոյ քան զիս:

Ընդ գիւտս նորահրաշ առաւել վերամբարձեցայ, քան ընդ այլս ամենայն, և հազիւ հանդարտել կարացի, և մտախորհ լեալ ընդ դէպս անակնկալ, հաստատեցի եթէ և զարտաքնոյ զնոյն օրինակ զփորձ առնուլ արժան է որպէս զմարմնոյս, և թէ չէր ինձ մարթ այլով իւիք զգայութեան նոցին հաւատալ, բայց շօշափմամբ ձեռինս: Վասն որոյ կամէի ձեռնհաս հպիլ ամենայնի. կամէի ըմբռնել զարեգակն. տարածեցի զբազուկս իմ առ 'ի ընդգրկել զծագս անեզերաց. բայց ունայնութեան օդոյ գիրկս արկանէի:

Իւրաքանչիւր փորձ հանդիպուց 'ի զարմացումն դրդաւէր զիս. զի զամենայն արարածս միապէս հպաւորս ինձ համարէի. մինչև յետ բազում փորձոյ՝ ուսայ աչօք զձեռս իմ ուղղել. և քանզի այլազանք էին տպաւորութիւնք ձեռաց քան զոր յաչացս ընդունէի, վասն որոյ

Digitized by Google

և ոչ զուգաձայնք էին զգայութիւնքս ընդ միմեանս, որով և ոչ անթերի՝ մտացս դատաստան. որով և բովանդակ իմս էութիւն ոչ այլ ինչ թուէր ինձ՝ բայց գոյութիւն թերակատար:

Խորամուխ եղէ յանձն իմ, որ ինչ էիս, և որ ինչ լինելոցն էի, և դիմադարձութիւնք զորս կրեցի կորացուցին զանձն իմ. և որչափ 'ի նոյն մտախորհ լինէի, այնչափ ևս վարանք յեղակարծ ընդ առաջ ինձ ելանէին: Պարտասեալ 'ի վարանմանցս և վաստակեալ 'ի յուզմանց հոգւոյս, կթոտեցան ծունկք իմ և հանգեայ: Այդ վիճակ հանդարտութեան՝ նորոգատուր զօրութիւն 'ի զգայարանս իմ յաւել:

Բազմեալ կայի ընդ սառուերաւ սաղարթազեղ ինչ ծառոյ, յորմէ պտուղք բոսորագեղք ողկուզորէն կախէին առձեռնամերձ հպաւոր ձեռին: Ի մերձենալն առ նոսա մեղմագոյնս, թօթափեալ անկան յոստոց ծառոյն, որպէս թօթափիցի թուզ որ հասեալ իցէ:

Ի ձեռս առի զմին 'ի պտղոցն. և յաղթական զիս ինքն համարէի, և պանծայի ընդ զօրութիւն իմ, խորհուրդ 'ի ձեռին կալեալ ունէի զէակ մի բովանդակ. այլ ծանրութիւն նորին թէ և դիւրատար՝ թուէր ինձ ընդդիմագրութիւն իմն ատտեկ, բայց բերկրէի յանձն իմ՝ տեսեալ զիս յաղթական նմին: Մերձեցուցի զնա յաչս իմ, և զննէի զձև նորին և զերանգս. և 'ի բուրել անուշից՝ և ևս մօտագոյնս կալեալ զայն առ իս մերձ առ շրթունս իմ, և ծծէի մեծաշունչ զանուշահոտն քաղցրութիւն, և վայելէի 'ի հեշտութիւն հոտոտելեաց. լի էր անձն իմ բովանդակ հոտովն անուշարար: Բացաւ բերան իմ առ 'ի շնչել զայն արտաքս. բացաւ միւսանգամ առ 'ի ձգել զայն յիս վերստին, և անդէն իմացայ եթէ էր 'ի ներքս յիս զօրութիւն հոտոտելեաց նուրբ և փափուկ քան զառաջինն. և ճաշակեցի:

Ո՜վ քմապարար ճաշակացն, ո՜վ նորաքանչ զգայութեանն. ցայն վայր հաճոյք եւեթ էին վայելքս. իսկ ճա-

չափն հեշտացուցեալ զիս։ Վայելքն ներքինք ծնեալ յիս միայն՝ առաջնորդականերոյ յիս ինքն զարդարանս։ Թուէր ինձ եթէ յէութիւնս իմ փոխարկեցաւ պտղոյն զգուշութիւն, եւ թէ մարթ էր ինձ կերպարանափոխ առնել զէակս համօրէն։

Զուարճացեալ իշխանականն խորհրդովք, եւ յորդորեալ 'ի հեշտալի զգայութեանցն, միանգամ եւ միատեգամ ձգեցի զձեռն իմ 'ի պտուղն, եւ ոչ պարտաւէր բաղձալ իմ արքանակել հաճոյից. այլ տակաւ թըմբիր առնարմեալ ընդ բոլորեցեալ զգայութիւնս իմ ծաւալէր, եւ ծանրացեալ մասանց մարմնոյս՝ կասեցոյց զեռանդն հոգւոյս։

Յաջորդեալ անոսր խորհրդոց մտացս՝ անդործութեան իմում եղէ խելամուտ, եւ զգայութեանցս բթացեալ՝ սասանեալ զարդարածովք արկանէին, եւ աներկայ եւ անհետաբարակ ատ աչքի իմ նկարէին զնտառ Յայնժամ ժամանակին փակեցան աչք իմ անզօրք 'ի տեսանել, եւ ելառեալ զօրութիւն մկանցս՝ ոչ եւս կարէին 'ի վեր առնել զգլուխս իմ, վասն որոյ եւ ես խոնարհեալ յեցայ 'ի զաւարս, եւ անդէն ամենայն ինչ եղծաւ եւ անհետ ծածկեցաւ։ Դադարեցան հետք խորհրդոցս եւ կորեաւ յինէն զխառնակցութիւն էութեանս։ Ծանրութիւն էր քունս, այլ չգիտեմ թէ եւ յերկար, տակաւին քանեսլով ժամաթերս զժամանակէ, վասն որոյ եւ 'ի չափել զնոյն անբաւականս։ Զարթեալ եւ թուէր ինձ անհաս միւսանգամ ծնանել, եւ զգացի եթէ դադարեալ էր առ վայր մի իմս գոյութիւն։ Զէութիւնս իմ այս զոր յանձին զգացի, առդեալ յիս երկիւղ, եւ ծանոյց ինձ եթէ չէ ինձ մարթ կեալ յաւէրժաբար։

Յաւելուլ յիս եւ այլ տարակոյս. ոչ գիտէի եթէ կորուսի՞ արդեօք 'ի քուն հանգստեան մասն ինչ յէութենէս. 'ի փորձ զգայարանս իմ մատուցի, եւ կամէի տեսանել եւ ճանաչել զանձն իմ։ Յայնժամ վայրի հասեալ արփենայն 'ի ծայր տարածութիւն՝ չիմացց զէակ իւր լուսաւորաց. հազիւ իբրագգած եղէ եթէ անձ կորուսանեմ զանձ

տութիւն. զի գիտակ գոլով անխտուածփելի էութեանս, ոչ երկնչէի կորուսանել զգոյութիւն իմ. և խաւարին որ ծածկէր զիս, ընդ վայր յուշ ածէր ինձ զյիշատակ առաջին քնոյս։

ԲԻՒՖՖՈՆ. Բնական պատմութիւն մարդոյ։

---

## ՈՒԽՏ ԻԴՈՄԵՆԵԱՅ

Իդոմենէ որդի Դեւկալիոնի, թոռն Մինովայ, ընդ այլս 'ի Թագաւորացն երթեալ էր 'ի պաշարումն Տրովադայ. և յետ կործանման քաղաքին իբրև դառնայր այսրէն, յարեաւ մրրիկ սաստիկ, մինչև նաւապետին և ամենեցուն իսկ՝ որ փորձ էին նաւարկութեան, համարել անհրաժեշտ 'ի վերայ հասեալ կորուստ։ Ամենայն ոք առաջի աչաց նկատէր զմահ, ամենայն ոք տեսանէր զանդունդս բացեալ առ 'ի կլանել զնա, և ամենայն ոք ողբայր զաղէտս իւր՝ ոչ անգամ ունելով տխուր հանգստեան, յոր թաղելոցն ևեթ վայելեն հոգիք՝ ընդ ստիւգականն անցանելք ընդ գետ։ Յայնժամ Իդոմենեայ զաչս յերկինս ամբարձեալ, բազկատարած կարդայր առ Պոսիդոն. Լուր աստուած հզօր, իշխեցող ալեաց ծովու, լուր հեծիս. եթէ լիցի տեսանել ինձ միանգամ զԿրետէ՝ ապրեալ 'ի զայրագին մրրկացս, մատուցից քեզ զոհ՝ որ նախ եկեսցէ ինձ ընդ առաջ։

Յայնմ վայրի որդի նորա անձկանօք տեսութեան հօրն՝ փութայր ընդ առաջ նորա, զիրկս արկանել նմա. ոչ գիտէր հէքն, զի յօրհասս իւր ճեպէր։ Մազապուր 'ի մրրկէն անդր 'ի նաւահանգիստն ցանկալի ժամանեաց հայրն, գոհանալով զՊոսիդեայ վասն ուխտիցն լսելի լինելոյ. այլ ծանեաւ անդէն քանի աղետաբերք էին նմա այնոքիկ։ Անդստին նախազգեցեալ իւն զղջ ընդ ուխտ իւր անհանճար ճմլէր զսիրտ նորա. խիթայր հանդիպել իւրոցն, և թուէր նմա տեսանել զոր քան զամե-

նեռեան սիրելին էր նմա։ Իսկ անողոքելին 'ի դիս ան-ողորմն Նեմեսիս, որ հակէ 'ի պատուհաս մահկանացուաց և մանաւանդ գոռոզ արքայից, մահահամբոյր աներեւոյթ ձեռամբքն մղէր զԻդոմենէ յաղէտսն։ Հատեալ նորա 'ի ծովեզրն, այն ինչ զաչս 'ի վեր էառ, 'ի տեսիլ որդեկին զարհուրեալ ընկրկեցաւ, և աչք իւր շուրջ յածեալ հե-տազօտէին զայլ ոք 'ի նուազ սիրելեաց առ 'ի զոհ։ Իսկ որդւոյն անկեալ զպարանոցաւն հայրենի, ոչ կարէր 'ի վերայ կալ անկարեկիր այպանութեան հօրն. և տեսա-նելով զարտասուս նորա, ասէ. Առ ի՞նչ է քո տրտմու-թիւնդ, հայր. յետ բազմամեայ պանդխտութեան դարձ-տարեալ յաթոռ քո 'ի ցնծութիւն որդեկիդ, և ընդէ՞ր տրտմեալ կաս. զի՞նչ մեղայ, զի դարձուցանես զաչս քո յինէն։ Բայց հայրն հեղձամղձուկ 'ի վշտացն՝ վայրիկ մի անբարբառ, և ապա հառաչանօք 'ի խորոց սրտէ ասէ. Աւա՜ղ, զի՞նչ երդուայ քեզ, ո՛վ Պիսիդոն, քանի՜ ծան-բագնիք փրկեցեր զիս 'ի նաւաբեկութենէ. մատնեաս զիս անողորմն ալեաց և ծովու 'ի կոծումն, զի կորեայց ես, և կեցցէ որդեակն իմ։ Ահա արիւն իմ, առնուէր զքեզ. փոխանակեսցի արիւն իմ ընդ նորայն։ Ասաց, և զոյգ ընդ բանիւն մերկեաց զդաշոյն՝ զնալ զիւրովին. այլ որք մերձն կային հարին կալան արգելին զնա։

Անդ ծերունին Սոփրոնիմ Թարգման դիցն կամաց՝ եցոյց նմա զի չէր հարկ մխել զձեռն իւր յարիւն որդե-կին՝ առ 'ի հաշտ առնել զՊիսիդոն, և ասէր. Յանդուգն երդումդ. անհաճոյ է դից պաշտօն անգթութեան. Զգոյշ լեր չյաւելուլ 'ի մեղս երդմանդ զկատարումն նո-րին՝ հակառակ օրինաց բնութեան։ Զե՛ն Պիսիդեայ զը-ւարակս ձիւնափայլս հարիւր, հե՛ղ զարիւն նոցա շուրջ զծաղկապսակ բագնաւ նորա, և ծխեսցեն խունկք քո 'ի հոտ անուշից առաջի դիցն։

Բայց Իդոմենէս, գլուխ 'ի վայր արկեալ, կայր ան-մռունչ. բարբառէր յաչս նորա մոլեգնութիւն. մահատիպ դիմաց նորա այլափոխեալ առաւ առաւ շրջէին գոյնք, և

դողդոջէին անդամք նորա։ Իսկ որդին ասէր։ Ահաւասիկ եմ, հայր իմ, ահաւասիկ որդեակ քո պատրաստ 'ի մահ՝ առ 'ի հաշտ առնել զնա. մի՛ ձգեր 'ի վերայ քո զցասումն աստուածային. մեռայց մնացեր, զի դու զերծանիցես 'ի մահուանէ. հա՛ր զիս, հայր, մի երկնչիր. չեմ ինչ վատասիրտ և հօրդ առաքինւոյ անարժան որդի։ Ցայնժամ Իդոմենէս խելայեղ այսահարեալ իմն 'ի ժանտից դժոխայնոց, յանպատրաստից որոց մերձն կային՝ մխեաց զսուսերն 'ի սիրտ պատանւոյն, և յետս ձգեալ զայն ծխաշունչ արիւնաթաթաւ, մինչ կամէրն արկանել զայն 'ի կողս իւր, դարձեալ 'ի վերայ հասեալ որք շուրջն կային՝ արգելլին զնա։

Անկաւ մանուկն յարեան իւրում թաւալգլոր. ծանրացան արտևանունքն նորա 'ի ստուերս մահու, և աչք նորա կիսաբացք առ խուն ինչ նշոյլ լուսոյ անհանդուրժելիք՝ փակեցան 'ի սպառ։ Որպէս շուշան չքնաղագեղ հատեալ առ արմին 'ի խոփ սայրասուր՝ տապաստ անկանի 'ի դաշտի, չև կորուսեալ զգեղ ձիւնափայլ, չև զպայծառութիւն ակնապարար, և այլ ոչ ևս ընդունի սնունդ 'ի յերկրէ և ոչ ևս կեայ; այսպէս զաւակն Իդոմենեան իբր զծաղիկ մատաղատունկ զեղաքուսիկ 'ի սկզբնաւորոյս հասակին անկանէր կորեալ։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

---

## ՄՈԼԱՐԻԼ ԿԻՄՈՂՈԿԵԱՑ ՑԱՆՑԱԳԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԵՒԴԱՐԻ ՀԱՍԱՆԵԼ ԱՌ ՀԱՅՐ ԻՒՐ

Ցասումն խաղաղոյր, և յիշատակք ցանկալիք փոխան երկիւղի զուշ նորա զրաւէին։ Ցեղյեղէր նա 'ի մտի զհին աւանդս հռչակաւոր կղզւոյն՝ ուր ետես զարև. զբաւիղն զորոյ զպաղմամանուած չքնաղս զատերք կրեսացիք զեաևս 'ի պարս բոբռեանց կերպարանէին. զհնարագէտն Դետոսոյ և զյանդգնումն Իկարու, զԻդոմենէ և զորդի նորա,

և մանաւանդ զքերսն երկոսին թշուառս՝ զՓեդրա և զԱրիադնէ։ Եւ ահա յանկարծ 'ի միտս լինէր զարտու-դի անկեալ 'ի ճանապարհէն, և զդայեակն կորուսեալ։ Աղաղակէ 'ի ձայն մեծ, և բարբառք նորա կարնչին ընդ օդս. յորդք անկեալ աղաչէր զդիս անտառաց զնապեայս և զդրիադս, և չառան նմա պատասխանի։ Համարի համախմբեալ զնոսա 'ի ձորն Մենալեայ, ուր Արկադացիք հանեն նոցա նուէրս մեծահանդէս։ Եւ լսէ 'ի հեռուստ զխուխող ջուրց, ընթանայ վաղվաղակի, յանձն լինել 'ի նայադս, մինչ 'ի ծագումն այգուն։

Աղբիւր յորդաջուր ընդ անտառ կաղամախեաց բարձանց զանհամբիժէր փրփրադէզ 'ի ժայռէ սեպացելոյ։ Եւ 'ի ստորոտ ժայռին կանգնեալ կայր բագին յաւերժհարսանց, ուր ուղևորք ուխտս և նուէրս մատուցանէին։ Կիմոդոկէ զիրկս արկեալ զբագնաւն պաղատէր առ դիս վայրացն՝ ափոփել 'ի հօրոյ դհայր իւր. և ահա ետես զոմն երիտասարդ զի յեցեալ 'ի ժայռն ննջէր։ Գլուխ նորա խոնարհեալ զկրծովք 'ի ձախակողմն կոյս, և յեցեալ 'ի փայտ նիզակի, աջ նորա թողացեալ զնիզակաւն, ունելով մեղմիկ զոտաւանէ շանն, որ թուէր շնկանջել. լոյս աստեղն զիշերայնոյ շողեալ ընդ ոստս նոճեաց երկուց՝ լուսաւորէր զդէմս որսորդին, որպէս զի ապելեան աշակերտի դքուն Ենդիմիոնի նկարեալ։

Տարփաւոր դշխոյին անտառաց համարեցաւ զպատանին դուստրն Դիմոդոկեայ, և հառաչանս դիցուհւոյն զննչել հեղասուք հողմոյ, և ճառագայթ լուսնոյ հարեանցի ընդ մայրիս նշողեալ՝ թուեցաւ նմա ժապաւէն ոսկետակափայլ զգեստուն Անահտայ՝ որ խուսէրն։

Զահի հարեալ օրիորդին յերկիւղէ զարբազան խորհրդոց աղմկելոյ, և 'ի ծունր անկեալ աղաղակէր.

«Անոստր քոյրդ Ապոլոնի, խնայեա 'ի յանդգնութիւն կուսիս և մի նետիւք քովք զիս հարկաներ. միամօր եմ հօր իմոյ, և մայրն իմ վաղ իսկ ընդ հարուածով քով անկեալ, ոչ պանծացաւ ընդ ծնունդ իմ»։

Ի ձայնէ նորա սկսեալ շանն հաջել, և 'ի հաջելոյ անտի զարթնոյր որսորդն, և ապշեալ 'ի տեսիլ օրիորդին 'ի գուճս, յարեաւ անդէն:

Իսկ Կիմոդոկէ խռովեալ, և 'ի գուճս որպէս անկեալն կայր, ասէ.

« Մի եթէ դո՞ւ իցես որսորդն Ենդիմիոն »:

Եւ պատանին ոչ ինչ նուազ խռովեալ՝ ասէ.

« Իսկ դու 'ի զուարթնո՞ց արդեօք ոք իցես »:

Ցուցեալ դստրն Դիմոդոկեայ. « Հրեշտա՞կ »...

Ցայնժամ պատանին հիւր ասէ տագնապեալ.

« Կին դու, յառն կաց. Աստուծոյ միայնոյ արժան է երկիր պագանել »:

Եւ յետ վայրկի մի լռութեան՝ յաւել քրմուհին.

« Եթէ չիցես դու յանմահից որք ընդ կերպարանօք մարդոյ թագուցեալ, պանդուխտ ոմն արդեօք իցես 'ի մարդատեաց ընդ անտառս իբրև զիս ատերբերեալ: Ընդ ո՞ր հանգրուան նաւ քոյին եմուտ. 'ի Տիւրոսէ՞ գաս 'ի մեծափարթամ քաղաքէն, թէ 'ի հրաշագեղն Կորընթեայ, ազնիւ պարգևօք յապանջականացն քոց ճոխացեալ. Թերևս ոք յայնցանէ իցես, որք ծովէ 'ի ծով մինչև յարձանսն Հերակլեայ գնան տարադէմք 'ի շահավաճառ: Մի՞ դուցէ դժնեայն դու իցես Արէս գոռ 'ի պատերազմ, կամ որդի ուրուք 'ի մահկանացուաց՝ որք ընդ արքունի գաւազանաւ կալան զկողմն ինչ երկրի զխաշնաւէտ և զդիցն սիրելի »:

Հիւրն ասէ.

« Չիք ոք՝ բայց մի Աստուած, տէր և իշխան տիեզերաց. այր մի տկար և տառապեալ եմ ես: Եւդոր է անուն իմ. որդի եմ Լասթենեայ. 'ի Թալամ երթեալ, և արդ առ հայրն իմ դառնամ. գիշերոյ 'ի վերայ հասեալ՝ հանգեայ առ աղբերաւս: Այլ քեզ առ ի՞նչ դեգերել աստ միայնակ: Անարատ պահեսցեն երկինք զպատկառանս քո, զերկիւղ գեղեցկագոյն յետ երկիւղածութեան յԱստուծոյ »:

Կերպարանք բանից նորա խռովէին զԿիմոդոկէ, և սէր և պատկառանս, երկիւղ և համարձակութիւն միանգամայն 'ի սիրտ նորա ազդէին։ Նորանշան իմն և ներհակք երերաց թուէին նմա ծանրութիւն բանից առնն և շնորհք երեսացն, և գերաշխարհիկ ոմն զնա համարէր, վեհ և վսեմ քան զամենայն ոք՝ զոր տեսեալն էր ցայնվայր և ծանուցեալ։

Եւ յաւելեալ 'ի նմա կարծելով զգութ՝ զոր ցուցանէրն Եւդոր ընդ աղէտս իւր, ասէ.

«Դուստր եմ ես Հոմերոսի, որ զանմահական տաղսըն երգեաց»։

Հակիրճ առ այս ետ հիւրն պատասխանի.

«Այլ իմ գեղեցկագոյն քան զնորայն տեսեալ է գիրս»։

Եւ շփոթեալ Կիմոդոկեայ ընդ համառօտ պատասխանին, ասէր ընդ միտս.

«Ի Սպարտացւոց արդեօք ոք է սա»։

Եւ ապա պատմեաց նմա որ ինչ անցք անցեալ էին ընդ իւր, և ասէ ցնա պատանին.

«Ե՛կ ածից զքեզ առ հայր քո»։

Եւ առաջնորդէր նմա, և օրիորդն գնայր զկնի նորա. հինինայր գաղաղով, և առ 'ի սրտապնդել սակաւիկ մի՝ փորձէր բարբառել, բանս ինչ զովեստից 'ի մէջ արկեալ զգեղեցկութենէ դիւցազարմն գիշերոյ, հարսինն Էնդիմեայ, և մօր Եսպերեայցն և Միրոյ։ Բայց պատանւոյն խափանեալ զբանս նորա, ասէր.

«Զաստեղս ևեթ տեսանեմ ես՝ որք պատմեն զփառըս Աստուծոյ»։

Այս բանք յաւելլին աղմկել զսիրտ քրմուհւոյն. չգիտէր զի՞նչ այնուհետև խորհել զանէն անծանօթէ, զոր յանմահից ոք 'ի սկզբան անդ համարեալ էր։ Վարանէր 'ի խորհուրդս իւր, մի՞ արդեօք յամպարշտաց ոք իցէ, որ գիշերի թափառեալ շրջին ընդ երկիր, ատելիք մարդկան և հալածեալք յաստուածոց. կամ հէն ծովային իջեալ 'ի

նաւէ, յափշտակել զորդիս 'ի հարց։ Արհաւիրք 'ի սրտի նորա խլրտէին, այլ ոչ իշխէր զտագնապ սրտին 'ի վեր հանել. և հիացումն անհնարին կալեալ զնա 'ի տեսանելն զի խոնարհեալ պատանւոյն զճանապարհայն 'ի սորուկ մի լքեալ 'ի բաղի, եղբայր իւր կոչէր զնա և տայր նմա զվերարկուն առ 'ի ծածկել զմերկութիւն իւր։

Եւ ասէ. Հիւրդ, յաստուածոցն ոք արդեօք համարեցար զգերիդ, ծածկեալ ընդ կերպարանօք աղքատի, առ 'ի հանդէս առնել սրտի մահկանացուաց։

Ոչ այգպէս, յաւել Եւդոր. այլ համարեցայ զնա մարդ մահկանացու։

Եւ ահա հողմն ցողագին շնչեալ յարեւելից, այդ զհետ հառաչէր. և ընդ հուպ 'ի լերանց Լակոնիոյ ծագեալ արեգակն՝ անամպ և ջինջ ամենևին, ճառագայթարձակ ընդ երկինս խաղայր։

Եւ յանկարծ 'ի շրջակայ անտառէն 'ի դուրս վազեալ Եւրիմեդուսայ, դիմէր բաղկատարած առ Կիմոդոկէ, և աղաղակէր.

Դուստր իմ, որպիսի վիշտս հասուցեր ինձ. լցի զօդս հեծեծանօք. կարծէի յափշտակեալ զքեզ 'ի Պանայ 'ի ժանտ աստուծոյն, որ թափառեալ շրջի միշտ 'ի մէջ անտառաց, և 'ի կաքաւել նորա ընդ ծերոյն Սիլենեայ՝ ոչ ևս ոք հաւասարէ յանդգնութեան նորա։ Զիա՞րդ մարթ էր ինձ առանց քո երևել առաջի տեառն իմոյ սիրեցելոյ։ Աւաղ ինձ. դեռ ևս 'ի ծաղկի տիոց, յորժամ յափունս Նաքսոսի հայրենեաց իմոց զբօսնուի, յափշտակեցայ յանկարծ յամբոխէ մարդկան, որ դէն 'ի ձեռին ընթանան ընդ սահմանս թագաւորութեան Թեսեայ, զառ և զկապուտ մթերելով։ Եւ ածին զիս 'ի վաճառ 'ի նաւահանգըստի ուրեք Կրետացւոց, որ հեռի է 'ի Գորտինայ երից աւուրց և կիսոյ գնացք ստորհանդակի։ Հայր քո եկեալ էր 'ի Լերենէ, փոխանակել ցորեան 'ի Թէոդոսիոյ՝ ընդ գործս Միլեսացիս. և գնեաց զիս 'ի հինից անտի երկուց ցլուց՝ որոց չև ևս էր պատառեալ զակօս Դեմետ-

րեայ։ Եւ գիտացեալ զհաւատարմութիւն իմ, կացոյց զիս
գիշերապահ առագաստին։ Իսկ յորժամ անկարողոյն
Նիկեթեայքն արկին յարկէ զՆուպիգարիս, ինձ զքեզ յանձն
արար Դեմոդոկ, զի եղէց քեզ փոխանակ մօր։ Որպիսի՜
ցաւոց տարայ ես յաւուրս մանկութեան քոյ. զգիշերն 'ի
գլուխ հանէի առ որրանաւդ, և 'ի վերայ ծնգաց իմոց
զքեզ տատանէի։ Յիմէ՞ ևեթ ձեռանէ խնդրէիր կերա-
կուր, և 'ի հեռանալ իմում առ վայր մի 'ի քէն, դու ճիչ
բարձեալ արտասուէիր։

Զայս ասէր, և գիրկս արկեալ փարէր զնովաւ Եւրի-
մեդուսա, և արտասուօքն թանայր զերկիր։ Իսկ Կիմո-
դոկեայ յուզեալ գութք ընդ այնչափ խանդաղատանս
դայեկին, համբուրէր զնա արտասուօք և ասէր.

Մայր իմ. Եւդոր է դա, որդին Լասթենեայ։

Իսկ պատանին յեցեալ 'ի նիզակ իւր, հայէր զարմա-
ցութեամբ 'ի տեսիլն. զի անծայրի հանդարտութիւն
դիմաց նորա՝ տեղի ետ քաղցր խանդաղատանաց. այլ
յանկարծ յառաջինն իւր դարձ արարեալ 'ի հանդարտու-
թիւն, ասէ. Դուստր Դեմոդոկեայ, ահա դայեակ քո,
և ոչ ինչ հեռի է աստի տուն հօր քոյ։ Գթասցի Աստուած
'ի հոգի քո։

Եւ պատասխանւոյ անգամ ոչ մնացեալ Կիմոդոկեայ,
թռանայր 'ի բաց որպէս զարծուի։ Իսկ քրմուհին, որ հրա-
հանգեալ էր 'ի հառաչմայս, մի յանմահից համարեալ
այնուհետև զպատանին որսորդ, դարձուցանէր զերեսս
իւր 'ի բաց, թէ գուցէ 'ի տեսիլ դիցն հասցէ նմա մահ։
Աճապարեաց ապա ելանել մագլցի ընդ լեառն Իթոմ. և
անցեալ ընդ աղբերսն Արսինոյեայ և Կլեպսիդրայ, բա-
խէր զդուռն տաճարին Հոմերոսի։

Քրմապետն ծերունի զգիշերն ողջոյն թափառեալ
էր ընդ անտառս, և խնդրակս զկնի նորա արձակեալ
'ի Լևկտրա, 'ի Փերէս և 'ի Լիմնէ, զի և ոչ բացակայու-
թիւն փոխանակի բդեշխին յապահովէր զգութն հայրե-
նի։ Երկնչէր Դեմոդոկ 'ի բռնութենէ Հերոկլեայ, թէ-

պէտ և 'ի Հռովմ էր նա յայնժամ, և աղէտս ևեթ տխ-րեցելոյ խորումն Կլիմոդոկեայ կասկածէր։

Իսկ յորժամ եհաս նա ընդ դայեկին 'ի տուն, հայրն տառապեալ բազմեալ կայր առ վառարանին 'ի գետնի. և զգլխով ածեալ զձորձ իւր, արտօսր 'ի մոխիր անդր ցօղէր. և յանակնկալ տեսիլ դստերն՝ փոքր միւս ևս առ մեծի խնդութեանն մեռանէր։ Դիմեաց 'ի գիրկս նորա Կլիմոդոկէս, և ոչ ինչ այլ 'ի սկզբան անդ լսելի լինէր՝ բայց հեկեկախառն հառաչանք, որպէս 'ի բոյնս թռչնոց՝ յորժամ մայրն բերեալ ջամբէ կեր ձագուց։ Դադարեալ ապա Դեմոդոկ յարտասուաց, ասէ. Դուստր իմ, ո՞ 'ի դից դարձոյց զքեզ առ հայր քո։ Զիարդ եղև ինձ թո-ղուլ քեզ գնալ միայնակ 'ի տաճար անդր։ Երկիւղ է ինձ 'ի թշնամեաց. խիթամ յորբանեկացն Հերակլեայ, որ արհամարհէին զաստուածովք և ծաղր առնէ զարտասուաւք հարց։ Այլ ես տարադէմ ընդ ծով երթայի խոնարհել անկանել յոտս կայսեր, առնէի ցնա. Տո՛ւր ինձ զիմս Կլի-մոդոկէ. ապա թէ ոչ՝ բարձ և զկենաս իմ։ Աշխար-հագոյժ առնէի զիմ վիշտ հայրենի, ելեալ 'ի խնդիր զհետ քո ցորքայր ծագիցէ արեգակն. հանգոյն Դե-մետրեայ՝ յորժամ պահանջէրն զդուստր իւր յափշտա-կեալ 'ի Պլուտոնէ։ Ողորմելի են աղէտք ծերունւոյ հօր որ անզաւակեալ մեռանիցի. զիակն իսկ նորա լիցի ա-տելի, և մանկտին զծաղու եկեալ առիցէ. Այս այր անօ-թէն էր, և անձեռ զնա արարին դիք. չիք նորա զաւակ որ տացէ զմարմին նորա հողոյ։

Յայնժամ Կլիմոդոկէ գեղեցիկ ձեռօքն զհայրն իւր ծերունի գգուելով, և զարծաթափայլ ալիսն փոյփայե-լով ասէ.

Հայր իմ, աստուածազգեցիկ երգիչք անմահից, մո-լորեցայք ընդ անտառս, և երիտասարդ ոմն կամ մանա-ւանդ յաստուածոցն ոք դարձոյց զմեզ այսր։

ՇԱՏՕԳՐԻԱՆ. վկայք։

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԿԻՒՐՈՍԻ

Իբրեւ եղեն Կիւրոսի ամք երկոտասան, Մանդանէ մայր նորա ած զնա 'ի Մարս առ Աժդահակ հայր իւր, քանզի յոյժ ցանկայր նա տեսանել զմանուկն վասն բարի համբաւոյն՝ զոր լսէր զնմանէ: Եւ տես անդ Կիւրոս բարս ներհակակիրս աշխարհին իւրոյ. քանզի անդ ամենայն ինչ պերճութիւն էր, զեղխութիւն եւ մեծագործութիւն: Զարդարէր Աժդահակ 'ի հանդերձս երեւելիս. զաչսն 'ի ծարիր եւ զդէմս 'ի սնգոյր շպարէր, եւ կեղծամս ընդ վարսս իւր խառնամանէր. քանզի սովոր էին Մարք մեղկիլ իբրեւ զկանայս, ծիրանազգեաց լինել, եւ քառամանեակս արկանել եւ ապարանջանս, ընդհականակն Պարսից՝ որք անպաճոյճ զգենուին: Ոչ շլացաւ Կիւրոս 'ի պայծառութենէ անտի, եւ ոչ պարտաւորէր լեալ տեսլեացն, այլեւ կալաւ զուսումն մանկութեան իւրոյ: Զմայլեցուցանէր զԱժդահակ աշխոյժ հանճարաբանութեամբքն, եւ ունէր շնորհս առ ամենեսեան ազնուական եւ սիրելի բնաւորութեամբն: Ի բազմաց անտի հանճարեղ գործոց նորա՝ միայն եւ զայլս ընթերցողք գուշակեսցեն:

Խորհեցաւ Աժդահակ մոռացուցանել նմա զհայրենիսն, եւ եւս պատրաստել մեծապէս կոչունս ամենայն շռայլութեամբ, ըստ յաճախութեան խորտկացն եւ ըստ ազնուութեան: Իսկ Կիւրոս յայն ամենայն ապաս ցանկալիս արհամարհանօք հայեցեալ, իբրեւ զարմանայր ընդ նա Աժդահակ, ասէ. Ոչ այսու բազմապատիկ եւ երկայն աշխատութեամբ յագեցուցանեն Պարսք զքաղց. համառօտ է առ նոսա ճանապարհ. հացիւ եւ կոտեմաւ շատանան: Եւ հրաման առեալ 'ի նմանէ բաշխել անձանց զկերակուրս՝ որ էին 'ի սեղանի անդ, եւ ամենե-

Digitized by Google

ցուն իշխանաց արքայի մասն՝ ըստ իւրաքանչիւր վաստակոց. միումն զի ձիավարել ուսուցանէր նմա, և միւսում զի բարւոք ծառայէր արքայի, և այլում զի խնամէր զմայր իւր. և տակառապետին Աժդահակայ, որում անուն էր Շակաս, ոչ եհան բաժին. զի էր այրն ոչ միայն մատռուակ արքայի, այլ և զամենեսեան որ կամէին մտանել առ արքայ՝ ինքն մուծանէր. և զի ոչ որպէս կամէրն Կիւրոս՝ մատուցանէր զնա առ Աժդահակ, դժուարեալ ընդ այն՝ եցոյց զցասումն իւր անդ։ Եւ 'ի դժկամակել Աժդահակայ ընդ նախատինս իշխանին, զի յոյժ սիրելի էր նմա ճարտար մատռուակութեամբ բաժակին, ասէ ցնա Կիւրոս. Եթէ ոչ այլով իւիք քան զայդ՝ հնար իցէ գտանել շնորհս առաջի քո, հայր, դիւրաւ գտանիցեմ զայդ՝ ճարտարագոյն քան զնա մատռուակելով։ Եւ զգեցեալ անդէն զկերպարանս մատռուակի, մատեաւ մեղմաքայլ և ակնածութեամբ, ղենջակ 'ի յուս, և զբաժակ 'ի ձեռին բարեձևութեամբ ծայրիւք մատանցն ունելով, մատոյց արքայի այնու ճարտարութեամբ, մինչև 'ի զարմանս զնա ածել և զՄանդանէ զմայր իւր։ Եւ ապա անկեալ զպարանոցաւ հաւոյն իւրոյ և համբուրեալ զնա, գոչէր խնդութեամբ. Աւա՛ղ, ո՛ Շակաս, կորուսեր զփառսդ, և ես կալայ զայն։ Եւ Աժդահակ սիրեաց զնա և ասէ. Քաջ է, որդեակ իմ, և ոչ էր հնար լաւ ևս սպասաւորել. այլ զկարևորն մոռացար՝ առնուլ նախ զճաշակ գինւոյն։ Քանզի այս սովորութիւն էր մատռուակին, արկանել սակաւ ինչ 'ի բաժակէ անտի յաջեակ ձեռն իւր, և անձամբ նախ ճաշակեալ՝ ապա մատուցանել զբաժակն արքայի։ Պատասխանի ետ Կիւրոս. Ոչ ակամայ սխալեցի զայդ։ — Եւ ընդէ՞ր։ — Զի մի՛ թոյն իցէ 'ի բաժակին։ — Թո՞յն, և ո՞րպէս։ — Քանզի յառաջ քան զաւուրս զայսոսիկ 'ի կոչունսն՝ զոր ետուր մեծամեծաց քոց իշխանաց, իբրև սակաւ մի 'ի բաժակէ այտի արբին, կոչնականացն ամենեցուն շուրջ գալ թուէր աշխարհս, և երգէին և աղաղակէին և բանս զառանցելոց

մտաց բարբանջէին. Նոցա զծառայութիւն իւրեանց մոռացեալ, և քո զարքայութիւն. և իբրև կաքաւել կամէիր, ոչ կարացեր յոտին կալ: — Եւ ոչ երբէք այդ անցք և ընդ հայր քո անցին: — Բնաւ ամենևին ոչ: — Իսկ որպէս: Եւ ասէ Կիւրոս. Քանզի ըմպելեաւ նա զծարաւն բուժէ, և այս միայն անցք անցանեն ընդ նա:

ՌՕԼԷՆ. Հնախօսութիւն:

---

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՊՕՂԱՅ ԵՒ ՎԻՐԳԻՆԵԱՅ

Բայց բարեբոյս բնաւորութիւն մանկանցն օր ըստ օրէ դայր յերևան. յաւուր միում կիւրակէի ընդ այգն, մինչդեռ մարք նոցա երթեալ էին 'ի նախկին պատարագն յեկեղեցւոջ 'ի Բամբլըմուս, կին մի խափշիկ լեռնաբնակ եկն եկաց ընդ պատուանեօք՝ որ շուրջ կային զհիւղիւն, և էր նիհար մեռելատիպ, և փոխանակ համգերձից կապերտ զմիջով ածեալ սփածանելի: Անկաւ առ ոտս Վիրգինեայ, մինչդեռ զնախաճաշ ընտանեացն պատրաստէր, և ասէ. Օրիորդիկ, գթա 'ի ստրուկս հէք և փախստական. յամսօրեայ աւուրց շրջիմ թափառական 'ի լերինս յայսոսիկ կիսամահ 'ի սովոյ, և յորսականեաց հալածական. յերեսաց տեառն իմոյ փախուցեալ եմ, յումեմնէ 'ի ճոխից գետափնեայց Սեաւ գետոյ. Նա ինքն հարոյց զիս յայս աղէտս: Եւ զայս ասացեալ, ցուցանէր զկապուտակ հարուածս գանից 'ի մարմնի իւրում, և զսպիս վիրացն, և յաւել. Գետամոյն խորհէի զանձն իմ կորուսանել. այլ իբրև գիտացի զի դուք աստ բնակէք, ասեմ. Չև ևս մեռայց. են աստ ազնուականք բարեգործք: Վիրգինեայ զալարեցան աղէք,

և զճաշիկն՝ զոր ընտանեացն պատրաստէր՝ մատոյց նմա, և ասէ. Քաղցրերեաց, եղկելի դու, կեր և արբ։ Իբր 'ի ապաւել հնդկին խոկոյն զկերակուրն և 'ի զօրանալ, յաւել Վիրգինիա. Իմ եկից հաշտ առնել զտէր քո ընդ քեզ, եթէ կամիս՝ հէք աղքատիկ՝ ածել զիս առ նա. յերեսաց աղետիցդ շարժեցի նա 'ի գութ։ Իբր հնդիկն ասէ. Հրեշտակդ ինձ երկնաւոր, եկից ընդ քեզ ուր և կամիցիս։ Յայնժամ կոչեաց Վիրգինիա զՊօղ և աղաչեաց զնա գնալ ընդ իւր. և հնդիկն առաջնորդէր նոցա ընդ անտառս և ընդ բարձրաբերձ լերինս, ընդ որս բազում ճգամբ 'ի վեր մագլէին, և ընդ լայնածաւալ գետս, ընդ որս հետի անցանէին, մինչև հասին զմիջաւուրբ 'ի ստորոտ լերին միոյ յեզր Սեաւ գետոյ, ուր էր տուն գեղեցկաշէն և ծառատունկ ընդարձակ, և ամբոխ գերեաց յազգի ազգի վաստակս պարապեալ։ Տանուտէրն 'ի միջի անդ ծխելեաւն 'ի բերանի և եղէգն հնդիկ յաջում ձեռին զգնայր, այր բարձրահասակ, վտիտ մարմնով և թխատիպ, խորակն և կցայօն, սևաթոյր յօնիւք։ Վիրգինեայ զդողանի հարեալ և զձեռանէ կալեալ Պօղայ, մատեաւ առ այրն և աղաչէր զնա, վասն սիրոյն Աստուծոյ ներել գերւոյն, որ անդ փոքր մի 'ի բացէ կայր։ Նորա յաղքատին զգեստս մանկանցն վեր 'ի վերոյ ակնարկեալ, ոչ ինչ 'ի սկզբան անդ երեսս տայր նոցա. այլ 'ի նկատել զչքնաղագեղ դէմս Վիրգինեայ, և զդեղձանիկ ընդ կապուտակ քօղովն անկեալ խոպոպսն, և 'ի լուր քաղցրաձայն բարբառոյ նորա՝ որ ընդ բոլոր անձինն դողդոջէր, արկ զծխիչն 'ի բերանոյ, և 'ի վեր առեալ զցուպն եղեգնեայ, երդուաւ երդումն զարհուրելի, և ասէ. Ոչ 'ի սէր Աստուծոյ, այլ 'ի սէր քոյին ներեալ աղախնոյդ։ Յայնժամ Վիրգինեայ ակնարկեալ գերւոյն մատչել առ տէր իւր, խոյս ետ ինքն 'ի բաց, և զհետ նորա Պօղ։

Իբր դարձ արարեալ նոցա ընդ զառ 'ի վեր լերինն՝ ընդ որ իջեալն էին, իբրև 'ի կատար անդր հասին, վաս-

տակարեկ նկթեալ և ծարաւի նաւաւն ընդ ծառով. զի աւելի քան զհինգ փարսախ տարածեալ էր նոցա յելից արեգականն անտառաց: Յայնժամ Պօղ ասէ ցՎիրգինիա. Վաղ իսկ օրս ընդ միջեցաւ, քոյր իմ, և դու քաղցեալ և ծարաւի ես, և չիք ինչ աստ 'ի ճաշակ. Ե՛կ իջցուք անդրէն առ եզր գետոյն, խնդրել 'ի նմանէ կերակուր: Պատասխանի ետ Վիրգինիա. և ասէ. Ո՛հ մի, եղբայր իմ, անհարեկ տարար զիս այդն այն. յիշեա զոր մայրիկն մեր ասէ. Որ ուտէ զհաց անզգամին, լցցի բերան նորա կայծով: Երկնեալ անդրէն պատասխանեալն ասէ. Եւ զի՞նչ գործիցեմք. պտուղք ծառոցս անախորժք են 'ի կերակուր. չիք աստ զամոն, չիք կիտրոն առ 'ի զովացուցանել զպապակ քիմն: Եւ Վիրգինիա յաւել. Որ կերակրէին զձագս թռչնոց՝ որ կարդան առ նա, ոչ թողցէ զմեզ: Եւ զոյգ ընդ բանին լսելի եղև խոխոջ ջուրց զահավիժելոյ. և ընթացեալ անդր՝ հարին զպապուք յականակիտս ալեաց անտառի, և որ զեզերբք ջուրցն աճեցեալ էր ջրկոտեմ, քաղեալ և ճաշակեցին զայն: Այլ մինչդեռ հաստատուտագոյն ինչ կերակրոյ 'ի խնդիր զայս ածէին, ետես Վիրգինիա 'ի ծառս անտառին մատաղատունկ ինչ հանեգոյն արմաւենւոյ որ 'ի մէջ սաղարթուց 'ի զազաթանն բերէ պտուղ կաղամբաձև ախորժ 'ի ճաշակ: Բայց բուն ծառոյն՝ ոչ ինչ ստուարագոյն քան զբազուկն. այլ բարձր էր աւելի քան զվաթսուն ոտնաչափ. և թէպէտ որակ փայտին յաղթնաձև թելից յօդեալ, այլ կարծրամէջն և անտանելի տայրուտուր տապարաց: Իսկ Պօղ, ոչ ունելով ընդ իւր և ոչ դանակ, մտաբերեաց հուր հարկանել զծառոյն. այլ և այն դժուարին. զի ոչ գոյր նորա հրահան և ոչ յապաւաժուռ կզլուղա կայծքար որ թեք է գտանել: Բայց հարկ 'ի հնարս դրդէ զհանճար, և յոլովք 'ի պիտանեգոյն գիւտից՝ կարօտութեան են արդասիք: Խորհեցաւ նա ըստ օրինակի հնդկաց վառել հուր. և առեալ ընդ ոտիւք սուր ծառոյ զօսացելոյ, ծակ 'ի նմա գործեաց սրածայր քարիւ, և սայրիւ նորին

տաշեալ երիթ յոյլասձռ ծառոյ, մխեաց զայն 'ի ծակ ստորոյն որ ընդ ոտիւքն էր, և արագ արագ շրջշրջեալ զայն ընդ ափ, որպէս որ զխառնիչ յեռալ շոքոլաթին պտուտկէ, և ահա ծուխ ընդ ծակն ելանէր և թօթափէին անտի կայծակունք: Ցայնժամ քաղեալ խուխ և կրկուտ ցամաք՝ ելոյց հուր զարմամբ ծառոյն, և ահագին ճարճատմամբ կործան անկաւ արմատենին: Նոյնին հրով և զպտուղ ծառոյն 'ի փչալից և 'ի սաղարթապատ 'ի կարծր պատենիցն կեղեւեալ, զկէս նորին կերան անեփ, զմիւս կէսն մուրկ ընդ մոխրով, երկոքին ևս ախորժ 'ի ճաշակ. և առաւօտին բարերարութեան իւրեանց յիշատակ յաւելոյր բերկրանս 'ի կերակրիկն: Բայց բերկրութիւն նոցա աղմկէր յածել զմտաւ զհոգս մարցն ընդ յամեցումն դարձի իւրեանց 'ի տուն, զոր Վիրգինիա յեղյեղէր ստէպ. իսկ Պօղ զօրացեալ կերակրովն, հանդարտէր զնա և ասէր. Հուպ ընդ հուպ հասեալ 'ի տուն, սփոփեսցուք զնոսա:

Եւ յարուցեալ 'ի ճաշոյն առ 'ի գնալ, վարանէին զի չէր ոք նոցա ուղեցոյց. այլ Պօղ, որ ոչն երբեք վհատէր, ասէ. Ի միջօրեայ արեւն կայս հանդիպի հիւղս մեր. պարտ է մեզ անցանել ընդ լեառնդ երեքսարեան՝ ընդ որ իջաքն յառաւօտու. համպա ընթասցուք, քոյր իմ: Այն էր լեառն Եռասարին, յերեցունց սարիցն ձեւոյ առեալ զանուանակոչութիւնն: Եւ իջեալ 'ի լեռնէ անտի Սեաւ գետոյ ընդ հիւսիսակողմն, և ժամու չափ ուղևորեալ, հասին յեզր լայնածաւալ հեղեղատի՝ որ հատանէր զանցս նոցա: Կողմն այն կղզւոյս՝ ընդարձակ և անտառախիտ՝ ցարդ իսկ անծանօթ է, և յոլովից 'ի գետոց և 'ի լերանց նորա չիք իսկ անուն. իսկ հեղեղատն յոր հասին՝ խաղայր ընդ ժայռս յորձանահոս: Ի խոխոջ ալեաց նորա երկուցեալ Վիրգինեայ, չիշխէր հետեւակել ընդ հունն. յայնժամ Պօղայ ստանձնեալ զնա, անց բեռամբն հանդերձ ընդ լպիրծ ապառաժս աներկիւղ 'ի յորձանացն, և ասէր ցՎիրգինիա. Մի՛ երկնչիր. հզօր եմ քեւ. եթէ չէր տա-

նուաճեալն ներհեալ աղախնոյն, մենամարտէի ընդ նմա։ Եւ Վիրգինիա ասէ. Դո՞ւ ընդ հսկային ընդ այնմիկ չարի. տես յոր վտանգ ածի զքեզ. ո՛հ, քանի՜ դժուարին է բարերարել, չիք ինչ դիւրին քան զչար գործել։

Եւ իբրև հասին 'ի ցամաք, գտեալ եւս պատանին բարձեալ բերէր զՎիրգինիա, և կամէր ընդ լեառնն իսկ Եռաստանին, որ կէս փարսախաւ հեռի էր անտի, ելանել բնակութեամբն. այլ ոչ եւս յերկարեաց 'ի տոկ, հարկեցաւ դնել զնա յերկիր, և բազմեալ առ նմա հանգչէր։ Ցայնժամ ասէ ցնա Վիրգինիա. Ով խոնարհի, եղբայր իմ. դու տակաւին յուժի կաս, այլ իմ սպառեաց զօրութիւն. Թո՛ղ զիս աստ, և փութա դու 'ի տուն՝ հանգուցանել զսիրտ ծնողացն մերոց։ Պատասխանի ետ Պօղ և ասէ. Մի՛ լիցի ինձ այդ. ոչ թողից զքեզ. եթէ գիշեր 'ի վերայ հասցէ մեզ յանապատիս, լուցից հուր, հարից միս եւս արմաւենի. զպտուղ նորա կերիցես, և սաղարթիւքն յօրինեցից քեզ տաղաւար։ Էր անդ զգետեզերբն ծառ վայրենի, և 'ի կոճեղ նորա աճեցեալ տերևք երկայնք ցաղկենեայ. իբրև փոքր մի զօրացաւ Վիրգինիա, քաղեալ 'ի տերևոց անտի՝ արար իւր տրեխս ոտիցն վիրաւորելոց ընդ քարուտս. զի նա հապճեպ փութոյ 'ի բարերարել, մոռացեալ էր ագանել կօշիկս։ Եւ 'ի զովանալ ոտիցն 'ի տերևոց անտի, ոգի առեալ եհատ 'ի հնդիկ եղեգանց իւր ցուպ, և յուղի անկաւ, յեցեալ միով ձեռամբն 'ի Պօղ և միւսովն 'ի ցուպն եղեգնեայ։

Գնային հանդարտաքայլ յանապատին. բայց մայրք բարձրաբերձք և սաղարթախիտք ծածկեցին յաչաց նոցա զլեառնն Եռաստանին՝ յոր դէմ եղեալ էր նոցա, և զարեգակն՝ որ 'ի մուտս խոնարհէր։ Եւ 'ի գնալ փոքր մի եւս յառաջ, մոլորեցան տակաւ յարահետ ճանապարհէն, և անկան 'ի բաւիղ անել անտառախիտ և ապառաժուտ։ Ցայնժամ նստոյց անդ Պօղ զՎիրգինիա. և ինքն խուզեալ այսր անդր ընթանայր խնդրէր ելս 'ի մացառախիտ անտառէն, այլ 'ի զուր։ Ել նա 'ի կատար միոյ 'ի ծառոց

բարձանց, դիտել տեսանել զկեանսն․ բայց զզուարթունս ևեթ մայրեաց տեսանէր շարժմանակի 'ի նշոյլս մտից արեգական փայլեալ: Վաղ իսկ ստուերք լերանց ձգտեալ երկայնեալ՝ ծածկէին զանտառս ընդ հովիտս, և 'ի հողմախաղաղ հանդարտել երեկոյին՝ խոր լռութիւն պատէր զվայրսն անմարդիս, ոչ այլ ինչ լսելի լեալ՝ բայց բառաչ եղջերուաց 'ի հեռաստանէ դիմելոց 'ի դադարս իւրեանց: Խորհեցաւ Պօղ զի թէրևս ոք յորսորդաց լուիցէ, և գոչեաց ուժգին. Եկայք, հասէք յօգնութիւն Վիրգինեայ: Այլ արձագանգք ևեթ անտառին կրկնեալ և երեքկնեալ զնոյն անգրէն ձայն տային՝ Վիրգինէ՛, Վիրգինէ՛:

Իջեալ ապա պատանեակն 'ի ծառոյ անտի խոնջ և տխուր, խորհէր գիշերօթել առ անդէն. այլ ոչ գոյր անդ ոչ աղբիւր, ոչ արմաւենիք, և ոչ փայտ չոր 'ի հուր. և զփորձ առեալ զի ամենայն հնարիւքն և ճգամբք չէր իմիք ձեռնհաս, սկսաւ լալ: Յայնժամ Վիրգինէ ասէ. Մի՛ լար, եղբայր իմ, եթէ ոչ կամիս ընկճել ինձ 'ի վշտաց. ես իսկ եմ պատճառք տառապանաց քոց, և մարցն մերոց՝ որ հոգան արդ զմէնջ. ահա չէ պարտ և բարերարել իսկ անհրամանն 'ի ծնողաց. ո՛հ, զի անմտացայ յոյժ: Նա զայս ասացեալ՝ սկսաւ և ինքն լալ. և ապա յաւել. Այլ, Ո՛վ, Պօղ, յաղօթս կացցուք, զի ողորմեսցի մեզ Տէր: Եւ մինչդեռ զաղօթսն կատարէին, հաջել շան լսելի եղև, և ասէ Պօղ. Ասպարականաց է ձայնդ. թէրևս ոք յորսորդաց դիմէ նմանաւ 'ի վերայ եղջերուաց: Եւ 'ի յաճախել կաղկանձելոյ շանն, ասէ Վիրգինէ. Հաջիւն շան մերոյ թուի ինձ այդ, այո՛ հաջիւն հաւատարմին. ծանօթ է ինձ ձայն նորա. մօտ ուրեմն իցեմք 'ի հիւղ մեր և 'ի լեռնոտն մեր հասեալք: Վայրկեան մի. և ահա եհաս շնիկն և փարեալ զոտիւք նոցա՝ հաջէր կաղկանձէր կաղկաղէր և քծնէր: Եւ 'ի հիանալ նոցա ընդ այն, և ահա տեսին զի դիմեալ գայր Դոմինիկ. որ իբրև եհաս առ նոսա արտասուելով այրն աղաղակէր 'ի

Digitized by Google

խնդութենէն, յարտասուս հարան և ինքեանք՝ կացեալ լուռ և անբարբառ։ Եւ ապա Դոմինիկ 'ի հանդարտելն ասէ. Տեարք իմ պատուականելիք, քանի՜ հոգս յաւելիք մարց ձերոց. մինչ ես տառապեցայն նոքա 'ի չգտանելն զձեզ 'ի տուն 'ի դառնալ իւրեանց ընդ իս յեկեղեցւոյ։ Մարիամ յանկարծ ուրեք պարապեալ 'ի գործ՝ անգիտանայր ուր երթեալն էիք։ Այսր անդր ընթանայի, ոչ գիտելով յո՞ դիմել 'ի խնդիր. և ապա առեալ զցնցոտիս ձեր մատուցի 'ի հոտոտելիս շնկանն. և նորա իմացեալ գոգցես զմիտս իմ, սկսաւ իսկոյն հետազօտել զձեզ. և յուղի անկեալ, յար զձեռն տատանելով, ած զիս մինչև 'ի Սեաւ գետ։ Անդ անձ 'ի բնակչաց պատմեաց ինձ, զի զաղախին նորա փախստական առ նա ինքն դարձուցեալ է ձեր, և նորա 'ի շնորհս ձեր ներեալ աղախնոյն. այլ ներումն որպիսի՜։ եցոյց ինձ զեղկելին տանջակապեալ 'ի կոճեղս, և անուր երկաթանի 'ի պարանոցին։ Անտի շնիկն, անդադադար 'ի հետազօտելոյ, ած զիս 'ի լեառն՝ որ առ Սեաւ գետով, և զկայ առեալ անդ, հաչէր ուժգին առ մեծ յարմաւենեաց՝ որ տապալեալ կայր, և ծխէին խանձողք առ նովաւ. և ապա առաջնորդեաց ինձ այսր 'ի ստորոտ Եռամատին լերինս, ոչ ինչ հեռի 'ի բնակութենէս մերմէ քան զչորս փարսախս։

Եւ եդեալ առաջի նոցա քաքար և միրգս և հաղաղակ մի շաքարական՝ զոր մարց նոցա պատրաստեալ էր, զինի շաքար կիտրոն և ընկոյզ հնդիկ ջրախառնեալ, կազդուրել զնոսա և զովացուցանել, ասէ. Կերայք, արբէք, զօրացարուք։ Վիրգինիա ընդ յիշատակ հէք աղախնոյն և տառապանաց մարցն իւրեանց յոգւոց եհան, և կրկնէր և երեքկնէր. Ո՜հ, քանի՜ դժուարին է բարերարել։ Եւ մինչդեռ նոքա ճաշակէին, հուր եղոյց Դոմինիկ. և խնդրեալ 'ի ժայռս անդ բեւեկն՝ որոյ դալար փայտ առոյգ վառին բոցածաւալ, արար ջահ 'ի լոյս, քանզի գիշեր էր։ Այլ երբև յուղի անկան, մեծ ևս տագնապ տարակուսի հասանէր նմա վասն ոչ ևս կարելոյ

մանկանցն հեռուակել, զի ուռուցեալ էին ոտք նոցա և կարմրացեալ։ Զի՞նչ առնել էր նմա. ելանե՞լ 'ի խնդիր օգնականութեան, թէ անդ ընդ նոսա կալ զգիշերն զայն. և ասէր. Ո՜ տայր ինձ զաւուրս յորս 'ի միասին զձեզ 'ի գիրկս տանէի. այլ արդ դուք 'ի տիս եղեալ՝ և ես ծերացեալ եմ։ Եւ մինչդեռ 'ի վարանման կայր, դունդ լեռնաբնակ հնդկաց անցանէր 'ի բացէ իբր քայլս քսան, և պարագլուխ նոցին մատուցեալ առ մանկունսն ասէ. Ազնիւ աշխատակիցք, մի երկնչիք. տեսաք մեք զձեզ յառաւօտուս մինչ անցանէիքդ ընդ կնոջ ումեմն սևագետացւոյ՝ խնդրել նմա շնորհս 'ի ժանտ տեառնէն. և մեք արդ, փոխանակ բարերարութեանդ ձերոյ, բարձեալ տարցուք զձեզ 'ի տուն ձեր։ Եւ յակնարկել նորա առ հնդիկսն, չորք ոմանք 'ի կորովեաց կազմեցին զահաւորակ յոստոց ծառոց, և նստուցեալ 'ի վերայ զմանկունսն՝ բարձին յուս իւրեանց. և Դոմինիկեայ ջահ 'ի ձեռին առաջնորդեալ նոցա, զնայն 'ի ձայն ցնծութեան, հնդկացն առհասարակ կարդալով նոցա օրհնութիւնս։ Յայնժամ Վիրգինիա փղձկեալ սրտիւ ասէ ցՊօղ. Տեսանե՞ս եղբայր իմ, զի ոչ թողու Տէր անվարձ զգործս բարիս։

Ի մէջ գիշերի հասին 'ի ստորոտ բնակութեան իւրեանց, ուր 'ի կատար լերինն խիտ առ խիտ վառէին խարոյկք. և 'ի դիմել նոցա ընդ զառ 'ի վերն, լուան զբարբառ մարցն իւրեանց՝ որ ասէին. Դո՞ւք էք, որդեակք մեր։ Եւ ետուն հնդկաքն հանդերձ պատասխանի. Այո՛ մեք իսկ եմք։ Եւ ահա տեսին զնոսա և զՄարիամ, զի ջահիւք ընդ առաջ գային. և տիկինն Լադուր ասէ. Որդեակք չարաբաստիկք, ուստի՞ գայք. ո՜հ, յորպիսի՛ տառապանս արկէք զմեզ։ Պատասխանի ետ Վիրգինիա, և ասէ. Ի Սեաւ գետոյ գամք. ընկալաք անդ ներումն աղախնոյ ումեմն հնդկի փախստէի 'ի տեառնէ իւրմէ. նմա և զնախաճաշիկ մեր տուեալ էր առաւօտին, զի մեռանէր հէքն սովալլուկ. նմին իրի հնդիկք լեռնաբնակք

Digitized by Google

բարձեալ բերին զմեզ։ Յայնժամ տիկինն Լադուր դիրկս արկեալ զաւտերն և չկարէր բարբառել. իսկ Վիրգինիա 'ի թանալ մայրենի արտասուացն զդէմս իւր, ասէ. փոխարինես դու ինձ, մայրիկ, զամենայն վիշտս իմ՝ զոր կրեցի։

Եւ Մարգարիտ զմայլեալ խնդութեամբ, փարեալ զորդեակն՝ ասէր. Եւ դու, որդեակ իմ, առաքինացար և դու։ Եւ հասեալ 'ի տուն որդւովքն հանդերձ, ետուն ճաշ հնդկացն, որք ապա 'ի գնալն իւրեանց՝ մաղթէին նոցա զամենայն յաջողութիւն։

ՊԷՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ–ԲԻԷՐ

---

## ՓԱԽՈՒՍՏ Ի ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՈՑՆ

Յուղի անկան անշշունչ և լռելեայն յափունս անդ կանխածանօթս, և տեսեալ զնաւակն պատրաստական որ մնայր նոցա, և մտեալ և ընկալեալ զնշանն դաշնաւորեալ, մտին անդր. և նաւավարին մխրճեալ զմի 'ի խառնելեաց թեւոցն 'ի խելաց՝ անջատեցաւ յեզերաց անտի, և ապա ձեռն արկեալ 'ի միւս թիակն և թիավարեալ երկոքումբք բազկօքն՝ մեկնեալ հեռացաւ, դէտ ակն եդեալ հասանել յափունսն որ 'ի հանդիպոյ։ Լռէր 'ի սպառ և սիւք անգամ քաղցրաշունչ, և ջուրք լճին միապաղաղ երևէին և գոգցես անշարժք բնաւին, եթէ ոչ շքթեցուցանէր զնոսին նշոյլ լուսնակին՝ որ 'ի բարձանց երկնից հայելատիպ յառէր 'ի նոսա. և լսելի լինէր միայն ձայն դանդաղաշարժ ծփանաց բեկելոց 'ի խիճս եզերացն, և խոխոջիւն պտուտից ջուրց որք ընդհարկանէին 'ի խարխուխս կամրջին, և զուգահետ ճղփումն երկուց

թիակաց, որոց ճեղքեալ զկապուտակ երեսս լճին, ելանէին արտաքս քան զջուրն թաթաւուչք և ցօղատարափ, և միանգամ ընկղմէին։ Եւ ակօս ալեաց պատառելոց յընթացից նաւակին կարկառեալ 'ի յետուստ՝ շաւիղ իմն գործէր 'ի վէտ վէտ մկանունս մանրածաւալ, և երթալով երթայր և հեռանայր յափանցն։

Իսկ ուղևորացն անմռունչ զգլուխս յետս դարձուցեալ՝ հայէին ընդ լերինս և ընդ դաշտս արծաթափայլս 'ի նշուլից լուսնոյ, յորս է ուրեք զի անտառնէին և ստուերք ընդլայնեալք. և 'ի համար արկանէին մի առ մի զշէնս և զտունս և զտաղաւարս. իսկ ապարանք տեառն Հառդերիկեայ և աշտարակ նորին տափարակ՝ որ 'ի բարձրաղէտ վայրի հրուանդանին կառուցեալ էր 'ի վերոյ քան զհիւղսն կուտակեալս, թուէր եղեանաւորի ուրուք կերպարան, որ կացեալ կանգուն 'ի միջի ստուերաց գիշերայնոց և 'ի մէջ համակելոցն 'ի քուն թանձրութեան, ակնի 'ի խորհուրդս անօրէնութեան. զոր տեսեալ Լուկիայ՝ սարսուռ ընդ մարմինն ընթացաւ. և խոնարհեցուցեալ զաչացն հայեցուած 'ի բարձանց դարաւանդին մինչև 'ի շէնն ուր ծնեալն էր, և յառեալ 'ի վերջին սահմանս նորին՝ ետես զհիւղ իւր, և զգագաթ սաղարթախիտ թզենւոյն որ ամբառնայր 'ի վեր քան զորմափակ գաւթին. հուսկ ուրեմն ետես և զպատուհան սենեկին իւրոյ. և քանզի բազմեալ էր 'ի խորս նաւակին, եդ զաջ իւր յեզերս նորին, և հանգոյց զճակատ իւր 'ի վերայ բազկացն որպէս թէ նիրհելով, և արտասուեաց լռելեայն։ — Ողջամբ կացջիք, լերինք երկնագիտակք, վերամբարձք յերեսս ջուրց և ելևէջք բլրոց ծանօթից այնմ որ սնաւ 'ի միջի ձերում, և որ 'ի միտս իւր դրոշմեալ ունի զձեզ որպէս զդէմս սիրելեաց. և դուք հեղեղատք, զորոց խոխոջանսն ճանաչէ որպէս զձայնս իւրոց տոհմայնոց. աւանք սպիտակասփիւռք 'ի դարեւանդս լերին՝ որպէս զհօտս խաշանց արօտականաց, ողջամբ կացջիք։ Քանի՜ տխրագին են անցքս՝ որում 'ի միջի

ձերում մնեալ և հեռանալ 'ի ձէնջ. ո՛չ ապաքէն և որ բաղդատեսցէք ակնկալեալք մեկնել 'ի ձէնջ կամակար, Նաև մանաւանդ զգայցէ յայնմ պահու ոսկեղինիկ երազք ճոխութեանց, և ընդ անձն իւր զարմանայ եթէ զիարդ անտանցող եկաց այնպիսեաց խորհրդոց. և թերևս յետս նահանջէր յուղւոյն, եթէ ոչ 'ի խաբուսիկ պատրանս յուսադիր լինէր անձին՝ դառնալոյ միւսանգամ անդր փարթամագոյն։ Այլ որչափ և յառաջ ընթանայ 'ի դաշտավայրս անդ, պարտասին և յափրանան աչք նորա 'ի միօրինակ ընդարձակութենէ. Թանձրամած և մահաչունչ Թուին նմա օդք. մնանէ տխրագին և մտայոյզ 'ի քաղաքս բազմամբոխս, և տունք առ տունս յարեալք և փողոցք 'ի փողոցս խառնեալք չնշապատ առնեն զնա. և 'ի տեսիլ հոյակապ ապարանից՝ ընդ որս հիանան օտարք, մտախոհ լինի նա և հառաչէ անձկանօք ընդ անդաստանն փոքրիկ զոր ելիք 'ի հայրենի աշխարհին, և ընդ հիւղն զոր 'ի բազմաց հետէ իղձ լինէր ստանալ գնոց արծաթոյ 'ի դառնալն ճոխագոյն 'ի լերինս իւրոյ աշխարհին։ — Այլ որոյ և իղձք անգամ վաղանցիկք ոչ անդր քան զսահմանս հայրենեացն ձգտեցան, և որ անդանօր համարէր կատարումն առնուլ յաւուր միում բովանդակ խորհրդոց մտացն, և որ այժմ յանօրէն բռնութենէ վարեալ աքսորի 'ի տար աշխարհս, և որ անջատեալ միանգամայն 'ի սիրայորդոր սովորութեանց և պատրեալ 'ի տենչալի իղձսն, թողու լքանէ զլերինսն զայնոսիկ ծանօթս 'ի խնդիր անծանօթից՝ որոց և ոչ իսկ իղձ բերեալ էր գալ 'ի ծանօթութիւն, զմիտսն անգամ ոչ կարելով հանգուցանել 'ի յոյս անդրէն վերադարձի յաւուր միում։ Ապա ողջամբ կաց, տունդ հայրենի, ուր 'ի բնակելն՝ զաղտնածածուկ խորհրդով զտոնաձայն անցաւորացն զխտաց սիրտն արոշել 'ի ձայնէն՝ ում տենչմամբ մնայր խորհրդազգած իմն երկիւղիւ. ողջամբ մնա՛ և դու տունդ տակաւին օտար, տուն ընդ որ յանցանելն յառաջին ականողիք զաղտագողիք 'ի պատկառոտ շա_

ռազմունանս, և զոր օթ՝ևան անդորրաւէտ համարէին միտք հարսին ամուսնոյ. ողջոյն քեզ և եկեղեցիդ, յոր զուարթամիտ ընթանայր հոգի 'ի փառաւորանութիւն Տեառն, յորում խոստացեալ էր և պատրաստէր կատարումն արարողութեան հարսանեաց, յորում մեծահանդէս օրհնելոց էր իղձ սրտի գաղտնածածուկ, և սէր 'ի պատուէր փոխարկեալ՝ 'ի նուիրականս համարելոց էր. ողջոյն ընդ քեզ: Որ այնչափ ցնծութիւն շնորհէերն ձեզ՝ ամենուրեք է նա, և ոչ առ այլ ինչ վրդովէ այժմիկ զցնծութիւն որդւոց իւրոց, բայց առ 'ի նօթձել նոցա զստուգագոյն և զմեծագոյն խնդութիւն: — Եթէ ոչ նոյն ամենևին, այսօրինակ էին զօգցես խորհուրդք Լուկիայ. ոչ անհանդէտք նոցին և երկուց այլոց նժդեհակից պանդխտելոց, մինչդեռ յառաջէր նաւակն և գալով գայր և մերձենայր յափունս Ադդայ:

ՄԱՆԾՈՆԻ

---

## ԱՆՑՔ Ի ԺԱՆՏԱԽՏՆ ՄԻԼԱՆՈՒ

Ի սեմոց միոյ 'ի դրանց անտի իջանէր և մերձենայր 'ի մեռելաթաղս անդր կին ոմն 'ի մանկամարդ դէմս և 'ի մատաղատունկ տիս երիտասարդութեան զարգացելոյ՝ այլ ոչ բնաւ անցելոյ. գեղեցկութիւն իւր աղօղեալ և նսեմացեալ հոլանի երևէր 'ի նմա, այլ ոչ խամրեալ և թարշամեալ 'ի կրից և ոչ մեռելատիպ երիթացեալ. գեղ աղու միանգամայն և վսեմ որ փայլէ յերակունս լոմբարտացիս: Պարտասեալ իւր երևէին գնացք նորա, այլ ոչ կթուցեալք. աչք անթաց և ցամաքեալ, այլ յայտնի տեսանէին 'ի նմա արտասուաթոր լալօնից հետք.

և 'ի միջոցս անդ ցաւոցն երևէր համբերատար և խորին անդորրութիւն՝ որ վկայ երաշխաւոր էր գերազգած ոգւոյն: Այլ որ քան զդիմաց նորին երևոյթ 'ի գութ շարժէր զտեսողսն՝ 'ի խառն անդ թշուառացելոց, և արծարծէր 'ի հոգիս նոցա զկարեկցութիւն գոգցես չիջեալ և մահացեալ 'ի սիրտս ամենեցուն, այն էր զի կրէր 'ի ծոց իւր զդստրիկ խնամեալ վաղավախճան և խնամով դիազարդիկ յարդարեալ, վարսք յերկուս բաժանեալ 'ի ճակատուն, և զգեցեալ պատմուճան սպիտակափառ, որպէս եթէ ձեռք մայրենի զարդարեալ էին զնա 'ի հանգէտ կանխաւ խոստացեալ 'ի վարձս զգօնութեան: Ոչ ընկողմանեալ ունէր զնա 'ի գիրկսն, այլ վերամբարձ հանգուցեալ 'ի վերայ բազկին, և լանջք 'ի լանջս յեցեալք և թուէր կենդանի. միայն դաստակ ձեռին փափկիկ և ապիկար որպէս զմոմ՝ կախեալ տարուբերէր 'ի միոյ կողմանէ զանդադաղաշարժ, հոգիազիրկ, և գլուխ հանգուցեալ 'ի յուս մօրն ծանրագոյն քան զնինջ. և թէպէտ նմանութիւն իսկ դիմաց նոցա ակն յայտնի ցուցանէր զնա մայր իւր, այլ միշտ 'ի դէմս նորին նկարեալ՝ անկեղակարծ զնոյն հաւաստէր: — Մի ամն 'ի դիակրաց անտի այր ձառադէմ ընդ առաջ եղև առնուլ զմանկիկն 'ի բազկաց մօրն երկիւղած իմն պատկառանօք և յակամայս վարանմամբ. այլ նորա յետս ընկըրկեալ՝ առանց ցուցանելոյ 'ի դէմսն զզայրոյթ և զարհամարհանս՝ ասէ. Մի՛ հուպ լինիր դմա այժմ. ես ինքն հանգուցից զդա 'ի վերայ սայլիդ. զայս ասացեալ եբաց զձեռն և ցուցեալ նմա քսակ մի դրամոյ, Ա՛ռ, ասէ, զայդ. և էարկ զնոյն 'ի կարկառեալ ձեռն մեռելաթաղին. և ապա յաւել ասել. Երդուիր ինձ, զի մի՛ և մազ մի անգամ 'ի բաց բարձցես 'ի հանդերձից դորա և ոչ իսկ ներեսցես այլոց ձեռն մխել 'ի դոսին, և այսպէս դիազարդիկ դիցես 'ի հող գերեզմանին: — Մեռելաթաղն զաջ իւր 'ի լանջսն տարեալ, և գոգցես յաղթահարեալ 'ի նորատեսիլ վշտաց մօրն քան յանակնկալ վարձուցն՝

երկիւղիւ պատկառանաց ձեռն 'ի գործ արար փութանակի պատրաստել տեղի 'ի սայլի անդ սակս վաղամեռիկ մանկանն։ Եւ մայրն տուեալ համբոյր ճակատու որդեկին, զետեղեաց և հանգոյց զնա որպէս յննջողնի, և սփռեալ 'ի վերայ պաստառակալ ջինջ և մաքուր, բարբառեցաւ զայսոսիկ յետին բանս. Ողջոյն քեզ Կեկիլիա, հանգիր 'ի խաղաղութիւն. եկեսցուք և մեք յերեկոյիս առ 'ի կալ մեզ միշտ 'ի միասին. այլ այժմ աղօթեա դու վասն մեր, և ես աղօթեցից վասն քոյ և վասն այլոց։ — Ապա դարձեալ միւսանգամ առ մեռելաթաղն, ասէ. Եւ դու յանցանելդ ընդ այսր յերեկոյիս՝ եկեսցես առնուլ և զիս, և ոչ զիս միայն։ — Զայս ասացեալ եմուտ անդրէն 'ի տուն, և յետ սակաւ միոյ յառեցաւ ընդ պատուհանն ունելով կախեալ զպարանոցէ իւրմէ միւս այլ մանկիկ կրտսերագոյն տակաւին կենդանի, այլ մահ 'ի դէմսն նկարեալ. և եկաց մնաց անդանօր տեսանել զեղկելի յուղարկ առաջնոյ որդեկին, մինչև 'ի խլրտել սայլին և անկանել յուղի և լինել անհետ յաչաց, ապա անհետացաւ և ինքն։ Եւ զի՞նչ այլ մնայր նմա, բայց հանգուցանել յննջողնի զմիամօրն և ննջել առ նմա առ 'ի մեռանել 'ի միասին ընդ նմա, որպէս անկանի ծաղիկ գեղափթիթ 'ի ծայր ստեղան՝ ընդ նորաբողբոջ փոքրիկ ծաղկան, 'ի շուրջ յածել սայրի գերանդւոյն՝ որ զամենայն խոտ դալար հաւասարէ 'ի դաշտի։

ՄԱՆԾՈՆԻ

Digitized by Google

## ԺԱՆՏԱԽՏ ԱԹԵՆԱՑ

Երբեք ուրեք ընդ այնչափ նահանգս առ հասարակ ոչ տարածեցաւ ապականարարս այս ախտ. քանզի սկիզբն յԵթովպիոյ առեալ՝ անց յԵգիպտոս և անտի 'ի Լիբէստան ծաւալեցաւ և 'ի կողմն մի աշխարհին Պարսից, 'ի Լեմնոս կղզի և յայլ կողմանս ուրեք։ Եւ մի 'ի վաճառական նաւուց, որպէս հաւաստի կարծեմ, ածեմոյծ զայն 'ի Պիրէոն. զի անդ նախ 'ի վեր երևեալ ախտին՝ անտի զայլրագին ընդ քաղաքն ճարակեցաւ, և մանաւանդ 'ի խաւարային և 'ի մղձկուտ վայրս, ուր բնակիչք դաշտաց զմիմեամբք կուտակեալ խռնեալ բնակէին։

Ախտակրելոցն տակաւ ամենայն անդամք մարմնոյն վտարակեալ յախտէն, և նշանք ահարկուք 'ի նոսա 'ի վեր երևէին. առաջ առաջ զայրանայր ախտն, և դուն ուրեք ոք ապրէր 'ի մահուանէ։ Անդէն յըմբռնել ախտին՝ նուաղէր նոցա հոգւոյն զօրութիւն, իսկ մարմնոյն թուէր և ևս արծարծանել, որպէս զի տագնապել նոցա յաղէտս դժնդակս, առանց զօրութեան համբերելոյ ցաւոցն՝ տոկալով ախտին։ Քուն հատանէր յաչաց նոցա. խուճապք և հեկեկանք անընդհատ և պրկումն ջղաց և ձգտումն սաստիկ 'ի վերայ հասանէին. և 'ի դառնակսկիծ ցաւոն յաւելոյր տենդ դժոխըմբեր՝ փաղաղել զնոսա 'ի ներքուստ։ Բազմակեղ կապուտակեալ մարմինք նոցա, աչք հրացեալք, սիրտ հեղձամղձուկ, աղիք կեղեքեալ, և չունչ գարշահոտ 'ի ներքոյ ապականութեան արեան նոցա բուրէր 'ի բերանոյն։ Սողեալք ընդ փողոցս գնային առ 'ի կլանել համարձակ զօդ, և ոչ կարելով զովացուցանել զտապ ծարաւոյն՝ որ տոչորէրն զնոսա, հոսէին զանձինս 'ի գետս ծածկեալս սառամանեօք։

Digitized by Google

Բազմաց յեօթներորդում կամ յիններորդում աւուր հասանէր մահ. իսկ որոց տարաժամէրն, կսկծելի ևս և յամրագոյն տուայտանօք լինէր վախճան:

Բայց թէպէտ և սակաւք յոյժ յապրելոցն միւսան-գամ ըմբռնէին յախտէն, այլ յոյժ էր ողորմելի կենդա-նութեանն նոցա մխիթարութիւն. զի երբ կմախօք թուէին յաչս տեսողաց: Քանզի կէսք անդամալոյծք լեալ, և այլք ոչ ինչ զանցելոց կենացն յիշէին. բարբառովք արդարև անզգայութեամբ թշուառութեանն, առհայն ոչ ևս զբարեկամսն ճանաչէին: Նոյն դարման մերթ կե-նարար և մերթ մահառիթ ախտակրելոցն լինէր, զի զա-մենայն օրէնս բժշկականս և զփորձ հմտութեան թուէր ծաղր առնել ախտին:

Ի ճարակել նորա ընդ բազում գաւառս Պարսից, խորհուրդ կալաւ Արտաշէս արքայ՝ կոչել յօգնութիւն զԻպպոկրատ զանուանին, որ էր յայնժամ 'ի Կով կղզի: Այլ 'ի ճաճանչ գանձուցն և առատութեան ոչ շլացեալ այրն մեծախոհ, պատասխանի արար և ասէ. Ոչ ինչ իմիք ցանկամ, և ոչ իւիք կարօտ եմ. և համազգեացն իմոց ծառայել պարտիմ քան թշնամեաց նոցա: Ես եկն իսկ յԱթէնս 'ի սպասաւորութիւն, և աթենացիք ըն-կալան զնա բազում շնորհընկալ գոհութեամբ. զի բազ-մագոյնք 'ի բժշկաց նոցա մեռեալ էին յախտէն, փոխա-նակեալ զանձինս 'ի վերայ հայրենեաց:

Ընդ զամենայն հնարս արուեստին 'ի գործ էարկ, և զանձն ևս յաճախ եդ 'ի վտանգ. և թէպէտ ոչ ըստ գի-մագրաւ հայրենասիրութեանն և ըստ ճարտար արուես-տին եղեն համեմատ արգասիքն, այլ գէթ սփոփումն և յոյս 'ի սիրտ ամենեցուն արծարծեցոյց: Պատմեն զի առ 'ի մաքրել զօդս՝ հրաւ մեծ բորբոքեցոյց ընդ փողոցս քաղաքին աթենացւոց. բայց կէսք Ակրոնի ակրականտացւոյ բժշկի առնեն 'ի կիր արկեալ զհնարս զայս և յաջողեալ:

Գութ որդիական և բարեկամութիւն առաս՝ եռուն

'ի սկզբան քաղաքում օրինակս նախանձելիս. այլ առաքինութիւնն այն մահառիթ եղեալ գործողացն գրեթէ ամենեցուն, դաւն ուրեք այնուհետև երևէր 'ի միջի: Ազգակապք քան զամենայն կապանս հզօրք՝ խզեցան, և աչք օրհասականացն ոչ այլ ինչ շուրջ տեսանէին 'ի փակելն, բայց լուռ ամայութիւն, և ոչ ևս մահ՝ արտասուաց լինէր առիթ:

Խստասրտութեանս այսմիկ զհետ եկն ապերասան համարձակութիւն: Ընդ կորուստ բազմութեան լաւաց ոգք խառն ընդ անօրէնս 'ի մի գերեզման արկան, և ընդ կորուստ մեծութեանց՝ որ յանկարծ բաժին եղեն կամ աւար անձնչան քաղաքայնոց, 'ի խոր խոցեցան այնոքիկ՝ զորոց երկիւղ ևեթ ուղղէր զկեանսն: Եւ 'ի մահ եղեալ՝ զի ոչ ևս ինչ փոյթ էր դից զառաքինութենէ, և զի մօտալուտ քան զվրէժխնդրութիւն օրինաց համարէր մահ, ըստ արագավախճան կենացն նոր օրէնս յերիւրել կարծեցեալ, ժամ 'ի ժամ մեռելով մահու՝ պարտ համարեցան 'ի դրգանս զվայրկեան ժամանակն անցուցանել:

Յետ երկեամ ժամանակի զիջաւ ախտն, բայց տակաւին ուրեք ուրեք 'ի վեր երևէր սերմն ժանտ ապականութեանն, ոչ 'ի սպառ անհետ լեալ: Իսկ յետ ութետասն ամսոց դարձեալ անդրէն ճարակեալ, գործեաց զնոյն աղարտ տեսարան աղէտից և արհաւրաց ընդ ամ մի ողջոյն: Յերկոսին ևս նուագս կորեան բազմութիւն յայծքաղաքացւոց, յորս էին արք իբրև հինգ հազար՝ որ կարէին զէն առնուլ:

Այլ անփոխանակելի և մեծ քան զամենայն կորուստ եղև մահ Պերիկլեայ, որ յերրորդում ամի պատերազմին ժանտախտիւն վարակեալ՝ զրաւեցաւ 'ի կենաց:

ԲԱՐԹԷԼԷՄԻ. Ուղևորութիւն Անաքարսեայ:

## ԻԴԻՊՈՍ Ի ԿԻԹԵՐՈՆ

Ցետ ընդ երկար յածելոյ հասին Իդիպոս և դուստր նորա պարկեշտագեղ առ ոտս Կիթերոնի։ Եւ է Կիթերոն լեառն զոր հատանեն երրեակ ուղիք. յորոց մին առեալ տանի մինչև 'ի բարգաւաճ այգեստանեայս Փովկիսայ, տակաւ 'ի վեր ամբարձեալ ցերկնակատար ամպահերձն Պառնասոս. միւսն հանէ 'ի քաղաքն Եփիւրացւոց, զոր ընդ մէջ կրկին ծովուց կառոյց առաքինին Սիւսիւփոս. և երրորդն իջանէ 'ի սահմանածայրս Ելևդեայ, և անտի ձգի տարածանի զափամբք զուարճագեղ և ծիծաղախիտ գետոյն Ասովպոսի։ Ընդ երկրորդ ճանապարհն գնային տարագրեալքն երկոքին, և հասեալ անդր ուր բաժանի նա յայլոց, անդ զկայ առեալ դադարեցին։ Եւ էր վայրն տեղի սպանմանն Լայոսի։ Ո՛հ, եղո՛ւկ ինձ, գոչեաց յայնժամ Իդիպոս, եղո՛ւկ ինձ. քանզի զայնչափ ժամանակ չէր ինձ փոյթ գիտել եթէ ո՛վ էր այրն անծանօթ՝ զոր սպանի մոլեգնութեամբ։ Աւա՜ղ, զի 'ի դարձին իմում 'ի Դելփեայ, ուր երթեալ էի հարցանել զպատգամախօսն, ոչ կամելով գնալ 'ի Կորնթոս՝ զոր հայրենիս իմ լինել կարծէի, դիմեալ գնացի 'ի Թեբէ։ Դուստր իմ, և իցէ՞ ճանապարհս անձուկ և զառիթափ. իցե՞ն գահավէժք յաջմէ իմմէ և ժայռք ահարկու յահեկէս. գլորիցէ՞ աստանօր հեղեղատ զխռովայոյզ ալիս 'ի խորս անդնդոց. ահա լսեմ զկարկաչ նորա, լսեմ և զխուխոջել աղբերն, որ երբեմն նուիրական էր Մուսայից և արդ սիրելի Եւմենեայց։ Դուստր իմ, տար զիս ընդ կրկին կաղնեօք, որք զասպնջական հովանիս արկանեն 'ի վերայ Նայադայ. Թո՛յլ ինձ տեսանել զնոսին։ Երկինք առ հասարակ հրաբորբոք էին յաւուրն յայնմիկ, կողերք կաղնեացդ այդոցիկ թեքեալ խոնարհէին 'ի բուռն մրրկէ.

Digitized by Google

հեղեղն արձակէր շառաչիւնս հանգոյն խառնվայրայր մրրըն-
մանց բիւրուց անկելոց, զյետին մնչելով հեծեծութիւնս
'ի դաշտն Արիոյ: Ընդէ՞ր ոչ ունկն մատուցի ձախողակի
դուշակութեանց. զիա՞րդ աներկիւղ կացեալ տեսի առ-
առա իմ զերագաթռիչ արքայն օդոց, 'զարծուի շանթա-
հար տապալեալ. ընդէ՞ր ոչ հաւատս ընծայեցի կանուխ
ազդմանցն յիս առ 'ի դիւց: Ո՜վ արփի, իցի՞ւ հասեալ էր
ինձ 'զուրկ 'ի պարգեւաց քոց լինել, կոյր և 'ի ժամանա-
կին յայնմիկ, որպէս եմս այժմիկ:

Անտիգոնեայ զդողանի հարեալ ընդ բանս Խղիպոսի՝
փութացաւ պատասխանի տալ բանիցն նորա. Այո՛,
հայր իմ, է տարամոր հեղեղ որ թուալէ 'ի խորս ան-
դընդոց զխառնվայրայր կոհակսն. դահավէժք կան յաջմէ
քումմէ և ժայռ ահարկու 'ի ձախմէ, և ահա մերձ եմք
երկուց կողմնեացն հովանացելոց 'ի վերայ աղբեր միոյ
արծաթափայլ ծորելոյ. զառիթափ է ճանապարհս, և
բացուստ նշմարին պատուարք Թեբէի: — Ո՜հ, դուստր
իմ, տեսանե՞ս դու զքաղաքն Կադմոսի. տեսանէի զայն
և ես, և բնաւ իսկ կարծէի ոչ՝ դնել 'ի գլուխ իմ զմա-
հաբեր թագ նորին: Այլ զկայ ապացոյք տարամոր. աստ է,
այս՛ աստ է. ասա՛ ինձ, ո՞չ աստ բազմեալ կայցէ ստուեր
Լայոսի 'ի քարաժայռս: — Ոչ, յաւել Անտիգոնէ.
չտեսանեմ ես զստուեր Լայոսի բազմեալ 'ի ժայռս: —
Ա՛խ, տեսանեմ ես զնա, կրկնեաց անդրէն Խղիպոս.
ահաւանիկ է մեծ և ահաւոր. ահա վէրք նորա բերանա-
լից և հոսանք արեանն որ յորդեն անտի. խոյս տան Թիկ-
նապահք նորա, ինքն դիաթաւալ անկեալ կայ 'ի կառ-
սն. ձեռքն կթուցեալք լքանեն զերասանակս. ձայն իմն
որ կխսահագագ հնչէ 'ի լանջսն, անկարացեալ յօդել բար-
բառ մի եւեթ յերիթացեալ շրթանցն... ո՜վ դիք, ծա-
նեաւ զորդին. դէմք վեհափառ, ընդէ՞ր փայլակնացայտ
տեգօք աչաց խաղայք յիմ վերայ: Խռովին] խորհուրդք
իմ համօրէն: Ո՜վ ստուեր պատկառելի, եթէ ցարդ ոչ
յագեցաւ ցասումն քո վրէժխնդիր՝ խառնակից կենօքս,

և ոչ լրումն էառ յանչափ տառապելութենէ թշուառու-թեանցս և աղետից, զորս այժմեանս ցաւ սրտիս ըն-ցուցէ զթերթն: Հայեաց աղէ զամ մի 'ի դուստրն իմ. անմեղ է նա և հայցէ 'ի քէն վասն իմ թողութիւն: Օրհնեալդ իմ Անտիգոնէ, փարեաց զինև. դուստր իմ, եկ 'ի գիրկս իմ. ահա ես 'ի քեզ եմ ապաստան. պաշտ-պանեա հօր քում: Ա՛խ, պաղատանս վասն իմ մատուցես երկնից. աղաչեա՛ զմեծն Արամազդ. աղաչեա զՄուծայս զփոփիչսն մահկանացուաց: Եւ դուք, ահաւոր Եւմե-նեայք, թողէք զիս. ոչ է ձեզ տուեալ իշխանութիւն 'ի վերայ քաղցր և պարկեշտագեղ առաքինութեան. Ան-տիգոնէ գիրկընդխառնի ընդ իս. թանայ արտասուօք զլանջս իմ. շրթունք նորա համբուրեն 'ի ճակատս զտարաժամ ապխտակացեալ զիմ ալիս:

Այս օրինակ բարբառէր Եդիպոս. իսկ Անտիգոնէ քաղցր բանիւք սփոփէր զհայրն. այլ 'ի պատկեր մահուն զոր յանդիման աչացն նկատէր՝ խաղաղեցան տագնապք սրտի նորա և խանդաղատանօք բարբառէր. Դուստր իմ, տեսանես զիս պատրաստ պատրաստեալ 'ի տապանդ. հասեալ է ժամն իմ յետին. և թէպէտ ոչ գիտեմ եթէ զիարդ հաճոյ թուեսցի դիցն զարդարութեան բերեանց վերջին ցուցանել յիս դրոշմ, բայց ահա վարեմ ես 'ի մահ: Դուստր իմ, ա՛ռ 'ի ճակատէս զխասակս ինչ հերաց, և դիցես զայնս 'ի վերայ շիրմի եղկելի մօր քո. կաթամբ և մեղու տուր քաւութիւնս 'ի վերայ ամայի գերեզմա-նին, որ եկաց մնաց ցարդ անփառաւանակ: Ո՛հ, չեկաց ոք երբեք թագուհի և հարսն և մայր՝ որ այսպէս անշուք և զաղտագողի իմն ընկեցեալ իցէ 'ի ծոց երկրի: Դուստր իմ, ոչ մի ինչ խոչ կարասցէ արգելուլ զքեզ 'ի բարե-պաշտօն պարտուց յայսցանէ. զամենայն արբեացէ մահ:

Յետ ընդ երկար լռութեան՝ յաւել դարձեալ Եդի-պոս. Ընդ հուպ մեռայց ես. 'ի սմին տարտ պահուս ըղ-ձամ մրահճաղոյն զզօրութիւն կենաց և զմահու. չունին կեանք այլ ես ուսուցանել ինձ. և մահ տակաւ հրա-

համագէ զիս։ Ո՛վ լոյսդ տարընկճեան, ոչ ևս շողշողես յաչս իմ. բայց այլ լոյս փայլէ 'ի միտս իմ։ Երջանիկդ օթևան, բա՛ց զդրունս քո և ընկալ զնա որ երկիցս կոչեցաւ 'ի գերագահ աւագութիւն. և արքունիքն փարսակալ 'ի ճահ էր ճախատուն. ընկալ զայրն՝ որ զփոքր էառ ամենայն թշուառութեանց։ Եւ դու, Անտիգոնէ, արիասիրտ դուստր և մեծանձն, մաղթեա՛ վերստին զգթութիւն դիցն անմահից. տացեն երկինք զի այս վերջին գութք որոյս և վերջին խորհուրդք հանգուցեալ 'ի վերայ քո, սրբանուէր զքեզ գործիցեն։ Բայց զայս՝ ևս հարկ ապառու մատուցես ինձ, որդեակ. մինչ ես առապրեալս այսու որբեցայց, երթ խնդրել ինձ ոչխար սևագեղմ, զի յաչտ ատարից դիցն սանդարամետականաց։

Անտիգոնէ թեթևաքայլ ոտիւք քան զայծեամն սրանայ անդէն 'ի հովիտն, խնդրել 'ի հովուէ ումեմնէ զպատուարագն՝ զոր խնդրեաց 'ի նմանէ հայր նորա։ Արդ ամեղի տուր աստի, առէ ցնա Իդիպոս։ Անկանի առ ոտս նորա Անտիգոնէ։ Կրկնեաց անդրէն հայրն և ասէ. Ո՛վ դուստր իմ, ոչ է մեզ ընդդէմ կալ դիցն կամաց։ Աւա՛ղ, թողում զքեզ միայնակ 'ի կենցաղումս. չկարեմ ապաստան առնել զքեզ ոչ 'ի խուժադուժ եղբարս քո, ոչ յարքունիսն Իսմենէ, ոչ 'ի Կրէոն՝ զոր փառասիրութիւն զանխուլ բորբոքէ, և ոչ իսկ յորդի նորին առաւատմոն։ Այլ երթիջիր, Անտիգոնէ, 'ի խնդիր Թեսէոսի։ Դիւցազնն Աթենայ վիճակեցաւ 'ի դից պաշտպանել զբարի բարի խորհրդս զոր տածեալ ին ածցես զմտաւ. յիշեսցէ նա զբարեկամութիւն՝ որով յօդեալ եմք 'ի մի։ Դուստր իմ, երթ 'ի հաշտակաւոր քաղաքն Աթենացւոց սատոյգ ապաստարկաւաց. հարկ իսկ է ցանոց փարել ըստ բաղդին։

Անտիգոնէ արտօսրաթոր աչօք փաթեալ զծնկօք արքային՝ հայցէր լսել զյետին բանս նորա, և ընդ սնուր բախտ հարազատացն իւրոց խոկայր. և ոչ այնքան փայթ

Digitized by Google

էր նմա վասն անձինն վշտաց և ցաւոց՝ որչափ ընդ աղէտս որ հանդերձեալն էին հասանել 'ի վերայ նոցա. վասն որոյ և զհայրենական անիծիցն զչարագուշակ արգասիս կամէր 'ի բաց մերժել 'ի նոցանէ։ Հա՛յր իմ, աղաղակեաց նա, յառաջ քան զմեկնել քո յաշխարհէ՝ ներեա՛ եղբարց իմոց. խնուն դիք զլսելիս 'ի լուր ըղձիցդ բարութեան և սիրոյ, եթէ ոչ վասն ամենեցուն առ հասարակ զբարութիւն առ 'ի նոցանէ պաղատեցիս։ Ո՛հ, ներեա՛ եղբարց իմոց, զի թեթևասցին առ յինէն ծանրութիւնք աղետից։

Դո՛ւստր իմ, կրկնեաց Իդիպոս, ընդէ՞ր է քեզ այսպէս խօսել. ազիդ ազնիւ Անտիգոնեայ, զի՞ կայ քո ընդ երջանկութիւն կամ ընդ թշուառութիւն. միթէ ո՞չ ունիցիս դու միշտ անդորրութիւն խղճի, զօրութիւն 'ի մարդկանէ և սէր յաստուածոց։ Երթ դուստր իմ, ծանեայ զմիտս քո. ոչ առ այլ ինչ, բայց առ փրկութիւն որդւոցս իմոց տառապելոց խօսեցար դքէն։ Աւա՜ղ, զի առ նոսա միայն մնայ քեզ այսուհետև նուիրել զկեանս քո. և աւուրք զոր կեցցես՝ զգացմամբդ այդուիկ լցեալ, կեանք քո համբուն 'ի նուէրս ծախեսցին անձնամատոյցս։ Այլ ոչ. այդքան առաքինութիւնք մի՛ մնասցեն անվարձ. դուստր իմ, հաւատամ բանից Իդիպոսի որ 'ի մահ մատչի։ Ողջամբ մնա՛։

Մեկնեցաւ Անտիգոնէ արտասուօք. և ահա վաղ ընդ փոյթ հնչէ 'ի լսելիս նորա ձայն իմն ահաւոր։ Տակաւ նուաղէր տիւն, և միայն դոյզն ճաճանչք երկայնաձիգք թափ անցանէին ընդ խորին մթութիւնն։ Թուէր իմն եթէ սարաւանդակք Պառնասեայ և սարք Եղիկոնի բոցս հատանիցեն։ Հեղեղատն հովտին արձակէր հանգոյն իմն ձայնից ողբոց Իդիպոսի։ Ցանկարծ լսելի լինի հեռաւոր դղրդիւն կառաց գլորելոց 'ի բարձունս լերին, որ գահավէժ խորտակիցին։ Ի խուխումս անդնդախորս յետս դառնայ Անտիգոնէ՝ և խռովայոյզ սրտիւ նշմարէ 'ի մէջ երկուց կաղնեաց բորբոքելոց զհէգ արքայն Թեբայ. երեսք

նորա ծածկեալք 'ի քօղ երկայն, 'ի միում ձեռին զսուսեր զահէն կալեալ, և 'ի միւսումն անդ զխառնարանն արիւնալից։ Լոյս շուրջ պատեալ ունէր զեղկելի Թագաւորն, յորոյ ճառագայթիցն շլանային աչկունք կուսին. այլ յետ սակաւուց չքնանէր։

Եւ յորժամ այն աղջամուղջ ծածկեաց յաչացն զդէմս հօրն, և 'ի խորհրդաւոր խաւարէ հնչեաց բարբառ յետին. Եղուկ, եղուկ, ողջամբ մնա դուստր իմ. իսկոյն ցոլացաւ և արեգակն։ Զահի հարեալ մերձենայ Անտիգոնէ, այլ զգենեալն միայն գտանէ զգաւանն և ոչ ինչ այլ. չգոյր ինչ 'ի նշխարաց Իդիպոսի։ Այսպէս ահա անհետացաւ յերկրէ որդին Լայոսի. շանթակէզ որդեօք ծախեցաւ, արդեօք յանդունդս ընկլուզաւ, եթէ կենդանւոյն վերացաւ յՈլիմպոս. խորհուրդք են զոր ծածկեցին 'ի մահացուաց դիք։

Ազնուագութ դուստրն Իդիպոսի միայն մնաւոր. մերթ հիանայր և մերթ վշտանայր. զերիս աւուրս խնդրեաց յայսկոյս և յայն զմարմին հօրն առ ձօնել նմա զլուք դիւահանութեան։ Դեռ ևս բոցավառ ծխէին կաղնիքն, և ինքն զարհուրագին անցանէր ընդ վայրս որբեալս 'ի զառատատանեաց աստուածոց։ Հուսկ ուրեմն վաստակաբեկ լեալ՝ գնաց ապաստան անկանել յաղքատին հիւղ հովուի ուրումն ծերոյ, անձկալեալ պատեհ ժամու լնուլ զվերջին կամս հօրն և երթալ յարքունիս Թեբէսոյ։

ՊԱԼԼԱՆՇ. Անտիգոնէ։

---

## ՍՈՂՈՆ ԵՒ ԿՐԻՍՈՍ

Արդ ասեն եթէ 'ի հրաւիրմանէ անտի Կրիւսոսի յարուցեալ չոգաւ առ նա Սողոն 'ի Սարդիս. և կրեաց յայնժամ Սողոն զօգցեալս ըստ նմանութեան մարդոյ՝ որ

ցամաքին գոլով ցանգ բնակաւոր, զառաջին նաւակն դէմ եդեալ իջանիցէ 'ի ծով. քանզի գետ զօր և միանգամ յակն արկանիցէ նա՝ կարծեսցէ արդեօք ծով լինել. սակայն և Սողոն եկեալ անցեալ յայնժամ ընդ արքունիսն, բազումս ոմանս տեսանէր յարքունի աւագացն՝ զարդս արկեալ բազմահանդերձս, պերճս և փքաճեմս՝ շուրջ զիւրեամբք զամբոխն ածելով զյուղարկաւորացն և զտիկզաւորաց, զմէն մի 'ի նոցանէն կարծէր Սողոն եթէ Կրիւսոսն ինքնին իցէ. մինչև եկեալ եհաս նա ինքն առ արքայն, ողջոյն ընդելուզեալ ակամբք և զանազան գունակ հանդերձեալ պատմուճանօք, յարուեստս կիտուածոյս ոսկւոյ, 'ի զարդ փայլեալ գեղապաճոյճ՝ որչափ ինչ միանգամ յաւէտ փարթելի կայցէ 'ի գոյից և պերճ և պայծառ, որպէս զի և տեսարան հրաշագեղ 'ի ներքս ընծայել և առաւելանհրաշ: Իբրև յանդիմանս եկն եկաց նմա Սողոն, և ինչ ամենևին ոչ կրեաց նա 'ի հրաշից անտի, և ոչ 'ի զնին սքանչելեացն՝ ինչ մի ասաց նա երբեք՝ որում ակն կալեալ սպասէր Կրիւսոս. նա՛ և յայտնի երևէր յայնժամ ողջամիտ մարդկանն՝ եթէ ընդ փոքրոգի շուք փառացն անձս առնէր անդ Սողոն ծաղծաղամիտ գեղաւորին, հրաման ետ յայնժամ Կրիւսոս բանալ սփռել առաջի նորա զամենայն զգանձս իւր զոսկւոյ և զարծաթոյ, և առնուլ տանել զնա, և միանգամայն զամենայն հանդերձանս շքեղս և զոպասս գեղեցիկս ցուցանել նմա, որում և ոչինչ պէտք էին Սողոնի յայնժամ յայնպիսեաց անտի. քանզի և շատ իսկ ինքնին Կրիւսոս յիւրում անձինն 'ի յդէմս բերէր նմա՝ իմանալ զննել զբոյս բարուցն նորա:

Արդ իբրև զամենայնն յայնժամ տեսեալ Սողոն՝ եկն եկաց միւսանգամ առաջի նորա, սկսաւ հարցանել զնա Կրիւսոս, եթէ զո՞ ոք 'ի մարդկանէ երբեք առաւել երջանիկ քան զինքն տեսեալ իցէ: Եւ պատասխանի Սողոն, եթէ 'ի քաղաքայնոց անտի նորա ետես նա զոմն Տեղղոս անուն. և սկսաւ պատմել նմա՝ եթէ այր լաւ և առաքինի

Digitized by Google

եկաց Տեղզոս, և մանկունս բարեմիտս և ականաւորս եԹող զկնի իւր, և կեանս վարեալ ոչ ինչ կարօտ կարևորաց կենցաղոյս, վախճանեցաւ փառաւոր մահուամբ՝ նահատակեալ 'ի մարտի վասն հայրենի գաւառին։ Կրիւսոսի այնպէս իմն Թուէր եԹէ 'ի գանձկաց ոք իցէ Սողոն և 'ի վայրենեաց, որ ոչ մԹերից արծաԹոյ և ոչ ոսկւոյ երեաս ինչ արար նա և ոչ անդուստ չափեաց զերջանկուԹիւնն, այլ զառն միոյ ռամկականի և զժողովրդականի զկեանս և զմահ առաւել ընտրեաց քան զայնչափ զօրուԹիւն և զփառս աւագուԹեան։ Այլ յայսր ամենայնի վերայ, դարձեալ հարցանէր զՍողոն. Բայց արդ զկնի Տեղզոսի զո՞ ոք այլ 'ի մարդկանէ ծանեաւ նա առաւել երջանիկ։ Կրկնեաց Սողոն և ասէ, եԹէ գիտէ նա զԿլէոբիս և զԲիտոնէ՝ արս եղբայրասէրս և մայրասէրս քնաւից վեհագոյն. ոյք և զմայրն իւրեանց զխակլին՝ յորժամ եզինք կառանիցն վարատականեկ զնայցին, ինքեանք ընդ լուծ կառացն մտեալք 'ի ներքոյ՝ առին ածին զնա մինչև 'ի տաճար անդր Հերայ. և անդ քաղաքացիքն ծափահարք խնդակիցք երանի կարդային ծնողացելոյ մորն։ Այլ ապա իբրև զզոհն զոհեցին և նստան ընԹրիքեցին, 'ի քուն մտեալք, ոչ ևս այլ յարեան յառնել 'ի գալ առաւօտն. այլ զկեանս իւրեանց վախճանեցին, և անցաւ և անտրտում 'ի մէջ այնչափ փառաց հանգիպեցան մահու։ Յայնժամ զայրացեալ Կրիւսոս՝ ասէր առ Սողոն. Իսկ զմեզ զմերովքին ոչ դասես դու 'ի Թիւ երջանիկ մարդկանոյ։ Յայնժամ Սողոն ոչ կամեցեալ՝ ոչ շնորհել ինչ Կրիւսոսի և ոչ դարձեալ առաւել ևս 'ի սրտմտուԹիւն շարժել զնա՝ ասէ. Հելլենացս մեզ, ով արքայ Լիւդացւոց, զայլն ամենայն չափով ետ Աստուած. և 'ի չափաւորուԹենէ առաւ յայսմանէ եղանէ մեզ մասն մի և բաժին իմաստուԹեան՝ աներայԹ և անզդրութելի, նա՛ որպէս հասանեալ եմ, և հեռևակ. իմաստուԹիւն ոչ արքայական և ոչ պերճ և պայծառ. որ և զկենցաղոյս զկեանս տեսեալ աղգի աղգի և այլադան պատահարաց անկեալ

ընդ կրիւք, ոչ ինչ ներէ մեզ յաւօրեայ բարիս մեծամտել, և ոչ դարձեալ ընդ բարեբաղդութիւն մարդոյ սքանչանալ ինչ՝ որ ժամանակին փոփոխութեան ներքոյ գրաւեալ իցէ։ Քանզի ատն ատն իւրաքանչիւր բազմօրինակ բնաւորեցաւ լինել հանդերձեալն, և անյայտ և կեղակարծ։ Իսկ որում ետ Աստուած բարեբախտութիւն մինչև ցվախճան, զնա ինքն համարիմք մեք երջանիկ. իսկ որ տակաւին կենդանի և յաստի կենցաղս քաղաքավարի, դեռ 'ի վտանգ պաշարեալ կայ նորա երջանկութիւնն, և անկայուն է և անվճար, զոր օրինակ և մրցանաւոր նահատակին՝ յաղթութեան ձայն մունետկին և պսակն։

Զայսոսիկ ասաց Սողոն և մեկնեցաւ անտի. տրտմեցոյց զԿրիսոս և ոչ հրահանգեաց։ Անդանօր 'ի Սարդի յայնժամ հանդիպեցաւ առակախօսն Եսովպոս՝ եկեալ անդր 'ի հրաւիրմանէ Կրիւսոսի, և պատուեալ առ 'ի նմանէ։ Սորա տեսեալ՝ զի մարդասիրութեան ինչ ոչ հանդիպեցաւ Սողոն, ցաւեաց նմա և չոգաւ առ նա, խրատէր և ասէր. Ո՜վ Սողոն, ընդ արքայից արժան է կամ ոչինչ խօսել կամ զհեշտալուրսն։ Իսկ Սողոն կրկնեաց անդէն. Նա՝ ո՛չ և ո՛չ դիքն, կամ ոչինչ, կամ զլաւսն։ Եւ այսպէս արհամարհեաց յայնժամ Կրիւսոս զՍողոն։ Բայց ապա իբրև մարտ եդեալ ընդ Կիւրոսի՝ վանեալ պարտեցաւ Կրիւսոս 'ի պատերազմին, և զքաղաքն զլխովին կորոյս, և կենդանի ձերբակալ եղեալ՝ հանդերձեալ էր 'ի հուր տապակիլ, և հրատ խարուկին կազմ բորբոքեալ կայր, և ինքն կապեալ պրկեալ այն ինչ ելանէր 'ի վեր 'ի խարոյկ անդր՝ 'ի գնին տեսութեան առհասարակ Պարսիցն, և ինքնին Կիւրոս անդ մերձ կայր, ձայն մեծաձայն՝ որչափ ինչ բաւական էր արձակեաց Կրիւսոս բարձր, և գոչեաց երիցս. Ո՜վ Սողոն։ Զարմացաւ Կիւրոս, առաքեաց առ նա հարցանել՝ եթէ արդեօք 'ի մարդկանէ՞ ոք իցէ Սողոնդ այդ կամ եթէ 'ի դից ոք, զոր 'ի տագնապ վերջին զդա միայն յօգնութիւն կարդաս։ Իսկ Կրիւսոս ոչինչ ամենևին ոչ ծածկեաց 'ի

Նմանէ. Ի Հելլենաց անտի, ասէ, յիմաստնոց էր այրդ այդ, զոր ես ինքնին հրաւիրեալ կոչեցի առ իս, ոչ եթէ առ ՚ի լսել ինչ ՚ի Նմանէ և կամ ուսանել հրահանգիլ՝ որոց միանգամ պէտք էին ինձ, այլ զի ինքնին նա տեսող ինձ լինիցի և վկայ ինձ կայցէ երջանկութեանն իմում, զոր ՚ի կորուսանելն իմ հանդերձեցաւ ինձ մեծ ես չար՝ քան զբարին ՚ի ստանալն իմում զնա: Քանզի համբաւ միայն էր ինձ և կարծիք բարեաց ժառանգութեւն դորա. իսկ զարդիս փոփոխումն նորա՝ ՚ի կիրս դժնդակս ահաւադիկ վախճանէ զիս արդեամբք և յաղէտս դժոխալիմբերս: Եւ զայսոսիկ ասաց այրդ այդ Սողոն անդուստ ՚ի վերուստ յայնժամ զայժմեանդ իմաստասիրելով խրատ ետ ինձ՝ դէտ ակն ՚ի վախճան կենացն ունել, և մի՛ յանձնապաստան ՚ի խորհուրդս անկայունս զոռոզութեամբ պերճանալ: Իբրև զպատասխանի զայս նորա բերին առ Կիւրոս, նա քանզի իմաստնագոյն ևս էր քան զԿրիւսոս, և զբանն Սողոնի զլխովին հզօրացեալ տեսանէր յօրինակէ անտի որ առաջի կայր, ոչ միայն արձակեաց զԿրիւսոս, այլ և ՚ի չուք պատուոյ կալաւ զնա՝ ցորչափ եկեաց նա: Եւ ապա այս մեծապէս փառք եղեն Սողոնի, որ յարքայից անտի միով բանիւն փրկեաց զմին և վարժեալ գեղեցկապէս հրահանգեաց զմիւսն:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ. Ջուզակշիռք:

## ՄԵՆԱՄԱՐՏ ՄԵՐՈՎԷԻ ԸՆԴ ԿԵԼՏԱՑԻՈՑՆ

Մերովէ յագեալ ճապաղեօք արեանցն, կայր անշարժ ՚ի վերայ յաղթական կառաց, և դէտ ակն կալեալ հայէր ՚ի դիակունսն որովք ելից զդաշտն: Այսպէս զէշագէշ պատառեալ զհօտն հանգչի առիւծն Նումիդացի.

Digitized by Google

քաղց նորա ցածուցեալ, և հոտ սպանդին դեռ ևս բուրէ 'ի սրտէ նորա. մերթ բանայ և մերթ փակէ զպարտասեալ բերանն, ուր դեռ ևս տեսանէին զնգակք ատամնեղէնք. ապա ընկողմանեալ դադարէ 'ի մէջ փողոտեալ ոչխարացն. բաշք նորա արիւնաներկք՝ անկանէին յայս կոյս և յայն 'ի վերայ պարանոցի նորա. տարածանէ զճիրանսն ահարեկիչս, և զգլուխ 'ի վերայ մագլացն խոնարհեցուցանելով՝ կիսաբաց աչօք դեռ ևս լեզու զկակուղ գեղմանսն որ շուրջ են զնովաւ:

Առաջնորդն Կելտաց եսես զՄերովէ յամբարտաւան և 'ի Թշնամանալից հանգստեան: Վառեցաւ բարկութիւն նորա, յառաջ մատուցեալ առ որդին Փարամոնտեայ, ձայն եբարձ ծաղր առնելով զնա և ասէ. — Գեռդ երկայնագէս, այլով իմն օրինակաւ կամք են ինձ բազմեցուցանել զքեզ 'ի վերայ գահոյից Հերակլեսին կելտացւոց: Պատանեակ քաջ, արժանի ես դու առնել զնշանակն որոյ յարքունիս Տեւտատոսի: Ոչ կամիմ Թողուլ զքեզ հաշել մաշել նախատալից ծերութեամբ:

Ծիծաղեցաւ դժնդակ ծաղու Մերովէ, և ասէ.

— Ո՞ իցես դու. միթէ յազնիւ և 'ի վաղնջական տոհմէ իցես: Ստրուկդ հռովմայեցի, չերկնչիցես 'ի գեղարդանէ իմմէ:

Եւ նմա պատասխանի Կելտացին, հեծելով առ մռնչելոյ բարկութեան իւրոյ.

— Մի ինչ է որ զիս երկեցուցանէ, զուցէ երբեք անկցին երկինք 'ի վերայ գլխոյ իմոյ:

— Տո՛ւր ինձ զերկիր, ասաց ամբարտաւան Սիկամբրացին:

— Զերկիր զոր Թողից քեզ, աղաղակեաց Կելտացին, անդ բնակեսցես յաւիտեան:

Զայն իբրև լուաւ Մերովէ, յեցեալ 'ի նիզակն իւր՝ ոստեաւ 'ի կառացն 'ի վերայ ցլուցն, և 'ի գլխոյ նոցա խոյացաւ յերկիր, եկաց 'ի հանդիպոյ Կելտացւոյն, որ գայր ընդ առաջ նորա:

Digitized by Google

Բանակն ամենայն զկայ առեալ նկատէր զմարտ պա-տերազմին յոր խրախուսէին առաջնորդքն երկաքին: Կելտացիքն սուսեր 'ի ձեռին դիմեաց 'ի վերայ Փրանկ պատանեւոյն, ստիպեաց 'ի նեղ էարկ զնա, եհար և վի-րաւորեաց ընդ ուսն, և ընդ եղջերբք ցլուցն ընկըր-կէր զնա: Իսկ Մերովէ կշռեաց զսլաքն, և մխեցաւ 'ի վահան Կելտացւոյն: Յայնժամ պահու որդին Կլոդիոնի որացաւ դիմեաց իբրև գայլ, եդ զոտն 'ի վերայ գե-ղարդանն, և խոնարհեցոյց զնա 'ի գետին և զվահանն առ ապալեաց յերկիր: Եւ զի չէր մարթ Կելտացւոյն թա-քուցանել զանձն իւր, երևեցաւ գլուխ նորա: Շչեաց, որացաւ և եմուտ 'ի ճակատն նորա տապարն Մերովէի, իբրև զկայծին փայլատակարի 'ի վերայ գիհի ծառոյ: Գլուխ առնն պատերազմողի հերձեալ ճեղքեցաւ. ցնդեցաւ ուղեղն, և աչք նորա սորտորեալք անկան յերկիր: Եւ եկաց մնաց մարմինն նորա դեռ եւս առ վայր մի կանգուն. պրկէր ձգտէր զձեռսն, զերկիւղ և զգութ միաբանական ազդելով:

Զայն իբրև տեսին Կելտք, զաղաղակ բարձին զցաւոց. քանզի առաջնորդ նոցա՝ վերջին սերունդ էր Վերկեն-գետորիայ՝ որ զայնչափ ամս դեղևեցոյց զբաղդ Յուլիոսի: Համարէին եթէ 'ի մեռանել նորա՝ ելեալ պետութեանն ըստ ձեռն Հռովմայեցւոց՝ անցանիցէ առ Փրանկս: Վասն այնորիկ և Փրանկք ուրախութեամբ բոլորեալ զՄերո-վեաւ, և 'ի վերայ վահանաց բարձրացուցեալ, զնա և զամենայն նախնիս նորա հռչակեն թագաւոր, իբրև զքաջազոյն 'ի Սիկամբրացիս:

ՇԱԴՈԲՐԻԱՆ. Վկայք:

## ԱՌՈՒՄՆ ՊԱՍՏԻՅԼԻ

Ցերեքտասաներորդ աւուր ամսեանն յուլիսի 'ի գիշերային պահու ընթացեալ էր ժողովրդեան 'ի Պաստիյլ։ Հնչեցին ձայնք հրազինուց, և գրգռութեան բան լսելի լինէր բարբառ թէ Հա՛պա 'ի Պաստիյլ։ Ի գիրս ուրեք մատուցեալս առ արքայ՝ յայտնեալ լինէր իղձ ընդ կարծանաւմն նորա և բազմաց իսկ 'ի նոյն միտս յածէին խորհուրդք. 'ի խնդիր զինուց էր միշտ ժողովուրդն. և բան ընթանայր եթէ յանկելանոցի անդ ապիկար զինուորացն 'ի պահեստի կայցէ մթեր զինուց։ Հասին անդր վաղվաղակի. այլ Սոմպրէօյլ. որ պահապան էր անկելանոցին, արգել խուժանին մտանել 'ի ներքս, և ասէր իսկ եթէ արքունի հրամանաց պէտք իցեն առ այդ։ Ոչ ինչ բնաւ կամէր լսել ամբոխն. հա՛պա գրոհ ետուն 'ի ներքս, բարձին զթնդանօթսն և բազմութիւն մեծ հրազինուց։ Ի նմին ժամանակի ամբոխ մեծ մարդկան պաշարեալ էր զՊաստիյլ. և զի թնդանօթ դղեկին 'ի քաղաք անդր ուղղեալ հայէր, հարկ էր զառաջս առնուլ զի մի 'ի քաղաք անդր կարիցէ նա տեղալ։ Ցառաջ մատեաւ մի ոմն պատգամաւոր 'ի ժողովրդենէ անտի, և խնդրեաց մտանել 'ի ներքս, և հրաման եղև նմա։ Անդ նորա ականատես լեալ 'ի վերայ եհաս՝ եթէ երեսուն և երկու Զուիցերացիք գտանէին անդանօր և ութսուն և երկուք ոմանք ապիկար զինուորք։ Ընկալաւ խոստումն 'ի պահապան զօրականէն եթէ չև ամբոխին յարձակեալ ընդդէմ՝ մի նոքա 'ի հուր ընթասցին։ Եւ մինչ նոքա յայսմ էին, տեսեալ ժողովրդեանն եթէ տակաւին չերևեցաւ հրեշտակն, սկսան զայրանալ, մինչև հարկ լինէր նմա ցուցանել զանձն՝ առ 'ի ցածուցանել զամբոխն։ Հուսկ ուրեմն մեկնեցաւ նա 'ի մետասաներորդ ժամու առաւօտուն։

Digitized by Google

Զև անցեալ կէս ժամու, և ահա եհաս անդր և այլ գունդ 'ի զէն և 'ի զարդ վառեալ. զաղաղակ բարձեալ՝ եթէ Զպատրիկն խնդրեմք։ Պահակապանք նշան տային մի՛ ևս այլ յառաջել. այլ նոքա յամառեալ պնդէին. Դիմեցին անվեհեր արք երկու 'ի վերայ տանեացն, ընդ որով կայր գունդն պահանորդաց, և տապարահար խորտակեալ զշղթայս կամրրջին՝ հոսեցին 'ի վայր։ Դիմեաց անդր ամբոխն և ընթացաւ 'ի միւս այլ կամուրջ՝ անցանել և գնովաւ։ Յայնմ պահու հուր թօթափէին պահապանք, և ահա յետս ընկրկէր ժողովուրդն՝ հրազէնս արձակելով. և այսպէս ժամանակս ինչ ձգէր գործ մարտին։ Իսկ ընտրողացն ժողով համախմբեալ 'ի ժողովարան քաղաքին՝ լսէր զշառաչ զինուցն, և ես քան զես յուզէր. հրեշտակս մի զհետ միոյ առաքէր, հրաման տըեալ զօրագլխին թոյլ տալ մտանել յամբոխն ջոկատու միոյ բարիզեան զօրաց, իբրու զի այնուհետև 'ի ձեռս էր քաղաքացւոցն զինուորական զօրութիւն քաղաքին։ Հասին պատգամաւորքն միմեանց զկնի, այլ յանհնարս մտանէին լսելի առնել զձայն իւրեանց 'ի միջի անդ պաշտրմանն կազմելոյ 'ի ժողովրդենէն։ Ի դափիւն թըմբկին և ընդ զրօշուն յօդս ամբառնալ՝ առ վայր մի շիջեալ դադարեցաւ հուրն։ Յառաջ անցին պատգամաւորք. պահակապանք սպասեալ միայն նոցա. համայն և այնպէս յանհնարից իմն էր իմանալ զմիտս իրերաց։ Յանկարծ իմն չգիտեմ ուստի յարձակեցան հրացանք. դաւ համարեցաւ զայն ժողովուրդն, և դիմեաց հուր 'ի դղեակն արկանել. սկսաւ ապա յոյնժամ ումբաձիգ տեղալ 'ի նոսա գունդն պահապանաց։ Հասին անդր անօթովք պատերազմի զօրականն գաղղիացի. այնուհետև ակնբախ լինէր մարտին. Յայսմ պահու 'ի ձեռս անկեալ տոմս իմն, զոր Պարոնն տը Պանսըվալ առաքէր առ Տըլոնէ, հրամանատար Պասդիլլեայ, ընթերցեալ լինէր 'ի ժողովարանի անդ քաղաքին։ Քաջալերս տայր 'ի սմին Պանսըվալ առ Տըլոնէ ժուժալ այլ ևս, խոստացեալ վաղ հա-

տանել նմա 'ի զօրավիգն. և արդարև իսկ ընդ երեկոյանալ աւուրն խորհուրդք արքունեացն հաստատեալ էին 'ի գըլ-լուխ ելանել: Այլ Տըլոնէ անօք և անօգնական՝ տեսեալ զժողովրդեան հաստատուն պնդութիւն, բուռն եհար 'ի պատրոյգ և 'ի պատրաստի կայր ընդ օդս 'ի վեր հանել զդղեակն: Ընդդէմ կացին նմա պահապանք, և ստի-պէին անձնատուր լինել: Տուան նշանք և արկաւ կա-մուրջ: Մատուցեալ պաշարողաց՝ խոստանային չանցու-ցանել ինչ չարիս. այլ ամբոխն խուժեաց 'ի ներքս և լցան սրահք: Զուիցերիացիք պատեհ գտեալ՝ ապրեցու-ցանէին զանձինս. և զապիկարսն խնամք գաղղիացի զօրականին միայն փրկեցին 'ի վայրագութենէ ժողո-վրդեան: Ի սմին ժամու յանդիման լինէր նոցա օրիորդ ոմն մատաղ և դողդոջուն. համարեցան թէ դուստր իցէ Տըլոնեայ. խլեցին զնա և տանէին հուրբ դատել. այլ անդէն զօրական ոմն առաքինի յափշտակեալ զնա 'ի մոլեգին ձեռացն՝ կացուցանէր յապաստանի, և ինքն դարձեալ խառնէր 'ի նոսա:

Հինգ և կէս ժամ էր աւուրն, և ընտրողացն ժողով 'ի մեծի անձկութեան տագնապէր. և ահա լսելի եղև խուլ մռնչիւն, որ գայր և զօրանայր: Եւ ահա ամբոխ մարդկան յաղթութիւն 'ի բերան լնոյր զգաւիթն: Ընդ ածաւ յաղթանակաւ ոմն 'ի Թիկնապահ զօրաց արքայի վիրաւորց, տարդենեաւ պսակեալ: Կանոնագիր և փա-կանք Պաստիլեայ անցուցեալ կային 'ի ծայր սլաքի, և մի ոմն յամբոխէն արիւնաշաղախ ձեռամբ 'ի վեր ամբառ-նայր զձարմանդ փողակապին Տըլոնեայ, զոր այն ինչ գլխատեալ էին: Զօրականք երկու 'ի Թիկնապահաց ար-քայի՝ Էլի և Հիւլէն՝ ցյետին շունչ նորա պաշտպանեցին նմա: Սպանան և այլք ոմանք, թէպէտ և դիւցազնական իմն առաքինութիւն ոմանց ոմանց 'ի զօրականէն խըն-դրեալ էր ազատել զնոսա 'ի մոլեգնութենէ ամբոխին:

ԹԻԷՐ

Պատմութիւն խռովութեան Գաղղիոյ:

## ԿՈՏՈՐԱԾ ԵՆԻՉԷՐԵԱՑ

Հրապարակն Աթմէյտանի, որ տեսանկար իմն 'ի յետոյ կողմն սպիտակ որմոց արքունի պալատանն երևի, վկայ տրձանացեալ կայ մեծագունին 'ի գործս Թագաւորութեան Մահմուտի, բարձման ասեմ Ենիչէրեաց: Այս ձեռնարկութիւն նորա, որ միայն կարէր վերստին ածել 'ի կենդանութիւն զարքայութիւնն մեծ, ոչ այլ ինչ ընծայեաց առաջի՝ բայց արիւնռուշտ և աղխտաբեր իմն տեսարան, որպիսի ինչ չիք նշմարել ուրեք 'ի տարեգիրս այլոց պետութեանց, որ 'ի հետս գնտակաց դրոշմեալ կայ և հրկիզութեանց զաւերածովք անդ յիշատակարանացն Աթմէյտանի: Մահմուտ մեծ իմն քաղաքագիտութեամբ պատրաստեաց զայն, և քաջութեամբ՝ արժանաւոր առն դիւցազին, էած զայն 'ի գլուխ: Դէպք ինչ զյետին զայս 'ի վեր երևեցոյց վտարանջութիւն:

Սպայ ոմն եգիպտացի եհար զոմն 'ի զօրուէ անտի Տաճկաց. տապալեցին անդէն Ենիչէրիք զկաթսայս իւրեանց: Թագաւորն որ քաջածանօթ և կազմ էր առ ամենայն, կայր յայնժամ 'ի խորհրդեան 'ի բուրաստանս Գէշիք-Թաշի՝ որ յափունս Վոսփորի: Աճապարեաց դարձաւ յարքունիս, և էառ զնուիրական դրօշն Մահմետի. դենպետն և օրէնսգէտք զնովաւ ժողովեալ, սահմանեն բնաջինջ կորուսանել զԵնիչէրիս. զօրականք կանոնաւոր գնդից, և հաւատարիմք 'ի Մահմետականաց անտի 'ի զէն վառեալ՝ գումարին ժողովին 'ի ձայն սուլտանին. ինքն իսկ արքայ յերիվար աշտանակեալ՝ ընթանայ զօրավարել բանակին: Ենիչէրիք համախումբ ժողովեալք 'ի հրապարակն Աթմէյտանի՝ ակն ածեն 'ի նմանէ. հատանէ անցանէ նա. բազում անգամ զբազմամբոխ

դունդս նոցա միայնակ, 'ի մէջ բիւր մահուց քաջալերեալ վեհագոյն իմն զօրութեամբ, զոր ազդել սովոր է անյողդողդ հաստատութիւն մտաց։

Օրս այս կամ յետինն էր լինելոց կենաց նոցա և կամ սկիզբն ազատութեան նոցա և իշխանութեան։ Ենիչէրիք անսաստք 'ի ձայն հրամանաց նոցա՝ չառնուն յանձն կալ ընդ իւրեանց սպայիւք. և խուժեալ ժողովեցան յամենայն կողմանց մայրաքաղաքին արք իբր քառասուն հազար։ Հաւատարիմ զօրականք սուլդանին՝ Թնդանօթաձիգքն և Պոստանճիք՝ տիրեն անցից մերձակայ փողոցաց Ջիարձակարանին։ Հրաման ետ տրքայ արձակել զհուր, և զօրականքն կային միայն տարակուսեալք. անդէն սպայ ոմն աներկիւղ՝ մերձենայ 'ի մի թնդանօթից անտի, և զատրճանակ իւր արձակէ 'ի խանձ նորա, և ահա ընդ հրաճայթ ամբողջ յերկիր կործանի առաջին դաս զօրուն Ենիչէրեաց։ Ցետս ընդ կրունկն ընկրկին նոքա, և բնակարանք նոցա հրակէզ լինին. անթիւ բազմութիւն նոցա յանձուկ վայրի անգ փակեալ՝ կործանի ընդ փլատակօք որմոցն։ Արք իբր հարիւր և քսան հազար 'ի մայրաքաղաքին ևեթ 'ի սուր սուսերի կորեան, 'ի զոհ կատաղութեան խուժանին և սուլդանին. ջուրք Վոսփորի ածեալ ամացին զդիակունս նոցա 'ի ծովն Մարմարայ. և որ կենդանիք 'ի նոցանէ մնացեալ էին՝ 'ի փոքրն Ասիա տարագիր եղեն։ Զայս օրինակ զերծանէր Թագաւորութիւնն։

ԼԱՄԱՐԴԻՆ. Ուղևորութիւն յԱրևելս։

---

## ՄԱՐՑ ԵՒ ՄԱՀ ԿԱՑԻԼԻՆԱՅ

Եւ յետ հանդէս առնելոյ ամենայնի, Պետրէոս պատուէր ետ նշան տալ, փող հարկանել, և հետևակազօրուն ոտն առ ոտն յառաջ խաղալ։ Զնոյն և թշնամին

(Կատիլինա) տրար։ Իբրև մօտ առ իրեարս հասին, ուր մարթէր թեթևազէն զօրուն բախել 'ի մարտ, մեծաւ աղաղակաւ զայրագինս դիմեցին, և զնէգս թողեալ՝ ձեռն 'ի սուսերս արկին։ Հինաւուրց զօրքն 'ի յիշատակ արութեանցն անցելոց մոլեգնաբար կուրծ առ կուրծս ընդ թշնամիս կռուէին, և նոքա անվեհերք ընդդէմ նոցին ունէին. և սաստիկ լինէր անդ մարտ պատերազմին։ Անդ Կատիլինա 'ի ճակատու բանակին ընտիր ընտիր զօրօքն շուրջ եկեալ՝ ձեռն տայր վաստակելոցն, առողջս ընդ վիրաւորելոց փոխանակէր, ամենայնի խնամ տանէր, և յաճախ անձամբ մարտուցեալ՝ զբազումս դիտապատ յերկիր արկանէր, զքաջի զօրականի և զհանճարեղ սպարապետի պաշտօն լցեալ անթերի։ Պետրէոս իբրև ետես 'ի վեր քան զակնկալութիւն զխիստ յարձակումն Կատիլինայ, խաղացոյց 'ի մէջ թշնամեաց զգունդն պրետորական. և խռովեալ զնոսա, և որոց աստ անդ ընդդէմ ունէին՝ առ 'ի վերայ եղեալ, արար կոտորած մեծ. և անտի յաջ և յահեակ յարձակեցաւ։ Մանլիոս և Փեսուլացին, որք 'ի ճակատու անդ մարտնչէին՝ անկան. և Կատիլինա իբրև ետես վայրավատնեալ զիւրսն, և զանձն սակաւուք ամամբք մնացեալ անօգնական, յիշեաց զազնուականութիւն զարմին և զնախնեացն փառս, և դիմեալ 'ի խառնուրդս մարտին՝ անդ դէն 'ի ձեռին անկաւ մեռեալ։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Կատիլինեա։

---

## ՄԵՏԵԼԼՈՍԻ ԸՆԴ ՅՈՒԳՈՒՐԹԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ

Իսկ Յուգուրթ իբրև ետես զվերջապահս բանակին Մետելլեայ՝ յառաջ անցեալ քան զառաջնապահս իւր, իբր երկու հազար զօրօք հասեալ կալաւ զլեառնն՝ ուստի իջեալն էր Մետելլոս, զի մի 'ի խոյս տալ թշնամեացն՝

լինիցի նոցա այն տեղի ապաւէնի և ապա մարտկոց։ Հանդա, ետ յանկարծակի նշան, և յարձակեցան 'ի Թշնամիս։ Կէսք 'ի Նումիդացւոց զվերջապահս հարկանէին, այլք յաջ և յահեակ զրահ տային, 'ի նեղ և 'ի տագնապ զՀռովմայեցիս արկանէին, ամենայն ուրեք զամենայն կարգս նոցա աղմկէին։ Որ քաջասրտագոյնք իսկ ընդդէմ Թշնամւոյն դիմեալքն էին, տեղի տային 'ի կեղակարծ մարտէն՝ նետահարեալք 'ի բացուստ, և ոչ բաւեալ փոխանակել նոցա վէրս կամ գալ 'ի կռիւ։ Քանզի հեծելազօրն յառաջագոյն խրատեալ 'ի Յուգուրթայ՝ 'ի հալածելն 'ի Հռովմայեցւոց՝ ոչ կուռ 'ի մի վայր պնդէր, այլ սփռէր ցիր և ցան։ Եւ այսպէս Նումիդացիք առաւելեալք Թուով, իբրև ոչ կարէին արգելուլ զՀռովմայեցիս 'ի հետամուտ լինելոյ, հարկանէին շուրջ 'ի Թիկանց և 'ի կողից զցրուեալ գունդս նոցա. և եթէ դիպողագոյն Թուէր խոյս տալ ընդ բլուրն. քան ընդ դաշտ, երիվարք նոցա քաջավարժք էին ընդ Թփուտս տանել, ուր զձիանն մեր արգելոյր մացառախիտ դժուարութիւն վայրացն։

Բայց մարտն յեղյեղուկ երկուստեք անպարտելի՝ ազդոմ և դժնեայ ընծայէր տեսիլ. կէսք 'ի խմբից քակտեալ տեղի տային, այլք նոցին հետամուտ լինէին. ոչ կարգաց և ոչ դրօշուց էր պահպանութիւն. ուր ուրեք և հասանէր ումեք վտանգ, անդ զդէմ ունէր. անդէն փոխանակէր զհարուած։ Զէնք և նետք, ձիան և մարդիկ, Նումիդացիք և Հռովմայեցիք խառն 'ի խուռն. ոչ խորհրդոց և ոչ հրամանաց ազդեցութիւն, այլ զամենայն ինչ դէպք տնօրինէին։

Օրն տարաժամէր և տակաւին անյայտ էին ելք մարտին, մինչև 'ի պարտասել ամենեցուն յաշխատութենէ և 'ի տօԹոյ։ Իբրև ետես Մետելլոս զՆումիդացիս Թուլացեալս 'ի դիմակալութիւն, տակաւ 'ի մի վայր զզօրականն էած. կարգս եդ նոցա, և զքառեակ լեգէոնական գունդս ընդդէմ հետևակազօրուն Թշնամեաց

կացոյց, որ մեծաւ մասամբ 'ի բարձունս բլրոյն խոնջեալ նստէին: Աղաչէր միաբանաբար և յորդորէր զզօրականն՝ մի լքանել, և մի փախստական թշնամւոյն թողուլ զյաղթութիւն. չիք ձեզ բանակետղ, ասէր, և ոչ տեղի ապաւինի. 'ի զէնս է ամենայն: Այլ և ոչ Յուգուրթ անգործ կայր յայնժամ. շուրջ գայր, քաջալերէր զզօրսն, վարէր զնոսա անդրէն 'ի մարտ. և ինքն անձամբ 'ի գլուխ այրուձիոյ զօրականին՝ զամենայն ճիգն 'ի գործ արկանէր, 'ի թիկունս հասանէր իւրոցն, զտարակուսեալս 'ի թշնամեաց հատեալ վանէր, և զզօրաւորաց 'ի բացուստ պատերազմաւ զդէմ ունէր:

Այս օրինակ մրցէին յերեկոյս զօրավարքն երկոքին, որք հզօրք, քաջութեամբ հաւասարք, այլ ոչ և զօրութեամբ: Մետեղղեայ քաջք էին զօրականք, այլ տեղին դժպատեհ. իսկ Յուգուրթայ բաց 'ի զօրացն՝ ամենայն ինչ բարեպատեհ: Իբրև 'ի միտ առին Հռովմայեցիք զի չէր նոցա տեղի փախստի, և ոչ հնար զթշնամին ձգելոյ 'ի պատերազմ, և զի օրն ընդ երեկս էր, 'ի բլուրն կոյս գրեհ եւտուն ըստ հրամանի զօրավարին: Իսկ Նումիդացիք կորուսեալ զբազմաբանօրականն և 'ի պարտութիւն մատնեալ՝ դարձան 'ի փախուստ. բայց նուազագոյնք 'ի նոցանէ կորեան, այլոցն զերծեալ արագշու, անտեղեակ գոլով թշնամւոյն վայրաց գաւառին: Յայնմ վայրի Բոմիլկար, որ հրամանատար 'ի Յուգուրթայ կարգեալ էր 'ի վերայ փղաց և հետևակազօրուն, իբրև ետես զՀռութիլիոս անցեալ յառաջ, էած տակաւ զզօրս իւր 'ի տեղի տափարակ. և 'ի փութալ դիմել նորա 'ի գետն, ինքն պատեհ առեալ՝ լռիկ հանդարտիկ ճակատեցոյց զզօրսն, և խնամ կալեալ լրտեսէր զգնացս թշնամւոյն: Իսկ իբրև գիտաց զի Հռութիլիոս նստէր աներկեան, և Յուգուրթայ պատերազմին բարձրաձայն շռինդն առաւելլի, երկեաւ զի մի գուցէ Հռութիլիոս իրազեկ լեալ օգնականեսցէ իւրոցն պարտասելոց 'ի թիկունս. զճակատ բանակին՝ զոր առ կացեալ տկարութեամբ զօրա-

կանխին անձուկ էր յօրինեալ՝ առ ՚ի խափանել զչու-
թշնամւոյն, ընդարձակեաց և խաղացոյց ընդդէմ բա-
նակի տեղակալին։ Դէտ ակն ՚ի վեր ամբարձեալ տեսին
յանկարծ Հռովմայեցիք մրրիկ փոշւոյ մեծ. և քանզի
մացառախիտն որ ՚ի դաշտին՝ արգելոյր զտեսիլ բանա-
կին, համարեցան ՚ի սկզբան զփոշի անձրդի երկրին վեր
՚ի վայր ՚ի հողմոց յուզեալ. այլ իբրև տեսին զի յարա-
տևէր մրրիկն և ըստ յառաջ խաղալ բանակին՝ գայր
մերձենայր առ նոսա, ծանեան զգալուստ թշնամեաց,
և զէն առեալ առաջի պատնիշացն ճակատեցան կացին
ըստ հրամանի զօրավարին։ Իսկ իբրև բանակք երկոքին
եկին հասին առ միմեանս, զաղաղակ հարեալ դիմեցին
՚ի վերայ միմեանց։ Նումիդացիք զառաջինն յօգնակա-
նութիւն փղացն յուսացեալ՝ ժուժկալէին քաջութեամբ.
այլ ՚ի տեսանելն զնոսա արգելեալս յոստոց ծառոց ցիր
և ցան պաշարեալս ՚ի թշնամեաց, ՚ի փախուստ դարձան.
և բազումք զէնընկէց լեալ՝ օգնականութեամբ գիշերոյ
և մերձակայ բլրոյն անվնասք ճողոպրեցան։ Չորք ևեթ
՚ի փղացն գերի վարեալ, այլք առ հասարակ թուով
քառասուն՝ սպանան։ Իսկ Հռովմայեցիք թէպէտ վաս-
տակաբեկք ՚ի յերկար չուոյն, ՚ի պատնէշս ածելոյ և ՚ի
պատերազմէ, սակայն ՚ի յամել Մետելլեայ առաւել
քան զկարծիս՝ պնդակազմք և զգուշաւորք ելին ընդ-
առաջ, զի դարանակալութիւնք Նումիդացւոց չներէին
նոցա յանհոգս լինել։ Եւ իբրև ոչինչ հեռի էին յիրե-
րաց, ՚ի մթան գիշերոյ զառաջինն զթշնամեաց կարծե-
լով յարձակումն՝ արհաւիրս ՚ի միմեանս և աղմուկս չփո-
թի գոչմամբ աղաղակաւ արկանէին. և թէ ոչ երկաւ-
տեք հեծեալք ոմանք ՚ի վերայ հասանէին իրացն, նախ-
ճիր աղետալի յանդուգն վրիպակաւ ՚ի տեղւոջ անդ
գործէր։ Անդ յանկարծ ընդ երկիւղին փոխանակէր
խնդութիւն. զօրականք զուարթագին ձայն տային՝ մի-
մեանց, լսել և պատմել զանցս իրերաց, և իւրաքանչիւր
զանձին քաջութիւն յերկինս ամբառնայր։ Այսպիսի

Digitized by Google

բնաւորեալ են մարդիկ. 'ի յաղթութեան՝ վատաց իսկ պարծել, իսկ 'ի ձախողակս՝ լքանել եւս և քաջաց:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ:

---

## ԱՌՈՒՄՆ ԱՄՐՈՑԻ

Ոչինչ հեռի 'ի Մուլուքայ գետոյ, որ բաժանէր ընդ տէրութիւն Յուգուրթայ և ընդ Բոկքոսի, էր լեառն քարաժայռ 'ի դաշտի լայնանիստ և բարձրագագաթն, և 'ի վերայ նորա ամրոց ոչինչ մեծակառոյց, յոր ընդ անձուկ վերելս էր մուտ, այլ ամենայն կողմանք լերինն 'ի բնուստ և ձեռագործ սեպացեալք:

Զսա Մարիոս, զի անդ էին գանձք Թագաւորին, եգ 'ի մտի զինու զօրութեամբ առնուլ. այլ դէպք առաւել յաջողեցին նմա զայն քան զճարտարութիւն խորհրդոց: Քանզի հզօր էր ամրոցն զինուք և զօրօք, և պաշար ցորենոյ 'ի նմա և աղբիւր ջուրց. և վայրն դժպատեհ 'ի կառուցումն հողաբլրոյ, աշտարակաց և կարևոր կազմածոց մարտի. և ճանապարհ բերդականաց անձուկ յոյժ և երկուստեք զահավէժ: Մեքենայք և մանգղիոնք մեծամեծ վտանգօք ընդ վայր մաշէին անդր. զի այն ինչ հուպ լեալ՝ 'ի հրձգութենէ և 'ի վիմաց հոլովելոյ ապականէին. և ոչ զօրականք առ տեղւոյն անհարթութեան դիմակալել զօրէին, և ոչ 'ի մեքենայս անդր կալ անվտանգ առ 'ի վարել զայնոսիկ. քաջամարտիկքն 'ի նոցանէ անկանէին կամ վիրաւորք ելանէին, և տկարք երկիւղաբեկ լինէին:

Անդ Մարիոս զաւուրս բազումս սնավաստակ լեալ՝

վարանէր յանձն իւր, ձեռնթամփ արդեօք լինել 'ի գործոյն' որ անօգուտն թուէր, եթէ բաղդին թողուլ զյաջողութիւն, այնմ' որ ստէպ լինէր իւր ձեռնտու։ Եւ իբրև զբաղում տիւս և գիշերս յայսպիսի ծուփս խորհրդոց տագնապէր նա, լիգուրացի ոմն 'ի դաշնակից հեռևակագնդէն զինուոր սոսկական, ըստ յաջողելոյ բաղդին ելեալ 'ի բանակէն գջրոյ, ոչինչ հեռի 'ի կողմանէ ամրոցին ուր կռուէինն, ետես 'ի պատառուածս ժայռից խղնջուկս որ սողային․ յորոց 'ի միոյ յայլ և անտի 'ի միւսն ընթացեալ առ 'ի ժողովել, տակաւ մերձ 'ի ծագ ամրոցին եհաս։ Եւ 'ի տեսանել զվայրն անմարդի, եկն նմա բնաւորապէս իղձ անծանօթիցն հետաքօտութեան։ Կաղնի մեծ ըստ դիպաց 'ի տեղւոջ անդ 'ի ժայռս արմատացեալ էր, դուն ինչ հակեալ և ապա կոր 'ի վեր աճեցեալ' ուր դիմէ բնութիւն բուսականաց։ Մերթ ընդ ոստս նորա և մերթ ընդ սեպս ժայռից սողոսկեալ լիգուրացին գծագրեաց զյատակ բերդին. քանզի Նումիդացիք համօրէն 'ի զնիւն պատերազմողացն կային։ Եւ իբրև լրտեսեաց զամենայն որ ինչ ընդ հուպ կարևորն լինելոց էր, դարձ արար ընդ նոյն ճանապարհ, ոչ հարևանցի որպէս 'ի վերելսն, այլ տեղեկանալով ամենայն վայրացն և շուրջ դիտելով։

Ապա անճապարեալ գայ առ Մարիոս, պատմէ զամենայն և յորդորէ զնա ընդ կողմն ընդ որ իջեալն էր' դիմել 'ի բերդն, խոստացեալ անձամբ առաջնորդել՝ զվտանգ յանձն առեալ։ Մարիոս առ 'ի հաւաստել զբանս լիգուրացւոյն' առաքեաց զոմանս յիւրոց անտի, որք ըստ իւրաքանչիւր մտացն թուելոյ' հեշտին կամ դժուարին զգործն ցուցին։ Բայց բդեշխին ոչ սակաւ խորախոյս առեալ, ընտրեաց 'ի գնդէ անտի փողարացն և տնգահարաց ապս հինգ թեթևընթացս, և հարիւրապետս չորս 'ի թիկունս օգնականութեան տալ նոցա, հրամայեաց ամենեցուն նոցա հնազանդել լիգուրացւոյն, և 'ի վաղիւ անդր կատարել զգործն։

Digitized by Google

Եւ 'ի սահմանեալ ժամանակին զամենայն ինչ կազմեալ նախ և պատրաստեալ՝ անկան 'ի ջուր: Բայց հարիւրապետացն խրատեալ յառաջագոյն յառաջնորդէն, փոխեալ էր զզէն և զզարդ, և զոտս և զգլուխ մերկացեալ, որպէս զի հեշտեաւ ընդ ժայռս վերելակել կարիցեն. և զսուր և զվահան կախեալ զթիկանց, և վահանքն ըստ նումիդեան տարազու կաշեայք, որպէս զի թեթևագոյնք իցեն, և 'ի բախել նոցա ընդ վէմս ոչ ուժգինս շառաչիցեն: Արդ Լիգուրացին յառաջագէմ՝ զժայռից և զհինաւուրց արմատոց, որ ուրեք ուրեք ցցուեալ 'ի դուրս գտանէին, արկեալ պարանս՝ դիւրէր նոցօք զհետ եկելոցն զվերելս. և վատաբարտելոց 'ի խրոխտութենէ ճանապարհին ձեռն կարկառէր. և 'ի դիպել ափափայից՝ մի առ մի զնոսա անզէնս արձակեալ, և ինքն ստանձնեալ զզէնս նոցա գայր զհետ. և ուր վտանգն էր՝ ինքն նախ արիաբար դիմագրաւէր, և ստէպ ընդ նոյն ելևէջս գործեալ զամենեսեան խրախուսէր: Եւ յետ երկար և բազում աշխատանաց, ուր ուրեմն հասին 'ի կողմն ամրոցին թափուր 'ի պատերազմողաց. քանզի ամենեքեան՝ որպէս և յայլ աւուրս՝ ընդդէմ թշնամեաց երթեալ էին: Ազդ եղև Մարիոսի 'ի ձեռն լրտեսաց յաջողութիւն գործոց Լիգուրացւոյն. և թէպէտ զօրն 'ի բուն նեղեալ էր նորա զՆումիդացիս, սակայն խրախուսեալ յայնժամ զիւրսն, և ինքն 'ի մեքենայից արտաքս ելեալ, յառաջ մատչէր ընդ ապարափակ հովանեաւ, և 'ի բացուստ 'ի ձեռն աղեղնաւորաց և պարսաւորաց տագնապ ահագին հասուցանէր թշնամեաց: Իսկ Նումիդացիք՝ որոց բազում անգամ տապալեալ և հրկէզ արարեալ էր զմանգղիոնս Հռովմայեցւոց, ոչ 'ի ներքս 'ի պարսպի ամրանային, այլ զտիւ և զգիշեր արտաքոյ դեգերեալ՝ թշնամանէին զՀռովմայեցիս, վատ կոչէին զՄարիոս, և զօրաց մերոց գերութիւն սպառնային, յաջողութեամբքն գոռոզացեալ: Ի նմին պահու մինչդեռ Հռովմայեցիք առ հասարակ և թշնամիք առա-

տիկ պատերազմաւ զուն եղեալ երկուստեք, առքա վասն փառաց և իշխանութեան, և նոքա վասն անձանց փրր-կութեան մարտնչէին, և ահա յեղակարծումն 'ի թիկանց ձայնք հնչեցին փողոց. և նախ կանայք և մանկունք, որ կային 'ի զնին մարտին, փութացան 'ի փախուստ. ապա որք մերձ առ պարսպաքն էին, և ապա զինեալք և ապազէնք։ Ուրանօր այս դէպք պատահեցին՝ անդ Հռովմայեցիք սատակագոյնս մարտնչէին, և հասեալ վանեալ զթշնամիս՝ զբազումս 'ի նոցանէ տապաստ արկանէին, և 'ի վերայ սպանելոցն դիականց զրոհ տուեալ՝ ծարաւիք փառաց՝ 'ի պարիսպս անդր դիմէին, ընդ հակառակս ընթացեալ և ոչ ուրուք ցանկութեամբ աւարոյ յամեալ։ Այսպէս յանդգնութեանն Մարիոսի օգնականեալ 'ի բաղդէն՝ փառս 'ի վրիպանաց եգիտ։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ։

---

## ՓԻԼԻՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Զայնու ժամանակաւ իշխէին Կարքեդոնացիք մեծի մասին Ափրիկեայ. և Կիւրենացիք իսկ հզօրք էին և բազմահարուստ։ Դաշտ աւազուտ միօրինակ էր 'ի միջի. ոչ գետ և ոչ լեառն զսահմանս նոցա որոշէր, որով երկար և անլուելի մարտ պատերազմի էր 'ի նոսա։ Իբրև երկուստեք գունդք զօրաց և նաւատորմիղք ստէպ խորտակեալ 'ի փախուստ դարձան և նկուն եղեն իրերաց, խիթացեալ թէ գուցէ այլ ոք 'ի վերայ յարձակեսցի պարտելոց և յաղթականաց պարտասելոց, դուլ զինուց արարին, և դաշինս եդին՝ զի 'ի նմին աւուր և 'ի

ժամու դեսպանք տրձակեալ յերկաքանչիւր աշխարհէն՝ յորում վայրի և միմեանց հանդիպեցին, այն լիցի երկոցունց ազգացն սահման։ Արդ 'ի Կարքեդոնացւոց անտի արձակեալ եղբարք երկու Փիլենեանք անուանակոչեալք՝ սուրհանդակօրէն խաղացմամբ համառօտեցին զճանապարհն. իսկ Կիւրենացիք դանդաղեցին. այլ ածուլութեան արդեօք եթէ ըստ դիպաց այսպէս պատահեալ՝ չունիմ ասել հաւաստեաւ։ Բայց 'ի կողմանս յայնոսիկ մրրիկ որպէս 'ի ծովու արգելու յաճախ զճանապարհորդս. զի ընդ դաշտ տափարակ և անծառատունկ՝ հողմ ուժգին զաւազն 'ի վեր փոթորկեալ լնու զբերանս և զաչս անցաւորաց, և հարեալ զնոսա շլացութեամբ՝ խափանէ 'ի գնացից։ Իբրև տեսին Կիւրենացիք զմնալ իւրեանց յետս, երկուցեալ վասն պարտութեանն 'ի պատուհասէ քաղաքայնոցն, սկսան ստգտանել զԿարքեդոնացիս իբր յառաջ քան զժամադրութիւնն մեկնեալս 'ի քաղաքէն, և աղմուկ արարեալ զամենայն ինչ յանձն առնուին քան դառնալ յետս պարտութեամբ։ Յայնժամ խնդրեցին Կարքեդոնացիք այլ ինչ սահմանել պայման, բայց միայն իրաւացի. և զիջան Յոյնք 'ի խնդիր նոցա, եդեալ պայման՝ զի կամ ինքեանք ուր զսահման ժողովրդեան իւրեանց խնդրէին՝ անդ կենդանւոյն թաղեսցին, և կամ ինքեանց նովին պայմանաւ յառաջ խաղալ ցոր վայր կամիցին։ Հաճոյ թուեցաւ Փիլենեանց պայմանն այն, և անձնանուէր ետուն զկեանս իւրեանց 'ի շահ օգտի հասարակայնութեան, թաղեալք անդ կենդանւոյն։ Եւ Կարքեդոնացիք սեղան 'ի տեղւոջ անդ կանգնեալ Փիլենեանցն եղբարց և այլ ևս պաշտամունս 'ի քաղաքին օրինադրեցին։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ։

Digitized by Google

## ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՅ ԱՌ ԺԱՄԱՆԱԿՕՔ

## ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ

*Յուլիոս Կեսար նուաճելովն զԳաղղիացիս գործ գործեաց կարևոր հայրենեաց իւրոց քան զայլ ամենայն աշխարհակալութիւնս Հռովմայեցւոց. մինչև վասն այսր քաջութեան ձեռնհաս լինել նմա կանգնել ինքեան իշխանութիւն յաշխարհի իւրում: Զառաջինն հետամուտ եղև 'ի չափ իշխանութեան Պոմպէի հասանել, և ճգնէր զկնի գեր 'ի վերոյ անցանել զնովաւ:*

*Կարծեաց Կրասոս եթէ կարող իցէ և ինքն բազմագանձ հարստութեամբ իւրով բաժանորդ լինել փառաց հոյակապ արանցն, ըստ որում և յիշխանութեան հաւասար էր նոցա: Յայնժամ մտաց խորհրդի խաղաց յանդուգն 'ի վերայ Պարթևաց, ընդ որ զղջացաւ ինքն և հայրենիք իւր: Վատթարեալ զնա Արշակունեաց, դառն կատականօք թշնամանեցին զամբարհաւաճութիւն Հռովմայեցւոց և զանյագ արծաթսիրութիւն զօրապետի նոցա:*

*Բայց այս նշաւակութիւն Հռովմայեցւոց նկուն նուաճութեամբն Կրասոսի՝ չեղև յետինն յաղէտս նոցա: Զուգապանծ իշխանութիւն նորա ընդ Պոմպէի և ընդ Կեսարու՝ բռնի ունէր զնոսա միաբանս. իբրև մեռաւ նա, խրամատեցաւ ցանգն, և անագորոյն մարտիւ պատերազմաւ անդ 'ի Փարսալիա 'ի գլուխ հանին զթշնամութիւնն երկոքին նախանձորդք: Յայնժամ յաղթականն Կեսար հասանէր որպէս փայլակն յամենայն տեղիս, յԵգիպտոս, յԱսիա, 'ի Մաւրիտանիա, 'ի Սպանիա, և ամենայն ուրեք անպարտելի ցուցեալ՝ տէր յայտնէր Հռովմայ և բոլոր պետութեան: Իսկ Բրուտոս և Կասսիոս 'ի վերայ ամենայն երախտեաց նորա՝ սպանին զնա որպէս զայր բռնաւոր, իբրու այն թէ յազատութիւն հանիցեն զքաղաքակիցս իւրեանց:*

Digitized by Google

Այլ անկանէր Հռովմ՝ ի ձեռս Մարկոսի Անտոնիոսի, Լեպիդոսի, և կրտսերոյն Կեսարու Հոկտաւիանոսի՝ որ թոռն էր քեռն Յուլիոսի Կեսարու և որդեգիր նորա։ Բայց երեքին եւս յոյժ բռունք էին. և ճառ պատմութեան եռապետութեան նոցա և բռնանալոյն դողացուցանէ և ցարդ զմարդկան բնութիւնս յորժամ առնուցուն ընթեռնուլ։ Այլ անհնարին բռնակալութիւն նոցա ոչ ունէր յերկարել. բաժանեն սոքա երեքեան զպետութիւնն. զիտալիա կալաւ Հոկտաւիանոս, որ և մերկացեալ վաղվաղակի զառաջին ժանտութիւն իւր՝ յայտ առնէր եթէ բռնարար ձգեցաւ 'ի նոյն յիշխանակցաց իւրոց։ Կորեան ընդ Բրուտոսի և Կասսիոսի և որք ցայնժամ մնացեալ էին 'ի կուսակցաց հասարակապետութեան։ Անտոնիոս և Կեսար իբրև խորտակեցին զԼեպիդոս, յարեան 'ի վերայ միմեանց, և հռովմէական պետութիւնն միահամուռ զինուորեցաւ ընդ ծով։ Յաղթանակէ Կեսար յԱկտիական պատերազմին, ցիր և ցան կացուցեալ առ հասարակ զզօրս Եգիպտոսի և արևելից, զորս ածեալ էր ընդ իւր Անտոնիոս։ Ամենայն բարեկամք նորա լքանեն թողուն զնա. նա և սիրեցեալն իւր Կղէոպատրա, յորոյ 'ի տարփանս զակատեալ էր։ Բռնադատի և Հերովդէս եդոմայեցի, թէպէտ և յԱնտոնիոսէ ընկալեալ էր զամենայն, անձնատուր լինել յաղթականին. որով և հաստատի 'ի թագաւորութեան Հրէաստանի, որ առ վատութեան ծերոյն Հիւրկանեայ բարձեալ էր 'ի սպառ 'ի տանէ Ասմոնեանց։ Ամենայն ինչ խոնարհի առաջի բախտին Կեսարու. Աղեքսանդրիա բանայ նմա զդրունս իւր. Եգիպտոս կարգի ընդ գաւառս Հռովմայ. Կղէոպատրա անյուսացեալ 'ի պահելոյ զայն՝ գնայ զիւրովին զհետ Անտոնիոսի. տարածէ զձեռս իւր Հռովմ առ Կեսար, և կանգնի կայ նա միահեծան իշխան 'ի վերայ ամենայն պետութեանն, և կարդան նմա անուն աւգոստէ և ինքնակալ։ Նուաճէ ընդ ձեռամբ զվտարանջեալ Կանտաբրեանս և զԱստուրեանս զկող֊

մամբք Պիրենեան լերանց։ Եթովպիա հայցէ 'ի նմանէ զխաղաղութիւն. Պարթեւք զարհուրեալք յետս առաքեն զդրօշսն հանդերձ գերելովքն 'ի մարտին ընդ Կրասսոսի. խնդրեն Հնդիկք զդաշնաւորութիւն նորա. ձայն զինուց նոցա լսելի լինի և 'ի Հռետացիս և ոչ ապրին լերամբքն բարձամբք։ Խոնարհի նմա Պաննոնիա, դողայ 'ի նմանէ Գերմանիա, և օրէնս 'ի նմանէ ընդունի Վիսուգէս։ Յաղթողն ընդ ծով և ընդ ցամաք՝ փակէ զդրունս մեհենին Յանոսի։ Տիեզերք ողջոյն կան խաղաղ ընդ իշխանութեամբ նորա, և գայ մտանէ Փրկիչն մեր յաշխարհ։

ՊՈՍԻՒԷ. Խօսք 'ի վէպս ազգաց։

---

## ՀՌՈՎՄ ՄԱՏՆԵԱԼ Ի ՁԵՌՍ ԲԱՐԲԱՐՈՍԱՑ

Այլ և յորժամ հասանէր ժամանակ խորտակման հզօր իշխանութեան Հռովմայեցւոց, և անյեղլի դատակնիք հաւասար ամենեցուն վախճան դնէր և նմա, որ զուր պանծացաւ թագաւորել յաւիտեան, դարձեալ կրօնիւքն աստուածպաշտութեան անկապուտ պահեաց Հռովմ, մատնեալն 'ի ձեռս խուժադուժ ազգաց՝ ըզնախկին փառսն իւր։

Ազգք որ յափշտակեցին զթագաւորութիւն նորա, առ սակաւ սակաւ ընդելացան ընդ բարեպաշտութիւն քրիստոնէից, և օրինակաւ նոցա մերկացան զվայրագութիւն իւրեանց. զի և թագաւորք նոցա իբրև յաջորդեցին յազգ իւրաքանչիւր զիշխանութիւն կայսերաց՝ առաւել քան զամենայն փառաց անուանս գեր 'ի վերոյ համարեցան պաշտպան կոչիլ Եկեղեցւոյ։

Digitized by Google

Բայց պարտ և պատշաճ է զգաղտնի դատաստանս Աստուծոյ 'ի վերայ պետութեան Հռոմոց և նորին իսկ Հռովմայ ցուցանել աստ, զոր յայտնեաց աստուածեղէն Հոգին՝ աքանչելւոյն Յովհաննու, և զոր սոյն սա այր մեծարոյ, առաքեալ, աւետարանիչ և մարգարէ, բացատրեաց 'ի Յայտնութեան գիրսն։

Հռովմ 'ի վաղուց հետէ յաճախութեամբ պաշտօն տանէր կռոց. վասն որոյ ծանր էր նմա նա և յաւուրս քրիստոսադաւան կայսերաց լքանել զնոսա։ Մեծ իմն գրէր ծերակոյտն թեարկել զդիովք Հռոմուլոսի, զի նոցա ընծայէր զյաղթութիւնս նախնեաց պետութեանն։ Տաղտկացեալ կայսերք 'ի ստէպ ստէպ հրեշտակութեանց նորա. զի խնդրէր 'ի նոցանէ զկանգնումն դրօշելոց, և սրբել զՀռովմ 'ի վաղնջուց ունայնութեանց՝ նախնատիկս վարկանէր անուանն Հռոմոց։ Ոչ ինչ ազդէին նմա քարոզութիւնք աւետարանին և ակներև լրումն մարգարէութեանց, և տաւաղումն 'ի Քրիստոսս ընաւ պետութեանն և նոցին իսկ կայսերաց, որք և ամենևին զճշմարտութեան զկողմն ունէին։ Այնքան զժկամակէր աւագանին և բազմութիւն ժողովրդեանն Հռովմայ և ականաւորքն 'ի բաց կալ 'ի մոլորութեանց իւրեանց. մանաւանդ թէ անդադար զեկեղեցին Քրիստոսի աղարտել փութային, և զրպարտողք ըստ օրինակի հարց իւրեանց՝ 'ի նա հանէին զպատճառս ամենայն չարեացն որ անցին ընդ պետութիւնն. և եթէ ոչ էր կայսերաց զդէմ կալեալ նոցա, յօժարամիտք էին վերստին արծարծանել զհուր հալածանացն։

Ի չորրորդ դար Եկեղեցւոյ, հարիւր ամօք զկնի Կոստանդիանոսի իբրև տակաւին այս իրք էին, յիշեաց Աստուած զբազմապատիկ զանօրէն վճիռս ծերակուտին ընդդէմ հաւատացելոց, և զժողովրդեան Հռովմայ՝ զծարաւելոց արեան քրիստոնէից զմոլեգին գոչումն, որք հնչեցուցանէին առ հասարակ զամփիթէատրոնն մեծ, և մատնեաց 'ի բարբարոսաց ձեռս զքաղաքն արքեալ

յարենէ վկայից ըստ մեծին Յովհաննու, ածեալ 'ի վե֊րայ նորա զահագին պատուհասն՝ զոր երբեմն 'ի վերայ Բաբելոնի, զի և սա ինքն Բաբելոն կոչեցաւ։ Նորա այս Բաբելոն համանման հնոյն պանծացեալ իբրև զնախնին ընդ յաղթութիւնս, շռայլեալ 'ի հեշտութիւնս, մեծու֊թեամբքն պերճացեալ, պղծեալ դիցն պաշտամամբք և հալածող ժողովրդեանն Աստուծոյ, անկանէր տապա֊լէր հանգոյն նմին կործանումն ահաւոր, զոր և կանխաւ գուշակեաց աւետարանիչն սքանչելին Յովհաննէս։ Ընդ աշխարհակալութեանցն զորս դիցն գրէր օգնականու֊թեան՝ շիջաւ 'ի նմանէ և պարծանքն. յաւար մատնե֊ցաւ խուժադուժ ազգաց. երիցս և չորիցս կալան զնա, կողոպտեցին, մերկացին, յապականութիւն եդին. և աւսեր բարբարոսացն 'ի քրիստոնեայս միայն խնայեաց։ Անդ յաճիւնացեալ նշխարաց նախնոյն Հռովմայ 'ի վեր երևէր այլ Հռովմ, ազգ քրիստոսադաւան. և յորժամ հեղեղէր յաշխարհն ազգն խժական, յայնժամ զկա֊տարեալն յաղթութիւն 'ի գլուխ տարաւ Քրիստոս 'ի վերայ դիցն Հռովմայեցւոց, ոչ խորտակեալ միայն զնոսա, այլ և 'ի սպառ 'ի մոռացօնս դարձուցեալ։

ԳՈՍԻԻՆ. Խօսք 'ի վէպս ազգաց։

---

## ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՌՈՔՌՈԱՑ

Զգիշերն՝ զոր հարկ էր անցուցանել դէմ յանդիման թշնամեացն, իբրև հսկող զօրավար, հուսկ յետոյ ամե֊նեցուն 'ի քուն եմուտ Դիւքէն, այլ ոչ այլ ուրեք առաւել խաղաղ ննջեաց։ Ցառաջնմէ անտի ցայգոյ աւուրն ահեղի, և յետ առաջնոյ ճակատուն՝ անխռով կայ, այն֊

պէս 'ի բնտկաւոր իւրում պայմանին գտանի. և գիտեմք իսկ զի 'ի վաղիւ անդր 'ի ժամանակեալ ժամուն՝ զարթուցանել հարկ եղև 'ի խոր քնոյ զերկրորդս զայս Աղեքսանդրոս։ Տեսանէ՞ք որպէս սլանայ 'ի յաղթութիւն կամ 'ի մահ։ Իբրև ընդ կարգս ռազմի ճակատուն տարաւ զեռանդն իւրոյ հոգւոյն՝ անդէն վաղվաղակի, զոգ 'ի նմին ժամու, տեսաւ զի վանէր վկանդէր զաջակողմ թևին թշնամեաց, զօրացուցանէր զմերն զխախտեալ, ժողովէր պնդակազմ զգալլիացին մերձ 'ի պարտութիւն, փախստեայ տանէր զյաղթական սպանիացին, արկանէր ահ ընդ ամենայն, և փայլակնացայտ աչօքն պակուցանէր զփախուցեալսն 'ի ձեռաց իւրոց։

Մնայր սակայն հետևակազօր սպանիական բանակին, որոյ թանձրախուռն ստուար գումարտակք, 'ի նմանութիւն աշտարակաց, բայց աշտարակաց՝ որ գիտիցեն խրամակարկատ առնել զխուռս իւրեանց, կային անսասան 'ի միջի անդ ամենեցուն բեկելոցն, և հուր տեղային յամենայն կողմանց։ Երիցս գուն գործեաց յաղթօղ պատանին խորտակել զաներկիւղ ռազմիկսն, վանեցաւ երիցս 'ի քաջակորով Կոմսէն Փոնթեննեան, զոր կառընթաց տեսանէին, և ամենայն տկարութեամբքն հանդերձ՝ յայտ իմն զայն արարեալ, զի ոգի պատերազմափորձ՝ տէր է մարմնոյն յոր շնչէ. հարկ է սակայն հուսկ ուրեմն տալ տեղի։ Ի զուր ընդ անտառս այրուձիոյն իւրով նորով՝ ճեպէ տագնապաւ զարշաւանս իւր Պէգ՝ գալ անկանել 'ի վերայ զօրուն մերոյ պարտասելոյ. կանխեաց յառաջեաց զնովաւ իշխանն. գունդքն փլուզեալք պաղատին զթութիւն. բայց Սեպհին Անկիենի քան զմարտն՝ ահագին լինելոց է յաղթութիւնն։ Իբրև աշալուրջ երեսօք խաղայր գնայր ընդունել զխոստումն որերոյն այնորիկ քաջի, սոքա միշտ 'ի խեթի զգուշութեան՝ կասկածեալ նոր իմն յեղակարծ յարձակումն, ահագին իմն հրձգութեամբ զմերսն 'ի մոլեգնութիւն դարձուցանեն, և այլ ոչինչ տեսանի՝ բայց

նախճիրք կոտորածի. արեան ճապաղիք սրարբեցուցանեն զզօրականն, մինչև մեծի իշխանին չհանդուրժեալ տեսանել զաւերածունսն զայնոսիկ խողխողեալս իբրև ոչխարս վատասիրտս, ցածոյց զբորբոքեալ սիրտսն, և 'ի հեշտութիւն յաղթութեանն յաւել և զներելոյ թողութեանն։

Զի՞նչ հիացումն կալաւ յայնժամ զհինաւուրց զօրականն և զարիական սպայս նոցին, իբրև տեսին թէ չիք նոցա փրկութիւն բայց միայն 'ի գիրկս յաղթողին. որոյ ակամբ հայէին յիշխանն պատանի՝ զորոյ զպերճ ճոխութիւնն պանծացուցանէր յաղթանակ, և գեղ նորատեսիլ փայլէր 'ի նմա գթութիւնն։ Ապրեցուցանէր նա մատաղիւր և զկեանս քաջի կոմսին Փոնթեննեան. բայց գտաւ նա անկեալ ընդ հազարաւորս վիրաւորաց, զորոց ողբայ տակաւին զկորուստն Սպանիա։ Զգիտէր նա՛ թէ իշխա՞ն որ վանեաց զնորա զայնչափ հինաւուրց զումարտակսն 'ի կռուին Ռոքռոայ, զմնացեալսն սպառելոց էր 'ի դաշտսն Լանսայ։ Այսպէս առաջին յաղթութիւնն՝ այլոց բազմաց եղև առհաւատչեայ։ Կրկնեաց ծունր իշխանն, և անդ 'ի ճակատուն տեղւոջ մատոյց Աստուծոյն զօրութեանց զփառսն զոր առաքէր նա առ նա. անդ տօնեցաւ Ռոքռոայի փրկութիւն, և ահագին սպառնալեաց թշնամւոյն՝ դարձ ամօթալից 'ի գլուխ նորին, հաստատութիւն վարչութեան խնամակալին. հանգիստ Գաղղիոյ, և այսպիսի յաջող հմայիւք ակիզբն արքայութեանն՝ որում հասեալ էր լինել այսչափ հռաչակերտ։ Գոհութեանցն սկզբնապատ եղև բանակն, Գաղղիա համօրէն զկնի կցեցին. ամբառնային մինչև յերկինս զառաջնաճաշակ փորձ հանդիսի Սեպհին՝ Անկիենի։ Շատ իմն էր այս 'ի շքեղազարդել զայլ իմն կեանս քան զնորայն, իսկ նմա՝ առաջին քայլ է այս ուղինն ընթացից։

ԲՈՍԻՒԷ. Դամբ. Իշխանին Գոնտէի։

## ԱՆՑՔ ԸՆԴ ԳԵՐԵԶՄԱՆՍ

Անդէն վաղվաղակի դիմեալք 'ի կամուրջն 'ի միւս, եկին խառնեցան ընդ ամենուստ ամբոխ այլոց ստուարաց, ծանրաբեռն կառաց և անօթոց պատերազմի, և հասեալք թափով ընդ դուռ 'ի վայրն անհարթ և անհաւասար 'ի մէջ չեղջաչեղջ բազմութեան մարդկան՝ կարթակատր արարին զեղկելիս զըմբռնեալսն յանդգնակից. դկնի ապա ընդ միմեանս բաղխելով բազումք այնոքիկ էին որք սաստկապէս բռնութեամբ յերկիր տապալեալք՝ սատակամահ ոտանին և զօրս շուրջ զնոքօք: Յայնժամ այր այր պակուցեալ, բովանդակ դասու դաղթեալ ընթանան առ աղմուկն խռովայոյզ. այլ յուզեալք և ամբոխեալք՝ թաւալագլոր խաղան և ըստ նոյանէ 'ի չարաբաստիկ անդադար անկելոցն ջաղխեալք խորտակին:

Այսպէս խառնադանձ ամբոխ շուառականացն զմիմեամբք թաւալէին, դառնակսկիծ և մոլեգին կանչիւք զօգս կոծելով: Յայն խառնուրդ ահագին՝ ամենայն ոք կոխան և հեղձամղձուկ՝ անհնարինս ճգնէր ընդ ոտիւք ընկերին, ստամբակի և եղնգամբք պինդ կալեալ զնոսին, որք անողորմք՝ իբրև զոտխս յետս մղէին զամենեսեան: Ի զուր հարաւանք և մարք ձայն տուեալ զորովալիր կոչեցին զամուսինս իւրեանց և զորդիս, զորս վայրկեան մի միայն՝ առ տարաւ յանջատուածն անդարձ. զիրեարկին առ նոսա. խնդրեցին անդի հաւայ մատչել առ նոսին. այլ ոչ ոք մտօ գետէր նոցա, և այնպէս գանտլեալք և վայրավատինք՝ անկան ընդ խառնամբուխ հրասակաւ դրանին: Յանհեղանձայն դղրդման բռնաշունչ մրրկին, 'ի բամբիռն անօթոց պատերազմականաց, 'ի շաշիւն և 'ի շառաչիւն փոթորկելոյ օդոյն և գնդակաց, և 'ի հաչ-

թիւն ումբաց, 'ի մեծագոչ կառաչ հեծեծանաց և ահագնալուր հայհոյանաց, չլինէին լսելի յունկն խառնամբոխ խուժանին պաղատանք կորուսելոցն, որոց նա ևեթ էր պատճառ։

Բարեբաղդիկքն 'ի նոցունց հասին կալան զկամուրջն. այլ ոտնփոխ լեալք 'ի վերայ դէզադէզ վիրաւորաց՝ կանանց և մանկանց դիաթաւալ կիսամահ յերկիր կործանելոց, դեռ ևս առաթուր հարկանելով զնոսա 'ի ճիգն յետին, ժամանեցին ուր ուրեմն 'ի կիրճն անձուկ, և փրկեալս համարէին զանձինս. բայց խոչ ընդ ոտն և խափան լինէր ամենայնի՝ առ մէն մի վայրկեան տապաստ անկումն երիվարաց, տախտակ ինչ խախտեալ կամ կոչկոճեալ։

Նա և 'ի խելս կամրրջին՝ զափամբքն 'ի հանդիպոյն էր եղտիւր մօրասս, ուրանօր ընկղմեալք կային խռատոյզ կառք և յոլով ձիանն, առաւել քան զյոյժ յապաղումն և խափան առնելով անցիցն ընթացից։ Անդ յայնժամ 'ի յուսակտրոյս գումարտակին խառնելոյ 'ի վերայ միայնոյ փայտին փրկութեան՝ շարժեցաւ պայքարումն դժոխըմբեր, յորում անզօրքն 'ի հզօրագունից, կամ որոց ոչ անքոյթ էր ոտիցն կայան, գահավէժ ցնդմամբ թօթափեցան 'ի գետ։ Իսկ այլք՝ առանց ինչ ընդ յետս հայելոյ, տնկակից փութով զգուշացեալք անձանց, դիմագրաւ մոլեգին ընթանային 'ի կէտ նպատակին, ոչ ինչ միտ եդեալ յուսակտուր և բարկացայտ անիծից համհարզից իւրեանց և սալարաց կորուսելոց։

Իսկ անդուստ այլուր քանի՛ վեհանձն և անձնանուէր սիրոյն խանդաղատանք. և ուռ իմէ՞ կարծատի տեղիս և ժամանակ ճառել զնոցանէ։ Անդ էր տեսանել զօրականս և սպայս ինքնին լծեալս կառաց՝ թափել հանել 'ի հեռաստան զընկերս իւրեանց, զվիրաւորս կամ զխոթացեալս։ Եւ ևս մեկուսի քաջ 'ի բաց յամբոխէն՝ զօրականք ոմանք անընդոստք ամենեւին զտեղ առեալ կային 'ի պահ 'ի վերայ չնչասպառ մարմնոցն սպայից՝ յանձն

եղելոց 'ի խնամս իւրեանց. և համայն Թէպէտ սըրտեռանդն Թախանձեալք 'ի նոցանէ հօգալ եւեթ զանձանց փրկութիւն, կամակար ընտրէին զգերութիւն կամ զմահ՝ քան զԹողուլ լքանել զառաջնորդս իւրեանց։

Ի 28 և 'ի 29 (Նոյեմբեր 1812) գիշերացն պահու և ևս յաւելան աղէտքս այսոքիկ։ Ոչինչ ընդհատ և 'ի մԹազգեաց խաւարին՝ Նախճիրս արեան գործեցին Թնդանօթք Ռուսաց. զի ստամԹոյր ամբոխ արանց, ձիոց և կառաց 'ի վերայ ձիւնապատ գետոյն, և զօշիւն աղաղակին՝ դէպ ետուն ռմբաձիգ զօրաց նոցա ուղիղ զհարուածսն կշռելու։

Լցեալ էր չափ աղետիցս. բազմութիւն կառաց, Թնդանօթք երեք, բիւրք բիւրուց արանց, կանանց և մանկանց տղայոց լքեալք Թողան 'ի գետափն Թշնամեաց. և էր տեսանել զնոսա ընդ զառաց բեկելոց Թափառեալս զեզերբք գետոյն. յորոց և ոմանք անդր խոյ ամացին զանձինս առ 'ի լողալ. իսկ այլք եդեալ զգլուխս իւրեանց 'ի կշիռ՝ ոտն ածեալ ելին 'ի վերայ հատորոց սառանց, և այնպէս յուպէտ 'յուկամ փարեալք երԹային. մինչ այս մինչ այն, և ահա ոմանք արկին զանձինս յախուռն 'ի հրաԹաւալ բոց կամրջին՝ որ կործանեալ 'ի ներքոյ նոցա. ցրտահարք միանգամայն և հրահէզք կորեան երկակի յետ ընդդէմ տանջանաց. որոց անդէն երևեցան զիակունք իւրեանց կուտակեալք, ընդմէջԹս բազխմելով հանգոյն հատուածոց սառին. իսկ ապրեալքն կային Պէոյին Ռուսաց։

ՍԷԿԻՒՐ. Պատմ. գաղղ. մեծի բանակին։

## ՄԵՆԱՄԱՐՏ ՈՐԱՏԵԱՆՑ ԵՒ ԿՈՒՐԱՏԵԱՆՑ

Կռուել զուխտ դաշին՝ եռուորեակքն այնոքիկ ըստ պայմանադրութեանն զէն 'ի ձեռս առնուն։ Ի խրախուսել իւրեանցայնոցն զերկաքանչիւր ևս կողմանս, թէ Հայրենի աստուածքն հայրենիք նոցա և ծնողք, քաղաքացիքս ամենայն առանին և զօրականն 'ի բանակի՝ յայնժամ 'ի զէնս նոցա ակնարկեալ հային և 'ի ձեռս, գազանացեալք 'ի բնէ և խրախուսեալք 'ի ձայն քաջալերացն, յառաջ խաղան 'ի մէջ ճակատուցն երկոցունց։ Աստի և անտի բանակեալ կային երկաքանչիւր զօրք, զերծք յառաջիկայ վտանգէն, այլ ոչ 'ի հոգոց. իբր զի զինքնակալութիւնն էր մէնն, յայսչափ սակաւուց քաջութեան և 'ի բաղդի հաստատեալ։ Վասն որոյ մտադիրք միաբանամայն և 'ի վարանս՝ յանախորժ յայն տեսարան դէտակն կալեալ յառին։

Նշան արձակի, և ահա ոխերիմ զինուք՝ զօրէն բանակաց 'երեքին պատանիքն՝ զմեծամեծ ճամբարաց յանձին բերեալ զսիրտս՝ բաղխին ընդ միմեանս։ Ո՛չ սոցա և ո՛չ նոցա յանդիման կայր աչաց վտանգ իւրեանց, այլ հասարակաց տէրութիւն կամ ծառայութիւն, և թէ այն վիճակ բաղդի լինելոց է յապայս հայրենեացն՝ զոր ինչ պատրաստեսցեն ինքեանք։ Այն ինչ յառաջին անդ բախման՝ շառաչիւն արձակեցին զէնք, և շողացին սուսերք փայլակնացայտք, սարսափ անհնարին կալաւ զտեսողսն, յուսոյն և ոչ առ մի կողմ թեքելով ընդարմացեալ կայր և բարբառ, և շունչ բերանոյ։

Ի դիմի հարեալք ապա, յորժամ ոչ շարժումն միայն մարմնոց և երկուստեք զարկուածք սուսերաց և զինուց, այլ և վէրք անգամ և արիւն՝ տեսարան լինէին, երկուք 'ի Հռովմայեցւոց միմեանց զկնի խոցեալք զե-

ըեօրն եւս Արշակեցիս՝ անկան դիտապաստ: Յանկուցն ոտցս իբրև ձայն ուրախութեան եբարձ զօրն Արշակեցւոց, լեգէոնք Հռովմայեցւոց յուսահատք էին այսպէս, բայց ոչ զերծք 'ի տագնապէ. զահի մեծի հարեալք յաղագս միայն, զորով շուրջ կային երեքին Կուրատիոսք: Ըստ դիպաց իմն ողջանդամ մնաց սա. ամենեցուն զդէմ ունել միայնակ ոչ բաւէր, այլ միոյ միոյ առանձինն ընդդէմ խիզախէր: Վասն որոյ առ 'ի զմտանել զպատերազմ նոցա, փախուստ առնու, եդեալ 'ի մտի թէ հետամուտ լիցի իւրաքանչիւր 'ի նոցանէ, որպէս զիարդ ներեսցէ մարմին վիրաւոր:

Փոքր մի հեռացեալ էր արդէն փախստեամբն 'ի տեղւոյէն՝ յորում եղև պատերազմ, յորժամ 'ի թիկունս հայեցեալ տեսանէ հարուստ խորոցաւ 'ի միմեանց՝ զհետամուտսն, և զմին ոչ յոյժ հեռի յիւրմէ. դառնայ ընդ կրունկն սաստկութեամբ մեծաւ 'ի վերայ նորա: Եւ յաղաղակել անդ աղխայեցի զօրուն առ Կուրատիոսեանսն՝ ձեռն տալ եղբօր իւրեանց, Որատիոս սպանեալ այնուհետև զթշնամին, դիմէր յաղթական յերկրորդ պատերազմն: Յայնժամ Հռովմայեցիք աղաղակեն՝ որպէս սովոր է լինել յանակնկալ նպաստաւորաց, օգնեն զինւորի իւրեանց, և սա անապարէ վճարել զգործ պատերազմին: Վասն որոյ յառաջ քան զհասանել երրորդին՝ որ չէր իսկ բացագոյն, եհար և զերկրորդն Կուրատիոս:

Արդ՝ հաւասարեալ վիճակի մարտին, մնացին երկուստեք մէն մի, բայց ոչ յուսով և ոչ զօրութեամբ հանդէտ: Զմին՝ մարմին յերկաթոց անվթար և կրկնակ յաղթութիւն՝ խրոխտ գործէր առ երրորդ մրցումն. իսկ միւսն ընդ քարշ ածեալ զառ 'ի վիրաց և զառ 'ի յընթացից տաժանաբեկ մարմին, և յաղթահարեալ իսկ՝ որ յառաջ քան զինքն եղբարց կոտորածիւ, մատչի ընդառաջ յաղթականին թշնամւոյն: Եւ չեղև իսկ այն պատերազմ: Խայտացեալ Հռովմայեցւոյն՝ ասէ. Զերկուսին

պատարագեցի եղբարցս ոգւոց. զերրորդն պատարագեցից պատճառի պատերազմիս այսորիկ, զի Հռովմայեցին տիրեսցէ Աղբայեցւոյն։ Մինչ զաւակերն վերամբարձ 'ի փող նորա, որոյ ձեռք դժուարաւ ունէին զզէնսն, և աւանու զկողոպուտ զանկելոյն։ Հռովմայեցիք հռչակաւ և օրհնութեամբ ընդունին զՈրատիոս, այնչափ մեծ եւս ուրախութեամբ՝ որչափ երկիւղալի էին իրքն։ Դատանման ապա Թաղել իւրաքանչիւր զիւրան, բայց ոչ հաւասար սրտիւ. իբր զի սոցայս աճեաց ինքնակալութիւն, և նոքա ընդ տէրութեամբ եղեն այլոյ։

ԼԻՎԻՈՍ

---

## ՊԱՏԵՐԱԶՄ ԹԵՐՄՈՊԻԼԵԱՑ

Ապա եկն Լեոնիդաս 'ի նմին գիշերի խորհուրդն Պարսից 'ի դաւաճանաց փախստէից նոցա. և ընդ այգն զուժկանք 'ի պահապանաց լերինն հասին առ նա կատարման խորհրդոյն։ Ի լուր անհագին համբաւոյն՝ ժողովեալ 'ի միասին զօրապետք, կիսոցն լաւագոյն համարեալ տեղի տալ 'ի Թերմոպիլեայ, իսկ այլոց կալ մնալ անդէն, Լեոնիդաս արձակեաց զնոսա պատեհագոյն ժամանակի պահել զանձինս. այլ ինձ, ասէ, և իմոցս ոչ է օրէն թողուլ զյանձնեալ մեզ պահն։ Բայց Թեսպացիք չառին յանձն մեկնել 'ի Սպարտացւոց. և Թեբացիք՝ չորեքարիւր այր՝ կէսք կամակար և կէսք ակամայ կացին ընդ նոսա. իսկ այլոց պարապ տուեալ՝ խոյս ետուն 'ի պահակէն։

Ցայնմ վայրի Լեոնիդաս մատուցեալ 'ի յանդուգնագոյն արութիւն, խօսեցաւ առ իւրսն և ասէ. Ոչ եւս աստ է մեզ տեղի մարտնչելոյ, ով զինուորակիցք իմ, այլ 'ի

խորան անդր Քսերքսեայ պարտ է մեզ դիմել. կամ խողխողեսցուք զնա, և կամ անդէն 'ի բանակին նորա կորիցուք: Խրախոյս ցնծութեան բարձին զօրքն առ հասարակ. և ետ նոցա Ղեոնիդաս սակաւ ինչ անուլ կերակուր, և ասէ. Ընդ սանդարապետին Պլուտոնի յետ այսօրիկ ճաշ մեզ ընդ հուպ պատրաստի: Եւ այս ամենայն բանք նորա տպաւորագոյնք 'ի սիրտ զօրականին ազդէին: Եւ մինչ կազմէրն յարձակել 'ի Թշնամիս, յուզեցան դութք նորա 'ի վերայ երկուց Սպարտացւոց, ընդ որս բարեկամութեամբ և արեան մերձաւորութեամբ կցորդէր. և ետ միում 'ի նոցանէ գիր, և միւսումն պատուէր գաղտ առաւագանին Սպարտացւոց: Նոքա ետուն պատասխանի. Ոչ 'ի հրեշտակութիւն կամք աստ, այլ 'ի պատերազմել. և վաղվաղակի անցեալ կացին 'ի սահմանեալ կայս իւրեանց:

Եւ 'ի մէջ գիշերի մեկնեալք 'ի պահակէն Ղեոնիդայ իւրովքն, և արագ ընթացեալ ընդ դաշտն, զյառաջապահ գունդս տապաստ արկեալ, հասանեն մինչև 'ի խորան անդր Քսերքսեայ. այլ նորա կանխեալ փախուցեալ էր. և դիմեն 'ի մերձակայ խորանսն, սփռին ընդ բանակն, և յագին արեամբ Թշնամեաց: Արհաւիրք առաջի երեսաց նոցա գնային, և 'ի գնալն յաճախէին պակուցանողական նշանօք: Շշուկ խառնաձայն և ամբոխ աղաղակի գումէին զկոտորած զօրացն Իդառնեայ, և զմօտալուտ երկիւղ կոտորածի ամենայն բանակին 'ի համագումար զօրացն Եղլադայ: Արիագոյնք 'ի Պարսկաց ոչ ևս զձայն զօրավարացն լսեալ, ոչ գիտէին յո՛ դիմել, զո՛ հարկանել, և խառն 'ի խուռն յարձակմամբ զիրեարս կոտորէին: Այլ այն ինչ արփիասկիզբն ճառագայթք զյաղթական զօրականին Ղոկատն փոքրիկ ածին 'ի տեսիլ, գունդ գործեցին վաղվաղակի, և շուրջանակի 'ի վերայ յարձակեցան յունական գնդին: Ընդ Ղեոնիդաս 'ի Թանձրատարափ նետիցն անկաւ տապաստ, և 'ի վերայ դիականն նորա մղեցաւ մարտ ահագին, Յունաց ընդ

Digitized by Google

զոռ պատերազմողս պարսկախումբ բանակին մարտնչելով, առ 'ի չտալ նոցա զփառս աւարին։ Անդ երկոքին եղբարք Քսերքսեայ և ամբոխ բազում յոյժ 'ի Պարսից, անդ և Սպարտացիք բազումք անկան։ Բայց Թէպէտ և Ցոյնք նուաղեալք և պարտասեալք՝ բարձին զզօրավար. իւրեանց, և չորից 'ի նահանջելն իւրեանց վանեցին զԹշնամիս. և հասեալք 'ի պահակն, և անդր ևս քան զպատնէշսն ընկրկեալք, երԹեալ զկայ առին 'ի բլրակին մերձ յԱնԹեղա։ Եւ վայրիկ մի ևս անդ ժուժկալեցին, գիմամարտեալք ընդդէմ հետամտից զօրացն, և որոց Իդառնէս յայնմ կուռէ պահակին ածէրն 'ի վերայ նոցա։

Ներեցէք աստանօր, ազգքդ քաջազունք, տկարութեան բանիցս. 'ի վերայ բլրոյն՝ ուր զվերջին հեծութիւնսդ արձակեցիք, անդ արժանաւոր ևս կարացի մատուցանել ձեզ սպաս, փարեալ զլիրմամբ ձերով, և ոռոգեալ արտասուօք զվայրս ներկեալս յարենէդ ձերմէ։ Այլ ճարտարութիւն իսկ բանից զի՞նչ 'ի չքնաղ և 'ի գերաշխարհիկ զոհդ ձեր յաւելուլ կարիցէ։ Պարսկայինն անկցի պետութիւն, ընդ որում ժուժկալեցէքն 'ի կռիւ, այլ յիշատակ ձեր կացցէ. և օրինակ ձեր մինչև 'ի վախճան յաւիտեանց շարժեսցէ զսիրտս հայրենասէրս 'ի խոկումն և 'ի հիացումն։

Թերացւոց ոմանց նախ քան զվախճան մարտին անձնատուր ասեն լեալ 'ի Պարսիկս։ Թեսպացիք հաղորդք եղեն քաջութեան և բաղդին Սպարտացւոց. այլ փառք սոցա մԹացուցին զԹեսպացւոց։ Այսմ հասարակաց կարծեաց և այն համարեսցի պատճառ, զի զխորհուրդ փոխանակելոյ զանձինս 'ի վերայ հայրենեաց 'ի Թերմոպիլէ Սպարտացիք երկնեցին 'ի մտի, հաստատեցան 'ի՛նոյն և կատարեցին զայն, ոչ 'ի յոյզս ինչ եռանդեան՝ այլ պարապով և անյողդողդ արիութեամբ. իսկ Թեսպացիք 'ի նախանձ նմանութեան վառեալ, առ եռեղ յեռանդն քաջութեան և առաքինութեան արիացան.

հարկ լեալ նոցա գերազանցել քան զայլս 'ի մարդկանէ, որ Սպարտացիքն քան զանձինս գտան զեր 'ի վերոյ։

Ընդ կոտուտ քաղաքամարտիկ պատերազմողացն՝ Լակեդեմոն պանծացաւ յոյժ. և ամենայն որ ինչ 'ի նոսա պատականեալ իրք՝ ցանկալի եղեն։ Մինչդեռ էին նոքա 'ի Թերմոպիլէ, ոմն 'ի Տրաքինացւոց առ 'ի տալ նոցա զբազմութեան պարսկախումբ բանակին զահաւոր կերպարան՝ ասէր ծածկել նոցա նետաձգութեամբ և ստուերացուցանել զարեգակն։ Իսկ Դենեկէս սպարտացի պատասխանի տուեալ ասէ. Եւ զի՞նչ քան զայդ լաւագոյն կայցէ. զի 'ի հովանւոջ լիցի մեզ մարտնչել։ Եւ այլ ոմն 'ի Սպարտացւոց, առաքեալ 'ի Լեոնիդայ 'ի Լակեդեմոն, արգելաւ յԱլփենոս վասն աչացն կալոյ 'ի տեսութենէ։ Այդ եղև նմա զի ջոկատն Իդառնեայ իջանէր 'ի լեռնէն մտանել 'ի պահակն, և զէն առեալ՝ հրամայեաց ըստրուկի իւրում առաջնորդել առ թշնամիս. և խառն 'ի խուռն յարձակեալ 'ի նոսա, ընկալաւ զվախճան՝ որում Թետոյն։ Եւ երկուք ոմանք հրամանաւ զօրավարին 'ի բացեայ գտեալ 'ի մարտէն, 'ի գաւառին իւրեանց եղեն կատակածելիք՝ իբր վատք և ապաժամանք լեալ։ Եւ առ յոյժ նախատանացն՝ մին չոգաւ զիւրովին, իսկ միւսն՝ ոչ կարաց այլազգ ջնջել զնախատինսն, բայց յետ սակաւ միոյ 'ի պղատեան ճակատամարտին տալով զկեանս 'ի վերայ հայրենեաց։

Անձնանուէր հայրենասիրութեանն Լեոնիդայ և զինուորակցաց նորա արգասիքն տուեալ եղեն յոյժ քան զամենայն պայծառ յաղթութեանց. զի ուսոյց նա Յունաց զդարանեալ 'ի նոսա զօրութիւնն, և Պարսից զպատրուակեալ 'ի նոսա տկարութիւնն։ Զարհուրեցաւ Թագաւորն Պարսից, զի այնքան նուազունք յաշխարհազօր բազմութեան մարդկանն էին ընդ իւր զինուորք. և զարհուրեցաւ դարձեալ, զի այնքան տխրեանս կրէր Ելլադա 'ի ծոցի իւրում անվեհերս որպէս զՍպարտացիսն և զԹեսպիացիս, և այլ ևս ութ հազար Սպարտացիս համագոյնս այ-

նոցին՝ որ անկան 'ի ճակատամարտին: Դարձեալ և հիացումն, որով ողջա լցին զԵլլադա, փոխեցաւ ընդ հուպ 'ի տենչալի նախանձ նմանութեան նոցին: Ցանկութիւն փառաց, սէր հայրենեաց և ամենայն առաքինութիւնք դեր 'ի վեր ամբարձան, մեծանձնութեան գերաստիճանեալ յանհաս բարձրութիւն: Ժամանակ էր անդ քաջայաղթ արութեանց, և ոչ ևս ածելոյ շղթայս 'ի կապանս ազգի՝ որ այնպիսի ազնուական մտածութեամբքն խրախուսէր:

ՊԱՐԹԵՂԵՄԻ. Ուղեւորութիւն Անաքարսեայ:

---

## ՄԱՀ ԵՊԱՄԻՆՈՆԴԱՅ

Եւ ճակատեցան ընդ հուպ բանակքն երկոքեան առ միմեանս մերձ 'ի Մանտինէա քաղաք: Էին զօրք Սպարտացւոց հանդերձ նիզակակցօքն՝ աւելի քան զերկու բիւրս հետեւակաց, և հեծեալք իբր երկու հազար: Իսկ Թեբացւոցն երեք բիւրք հետեւակաց, և հեծեալք իբր երեք հազար:

Պայծառագոյն քան ամենայն ուրեք անդանօր ցուցաւ հանճար Եպամինոնդայ. նովին կարգաւ ճակատու, որով 'ի Լեւկտրա կանգնեաց զյաղթութիւն, ճակատեցոյց զզօրսն: Մի 'ի թեւոց նորա սուսերաձև յառաջ խաղացեալ՝ անկաւ 'ի վերայ սպարտական փաղանգին. զոր ոչ արդեօք կարէր նա բեկանել, եթէ ոչ Եպամինոնդ հասանէր նմա 'ի թիկունս, և օրինակաւն իւրով և ընտրելով գնդաւն զօրացուցանէր զնա: Յերեսաց նորա զարհուրեալ տատանեցան թշնամիք, և դարձան 'ի փախուստ: Զհետ եղև նոցա Եպամինոնդ, ոչ ևս կարացեալ 'ի չափու ունել զարիութիւն. և գունդ մի Սպարտացւոց

Digitized by Google

շուրջ պատեալ զնովաւ, տարափս նետից տեղային զնովաւ։ Նա ընդ երկար պատսպարեալ զանձն իւր 'ի մահուանէ, և զամբոխ մարտկաց թաւալգլոր արկեալ 'ի փոշւոջ, անկաւ տապա և ինքն տիգախոց. և եկաց երկաթն մխեալ 'ի կուրծս նորա 'ի վիրին։ Ոչ ինչ նուազ գործեցան զնովաւ նախճիրք. քանզի մարտակիցք նորա յաւելեալ 'ի ճիգն, և բուռն դիմամարտեալ առ 'ի թափել զնա 'ի ձեռաց թշնամեաց, ժառանգեցին զտըխուր սփոփանս ածելոյ զնա 'ի խորան իւր։

Հանգոյն իմն և 'ի միւսում թևի անդ յաջողութիւնք խառն ընդ ձախողութիւնս գործեցան։ Բայց խոհական կարգաւորութեամբքն Եպամինոնդայ ոչ կարացին Աթենացիք հասանել յօգնութիւն Սպարտացւոց. քանզի յարձակեցաւ այրուձին նոցա 'ի վերայ հեծելազնդին Թեբացւոց. և հարուածեալ 'ի նմանէ և յետս ընկրկեալ՝ կազմեցաւ անդրէն, և եհար զջոկատ մի Թեբացւոց՝ որ 'ի մերձակայ բլուրս զկայ առեալ էր։ Իսկ հետևակազունդն նոցա դեռ ևս 'ի փախուստ դառնայր, եթէ ոչ Եղէացիք հասանէին յօգնութիւն։

Խոցումն Եպամինոնդայ արգել զկոտորածն, և զմոլեգնութիւն զօրականին կասեցոյց։ Ճակատքն երկոքեան առ հասարակ պակուցեալք՝ կային ձեռնթափ. և փողք աստի և անտի հնչեցին զնահանջ, և նշան յաղթութեան 'ի տեղւոջ ճակատուն կողմանքն երկաքանչիւր կանգնեցին։

Բայց Եպամինոնդայ դեռ շունչն 'ի նմա կայր. բարեկամք նորա և սպայք շուրջ զմահճօքն կացեալ՝ հեղուին զարտօսր, և ընդ բանակն ամենայն լսելի լինէին հեծութիւնք ողբոց և յուսահատութեան։ Վիրաբոյժք ետուն զվճիռ, զի ընդ կորզել զերկաթն 'ի վիրացն՝ հարկ էր նմա մեռանել. այլ նա ընդ այն հոգայր՝ զի մի գուցէ ասպար իւր անկեալ իցէ 'ի ձեռս թշնամեաց. և իբրև ցուցին նմա զայն, առեալ համբուրեաց զգործի փառացն իւրոց։ Բայց տակաւին 'ի տագնապի կայր զելից մարտին.



Digitized by Google

և իբրև զայն ևս գիտաց՝ եթէ յաղթեցին Թեբացիք, ասէ. Կեցի շատ, և արդ գոհ եմ։ Եւ ապա հրամայեաց կոչել առ ինքն զՏայիփանտ և զՅոլլիդաս զերկոսին զօրագլուխս, զորս բաւական համարէր փոխանակ իւր. և իբրև գիտաց զի անկեալ էին 'ի մարտին, ասէ. Ասացէք ապա ցԹեբացիս՝ խօսել 'ի խաղաղութիւն։ Եւ պատուէր ետ խլել զերկաթն 'ի վիրացն. յայնժամ մի 'ի բարեկամաց նորա գոչեաց առ վշտին. Մեռանիս դու, Եպամինոնդ. այլ եթէ գէթ ոչ անորդի մեռանէիր։ Եւ նա ասէ. Զյաղթութիւն Լևկտրայ և զՄանտինեայ թողում որդիս անմահս։ Եւ զայս ասացեալ, եհան զոգի։

ՊԱՐԹԷԼԸՄԻ. *Ուղևորութիւն Անաքարսեայ։*

---

## ՄԱՀ ԿԻԿԵՐՈՎՆԻ

Իսկ 'ի նմին պահու գային հասանէին 'ի վայրն դահիճք Կիկերովնի, Երեննիոս հարիւրապետ և Պոպիլիոս հազարապետ, (այն՝ որ երբեմն 'ի հայրասպանութեան դատաստանէն ապրեցաւ 'ի ձեռն Կիկերովնի), և ընդ նոսա պաշտօնեայք։ Տեսեալ փակ զդուրսն, խորտակեցին. իբրև ոչ գտին զԿիկերովն, և որ 'ի ներքս կային՝ վկայէին ևս ոչ գիտել ուր իցէ, պատմեն եթէ յայնժամ պատանեակ ոմն Փիլոլոգոս անուն՝ դաստիարակեալն 'ի Կիկերովնէ յիմաստս և 'ի վարժս ազատականս, և էր իսկ նա ազատագրեալն եղբօր իւրում Կուինտոսի, գուշակ լինէր հազարապետին վասն շալակին՝ զոր բարձեալ տանէին 'ի ծով ընդ շաւիղս անտառախիտս հովանաւորս։ Ապա հազարապետն առեալ ընդ իւր արս սակաւս, շրջան առեալ ընթացաւ յելս ճանապարհացն.

իբրև Երեննիոս սաստիկ ճեպով յարուցեալ հետևեցաւ ընդ նոյն շաւիղ, իրազգած Կիկերոնին եղեալ՝ հրաման տայր ծառայիցն անդէն 'ի վայր զդւորգիճն հանգուցանել, և ինքն ձախոյ ձեռամբն առեալ զծնօտն՝ որպէս և սովորութիւն իսկ էր նորա՝ այնպէս անքթիթ ակընկառոյց էր 'ի մարդախողխողսն՝ գարշ և խռուացեալ հերաքն և 'ի վշտաց անտի երիթացեալ դիմաքն. որպէս զի և բազումք անդանօր քօղածիգ եղեն՝ մի տեսանել զնա 'ի խողխողել զնա Երեննիոսի: Եւ խողխողեցաւ նա անդ՝ այնպէս 'ի շալակէն 'ի դուրս կարկառեալ ձգեալ զպարանոցն, ամաց ինքն գոլով վաթսուն և չորից:

Բայց Երեննիոս 'ի հրամանէն Անտոնիոսի կտրեաց զգլուխ նորա և զձեռսն՝ որովք արձանագրեաց նա զփիլիպպեանսն. քանզի և ինքնին Կիկերոն Փիլիպպեանս մակագրեաց զճառսն իւր ընդդէմ Անտոնիոսի. և կոչին ևս Փիլիպպեանք այն մատեանք մինչև ցայսօր ժամանակի: Իսկ 'ի ժամուն՝ յորում բերին 'ի Հռոմ զհատածս մարմնոյն Կիկերոնի, կայր Անտոնիոս յատենի ժողովոյն. իբրև լուաւ զիրսն և ետես ևս ինքնին՝ 'ի ձայն բարձր աղաղակէր. Արդ աւասիկ վախճան է տարագրութեանցն. և հրամայէր զգլուխն և զձեռսն դնել յատենին 'ի վերայ բեմին. տեսիլ քստմնելի Հռովմայեցւոցն, որք անդ ոչ զԿիկերոնին համարեցան տեսանել զգիտակ, քան թէ զԱնտոնիոսին զպատկեր հոգւոյն:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ. Զուգակշիռք:

Digitized by Google

## ՄԱՀ ԿՈՒՍՏԱՒ ԱՏՈԼՓԻ

## ԱՐՔԱՅԻՆ ՇՈՒԵՏԱՑ

Յայնմ պահու աջ թեւն բանակին՝ ուր Թագաւորն ինքնին առաջնորդէր, անկանէր 'ի վերայ ձախոյ թեւի թշնամեացն: Յառաջին Թափոյ անտի բախմանն փինլանդացի գրահաւոր հեծելագնդին՝ հարեալ ընկրկէր թեթեւազէն հեծելագունդն Լեհաց և Խռուատից, որք նակատեալ էին 'յայնմ թեւի, և խուճապ փախստի նոցա պակուցեալ և զայլս 'ի հեծելազօրուն՝ չփոթէր զկարգս նոցա: Այլ 'ի նմին պահու ազդ լինէր առ Թագաւորն՝ եթէ հետեւակազօր նորա 'ի փախուստ դառնայր յայնկոյս փոսոյն, և ձախ թեւն ևս կայր 'ի մեծի վտանգի յերեսաց ումբաձգութեանց թշնամեացն որք առ հողմաղացսն էին, և փոքր միւս ևս դառնայր 'ի փախուստ: Անդէն աչալուրջ մտօք պատուէր տայր Հօռն զօրավարի հետամուտ լինել փախստէից ձախակողմեան թեւի թըշնամւոյն. և ինքն առեալ ընդ իւր զգունդն Ստենբօքեան՝ փութայր յօգնութիւն իւրոյ աջեակ թեւոյն: Օդապարիկ երիվարաւն վազեալ անցանէր իբրև զնետ թռուցեալ ընդ խրամս փոսոյն. այլ ոչ նոյնպէս յաջողէր զօրացն ամենեցուն որ զկնին գային՝ անցանել փութով ընդ խըրամսն, բաց 'ի սակաւուց ոմանց, ընդ որս էր Ֆրանց Ալբերտ դուքս Լաւնպուրկի Սաքսոնիոյ, որք անմեկին կային 'ի նմանէ: Դիմէր դէպ ուղիղ անդր ուր տագնապ մեծ 'ի վերայ կայր հետեւակազօրուն իւրոյ. և մինչդեռ զաչս իւր շուրջ ածեալ դիտէր տեսանել զտկարացեալ ինչ զկողմն թշնամւոյն առ ուղղելոյ անդր զհարուած իւր, առ կարճատեսութեան աչացն՝ երթեալ մերձենայր 'ի նոսին: Յայնժամ մի ոմն յազատաց կայսերական գնդին տեսեալ զի ամենայն ոք պատիւ արարեալ

տեղի տայր յառաջամուխ եղելոյն, իսկոյն հրաման տայր միում 'ի զինուորացն արձակել զհրացանն 'ի վերայ նորա։ Արձակեա՛, ասէ, 'ի վերայ դորա, քանզի թուի յականատեր մարդկանէ լինել։ Եւ զինուորին իսկոյն արձակեալ զհրացանն՝ հարկանէ զձախ բազուկ Թագաւորին։ Իսկ և իսկ հասանեն անդր ճեպով միացորդ զօրաց նորա, և լինի աղմուկ և աղաղակ մեծ՝ եթէ Արիւն հոսէ 'ի Թագաւորէն. վիրաւորեալ է Թագաւորն հրացանաւ թըշնամւոյ. և ահ և զարմացումն պաշարէ զամենեսին։ Իսկ Թագաւորին զբովանդակ զայժ իւր յինքն հաւաքեալ, գոչէ առ նոսա. Ոչ մեծ ինչ է վնասդ. փութացարուք դուք զկնի իմ 'ի պատերազմ։ Այլ սակայն ընկճեալ 'ի ցաւոցն, և տեսեալ զի նուաղի, աղաչէ զդուքսն Լաւնպուրկի լաւելեայն իմն հանել զինքն 'ի միջոյ բազմութեանն։ Եւ նա առ 'ի թաքուցանել յաչաց հետևակազօրուն վհատելոյ զտեսիլն ախրական, առեալ զԹագաւորն՝ ընդ երկաբաղոյն ճանապարհ կամի անցանել երթալ յաջակողմեան թեւն. և 'ի դառնալ նորա՝ ընդունի 'ի թիկանց երկրորդ հարուած՝ որ իսպառ ուժաթափ արար զնա։ Շատ է ինձ. այս, եղբայր, գոչէ օրհասական ձայնիւ. դու փոյթ կալ ապրեցուցանել զանձն քո։ Եւ անդէն անկեալ 'ի գետին յերիվարէն, 'ի բազում ևս հարուածոց խոցոտի մարմին նորա, լքեալ յիւրայոցն ամենեցուն, և փչէ զոգի, մատնեալ 'ի ձեռս աւազակաբարոյ խռուատից։ Երիվար նորա արիւնաթաթախ փախուցեալ անտերունչ՝ ազդ անէր հեծելազօրուն Շուետաց զմահ Թագաւորին, որք և մեծաւ սրամտութեամբ յարձակին թափել 'ի ձեռաց անողորմն թշնամեացն զաւանդն զայն պատուական։ Զմարմնով նորա գուպարի կռիւ մահաշչուկ, և դիակնն անշքացեալ թողի ընդ բլրով կուտակեալ մեռելոց։

Ի սուղ ժամանակի գոյժ աղետիցն հռչակի յականջս բովանդակ զօրուն Շուետաց, և ոչ միայն ոչ շիջուցանէ զեռանդն քաջացն այնոցիկ, այլ և առաւել ևս վառեալ բորբոքէ յարիւնախանձ կատաղութիւն։ Առ ոչ ինչ հա-

մարին նորա զկեանս, երբ պատուականագոյնն 'ի կենաց թառամեցաւ, և մահ ոչ ածէ երկիւղ 'ի վերայ ստորնագունից, յորմէհետէ ոչ պատկառեաց 'ի պսակազարդ գլխոյ անտի։

Ծանրագին եղև յաղթութիւնն, տխրագին ևս յաղթանակն։ Արդ այժմիկ յանցանել զիջանել մոլեգնութեանն' 'ի միտ առնու մարդ զբովանդակ մեծութիւն կորստեանն եղելոյ, և աղաղակ ցնծութեան յաղթականաց փոխի 'ի լռութիւն և 'ի լքումն անմխիթար։ Այն որ վարէր տանէր զնաւս 'ի պատերազմն, ոչ է ընդ դարձականսն։ Անկեալ դնի նա' ուր տարաւ զյաղթութիւնն 'ի դաշտի անդ խառն ընդ անծանօթ դիականց ռամկական զօրականին։ Նա յետ թաղում խոյզ և խնդիր առնելոյ, հազիւ ուրեմն գտաւ դիակն թագաւորին ոչ կարի հեռի 'ի մեծէ վիմէ անտի' որ հարիւր ամաւ յառաջ կայր անդ ընդ մէջ Ֆլոսկրապնի և Լիւցի, և այժմ 'ի յիշատակ աղէտալի արկածից այսր աւուր կոչի վէմ Շուեդաց։ Ամենևին այլափոխեալ և աննշան լեալ էր մարմին նորա 'ի թաղում վիրացն և 'ի ճապաղեաց արեանն, և 'ի կոխան լինելոյ ընդ սմբակօք երիվարաց, յանօրոյն ձեռաց կապտեալ կողոպտեալ 'ի զարդուց և յըզգեստուց. և հանեալ 'ի ներքուստ չեղջակոյտ թաղմութենէ դիականցն' ածաւ 'ի Վայսնֆէլս, և եդաւ անդ 'ի տեսիլ և յողբ զօրաց նորին և 'ի վերջին համբոյր դշխոյին։ Վրէժխնդրութիւն պահանջեալ էր զառաջին հարկն, և թաղում արեանց ճապաղիք խաղացեալ 'ի հաշտ առնել զարքայ. արդ յառաջ մատեաւ յիրաւունս իւր, և քաղցր արտասուք հոսէին 'ի վերայ մարդոյ։ Չի ցաւ հասարակաց հետախաղաղ առնէ զառանձնական վտանգս։ Ի մեծէ հարուածոյ անտի ուշաթափ իմն լեալ զօրավարացն, կային անբարբառ արձանացեալ շուրջ զդագաղաւն, և ոչ ոք իշխէր տակաւին կշռել և իմանալ զմեծութիւն անբաւ կորստեանն այնորիկ։

Ըստ պատմելոյ ·Քեւընհիլլէրի' 'ի տեսանել կայսեր

զարխնազանգ վակաս Թագաւորին, զոր կապտեալ 'ի պատերազմին առաքեալ էին առ նա 'ի Վիեննա, մոր-մոքեցաւ գործավարար, և յանկեղծ սրտէ՝ որպէս համա-րիմ. Սիրելի եւս էր ինձ, ասէ, վայելել եղկելույն կեանս երկարս և խնդութեամբ դառնալ յերկիր Թագաւորու-թեան իւրոյ, եթէ միայն խաղաղութիւն գտանէր Գեր-մանիա։

ՇԻԼԼԷՐ. Պատմ. երեսնամեայ պատերազմին։

---

## ՄԱՀ Ա. ԿԱՐՈԼՈՍԻ ԱՆԳՂԻՈՅ

Զկնի չորից ժամուց խաղին քնոյ, յարեաւ Կարոլոս յանկողնոյ իւրմէ, և ասէ ցՀերպէր. Գործ մի մեծ առաջի կայ ինձ կատարել, վասն որոյ և արժան իսկ է զի յարեայց վաղագոյն. և առնոյր զհանդերձս իւր ագա-նել։ Խռովեալ էր Հերպէր, և հարևանցի իմն յարդարէր զհերս նորա։ Ասէ ցնա Թագաւորն. Աղաչեմ զքեզ զի զնոյն խնամով 'ի կիր արկանիցես, որպէս յերեկն և յե-ռանդ. և Թէպէտ չիցէ գլխոյս կալ զուսովքս ընդ եր-կար, այլ սակայն կամ է ինձ 'ի զարդ փեսայի զարդա-րել։ Եւ զգեցեալ զհանդերձսն, խնդրեաց և շապիկ մի աւելի, և ասէ. Ցրտին է եղանակս, մարթ է ինձ զդողանի հարկանել. իցեն թերևս որ երկիւղի զայդ ընծայիցեն. այլ ես չկամիմ պատճառս տալ կարծեացդ։ Այն ինչ արեգակն ծագէր, եհաս անդր և եպիսկոպոսն, և սկիզբն լինէր կրօնական հանդիսիցն. Եւ ընթեռնոյր նա, 'ի ԻԷ գլուխ աւետարանին Մատթէի, զչարչարանս փրկչին Յիսուսի։ Տէր իմ, եհարց զնա Թագաւորն, մի արդեօք ընտրեալ իցէ քո զայդ գլուխ իբր վիճակս իմոյ

պատրկանաւոր։ Պատասխանի ետ եպիսկոպոսն և ասէ. Գիտուն լիցի տէրութեան քոյ, զի աւուր պատշաճի է աւետարանդ, որպէս և տօնացոյցն յայտ առնէ։ Ցայնժամ յուղեցան գունդք արքայի, և դարձեալ սկսաւ աղօթել յաւելլով յեռանդեանն։ Զտասն ժամաւ մեղմով իմն հարաւ ղուռն սենեկին. ոչ ինչ շարժեցաւ Հերպէր. և երկրորդ անգամ լսելի եղև բաղխել դրանն՝ ստիպաւ ևս, թէպէտ քան զառաջինն մեղմագոյն։ Ասէ Թագաւորն. Ե՛րթ տեսանել թէ ո՞ այն իցէ. և էր գնդապետն Հէքր. և ասէ Թագաւորն. Մուծէք զնա 'ի ներքս։

Տէր իմ, ասէ գնդապետն, ահաւասիկ ժամ է երթալոյ յՈւայթ-Հոլ. անդ զմի ժամ և առաւել ևս հանգիցէ տակաւին տէրութիւն քո։ — Եկից 'ի մօտոյ, պատասխանի ետ արքայ. թոյլ տուր ինձ։ Ել Հէքր և գնաց. և Թագաւորն վայրիկ մի ևս զանձն ժողովեալ, կալաւ առպա զձեռանէ եպիսկոպոսին և ասէ ցնա. Եկ երթիցուք. բաց դու զդուռն, Հերպէր. զայս երկրորդ անգամ ազդ առնէ ինձ Հէքր։ Եւ էջ նա 'ի փակարանն՝ որ հանէրն զնա յՈւայթ-Հոլ։ Հէքր բախեաց զդուռնն. Ճէքսըն և Հերպէր անկան յոտս նորա. և ձգեալ Թագաւորին զձեռս իւր ցեպիսկոպոսն՝ ասէ. Արի կանգնեաց, վաղեմիդ իմ բարեկամ։ Եւ յործամ բախեաց Հէքր զդուռն, միւսանգամ եբաց Կորոլոս, և ասէ ցգընդապետն. Անց յառաջոյ, զհետ քո գամ։ Եւ անց նա ընդ դաստաստանարանն 'ի մէջ երկուց խմբից զօրականաց։ Ամբոխ արանց և կանանց խռնեալ էին անդանօր, որք վտանգաւ իսկ կենացն զտեղի կալեալք անշարժ 'ի յետուստ կուսէ պահապան զօրացն, աղերս վասն Թագաւորին արկանէին, մինչդեռ անցանէր նա ընդ այն. և ինքեանք իսկ զօրականքն զլռութիւն կալեալ ոչ ինչ ընդդէմ դառնային նոցա։ Ի ծայր Ջորահին ընդ որմն անցս իմն գործեալ էր զայն գիշեր Ջորջդէպ ուղիղ հանէր 'ի տեղի կառափնանն, պատեալ 'ի սեաւ. երկոք ամանք կանգուն կային առ տապարաւն. և էր նոցա հան

դերձս արկեալ նաւաստեաց և դիմակս առեալ դե֊րեսօքն ։

Եհաս անդր Թագաւորն ուղղաճեմ գնացիւք, և շուրջ զիւրև յածեցուցեալ զաչս իւր, խնդրէր խօսել ընդ ժո֊ղովրդեանն ։ Այլ զօրականին կալեալ էր զվայրն, և չէր ումեք մերձենալ առ նա ։ Եւ դարձաւ Թագաւորն առ ծէքսըն Լեառ Թոմլինսըն և ասէ ցնոսա. Ձեզ միայն իցէ լսել ձայնիս. ապա առ ձեզ զբանս իմ դարձուցանեմ ։ Եւ կարճ ՚ի կարճոյ խօսեցաւ առ նոսա զոր պատրաստեալ ինչ էր յառաջագոյն, ծանր իմն հանդարտութեամբ ցու֊ցանելով եթէ միակ պատճառ աղխտից ժողովրդեանն՝ էր արհամարհութիւն իրաւանց արքայի, և թէ չէր ար֊ժան ժողովրդեան խառնիլ յիրս անդ պետութեան, և զի ՚ի սոյն ևեթ պայման մարթ էր աշխարհին գտանել ՚ի խաղաղութիւն իւր և յազատութիւն ։ Եւ մինչդեռ խօ֊սէր նա, մերձեցաւ ոմն ՚ի տապարն. դարձաւ առ նա Թագաւորն և ասէ. Մի՛ խանգարեր զտապարդ. գուցէ տուժել եւ ցաւեցուցանէ զիս ։ Ցաւարտ խօսիցն՝ այլ ոմն դարձեալ մօտ առ տապարն մատեաւ. և Թագաւորին կրկնեալ անդրէն երկիւղագին ձայնիւ և ասէ. Զգու֊շացի՛ր տապարիդ. զգուշացի՛ր տապարիդ ։ Անշշունչ և անբարբառ լռութիւն ունէր զվայրն բովանդակ. և Թա֊գաւորն եդ ՚ի գլուխ իւր գլխանոց ինչ մետաքսեայ. և դարձեալ ցդահիճն ասէ. Միթէ խո՞չ իցեն քեզ հերքս իմ ։ Պատասխանի ետ խոնարհութեամբ և ասէ այրն. Աղաչեմ զքեզ, տէր, զի ընդ գլխանոցաւդ զետեղիցես զդոսա ։ Եւ ամփոփեաց արքայ՝ օգնելով և եպիսկոպո֊սին ։ Ասէ ցնա Թագաւորն. Ցիմ կոյս են արդարութիւն և Աստուած ամենակարող ։ Ասէ ցնա ծէքսըն. Այս տէր. քայլ մի ևեթ մնայ քեզ անցանել, որ թէպէտ լի է ահիւ և անձկութեամբ, այլ սակայն սակաւավախճան եւս է. այլ և այն յուշ լիցի քեզ, արքայ, զի զմեծ իմն ճանա֊պարհ գործիցես դուլաւ յերկրէ յերկինս ։

Թագաւորն ասէ. Ցապականացուէս յանապականն

անցանեմ թագաւորութիւն, ուր և ոչ մի ինչ կայցէ երկիւղ։ Եւ դարձեալ առ դահիճն, ասէ. Զիա՞րդ կայցեն հերք գլխոյս։ Եւ հանեալ 'ի բաց զվերարկուն և զնշան սրբոյն Գէորգայ, ետ ցեպիսկոպոսն և ասէ. Յիշեսջիր զիս։ Մերկացաւ ապա 'ի զգեստուցն և արկաւ անդրէն զվերարկուն. և զակն 'ի կոճղն դարձուցեալ, ասէ ցդահիճն. Տես զի իցէ սա հաստատուն. և նա ասէ՝ Հաստատուն է, տէր իմ։ Ասէ թագաւորն. Առ սակաւ մի կամ ես յաղօթս, և յորժամ ձգեցից զձեռն իմ, յայնժամ...։ Եւ ժողովեալ զանձն, ասաց բանս ինչ դաշն ձայնիւ. ամբարձ զաչս իւր յերկինս, և 'ի ծունր իջեալ՝ եդ զգլուխ իւր 'ի վերայ փայտին. և դահճին բուռն հարեալ զհերացն, զի ընդ գլխանոցաւն արկանիցէ, թուեցաւ թագաւորին եթէ կամէր նա հարկանել, և ասէ. Կաց մնա հրամանիս. և նա ասէ. Այո՛ տէր, հրամանիդ քո մնամ։ Սուղ ինչ 'ի վերայ անցեալ՝ ձգեաց արքայ զձեռս իւր. եհար անդէն դահիճն, և 'ի մի յայն հարուած անկաւ գլուխն 'ի գետին. զոր առաջի արարեալ ժողովրդեան և ասէ. Ահաւադիկ գլուխ մատնչին։ Խուլ իմն և երկարատև հեծութիւնք հնչեցին ընդ Ուայթ-Հոլ։ Բազումք 'ի ժողովրդենէն անկանէին 'ի տեղի սպանութեանն, թաթաւել զթաշկինակս իւրեանց յարիւն արքայի։ Երկու գունդք հեծելազօրաց անդր հասեալք, ընդ կրկին առաջս զամբոխն 'ի բաց արձակեցին։ Իբրև ամենեքեան գնացին, բարձաւ մարմին արքայի և եդաւ 'ի դագաղս։ Կամք եղեն Կրոմուելայ տեսանել զնա. և ուշի ուշով զննեալ զմարմինն, ամբարձ ինքնին զգլուխն, իբրու տեսանել եթէ արդարև անջատեալ իցէ յիրանէն, և ասէ. Վայելչակազմ է յոյժ մարմինս, և ցուցանէ եթէ երկայնօրեայ լինելոց էր սա 'ի կեանս իւրում։

ԿԻԶՈՅ. Յեղափոխութիւն Անգղիոյ։

Digitized by Google

## ՄԱՀ ԴԻՒՐԵՆԻ

Տարածեցաւ բօթս այս դառնաղէտ ընդ Գաղղիա համօրէն, որպէս զմէգ թանձրախիտ որ զլոյս երկնից ծածկիցէ, և ելից զամենայն սիրտ խաւարաւ մահու, յարհաւիրս և յերկուղս կալեալ զամենեսին: Ընդ լուր մահուն Դիւրենի, այր ամենայն թուէր իմն տեսանել զսպառսպուռ բեկումն արքայական բանակին, զսահմանս մեր ոտնակոխ, և կամ զթշնամիս մխիլ 'ի սիրտ պետութեանս: Իսկ ապա մոռացեալ զօգուտ հասարակաց, զմահ մեծի առնն աշխարէին ամենեքեան, և ընդ աղէտալին արկած բերանք կծեցան և աչք հարան յարտասուս: Ամենայն ոք փութով անձին համարէր գիտել ինչ և խօսել զկենացն և զառաքինութեանց. բայց ասէր եթէ առանց իրիք շահու սիրէին զնա ամենեքին, այլ այն՝ եթէ հիանային ընդ նա բնաւք աննախանձ, և միւսն թէ սարսէին յերեսաց նորա և թշնամիքն անգամ առանց իրիք ատելութեան: Այլ մորմոք արքային ընդ մահ նորա, և գովաբանութիւնն 'ի փառս հայակապ մահացելոյն՝ մեծ եւս են և չքեղագոյն դրուատիք առաքինութեանց նորա: Ի ցաւ արքային իւրոյ և զիւրն յաւել ժողովուրդն. ընդ քաղաքսն ուստի էանց մարմին նորա՝ զնոյն կիրս էր տեսանել, որ ինչ երբեմն 'ի պետութեանն Հռովմայ, յածելն յերկրէն Ասորւոց 'ի շիրիմս կայսերաց՝ զաճիւնս Գերմանիկեայ: Աշխարէալ կային տունք. տխուր և թախծալից լռութիւն՝ որ զրաւեալն էր զհրապարակս, 'ի հեծութիւնս եւեթ քաղաքացեացն բեկանէր. աւագանին ազազգեաց՝ յօժար իմն էին զդագաղն արկեալ զուսովք՝ տանել քաղաքէ 'ի քաղաք. քահանայք և միաբանք վառեալք 'ի նախանձ, պարտատուս իւրեանց և զաղօթս ուղեկից նմա տային. և քաղաքք՝ առ

Digitized by Google

որս նոր էր տեսարանն դժնդակ, 'ի բնագոյն ցաւս լուծանէին քան զուղեկիցսն, և իբրու այն եթէ 'ի տես դադաղացն կրկին զնա կորուսանելով՝ անդրէն 'ի կոծ և յարտասուս հատանէին։

ՄԱՍԳԱՐՈՆ. Դամբանականն Դիւրէնի։

---

## ՄԱՀ ԴԻՒՐԵՆԻ

Մեռանի Դիւրէն. աղմկեցաւ ամենայն. դեղևեցաւ բաղդն. լքաւ յաղթութիւն. բարձաւ խաղաղութիւն. թուլացան գաշնակցաց խորհուրդք առաքինիք. 'ի ցաւոց խորտակեցաւ արութիւն վաշտուց և 'ի տենչ վրիժուց վառեցաւ. անշարժ կայ ճամբարն համօրէն. ընդ կորուստ խոկան վիրաւորք՝ զոր կրեցին և ոչ զընկալեալ վիրացն։ Հարք կիսամահք փութացուցանեն զորդեակսն յաշխարհանս անկելոյ զօրավարին իւրեանց։ Բանակն 'ի սուգ համակեալ պաշտէ նմին զմահուն վերջին պաշտօն. և համբաւ՝ որ սիրէն սփռել ընդ տիեզերս զանցս նորանշանս, արագաւ ելից զԵւրոպէ պանծալի վարուք իշխանիս և մահուանն ողորմ ցաւովք։

Քանի՜ հառաչանք անդ յայնժամ, քանի՜ն արտասուք, ո՜րչափ գովութիւնք հնչէին ընդ քաղաքս և ընդ շէնս։ Տեսեալ ուրուք զհնձոցն աճել, օրհնէ զյիշատակ առնն, յորմէ տուաւ նմա կթոցն ակնկալութիւն. և այլ ոք որ դեռ ևս յանդորրու վայելէր զհայրենին ժառանգութիւն, մաղթէ նմին զյաւիտենիցն հանգիստ, որ փրկեաց զնա 'ի շփոթից և յանգթութեանց մարտին. աստ զանմահականն մատուցանեն զպատարագ վասն հոգւոյ նորա, որ ոչ անխայեաց առ օգտի հասարակաց յանձն իւր

Digitized by Google

և 'ի կեանս. և այլուր պատրաստեն նմա զհանդէս յուղարկաւորութեան 'ի տեղւոջ անդ՝ ուր ակն ունէին հանդերձել նմա զյաղթանակն. այր այր ընտրէ անձին զմասն փառաւոր 'ի չքնաղ վարուց նորա յառնուլ 'ի դրուատիս, և իւրաքանչիւր ոք հատկլեալ 'ի հառաչանաց իւրոց և յարտասուաց՝ հիանայ ընդ անցեալն, ողբայ զառաջիկայն և ընդ գալոցսն դողայ: Այսպէս արքայութիւնն համօրէն յողբս համակեալ կայ ընդ մահ պաշտպանին իւրոյ, և մահ առն միոյ եթէ՝ հասարակաց լինին աղէտք:

ՖԼԷՇԻԷ. Դամբանական Դիւրենի:

---

## ՄԱՀ ՀԵՆՐԻԿԷ ԴՇԽՈՑԻ

Միտ դիք, տեարք, ահաւոր պետութեանցն՝ յորս մեք 'ի ներքուստ աստի ակնարկեմք. մինչդեռ դողամք մեք ընդ ձեռամբ նոցա, Աստուած հարկանէ զնոսա մեզ 'ի խրատ. պատճառք՝ բարձրութիւն նոցա է, և այնչափ չխնայ ընդ նոսա, զի չզեմեղէ պարտ բաշխի տալ զնոսա 'ի խրատ այլոց: Մի՛ քրթմնջէք, քրիստոնեայք, թէ զի տիկինս ընտրեցաւ առնել մեզ զայս ազդեցութիւն. չիք ինչ դժնէ աստանօր վասն նորա. զի որպէս յառաջիկայսդ տեսջիք, նովին հարուածով որ զմեզն խրատէ՝ կեցուցանէ զնա Աստուած: Պարտ էր հաստատ գիտել զոչնչութիւն մեր. բայց եթէ անակնկալ հարուածք պակուցիչք պիտոյ իցեն որտիցս կախարդելոց 'ի սէր աշխարհի, շատ իսկ մեծ է այս և կարի ահագին:

Ո՛վ գիշեր աղիտաբեր, ո՛վ գիշեր ահաւոր, յորում հնչեաց յանկարծահաս իբրև զշանթին ճայթելոյ որոտ-

ման այս բոթ առակալի. Տիկինն ահա մեռանի, Տիկինն մեռաւ։ Ո՞վ ոք 'ի մէնջ ոչ յանձն իւր առ զազդ հարուածոյգ, որպէս եթէ դէպք ինչ եղեռնաւոր զատուն իւր յաւեր դարձուցանէին։

Ցառաջին անդ չշուկ նորանշան ախտին, յամենայն կողմանց ընթացք 'ի Սէն-Գլու. ամենայն ինչ արհաւրօք լի, բայց միայն 'ի սրտէ Տիկնոջս. ամենայն ուրեք ճիչ և գեր լսելի, ամենայն ուրեք ցաւք և յուսահատութիւն և կերպարանք մահու։

Թագաւոր, Թագուհի, արքայեղբայր, արքունիք ողջոյն, համօրէն ժողովուրդ, ամենայն խոնարհեալ անկեալ, ամենայն յուսակտուր. և Թուիմ տեսանել զլրումն մարգարէաքարող բարբառոյն. Թագաւորն սգացի, և իշխանն զգեցցի զապականութիւն, և ձեռք ժողովրդեան երկրին լքցին 'ի ցաւոց և յապշութենէ։

Բայց իշխանք և ժողովուրդք 'ի նանիր հաչէին հառաչէին, 'ի նանիր արքայեղբայրն, 'ի նանիր Թագաւորն ինքնին գրկապինդ ունէր զՏիկինս։ Ցայնժամ գոյր նոցա տալ այր ցընկեր ընդ սրբոյն Ամբրոսիոսի. Պինդ ունէի զբագուհին, այլ զոր ունէիս վաղ իսկ կորուսեալ էի։ Ի գորովալից անդ գրկախառնութիւնսն՝ թռանէր 'ի նոցանէ բամբիշնն. և մահ հզօրացեալ՝ 'ի միջոյ անտի արքայական բազկացն յափշտակէր զնա 'ի մէնջ։

Իսկ զիա՞րդ. է՞ր ինչ պարտ այսպէս հապճեպ տագնապաւ գնալ նմա։ Առ յոլովս 'ի մարդկանէ առ փոքր փոքր լինին այլայլութիւնք, և սովոր է մահ պատրաստել զնոսա 'ի հարուած իւր վերջին. իսկ Տիկինս՝ յայգուէ ցերեկ անց իբրև զխոտ դաշտի. վաղորդայն ծաղկեալ կայր, և որով կերպով գիտէք դուք. ընդ երեկս տեսաք զնա ցամաքեալ. և ազդոյ բանք աստուածեղէն տառիցն՝ որովք կուտակէ զյողդողդութիւն մարդկայնոցս՝ հանդերձեալ էին այսպէս ճշգրտիւ և ըստ նկարագրին կատարել 'ի վերայ բամբիշանս։ . . .

Աւաղիկ, մեծաւ սրտիւն հանդերձ, բամբիշնս զար-

Digitized by Google

մանուաքանչ և սիրատարփ. աւադիկ՝ որպիսի ինչ գործեաց զնա մեզ մահն. նա աւանիկ և նշխարք այդ որ ինչ էն՝ անհետացի 'ի մէնջ, ստուերք այդ փառաց՝ չքացի 'ի միջոյ, և տեսցուք զնա մերկ կողոպուտ ես և 'ի տըխրալի պաճուճանացդ:

• Իջանելոց է 'ի մթին վայրս, 'ի սանդարամետական օթեւանսն՝ ննջել անդ 'ի հող ընդ մեծամեծս երկրի, որպէս ասէն Յոբ, ընդ թագաւորս և ընդ իշխանս չքոտեալս, յորս և հազիւ թէ գտանիցի նմա տեղի. այնչափ խծկեալ և խռնեալ են կարգք, այնչափ ժիր և ժաման է մահ 'ի խճողել զվայրսն:

Բայց սաստ ևս պատրեն զմեզ ցնորքս. մահն ոչ թողու մեզ այնչափ ինչ մարմին՝ մինչև զվայրս գրաւելոյ. ոչինչ տեսանի անդ երևելի, բայց չիրիմք եւեթ. մարմինք մեր իսկ և իսկ փոխին 'ի բնութենէն. իրան մեր, այլ իմն անուն ժառանգէ. նոյն իսկ դիական կոչումն, ասէ Տերտուղիանոս, քանզի դեռ ևս մարդկային իմն կերպարանս մեզ 'ի դէմս ածէ, չմնայ նմա ընդ երկար. դառնայ չգիտեմ զինչ լինի, որոյ չիք ինչ անուն և ոչ 'ի լեզուի ուրեք. այսչափ ճշմարիտ է՝ թէ ամենայն մեռանի 'ի նմա, մինչև տխրական ձայնքն անգամ ողորմելի նշխարեալ մնացորդացն նշանակինչք:

ՊՈՍԻՒԷ. Դամբանական Հենրիկէի Դշխոյի:

---

## ՄԱՀ ՄԱՐԵՄԱՅ ՍՏՈՒԱՐՏԱՅ

Յաւուրն երեքշաբաթի յեօթն փետրուարի, կոմսքն երկոքին հասեալք 'ի Ֆոդրինկէյ, խնդրեցին տեսանել զթագուհին. ընթերցան առաջի նորա զդատակնիք մահուն, և ծանուցին նմա պատրաստ լինել 'ի մահ 'ի վաղիւ ընդ առաւօտն: Ունկն եդեալ Մարիամու անխռով

Digitized by Google

ցուցարտ ընթերցմանն, ապա կնքեաց զանձն նշանաւ խաչին յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և ասէ. Հոգի որ խոժոռիցի ընդ հարուածս մարմնոյն 'ի դահ-ճաց՝ ոչ է արժանի երկնիցն հրճուանաց. և թէպէտ ոչ ունէի ակն եթէ դշխոյն Անգղիոյ նախ առաջին օրինակ տայցէ անարգելոյ զսրբազան անձն Թագուհւոյ, սակայն և այնպէս արկանեմ զանձն իմ յօժարակամ ընդ հարկաւ, սահմանելոյ վասն իմ 'ի վերին տեսչութենէն։ Եւ եդեալ զձեռն իւր 'ի վերայ Աստուածաշունչ մատենի, որ մերձ առ նմա կայր, երդուաւ համարձակ եթէ անպարտ է 'ի դաւակցութենէն զոր Պալինկդոն նիւթեաց 'ի բառնալ զկեանս Եղիսաբեթի։ — Յիշեցոյց 'ի նմին պահու զաղաչանսն որ 'ի թղթի իւրում առ Եղիսաբեթ, բայց ոչ ընկալաւ պատասխանի հաճոյական։ Ապա աղաչեաց մեծաւ թախանձանօք զի գոնեայ 'ի յետին պահու անդ կենացն շնորհեսցի նմա դրան երէց իւր, առ 'ի կարօղ լինել հաղորդելոյ բարեպաշտիկ կրօնից հրահանգաց զոր հաւատք իւր պատուիրէին։ Այլ և այս շնորհք որ ոչ ժխտի առ անագորոյն իսկ մահապարտս, ոչ շնորհեցան նմա։

Մինչդեռ նոքա խօսէին, սպասաւորք նորա յարտասուս հարկանէին. և թէպէտ պակուցեալ էին յերեսաց երկոցուն կոմսիցն, հազիւ բաւէին թագուցանել զկոծ իւրեանց. այլ անդէն ընդ մեկնել Գէնդի և Շրըզպըրեայ, ընթացան առ տիկին իւրեանց կական բարձեալ մեծապէս ըստ ամենայն սաստկութեան խանդաղատանաց և ցաւոց։ Իսկ Մարիամ ոչ միայն կայր մնայր անխռով և հանդարտ մտօք, այլ և ջան գործէր սփոփել զանհնարին աղէտս վշտաց նոցին։ Յունր եդեալ ամենայն սպասաւորացն որ շուրջ զիւրև, գոհացաւ զԱստուծոյ զի ահա մերձեալ էր վախճան տառապանացն, և խնդրէր զօրութիւն վայելչապէս և արիաբար կրելոյ և զոր մնայրն։ Զմեծ մասն երեկոյին հանէր 'ի կարգադրել զըստ աշխարհի գործս իւր, և իւրով ձեռամբ գրեաց

զկտակն։ Զդրամ և զականսն պատուականս և զզգեստս իւր բաժանեաց ծառայիցն ըստ իւրաքանչիւր կարգի պատուոյ և արդեանց։ Գրեաց թուղթ կարճառօտ առ թագաւորն Գաղղիոյ, և միւս ևս առ դուքսն Կիզայ՝ գոբովալից այլ վսեմական իմաստիւք. յանձն արար զհոգի իւր աղօթից նոցին, և զծառայսն սրտաբեկեալս 'ի պաշտպանութիւն նոցա։ Ի պահու ընթրեացն ճաշակեաց չափով, որպէս և սովորն էր, և խօսեցաւ ոչ միայն խաղաղ ոգւով, այլ և զուարթութեամբ. էարբ վասն կենաց միոյ միոյ 'ի ծառայիցն, և խնդրեաց ներումն՝ եթէ էր ինչ երբեք վրիպեալ 'ի պարտսն առ նոսա։ Ըստ սովորութեան ժամուն՝ եմուտ յանկողին և ննջեաց սակաւ ինչ ժամս խաղաղութեամբ։ Վաղ քան ընդ առաւօտն յարուցեալ առանձնեցաւ 'ի սենեանց իւր, և եկաց ընդ երկար յաղօթս։ Յութերորդում ժամու դատաւորն մեծ և պաշտօնեայք նորա մտեալ 'ի ներքս՝ գտին զնա տակաւին 'ի գուճս առաջի սեղանոյն։ Անդէն վաղվաղակի յոտն եկաց, և փոփոխակերպ տեսլեամբ և անվեհեր և զուարթագին դիմօք յառաջէր 'ի տեղին մահաւիթ, յեցեալ 'ի վերայ երկուց սպասաւորաց Պաւլէդի։ Զգեցեալ էր հանդերձ սգատեսակ, այլ այնպիսի իմն վայելչութեամբ և չքեղութեամբ, զոր վաղ ուրեմն 'ի բաց եդեալ էր և զուն ուրեք 'ի տօնական ինչ աւուրս միայն այնպէս զարդարէր։ Պատկեր Գառին Աստուծոյ կախեալ կայր զպարանոցէն շղթայիւ՝ անուշահոտ գնդաձև զարդուց, վարդարան զգօտւով, և խաչ փղոսկրեայ 'ի ձեռին։ Ի ստորոտ սանդղոցն ընդառաջեալ ընկալան զնա կոմսքն երկոքին, հանդերձ բազում որերով մերձաւոր կողմանց. անդ թոյլ ետուն Պր. Անդրէասայ Մէլվիլայ, հազարապետի տան նորա, զոր արգելեալ ունէին յերեսաց նորին 'ի բազում եօթնեկաց հետէ, հրաժարել 'ի նմանէ՝ տալով նմա զվերջին ողջոյն։

Ի տեսանել զտիկինն, զոր սիրէր հաւատարմութեամբ, յայնպիսի կերպարանս, լուծաւ յարտասուս, և

յողբալն զաղէտս բաղդի նորա և զիւր իսկ վիճակ դժըն-
դակ, զի հարկ էր նմա այնուհետև տանել 'ի Սկովտիա
զգոյժն ցաւագին, առ է ցնա Մարիամ. Մ՛ի լար, ազնիւդ
Մէլվիլ. առիթ է այդ մեծի խնդութեան. քանզի այսօր
տեսցես զՄարիամ Ստուարտ ազատ յամենայն վշտաց,
հասեալ 'ի վախճան տաղտկալի ցաւոցն, որում փափա-
քէրն 'ի վաղուց: Եղիցիս ինձ 'ի վկայ եթէ մեռանիմ
անյողդողդ 'ի հաւատս կրօնից իմոց, հաւատարիմ Սկով-
տիոյ, և անյեղլի 'ի սիրոյն Գաղղիոյ: Յիշեցո զիս որդւոյ
իմում: Ասա ցնա թէ չէ իմ ինչ գործեալ 'ի նախատինս
թագաւորութեան նորա կամ պատուոյն և իրաւանցն.
և թողցէ Աստուած ամենեցուն որք յանիրաւի ծառա-
ւեցան արեան իմում:

Բազում դժուարութեամբ և յետ ուժգին թախան-
ձանաց հաւանեցոյց զերկոսին կոմսան թոյլ տալ Մէլվի-
լայ և երից 'ի ծառայից իւրոց և երկուց նաժշտաց, գալ
ընդ նմա 'ի կառափնատեղին: Եւ էր այն կանգնեալ 'ի
գաւթին յորում դատեցաւն, սակաւիկ մի բարձր 'ի յա-
տակէն, և ծածկեալ էր սեաւ քօղով, նոյնպէս և աթո-
ռակն և բարձն և կոճղն: Եւ Մարիամ անվեհեր քայլիւք
ընդ աստիճանսն, հայեցաւ նկատեաց անխռով զամե-
նայն սպասս մահուն, և կնքեալ զանձն նշանաւ խաչի՝
բազմեցաւ յաթոռակն: Ընթերցաւ Պիլ 'ի ձայն բարձր
զվճիռ նորին, զոր լուաւ նա յանհոգս, որպէս թէ յա-
փըշտակեալ իմն յայլ խորհուրդս: Յայնժամ գահերէցն
Բէտէրպըրի սկսաւ ասել բանս հոգևորս ըստ արժան
առաջիկայ դիպուածոյն, և մատոյց աղօթս Բարձրե-
լոյն յօժանդակութիւն դշխոյին. իսկ նա յայտ յանդի-
ման ծանոյց զի ոչ ըստ խղճի մտացն կարէր լսել զմին
և միաբանել ընդ միւսումն. և 'ի գունս անկեալ ասաց
աղօթս ինչ 'ի լատին լեզու: Եւ յաւարտել բանից գահ-
երիցուն, 'ի ձայն լսելի ամենեցուն անգղիարէն բար-
բառով յանձն արար Տեառն զողորմ վիճակ եկեղեցւոյ,
մաղթեաց յաջողութիւն որդւոյ իւրում, երկարութիւն

Digitized by Google

կենաց և խաղաղաւէտ թագաւորութիւն Եղիսաբեթի։ Ծանոյց եթէ յոյս քաւութեան ունէր միայն մահուամբն Քրիստոսի, և առ ոտիւք պատկերի նորա հանդերձեալ էր հեղուլ կամաւորապէս զարիւն իւր. և ամբարձեալ 'ի վեր զխաչն և համբուրեալ, սկսաւ ասել այսպէս. Որ տարածեցեր զբազուկս քո, ով Յիսուս, 'ի խաչին, ընկալ և զիս կարկառեալ բազկօք գթութեանդ քո, և քաւեա զմեղս իմ։

Յետ այսորիկ պատրաստեցաւ 'ի կառափունս. 'ի բաց մերկացաւ զքօղն և զայլ զարդսն. և մինչդեռ մի 'ի դահճացն փութայր զաւեհկարար օգնել նմա, մերժեաց հեզաբար և ասէ ժպտելով թէ ոչ էր սովորեալ հոլանել առաջի այդքան տեսողաց, և ոչ յայդպիսւոյ արբանեկէ սպասաւորիլ։ Խաղաղ և անվեհեր արութեամբ եդ զպարանոց իւր 'ի կոճղն. և մինչ ոմն 'ի դահճացն ունէր զձեռաց նորա, միւսոյն երկիցս հարեալ 'ի բաց կտրեաց զգլուխ նորին. որ մերկացեալ 'ի զարդուցն՝ երևեցաւ ալեւորեալ 'ի տառապանաց անտի և 'ի վշտացն։ Ամբարձ զայն դահիճն մինչ դեռ ևս արիւնաթաթաւն էր, և գահերէցն գոչեաց. Այսպէս կորիցեն ամենայն թշնամիք Եղիսաբեթի թագուհւոյ. կոմսն Քէնդի միայն կրկնեաց, ամէն։ Իսկ այլք 'ի տեսողացն կային 'ի լռութեան և յարտասուս լուծեալ. ոչ այլ ինչ կարելով յայնմ պահու, բայց ողորմել և սքանչանալ։

ՌՈԲԵՐԴՍՈՆ. Պատմութիւն Ստուարտեանց։

---

## ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Եմուտ Աղեքսանդր 'ի Բաբելոն մեծաշուք փառօք. որպիսի չէր երևեալ ուրեք. և զքէն վրիժուն Ելլադայ խնդրեալ, և զամենայն աշխարհն Պարսից 'ի սուղ ժամանակի ընդ ձեռամբ նուաճեալ, ապա 'ի հաստատութիւն նորոյ պետութեանն, կամ մանաւանդ 'ի յագուրդ փառասիրութեան իւրոյ և առ անուանի լինելոյ առաւել քան զԴիոնիսոս, խաղաց գնաց 'ի Հնդիկս, և անդր ևս քան զյաղթողն հռչակաւոր ընդարձակեաց զիշխանութիւն իւր։ Բայց որ ընդ անապատս ոգորէր, ընդ գետս և ընդ լերինս, և ոչ կասէր երբեք յընթանալոյ, հարկեցաւ լսել զօրականին, որ վաստակեալ խնդրէր արձակուրդ. և արձանս գերապանծ քաջութեանցն զափամբք Արտապոյ թողեալ, ընդ այլ ճանապարհ դարձոյց զզօրս իւր, նուաճելով զճանապարհայն զամենայն քաղաքս. և եկն եմուտ վերստին 'ի Բաբելոն, ոչ որպէս աշխարհակալ ոք, այլ աստուածակերպ ահաւոր և պատկառելի փառօք։

Բայց թագաւորութիւն նորա մեծազօր ընդ համառօտ կենաց նորա սահմանեցաւ։ Երեսուն և երից ամաց մինչ դեռ երկնէր խորհուրդս մեծամեծս՝ որպիսի չէր ուրուք զմտաւ ածեալ. և հաստատութեամբ ակն ունէր բարեպատեհ ելից, վախճանեցաւ զկեանս իւր՝ մինչև հաստատագոյնս հրաման տուեալ վասն թագաւորութեանն. և եթող զեղբայր իւր զանզօր և զտկար, և մանկունս տղայս՝ որ անբաւական էին ծանու բեռինն։ Բայց դառնագոյն ևս աղէտք տան իւրոյ և պետութեան այն էին, զի զզօրավարսն ուսեալս առ նմա 'ի պատերազմ և 'ի սէր փառաց՝ զհետ իւր թողոյր։

Digitized by Google

Յառաջատես եղև որոց յետ մահուն գործելոց էին. և առ չզայրացուցանելոյ զնոսա, և առ ահին դարձեալ զի մի՛ անլսողս զնոսա արասցէ, ոչ ժտեաց ցուցանել զոք յաջորդ իշխանութեանն կամ խնամակալ որդւոցն. այլ գուշակեաց միայն զի 'ի ճապաղիս պատերազմաց յուղարկաւորեսցեն զնա բարեկամքն իւր. և 'ի ծաղկեալ հասակին վախճանեաց զկեանս իւր, յոյժ թախծեալ և տագնապեալ վասն անցիցն որ անցանելոց էին յետ իւրոյ մահուն։

ՊՈՍԻՒԷ. Խօսք 'ի վէպս ազգաց։

---

## ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՊՊԻԱՍԱՅ

Զարմանային Նեստոր և Փիլոկտետ 'ի տեսանել զմարդասիրութիւն Տելեմաքայ, զփոյթ նորա 'ի բարերարել, զյօժարութիւն 'ի սպասաւորել, զդիմել նորա ամենայն ուրեք յօգնութիւն, և զնախահոգ խնամս կարօտութեան բոլորից։ Զհաւատալի թուէին նոցա իրքն, և ոչ ևս ճանաչէին զպատանին. զարմանային մանաւանդ ընդ խնամս նորա 'ի յուղարկաւորութիւն Իպպիասայ. զի ինքնին իսկ երթեալ 'ի խնդիր դիոյ նորա, հան զնա արիւնաշաղախ և տխեղծ 'ի ներքուստ չեղջակուտելոց դիականց, հեղ զնովաւ ողորմ արտասուս, և բողոք արկեալ ասէր. Հոգի վեհազն՝ որ գիտես արդ թէ քանի՜ մեծարոյ է ինձ քաջութիւն քոյին. այո՛, խիզախելդ քո գըրգռեաց զիս, այլ մանկականի աշխուժիցդ էր այն զառանցումն. և գիտեմ իսկ քաջ քանի՜ կարեկցութեան հասակն այն իցէ արժանի. սերտիւ մնայր մեզ սիրել ընդ փոյթ զմիմեանս. իմ իսկ էին յանցանք։ Ո՛վ դիք, ընդէ՞ր

Digitized by Google

բարձիք զնա յինէն՝ մինչ չև կարող գտեալ իմ բանադա-
տել զնա 'ի սէր:

Եւ ապա եթէ Տելեմաք լուանալ զդի նորա անու-
շահոտ ջրովք, և պատրաստել փայտակոյտ 'ի խարոյկ:
Հեծէին յաղթ մայրիք հարեալք տապարաւ, և 'ի գլխոց
լերանց 'ի ստոր թաւալէին. կաղնիք զառամք, որք թը-
ւէին ընդդէմ երկնից սպառնականք, կաղամախք բար-
ձրաբերձք, և նշդարիք՝ որոց գալարագեղ և տերևախիտ
ամբառնային դագաթունք, և թեղօշք՝ զարդք անտա-
ռաց՝ գլէին վայրաբերեալք 'ի գետափն Գալեսեայ: Անդ
շեղջակուտեալ զօրէն շինուածոյ մեծի՝ յառնէր փայտա-
կոյտ, և բոց հարեալ զնմանէ՝ մրրկէր ծուխ ընդ երկին:

Յառաջ մատչէին սպարտացիք յամրագնացք սգա-
ւորք, գլուխ 'ի խոնարհ, վիշտ դառնութեան 'ի վայրագ
դէմսն բերելով, և ուղխս իջուցանելով արտասուաց:
Զհետ գայր Փերեկիդէս ծերունի, ոչ այնչափ 'ի բազ-
մայոլով ամացն ընկճեալ՝ որչափ 'ի տեսանելոյ զարե
յետ մահուն Իպպիասայ՝ զոր 'ի տղայ տիոց յանձան-
ձեալն էր, և յորէ մահուան նորա չառնոյր ինչ 'ի կերա-
կուր, և քուն ցանկալի հատեալ էր յաչաց նորա, և ոչ
վայրիկ մի յաղեկէզ ցաւոցն սփոփէր: Գնայր նա գայթ
'ի գայթ զհետ ամբոխին, համբարձեալ զձեռս իւր և
զարտասուալից աչս 'ի վեր, և չգիտէր յո՛ գնայր: Զեղա-
նէր բարբառ 'ի շրթանց նորա, հեղձամըղձուկ լեալ սրտի
նորա. այլ լռութիւն նորա յուսահատ և վհատեալ 'ի
տեսիլ բոցածաւալ խարուկին փոխեալ 'ի կատաղու-
թիւն, գոչեաց և ասէ. Ո՞չ ես ուրեմն տեսից զքեզ, ո՛վ
Իպպիաս. դու մեռեալ, և կեցի՞ց ես տակաւին, ո՛վ իմս
Իպպիաս. անգութս և անողորմ, ես քեզ ուսուցի յաչս
գնել զմահ: Ակն ունէի թէ դու փակէիր զաչս իմ, և
զյետին շունչ իմ ժողովէիր. այլ ո՛ անողորմ դիք, յերկա-
րակեաց զիս արարիք, զի տեսից զԻպպիաս մեռեալ:
Սիրեցեալ որդեակ՝ զոր այնչափ հոգովք փայփայեցի,
ո՞չ ես ուրեմն տեսից զքեզ. այլ տեսից զմեռանել մօր

Digitized by Google

քո առ վշտին՝ բողոքելով զինէն որդեկորոյս. այլ առեակց զհօրահօրութիւն քո բաղխել զկուրծս իմ և զգիտակն խզել. և ես ընտուիցս այսոցիկ գտայց չարեացապարտ աղետից։ Ո՛վ սիրեցեալդ հոգի, 'ի ստիւգականն 'ի յալիս կոչես և զիս. առնելի է ինձ այսուհետև լոյս. զքեզ միայն, ով իմս Իպպիաս, ցանկամ տեսանել։ Իպպիաս Իպպիաս, սիրեցեալդ իմ Իպպիաս, մի՛ ևս կեցից՝ բայց առ 'ի հարկանել անհունացեալ մարմնոյդ զսպաս յետին։

Եւ առհա բարձեալ բերէին զգիակն պատանւոյն Իպպիտոսայ տարածեալ 'ի դագաղս զարդարեալս արծաթի և ոսկեհուռ ծիրանեաւ։ Խաւարեալ էին աչք նորա 'ի ստուերս մահու, այլ գեղեցկութիւն նորա ոչ 'ի սպառ եղծեալ. դեռ ևս 'ի գեղնեալ դէմս նորա երևէին շնորհք ընդ աղօտ. զձիւնափայլ պարանոցաւ նորա՝ որ զուսովն էր խոնարհեալ՝ գեղածփէին վարսքն երկայնաձիգք, քաղաթուխք, գեղեցկագոյնք քան զԱտիսին և զԳանիմեդեայ, որ ընդ հուպ յանհուն դառնալոց էին. և 'ի կողմն երևէր վիրաբերանն մեծաբաց, ուստի արիւն նորա հոսեալ 'ի սպառ, և հոգի նորին սատրիջեալ 'ի անդրադարձեալ էր 'ի խաւարային սահմանս Պղուտոնի։

Հուպ 'ի դագաղն տխուր կորակոր գնայր Տեղեմաք, ծաղկունս զնովաւ սփռելով։ Եւ խորև հասին 'ի խարոյկն, Տեղեմաք 'ի տեսիլ բոցոյն ծաւալելոյ ընդ ծածկոյթս զիակունն, վտակս արտասուաց վերստին հեղեալ, ասէ. Ե՛րթ խաղաղութեամբ, մեհաղնդ Իպպիաս, զի բարեկամ չիշխեմ առձայնել. հաշտեաց ընդ իմ՛ հոգիդ այնքանոյ փառաց արժանացեալ. եթէ ոչ սիրէի զքեզ, նախանձէի ընդ բախտ քոյին. զերծար դու 'ի թշուառութեանց՝ յորս մեք դեռ ևս տուայտիմք. ելեր զերծար դու ընդ ուղղի հրաշափառ։ Ցանկալի՛ նոյն և ինձ պատահէր բարեբաստիկ մահ։ Մի՛ զհոգի քո արգելցեն ալիք ստիւգականք. դաշտք եղիսականք բացցեն քեզ. դարուց 'ի դարս աւանդեսցէ համբաւ զյիշատակ քո, և հանգիցէ աճիւն քո 'ի խաղաղութեան։

Digitized by Google

Զայսոսիկ Տելեմաքայ հեծեծելով ողբս առեալ, և զօրէն առ հասարակ ձայն բարձեալ, գորովէին ընդ Իպպիա՝ պատմելով զքաջայաղթ արութիւնս նորա. և մորմոք մահուն նորա՝ յիշատակաւ բարեմասնութեանցն՝ 'ի մոռացօնս դարձուցանէր զթերութիւնս յանդուգն մանկութեան նորա և յոռի դաստիարակութեան։ Խանդաղատէին մանաւանդ ընդ գորով Տելեմաքայ, և ասէին. Սա՞ իցէ պատանին գոռոզ Հելլէն, սէգ արհամարհօտ և անհամբոյր. տեսէք քանի՛ հեզ գտանի արդ, մարդասէր և բարեգութ. անշուշտ նախ ինքն Աթենաս, որում այնքան սիրելի էր հայր նորա, սիրեաց և զսա. և զգերագոյնն 'ի պարգևս, զորս շնորհեն մարդկան դիք, ետ սմա ընդ իմաստութեան և սիրտ դիւրագորով 'ի բարեկամութիւն։

Ի ծախել դիականն 'ի բոցոյ, զշերտաշերտ մոխրոյն ցօղեաց Տելեմաք ջուր խնկահոտ. և ապա ամփոփեալ զաճիւնն 'ի սափոր ոսկի ծաղկապսակ, ած զայն առ Փալաս, մինչդեռ անկեալ դնէր նա վիրալից, և 'ի մահահրաւէր թմրութեան նկատէր զնսեմաստուեր դրունս դժոխոց առաջի իւր բացեալ։ Բայց Տրամափիլ և Նաւսփօկ առաքեալք 'ի Տելեմաքայ, զբժշկական արուեստին 'ի կիր արկեալ զհնարս, նահանջեալ էին զորհաս նորա։ Դառնային 'ի նա տակաւ ոգիք կենսականք. զօրութիւն իմն մեղմ և նուրբ և ռետին կենաց ընդ երակունս նորա մինչև 'ի ներքս 'ի սիրտն ծաւալէր, և ախորժ ջերմութիւն զողանայր զնա 'ի ցրտասառոյց ձեռանէ մահուն։ Բայց 'ի դադարել նուաղման՝ յաջորդեցին ցաւք, և սկսաւ նա զգալ կորստեան եղբօրն՝ որում ցայնվայր լեալ էր անզգայ, և ասէ. Աւա՜ղ, առ ի՞նչ այդքան խնամք առ 'ի կեանս իմ. ո՜չ լաւ ևս իցէ ինձ մեռանել, և զիմոյն Իպպիասայ գնալ զհետ. աչք իմ տեսին զնա անկեալ դի ցուրտ առ ինև։ Ո՛վ Իպպիաս, լոյս աչաց իմոց. եղբայր իմ, սիրեցեալ եղբայր, կորուսի զքեզ. ոչ ևս ուրեմն տեսից զքեզ. ոչ ևս զբարբառ քո լուայց, ոչ ևս

Digitized by Google

փարեցայց զքեւ, ոչ ևս զվիշտս իմ կարացից պատմել քեզ, և ոչ 'ի քոյոդ զքեզ սփոփել: Ո՛վ դիք ոխերիմք մարդկան, դուք յինէն բարձիք զԽոպլիաս. դե՞պք չհաւատալի. մի՛ արդեօք երազք իցեն: Ոչ, այլ հաւաստիք ամենեւին: Ո՛վ Խոպլիաս, կորուսի զքեզ, տեսի զքեզ անկեալ դիտապաստ. և պարտ է ինձ կեալ մինչև խնդրեցից զվրէժ քոյին, զոհել ստուերաց քոց զանողորմն Ադրաստ զշաղախեալն յարիւն քոյին:

Եւ մինչդեռ Փալաս զայսոսիկ խօսէր, և դիւցազունքն երկոքեան ջանային ողոքել զվիշտս նորա՝ թէ գուցէ 'ի զայրանալոյ ցաւոցն անազդականք սպեղանիքն լինէին, և ահա եսես նա զՏելեմաք առ իւր: Ի սկզբան անդ սիրտ նորա՝ յերկոցունց ներհակակիր կրից կոծեալ տատանէր. մթերեալ 'ի սրտի նորա կայր ոխ վասն անցիցն անցելոց ընդ Տելեմաք և ընդ Խոպլիաս եղբայր իւր, և միշտ կորստեան եղբօրն յանձախէր զոխութիւնն զայն. բայց և զկեանս իւր ճանաչէր պարգև Տելեմաքայ՝ որ փրկեաց զնա վիրալից և կիսամեռ 'ի ձեռաց Ադրաստայ: Իսկ իբրև եսես զօսփորն ոսկի՝ յորում ամփոփեալ կայր սիրեցելոյ եղբօրն աճիւն, իջին յաչացն ուխք արտասուաց, գրկեաց զմարմինն Տելեմաքայ հեզձամղձուկ անբարբառ, և ապա նուաղ ձայնիւ և հեկեկանօք ասէ. Արժանաւոր զաւակդ Ոդիսեայ, առաքինութիւն քո բանադատէ զիս 'ի սէր քոյին. դու ինձ շնորհեցեր զնշխարեալ կեանս իմ՝ որ ահա շիջանի. այլ պարգև գերագոյն յոյժ շնորհես ինձ արդ զաճիւն հարազատիս՝ որ առանց քո դիւ անթաղ գէշ անկեալ անգեղ, և հոգի նորա զստիւքական ափամբք հէք թափառական՝ 'յանողոքելւոյն Քարոնէ մնայր միշտ մերժեալ: Պա՞րտ էր ինձ այսքան շնորհապարտ զտանել այնմ, զոր մահուշափ ատեցի. ո՜վ դիք, դուք ինքնին հատուցջիք զմա, և 'ի թշուառ կենացս աստի զիս ազատեսջիք: Իսկ դու դիւցազն պատանեկդ, տո՛ւր և ինձ զյետին սպասն զոր ես տուի իմում հարազատի, զի անթերի լիցին փառք քո:

Ասաց, և ոգեսպառ նուաղեցաւ յանհնարին ցաւոցն: Իսկ Տելեմաք կարկեալ կայր, ոչ իշխելով բարբառել. մինչև ոգի անդրէն 'ի նուաղմանէն առեալ Փաղանտոյ՝ ընկալաւ զսափորն 'ի ձեռանէ նորա, և համբուրելով զայն ստէպ, և յարտասուս իւր թանալով ասէր. Աճիւն ցանկալի, աճիւն պատուական, ե՞րբ իցէ զի և իմս ընդ քեզ խառնեսցի 'ի սափորիդ: Ստուերք Հիպպիասայ, գամ զհետ ձեր 'ի սանդարամետս. զերկոցունցս իսկ խնդրեսցէ Տելեմաք զվրէժ:

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք:

---

ԳԵՏՆԱԴԱՄԲԱՆՔ

Ա՛ռ 'ի ելանել յԱպպիանն ապահետ՝ ուղղեցի զոտս իմ 'ի շիրիմս Կեկիլիայ Մետելլայ, 'ի հրաշակերտն գեղով և մեծվայելչութեամբ: Եւ իբրև անցանէի ընդ դաշտըն ամայացեալս, տեսի զբազմութիւն մարդկան աղըրգելոց 'ի ստուերի, և 'ի միում վայրի անհետացելոց յաչացս: Շարժեալ 'ի հետաքննութենէ՝ յառաջ մատեայ և մտի աներկիւղ յանձաւն՝ ուր տեսի զխորառուղել ստուերացն խորհրդականաց. և ահա բացան առաջի իմ զաւիթք ստորերկրեայք՝ յաղօտ լուսոյ կանթեղացն պայծառացեալք: Եւ էր տեսանել 'ի վերայ որմոց տխուր սրահիցն զերեքկարգեան դագաղս եդեալս 'ի վերայ միմեանց: Տխուր լոյս կանթեղացն սփռէր ընդ կամարսն, և ընդ երկայնութիւն գերեզմանացն յամր շարժելով, ահաւոր իմն շարժմամբ արկանէր զիրաքն որ անշարժք են յաւիտեանս: Ի զուր ուշի ուշով ունկն դնէի լսել ձայն, և ընդ այն ուղղել զոտս իմ ընդ անդնդայինն լռութիւն.

Digitized by Google

և ոչ ինչ այլ լսէի՝ բայց զբաբախել սրտիս 'ի բացարձակ յայնմ միայնութեան։ Կամէի դառնալ յետս, և ահա ոչ եւս էր ժամանակ. մօտ ընդ թիւր իմն ճանապարհ, և փոխանակ ելանելոյ 'ի դեղալեան տեղւոջէն՝ առաւել ևս միջամուտ եղէ յայն։ Եւ յաւելոյր տագնապ սըրտիս՝ յորժամ ճանապարհք նորանորք և խաչաձևք ելանէին ինձ ընդ առաջ. և 'որչափ բուռն առնէի անձին գտանել զուղիղ ճանապարհն՝ այնչափ առաւել մոլորէի. էր զի յամրաքայլ երթայի յառաջ, և էր զի անցանէի արագութեամբ, և 'ի ձայնէ արձագանգաց՝ որ կրկնէին զքայլս ոտից իմոց, համարէի պնդել ուրուք զկնի հետոցս՝ հասանել առ իս։

Եւ խորև զբազում ժամս մոլորեալ շրջէի, նուաղէր սիրտ իմ, և նստէի 'ի մենաւոր կիցս ուրեք ճանապարհաց 'ի քաղաքի անդ մեռելոց։ Տագնապէր սիրտ իմ 'ի տեսանելս զլոյս լապտերաց մերձեալս 'ի շիջանել։ Եւ ահա ձայն իմն նուագաւոր նմանեալ երգոց երկնաւոր զօրաց՝ լսելի լինէր 'ի խորոց գերեզմանական բնակութեանցն։ Այն ձայնք աստուածայինք մերթ լռէին և մերթ միւսանգամ լինէին լսելի. և թուէին առաւել իմն առնուլ դաշնակութիւն յանցանելն ընդ բազմապատոյտ ճանապարհսն ստորերկրեայս։ Յոտն կացեալ ընթացայ 'ի վայրան՝ ուստի լսելի լինէին ձայնքն հրապուրիչք, և գտի սրահ մի լուսաւորեալ լուսով։ Անդ 'ի վերայ ծաղկազարդ շիրմի մատուցանէր Մարկեղլինոս զխորհուրդս քրիստոնէից. և օրիորդք ծածկեալք 'ի քօղ սպիտակ՝ երգէին առաջի խորանին, և մեծ բազմութիւն մարդկան գումարեալ էր առաջիկայ գտանել մատուցման զոհիցն։ Յանկարծ գիտացի եթէ 'ի գետնադամբանս եմ։ Վաղվաղակի միանգամայն եհաս 'ի վերայ իմ ամօթ, ապաշաւ և զգաստութիւն։ Տեսիլ աքանչելի։ Թուէր ինձ տեսանել 'ի բազմութեան անդ զկայսրուհին և զդուստր նորա խոնարհեալս 'ի վերայ ծնգաց, և առ ընթեր ունելով զԴորոթէոս և զՍեբաստիանոս։ Ոչ տեսին եր-

բեք աչք մանկանացուաց տեսիլ առաւել սքանչելի քան զայս. և ոչ պաշտօն առաւել արժանաւոր ընծայեցաւ երբեք Աստուծոյ, և նա չեցոյց երբեք այնչափ յայտնութեամբ զմեծութիւն իւր։ Զիարդ մեծ է զօրութիւն կրօնիցս՝ որ զհարսն իշխողին հռովմայեցւոց ստիպէ թողուլ 'ի ծածուկ զառագաստն արքունական, իբրև զկին մի պռանիկ, և ընթանալ դիմել 'ի ժողովատեղն թշուառացելոց, երթալ խնդրել զՔրիստոս 'ի վերայ սեղանոյ աննշանի ուրումն վկայի, 'ի մէջ գերեզմանաց և 'ի մէջ մարդկանն՝ հալածելոց և արհամարհելոց։ Մինչդեռ խորհէի զայսոսիկ, և ահա տեսի զմի ոմն 'ի սարկաւագաց խոնարհեալ յունկն քահանայապետին, և առելով բանս ինչ 'ի ծածուկ. և տուաւ նշան. և ահա լռեցին երգք, շիջան կանթեղք, և տեսիլն այն գեղեցիկ վերացաւ յաչաց իմոց։ Մղեալ իբրև յալեաց 'ի ժողովրդենէ անտի սրբոյ՝ գտանէի զիս առ դրան գետնադամբանացն։

ՇԱԴՕԳՐԻԱՆ. վկայք։

---

## ՄԱՀ ԳԵՐՄԱՆԻԿԵԱՑ ԵՒ ԴԱՐՁ ԱԳՐԻՊՊԻՆԱՑ Ի ՀՌՈՎՄ ԲԵՐԵԼՈՎ ԶԱՃԻՒՆ ԱՄՈՒՍՆՈՅՆ

Եւ յետ սակաւու միոյ վախճանեցաւ Գերմանիկ՝ 'ի սուգ ամենայն բնակչաց գաւառին և շրջակայ ազգաց. լացին զնա ժողովուրդք և թագաւորք օտարք. զի էր նա մարդասէր յոյժ ընդ նիզակակիցս, հեզահամբոյր ընդ թշնամիս, դիմօք և բանիւք ակնածելի. զի գիտէր զմեծութիւն և զծանրութիւն բարձու իշխանութեանն 'ի չափու ունել, և 'ի նախանձուէ և 'ի գոռոզութենէ խոյս տալ։

Ցուցարկաւորութիւն նորա անշուք և առանց պատկերաց՝ փառաւորեցաւ գովութեամբ վարուցն և յիշատակաւ առաքինութեանց իւրոց։ Էին որք զդէմս նորա և զհասակ, զօրինակ մահուն և զմերձաւորութիւն տեղւոյն՝ յորում մեռաւն, ճակատագրի մեծին Աղեքսանդրի համեմատէին։ Զի երկոքեան իսկ գեղեցկադէմք, երկոքանչիւր ազնուազգիք, այն ինչ զերեսնամենիւք անցեալ՝ դաւաճանեցան յիւրեանցայնոցն 'ի մէջ ազգաց օտարաց։ Բայց Գերմանիկ քաղցրաբարոյ էր ընդ բարեկամս, բարեխառն 'ի ցանկականին, շատացեալ միով հարսանեաւք, և հայր օրինաւորաց ևեթ զաւակաց. սակայն և ոչ ընդհատ 'ի նմանէ պատերազմող, թէպէտ և ոչ իբրև զնա քաջայանդուգն, թէպէտ և խափանեալ 'ի նուաճելոյ զԳերմանիա՝ յետ հարկանելոյ զայն բազմապատիկ յաղթութեամբք։ Եթէ ինքնիշխան էր և անուն և իրաւունք թագաւորի էին նորա ; վաղու ևս հաւասարեալ էր դիւցազինն այնմիկ 'ի փառս զինուց, որում զթութեամբ և բարեխառնութեամբ և այլովքն ևս առաքինութեամբք քաջ 'ի բաց գերազանցէր։ Մարմին նորա չև այրեցեալ՝ եդաւ մերկ 'ի հրապարակի քաղաքին անտիոքացւոց, 'ի տեղւոջ ուր թաղելոցն էր։ Հաւաստիք մահադեղոյն ոչ յայտնի երևեցան 'ի նմա. գութ ընդ նա, և կանխակալ կարծիք հակառակ կամ նպաստաւոր Պիսոնի, ներհակախոհ զայնմանէ ետուն դատաստան։

Խորհուրդ արարին փոխանորդք ընդ ատենակալս՝ որ էին անդ, վասն կացուցանելոյ զոք 'ի վերայ Ասորւոց. և յերկրայս եկաց խնդիրն ընդ Վիբիոս Մարսոս և ընդ Կն. Սենտիոս, զայլովքն համառօտիւ անցեալ. յետոյ ապա տեղի ետ Վիբիոս Սենտիոսի, որ երիցագոյն էր հասակաւ և հզօրագոյնս հետամուտ իշխանութեանն։ Էր 'ի քաղաքին Մարտինա ոմն անուն կին դեղատու չարահամբաւ, սիրով սիրեցեալ 'ի Պղանկինայ։ Սենտիոս յղեաց զնա 'ի Հռովմ, ըստ խնդրոյ Վիտելլիոսի և Վե-

րանոսի և այլոց բարեկամաց Գերմանիկեայ, որոց վաղ իսկ զբօղոք և զամբաստանութիւն պատրաստեալ էր ընդդէմ նորա՝ որպէս ընդդէմ յայտնի մահապարտի։

Ագրիպպինա թէպէտ և 'ի սուգ համակեալ, թէպէտ և խօթ, սակայն չհանդուրժեալ յամելոյ վրէժխնդրութեանն՝ եւ 'ի նաւ, առեալ ընդ իւր զաճիւն Գերմանիկեայ և զորդիս իւր։ Ամենեքեան կարեկից լինէին նմա. զի տիկին վեհ էր յազգէ, ոչ 'ի բազում ամաց ինչ հարսնացեալ երջանկագոյն հարսանեօք, շուրջ երբեմն պատեալ 'ի սպասահարկուաց և 'ի մեծարանաց, բարձեալ բերելով արդ զմոխիր վաղամեռիկ առն իւրոյ, ոչ աներկևան ընդ հատուցումն արդարութեան, հոգ 'ի մտի ընդ կեանս իւր, և հէք վասն բեղնաւորութեան իսկ իւրոյ՝ որով առաւելագոյն նուագս կայր 'ի վտանգի արկածից բախտին։

Առանց ձմերայնոյ խափան ինչ նաւարկութեանն Ագրիպպինայ արկանելոյ՝ եհաս նա 'ի Կորկիւրա կղզի, որ կայ հանդէպ Կալաբրիոյ. և եղև անդ զաւուրս քանի մի, սփոփել յանհանդուրժելի տրտմութենէն։ Ի լուր դարձի նորա, մտերիմ բարեկամք և զօրականք՝ որք զինուորեալն էին Գերմանիկեայ, և անծանօթք իսկ բազումք 'ի մերձակայ քաղաքաց, կէսք առ 'ի հաճել զկեսար, և յոգունք և նոցին հետևելով, դիմեցին 'ի Բրունդուսիոն, ուր մօտագոյնն էր և ապահովագոյն մատոյց նաւաց 'ի ցամաք։ Ընդ երևել նաւատորմին 'ի հեռուստ՝ ոչ միայն նաւահանգիստ և ծովեզր, այլ և պարիսպք և տանիք և ուստ ուստեք նշմարէր ծով ծածկէին յամբոխէ, որք 'ի սուգ տրտմութեան հարցանէին միմեանց, լռելեայն թէ աղաղակաւ ցնծութեան ընդունել զեկաւորն։ Եւ մինչդեռ խորհէին որպէս հիւրընկալել զնա, մատեաւ նաւատորմն մեղմով 'ի նաւահանգիստ անդր, ոչ զուարթ թիավարելով ըստ սովորութեան, այլ սուգ ամենևին ազդելով։ Եւ յելանել նորա 'ի նաւէ անտի ընդ երկուս որդիս իւր, աչք 'ի խոնարհ, բարձեալ բերելով զա-

Digitized by Google

փոքր ահինակիր, բարբառ հեծեծանաց յամենեցունց լսելի լինէր, և ոչ զազգականաց կամ զօտարաց, զարանց կամ զկանանց մարթ էր խտրել զողբս. բայց միայն զի ուղեկիցք Ագրիպպինեայ յերկայն տրտմութենէն պարտասեալ էին, իսկ ընդ առաջ ելելոցն սաստկագոյն էր նորոգ տրտմութիւն:

Տիբերի կրկին զունդս առենականս յղեալ էր, պատուէր տուեալ ուսադանւոյն Կալաբրիոյ, Ապուլիոյ և Կամպանիոյ մատուցանել յիշատակի եղբօրորդւոյն պատմեծահանդէս: Զանխուն նորա ուսով բարձեալ բերէին հազարապետք, և յառաջոյ գնային դրօշք անշուք և խուրձք գլխիվայր: Յանցանել նոցա ընդ քաղաքս գաղթականս՝ ժողովուրդն սգազգեաց և ասպետք՝ 'ի ձև յաղթական ըստ ճոխութեան վայրացն՝ այրէին ձորձս և խունկս անուշունս, և որ այլ ինչ նուիրի մեռելոց 'ի պատս: Բնակիչք քաղաքաց իսկ արտաւղեաց գային ընդ առաջ, բագինս կանգնէին, մատուցանէին զոհս դիցն դժոխականաց, և զսուգ իւրեանց արտասուօք և կականաւ յայտ առնէին: Դրուսոս մինչև 'ի Տերրակինա եկն ընդ առաջ ընդ Կլաւդեայ եղբօր Գերմանիկոսի, և ընդ որդիս նորա որ կային 'ի Հռովմ: Մ. Վալերիոս և Կ. Աւրելիոս բդեաշխք վաղ իսկ մտեալք 'ի պաշտօն, ծերակոյտն և բազումք յոյժ 'ի ժողովրդենէ դիմեցին 'ի ճանապարհ անդր խառն 'ի խուռն, ողբս՝ առեալ իւրաքանչիւր ոք առանձինն. չէր անդ տեղի մարդահաճութեան, քաջ գիտելով ամենեցուն զխնդութիւն Տիբերի 'ի սրտէ ընդ մահ Գերմանիկեայ, թէպէտ և թագուցանէր նա զայն:

Տիբեր և Աւգոստա չերևեցան արտաքոյ, անարժան համարելով վեհափառութեան իւրեանց առաջի ամենեցուն ողբալ, և կամ զի մի՛ գուցէ 'ի զննին աչաց ամենեցուն 'ի յայտ գայցէ ողբոցն ստութիւն: Իսկ յաղագս Անտոնիայ մօր Գերմանիկոսի չգտանեմ ինչ առ պատմագիրս և ոչ յօրագիրս, զի երևեալ իցէ նա ուրեք յե-

Digitized by Google

րւելի ինչ պաշտաման, որ ընդ Ագրիպպինայ և Դրուսոսի և Կլաւդեայ յիշատակին յանուանէ և այլ ազգականք։ Թերևս առ խօթութեան արգելեալ կայր նա առտնին, և կամ առ վշտին չհանդուրժէր կալ 'ի գնին դառնութեան աղետիցն։ Այլ ինձ հաւանելի ևս թուի, Տիբերի և Ագոստոսոյ կալով յարքունիս՝ կալեալ և զնա անդ յակամայս նորա. որպէս զի հաւասարեալ ընդ նմա 'ի սուգ, մօրն օրինակաւ՝ արդարացի հանոյն և հօրեղբօր չերևել տրտմաքս։

Օրն՝ յորում ածաւ աճիւն Գերմանիկեայ 'ի շիրիմն Ագոստոսի, մերթ 'ի խոր լռութեան և մերթ յողբս և 'ի հեծութիւնս էանց։ Փողոցք քաղաքին լի 'ի խռանէ, և ջահք բիւրաւորք ընդ դաշտն Արէսի բորբոքեալ. զօրականն 'ի զէնս, աւագանին մերկացեալ զօրէնս պատուոյ, ժողովուրդն կարգեալ ըստ ցեղից, գոչէին. Անկաւ ընդ Գերմանիկեայ հասարակապետութիւնն. չիք ոչ ևս նմա յոյս կանգնելոյ։ Որպէս զի 'ի սաստկութենէն և 'ի համարձակութենէ բողոքոյ նոցա թուէր ոչ ևս յիշել նոցա զտեարս իւրեանց։ Սակայն ոչ ինչ այնպէս կարեվէր եհար զՏիբեր, որպէս զգուէ և զմածուցանս ժողովրդեան ընդ Ագրիպպինա. զի կոչէին զնա փառս հայրենեաց, հարազատ արիւն Ագոստոսի, միակ նախատիպ նախնեացն առաքինութեան։ Եւ զաչս 'ի վեր ամբարձեալ հայցէին 'ի դից պահպանել զորդիս նորա, և երկարակեացս առնել զնոսա քան զհալածիչս նոցա։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

## ՅԱՐՁԱԿԵԼ ՆԵՐՈՒԵԱՆՑՆ Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱԿԻՆ ԿԵՍԱՐՈՒ ԵՒ ԱՐԿԱՆԵԼ ՇՓՈԹՍ Ի ՆՄԱ

Ի նմին ժամանակի այրուձին մեր և մեկնաղէն հետևակամարտք, զորս ընդ առաջին վաներալն 'ի յարձակմանէ թշնամեացն լինել ասացաք, մինչդեռ 'ի ճամբարն ապաստան գային, թշնամեացն պատահեալք՝ անդրէն ընդ այլ կոյս փախուստ խնդրէին. և ռամիկսպասք զօրականին՝ որ 'ի յետոյս դրանէ ճամբարին և 'ի գլխոյ բլրոյն տեսին զմերսն յաղթողս անցեալս ընդ գետն, ելեալք 'ի դուրս յառ և յապուռ, իբրև դարձան հայեցան, և զթշնամիսն 'ի բանակս մեր տեսին երթևեկեալ, շտապ տագնապաւ 'ի փախուստ աճապարէին: Անդէն և որոց զկարասին բարձեալ գային՝ ելանէր աղաղակն և մանչիւն, և այլք այլուր զարհուրեալ խուճապէին: Յայսմ ամենայնէ խռովեալ այրուձին Տրեվիրեան, որոց առ գալլիացիս նշանաւոր է համբաւ քաջութեան, և 'ի քաղաքին 'ի Թիկունս առաքեալ եկեալ էին առ Կեսար, իբրև տեսին զբանակետղն մեր լցեալ 'ի խուռնէ թշնամեաց, զգունդսն հարստահարեալս և գրեթէ պաշարեալս, զռամիկսպասսն, զհեծեալս, զպարսաւոր Նումիդացիս այսր անդր ցրուեալս և ընդ բնաւ կողմանս հեղեալս 'ի փախուստ, յուսահատ եղեալ 'ի մերոց իրացս՝ խաղացին գնացին 'ի տուն, պատմեցին 'ի քաղաքին թէ Հռովմայեցիք վանեալ գձձեալ 'ի պարտութիւն մատնեալ, և ճամբար նոցա և կարասին 'ի բուռն անկեալ թշնամեաց:

Կեսար՝ յետ սրտապնդելոյ զգունդն տասներորդ՝ ընթացեալ յաջ թևն, իբրև ետես զի իւրքն նեղեալ տագնապէին, և ամենեցուն 'ի մի վայր յարձակելոյ՝ երկոտասան գնդին զօրականք խռնեալ կուտեալ՝ խափան

լինէին միմեանց 'ի կռիւ. ամենայն հարիւրապետք գնդին չորրորդի կոտորեալք էին, և նշանակիրն կորուսեալ զնշանն, ինքն սպանեալ. այլոց ևս խմբից զրեթէ ամենայն հարիւրապետք՝ էր որ վիրաւոր, էր որ սատակեալ. ընդ որս և նախաշտէն Պ. Սեքստիոս Բակուլոս այրն կորովի, քաջուժ և հաստոյր վիրօք հարեալ՝ մինչ չզօրել յոտին կալ, և այլքն յուլացեալ. և ոմանց 'ի նորամտից դասալիք եղեալ 'ի կռուոյն ելանէին և 'ի զինուց խուսափէին. Թշնամիք՝ ոչ 'ի դիմաց կուսէ 'ի ստորէ դադարէին դիմել, և ոչ յերկոցունց կողմանց յաջմէ և յահեկէ 'ի վերայ երթալ, և յանձկի և 'ի կարւող կայր գործն, և չգոյր ուստեք օգնութիւն առաքելոյ, անդէն 'ի նորամտից անտի զմիոյ զինուորի զվահանն հանեալ, — զի ինքն առանց վահանի էր անդր եկեալ, — ընթացաւ յառաջին ճակատն. և յանուանէ ձայնեալ զհարիւրապետսն, և առ այլ ռազմականսն խրախոյս հարեալ, զդրօշ տալ միահամուռ հրաման ետ, և զջոկատսն անօսրել, զի դիւր լինիցի սուր 'ի գործ արկանել: Նորա գալստեամբն խրախուսեալ զօրուն և 'ի յոյս արծարծեալ, զի իւրաքանչիւր ոք և 'ի տագնապի իւրում ջանայր գուն գործել առաջի զօրագլխին, նահանջեցաւ փոքր մի թշնամեացն բռնութիւն:

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. *Յիշատակարանք*:

---

### ՀՌԱՄԻԶԴ ՀԱԼԱԾԻ ՅԻՒՐՈՑՆ

### ԶԵՆՈԲԻԱ ԿԻՆ ՆՈՐԱ ԽՈՑԵԱԼ Ի ՆՄԱՆԷ ԿԱՐԵՎԷՐ

### ՓՐԿԻ ՄԱԶԱԳՈՒՐ

Ոչ յայլ ինչ գոյր Հռամիզդայ ապաստանել, բայց յերագութիւն երիվարացն՝ որ զերծուցին զնա հանդերձ կնաւն:

Digitized by Google

Բայց կին նորա յղի էր. և 'ի սկզբան անդ յերկիւղէ թշնամեաց, և վասն սիրոյ առն իւրոյ բուռն արար անձին առ ժամն 'ի փախուստ. այլ ապա յանդադար արշաւասոյր ընթացից անտի ձգտեալ ընդերացն՝ աղերս արկանէր առն իւրում, փրկել զինքն 'ի թշնամեաց գերութեան ոչ անխափանական մահու: Գիրկս արկանէր նմա Հռոմիզդ, սփոփէր զնա և քաջալերէր զառաջինն. մերթ ընդ առաքինութիւն նորա զարմանայր, և մերթ կասկածէր թէ գուցէ 'ի մնալն կենդանի՝ անկցի 'ի ձեռս այլոց. յետոյ ապա ձգէ զսուսեր, հարկանէ զնա, և ձգեալ յերր Երասխայ, աւանդէ զետոյն՝ զի մի և դիակն նորա բարձցի յաւմեզէ. իսկ ինքն ձիաթափ հասանէ 'ի Վիրս 'ի հայրենիսն իւր թագաւորութիւն: Բայց Զենոբիա, զի այս անուն էր կնոջն, հեզիկ ծփանօք ընդ եզերս զետոյն ածի յալեաց, զկենաց շնչոյ դեռ ևս բերելով զնշանակ: Զօր ածեալ հովուաց, և 'ի վայելչութենէ զիմաց նորա ծանուցեալ՝ զի չէր յաննշանից ոք, առեալ դատեցին զվէրս նորա, արկեալ 'ի վերայ ըստ գեղջէիցն հայթայթանաց սպեղանիս. և լուեալ զանուն նորա և զանցսն՝ ածին զնա յԱրտաշատ: Եւ անտի հասարակաց խնամովք ածաւ առ Տրդատ, և սիրով 'ի նմանէ ընկալեալ յանձնանձէր դշխոյաբար:

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք:

---

## ՊՈՒԼՓԻՈՆ ԵՒ ՎԱՐԵՆՈՍ, ՄԻՄԵԱՆՑ ՈՍՈԽՔ, ԻՐԵՐԱՑ ՆՊԱՍՏ ԼԻՆԻՆ Ի ՄԱՐՏԻ

Էին 'ի գնդի անդ արք քաջք հարիւրապետք երկու յառաջադէմք 'ի վերագոյն կարգս, Տ. Պուլփիոն և Լ. Վարենոս: Անսպառ հակառակութիւն էր 'ի մէջ նոցա՝ ո՛ քան զո՛ նախապատիւ իցէ, և զամենայն ամս կազէին

զաստիճանէ ոխերիմ գժտութեամբ։ Յորոց Պուլփիոն, մինչդեռ մարտ սաստիկ էր զպատնիշօքն. Զի՞ կաս, ասէ, վարանեալ, Վարենէ, կամ որո՞ւմ տեղւոյ ակն ունիս զքաջութիւնդ ցուցանելոյ. օրս այս դատ արասցէ զմերոց պայքարաց։ Զայս ասացեալ՝ ելանէ ըստ պատնէշն 'ի դուրս, և յոր կոյս թանձրախուռն երևէին թշնամիքն՝ անդր արշաւէ։ Եւ ոչ Վարենոս յայնժամ մնայ 'ի պատնիշին, այլ զանգիտեալ յամբոխին դատաստանէ, զկնի ընթանայ՝ դոյզն ինչ 'ի բացուստ։ Պուլփիոն արձակէ զաշտեայն 'ի թշնամիսն, և զոմն 'ի խուռնէ անտի զյառաջամարտ նահատակեալ՝ հարեալ վիրաւորէ. յորոյ խոցելն և յանշնչանալ՝ վահանօքն ծածկեալ պահեն զնա թշնամիքն, և 'ի նա առհասարակ լինին նետաձիգ, և ոչ տան թոյլ՝ ընդ կրունկ դառնալոյ։ Հարկանի թափանցանց վահան Պուլփիոնի, և երեքթևեան մի եռասայր՝ վարի 'ի գօտին։ Այս դիպուած խախտէ զպատեանս սուսերին, և 'ի ջանալ իւրում ձգել զսուրն՝ արգելու զաջն, և պատին անդ զնովաւ թշնամիքն։ Ժամանէ նմա 'ի թիկունս հակառակորդ իւր Վարենոս, և օգնէ վտանգելումն։ Նոյնժամայն խուժանն ամենայն թողեալ զՊուլփիոն դառնան 'ի սա։ Համարին զնա խոց վիրաւոր երեքայրիւն։ Բայց անդր արագ հասանէ թրովն Վարենոս, և 'ի մօտուստ պատերազմեալ և սպանեալ զմի 'ի նոցանէ, զայլսն փոքր մի ընկրկէ։ Յօժարագոյնս շահատակեալ անդ, և անկեալ 'ի խորափիտ մի, և 'ի թշնամեաց պաշարեալ, հասանէ նմա Պուլփիոն յօգնականութիւն. և երկոքին ողջք անարատք՝ զբազումս կոտորեալ, մեծաւ գովութեամբ դառնան մտանեն 'ի պատնէշն։ Այսպէս հոլովեաց բաղդն զսոսա զերկոսեան 'ի պայքարի և 'ի գուպարին, զի միմեանց ոսոխք՝ իրերաց նպաստ լինիցին, և ոչ հնար լիցի ընտրել՝ ո՛ քան զո՛ նախամեծար թուիցի քաջութեամբ։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. *Յիշատակարանք*։

Digitized by Google

## ԿՈՐԾԱՆԵԼ ՃՈՒՐՋ ՏԵՍԱՆԵԼԵԱՑ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻՑ ԵՒ ԹԻՒՐԱՒՈՐԱՑ ՓԻԴԵՆԱՑԻՈՑ ԿՈՐՆՉԵԼ ԸՆԴ ՆԱՎԱԻ ԿԱՄ ՎԻՐԱՒՈՐԵԼ

Առ բռնչխութեամբ Մ. Լիկինեայ և Լ. Կալպուռնեայ արկածք իմն յեղակարծ պատահեցին, հաւասարք աղետից ահագին պատերազմաց, 'ի միում վայրկեան ժամանակի սկսեալ և կատարեալ։ Առիլիոս ոմն՝ 'ի ձերբագատ զարմէ սերեալ, կառույց մերձ 'ի Փիդենա շուրջ տեսանելեաց տեղիս՝ առ 'ի հանդէս ածել անդ զտեսարան սուսերամարտից. այլ ոչ հաստահիմն զայն պատրաստեալ, և ոչ զպահանգս փայտակերտիցն քաջ ամրացուցեալ. զի ոչ յառատաձեռնութենէ և ոչ 'ի փառասիրութենէ շնորհս ունելոյ առ ժողովրդեան, այլ յանարգ շահասիրութենէ եկեալ էր յայն։ Անդր գունդագունդ դիմեցին զբօսասէրք, առ ինքնակալութեամբն Տիբերի յայսպիսեաց զբօսանաց վրիպեալք, արք և կանայք յամենայն հասակէ, առաւել ևս վասն մերձաւորութեան տեղւոյն. վասն որոյ ծանրագոյն եղեն աղէտքն։ Ծայրալիր 'ի խառնէ շինուածն մեծ, լուծեալ անկաւ ներքոյ և արտաքոյ, և զանթիւ բազմութիւն մարդկանն՝ որ զբաղեալ էին 'ի տեսիլն և որք անդ շուրջն կային՝ արկ ընդ իւր համակործան և ընդ աւերակօքն ծածկեաց։ Որք միանգամ անդէն և անդ փչեցին զոգիս, զերծան՝ որպէս 'ի հանգոյն աղէտս մարթ իցէ՝ 'ի չարատանջ մահուն տառապանաց. Թշուառագոյն այնոքիկ գտան, որ խեղեալ և կարեվէր՝ ոչ զրաւեցան 'ի կենաց. որք 'ի տուէ յերեսաց և գիշերի 'ի հեծեծանաց զկին և զորդիս իւրեանց ճանաչէին։ Վաղ և այլք 'ի գոյժ չարեացն անդր հասեալք, էր որ զեղբայր իւր, էր որ զազգական և էր որ զծնողս իւր ողբայր։ Նոքին իսկ՝ որոց բարեկամք և

Digitized by Google

ազգականք վասն այլոց իրաց երթեալ էին, չէին զերծք յերկիւղէ. զի չև ծանուցեալ ոյք ոմանք հարեալ էին յարկածիցն, առաւելագոյն խէթք կասկածանաց յանձախէին զարհաւիրս։

Իբրև սկսան զաւերական տեղել, խուռն ընթանային ամենեքեան 'ի վերայ անշնչացեալ մարմնոց՝ գիրկս արկանել նոցա, համբուրել զնոսա. և ոչ սակաւ անդ 'վէճք լինէին վասն որոց եղծեալ էր կերպարան, և որոց դէմք և տիք երկբայելի առնէին զճանաչումն։ Յիսուն հազար ոգիք գտան անդ ընդ խեղեալ և ընդ ճմլեալ. և ծերակոյտն ետ վճիռ մի ևս ումեք, որոյ չիցեն հասք ամի ամի չորեքարիւր հազար սեստերտից, զսուսերամարտ 'ի հանդէս ածել, և մի՛ շուրջ տեսանելեաց կայս կառուցանել՝ առանց հաստատութեան տեղւոյն այց և խնդիր լինելոյ։ Ատիլիոս վտարեցաւ յաքսոր. և անկելոցն ընդ յեղակարծ արկածիւն՝ բացան տունք աւագանւոյն, և վիրաբոյժք և սպեղանիք ամենեցուն մատուցան։ Եւ թէպէտ տխրատեսիլ յաւուրսն յայնոսիկ էր քաղաքն, այլ զնախնի դարերոյ բերէր զնմանութիւն, որք յետ մեծաց պատերազմաց առատաձեռն խնամովք դարման վիրաւորացն մատուցանէին։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

---

## ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆ ՓՐԻՊՈՒՐԿԱՑ

Ո՛ն ականկառոյց լեալ յառեցէք այսր զաչս. ահաւորագոյն իմն պատրաստի ինչ քան 'ի Ռոքռոա ընդդէմ Գոնտէի իշխանին. և 'ի փոքր հանդիսի քաջութեան առաքինութեան նորա՝ հանդերձի պատերազմն սպառել

թափել զամենայն հնարս իւր և զամենայն զօրութիւն։ Զինչ այս իցէ որ աչացս՝ լինի յանդիման. չեն մարդիկ ևեթ զաւակաց խմբեալք 'ի պատերազմ, այլ լերինք անմատոյցք, այլ խոխոջք և վէմք սառի, և անտի անտառ անանցանելիք, որոց յառաջ իւր ճահիճ, և յետուստ կուտէ վտակք ջրոց, պատնէշք նշանակերպք. ընդ ամենայն անդիս ամուրք բարձրացեալք և մայրիք հարեալք ընկեցեալք յանցս առակալի ճանապարհաց, և 'ի միջի անդ՝ Մէհափ իւրովք ախոյանարձակ նահատակօքն պաշտերացուցեալ՝ փակեցեալ ընդ այնքան յաղթութեանս և ընդ տասանց փրկչաբերկաց, Մէհափ՝ զոր ոչ ոք եաես ընկրկեալ 'ի մարտս, Մէհափ՝ զոր իշխանն Գանտէի և արթունն Թիւուէն՝ ոչ երբեք ըմբռնեցին յանդգնաստս 'ի զեղծի օրինաց մարտի, և զվկայութիւնս զայս մեծ եռունեանս, թէ չիք նորա ընտաւ կորուսեալ և ոչ վայրկեան մի օգտամատոյց, և միշտ կանխեալ կալեալ զառաջս ուշոյ նպատակի իւրեանց, որպէս թէ անդէն իսկ 'ի խորհուրդս նոցա գտեալ։

Արդ տատանոր զաւուրս ութ և 'ի չորս այլ և այլ ճակատս, որ ինչ մարթ է կրել և գործել 'ի պատերազմի՝ 'ի վեր եղևեցաւ։ Զօրք մեր՝ վատթարեալ թուէին յընդդիմամարտութենէ թշնամեաց և յահագին խոժոռութենէ վայրացն. և առ ժամս ինչ զոգ իբրև լքեալ եւես զանձն իշխանն։ Այլ իբրև զմիս ոմն Մակարէ, բազուկ իւր ոչ եթող զնա, և սիրտ իւր արի՝ պատմեալ ընդ այնքան վտանգս՝ եկն եհաս յօգնականութիւն իւր։ Իբրև այն ինչ առեալ նա միջամուխ արշաւեալ նախ հետևոտս ընդ զժուարամատոյց բարձունս, եռանդն իւր ձգեաց առաջաւ անդէն զամենայն զկնի իւր։ Տեսանէ Մէհափ զկորուստ իւր առ դրուռն. ընտիր ընտիրք զնդից նորա կան ընկեալ. զմնացորդս բանակին ապրեցուցանէ փիչէր։ Բայց յաւելցին 'ի վերայ և սաստիկ անձրևաց հոսանք, զի լիցի մեզ ամենայն արութեամբ և արուեստիւ՝ միանգամայն ընդ բազում բնութեան մղել մարտ։ Թէպէտ

և պարծանս ինչ կալցի Թշնամին ճարտար և քաջայան-դուգն, Թէպէտ և յաղթաւոր լեառն ուրեք պատնէշ ա-ծեալ վերստին պատսպարեսցի, յամենուստ հալածեալ, Թողցէ յաւար Սեպհին Անկիւնի ոչ միայն զռմբաձիգ անօթս իւր պատերազմականս և զաղխս իւր, այլ զկող-մանս Հռենոսի։

Տեսէք զիարդ դղրդի ամենայն. Փիլիպպուրկ՝ յա-ւուրս տասն յոգնս աշխատեան կայ, Թէպէտ և ձմեռն 'ի վերայ կայցէ։ Փիլիպպուրկ՝ որ երկայն ժամանակօք զերի կալաւ զՀռենոս ընդ մերով օրինօք, և զորոյ մեծն Թա-գաւորաց այսպիսի փառօք կանգնեաց զանկումն։ Վորմս՝ Սփիռ, Մայանս, Լանտօ, այլ ևս քան քաղաք անուա-նի՝ բանան զդրունս. Մէռսի ոչ բաւէ պահպանել զնոսա, և ոչ ևս երևի առաջի յաղԹողին իւրոյ։

ՊՈՍԻՒԷ. Դամբանականք։

---

## ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԱՑՒՈՑ Ի ԿԵՍԱՐԷ

Կեսար՝ իւրաքանչիւր գնդի մէջն մի առաջնակալ և զան-ձապահ կարգեաց, լինել նոցա 'ի վկայս առն առն իւրա-քանչիւր քաջութեան։ Ինքն յաջոյ Թևոյն սկիզբն արար մարտին, զի զայն կողմն Թշնամեաց ոչինչ զօրաւորագոյն տեսանէր։ Ի տալ նշանին՝ մերքն զազանաբար յարձա-կեցան 'ի Թշնամիսն։ Անդ յանկարծուստ արագապէս յառաջ զեռեալ խաղացին Թշնամիքն՝ չԹողուլ մեզ տեղի բաւական արդնընկէց 'ի Թշնամի անդր լինելոյ։ Յայն-ժամ մերքն զաշտէսն 'ի բաց ընկեցեալ՝ սուսերօք մօտ ընդ մօտ մատեան 'ի կռիւ։ Բայց Գերմանացւոց անդէն և անդ ըստ սովորութեան ասպարափակ տարաբեալ զզօ-

Digitized by Google

մարտակն, զդէմ կալան սուսերացն բանութեան: Բազումք գտան 'ի մերմէ զօրականէս, որոց 'ի ապարափակ անդր ոստուցեալ և զվահանան 'ի ձեռացն կորզեալ՝ հարկանէին 'ի վերուստ: Իբրև ճակատ թշնամեացն 'ի ձախակողմ թևոյն վանեալ և 'ի փախուստ դարձեալ լինէր, յաջակողմ թևոյն բազմութեամբ իւրեանց զմեր ճակատն անհնարին տագնապէին: Զայն տեսեալ պատանին Պ. Կրասսոս՝ որ սպարապետն էր հեծելազին, քանզի պատրաստագոյն էր քան զորս 'ի առաջին կային, զճակատն երրորդ 'ի թիկունս արձակեաց մերոցն վտանգելոց:

Զօրացաւ այսպէս պատերազմն, և թշնամիք առհասարակ թիկունս դարձուցին, և փախեան անդադար մինչև հասին 'ի Հռենոս գետ՝ քայլս իբրև յիսուն հազար 'ի տեղւոջէ անտի: Անդ նուաղունք ոմանք՝ կամ յոյժ իւրեանց յուսացեալք անկան 'ի լող անցանել յայնկոյս, կամ գտեալ մակոյկս՝ զփրկութիւն անձանց հայթայթեցին: Ընդ սոսին և Արիովիստոս գտեալ նաւակ մի կապեալ յեզր գետոյն, փախեաւ նովաւ. զայլսն՝ 'ի վերայ հասեալ մերոյ այրուձիոյն՝ կոտորեաց առհասարակ:

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. *Յիշատակարանք*:

---

## ՊԱՏԵՐԱԶՄ ԳԵՐՄԱՆԻԿԵԱՑ ԸՆԴԴԷՄ ԱՐՄԻՆԻՈՍԻ

Բայց Գերմանիկոս հետամուտ լինէր Արմինեայ ընդ առապարս. և պատեհ գտեալ՝ զօրահատոյց արար զայրուձին՝ տիրել դաշտին, ուր նոյն բանակեալ էր: Արմինիոս հրաման տուեալ իւրոցն ամփոփել մերձ յանտառն, դարձոյց զնոսա յառաջ խաղալ: Բանակն այն

Digitized by Google

անակնկալ խառնվեցոյց զայրուձին. և գումարտակք որ յօգնութիւն նոցա առաքեցան, ձգեալ ընդ գունդս փախըստէիցն՝ յաւելին զխառնակութիւնն. և մղեալ վարէին 'ի ճախճախուտ անդր ծանօթ յաղթականին, և բազմավըտանգ՝ որոց չէրն ծանօթ, եթէ չէր Գերմանիկեայ 'ի ճակատ զլեգէոնս կարգեալ: Որով առ անկեալ 'ի թշնամիս, և մերոցն խրախոյս առեալ, մեկնեցան 'ի միմեանց հաւասար մարտիւ: Եւ խաղացոյց Գերմանիկոս զբանակն յԱմիսիա, և 'ի նաւատորմ անդր՝ որով ածեալ էր զլեգէոնս՝ դարձոյց զնոսա, մասին հեծելազօրուն պատուէր տուեալ զափամբք ովկիականն ծովուն հասանել 'ի Հռենոս: Կեկինա թէպէտ և տեղեակ էր ճանապարհացն ընդ որ զզօրսն ածէր, հրամայեցաւ փութալ անցանել ընդ երկայն կամուրջ անուանեալ ճանապարհն, որ 'ի լայնատարր ճահիճս անդ յեր երբեմն արկեալ էր 'ի Լ. Դոմիտեայ. երկուստեք տղմուտք էին թանձրախառ մօրից և առուաց բազմավտանգ, և անտառք շուրջանակի զառ 'ի վեր տակաւ ամբառնային, զորս յայնժամ Արմինիոս ելից զօրօք՝ ընդ կարճոյ ճանապարհ ճեպընթացս ածեալ զնոսա անդր կանխաժաման քան զզօրս մեր ծանրաբեռինս զինուք և կահիւք: Կեկինայ վարանեալ՝ զի հարկ էր նմա և զկամուրջսն կիսաւերս 'ի հնութենէ նորոգել, և վանել զթշնամին, խորհուրդ կալաւ հարկանել բանակ առ տեղ, որպէս զի կէսք 'ի վաստակն, այլք 'ի պատերազմ ձեռն արկցեն:

Գուն գործէին խուժադուժք բեկանել զպահ մեր, և 'ի վերայ վաստակաւորացն անկանել շուրջանակի 'ի կողմանց և 'ի հանդիպոյ. խառնին աղաղակք գործաւորացն և մարտկաց: Ամենայն ինչ դժպատեհ Հռովմայեցւոց. տիղմն լպրծուտ անկայ ընդ ոտիւք, և զօրք սպառազէնք ծանրաբեռինք՝ որք և ոչ տէգընկէց 'ի միջոյ ճահճաց կարէին լինել. իսկ Քերուսկացիք սովորք 'ի մօրուտս անդ պատերազմել, յաղթանդամք, և նիզակք նոցա երկայնաձիգք հարկանել 'ի հեռուստ: Մինչդեռ լեգէոնք ըն-

Digitized by Google

կրկէսին, դիմէր զնոսա 'ի ձախողակ մարտէն զերծոյց։ Գերմանացիք յաղթութեամբն անխոհք՝ զուգիս 'ի շրջակայ բլրոց իջեալս 'ի ձոր անդր պարծուցանէին. աւար հովիւան ողողեալ և զործն աւերեալ, կրկնապատկէր զվտանգ զօրականին։ Այնքանանեարդ ամ էր Կեկինեայ զինուորութեան 'ի հնազանդել և 'ի հրամայել, յաղթութեան և արկածից փորձ, նովին և անմեհեր։ Ջմեռոււ ածեալ որ ինչ գէտք կարէին տալ, ոչ այլ ինչ խնայեաց հնարս՝ բայց արգելուլ զթշնամին յանտառի, մինչև վիրաւորք և գունդք ծանրաբեռնիւք յառաջ անցանիցեն։ Էր հովիտ երկայնաձիգ ընդ բլուրսն և ընդ ճահիճս, ուր մարթէր ճակատ անձուկ յօրդորել։ Կացոյց անդ զհինգերորդ լեգէոնն յաջմէ, և զահեակն՝ քսան և միուամբ լեգէոնի եա. Նմա դիմել 'ի պատերազմ, և սմա զհետ հատանել։

Անհանգիստ երկուստեք անցուցին զգիշերն. խուժադուժք 'ի խրախուտս կոչնոց զուարթ երգովք և ահագին գոչմամբք զառապարակայ ձորն և զձայնատուր անտառս լնուին. իսկ առ Հռովմայեցիս հրատք առկայծեալք, բարբառք ընդհատք, և զօրք այսր անդր ընկողմանեալք 'ի պատնիշին, կամ 'ի վրանս թափառականք, չկարէին տալ քուն աչաց քան թէ հսկէին։ Երազ անդոհական զարհուրեցոյց զզօրավարն. քանզի թուէր նմա տեսանել զԿուինտիլիոս Վարոս արիւնաթաթաւ 'ի ճահճաց անտի 'ի վեր ելեալ, և լսել ձայնի նորա՝ զի կոչէր զինքն, և չլինէր լսելի. այլ կարկառէր, և մերժէր 'ի բաց։ Ի լուսանալ աւուրն՝ լեգէոնք 'ի թևս անդ կարգեալք՝ առ ահի կամ առ հեստելոյ՝ լքեալ զկայս իւրեանց, փութացան անցին յայնկոյս մօրիցն և զկայ առին 'ի դաշտի։ Արմինիոս թէպէտ և կարէր անխափան 'ի վերայ յարձակել, ոչ փութացաւ. այլ յընկղմել կառաւացն խորասոյզ 'ի տիղմն և յաղմկել զօրացն շուրջանակի և 'ի դրօշուցն շփոթել կարգաց, զայն ժամ պատեհ համարեցաւ ձայն տալոյ Գերմանացւոց 'ի յարձակումն, յորժամ իւրաքան-

չիւր ոք զանձամբ պատաղեալ՝ ոչ ևս լսէր զօրավարին։ Ահա Վարոս, ահանոյն ճակատագիր դարձեալ զլեգէոնս մատնէ 'ի պարտութիւն, ասաց, և ընտրելովք զօրականին պատառեալ զռազմն, եհար մանաւանդ զձիանն, որք սահեալ ընդ երկիրն ճախճախուտ և արեամբ իւրեանց ողողեալ՝ կործանէին զվերելեալս, ցան և ցիր զհանդիպեալս կացուցանէին և առաթուր կոխէին զնոսա։ Առաւելագոյն ճիգն 'ի վերայ արծուէնշան դրօշուցն գործեցաւ, զորս չէր մարթ ածել ընդ թանձրատարափս նետից, և ոչ 'ի տղմուտն կանգնել զնոսա։ Կեկինայ՝ մինչդեռ խրախուսէր զճակատն՝ անկաւ ձին ընդ նովաւ, և ինքն յերկիր կործանեալ՝ պաշարէր 'ի թշնամեաց. եթէ ոչ լեգէոնն առաջին զդէմ ունէր նոցա։ Օգնեաց նմա ագահութիւն թշնամեաց. զի նոքա թողեալ զկոտորածն՝ զհետ եղեն աւարառութեան. և լեգէոնք զերծան ընդ երեկս 'ի դաշտ արձակ և 'ի տրամ։ Այլ և ոչ աստ զկայ առնուին չարիք. հարկ էր պատնէշս շուրջ ածել, կանգնել հողաբլուրս. և կահք և գործիք պեղելոյ զերկիր և զխիզարգոյս հատանելոյ կորուսեալ էին առաւելագոյն մասամբ. ոչ ևս գոյին ոչ խորանք զօրականին, և ոչ դարմանս վիրաւորաց. զպարէնս շաղախեալս 'ի տիղմ և յապաժոյժ բաշխէին 'ի կերակուր։ Արհաւիրք աղետաւոր գիշերոյն, և բիւրաւորաց առ վաղիւն պատրաստեալ վախճան՝ ընուին զբանակն ողբովք։

Մի յերիվարաց յայնժամ ըստ դիպուածոյ կապակոտոր, և 'ի շուինդն ամբոխին զահանդեալ փախստական, և առաթուր զոմանս 'ի հանդիպելոցն սատակեալ, սարսափ այնպիսի 'ի զօրսն էարկ, իբր թէ Գերմանացւոց 'ի վերայ իւրեանց հասեալ, զի դիմեցին առհասարակ 'ի դրունս, մանաւանդ 'ի տասանորդականն հեռի 'ի թշնամւոյն և ապահովագոյն։ Կեկինայ 'ի վերայ հասեալ՝ զի ընդունայն արհաւիրքն էին, և ոչ կարացեալ ոչ սաստիւք, ոչ աղերսանօք և ոչ զօրութեամբ՝ զդէմ ունել խափանել զզօրականն, առ սեամս դրանն անկաւ տա-

բածեալ, արկանել անցից նոցա խոչ՝ զգթութիւն, զի զմարմին զօրավարին հարկ էր նոցա առ ատն կոխել. և հազարապետք զօրացն և հարիւրապետք փարատեցին զատարապարտ երկիւղ նոցա։

Յայնժամ 'ի հրահանգարան անդր բանակին զզօրսն ժողովեալ, և հրամայեալ լռութեամբ կալ 'ի լուր, ազդարար նոցա որ ինչ ժամանակն և հարկ պահանջէին, զի 'ի զէնս եւեթ էր նոցա փրկութիւն. այլ իմաստութեամբ զայնուիկ պարտ էր 'ի կիր արկանել, զի պարտ էր նոցա կալ 'ի բանակին, մինչև թշնամիք յուսով զբուամբ ածելոյ զայն՝ հուպ մատիցեն, և յայնժամ յամենայն կողմանց 'ի վերայ յարձակեալ՝ մարթիցէ ինքեանց հասանել մինչև 'ի Հռենոս. զի 'ի փախստի անդ անտառք բազումք, լինք թանձրախոռք և դժնեայ թշնամիք առաջի կային նոցա. այլ յաղթականաց Մեայր փառք և համբաւ։ Յաւել ևս յուշ ածել նոցա որ ինչ սիրելի առտընին և որ ինչ պանծալի էր 'ի զինուորութեան, լռեալ զարկածից։ Նա ապա զձիանն զօրագլխաց և հազարապետաց՝ սկսեալ յիւրոցն, ետ քաջացն 'ի մարտի անաչառապէս, որպէս զի նախայարձակ հեծեալքն լիցին 'ի թշնամիս, հետևակաց զհետ նոցա դիմելով։

Ոչ ինչ նուազ և Գերմանացիք յուսով և ցանկութեամբ և զօրավարացն տարաձայնութեամբ տագնապէին։ Արմինիոս կամէր մնալ ելանելոյ արտաքս Հռովմայեցւոց, և դարձեալ 'ի մօրուտս անդ դժուարակոխս 'ի վերայ հասանել նոցա։ Դժնէագոյն էր խորհուրդ Ինգուիոմերի, և հաճոյ խուժադուժ զօրականին, շուրջ պատել զպատնէշս զինուք, և առ ձեռն պատրաստ զյաղթութիւն խոստանայր, և գերի բազում և աւար լիուլի։ Հայապա, 'ի ծագել առաւօտուն՝ լնուն զփոսս, ոստոս 'ի ներքս ածեն, տաղտակին ընդ պատնէշս 'ի վեր, ուր նուազունք ոմանք 'ի զինուորաց դոգցեն իմն անշարժ առ ահին արձանացեալ կային։ Իբրև այն ինչ հասին կացին առ շրջապատնէշ բանակին, նշան ետ դումարտակացն

Կեկրինա, հնչեցին միանգամայն փողք և շեփորայք, և 'ի գոչիւն աղաղակի զրոհ տուեալ պաշարեցին յետկուսէ զԳերմանացիս՝ ձայն արկեալ առ Նոսա. Ոչ անտառք են աստ և ոչ ճահիճք. հաւասար է ասպարէզ և հաւասար գիք։ Կարծէին թշնամիք գտանել անդ աւար անջան և Նուաղունս ոմանս մեկնակացէնս. այլ 'ի հնչիւն փողոց և 'ի շողիւն զինուց զահի մեծի յանկարծակի հարեալ՝ խառնէին վատասրտեալք 'ի ձախողութեան, որպէս 'ի յաջողութեան էին յանդգունք։ Արմինիոս ողջ անարատ, Ինգուիոմէր կարեվէր, խոյս եառուն 'ի մարտէն, և ռամիկսպայն սրոյ եղև ճարակ՝ ցորչափ տիւն և կատաղութիւն տևեցին։ Գիշերամուտն ապա դարձան լեգէոնք. և թէպէտ առաւելագոյն վիրօք և հաւասար սովով վտանգեալք, այլ զամենայն ինչ՝ զզօրութիւն և զառողջութիւն և զլիութիւն գտանէին 'ի յաղթութեան։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

---

## ՆԵՐՈՒԵԱՆՑ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ Ի ԶՕՐԱՑՆ ԿԵՍԱՐՈՒ

Ի սոցա (Նորոց գնդաց) եկիցն այնչափ փափոխութիւն եղև իրաց, մինչև մերքն՝ ևս և անկեալքն վիրաւորք, յեցեալ 'ի վահանսն անդրէն 'ի կռիւ խիզախէին. յայնժամ ռամիկսպասքն՝ տեսեալ զթշնամիսն ահաբեկ, անզէն անգամ՝ զինելոցն 'ի դիմի հարկանէին։ Իսկ այրուձին, 'ի քերել յանձնէ զկեղտ փախստեանն քաջութեամբ, ընդ ամենայն տեղիս մղէր զպատերազմն՝ անցանել զանցանել զգնդացն մարտկօք։ Բայց թշնամեացն և 'ի յուսահատութեան անդ իւրեանց այնչափ նահատակութիւն ցուցեալ, մինչև յանկանել առաջնոցն, առ-

Digitized by Google

ընթերակայք նոցին 'ի դիտակումս նոցա ամբարձեալք՝ 'ի մարմնոց անտի նոցուն կաւէին. և 'ի տոցա անկանել և դիզանալ դիականց, մնացեալքն իբրև 'ի բլրոյ ինչ իմեքէ նետաձիգ 'ի մերան ատնէին, և զաշտէան յօդոյն յափշտակեալ՝ այսրէն տաւաքէին. զի ոչ վայրապար քաղաքացն այնպիսեաց համարելի էր՝ յանդգնել անցանել ընդ գետն լայն, ելանել ընդ բարձրաբերձ ափունսն, միջամուխ լինել 'ի գժնդակ վայրն, զորս 'ի կարի դըժուարնոց դիւրինս էր արարեալ ոգւոցն մեծանձնութիւն:

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք:

# ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

## ԲՆԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԳԱՏՈՒԷՐՔ ԱՌ ԱՏՍ

Նկարագրութիւն 'ի բանաստեղծութեան և 'ի ճարտասանութեան՝ ոչ սահմանի 'ի տալ ևեթ գյատկութիւնս իրաց, այլ կենդանագրէ զամենայն մասունս իւրին ցանկալիս պայծառ երանգովք։ Նկարագրութիւն՝ որ ոչ 'ի տեսիլ ածէ զիրն իբր ակն յանդիման, ոչ ճարտասանական է և ոչ քերթողական։ Պատմագիրք իսկ քաջք, որպէս Տիտոս Լիւիոս և Տակիտոս, պատկերս կենդանագիրս ընծայեն. զի ուր զմենամարտ Ովրատեանց պատմեն, և ուր զյուղարկաւորութիւն Գերմանիկոսի, մարթ է և նկարս կոչել և նկարագիրս զայնոսիկ։

Որչափ շռայլ է քերթող 'ի նկարագիր, նոյնչափ պարտ է ճարտասանին գոլ զգուշաւոր։ Կանոն նորա է՝ ոչ միայն յոճան դատին 'ի կիր արկանել զնկարագրութիւն, այլ զի և ամենայն մասունք նկարագրին յաւելցեն զօրացուցանել զօճանն զայն։ Որ ինչ 'ի ճարտասանական նկարագրութեան զերևակայութիւն ևեթ հաճէ, աւելորդ է և յոռի։ Այսմ օրինակ՝ նկարագիր պատուհասին Գ·աւիոսի 'ի հինգերորդումն 'ի Վերրեան ճառից։

ՄԱՐՄՈՆԹԷԼ. Տարերք Բանասիրութեան։

## ԳԱՐՈՒՆ Ի ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ի բարեբաստ նահանգիս ուր կամս, զաշխարհաց գեղածիծաղ աւուրց բերէ գարունն զնմանութիւն. զի որովք մատուցանէն և որովք խոստանայն, երկաքանչիւրովքն բերկրէ զմիտս բարեաց: Ճառագայթք արեգական ոչ են 'ի զոլորշեաց թանձունց նսեմացեալ, և չև արծարծեալք յերեւոյց բոցակէզ շեկանն, լոյս ջինջ անայլայլակ հանգչի հեզաբար զերևելեօքս առհասարակ, հանգոյն այնմ որով յՈլիմպոս ճառագայթեն դիքն լուսապսակք:

Ի ծագել ծիրանակարմիր ճառագայթից նորա ընդդարձա՝ տատանին ծառոց տերևք նորընծիւղք, հնչեն քաղցրաձայն ափունք Իլիսեայ յերգս թռչնոց, և յիմետ լերին գեղջուկ սրնգաց հնչեն արձագանգք: Եւ իբրև հանդերձի 'ի մայրն մտանել, ծածկին երկինք աստեղազարդ քօղովն, և յաւերժահարսունք Ատտիկեայ ելանեն երկչոտ ոտիւք կայթս տալ թեթևս 'ի դալարուոյ: Այլ ընդհուպ ծագէ նա անդրէն, և ոչ ևս խնդրի զոյն ցայգական և երբեկեան պայծառութիւնն. զի զոգցես իմն նոր արեգակն ընդ նորաստեղծեալ տիեզերս սփռեալ ծաւալի, և յերանգս անծանօթս մահկանացուաց գունագեղէ զարևելս: Վայրկեան 'ի վայրկեան յաւելու բնութիւնն 'ի գեղ, և րոպէ 'ի րոպէ նկարի 'ի կատարումն բոլորից էիցս ցուցակութեան գործ մեծ:

Ո՜ աւուրք գեղապայծառք, ո՜ գիշերք զուարճալիք. որպիսի՜ յոյզս յիս ներգործէին տպաւորութիւնքն անդուլ ազդեցեալք 'ի հէնջ 'ի զգայութիւնս իմ: Ո՜վ դիք բերկրութեանց, ո՜վ գեղ գարնայնոյ, յամենայն փառս քո տեսի զայս ամ զարդարեալ զքեզ: Դու յաղթանակաւ ընդ դաշտս Ելլադայ ճեմ առեալ, և 'ի վարսիցդ զծաղիկս քակեալ սփռէիր նոցին 'ի զարդ. և յերեւել քո 'ի հովիտս՝ հովիտք 'ի դալարագեղ 'ի մարգս փոխէին. և 'ի լերինս երևեալ քո՝ ծոթոր և թիւմ բուրէին

բերք ազգի ազգի անուշահոտութեանս. և ընդ օդս սաւառնեալ՝ զզուարթութիւն երեւացքոց անդ ծաւալէիր։ Սէր 'ի բովբաս քո գիմեալ, թօթափէր շուրջանակի զնետան հրամանաս. և երկինք 'ի նորանոց վառեալ բորբոքէր։ Ամենայն ինչ ծնանէր վերստին առ 'ի զարդարել, և ամենայն ինչ զարդարէր առ 'ի հաճոյ լինել։ Այսպէս երևեցաւ աշխարհ յեղանելն 'ի համապարփակ վհէն, 'ի բարերարաւտ պահուն՝ յորում մարդ ջացեալ 'ի պայծառութենէ օթևանին իւրոյ, և ապշեալ և հաճ ընդ գոյութիւն իւր, ոչ առ այլ ինչ թուէր ընկալեալ զմիտս՝ բայց առ 'ի ճանաչել զբարերարութիւն իւր, ոչ առ այլ ինչ զսիրտ՝ բայց առ 'ի ցանկալ այնմ, և ոչ առ այլ ինչ զհոգի՝ բայց առ 'ի նզգալ զայն։

ՊԱՐԹԷԼԸՄԻ

---

## ՀՈՎՒՒԱԿԱՆ ԿԵՆՑԱՂ

Ապողոն զհովուական յանձն էառ կենցաղ, և արածէր զխաշինս Ադմետայ արքայի։ Նուագէր նա սրնգաւ, և գային ժողովէին հովիւք առ հասարակ ընդ հովանեաւ նշդարեաց առ եզերբ ականակիտ աղբեր, 'ի լսել երգոց նորին։ Եւ որ վայրենաբարոյքն էին յառաջագոյն և անասնակենցաղք, ոչ գիտելով ինչ այլ բայց միայն դարմանել և կթել զխաշինս, կաթն կթել և մակարդել պանիր, և թուէր դաշտավայրն անապատ ամայի։ Ի սուղ ժամանակի ուսոյց նոցա Ապողոն զարուեստս՝ որ ախորժ ընծայեն զկենցաղ։

Նուագէր նա զծաղկունս՝ որովք պսակի գարուն, ըզբուրմունս՝ զոր շուրջ ծաւալէ, և զդեղ դալար՝ որ ընդ գարշապարաւք նորա բողբոջեն. Նուագէր զամարայնոյ զգիշերս հեշտալիս՝ յորս զեփիւռք զովացուցանեն մարդկան և ցօղք արբուցանեն ընծայեն ծարաւուտ երկրի։ Ցեառյր

'ի ջնուագս իւր և զմիրգս ոսկեփայլս՝ որովք վարձատրէ աշուն երկոց մշակաց, և զհանգիստ ձմերայնոյ՝ յորում զբօսանէր մանկտին պարս յօրինէ առ հրով։ Նուագէր դարձեալ զանտառախիտ լերինս և զծործորսխորաձորս, ուր գետք պատ 'ի պատ խաղան ընդ գեղածիծաղ մարգս։ Ուսոյց և ևս հովուաց՝ որ այն իցեն անապատական կենաց բերկրութիւնք՝ որոց գիտիցեն զճաշակ շնորհի անպաճոյճն բնութեան։

Հովիւք անդանօր սրնգօքն ևեթ իւրեանց գտան բաւերախտագոյնք քան զթագաւորս. և բերկրութիւնք անխառն 'ի տրտմութեանց, փախստականք յոսկեձեղուն ապարանից՝ դիմէին համերամ 'ի հիւղս նոցա. խաղք և ծիծաղք և հրճուանք զհետ երթային ամենայն ուրեք հովուհեաց անմեղաց։ Համապազօր տօնք էին նոցա. դայլայլիկք ևեթ թռչնոց լսելի լինէին առ նոսա. և քաղցրաշունչ զեփիւռք յոստս ծառոց խայտացեալք. և խոխոջք վճիտ կոհակաց 'ի ժայռից հոսեալք, և նուագք հովուաց զհետ երթելոց Ապողոնի՝ 'ի Մուսայից 'ի նոսա ազդեալք։ Նա ինքն մարզէր զնոսա յասպարիզի 'ի մրցանակ, և 'ի նետահար որսս այծեմանց և եղջերուաց։ Դիւցխոկ եղեն հովիւքն նախանձելի, և հովուականն կենցաղ թուէր նոցա քաղցրագոյն քան զփառս իւրեանց, և հրաւիրեցին անդրէն զԱպողոն 'ի վեր յՈլիմպոս։

Ուսիր, որդեակ իմ, 'ի վիպաց աստի՝ վիճակակից ընքեզ լեալ Ապողոնի. մշակեա՛ զերկիրդ խոպան. ծաղկեցո նայապէս զանապատդ. ուսո հովուացդ զգեղգեղ ներդաշնակ. ամոքեսջիր զվայրենութիւն դոցա. ցանկալի արա դոցա զառաքինութիւն. ցոյց դոցա քանի՛ քաղցր է վայելել մեկուսի յամբոխէ 'ի բերկրանս անմեղս անկապտելիս 'ի հովուաց։ Եկեսցեն աւուրք, որդեակ իմ, եկեսցեն աւուրք, յորս վիշտք և հոգք դժնդակք դարանակալք աթոռոյ՝ ցանկալի արասցեն քեզ զկենցաղ հովուական։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

## ԲՈՅՆՔ ԹՌՉՆՈՑ

Տեսչութիւն գերահրաշ 'ի բոյնս թռչնոցն արտափայլէ. չէ մարթ առանց զորովելոյ նկատել 'ի նոսա զվերնախնամ բարութիւնն, որ զապիկարն ճոխացուցանէ ճարտարութեամբ, և զթերահոգն նախահայեաց պատրաստէ:

Այն ինչ ծաղկափթիթ զարդարին ծառք, բիւրք բիւրուց արուեստագործաց ելանեն 'ի գործ. կէսք չիւղս յարդից երկայնագոյնս բարձեալ բերեն 'ի ծերպս վաղժամանակեայ որմոց, և կէսք 'ի պատուհանս եկեղեցւոյ որմեն տունս. ոմանք զձիոց գողանան բաշս, կամ զծըւէնս զգաթիցն՝ զորս ոչխար թափառական ցցանկովք մորենեաց թողու կռուեալ. և այլք 'ի բարձունս ծառոց զկրկուտսն զօրէն փայտահարաց զմիմեամբք կուտեալ կցորդեն, և այլք դարձեալ զմետաքսն մանեալ զդքոզ փչովք ոստայնանկեն: Ապարանք բիւրաւորք 'ի վեր ամբառնան, որոց մէն մի՝ դադարք են թռչնոց. և յիւրաքանչիւր 'ի նոցանէ բազմադիմի հրաշագործին այլակերպութիւնք: Զուն սպիտակափառ փոխի 'ի թռչնիկ ծածկեալ յաղուամազս. որոյ այն ինչ թևքն բուսանին, հրահանգէ զնա մայրն զխանձարրովքն սաւառնել. ապա հուպ ընդ հուպ թևածեալ դարի 'ի ծայր ոստոցին, պաբադիտել սնոտի զայն առաջին նուագ՝ զտեսիլ համագոյից. և երկիւղախառն հիացմամբ խուճապեալ անկանի առ եղբարս իւր, որոց չև ևս 'ի զնին կացեալ է տեսարանին: Այլ 'ի կոչ ծնողացն ելանէ միւսանգամ 'ի բնոյն դեռահասակ թագաւորիկն օդոց՝ բերելով դեռ ևս զգըլխոյն զպսակն մանկութեան, և յանդուգն աչօք ձկտի ընդ լայնածաւալ տարածութիւն երկնից, ընդ գագաթն մշտատատան ճօճելոյ ոստոյն և 'ի խորաձոր մարգագետինս որ առ արմամբ իւրոյ բնիկ կաղնւոյն: Եւ մինչդեռ հրճուին մայրիկք ընդունել զնորեկ հիւրն, անդուստ

թռչուն հինաւուրց՝ 'ի թողանալ թեւոցն զօրութեան՝ գայ իջանէ յափն վտակաց ջուրց, և խաղաղիկ 'ի միայնութեան անվրդով սրտիւ դէտակն ունի մահուն՝ անդ առ գետեզերբն՝ ուր երբեմն զխանդ սիրոյն գեղգեղեաց. և առ ծառովն՝ յորոյ 'ի կողերս երևին տակաւին բոյն իւր և խանձարուրք և քաղցրաձայն սերնդոցն պար:

Աստ առ տեղեաւս է նկատել և զայս օրէնս բնութեան, զի թռչնոց մանունց ըստ ազգի՝ գոյն ձուոցն է հասարակաբար ըստ միոյ 'ի ճոխագոյն գունոց արուին: Ձու սեւակտուց հաւոյն, որ զբոյն իւր դնէ 'ի դժնիկն ապխտակ, 'ի հաղարջենիսն և 'ի մացառս պարտիզաց մերոց, սեւորակ է 'ի գոյն արդիսեան քարին, յոր թիկնամէջք իւր հարկանին:

Տեսի երբեմն, որպէս յիշեմ, զբոյն մի թռչնոյս 'ի վարդենւոջ 'ի նմանութիւն խեցւոյ գաղտակրի. և 'ի նմա մարգարիտք չորք կապուտակք, և վարդ ցօղաթուրմ կախեալ 'ի վերուստ. և արուն սեւակտուց մօտ դարեալ կայր անդ անշարժ 'ի փոքրիկ թփի, իբրև զծաղիկ փողփողեալ 'ի կապոյտ և 'ի ծիրանի:

Եւ պատկեր տեսլեան նոցա ցոլանայր 'ի ջուր առ երիըճակին՝ հանդերձ արուեստատեսակ հովանեաւ ընկուզենւոյն, որ լուսաւորագոյն եւս զտեսարանն վերբերէր, և յետնկուսէ նորին ծագէր արշալոյս: Անդ՝ որպէս 'ի դոյզն պատկերի տայր մեզ Աստուածպետն զճաշակ իմն համագոյիցն գեղեցկութեան, որով պճնեացն զնոսա:

Ոչ նոյն օրէնք են և գունոյ ձուոց հաւուցն մեծամեծաց: Թուի ինձ զի թռչնոցն, որոց բազումք իցեն էգք, և որոց չիցէ գոյն փետրոց սեփական ըստ ազգի, նոցա ձուք հասարակաբար սպիտակք իցեն: Ջրայնոցն և անտառայնոց, որոց առաջինքն 'ի ծովու և վերջինքն 'ի բարձունս ծառոց դնեն զբոյնս իւրեանց, հասարակաբար հարկանին ձուքն 'ի կանաչ կապուտակային, կամ զի սպասէս տասցիս՝ զշուրջն կացելոցն իւրեանց առնուն զգոյն: Իսկ որոց 'ի բարձունս աշտարակաց և 'ի զանգա-

կատունս պատսպարէն, 'ի գոյն բաղեղան են գոյնք ձը-
ւոց նոցա, կամ կարմրակերպք ըստ գունոց որմոցն յորս
բնակեն։ Զայս այսպէս մարթ իցէ ունել հաստատութեամբ
որպէս օրէն անփոփոխ, զի թռչունք առհասարակ որ-
պաւորեն 'ի ձուս իւրեանց զնշանակ տարփանացն իւ-
րեանց և զոխպս բուսոյ բարուցն և զտարազու կենաց։

Դատ իցէ տեսանել զայն դիւրաբեկ արձան՝ առ 'ի
գուշակելոյ փոքր 'ի շատէ զազգ նորա և զսերունդ, զբարս
և զսովորոյթ և զախորժակս. և թէ ծովայրիկ արդեօք
վարէր կենցաղ բազմավտանգ, եթէ երջանկագոյն եւս
հովուական կենցաղով կեալ ճահաւորէր. վայրագասուն
էր՝ եթէ քաղաքացի, լերանց՝ եթէ մարգաց բնակիչ։
Հետախուզիցն հնութեանց մայրեաց ստուգագոյն են
գիտութեանցն հաւաստիք, քան որոց դքաղաքացն հե-
տազօտիցեն զհնութիւնս։ Կազնի կեղևեալ կամ մա-
մռապատ՝ յայտնագոյն ևս տայ մեզ իմանալ յորմէ զա-
ճումն ընկալաւ, որպէս ոչ սիւնն տապալեալ, որ չկարէ
ցուցանել զճարտարապետն որ կանգնեացն զնա։ Եր-
բումք և մահարձանք՝ են մատեանք յիշատակի վկայաց
մարդկութեան. այլ բնութիւն 'ի բուն իսկ 'ի կեանսն
տպաւորէ զիւրն զամենայն. չեն պէտք նմա ոչ քարանց
և ոչ որձաքար վիմաց՝ առ 'ի զգրեալսն յաւերժացու-
ցանելոյ։ Ժամանակն՝ որ եկեր ծախեաց զպերճ ար-
ձանագիրս արքայիցն մեմփացւոց 'ի մահարձան բրգանց
նոցա, ոչ զօրեաց ջնջել և ոչ նշանախեց մի յորոց 'ի
պատեանն ձուոյն իւրոյ դրոշմեաց եգիպտահաւն Իպիս։

ՇԱՏՈԲՐԻԱՆ. Ոգի. Քրիստոնէութեան։

## ՍԷՐ ԹՌՉՆՈՑ Ի ՁԱԳՈՒՆՍ ԻՒՐ

Ու մայրն այն կաքաւին, որ այնչափ խնամով փութայր 'ի թխել. և որ թխեացն անխոնջ, և դրդեալ սիրով զորդեակսն՝ որ չև էին նորա, չհովանեալ 'ի սիրոյն և յետ ելանելոյ նոցա 'ի ձուոց անտի. այլ տեսիլ նորեկ ծննդոցն՝ որք առ աղկաղկ տկարութեանն տակաւին են պէտս ունին խնամոց նորա՝ յաւելու և եւս 'ի նմա զսէր և զփոյթ նորանոր խնամոց: Ոչ այլ ինչ թուի նմա հոգալ, բայց զձագուցն երամ. նոցին սակս եւեթ որանէ կերակուր. և թէ չգտանիցէ երբեք, պեղէ զերկիր մագլցի, և զգիւտս զարմանոյն ջամբէ նոցա խնդութեամբ. և առ սէր նոցին ինքն մոռանիւր կայ միայ անսուաղ: Եթէ զարտուղի մոլորիցին՝ ձայն տանէ նոցա. եթէ օդք ինչ խռովիցին՝ ընդ թևօքն զնոսա ժողովէ, և կոկին թխէ զնոսա. և այնչափ հոգ և տագնապ յանձին բերէ առ աղէտ զորովոյն առ նոսա, զի հիւծեալ մաշի յայտնապէս. և դիւրաւ որոշի այնուհետև 'ի մարեաց միջի մայրն որդեսնոյց՝ 'ի խռուեալ փետրոցն, 'ի գետնաքարշ թևոցն, 'ի կերկերեալ ձայնէն և 'ի խանդակաթ զրգանացն աղջիկաղջեաց, որք առ հասարակ զմայրենի սիրոյ և զխնամոց տան ճշգրտիւ զտիպս օրինակի:

Ու ոչ միայն անձնամատաց զտանի նա առ 'ի ձագուցն պահպանութիւն, այլ և յամենայն 'ի վտանգս զինմազրաւէ 'ի նոցին պաշտպանութիւն: Եթէ յանկարծ բաղէ ընդ օդս երևեսցի, և ահա մայրն այն երկչոտ և ապիկար և 'ի փախուստ պատրաստական 'ի բնէ, առ սէր որդւոցն պնդի քաջութեամբ, խոյանայ հանդէպ ահագին ճապաուցն. և 'ի սաիչ և 'ի կատաղ և թևոցն բախմամբ ահ արկանէ զիշախանձ որսողին. որոյ պարտեալ յանկարծելի ասխէն՝ մեկնեալ 'ի բաց հեռանայ, այլուր խնդիր առնել եղեալ որսոյ դիւրագիւտի: Թուի իսկ եթէ լիով ունի հաւ զամենայն հան-

զամանս զգարեմոյն առաքինութեան. այլ զոգ ըստ-գիւտ իմն առաւելագանց սիրոյ նորա և բնութեանն այն իցէ, զի եթէ երբեք ուրեք 'ի թուխս ոք տացէ նմա զձուս հաւուց ջրասիրաց, նա զնոյն խնամս զոր առ իւր հարազատսն ցուցանէր՝ ոչ արգելու և յօտարաց անտի, այլ որպէս մայր քան թէ դայեակ դարմանէ և յանձանձէ զնոսին: Եւ յորժամ 'ի բնութեանն ազդմանէ բերեալք՝ 'ի գետ ուրեք դիմեն նոքա անկանել, և 'ի լողս գրօսանել, անդ է տեսանել զեղկելի դայեկին զվարանսն և զտագնապ և զանհնարին անձկութիւն սրտի, զի տակաւին ևս մայր զանձն համարի. փութայ ճեպի խառնել 'ի ջուր անդր զկնի նոցա. այլ յետս ընկրկեալ յանընդել տարերաց լուծական բնութեանն, յածի կածի և թափառեալ շրջի զգետափամբն, և զչողանի հարեալ յուսահատուր խուճապի. զի տեսանէ զձագսն 'ի մօտալուտ վտանգին, և ձեռն տալ և օգնել մատաղերամ որդեկացն ոչ ունի:

ԳԻՒՅՅՈՆ. Բնական պատմութիւն:

---

## ԵՐԳ ԹՌՉՆՈՑ

Են են և բնութեան ժամանակք խրախճանութեան, յորս կոչէ նա 'ի հանդէս զդասս դասս երաժշտաց 'ի ծագաց աշխարհի: Փութան ճեպեն առ նա ճարտար նուագածուք՝ երգս պաշնչելիս առեալ 'ի բերան, որք և զվերջս տաղիցն ցանգ գեղգեղելով յածին ընդ աշխարհ, և զնոյն յաճախ նուագեն նուագ դաշնակաւոր: Դեղձանիկ առլէ, ծիծառն ճչէ, և տատրակ մնչէ. նա զագար առեալ 'ի բարձրաբերձն յաստուանեաց՝ ձայն տայ ապրեկին, և ապրեակ չառնու յանձն ընկրճել բնաւ 'ի նորեկ ճարտարէն. առ պատապարեալ ընդ

հիւրընկալ յարկաւ՝ խառն հնչեցուցանէ զաւաչ բարբառոյն իւր առ Եւանդրի․ և միւսն ՚ի Թագստի կացեալ ընդ կաղնւոյն սաղարթիւք, յերկարագոյն նուագօք վուվուս արձակէ հանգոյնս հընչմանց որսական փողոյն, որ ՚ի Թաւուտս անտառաց լսիցի։ Եւ կարմրալանջն Թռչուն զուարաւորաւ կացեալ համբարանոցին, ուր և զանպաճոյճն իւր եդեալ է զբոյնիկ, ճռուողէ զերգն սուզ։ Այլ տոխակ իւրում անխայէ ձայնի, և չկամի զի ՚ի նոցայն ընկըլցի նուագս․ սպասեալ միայ ժամուն յորում լռեալ դադարիցեն այլք, և պարտ անձին համարի զերեկորին հանդիսիցն զարդարել զմասն։

Յորժամ կարապետք լռութեան գիշերոյ և վերջապահք տուընջենային աղմկաց՝ մարտ եդեալ կռուին զթիկամբք լերանց և զափամբք գետոց, ՚ի խորս անտառաց և ՚ի ծերպս հեղեղատաց․ յորժամ տակաւ լուռ լինին մայրիք, և այլ ոչ ևս տատանին սաղարթք, և ոչ ծածանին դալարիք, և լուսին յերկինս կայ, և մարդ անկնդիր է յանդորրու, յայնժամ ապա երգարանն այն արարածոց քաղցրաձայն հնչմամբ առնու նուագել զփառս Արարչին։ Գանգիւնս արձակէ նախ զուարճալից բերկրութեամբ, որ անդրէն կրկնին ՚ի լերանց․ և ահա նուագ խառնաձայն, ապա դաշն սկսեալ՝ ՚ի տաղն վազէ․ անտի յաղօտն իջեալ և անդէն ՚ի հաճոյն վերոտնէ․ կայ երբեք և դադարէ, և դարձեալ առնու յուշիկ նուագել, և միւս ևս անգամ ուժգին խանդիւ ճռուողէ․ երբեմն նորա արբեալ է ուրախութեամբ, երբեմն նորա բարբառէ սիրոյն ուժգնութեամբ։ Անդէն և անդ նուագի ձայն նորա, և լռէ խօսնակն․ այլ վերստին առնու զայլ իմն յեղանակ նոր և զեղեցիկ։ Է զի ողբերգական հնչէ նուագ թալացեալ և յեղյեղուկ․ և է զի միաձայն յեղանակաց զնոյն նը-ւագս սզերգէ, ըստ վաղեմի ազգացն անպաճոյճ և թախծագին երգարանութեանց։ Բազում անգամ և տրտմութեան է երգն տարացոյց, և ոչ ուրախութեան

միայն. զի ահա երգէ և որդեկորոյսն Թռչնիկ, և յեղանակն նոյն է, յեղանակ սրտախռովութեան. զի և չիք նորա այլ յեղանակ. սակայն քաղցրանուագ արուեստին գոլով զմատն ևեթ փոխէ երաժշտին և սրտախռովութեան նուագքն 'ի ցնծերգականս փոխին և յողբականս:

Որք անծանօթք են կամին զմարդ և կապանել զնա յիշխանութենէն՝ զոր ստացեալ ունի նա 'ի վերայ արարածոց, կամին իմն յայտ առնել Թէ չիք ինչ յաշխարհի որ վասն նորա իցէ արարեալ: Նա ահա, օրինակ իմն, Թռչնոցն քաղցրաձայնութիւնք այնպէս հնազանդին մարդկեղէնս լսելեաց, զի Թէպէտ և 'ի բաց վանիցեն յանտառաց զհիւրոդ, և զգոյնս նոցա յաւարի տանիցեն, և զնոսա հալածական առնիցեն, և զինուք և Թակարդիւք վէրս 'ի վերայ դնիցեն, հարկանել հարկանեն զնոսա անհնարին ցաւովք, այլ լռեցուցեն ոչ բնաւ: Քանզի նմին հակառակ, հարկ 'ի վերայ կայ նոցա հրամանաց Արարչին կամակատար լինել: Ի գերութեան մեք ունիմք զնոսա, և նոքա յլնուն զտունս մեր երգոցն նուագօք: Այսպէս ուրեմն և 'ի ցաւս անգամ զտանջին դաշնակութիւնք. ո՞չ ապաքէն և ամենայն այր տառապեալ յօժարամիտ յերգս իցէ: Նա համառօտ՝ Թող հաւորսն անագորոյն՝ խծական ճարտարութեամբ բրեսցէ զաչս սոխակին. նա և ևս քաղցրաձայն գեղգեղեսցէ զերգս իւր: Նորա այս օդապար Հոմեր՝ երգովք զկեանսն պահարէ, և զգեղեցկագոյնս 'ի տաղից իւրոց 'ի խաւարել ականողեացն յօրինէ...:

Այս հաւիկ գըբիտոռնէին բերէ 'ի կենցաղումս զճշգրիտ օրինակ. հանգոյն նմին միայնութեան է սիրող՝ քան աղմկաց աշխարհի, և երկնից՝ քան Թէ երկրիս ըղձակերտ, և 'ի ձայն բարբառոյն բարերանէ անդադար զքանչելիս Արարչին:

ՇԱՏՈՒԲՐԻԱՆ. Ոգի Քրիստոնէութեան:

Digitized by Google

## ՁՈՒ ԿԱՄ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹՌՉՆՈՑ

Մինչ կէսք 'ի համագոյից անշարժք 'ի կայից իւրեանց հաշակեն հանապազօր գոլութեամբ զԱրարչագործին մեծութիւն, այլք ընթանան քարոզք պանչելեաց նորա։ Սուրան ընդ օդս իբրև սուրհանդակք, սահին ընդ ջուրս, վազեն ընդ լերինս և ընդ ձորս։ Են որք 'ի թևս գարնայնոյ եկաւորեալք, և ընդ քաղցրաշունչ օդոց մեկնին տարագնացք՝ դաւառէ 'ի գաւառ զանկայուն հայրենիսն շրջեցուցանելով. այլք 'ի բնակութիւնս մարդոյ դադարեն. պանդուխտք տարաշխարհիկք՝ զվաղընջուց ժամանակաց աղերսեն զհիւրասիրութիւն։ Իւրաքանչիւր ըստ թելադրելոյ բնութեանն ընտրէ զիւր դադար. կարմրալանջն իջանէ 'ի հիւղս. ծիծառնիկ՝ դուստր թագաւորի՝ զդրունս պալատանց բախէ. Թուի տակաւին սիրող լինել մեծութեանց, այլ տխուր մեծութեանց՝ ըստ իւրոյ բաղդին. անցուցանէ զամառնն յաւերակս Վերսայլի, և զձմեռնն 'ի Թեբէ։

Չև ծիծառնն անհետացեալ, այլ խումբ գաղթականաց յառաջէ գայ 'ի թևս հողմոց հիւսիսի, փոխանակել զուղևորեալսն ընդ հարաւ՝ զի մի՛ երբեք ամայասցին դաշտորայքս մեր։ Ի մուայլին աւուր աշնայնոյ, երբ հիւսիսի շնչէ ընդ արտորայս, և մայրիք մերկանան 'ի սպառ և 'ի յետին տաղարդուցն իւրեանց, խումբ մի բադից վայրենեաց տողեալք համայն ըստ կարգի՝ անցանեն անշշունչ ընդ տխրամած երեսս երկնից, և ուր ուրեք նշմարեն 'ի բարձանց օթեվան գոթացի՝ մացառօք և լճիւք շրջապատեալ, անդ է տեղի իջեվանի նոցա. և սպասեալ գիշերոյ՝ զգաղթամբք մայրեացն ըլորտս առնուն. և այն ինչ զոլորշիք երեկորեայք ծածանին 'ի հովիտսն, երկայնաձիգ ուլանց կարկառմամբ՝ փութանակի մերձին յալիս՝ զջուրսն հնչեցուցանելով. և զխորին լռութիւնն լուծեալ՝ միաձայն

աղաղակաւ զեղտիւրսն գոչեցուցանեն։ Եւ յաղօտ նըշոյլ ճրագի՝ զոր թէ տեսանիցեն նշողեալ ընդ անձուկ լուսամուտ միոյ ուրուք յաշտարակաց, ընդ ստուերախառն շամբս յորմունս անդր մատուցեալ հիւրքս առահաւորդք, բարախմամբ թեւոց և կարկաչմամբ՝ խառն ընդ շառաչուկ հողմոց և անձրևաց՝ ողջունեն զօթեվանն մարդկան ընկալուչ։

Մի է 'ի գեղանի բնակիչս առանձնոցացդ կոչեցեալն մարի ջուրց, պանդխտական ոչ յոյժ 'ի հեռատանէ, որ յեզերս պուրակաց երևեալ՝ մխի սուզանի 'ի բաւիղս նոցին, մերթ երևեալ և մերթ ծածկեալ. արձակելով մնչիւն իմն նուրբ և խժական, զգնայ ընդ խրամս գղեկաց։ Ախորժէ դարել 'ի նշանական քանդակեալս յորմս. յորս 'ի կալն անշարժ, սևաթոյր փետրովքն և կնիքն սպիտակադրոշմ 'ի գլուխ, թուի իմն թռչուն դրոշմաւոր անկեալ յառապարէ վաղեմի ասպետի։ Ի մօտել գարնայնոյ՝ մեկնի յանծանօթ աղբերակոյս, ուր արմատ ունենայ փապարեալ 'ի ջուրց՝ ապաւէն է նմա, յորում ծածկի անտես յաչաց։ Լօռք, մամուռք և ձարխոտք ջրայինք կախին զդուռովք նորա իբրև զկերպաս դալարեաց. կոտեմ և տայն պատրաստեն նմա խորտիկ քաղցրաճաշակ. մեղմաձայն կարկաչ ջուրց դըղչեն յունկն նորա. զեռունք գեղեցկատեսիլք զաշոն պարարեն, և յաւերժհարսունք վտակաց՝ առ 'ի պարածածկել զդեռածին մայրն՝ անճեցուցանեն զնովաւ զաղեկասս շամբից՝ պատսպարեալս յար ծիրանի։

Ի հիւսիսական եկաւորաց տարի՝ են որոց ընտելացեալ բարուց մերոց՝ հրաժարին վերադառնալ 'ի հայրենիս. կէսք իբրև զհամհարզս Ոդիսեայ գերեալք 'ի ճաշակոյ քաղցրութեան պտղոց, և այլք որպէս զդատալիք փախստեայս 'ի նաւացն Գուքայ՝ ըմբռնեալք 'ի հրապոյրս հեշտանաց, յորոց և արգելեալ դադարեն 'ի կղզւոջ աստ բարեանց. այլ բազում այնք են որք յետ ամսոց ինչ բնակակցութեան՝ մեկնին առ 'ի մէնջ յե-

ցեալք 'ի Թևս հողմոց և մրրկաց, որոց զյատակութիւն ալեացն պղտորեալ դիւրամատոյց առնեն Նոցա զորսն, որ 'ի պայծառութեան ջուրցն խուսէր և ծազապրէր 'ի Նոցանէ: Քաղցր և սիրելի են Նոցա վայրք անծանօթք, և յածին ընդ ոլորտս երկրի շուրջ եկեալ ընդ ամայիս:

Այլ ոչ միշտ երամովին գան յայցելութիւն բնակութեանց մերոց. է զի զոյգ հիւրոց գեղանեաց՝ սպիտակք իբրև զձիւն, եկաւորեն ընդ եղեման. և 'ի միջի իջանեն 'ի վայր բացարձակ, ուր չիցէ հնար մատչել առ Նոսա անտեսաբար. և ժամս ինչ հանգուցեալք՝ ծփարին վերստին յամպս: Փութամ երթ 'ի վայրն ուստի մեկնեցանն, և ոչ գտանես՝ բայց փետուրս ինչ՝ միակ նշանակս անցից Նոցա, զորս հողմն ած տարաւ վաղվաղակի. բարեբաղդ սիրելին մուսայից, որ հանգոյն կարապանց վերացեալ յերկրէ, ոչ ինչ Թողլով յիւրոցն նշխար յիշատակի՝ բայց զփետուրս ինչ 'ի Թևոց իւրոց:

Ըստ պատշաճի յարմարութեան համագոյից բնութեան կամ ըստ օգտի մարդկութեան՝ սահմանին ազգի ազգի կենդանեացն տեղափոխութիւնք: Թռչունք 'ի մրրկալից ամիսս երևեալք՝ տխրաձայնք են և դըժնեայք բարուք, հանգոյն եղանակին յորում երևին. ոչ գան զի լսելի լինիցին՝ այլ զի լուիցեն. Նա և 'ի խուլ մռնչիւնս մայրեաց է ինչ որ հեշտացուցանէ զլսելիս: Որք զլերկ գագաթունս իւրեանց ճօճեն տրտմութեամբ մայրիք, միայն հանգրուանք են տխրերանգ հաւլիցն, որ գան ձմերել 'ի միասին, որոց գոն պահանորդք և յառաջապահք: Բազում այն է զի ագռաւ հարիւրեմեան, հինաւուրց Սիբիլլս անապատի, ուրոյն միայնակ դարեալ Նստի 'ի ծերակից իւր կաղնւոջ. անդ 'ի լռութեան քերցն բոլորեցուն, անխլիրտ ամենևին և գոգցես խորասոյզ 'ի խորհուրդս՝ աւանդէ հողմոց վանկս մարգարէականս:

Դիտելոյ է դարձեալ զի մրտմունք, սագք, բադք,

կտցարք, քարադր և սիրամարգք անընտելք՝ որք 'ի սնունդ են մեզ, յամայանալ երեսաց երկրի գան երե-ւին. մինչ այլ տարաշխարհիկ Թռչունք երևեալք յար-մրտեաց ժամանակի՝ համայն 'ի զուարճութիւն մեզ են, և որպէս երաժշտակք նուագաւորք՝ 'ի պայծառութիւն մերոց խրախճանացս առաքեալք: Են և սակաւք ոմանք զարտուղեալք յօրինաց աստի, որպիսիք են լորն և աղաւնին վայրենի, զորս զկնի հնձոց 'ի դէպ է որսալ. գի և նոքա յարմտիս մեր պարարեալք՝ գան 'ի սպառ ահղանոց մերոց: Այսպէս հողմն հիւսիսոյ զհիւսիսա-կան Թռչունսն տեղայ 'ի մեզ իբրև զմանանայ, և զեփիւռ քաղցրաշունչ զտոխակսն ընծայաբերէ. յորմէ կողմանէ աշխարհիս և շնչեսցեն հողմք, բարձեալ բե-րեն զպարգևս ինչ վերնախնամ տեսչութեան:

ՇԱՏՈԲՐԻԱՆ. Ոգի Քրիստոնէութեան:

---

## ԱՌԻՒԾ ԵՒ ՎԱԳՐ

Ի դասս շաղղասնունդ կենդանեաց՝ առաջին է ա-ռիւծ, և երկրորդն՝ վագր. առաջինն թէ և փառթարազ-գի, այլ միշտ մեծ է քան զընաւս և յաճախ լաւագոյն. իսկ երկրորդն սովորաբար չար քան զամենեսին: Առիւծ՝ ընդ աներկիւղ յանդգնութեանն յարէ զազնուականու-թիւն և զգթութիւն, ևս և զմեծանձնութիւն. մինչ վագր նուաստ է և վայրագ, անողորմ և անիրաւ, ոչ առ հարկի բերելով 'ի նոյն: Զայն զայս և յամենայն կարգս իրաց է տեսանել, ուր միանգամ ըստ ուժոյ զօրութեանն և ատրճանքն չափեալ իցեն: Առիւծ՝ որ կարող է ամենայնի, չէ բռնաւոր հանգոյն վագեր, որ լիուլի զօրութեամբն չմարթացեալ վայելել, զթերին լնու զօրութեամբն զոր կարաց զրաւել անձին: Ուստի

փողքն տուաւել երկիւղալի գտանի քան զառիւծ։ Սմա յաճախ 'ի մտաւացնս անկանի թէ թագաւոր է, այս է հզօրագոյն քան զամենայն 'ի կենդանեաց. գնայ համարձա-կաքայլ եւ չյարձակի 'ի վերայ ուրուք՝ եթէ չգրգռեսցի նախ 'ի նմանէ, ոչ ճեպեցուցանէ զքայլսն, շտապատակէ յորս՝ բայց իբրեւ քաղցն նեղեսցէ զանձն նորա։ Սմին հակառակ վագր թէպէտ եւ յագի 'ի մսոյ, բայց միշտ ծարաւի թուի արեան։ Զկե նմա պարապ 'ի գազանու-թենէ, բայց յորժամ պատրաստիցի 'ի դարանակալու-թիւն. յափշտակէ եւ պատառէ զնոր աւարն նովին կա-տաղութեամբ որով նախ վարեցաւ, եւ ոչ բաւականա-նայ պատառելով զառաջինն, յաւեր եւ սմայի կացու-ցանէ զերկիրն յորում բնակի. ոչ ակն առնու յերեսաց եւ ոչ ահարեկի 'ի զինուց մարդկան. խողխողէ, աւարէ զերամս ընդել կենդանեաց, սպանանէ զանընդելսն, յափշտակէ զթօթիւնս փղաց եւ զմատաղ ռնգեղջիւրս, եւ մերթ եւս յանդգնի եւ խիզախէ ընդդէմ առիւծու։

Զե մարմնոյն ընդհանրապէս զոյգ ընթանայ ընդ-բնութեանն։ Առիւծ ազնուական է կերպարանօք. բար-ձրութիւն ազդերցն համեմատ ընդ երկայնութեան մար-մնոյն. յորդութիւն թանձրախիտ բաշիցն քօղարկեալ զուսսն՝ հովանի ածէ երեսացն. աներկեան հայեցուածք աչացն եւ ծանր գնացքն, զօրցես համօրէն յայտ իմն առնեն զնորա զյանձնապաստան եւ զմեծաշուքքաջասր-տութիւն։ Վագրն երկայնադէզ իրանաւն եւ ամենեւին ցածագոյն զբարձիւքն իւրովք, գլուխն հոլանի, աչքն դաժան, լեզուն արիւներանգ, միշտ արտաքս քան զբե-րանն ձգեալ, յայտնի ցուցանէ զի է վատ եղեռնագործ եւ անյագ յանագորովութեան, եւ բնածին իմն է 'ի նմա զայրոյթ մշտընջենն եւ ցասումն կոյր, որ ոչ ճանաչէ եւ ոչ խտրէ ինչ. այս է որ գրգռէ զինքն յաճախ զորդիսն ան-գամ անյագ լափել եւ պատառել, եւս եւ զմայր նոցին՝ 'ի կամել նորա պաշտպանել զնոսին։ Երանի՛ թէ տարա-պայմանն իմն լինէր 'ի նմա այդ ծարաւ արեան, եւ շիջու-

Digitized by Google

ցանէր զայն անդստին 'ի ծննդենէն, բարձեալ բնաշխինջ զողջոյն զհրէշիցն ազգ՝ յիւրմէ սերելոց:

ԲԻՖՖՈՆ. Բնական Պատմութիւն:

---

## ԳԻՇԵՐ ՋՔՆԱՂ

Այն գիշեր մի յայնցանէ էր՝ յորում ստուերք Թափանցիկք երկնչին իմն ծածկել զգեղեցկութիւն երկնից Ելլադայ: Չէր իսկ և չէր այն խաւար, այլ հրաժեշտ ևեթ տուընջեան: Օդ քաղցր իբրև զկաթն և զմեղր, և տուրևառ շնչոյ զմայլումն անպատում: Լոյս խաղաղասիք սփռեալ զբարձամբք Տայգետայ և զհանդիպակաց սարաւանդիւք Կոլոնեայց և Ակրիտայ և մեսենիական ծովուն: Տորմիղ մի յոնիական նաւուց իջուցանէր զառագաստս 'ի մուտս նաւահանգստին Կորոնեայ, օրինակ իմն՝ յորժամ երամ ուղևոր աղաւնեաց 'ի վայր զթևս պարզիցէ՝ դադարել 'ի հիւրամեծար ափունս: Ալկիոնն հեծէր մեղմիկ 'ի բնի իւրում, և հողմն գիշերոյ ածէր (առ Կիմոդոկէ) զբուրումն խանթեփարին, և զգոչիւն Պիսիդոնի 'ի հեռուստ: Հովիւն բազմեալ 'ի հովտի՝ նկատէր զլուսինն պար առեալ 'ի լուսափայլ աստեղաց, և բերկրէր 'ի սրտի:

Օրիորդ քրմուհին երթայր լռիկ ընդ լերինս, և զուարճանայր 'ի զնին հրաշալի վայրացն՝ զորս հինք խանձարուրս ասացին Լիկուրգեայ և Արամազդայ, յայտ իմն այսպէս առնելով զի կրօնք և օրէնք պարտին գնալ զուգընթացք, և զի անդստին 'ի միջէ ուստեք է նոցա ծագումն. Կրօնասէր ահիւ լցեալ, սքանչելիք նմա Թուէին ամենայն շարժումն, ամենայն հնչիւն յաչս նորա. աղօտ մրմունջ ալեաց ծովու՝ թուէր մռնչիւն կիւթելեան առիւ-

ծաւց իջելոց յանտառաւացն Եղալիոյ. և մերթ ընդ մերթ մտել հաւփալին թուէր եղջերուաց փողն Անահտայ, յելանել նորա յորս 'ի բարձունս Թորիոյ։

ՇԱԴՈԳՐԻԱՆ. վկայք։

---

## ԽՐԱԽՃԱՆՈՒԹԻՒՆ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Ոչ յետ բազմաց ինչ աւուրց կատարեցին աստանօր հանդէսք խրախճանութեանց անուանեալ Ս. Լէոնարդեայ։ Ցանկալի էր ինձ յօժարեցուցանել զքեզ գոնեա տօնիւս զի եկեսցես առ իս։ Փորձեցից բանս ինչ պատմել զնմանէ. Թերևս կարացից զարթուցանել 'ի քեզ զիղձող։ Է մեր աստ դաշտավայր մի մղոնաւ երկայն, և 'ի խորս անդ նորուն հովիտ, զորով պատէ անտառ մի վաղեմի կաղնեաց՝ բնակութիւն բուոց և բուիճակաց, որոց ոստք թօշնեալք և գօսացեալք՝ սոսկումն շարժ և պակուցումն ածեն տեսողաց։ Հովիտն ոչ որպէս պատմեն քերթողք՝ դալարագեղ է և մանրախոտ, այլ տիղաբեր և ճախճախուտ։ Մասն ինչ գետնոյ երկայնաձիգ ցամաք և բարձր ձգի 'ի դաշտէ մինչ ցանտառն, յորոյ 'ի միջոցին ճարտարապետ հանճարեղ յօրինեալ է եկեղեցեակ մի պքանչելի, առանց ամենևին ճարտարապետականին։ Ի վերայ եկեղեցւոյն են զանգակք երկու կախեալք ընդ պարանոցան ընդ փանաքի յարկաւ, զորս ոչ երբեք հնչեցուցանեն շինականքն զերկոսեան 'ի միասին, բայց 'ի ժամանակի վերահաս մրրկաց. քանզի յայնժամ ամենայն հովիւ ժամահար է, և այն մոլեգին տատակութեամբ, և կամ վասն տօնախմբիս այսորիկ որ յերկրորդում աւուր Զատկին։ Խուռներամ յանտառաւանդր դիմէ յայնժամ մարդիկն 'ի շրջակայից յայց մենաւոր վայրացն։ Գան յամենայն կողմանց գիւղականք բո-

կոտն կամ գրեա թէ բոկոտն, զի ոչ կարեմ բնաւ ասել զայս կամ զայն։ Ընդ այն չիք երկբայել՝ զի 'ի պատիաւուրն արկանեն զանձամբ զբարեքիկ հանդերձսն, և առաւելագոյն ուշ 'ի շապիկսն ունին, որ ցայն նորք են՝ զի դեռ տանին զծայրս խծծոցն յորոց անկեալք են, և դեղնաշորթք՝ բուրեն տակաւին զխիւս օծանելեացն, առ 'ի ցոյցս զի դեռադեռ ելեալ է 'ի ձեռաց ոստայնանկին։ Զնոսա տեսցես դու անդանօր ընդ աղջկունս, ընդ որս ոչ որպէս մեքս սովոր եմք թևս 'ի թևս հարեալք, այլ արձակաբար թողեալ. որպէս զի եթէ չբաւեն ընթանալ, յետոյ արանցն միան անշուշտ. սակայն և այն չպատահէ բնաւ. զի հուժկուք են և քաջակիրթք 'ի վազս հանգոյն օձից. և թուի զի 'ի գաւառս յայսոսիկ ընդ մի գրին ընդ արս և կանայք. զի 'ի նոյն ջանս և 'ի վաստակս հանգոյն արանց կրթեն զանձինս և նոքա. որոյ վասն ամենեքին տապախարշք յարևէ, և ձեռք տեռեալք, և նման արանց, որպէս յիշեցաք 'ի վերոյ, զգեստաւորեալք և յոտս։ Յորժամ ժամանեն յանտառն, երթան նախ յայց եկեղեցեկին. և 'ի կատարել զաղօթսն դառնան սկիզբն առնել զբօսանացն։ Տեսցես անդ բանալ կողովոց, և հանել անտի տապկոցս պաղեալս, ձուս պնդացեալս, սոխս և սխտորս բուրաւորս։ Այլ քան զամենայն տեսցես զնոսա պարապեալս 'ի ձգել զխիցս տկճորից դդմենեաց լցելոց սպիտակ կամ կարմիր գինեաւ, որք և վարին իսկ 'ի կոչնականաց 'ի տեղի ստոմանաց, սրուակաց և բաժակաց. և է որ յոտին, է որ բազմեալ, և է որ յորսայս զգետնով՝ սկսանին յօշատել եղնգամբք զկերակուրսն, և ծաքել ամենայն ծամելեօքն և գիրկս ածել զդդմենեօքն լի գորովական խանդաղատանօք, և տխրականօք 'ի դատարկելն։ Ընդ կերն և ընդ խումն՝ խառնին և զաւեշտական բանք։ Ոչ երբեք տեսեալ է քո միտս արթունս առ 'ի խօսս ինչ արկանել կատականաց, և անդուստ պատախանի ընդունել ապտակաւ կամ աքացի ոտնարձա-

կութեամբ պաշտպանել անձին, զորմէ և ծաղր և քրքիջ առ հասարակ յակմբէն։ Այս տարազ խնձոյից անոպայ թուի քեզ. սակայն տեսեալ տեսի ես զնոյն օրինակ և առ բազումս 'ի քաղաքակիրթ արանց, որք զհանճար և զախորժ զբօսանացն յայդպիսիս դնեն բարեվայելչութիւնս։ Ցաւալ անցցեն բանքս։ Ջութակ, բամբիռն և տրինգ յօրինեն անդանօր և դաշնակաւոր իմն միաբանութիւն ձայնից սքանչելալուր, գոգցես իմն արտաքոյ քան զբնութեան իրք։ Երգեն և ցուցս համեմեալս, գեղգեղելով և ծեքծեքելով զկոկորդն, մինչև ականջացն որ լսեն անզգայել առ այլ ինչ լսելոյ։ Են են 'ի նոսա որ և զսէր առնուն յերգ։ Ո՛ Բեդլրարդայդ, և ե՞րբ ընաւ երգեցեր դու զայդպիսիս։ Մեծամեծս փեռեկեն զաչսն, մինչև զանտիպզատոնականն սէր մինչ 'ի խորս իսկ անդ թոքոցն նշմարել։ Եւ աղջկունք ամօթլեածք պատասխանի առնեն նոցա աղուեսական հայեցիւք, զթիկունսն շրջելով կամ դառյթս իմն ոտիցն տալով, զի բերտք են քան այլ ինչ։

Ուր ուրեմն զրաւ լինի ակմբին աղաղակաւ, փոշմամբք և բարձրաձայն կաղկանչմամբք ծաղուց, որչափ բաւեն լանջք, և երբեմն և բռնցի կռուօք. և դարձ 'ի տունսն առնեն որպէս և մարթիցեն. քանզի արիւն դդմենեացն մինչ 'ի ծունկսն սողոսկեալ, ընթանան աստանդելով հանգոյնս կայծականց։ Եւ միթէ և ո՞չ մի ինչ զքեզ 'ի նորանշան իրացս հրապուրեն գալ այսր։ Թուի իմն եթէ տօնախմբութիւնքդ Վենետկոյ դիւթեալ իմն են զքեզ, և լսել գայ ինձ 'ի քէն պատասխանի. — Եւ առ ի՞նչ ոչ մանաւանդ քո իսկ գալ այսր, որպէս զի տեսցես կազմել 'ի կիցս ճանապարհաց զքաքար և զպղակունդն. և զի՞նչ չինականքդ առ մեօքս աստանօր. մեծավայելուչ իմն է անցանել ընդ փողոց, ուր աստի և անտի զտողանի հարեալ կան մի առ միով վաճառողք այդպիսի խնկելեաց. և որպէս զի առաւել ևս իրքդ զպատիւ առնուցուն, տեսցես դու կանայս գձուձս 'ի գլուխ կրակարանացն՝

Digitized by Google

գդակս կտաւիս ունելով զգլխով, Թաթախեալք և մրուրեալք յեւղս և 'ի ճենճերս որ բուրեն 'ի տապակէ. տեսիլ հրաշագեղ. և յաւել զի անդ առ նոքօք պարոնայք և տիկնայք երիտասարդուհիք 'ի վեր և 'ի վայր ճեմս առեալ զգնամնազելով և սեթևեթելով. Թող և զայլ բարեվայելչութիւնսն, զորս չկամիմ ասել բովանդակ, որպէս զի մի կարծիցես եթէ ես զքո զեղջկային զուարճութիւնսդ կամիցիմ աղարտել իմովքս այսու գերագունիւք զոր ունիմ աստանօր: Նա զի այդպէս Թուի քեզ, զպատիւ մեծարանացս մատուցեալ, ոչ ևս այլ խօսեցայց զայնմանէ: Վայելեաց դու այդր 'ի քոյդ, և ես յիմքս աստ: Ողջ լեր:

ԿՈՍՄԻ

---

## ՔԱՐԱՅՐՆ ԿԱԼԻՓՕՆԵԱՅ

Հասին առ սեամս քարանձաւի դիցուհւոյն. և զարմանայր Ցելեմաք, զի 'ի գեղջկայնումն յանպաճոյճ պարզութեան տեսանէր զամենայն ինչ ակնահաճոյ: Ձէր անդ ոսկի և արծաթ, ոչ կիճ և ոչ սիւնք և նկարք և անդրիք. քարայրն այն 'ի խոռոչ ժայռի կոփածոյ՝ 'ի խճից և 'ի խղունջնաց 'ի կամարսն զմբեթարդս էր դըրուագեալ, և զոգցես իմն դիպակազգեստ յաճումնաձիգ որթոյ՝ որ յաջ և յահեակ զճապուկ ուռսն տարածեալ պատէր: Քաղցրասիք հողմունք ընդ բոցակէզ արեգակամբ զովացիկ զվայրն կացուցանէին և հեշտալի. վտակըք քաղցրակարկաջք զեռեալ ընդ արօտս պճնեալս յանթառամ և 'ի մանիշակ լճակս ուրեք ուրեք գործէին պայծառ և յստակ քան զակն վանեայ. և ծաղկունք հոյլ 'ի հոյլ դեռափթիթք գեղերփնէին զգօրգն կանաչագեղ որ զքարայրն ծածկէր: Էր անդ ծառաստան վարսագեղ

Digitized by Google

ոսկեխնձոր, որ 'ի քառահոլով եղանակս տարւոյ նորափթիթ՝ բուրէր անուշահոտ քան զամենայն խնկենիս. և պատկաձև ղգեղեցիկ արօտիւն շուրջ պատեալ, յորինէր զշէր 'ի տուընջեան՝ անթափանց 'ի ճառագայթից արփենից: Թռչնոց ևեթ լսելի լինէին անդ ճռուողական գայլայլիկք, և խոխոջ վտակի՝ որ 'ի բարձանց ժայռի զահավիժեալ եռայր փրփրադէզ, փախստական ընդ արօտն գետահետեալ:

Եւ էր քարայրն 'ի դարևանդ բլրոյ, ուստի երևէր ծով մերթ վճիտ և միապաղաղ իբրև զբիւրեղ, և մերթ մրմռեալ անհատ ընդ ժայռ և ընդ խութ, յորս ահագնագոչ լեռնաձև կոհակքն կոծեալ բեկանէր: Ամլուր երևէր գետ՝ կղզիս 'ի պտղոտն գործելով ափնածիրս 'ի ծաղկաւէտ Թմբեաց և 'ի բարձրաբերձ կաղամախեաց, որ զխորխտ գագաթունսն յամպս ծրարէին: Եւ որք զկղզեական գործէին առուք՝ Թուէին խաղալ 'ի դաշտին, կէաք սրընթաց զականակիտ ալիսն Թաւալելով, այլք հանդարտահետք հեզասահք. և կէաք պատ 'ի պատ յետս ընդ կրունկն դառնային՝ յաղբերակունս անդր իւրեանց դոզցես նկրտելով՝ դժկամակ իմն զբաղմազուարճ ափունսն Թողուլ: Նշմարէին 'ի բացեայ բլուրք և լերինք, որոց գագաթունք կորնչէին յամպս, և կոհակաւէտ ձևովքն բազմակերպ զծիր տեսութեան գործէին և ակնապարար: Դալարագեղ զլերինս մօտակայս ծածկէր այգեստան. և ուռք վարսագեղք մանեկաձև կախեալ, և ողկոյզք ծիրանեփայլք քան զծածկոյթ տաղարթացն առատագոյնք ծանրաբեռնէին զայգիս: Թզենի, ձիթենի, նռնենի և այլ ևս ազգի ազգի ծառք պտղաբերք ծածկեալ զդաշտավայրն, յորինէին զայն պարտէզ լայնածաւալ:

ՖԵՆԵԼՈՆ. Տէլեմաք:

## ՏՕՆՔ ԱՆԱՀՏԱՅ

Եւ էր մերձ տօն լիմնեանն Անահտայ, և կազմէին հանդերձէին ելանել ըստ սովորութեան 'ի Թափօր մինչև 'ի ծայրս սահմանացն Մեսսենիոյ և Լակոնիոյ։ Այն հանդէս՝ առիթ երբեմն դժնդակ պատերազմացն Մեսսենիացւոց ընդ Սպարտացիս, զխաղաղասէր հանդիսատեսից ևեթ ձգէր յայնժամ 'ի զնին զամբոխ։ Եւ դասք ծերունեաց ընտրեցին զԿլիմոդոկէ առաջնորդ խմբի օրիորդացն՝ որոց անկ էր մատուցանել զնուէրս զգաստասիրի քեռն Ապոլոնի։ Անկեղծ հրճուանօք ցնծայր նա ընդ պատիւն որ 'ի հայր իւր 'ի վեր ելանէր. քանզի թէ լսէր միայն Դեմոդոկ զգովութիւնս դստերն, թէ հպէր ևեթ 'ի պսակսն՝ առեալս 'ի նմանէ, 'ի ծայր բարեբաստութեան և փառաց զանձն համարէր։

Բայց ոչ կարաց երթալ ընդ դստերն իւրոյ մինչև 'ի Լիմնէ, խափանեալ 'ի զօհէ զոր յեկաւորացն ոք նուիրէր Հոմերոնի։ Վասն որոյ Կլիմոդոկէ գնաց առանց հօր իւրոյ 'ի տօնն, բայց էր ընդ նմա դայեակն իւր Եւրիմեդուսա՝ դուստր Ալկիմեդոնի Նաքսոսացւոյ։ Այլ ծերունին ոչ խռովէր 'ի հոգս, զի փոխանակն բդեշխին Աքայիոյ երթեալ էր յայնժամ 'ի Հռովմ առ Գալերիոս կայսր։

Տաճարն Անահտայ կառուցեալ էր 'ի ծոց Մեսսենիոյ, 'ի վերայ միոյ ուրուք 'ի լերանց Տայգետայ, յանտառի ուրեք գիհեաց՝ ուր զկողերց ծառոց կախէին որսորդք զմորթս երէոց վայրի։ Որմք նորա 'ի հնութենէն՝ չորացեալ տերևոց առեալ էին զգոյն, որպէս արդ իսկ նկատեն ուղևորք յաւերակս Հռովմայ և քաղաքին Աթենացւոց։ Անդրի Անահտայ՝ 'ի միջավայրի տաճարին կանգնեալ 'ի բագնի, էր հրաշակերտ ուրուք յականաւոր քանդակագործաց. և կայր նա յոտին, միով ոտամբըն յառաջադէմ, և աջովն առնոյր նետ 'ի կապարճիցն

կախելոց զուսովք. և եղնիկն Կերինիդ ոսկեղջիւր և պղընձոտն՝ զկայ առեալ կայր ընդ աղեղամբն՝ զոր դիցուհին ունէր 'ի ձախումն 'ի խոնարհ։

Եւ յորժամ լուսին 'ի միջոյ աստղարիզին սփռէր զլոյս իւր զմեհենեաւն, Կիմոդոկէ պարագլուխ օրիորդաց կացեալ, հաւասարաթիւ յաւերժահարսանց Ովկիանու, սկսանէր զնուագն 'ի պատիւ Սպիտակ Կուսին։ Եւ դասք ոստողացն պատասխանի առնէին երգոց դստերացն.

Հարէք, հարէք կայթս 'ի թեթև գարշապար,
Երագաճեմ ըզդիցանուէր առէք պար։

Մայր Անահիտ, շահապետ անտառաց, ընկալ զուխտըս զոր կուսանք ընտիրք քեզ մատուցանեն, դստերք ողջախոհք 'ի սիրիլեան երգս վարժեալք։ Դու 'ի ծովածուփն 'ի Դելոս՝ ընդ հովանեաւ արմաւենւոյ ծնեալ, և 'ի դիւրել զերկունս Լետովայ մօր քոյ՝ եօթնիցս կարապք զքաղցրանուագ կղզեկաւդ պատէին երգովք։ Եւ 'ի յիշատակ երգոց նոցա 'ի դիցազարմ քումդ հարազատէ եօթնաղեանն հնարեցաւ քնար։

Հարէք, հարէք կայթս 'ի թեթև գարշապար,
Երագաճեմ ըզդիցանուէր առէք պար։

Ցանկալի են քեզ գետափունք, ցանկալի և ստուերք ծառոց, և դալարագեղ անտառք Կրագոսի, հովասունն Ալգիդեայ և Նսեմաստուերն Երիմանթեայ։ Դու Անահիտ՝ որ աղեղն ահաւոր կրես 'ի ձեռին. դու լուսին՝ մահիկ 'ի գլուխ քոյին պճնեալ. դու Եկատէ՝ իժիւ և սուսերք զինեալ, տուր երիտասարդաց զգաստութիւն, ծերունեաց հանգիստ, և Նեստորեան զաւակին՝ սերունդ, ճոխութիւն և փառս։

Հարէք, հարէք կայթս 'ի թեթև գարշապար,
Երագաճեմ ըզդիցանուէր առէք պար։

Եւ 'ի լռել երգոյն՝ առին 'ի բաց օրիորդքն 'ի գլխոց իւրեանց զպսակս սարդենիս, և կախեցին զբազնաւ դիցուհւոյն ընդ աղեղունս որսորդաց։ Եւ զենեալ անդ

եղջերու սպիտակ՝ գշխոյին լաւութեան, լուծաւ ամբոխն, և Կրիմոդոկէ ընդ գայեկին խուռում դէմ եդեալ գնայր առ հայր իւր։

ՇԱՏՈՊՐԻԱՆ. Վիպակք։

---

## ԱՍԻԱԿԱՆ ԱՓՈՒՆՔ ՎՈՍՓՈՐԻ

Ծովափն ասիական չէ ձեռակերտ մարդոյ, բնութեան անդ արարեալ զամենայն։ Չիք անդ Պէօյիւք Տէրէ և ոչ Թարապիա, ոչ ապարանք դեսպանաց և ոչ քաղաքք Հայոց կամ Փրանկաց. անդ լերինք միայն. պարանոցք որ անջատեն զնոսա. հովիտք փոքունք 'ի գորգ կանաչագեղ յարմատս քարաժայռից պարզեալք. վտակք որ սողին անդանօր. հեղեղատք որ 'ի փրփուրս իւրեանց սպիտակացուցանեն զնոսա. անտառք որ զկողից նոցա կախին և սողոսկին 'ի խոխոմն և իջանեն մինչ յեզերս անթիւ խորշից ծովափանն. սաղարթուց և դալարեաց անդ զարմազան ձև և երանգ, զոր և զրիչ նկարչի չգիտէ ճարտարել. տնակք աստ անդ ցիր տաճիկ նաւաստեաց կամ այգորդաց սփռեալք ընդ ափինն գիրերօք բացադոյն, կամ 'ի սարահարթս ամբարձեալ անտառախիտ բլրոյ, կամ համախումբ 'ի ծայր խարակաց, ուր վարեն զքեզ հոսանք և խորտակին յալիս կապոյտս որպէս զերկնից գիշերոյ. ձկնորսաց առագաստք ինչ սպիտակք քերեալ առ ծոցան խորաջուրս սահին սօս 'ի սօսւոյ. տարմ բազմահոյլ սպիտակաթոյր թռչնոց որք յափնածիր մարգս որբեն զինքեանս. արծուիք 'ի գլխոց լերանց 'ի վերայ ծովու հոլաթև սաւառնին. խորշք խորհրդաւորք բոլորովին փակեալք 'ի պարեխաց և յանհեթեթ կոճեղաց ծառոց, որոց սոսք ծածրացեալք յամպոց սաղարթուց՝ կքին զալեօքն և ձողիս յօրի

նեն 'ի ծովս, յոր խորշքն մտանեն. գիւղօրէք ինչ յու-սաւէր խորշիցն Թաղուցեալք, 'ի Թիկանց ունելով բուրաս-տանս ընդ գարեւանդս զոլորազերս, եւ խումբս ծառոց առ ասս ափափայց, եւ կարկուրայս գդուեալս առ դրամբք նոցա յարկաց ծխծաղախիտ, եւ երամս աղաւնեաց 'ի տա-նիս խարեանց. կանայք նոցա եւ մանկտի 'ի պատուհանս. ծերունիք յասս մինարէից բազմեալ ընդ սօսեաւ. մշակք որ յանդաստանաց եկանեն 'ի նաւակս. այլք ծանրաբեռ-նեն զմակոյկսն 'ի գալար խորձուես, եւ 'ի մուրտ կամ 'ի ծաղկաւէտ հաւամրգի, առ 'ի չորացուցանել եւ այրել ձմերանի: Կացեալ ուրեք 'ի Թիկանց չեղջից սիզոցն կա-խելոց, որ զեղեալ 'ի ջուրսն Թանեան, ոչ զնաւ եւ ոչ զԹիա-վարս ոք նշմարէ. եւ Թուի տեսանել բեկոր մի մեծ ծովափին զերծեալ 'ի ցամաքէ 'ի ջուրցն հոսանաց, եւ ծածանեալ զմկանսամբք ծովուն՝ կանաչազարդ տերեւօքն եւ անուշա-հոտ ծաղկօք:

ԼԱՄԱՐԴԻՆ. Ուղեւորութիւն յԱրեւելս:

---

## ՀՈՎԻՏՆ ՅՈՐԴԱՆԱՆՈՒ

Կրկին շղԹայք բարձունք՝ տարածեալք 'ի հիւսիսոյ 'ի հարաւ, որ ոչ ունէին մանուածապատ շրջանս եւ ոչ խորշս՝ երեւէին յաչս ճանապարհորդացն երկոցունց: ԵԹէ յաշ-խարհէն Յուդայ նկատեսցէ ոք, տեսանէ զլերինսն կոյ-տըս կաւոյ եւ աւազոյ, որ բերեն զնմանուԹիւն կերպա-րանաց խրձանց զինուց եւ դրօշուց ամփոփելոց, կամ վրա-նաց բանակի՝ զոր արկանիցեն 'ի դաշտի: Իսկ եԹէ յԱ-րաբացւոց աշխարհէն, են այնոքիկ ժայռք սեաւք ուղղա-ձիգ արկեալք 'ի վայր, որ ածեն Թափեն 'ի ծովն զմե-ռեալ գետս ծծմբոյ եւ ձիԹոյ: Եւ Թռչնիկն իսկ երկնից ոչ գտանիցէ անդէն զդոյզն ինչ խոտ առ 'ի սնունդ. ա-

Digitized by Google

միմիայն ինչ ցուցանէ անդէն եթէ վայրքն այնոքիկ հայ-
րենիք են ժողովրդեան խոտելոյ, և համարեցիս չնչել
անդէն զսարսափումն պղծութեան, ուստի 'ի վեր երևե-
ցան Ամմոն և Մովաբ։

Իսկ որ 'ի մէջ կրկին լերանցս տարածեալ է հովիտ՝
բերէ զնմանութիւն խորոց ծովու, յորմէ 'ի բազում
ժամանակաց տեղի տուեալ իցեն ջուրք. գաւառք աղի,
մօրուտք ցամաքեալք, աւազք շարժունք, և իբրև այն թէ
ակօսաբեկ լեալ յալեաց։ Աստ և անդ բոյսք զազրատե-
սիլք հազիւ կարեն աճել 'ի վերայ անկենդան երկրին.
տերևք նոցա պատեալք են աղիւ որ սնոյցն զնոսա, և
կեղևք նոցա ունին զճաշակ և զգոյն ծխոյ. փոխանակ
քաղաքաց և գիւղից՝ երևին անդէն աւերակք աշտարա-
կաց ինչ։ Ի միջոյ հովտին անցանէ գետակ անգոյն, և
իբրև ընդ քարշ ածեալ՝ երթեալ ընկղմի 'ի լիճն ժան-
տահոտ։ Չէ մարթ նկատել զընթացս նորա 'ի մէջ աւա-
զուտին, այլ զափամբք նորին են ուռենիք և եղեգունք,
յորս թագուցեալ արաբացւոյն՝ սպասեալ մնայ յառնուլ
զառ և զկապուտ ճանապարհորդին և պանդխտին։

Խօսեցաւ Հերոնիմոս ընդ ասպնջականսն երկոսին,
որ զարմացեալ հիացեալ կային, և ասէ.

Տեսանէք դուք զվայրսն հռչակաւորս օրհնութեամբ
և անիծիւք երկնից. գետս այս է Յորդանան. լիճս այս
է ծովն Մեռեալ։ Շքեղ երևի նա յաչս ձեր. այլ քա-
ղաքքն անօրէնութեան, զորս ծածկէ 'ի ծոցի իւրում ա-
պականեցին զջուրս նորա։ Անդունդք նորա անդունդք
են լռեալք, և չիք 'ի նոսա շնչաւոր։ Ոչ երբեք էանց նաւ
'ի վերայ ալեաց նորա, և յափունսն չերևին ուրեք թռ-
չունք և ծառք և դալարիք. ջուր նորա դառն յոյժ է, և
այնչափ ծանր՝ զի և հողմք ուժգին հազիւ բաւեն խառ-
վել զնա։ Աստէն երկինք թուին տոչորեալ հրովն որ ըղ-
Գոմոր դարձոյց յապականութիւն։ Չեն աստէն ափունք
Պամիսոսի և հովիտք Տայգետայ. 'ի վերայ ճանապար-
հին Քեբրոնի ես դու, 'ի վայրսն՝ յորս լսելի արար Յեսու

զձայն իւր՝ յորժամ կասեցոյց յընթացից իւրոց զարեգակըն։ Կոխես դու զհողն՝ որ գեռ ևս ծխէ զցասումն Եհովայ, և որ մխիթարեցաւ ապա 'ի սփոփիչ բանիցն Քրիստոսի։

ՇԱՏՕԲՐԻԱՆ. Վկայք։

---

## ՀՈՎԻՏՆ ՏԷՄՊԷԱՆ

Եւ անցեալք ընդ գետախառնունսն Տիտարեսեայ, որոյ ջուրք պղտորագոյնք են քան զՊենէոսի, հասաք 'ի Գոննոս՝ որ հեռի է 'ի Լարիսայ իբր հարիւր և վաթսուն ասպարիզօք։ Անդ թողաք զնաւակն. զի անտի հովիտըն սկսանի, և անձկանայ գետն ընդ լերանցամէջս Ոսսայ որ կայ յաջմէ, և Ոլիմպեայ՝ որ յահեկէ, բարձրութիւն սուղ ինչ աւելի քան զտասն ասպարէզ։

Ըստ վաղնջուց աւանդութեան՝ 'ի սասանութենէ երկրի համարին փեռեկեալ լերինքն, և տուեալ անցս ջուրց որ ողողեալ ծածկէին զդաշտավայրս։ Այլ այն հաւաստի իսկ է, զի 'ի խնուլն զկիրճն զայն՝ ոչ ևս իցեն անցք Պենէոսի. քանզի երկիր՝ ընդ որ գետս այս հոսէ ընդունելով յինքն 'ի գնացս իւր և այլ գետս բազումս, տակաւ 'ի գետեզերացն 'ի վեր ամբառնայ մինչև 'ի բլուրսըն և 'ի լերինս որ շուրջ զգաւառաւն կան։ Լուաք իսկ զի եթէ Թեսաղացւոց չէր հնազանդեալ Քսերքսեայ, առնոյր նա զԳոննոս, կանգնել անդ թումբ անտեղիտալի հոսանաց գետոյն։ Կարևոր է յոյժ քաղաքն՝ տեղւոյն ամրութեամբ, և է դուռն Թեսալիոյ 'ի կողմանէ աշխարհին Մակեդոնացւոց, որպէս Թերմոպիլէ 'ի կողմանէ աշխարհին Փովկիսացւոց։

Եւ տարածանի հովիտն յարևելս հիւսիսի. երկայնութիւն նորա քառասուն ասպարէզ, և ընդարձակագոյն

լայնութիւն նորա իբր երկու ասպարէզ և կէս. ա՛յլ ուրեք անձկանայ իբր ոչ ինչ աւելի քան զհարիւր ոտնաչափ:

Ծառք սաղարթագեղք զարմանալիք՝ կաղամախ և սօսի և հացի ծածկեն զլերինսն, և առ ստորոտովք նորա բղխեն աղբերք ջուրց վճիտք իբրև զբիւրեղ. և ընդ մէջ ծայրից նոցա բարձանց սահեալ անցանեն օդք զովարարք հեշտալիք 'ի շնչել: Իսկ գնացք գետոյն զրեթէ ամենայն ուրեք խաղաղ, և ուրեք ուրեք զկղզեկօք ոմամբք փարեալ՝ մշտադալարս զնոսա գործէ:

Քարայրք ներգործեալք 'ի կողս լերանց և գետեզերք երկուստեք դալարագեղ ծածկեալ, գոգցես իմն պատսպարանք պատրաստեալ կան հանգստեան և զբօսանաց: Եւ առաւել յաճախէին 'ի մեզ զարմանք ընդ հանճարեղ կարգաւորութիւն զարդուցն՝ որովք պճնին վայրքն. զի այլուր արուեստ ճգնի նմանել բնութեան, իսկ անդ կամի իմն բնութիւն նմանել արուեստի: Մարգենիք և ազգ ազգ թփոց կազմեն անձեռագործ կամարըս և թաւուտս, նախանձ գեղեցիկ բերեալ ընդ ծառաստանս անկեալս 'ի ստորոտ Ոլիմպեայ լերին: Գորգոյ իմն օրինակաւ ծածկէ բազեղն զժայռս, և պատաղինք զբունովք ծառոց սողոսկեալ՝ զգեցուցանեն զնոսա, և կողերք նոցա հիւսեալք ընդ միմեանս՝ կախին որպէս ըզդրասանգս և իբրև զճօճանակս: Եւ համառօտիւ իսկ ասացեալ, ամենայն ինչ 'ի չքնաղ վայրսն յաւելու շուք գեղապանծ. ամենայն ուստեք պարարին աչք, և հոգին կենսանորոգ զուարթանայ:

Ոչ ինչ են զարմանք զի Յոյնք՝ եռանդուն զգայութեամբք և բնակեալք 'ի ջերմահոտ նահանգս, յիմարին 'ի տեսիլ և 'ի յիշատակ իսկ չքնաղագեղ հովտին: Ի համառօտագիծ պատկերս յայս, զոր ահա նկարագրեցի, պարտ է յաւելուլ և զգարնայնոյն կիտուածս ծաղկանց՝ որովք հովիտն այն ծածկի, և զդայլայլիկս բազմերամ անհամար թռչնոցն՝ որ անդ գեղգեղեն, ամայութեան

Digitized by Google

վայրացն և քաղցրախառնութեան եղանակին մատուցանելով նոցա նուագս գողտրիկս և յոյժ խանդաղատալիս։

Եւ գնայաք մեք մեղմաքայլ ընդ գնացս Գենէոն գետոյ, և աչք իմ թէպէտ ձգեալ 'ի բազում այլ ինչ զուարճալի տեսարանաց 'ի գետ անդր ստէպ ստէպ դառնային։ Մերթ զցոլս ալեացն նշմարէի ընդ մէջ սաղարթուց՝ որ զեզերբք նորա առնեն հովանի, և մերթ 'ի գետեզրն մատուցեալ՝ զխաղաղ ընթացս ալեացն նկատէի, որ զողցեռ իմն օգնեալք իրերաց՝ անճիգն և անխռով գործէին զիւրեանց ասպարէզն։ Ասեմ ցԱմինտոր. Այսպիսի է սուրբ և խաղաղ հոգի. առաքինութիւնք 'ի նմա յիրերաց ծնանին, և գործակիցք են միմեանց. ստուերք յառութեանց օտարք 'ի նոցունց՝ պայծառագոյնս ևեթ զնոսա գործեն ներհակաւն։ Եւ Ամինտոր ասէ ցիս. Այժմ իսկ և զպատկեր փառամոլութեանն տեսցես, հանդերձ դժնդակ արգասեօքն։

Եւ տարաւ զիս 'ի կապան մի Ոսսայ լերին, ուր Տիտանեացն ասեն մարտուցեալ ընդ դիս։ Անդ ուղխ իմն որընթաց զահավիժի 'ի ձոր քարաժայռ, թափով հոսանացն զժայռսն դղրդելով։ Եւ հասաք 'ի տեղի մի՝ ուր կոհակք ջուրցն բռնադատեալ՝ ճզնէին յանցս. և բաղխեալք ընդ միմեանս՝ փրփրադէզ 'ի վեր ամբառնային, և անկանէին մռնչելով 'ի վիհ՝ ուստի յորձանապտոյտ մոլեգնագոյնս անդրէն յիրեարս խորտակէին ցնդեալք ընդ օդս։

Եւ մինչդեռ պակուցեալ կայի ընդ ահագին տեսիլն, ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա լերինք աստի և լերինք անտի ամբառնային առ ինև նսեմաստուերք, անջրդիք, և ակօսաձև խորաձոր մինչև 'ի բարձունսն սեպացեալք։ Զլանջիւք նոցա ամպք թանձրադանդաղք ընդ մէջ տխուր մայրեացն տատանէին, կամ զամուլ ուտովքն թանձրամածեալ կային։ Տեսի 'ի ստորև զբնութիւն եղծեալ. լերինք փլուզեալք՝ ծածկէին աւերակօք

Digitized by Google

խուրեանց, ժայռս ևեթ ընծայելով 'ի տեսիլ՝ սպառնալիցս և խառն 'ի խուռն շեղջակուտեալս զմիմեամբք։ Եւ ո՞ր զօրութիւն խզեաց զզօդ մեծազանգուած բլրոցն. հո՞ղմք ամեհիք հիւսիսոյ, եթէ դղորդումն երկրի 'ի հիմանց, կամ թէ մեծասաստ վրէժխնդրութիւն դիցն ընդդէմ Հսկայից. ոչ գիտեմ։ Սակայն 'ի ձոր անդր ահաւոր տեսցեն աշխարհակալք զնկարագիր աւերանացն՝ զոր ածեալ զեղուն զաշխարհաւ։

ԳԱՐԹԵԼԸՄԻ. Ուղևոր. Անաքարսեայ։

---

## ՆԷԱՊՈԼԻՍ

Ոչ այնպէս քաղցր, ոչ այնչափ հեշտալի են ծաղիկք և պտուղք զուարթացեալք 'ի շաղ առաւօտու, որչափ տեսիլն Նէապոլսոյ 'ի թօթափել զմութ գիշերոյ։ Հիացեալ էի հանապազօր 'ի ժամանելս 'ի ծառաստանս ծովափնեայս, ուր խոխոջէին ալիք իբրև զհեզասահ աղբերս։ Աքանչացեալ ընդ տեսիլն՝ յենուր 'ի սիւն մի ժամս ձիգս չնչել զօդն զովագին՝ անխորհուրդ և անփափաք մտօք։ Այնչափ զօշոտիչ էր տեսիլն՝ զի թուէր ինձ եթէ աստուածայինն այն օդ կերպարանափոխ առնէր զգոյութիւն իմ, և թուէր ինձ անպատում խնդութեամբ վերանալ 'ի հաստատութեան իբրև զարարած հոգեղէն։.... Թաւշակերպ պայծառութիւն դաշտին, օդոյն բարեխառնութիւն, լերանց շուրջանակի բոլորք, զուարթարար ձայնք գետոցն և ձորոց՝ այնպէս հրապուրիչք են զգայութեանց 'ի Նէապոլիս, մինչև զանխռով հանգիստն շնորհել ամենեցուն։ Կիսամերկ Նէապոլսեցին՝ գոհ ընդ կեանսն զոր ընդ այնպիսի երկնիւք յերկարէ, 'ի ձեռս բերեալ միանգամ զնաքարակիտն բաւական յոգեպահիկ, ոչ ևս հոգայ զաշխատութենէ, և զկէս կենացն անցու-

ցանէ՝ կալով անշարժ ընդ ճառագայթիւք արեգական, և զմիւս կէսն բազմեալ 'ի կառս՝ զձայն խնդութեան արձակելով, և զգիշերս ընկողմանեալ յաստիճանս տաճարացն, և ոչ ինչ հոգալով զվաղուեանն՝ ննջէ ընդ ոտիւք արձանաց աստուածոցն իւրոց։

ՇԱԴՕԲՐԻԱՆ. Վկայք.

---

## ՔԱՂԱՔՆ ՏԻՒՐՈՍ

Զարմանայի ընդ դիրս մեծի քաղաքին, որ բնակէ 'ի մէջ ծովու 'ի կղզւոջ. ծովեզրն որ առ նովաւ՝ բազմազուարճ է և բերրի. բերք նորա ընտիրք, և խիտ առ խիտ քաղաքք և գիւղք՝ ընդ իրեարս գոգցես շարայարեալք, և օդք գաւառին քաղցրախառն. զի լերինք պատսպարեն զծովեզրն 'ի բացակէզ շնչմանց հարաւայնոց, և հիւսիս 'ի ծովէ զովացուցանէ զայն։ Երկիրն այն առ Լիբանանու կայ լերին, որոյ գագաթն յամպս ծրարեալ՝ կցի յաստեղս. սառամանիք յաւիտենից ծածկեն զարտեւանս նորա, և հեղեղատք ուղխինահոսք ձիւնալիրք գահավիժին 'ի ժայռից սեպացելոց զգագաթամբն։ Առ կողիւք լերինն տարածանի անտառ մեծ հինաւուրց մայրեաց, գոգցես իմն համատիոց երկրին՝ յոր ամբառնան սաղարթախիտք երկնուղէշք։ Եւ առ ստորև անտառին 'ի դարևանդ լերինն արօտք արգաւանդք, ուր արջառք բառաչեն ճարակաւորք, և խաշինք մատաղ գառամբքն խայտալով 'ի դալարւոջ անդ մայեն, և բիւրակնեայք խաղան անդանօր վտակք ականակիտք։ Իսկ առ ոտամբ լերինն հովիտ բուրաստանաձև, ուր գարուն և աշուն տիրեն աջակիցք՝ միրգս ընդ ծաղկունս խառնեալ. ոչ երբեք խորշակ ժանտ խամրիչ և կիզիչ բուսոց, և ոչ դառնահոտ փչմունք հիւսիսի իշխեն զդրախտին այնորիկ եղծանել զերփնազարդ գեղեցկութիւն։

Digitized by Google

Մերձ 'ի գեղեցիկ յայն 'ի ծովեզր ամբառնայ 'ի ծովու կղզին, յորում քաղաքն Տիւրոս կառուցեալ հոյաշէն ընդ մկանունս ալեաց Թուի ճեմել որպէս գլխոյ ծովուց։ Վաճառականք 'ի չորից ծագաց երկրի անդ հասանեն, և բնակիչք իսկ կղզւոյն գերահռչակեալք քան զամենայն վաճառականս երկրի։ Թուի քաղաքն այն մոռելոցն անդըր ոչ միոյ ևեթ ազգի, այլ համուրց ազգաց մայրաքաղաք, և միջակէտ վաճառականութեան։ Ամբարտակ երկրին մեծամեծք բազկաձև կարկառին անտի ընդ ծով, լայնատարր գործեալ նաւահանգիստ՝ ուր չիք հողմոց մուտ։ Անդ է տեսանել զանտառախիտս կայմիցն, և 'ի լաստափայտիցն բազմութենէ ծածկեալ զծով։ Քաղաքացիքն առ հասարակ պարապեն 'ի վաճառաշահ, և բազմազանձ նոցին մեծութիւնք ոչ կասեցուցանեն զնոսա 'ի վաստակոց՝ առ 'ի յաճախել և ևս զայնոսիկ։ Գտանի անդ ամենայն ուրեք բեհեզն նուրբ եգիպտոսի, և հրաշափայլ ծիրանին տիւրացի ձանձախարիթ, որոյ կրկնաներկ երանգոցն անեղծ 'ի ժամանակաց է փայլումն, և ներկանին նովաւ ասուիք բարակամանք՝ զորս կետուած ոսկւոյ և արծաթոյ և ևս գեղազարդէ։ Շահակիցք ընդ ամենայն ազգս են փիւնիկեցիք մինչև 'ի Գադէս, և յաշխարհածովն իսկ՝ որ պատի զերկրաւ՝ եղեն նոքա միջամուխ, և ընդ ծովն Կարմիր յարածուփ երթևեկեալ՝ ընթանան 'ի կղզիս անծանօթս 'ի խնդիր ոսկւոյ և խնկոց անուշից և ազգի ազգի չքնաղագիւտ կենդանեաց։

Չյագէին աչք իմ 'ի հայելոյ 'ի մեծագործ տեսիլ քաղաքին այնորիկ, ուր ամենայն ինչ 'ի յոյզս էր։ Ոչ ևս տեսանէի անդ, որպէս 'ի քաղաքս Ելլադայ, արս դատարկապորտս և հետաքրքիրս՝ որք պարապեն 'ի լսել նորագոյն ինչ 'ի հրապարակի, և դէտ կան եկաց հասելոց 'ի նաւահանգիստն։ Այլ արք անդ զբաղեալք, կէսք 'ի թափել զբեռինս 'ի նաւաց, այլք 'ի կրել զաղխամաղխս վաճառաց, կէսք 'ի վաճառել կամ 'ի մթերանոցս զետե-

դել և այլք դարձեալ 'ի դրի տանուլ զհամար տալ և տրոյ ընդ այլազգի վաճառականս։ Իսկ կանայք պարապեալք անդուլ 'ի մանել զասր, յասղնագործել, և 'ի ծալել զդիպակս մեծագինս։

ՖԷՆԷԼՈՆ. Տելեմաք։

---

## ՀՌՈՎՄ

Տեսաք ապա միատանդամ զլերինս Պելոպոնեսեայ և 'ի հեռաստանէ ողջոյն ետու հայրենեաց իմոց։ Ուշ յամեցին և ափունք Իտալիոյ 'ի ծոցոյ ալեաց 'ի վեր երևել։ Այլ յուզմունք սրտի նորանորք կային ինձ առաջի և 'ի Բրունդուսիոն։ Ի գնել զոտս իմ յերկիր՝ ուստի ելանեն հրովարտակք իշխանականք ընդ տիեզերս, պակեաւ սիրտ իմ յերեւոյց մեծութեան որ ցայնժամ անծանօթ էր ինձ։ Զի ընդ գեղեցիկ շինուածոյ Եղլադայ՝ փոխանակէին ընդարձակատարր շինուածք, այլ իմն հանճար 'ի նոսա տպաւորեալ։ Եւ որչափ յառաջ գնայի ընդ Ապպեանն արահետ, այնչափ յաճախէր յիս հիացումն. զի ճանապարհս այս սալայատակ 'ի ժայռից՝ թուի իմն կազմեալ առ 'ի տոհմ անցից ազգի մարդկան. և հատեալ անցեալ ընդ լերինս Ապուլիոյ, ընդ ծոց Նէապոլսոյ և ընդ դաշտավայրս Անքուրայ, Այրայ և անդաստանացն Հռովմայ, գործէ անցս երկայնաձիգ քան զերեքհարիւր մղոնաց, զարդարեալ աստի և անտի տաճարօք, ապարանօք և շիրմօք. և գայ յանգի 'ի քաղաքն յաւերժական 'ի մայրաքաղաքն տիեզերաց յարժանաւոր։ Ի տեսիլ այսքան հրաշից եղէ 'ի զմայլման, որպիսի ինչ ոչ գուշակել և ոչ ընդ միտ անգամ կարէի ածել։

Բարեկամք հօր իմոյ, որոց յանձն եղեալ էի, գան գործէին սթափեցուցանել զիս, այլ 'ի զուր. շրջէի անդա-

դուր. 'ի Հրապարակէն 'ի Կապիտոլ, 'ի Կայսերանց Թա-գէ. 'ի յդաշտն Մարսոյ. զիմէք 'ի Թատր Գերմանիկոսի, 'ի շիրիմն Ադրիանոսի. 'ի կրկէսն Ներոնի. յԱմենադից մեհեանն Ագրիպպայ, և յարշաւանս անդ, միաստուածակարծ հետաքննութեան 'ի մոռացօնս արկեալ էր զանփառու-նակ եկեղեցւոյ քրիստոնէից զայցելութիւն:

Ոչ պարտաւէին աչք իմ 'ի գնիին ժողովրդեանն որ յամենայն ազգաց երկրի հաւաքախմբեալ, և շուրջ գնդիցն Հռովմայեցւոց, կելտաց, գերմանացւոց, յունաց և ափ-րիկեցւոց, զանազանեալ իւրաքանչիւր զինու և զարդու իւրեանց: Ծեր սաբինացի՝ սանդալ 'ի յոտս՝ կազմեալ 'ի կեղևոյ ցարուոյ, գնայր առ ծիրանազգեաց ատենակա-լի. զգեստակ առն հիւպատոսի խառնէին կուռք հնոյ պառնկի. արջառք սպիտակք Կլիտումնոյ՝ ձգէին 'ի Հռովմ-մէական հրապարակին զՎոլսկեանցն այլ վայրենազգեստս. աղխամաղխք որոց ասպետի Հռովմայեցւոյ՝ արգելուին զճանապարհն դիցանուէր. քուրմք դիմէին խունկս ար-կանել աստուածոց իւրեանց, և հռետորք առ 'ի բա-նալ զվարժարանս:

Քանիցս ելի յայց 'ի բաղանիս զարգարեալս մատե-նադարանօք, և յապարանս՝ յորոց կէսք վաղ կործա-նեալ, և այլք էին կիսաւերք՝ առ 'ի կանգնել աւերակօք նոցին այլ շինուածս: Ընդարձակածաւալ ծիր տեսու-թեան ընդ մեծակառոյց հռովմէական ճարտարապե-տութեան կցորդեալ. ջրմուղք՝ ուր ճառագայթաձև 'ի մի. կեդրոն դիմեալ, ջուր ընդ յաղթական կամարս ածեն տիեզերակալ ժողովրդեան. անլռելի խոխոջք աղբերաց. բազմութիւն անդրեաց՝ որպէս ժողովուրդ արձանա-ցեալ անշարժ 'ի մէջ յուզեալ ժողովրդեան. արձանք յի-շատակի ամենայն աշխարհաց և ժամանակաց. փառաւորք թագաւորաց, հիւպատից և կայսերաց. կոթողք յափշտա-տակեալք յԵգիպտոսէ, և շիրիմք բարձրացեալք յԵլլադայ. գեղ իմն չգիտեմ որպիսի 'ի լոյս նորա. մէգք և կեր-պարանք լերանցն. խառնութիւն իսկ ընթացից Տիբերի.

Ջոկք զժուարընդել երիվարաց՝ որ զնա անդր յաւեալ. ան-դաստանն՝ զոր արդ ժողովուրդ Հռովմայ չառեալ յան-ձըն մշակել, սանձմանէ ամի ամի ազգաց նուաճելոց ընդ իւրև զդատի տալոյ իւր կերակուր: Եւ զի՝ մի մի Թու-լցեմ. ամենայն ինչ 'ի Հռովմ զիշխանութեան և զմշակըն-ջենաւորութեան բերէ զկնիք. զտեղագիծ պատկեր իսկ յաւերժական քաղաքին տեսի 'ի Կապիտոլին՝ քանդա-կեալ 'ի քարեղէն ծայրս, զի մի՛ և պատկերն ջնջեսցի:

ՏԱԴՌԳՐԻԱՆ. Վկայք:

---

ԲԵՏԻԿԷ

Երկիրն այն արգաւանդ, ուր բարեխառն է երկիր և հանապազօր ջինջ և անամպ, 'ի Բետիս գետոյ ընկա-լաւ զանուն, որ անցեալ ընդ այն՝ յովկիականն երթայ անկանի 'ի ծով մերձ 'ի Հերակլեայ արձանան, 'ի տե-ղի՝ ուր ծով զայրագին փլուզեալ երբեմն զամբարտակս իւր, անջրպետեաց զԹարշիշ 'ի մեծէն Ափրիկեայ: Ամե-նայն բարութիւնք ոսկի գարուն Թուին յարակայեալ յերկիրն յայն. ձմեռունք եղկք են անդանոր, և ոչ եր-բեք դառնահոտք փչեն անդ հողմք հիւսիսի. և զամա-րայնոյ մեղմեն զտօթ զեփիւռք զովարարք, որ զմիջա-ւուրբ շնչեալ հանապազ քաղցրախառնեն զօդս: Եր-ջանիկ իմն ընդ ամն ողջայն անդ է տեսանել զուգաւորու-թիւն զարնայնոյ ընդ աշնան, որ Թուին աղակիցք իրե-րաց յօրինել պար: Հովիտք և դաշտք հարթածաւալք՝ երկիցս 'ի տարւոջ մատուցանեն հունձս. և զճանա-պարհս ցանկեն երկուստեք սարդենիք և նռնենիք և յասմիկք, և այլ եւս Թփք մշտադալարք և յարափթիթք: Ծածկեն զլերինս երամակք խաշանց, մատուցանելով զասր նուրբ՝ ցանկալի ազգաց առհասարակ ծանօթից:

Են 'ի գեղեցկանիստ երկրի անդ և ոսկեհանք և արծաթահանք. այլ բնակիչք երկրին պարզամիտք, և պարզմտութեամբ բարեբաստիկք, ոչ արժան համարին գրել ընդ մեծութիւնս իւրեանց զարծաթ և զոսկի, զայն եւեթ վարկուցեալ մեծութիւն՝ որ զպէտս կարևորս կենաց մարդկան տնօրինէ։

Ի սկզբան անդ վաճառականութեանս մերոյ ընդ նոսա, գտաք զոսկին և զարծաթ 'ի նոյն պէտս առ նոսա 'ի կիր արկեալ՝ յոր ինչ զերկաթն, մինչև 'ի խոփս արօրոյ ձուլեալ. քանզի չունելով նոցա ընդ այլ ազգս տուրևառ, չէին նոցա պէտք դրամոց։ Գրեթէ առհասարակ հովիւք են կամ հողագործք. սակաւք 'ի նոսա գտանին ձեռագէտք, զի կարեւորաց եւեթ 'ի սոյդ պէտս մարդկան արուեստից ներեն. մանաւանդ զի և բազումք թէպէտ և հովիւք կամ մշակք, պարապեն և յարուեստս կարեւորս անպաճոյճ և սակաւապէտ կենաց իւրեանց։

Կանայք նոցա մանեն զասրն գեղեցիկ, և կերպասս անտի նուրբս և ձիւնափայլս ստայնանկեն. նոքա թրեն հաց, և խոհակերեն. և ոչ ինչ դժուարին է նոցա վաստակն, զի կերակուր բնակչաց երկրին միրգ է և կաթն, և դուն ուրեք խաշ։ Տրեխս թեթևս 'ի մորթոյ խոյոց 'ի պէտս իւրեանց գործեն, և արանց իւրեանց և որդւոց։ Վրանս մաշկեայս կազմեն մոմապատս կամ 'ի կեղեւոց ծառոց. կարեն զձորձս ընտանեաց և լուանան. կոկիկ և բարեկարգ զտունն զամենայն ունին։ Դիւրակազմք իսկ են ձորձք նոցա. զի 'ի քաղցրախառն նահանգին փերթ ինչ եւեթ նուրբ և թեթև կերպասու, ոչ հատեալ և ոչ ձևացեալ, 'ի ծալս վերուստ 'ի վայր երկայնաձիգ արկանեն զանձամբ առ 'ի ծածկոյթ, իւրաքանչիւր ըստ կամի յարդարեալ զայն զիւրեւ։

Արանց՝ բաց յերկրագործութենէ և 'ի հովուելոյ խաշինս՝ չիք այլ արուեստ, բայց հիւսնել զփայտ և դարբնել զերկաթ. և յերկաթոյ իսկ գրեթէ ոչ ինչ դարբնեն,

քայց միայն անօթս երկրագործութեան։ Ամենայն որ 'ի ճարտարապետութիւն պատկանին արուեստք՝ առ ոչ ինչ են նոցա պիտանացու. զի ոչ կառուցանեն նոքա ապարանս, առաւելագանց իմն համարելով 'ի վեր երկրի զակատումն՝ շինել աստ տուն երկարատև յոյժ քան զկեանս մեր. այլ շատ համարին պատսպարել վաշկատագի յարկածից օդոց։ Իսկ զայլ ամենայն արուեստս որ մեծարին առ Հելլէնս, առ Եգիպտացիս և առ այլ ամենայն քաղաքաճեալ ազգս, ատեան որպէս գիւտս նանրամտութեան և մեղկութեան։ Ի լսել նոցա զայլոց ազգաց շինուածս հոյակապս, զսպաս ոսկեղէնս և արծաթեղէնս, զկերպաս առնեգործեալս ոսկւով և ընդելուզեալս ականց պատուականօք, զընտիր խուղխիւցութիւնս, զհամադամ խոհարարութիւնս, և զնուագարանս, որոց ներդաշնակութիւնք կախարդեն զլսելիս, ասեն. Աւա՜ղ ազգացն այնոցիկ՝ որ այդչափ աշխատութիւն և հնարս 'ի կիր արկանեն առ 'ի զեղծումն իւրեանց. աւելորդքդ այդոքիկ մեղկեն, արբեցուցանեն և խոշտանգեն զստացիչս իւրեանց. իսկ զորս վրէպքն իցեն յայնցանէ, հրապուրեն առ 'ի ստանալ զայնոսիկ զրկանօք և բռնութեամբ։ Արժա՞ն իցէ համարել ստացուածըս, որ վնասակարք են մարդկան. մի՞ թէ բնակիչք աշխարհացդ այդոցիկ առողջագո՞յնք իցեն քան զմեզ և զօրաւորք. կամ երկայնակեա՞ցք քան զմեզ, կամ առաւել ընդ իրեարս միաբանք, և կամ ազա՞տ և անդորր և զուարթ քան զմեզ վարիցեն կեանս։ Նա աւանիկ հարկ է նոցա նախանձընդդէմս զոլ միմեանց, հաշել և մաշել վատ և անարգ մախանօք, յոր 'ի տագնապի կալ փառասիրութեամբ, երկիւղիւ և ագահութեամբ՝ անճաշակք 'ի վայելից անապական և անխառն բերկրանաց. զի ընդ գերութեամբ կան կարծեցելոց կարեացն, յորոց համարին զբարեբաստութիւն իւրեանց։

Եւ յառաջ ածեալ Ադովամայ զբանսն, ասէր. Այսպէս ահա իմաստասիրեն Բետիկեցիքդ, 'ի բնութենէ

եւեթ անարուեստ դաստիարակեալք յիմաստութիւն։ Գործին նոքա 'ի մերձ քաղաքականութենէս, և պարտ է խոստովանել զի նոցայն գերազանցէ ցանկալի պարզութեամբ։ Հասարակաց վարեն կեանս, առանց լարաբածին առնելոյ զերկիր. տանուտէր իւրաքանչիւր հրամայէ 'ի տան իւրում որպէս արդարև թագաւոր, և իշխանութիւն է նմա պատուհասելոյ զորդիս իւր և զթոռունս յանցաւորս. այլ մինչչեւ պատուհասել՝ հարցանէ զընտանիս իւր։ Բայց գոն ուրեք պէտք լինին պատուհասի. զի անմեղութիւն բարուց, հաւատարմութիւն, հլութիւն, և ատելութիւն չարեաց բնակեն յերանաւէտ երկրին։ Աստրէա, զորմէ աւանդեն յերկրէ յերկինս խոյս տուեալ, թուի տակաւին աստ 'ի ստորև առ նոսա ապաստանեալ։ Չեն նոցա պէտք ատենից, զի խիղճ մտաց դատաւոր է նոցա։ Հասարակաց է նոցա ամենայն ինչ. պտղաբերութիւն ծառոց, արմտիք երկրի, և կիթ անդէոց, այնպիսի առատ պատրաստեն նոցա մեծութիւնս, զի ազգն այն անկաւապէս և զգաստ՝ չկարօտի բաշխից առ իւրաքանչիւր պէտս։ Ի բարեբաստ գաւառին ազգատոհմ իւրաքանչիւր ոչ 'ի միում ուրեք զկայ առեալ, այլ տեղւոջէ 'ի տեղի 'ի սպառել բերոց և 'ի չգտանել անդ ճարակ խաշին՝ փոխէ զվրան իւր։ Եւ այսպէս չունելով ինչ նոցա սեփական առ 'ի պաշտպանել զայն յերեսաց այլոց, սիրեն զիրեարս որպէս զեղբարս, և չիք ինչ՝ որ աղմկել զսէր նոցա կարիցէ. մերժումն սնոտի մեծութեանց և պատիր բերկրանաց պահպանէ զխաղաղութիւն նոցա, զմիաբանութիւն և զազատութիւն. ազատք են ամենեքին, և ամենեքին հաւասարք։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

[illegible]

[illegible]

տութեանն։ Այլ իցէ՞ որով իւիք ոչ զեղծանիցին մարդիկ։ Արարուցին այն ազատ և ինքնահրաման, 'ի հանդըստի և 'ի ճոխութեան, փոխանակ մեծարանս դնելոյ անապատացս այսոցիկ՝ որ ազատութեան նորա են պատուարք, շաղախէ զնոսա յեզերուն. հաստեալ անցանէ զնոքօք առ դրակիցս յազգաց՝ բառնալ 'ի նոցանէ զերի և արծաթ, զանմարդի կայանս 'ի դիւր ելուզակութեանց իւրոց առնու, յորս ձմխոզակի իմն զուարճանայ նա քան ընդ ինքնիշխանն ազատութիւն. քանզի և յոր միանգամ բուռն հարկանէ՝ և ոչ մի ինչ է որ ոչ յաջողիցէ նմա։ Թէպէտ 'ի կասկածի կայցեն մերձակայքն հանապազ, և առաւել իսկ իցեն զօրութեամբ, սակայն 'ի դերև հանէ զհետամուտ պնդութիւն նոցա, և ածէ անպատուհաս զամենայն զոր միանգամ 'ի նոցանէն թափեաց։ Արաբացի որ զապատակութեան կեանս զայս կամիցի ընտրել, անդստին պնդէ զանձն 'ի տոկս ճանապարհին. տայ զանձն 'ի վարժս տքնութեանց և քաղցոյ և ծարաւոյ և տօթոյ, միանգամայն և զուղտ իւր հրահանգէ 'ի նոյն կէտ նպատակի։ Ցետ ոչ բազում աւուրց ծնանելոյ նորա, թեքէ զսրունսն ընդ որովայնիւն, և ստիպէ զնա այնպէս բեռինս դժուարակիրս բառնալ 'ի վերայ, զի վարժեսցի տանել. և ոչ առնու ինչ 'ի բաց անտի բայց զի զառաւելն 'ի վերայ յաւելուցու։ Սկիզբն առնէ սանձ կերակրոց նոցին արկանել, չթողացուցեալ զբուտ յարաժամ և զջուր 'ի ծարաւուն, և ձգէ երկայնէ տակաւ և զմիջոց ժամանակի, յապաւեալ և զկերակուրն անգամ։ Այն ինչ յոյժ գան մարմնոյն՝ վարժէ յընթացս, յօրինակէ ձիանին գրգռեալ, մինչև թեթևս հանգոյն նոցին և քան զնոսա կորովիս յարդարել. 'ի վերջէ՝ յաներկուանալ նորա ղուժոյ, զթեթևընթաց վազիցն, և զժուժկալութենէ ուղտուցն, յայնժամ ապա բեռնաւորէ զնոսա իւր և նոցա կերակրովք. չուէ նոքօք, և ահա յանկարծ 'ի գլուխ սահմանաց անապատին՝ անկանի 'ի վերայ որոց նախն ընդառաջեն, ղառ և զապուռ ժողովէ յարկացն

Digitized by Google

վայրավատին, և յաւարէն զուղտսն ծանրաբեռնէ. և թէ իցեն որ զհետ մտանիցեն, և փախուստ տագնապափոյթ հասցէ 'ի վերայ, անդ հանդէս է մտաց իւրոց և նոցա ճարտարութեան։ Չեծեալ յուղտուցն օդապար՝ առաջնորդէ հօտին անդադար 'ի վազից զտիւ և զգիշեր, ոչ ծարաւոյն և ոչ քաղցի ուշ եդեալ. զերիս հարիւր փարսախս հեշտեաւ հատանէ յութօրէս, ոչ թօթափեալ 'ի թիկանցն զբեռինս յաւուրս անդ վաստակոց և չուոյ, և այս նոցա հանգիստ ժամու չափ յաւուրն և բուռն մի հայա։ Այսպէս յաճախ զինն և կամ զտասն աւուրս ընթանան անջուր, և հանդուրժեն ծարաւոյ. և թէ երբեք եղտիւր փարսախաւ կիսով հեռագոյն կայցէ՝ զջրոյն առնուն զհոտ. սպասուք ծարաւոյն որ զնոսա տագնապէն՝ շտապէ զքայլափոխս, և յայն մի նուագ զանցելոց և զնոյնքանի ապագայից ըմպեն զտեղի. զի եօթնեկայ յօգունց են յոլովակի ճանապարհք նոցա, և ըստ ճանապարհին են և սպահոցն աւուրք։

ԲԻՒՖՖՈՆ. Բնական Պատմ։

---

## ԱՆԳԵԼԱՆՈՑ. ԱԳԻԿԱՐ ՋԻՆՈՒՈՐԱՑ

Ո՛չ ուրուք 'ի մէնջ չիցէ տեսեալ երբեք զզօրականդ հինաւուրց, յիւրաքանչիւր ժամս աւուրն աստ և անդ զետնամած թաւալեալ 'ի կճեայ յատակս տաճարին, որ 'ի միջի անդ շքեղ օթևանաց նոցին կառուցեալ կայ։ Սպիտակութիւն բազմաժամանակեայ ալեացն, սպիք ճակատու նոցա, և մարմնոյն սարսուռ՝ զոր ամացն ևեթ ծանրութիւն զօրացաւ 'ի նոսա տպաւորել, այս ամենայն մեծարանս իմն զառաջինն 'ի սիրտս մեր ազդեն։ Այլ յորժամ տեսանիցէ ոք զնոսա՝ զի բազում 'ի վեր ամբարձեալ և ճգամբ իմն առ իրեարս զդողդոջուն ձեռսն մերձեցու-

ցեալ, զնա՝ որ տէրն է տիեզերաց և արարիչ նոցա. և ամերիկա-նացն վկայ՝ կարդայցեն. յորժամ տեսանիցէ զաղանս յետանօթագին պաշտամանս առեղ 'ի մատուցանս արկեալ բա-զմանգամ և զցաւսն՝ որ 'ի վերայ կայ նոցա և զանցեալ մեղաց վասն նոցին. յորժամ նկատիցէ զնոսա խաղաղական դիմօք յորին կանգնել, առաջարկեալ ունելով 'ի խորս տգիտութեան զանգգայութեան և զյուսոյ նշոյլս ճառագայթից, ասէ առա, զորպիսի խանդաղատանս ոչ զգայցէ ընդ յայն-ժամ. Ո՜հ, մի՛ լիցի քեզ յայնմ պահու արտասուս 'ի վերայ նոցա արկանել, ո՛ որ բարեպաշտութեամբք և երթ զաշխարհի զերանութիւնն չափես: Այսպէս նուաղեալ է տեսիլ նո-ցա. տարտ է և դողդոջ մարմինն, և մահ 'ի համար արկանէ զքայլս ոտիցն, այլ զանհրաժեշտն զայն վախճան՝ յորոյ և յիշատակէն, դու զարհուրեալ փախիցես, նոքա անվրդով ակնդրութեամբ տեսանեն առ դուրս եկեալ հասեալ. և նաև ընդ առաջ իսկ դիմեն նմին, յիշատակաւ Այնորիկ՝ որ բարին է և ամենազօր, և զոր չէ հնար սիրել՝ առանց մխիթարութիւն 'ի նմանէ ընդունելոյ: Ո՛ն եկայք առ վայր մի 'ի զնին հրաշիցս, որք զկրօնականն կարծեաք ար-համարհեալ անարգէք, և զերազանցիկս 'ի լոյս զանձինս համարիք. եկայք տեսէք 'ի մօտոյ զինչ առ երջանկու-թեամբ տոցա՝ կարծեցեալն ձեր արժիցէ գիտութիւն: Աղէ, կամ փոխեցէք զպայմանն վիճակի մարդկութեանս, և թէ բաւականք իցէք՝ հաստատակորդս արարէք զնոսա վայելից աշխարհիս, և կամ ուսարուք գտնել մեծարանս դնել կրօնից՝ որ զէն 'ի ձեռս նոցա մատուցանէ ընդդէմ բռնութեանց բաղդին: Եւ քանզի բռնաւորացն քաղա-քագիտութիւն ձեռնատուական լեալ զգուշացաւ նմա, զի ոչ զօրէր երկրաւնութիւն նոցա յաղթել 'ի մոլեգին յայս ձեռ-նարկ, դուք՝ որ մարդասիրագոյնքդ էք բնութեամբ, մի՛ խիստս և մի՛ անհաւորագոյնս քան զնոսա լինիջիք: Եւ եթէ անագորոյն վարդապետութեամբ կամիցիք բառնալ առ 'ի ծերոցն, 'ի խօթացեալ և 'ի տնանկ մարդկանէն՝ զմիակն զայն առհաւատչեայ երջանկութեան, յոր ևեթ

Digitized by Google

պատրաստեալ է նոցա, ապէ ընթացէք և 'ի քաղաքս անդ. և 'ի պատերազմին խառն՝ ուրախօր աստուածայինքն չարալլուկ աւանդին 'ի չքմեղս, և ձեռաց ձերոցն փոխեցէք և զգոյն զգեստ մաշեալ՝ ... ... ... նմա:

ՆԷՑԷՐ

---

## ԶԷՆՔ ՏԵԼԵՄԱՔԱՅ

Տելեմաք՝ որ կայրն որտարեկ և անմխիթար, թողեալ զտրտմութիւն՝ առ զզէնս իւր՝ զորս իմաստուհւոյն Աթենասայ պարգևեալ էր նմա, 'ի կերպարանս Մենտորի՝ իբր թէ 'ի ամենապայծառ ճարտարէ զոյնովիկ առեալ, բայց Հեփեստոսեայ զոյնովիկ տուեալ էր դարբնել 'ի ծխամած խորոչս լերինն Էտնայ: Եւ էին ողորկ և ջինջ իբրև զբիւրեղ, և փայլուն իբրև զճառագայթս արեգական:

Քանդակեալ 'ի զրահն Պոսիդ և Պալլաս կային 'ի վէճ, երկպառակչէին յիւր անուն զնորակերտ քաղաքին կամելով զիւառս. եռաժանեաւն Պոսիդ փետեկէր զերկիր և երիվար սօս փռնչելով ընդոստնոյր բոցակն և փրփրերախ. բայց նորա 'ի հողմոց զուլամբն փաղփեալ. սլբունքն ճապուկք հաստաջիլք կորովակի և թեթև ընդգրկեալք, և թուէր թէ ինքն ճախր առնուլ քան քայլափոխ, զհետս անգամ արշաւաւոր սմբակացն ոչ թողլով, և խորխինջ իսկ նորա գրեթէ գոյր լսելի:

Այլուր Աթենաս մատուցանէր բնակչաց նորոյ դաստակերտին զպտուղ իւրատունկ ձիթենւոյն. ուղէշն այնպտղաւոր 'ի դէմս ածէր զցանկալի խաղաղութիւն համգերձ լիութեամբ, զեր 'ի վերոյ խաղմական ամբոխութեանց՝ որոց երիվարն այն էր նշանակ: Գուպարոյաղթ արձանանայր պարզ և օգտակար պարգևաքն դիցուհին,

և քաղաքն հոյակապ 'ի նորին անուն յորջորջէր Աթէնք:

Եւ այլուր դարձեալ շուրջ զդիցուհեաւն բոլորեալ գեղարուեստք, մանկունք մատաղք Թեսաբուսիկք ընդ հովանեաւ նորա պատսպարէին զարհուրեալք 'ի գազանային 'ի համայնաւեր ցասմանէն Արեայ, որպէս գառինք զմայրն թառաչելով դիմեալք յերեսաց սովալլուկ գայլոյ՝ որ մոլեգին բերանաբաց յարձակի խողխողել զնոսա: Իսկ ինքն դիցուհին խոժոռ և մեծասաստ յամօթ առնէր գերահանճար անկուածովքն զժպրհութիւն Արաքնեայ՝ որ իշխէրն 'ի վէգ գալ ընդ նմա 'ի ճարտարագոյն ոստայնանկութիւն. և վատշուէրն ծիւրեալ անդամք և ագեղացեալ 'ի սարդ փոխակերպէր:

Ոչ ինչ 'ի բացէ նոյն ինքն Աթենաս 'ի սկայամարտն Տիտանանց խորհուրդ տայր Արամազդայ, և խրախոյս դիցն առ հասարակ պակուցելոց: Նոյն ինքն դարձեալ նիզակ 'ի ձեռին այծենակաճ ասպարաւն կայր արձանացեալ յեզր Քսանթեայ և Սիմոյեայ, զձեռանէ կալեալ Ոդիսեայ, քաջալերելով զգունդս Յունաց փախըստեայս, և քաջաց զօրավարացն Տրովացւոց և անհարկուին իսկ Հեկտորի զդէմ կալեալ. և զՈդիսեւս 'ի ներքս մուծանելով 'ի մահառիթն կազմած՝ որ 'ի միում ևեթ գիշերի զՊրիամու կործանելոց էր զինքնակալութիւն:

Անտի և Դեմետրէ դրուագեալ 'ի վահանին, յարգասաւոր անդաստանս Էննայ 'ի միջերկրայս Սիկիլիոյ, ժողովէր զորեարն վայրավասին զհետ որսոց և 'ի կութ մրգաց վայրի առ 'ի սնունդ, ուսուցանէր վայրագասուն մարդկանն ձլել զկորդ, և 'ի բազմաբեղուն ծոցոյ երկրի հանել զսնունդ իւրեանց, և մատուցանէր նոցա զարօր՝ ձգելով զեզնամոլն 'ի լուծ: Բանայր անդ երկիր ակօսաբեկ 'ի խոփ արօրոյն, և հունձք ոսկեփունջք 'ի վեր երեւեալ՝ ծածկէին զյուռթի արտորէս. հնձէր արտահունձ 'ի սայր գերանդւոյ զբերս երկրի, վարձս ցանկալիս վաստակոց իւրոց. երկաթն 'ի յաւեր ամենայն ուրեք այլուր

Digitized by Google

պաշտեցեալ, առ 'ի պատրաստել ևեթ լիութիւն և բարօրութիւն անդանօր պաշտէր։

Մերձ յանտառ ուրեք յաւէրժհարսունք ծաղկազարդեալք պարէին ընդ արօտ առ գետափամբ. Նուագէր Պան սրնգաւ, և Փաւոնայք և մարգապայք խնդամոլիք թինդըս առեալ մեկուսի կայթս հարկանէին։ Պսակեալ 'ի թաղեղն երևէր անդ Սպանդարամետ, յեցեալ աջովն 'ի տէգ իւր կարճաբուն, որթ սաղարթագեղ և ողկուզալից կթելով 'ի ձախումն. գեղ դիմացն նորա մեղկ, այլ ազնուական իմն խանդաղանօք նուաղեալ կաթոգին, որպէս էրն հիգին Արիադնեայ երևեալ, լքելումն մենաւոր խորասոյզ 'ի վիշտս յօտար գետեղեր։

Հանդերձ սաքիմբք և որեար բազում ամենայն ուրեք անդ երևէին. ծերք զերախայրիս 'ի մեհեանս ընծայաբերելով, արբունք խոնջ 'ի վաստակոց տուընջեան՝ առ հարսունս իւրեանց դառնալով, և կանանին ընդ առաջ նոցա զորդեակսն գգուանօք զձեռանէ առեալ բերելով։ Հովիւք իսկ երևէին անդ երգեցիկք, և կէսք 'ի նոցանէ 'ի նուագ սրնգի պարաւորք։ Ամենայն ինչ յանդիման առնէր անդ խաղաղութիւն, լիութիւն և բերկրանս, ամենայն ինչ անդ գեղածիծաղ և գեղանսիհ։ Եւ դայլք յարօտս անդ խայտային ընդ խաշինս, և առիւծունք և վագերք մերկացեալ զգազանութիւն՝ ընդ մատաղերամ գառինս գնային ճարակաւորք, և համբակ հովուի արածէր զնոսա ցպով։ Դարն ոսկեղինիկ հանդերձ համայն բերկրանօք թուէր անդ նկարեալ պատկեր ցանկալի։

ՖԷՆԷԼՈՆ. Տելեմաք։

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ ԱՒԵՐԱԿԱՑ ՊԱԼՄԻՐԱՅ

Այն ինչ տակաւին 'ի մուտս լեալ էր արեգակն, և կամար շառագոյն դեռ ևս յայտ առնէր զհետս ընթացից նորին զբացական լերամբք երկրին Ասորւոց, և ահա լուսին կարմրկնաձև ամբառնայր յարևելից ընդ կապոյտակ օդոյն ասպարէզ, 'ի վերայ դաշտաձև գետափանցըն Եփրատայ։ Անամպ էր երկին, և օդ հանդարտ և խաղաղական. նուաղ պայծառութիւն տուընջեան ամոքէր զարհաւիրս խաւարի, և գիշերոյն զովութիւն մեղմէր տակաւ զտապ երկրին բորբոքելոյ. մեկնեալ էին ուղտերամածք 'ի գոմս իւրաքանչիւր, և դոյզն անգամ շարժումն կենդանական չերևէր զերեսօք տօթակէզ անապատին։ Լռութիւն համատարած պատեալ էր զամենայն, և միայն երբեք երբեք լսելի լինէին կռինչք եղերականք հաւուց գիշերայնոց և աղուեսուց վայրենեաց։ Ստուերք գիշերոյ թանձրանային տակաւ, և աչք իմ բըլչացեալք յաղջամղջին մթութենէն՝ զսեանցն և զորմոց հազիւ նշմարէին զընդ աղօտ կերպարանս։ Վայրքն ամայացեալք, գիշերն խաղաղաւէտ, և տեսարանն վսեմական՝ զերկիւղածութեան իմաստից առնուին զինև արկանէին։ Տեսիլ անմարդաձայն քաղաքին, յիշատակ ժամանակացն անցելոց, և առաջիկայս իրաց հանգամանք ընդ նորին համեմատեալ, այս ամենայն առեալ ձգեցին զմիտս իմ 'ի խորհուրդս մեծամեծս։ Նստայ 'ի վերայ սեան միոյ խորտակելոյ, և զարմունկն յեց 'ի ծունկըս եդեալ, և զձեռն 'ի ծնօտի, հայէի ընդ անապատն, հայէի ընդ աւերակսն, և այլ յայլմէ եղեալ դանդաչէր անձն իմ 'ի ցնորս իմն անրջականս։ Ապաքէն աստանօր, ասէի ցանձն իմ, աստանօր բարգաւաճէր երբեմն քաղաք ճոխ և փարթամ. աստանօր կանգուն կայր աթոռ թագաւորաց մեծազօրաց։ Այս տեղիք անշէնք, ամբոխ բազմութեան մարդկան երթևեկէր 'ի սոսա. այս որմնա-

Digitized by Google

փուկք անշշունջք, չկահիւն գինուց և ձայնք ուրախութեան հնչէին 'ի սոսա. և այս դերբունք սեանց մարմարեայց կուտակեալք՝ ապարանս հոյակապս կազմէին. և այս սիւնք կործանեալք՝ զարդք էին մեծափառոյց մեհենաց. այս հետք ճեմելեաց՝ հրապարակք էին հասարակաց։ Իսր երբեմն գի անդր խուռներամ ճեպէին միահամուռ ժողովուրդք առ 'ի հարկանել զպատշաճ պարտիս աստուածպաշտութեան, և 'ի պահպանել խնամով զպէտս կենաց իւրեանց։ Ճարտար արհեստագէտք անդր կուտակէին զճոխութիւնս աշխարհաց. անդանօր լինէին տուրևառիկ փոփոխմունք ծիրանեացն Տիւրոսի ընդ նրբաթել մետաքսից Ճենաց աշխարհին. տարանիւթ ս-թոցացն Քաշմիրայ ընդ պճնազարդ կապերտիւքն Լիւդիացւոց. բազմազունի ականցն Պալթիականին ընդ մարգարտոց և ընդ ծխանելեաց աշխարհին Արաբացւոց, և ոսկւոյն Սոփերայ ընդ Թուղեան անագին։ Եւ զինչ ինչ մնացեալ իցէ արդ 'ի քաղաքէն մեծէ. կմախք եւեթ աղետալիք։ Զինչ ինչ նշխարեալ իցէ 'ի լայնածաւալ պետութենէն. յիշատակ եւեթ աղօտ և ունոտի։ Ի կամարակապ գաւիթս սորին, ուր աղմուկք չփոթից հնչէին անդադար, անդ կալեալ ունի զամենայն անդորրութիւն մահու. զբաղմամբոխ հրապարակն փոխանակեալ է լռութիւն գերեզմանաց, և զճոխութիւնս վաճառաշահ քաղաքին՝ աղքատութիւն քաւմնելի։ Արքունական ապարանք՝ դադարք լեալ են գազանաց, և առ սեմովք տաճարացն մակայլին հօտք ոչխարաց, և յալս բնակութեան աստուածոցն որջանան զեռունք զազրաթորմիք։ Ո՜հ, զիա՞րդ խաւարեցան այնքան փառք և պերճանք. ո՞րպէս չքացան այնչափ վաստակք և աշխատութիւնք։ Այսպէս ուրեմն 'ի կորուստ գնան ձեռագործք որդւոց մարդկան. այսպէս անհետք կորնչին աշխատութիւնք և ազգք համօրէն։

Եւ վէպք անցելոյ ժամանակաց յայտ յանդիման 'ի միտս իմ նկարէին, զմտաւ ածէի զամէն զառաջինս յորըս բազմաթիւ ազինք հոյակապք ունէին զկայրան զայ-

Նաւիկ. յուշ ածէի զԱսորեստանեայն զափամբք Արածանւոյ, զՔաղդէացին՝ զեզերբք Եփրատայ, զՊարսիկն իշխեցող յՀնդուս գետոյ մինչև ցծովն Միջերկրեայ. 'ի համար բերէի զԹագաւորութիւնս Դամասկոսի և զԻդումեայ, զԵրուսաղեմի և զՍամարիայ, զզօռ. Փղշտացին և զշահախնդիրն Փիւնիկեցի, և ասէի ցանձն իմ. Այս երկիր Ասորւոց, արդ Թափուր 'ի բնակչաց, քաղաքք հարիւրաւորք էին երբեմն 'ի սմա, և դաշտավայրքս այսոքիկ լի էին գեղիւք և աւանօք և ագարակօք: Ամենայն ուրեք արտորայք արօրադրեալք ամենայն ուրեք երթ և եկք ճանապարհաց, և խիտ առ խիտ բնակութիւնք: Բա՛րէ, զի՞ եղեն այնչափ հրաշակերտք մարդկեղէն ճարտարութեան: Ո՞ւր այն պատնէշք Նինուէի, ո՞ւր պարիսպք Բաբիլոնի, ո՞ւր ապարանք Պերսեպոլեայ, և մեհեանն Արեգ քաղաքի, և տաճարն Երուսաղեմի: Ո՞ւր իցեն գումարտակք նաւուցն Տիւրոսի, և մթերք Արադայ, և գործարանք Սիդոնի. ո՞ւր խուժան նաւաստեաց և նաւապետաց, վաճառականաց և զօրականաց. ո՞ւր մշակքն արօրադիրք, և հունձք և հարաւունք և հօտք ոչխարաց, և միանգամայն ամենայն կենդանի զեռուն շարժուն՝ որովք պանծայր այս երկիր: Աւա՜ղ, ահա յածեալ շրջեցայ ես ընդ երկիրս ընդ այս աւեր և խոպանացեալ. տեսի ես զվայրսն յորս հանդիսացան այնչափ ճոխութիւնք. և ահա լքումն և միայնութիւն..: Խնդրեցի զազգս վաղեմիս և զարարուածս նոցա, և զհետս նոցին հազիւ նշմարեցի իբրև զհետս անցաւորի որ ընդ փոշի անցեալ իցէ: Տաճարքն կործանեալք, ապարանքն տապալեալք, նաւահանգիստքն խցեալք, քաղաքք աւերեալք, և երկիրն անբնակ՝ վայր գերեզմանաց: Ո՜վ տէր. և ուստի՞ այսչափ տարօրինակ փոփոխմունք, և զի՞ այսպէս ծայրայեղ անչափութեամբ այլափոխել բաղդի կողմանցս այսոցիկ. է՞ր վասն այսչափ քաղաքք անկեալք և կործանեալք, և է՞ր աղագաւ նախնին այն ժողովուրդ ոչ ևս կենդանանայ և ոչ ևս աճէ յազգ և 'ի սերունդ:

ՎՈԼՆԷՅ. Աւերակք

## ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՍԱՐԱՆ ԿՈՏՈՐԱԾՈՅ ԶՕՐԱԿԱՆԱՑ ՎԱՐՈՍԻ

Յղ՛ ցանկութիւն Կեսարու զվերջին պատիւն մատուցանել զօրականին և զօրավարին. 'ի գութ շարժեալ և բանակն ամենայն վասն ազգականացն հերեանց և բարեկամացն, մանաւանդ 'ի դիպուածս պատերազմաց և 'ի բախտ մարդկան. Յղեցին նախ Կեկինոս հետազօտել զծածուկ անտառին, և կամուրջս և լիճս արկանել 'ի ճահճախոտ անդր՝ յանձնառուն դաշտավայրս. և այսպէս մերձաւորեցան 'ի տխուր տեղին անդր տեսլեամբ և 'ի յիշատակ։ Բնակետեղ Վարոսի ընդարձակապատ ցուցանէր անյէն 'ի շուրջ զնշանսն զվաստակ ձեռին երից լեզէոնաց։ Անդր եւ պատնէշ կիսաւեր և փոս թերակից գուշակէին խանձեալս անդ զմնացորդս զօրուն, և 'ի մէջ դաշտին ոսկերք սպիտակ ցան և ցիր կամ խառնաղանչ փախստէիցն կամ մարտուցելոց։ Անկեալ դնէին անդ բեկորք զինուց խառն ընդ անդամս ձիոց, և 'ի կոճեղս ծառոց գլուխք մարդկեղէնք մխեալ. և շուրջ անտառին բագինք խուժադուժք, յորս զոհեալ էին 'ի ազգին հազարապետաց զօրաց և գլխաւորք 'ի հարիւրապետաց։ Եւ ապրեալք ոմանք 'ի կոտորածէ մարտին և մազապուրծք 'ի գերութենէ պատմէին՝ ուր զօրավարք անկեալ, ուր արծուեդրօշք յափշտակեալ, ուստանօր Վարոսի զնախկին վէրսն ընկալեալ, և յորում տեղւոջ չարաբաստիկն բազկաւ զկենսն երթեալ, ուր ուրեք Արմինեայ առ զօրսն ատենախօսեալ. քանի՛ կախաղանս գերեացն, քանիօն վիհս հրամայեալ, և իբր զնշանս և զարծուիս խրոխտագոյնս թշնամանեալ։

Այդ բանակն Հռովմէական վեց ամաւ յետոյ քան ըզկոտորածն զայն 'ի տեղի անդր հասեալ, զոսկերս երից լեզէոնացն ընդ հողով արկանէր՝ ոչ գիտելով զիւրոցն թէ զօտարաց, այլ որպէս զազգականաց և զարենակցաց



Digitized by Google

Թաղելով զանիւնս, տխուրք առ հասարակ և ոխերիմք եւ քան զկես ընդդէմ Թշնամեաց զայրանցեալք։ Կանգնեցին անդ շիրիմ հողաբլուր, և հասարու զառաջին գուղձըն արկանելով, ապա շնորհապարտ մատուցեալ վախճանելոցն յարատասուակցորդ կենդանեաց։ Բայց Տերեւի ոչ հաճոյ Թուեցաւ գործն այն, ոչ միայն զի զԳերմանիկեայ զամենայն ինչ չարի ճարին վարկանէր, այլ և զի 'ի պատկեր կոտորելոցն և անԹաղ նոցին դիականց զօրականն տաղտուկ 'ի պատերազմէ և աշխատեալ 'ի Թշնամեաց զատանէր, և զի զարձեալ ոչ 'ի դէպ Թուէր նմա զօրավարի ամենայն սրբազան հանդիսի և հայրենականացն հարարողութեանն 'ի մեռելոյԹս պատահել։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

---

ԲՈՆՏՈՍ

Այդ գաւառ զոր մի գաւառ 'ի սկիւթացւոց որսասնոցն, յորում մարդոյս ազատուԹիւն չէր ծանրացեալ, երկայնես կ ոչխանդեալ, յորում ունելեզուԹիւն՝ է երբեք ոչ խառնակի ընդ եղեռան, յորում և յաւէրժ քան զվերջինն՝ ընդ ամենայն անցանելն պատիժս պատուհասից. մինչ, և Թէ երբեք չղԹայիցն խռով աշխարհ. ԵԹէ խաղաղիցն աշխարհս և հեծուԹիւնք խաւլ և խարխին՝ ոչ զմիոյն քո պաղեալ աստուցանեն կամ յետս դրեղ Թէ, ոչ ստուգանէ վարեսցէ. մնայ 'ի ցաւոց օԹեւանս նոցա. ... զքեզ սա. ուղ ինչ վայրկեան իշխանել յայն սեաւ զնդանն ոչ չտեսս երբեք զլոյս արփենւոյ, և յայն խաւարային կերպարանս ծանիր զպատկերականիցդ. 'ի չղԹայիցն ճաչեալք, 'ի ծունկս ինչ զկէս մարմնոյն ծածկեալ, ժահահոտք յանփոփոխ օդոյն, որ Թուի զԹոյն եղերան, ձգել, և որդանն՝ որ զգեցեալ զերբեզմանի սպառեն, կեր լինին կենդանեացն. ... ինչ և անախորժ պաշտօնեայ կերակուր. պակնուն սրտա-

քեկ՚ի նմանավիշտ ընկերացն աղետից, և՚ի ապառնալեաց անագորոյն պահապանին, ապաքէն զնոսա ահարեկէ մանաւանդ քան երկիւղ պատուհասիցն. այսպէս մշտատանջք զմահ կոչեն ՚ի նեղեանց ձեռնտու, զգայազրգիռն քան զայն կենաց տոռմելի:

Թէ էին եղեռնաւորք, սակայն և այնպէս զգԹուԹեան են արժանիք, և դատաւոր անարդար է, զանհոգացեալն ՚ի ղատել զնոսա: Պատուհաս կարգեցին օրէնք ՚ի մէջ յանցանաց և ՚ի հաստատութիւն ազգի մարդկան. այլ զինչ նշանակ բանտին տանջանացն երկարութիւն՝ ծանրագոյն է կրկին զպատժոյ յանցաւորին, և եղծանին օրէնք՝ եթէ ընդ չափ անցանեն. անիրաւութիւն մեծ եղեւն առ յանցաւորն և առ մարդկութիւն միանգամայն. Թող զի մէն մի վայրկեանք՝ ՚ի բանտի անդ ծախեալք՝ կորնչին անպէտք յօրինակ բարուց:

Այլ անմեղ Թէ արդ իցեն, ով ցաւք, ով գԹուԹիւն. մարդկութիւն առ այս՝ գոչիւն ահաւոր և աղեկէզ ամբառնայ ՚ի խորոց սրտէ: Առ իմէ՞ մարդ յազատութիւն ծնեալ՝ ընդ բեռամբ հեծէ շղԹայից. հալէ ՚ի բանտ խաւարչտին չնչէ այրն՝ ում երկինք պարգեւեցին զօդ և զլոյս եԹերին, քարշեալ բռնի ՚ի գրկաց ամուսնոյն և որդւոց հայրն տանուտէր: Ցաւք, անյուսութիւն և քաղց պատեն զանձկալի բնակութեամբ նորա. ձեռքն այն՝ որով զսիրելեաւն փարէր և ընդգրկէր զյոյսն գեղածին, ձեռքն՝ որ զկեանս նոցա հայթհայթէր, ուր սերմանէրն և հնձէր, ձեռքն այնուքիկ առ աշխարհն պիտանիք՝ ՚ի շղԹայս կան պարապ անգործք յանիրաւի. այն այր անարատ և անստգիւտ՝ դնի ՚ի վայրն պղծեալ ՚ի խղճէ մտաց. համառօտ՝ անմեղութիւն հեծէ յօԹևանս եղեռանց: Անդ՝ զկենաց մարդկան լամք ողորմագին զԹշուառ պայման. անդ՝ յառեալ զաչս ՚ի նախախնամութիւնն վերին՝ արձակեմք զայս դառն հառաչանս. Զբաղդ քոյին, ով մարդ, Թէ գիտիցես. վիշտք և մահ, ահա են քոյոյ կենացդ տապարիգի կէտք կրկին մեծամեծք:

ՕԵՐՎԱՆ

Digitized by Google

## ՓՈԹՈՐԻԿ

Էր աշուն թանձրամածիկ չոքելամանքի մէջ մթին Հրաշխաւան. արեգակն շառագունեալ, և միանդամայն ծանրահարթ և անծանօթ, և տխրատեսակ աղմկացն. գոյնք յար 'ի փոփոխման կային։ Եղջիւրք թանձրամած պարզատեսկեալ. զմրեխթայինք խառնակին և բազմաձանձիւն յենցի գերակրին։ Տերեւոք ամենայն յանշշունչ լռութեան անշարժութեան կային կախեալնք, 'ի սիրտ մեր ազդելով զերկիւղ։ Պատսպարեալք անդէն յանդամանամեծ մեծերին անդամք, և աշա 'ի խիտ ու խիտ հարուածս յանկարծ պատառեալ մածուած հրշեղէց մրգին զմթաք. անմիջ թանձանք դիզեալ զմայառանաց թաւալեալք ընդ աջ անկանէին յախս անձրեւաց յերկիր. հողմք անձանձրատեղք յարձակեալք 'ի ծով մրրկէին զանդաւներս։ Թնդդիւնք որոտմանց, մռնչիւն հողմոց, գոչմունք կոհակաց, զանգիւն անձանց, դղորդումն լեռանց, խառնեալ ընդ միմեանս 'ի շչինդն աշեղ՝ աւերածոյ տեսքերաց թուէին զուժկանք։ Եւ ապա զօրացեալ հիւսիսի փոթորկաց զդղրդեալ մրրկին 'ի բոցակէզ նահանգս Աֆրիկեայ։ Հայեաց դէպ Նորին, և ասաց յանկն մեր 'ի հեռուստ մանչիւն նորա։ Պայծառացոյն եւ պարզեցան երկինք. և ծովն որոյ մինչև յայնպէս փրփրադէզ ամբառնայր կոհակս՝ հանդարտեալ յեզերս վարէր.

ԲԱՐԹՈՒՂԻՄԷ. Ողևոր. Անապարեան։

## ՓՈԹՈՐԻԿ

Մինչդեռ նաւորդք կային մոռացկոտք ծովուն վտանգաց, մրրիկ յեղակարծ խաւարեցոյց զերկինս և զծով։ Հողմք շղթայազերծք մռնչելով մոլեգին 'ի յառագաստս խուժէին. ալիք թուխք յածէին զկողս նաւուն, որ ընդ հարուածովքն հեծէր։ Մերթ 'ի վերայ լեռնակուտակ ալեացն ամբարձեալք, և մերթ 'ի յորձախորս ալեաց՝ թուէր նաւս մեր վիճել անդնդասոյզ. և ծովս ևս հուպ առ մեզ տեսանէաք, ընդ որս կործեալ խորտակեցին այլք անհետացուցք։ Յայնժամ 'ի միտ առնուլ, զոր լուեալն էր ուսեալ 'ի Մենտորէ, զի որք մեղկք և փափկատեալք 'ի զբօսանս վայելչութեանց 'ի վտանգս գտանին. քանզի կիսա-ցեալք առ հասարակ բոթեալք լքեալք լային կանացա-բար. ոչ լալ ինչ կարել լինէր անդ, բայց ճիչ աղաղակել. աղաչաւորանք ընդ կորուստ հեշտութեանց, և խոստմունք անզօրք՝ զոհս դիցն մատուցանելոյ, եթէ փրկութեան կէտ հասանիցին։ Իսկ զի ոչ որ 'ի նոցա զայր զգաստ առ 'ի հրամայել կամ 'ի կատարել զնաւավարութիւն, պարտ զանձին փրկութեան փրկել ընդ խնամս զկեանս այլոց, զնդեալ կացի առ ղեկաւն. զի նաւուղիղն գինեհարբեալ որպէս զմի յառատուածապարաւորիկաց՝ չզգայր վտանգին. և խրախուսեալ զնաւաստորին ահաբեկ, իջուցանել հրամայեցի զառագաստս, և թի ուժգին վարել։ Իսկ անցաք ընդ ժայռս և ընդ խութ մերձ քերեալք ահաւորաց մահու։

ՖԵՆԵԼՈՆ.-Տելեմաք։

## ՄՐՐԻԿ ՑԱՄԱՔԱՑԻ

Հառանէր 'ի վերայ գիշեր. լուսին՝ լուսաւոր առնէր զանապատն ամայի, և չերևէր ինչ յանհովանի միայնութեան՝ բայց անշարժ ստուեր տաճիկ ուղտուն մերոյ և թափառեալ ստուեր հօտից ինչ վիթաց. Զլռութիւն վայրացն ընդհատէին ձայնք աղաղակի վարազաց՝ որ մահրէին զարմատս բուսեալս, և ձայնք երգոց ծղրիդաց՝ որ խնդրէին 'ի զուր յամուլ աւազուտոն զտուն առն երկրագործի:

Մինչև դարձ արարեալ լուսոյն՝ սկսանէաք դարձեալ ընթանալ զճանապարհ մեր. Ծագեաց արեգակն անճառագայթ, նմանեալ երկանաքարի 'ի կարմիր երկաթոյ. յաճախէր տոկաւ ջերմութիւն: Զերրորդ ժամու աւուրն ուղտն արագաքայլ զտագնապ իւր երևեցուցանէր. զքիթ իւր խորշամուխ արարեալ յաւազ՝ փչէր ուժգին: Մերթ ընդ մերթ լսելի լինէր եղերական ձայն ջայլամեան. բաց և գետնատարիծք փութային մտանել 'ի խորս երկրի: Առաջնորդն իմ նայէր յերկինս, և գունատէր. և հարցեալ ըզպատճառ ամբոխմանն, ասէ. Խիթամ 'ի հողմոյ միջօրէին. փութասցուք փրկել զանձինս: Դարձուցեալ զերեսս 'ի հիւսիս, արագապէս իբրև զուղտն իւր արաբացի դառնայր 'ի փախուստ: Երթայի ես զհետ նորա. այլ հողմըն ահաւոր որ սպառնայր՝ թեթևագոյն էր քան զմեզ:

Եւ ահա յանականկալս 'ի ծայրից անապատին գայր հողմն ուժգին. պակասէր երկիրն ընդ ոտիւք մերովք. մինչդեռ ուրեք աւազեղէնք՝ ամբարձեալք 'ի թիկանց մերոց՝ անկանէին 'ի վերայ գլխոց մերոց: Մոլորեալ 'ի բաւղի շարժուն լերանց՝ նմանելոց միմեանց, յայտնի առնէր առաջնորդն իմ, զի անծանօթ էր նմա ճանապարհըն. 'ի վերայ այլոց աղետիցն մերոց՝ յաւելաւ և այս՝ զի յարագութեան անդ ընթացից մերոց՝ տիկք մեր լցեալք ջրով ունայնացեալք էին: Շնչասպառք և պապաքեալք ան-

հնարին ծարաւով պլինդ ունէաք զչուանչ, զի մի զբոցն կլանիցեմք. քիրտն դժնդակ գետօրէն հոսէր 'ի մարմնոց մերոց: Սաստկանայր փոթորիկն, և պեղէր մինչև զհին-հիմնեան նշխարս, և զկիրճս խորս անապատին աւազա-նայր մինչև յերկինս: Թաւալեալ 'ի մէջ անձկոյ, անյայտ լինէր ուղեւորացն. և աղէտ լուսոյ ձայն, և դիմեցի՝ ուստի լսելի լինէր, և անհնարին երկիւղի կայծակնաձայնք լեալ՝ որ 'ի կրկին հողմոյ մնացեալ էր 'ի վերայ աւազոյս, և ատանելի աւուր նորա անհնարացեալ:

Իսկ յանձնեալ իւր աշխարհականաց կենդանութեան յընկե-րակցացն իմ Թչուառ: Եւ նախաձեռն հեռաւորոյն 'ի նմանէ, ու-նելով զաւանդից ձիոյս, և զյոյժ իմ 'ի նա միայն եղեալ՝ որ զհետ հետոցին Ազարեանց փոխեաց 'ի շունչ զովագին և 'ի հողմաքարշութեան: Ոչ մի ակնկալեալ ; անհեցեալ 'ի վերայ; եղև ինձ նմանի անապատանի: 'Ի Թիկանց զաղփաղփուն պատուհասին մնայի անցանելոյ մրրկին: Ի մերձենալ երեկոյին հողմն հիւսիսոյ շնչէր միւսան-գամ և կորուսանէր որ զկենդանութիւն իւր. աւագք Թռթռափէին յերկնից; երևեցուցանելով ինձ զատեղն: Ջանք անօգուտ. զի միայն զընդարձակութիւն անա-պատին երևեցուցանէին ինձ: Ընծայեցեալ էին ամե-նայն տանջանք ; և ճանապարհն խանգարեալք և եղ-ծեալք: Տեսանեմք ուղեղէնք ձևացեալք 'ի հողմոց ; յա-մենայն կողմանց պատկերս նորս առաջի առնէին աչաց, և զնորոգ իմն արարչութեան տայր նոցա կերպարանս:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. Ուղեւորութիւն.

## ՆՇԱՆԱԿ ԾԻԱԾԱՆԻ ԱՐԵԳԻ Ի ԿՂԶԻՆ ԳԱՂՂԻԱՑ

Ամառն տօթակէզ, որ երբեք երբեք տարածէ զմեծա-
սահմանս երկուց յեղյեղականց, եհաս և այսր հրդեհել զերկիր։ Ի վերջ կոյս դեկտեմբերի, յորժամ արեգակն հասեալ յայծեղջիւր՝ կէս զգացաթամբ կայ կղզւոյ Գաղղիոյ՝ հրակիզելով զնա եօթնեակս երիս, զօրագունեաց 'ի սպառ հողմն հարաւոյ՝ որ զամն ողջոյն շնչէ ամենօր. և ամպրոպք փոշւոյ երկայն ընդ ուղիս 'ի վեր վերացեալ՝ ընդ օդս կային. ամենայն ուրեք հերձոտէր երկիր, պապակէր դեղ դալար. 'ի կողից լերանց ողոխք ջերմաջերմք վերաբխէին, և ուղխք 'ի նոսա զրեթէ 'ի սպառ էին ցամաքեալ։ Ոչ և ընդ ծով ամպ ինչ երևէր. բայց միայն 'ի տուէ չոգի շառագոյն անդ 'ի գիշերայս 'ի վեր դիզացեալ. և ընդ արեմուտս որպէս հրդեհոց բոցք երևէին. և գիշեր իսկ ինքն ոչ մեղմէր զտապ տօթակէզ օդոց. Գունդ լուսնի հրաչեկեալ և տարածացեալ՝ ընդ մառախլապատ ծիրն երկնից յառնէր։ Խաշինք զգետնեալք յեմակս բլրոց, և զպարանոց ընդ երկին ձգտեալ առ 'ի ծուծ օդոց, 'ի տխուր բառաչ լնուին զձորս. և կափարտանիկն հովիւ նոցին՝ ընկողմնեալ յերկիր՝ խնդրէր զովանալ. բայց երկիր եռայր ամենայն ուրեք, և մղձկուտ այերք հնչէին յաղօտ բզզանս ճճեաց, որք զծարաւ իւրեանց խնդրէին թուժել յարենէ մարդկան և չորքոտանեաց։

Բայց 'ի տօթոյն սաստկութենէ զոլորշի բազում յովկիան ալեաց ամբարձեալ, տարածանէին զկղզեաւս որպէս հովանի լայնատարած. և 'ի կատարս լերանց ժողովեալ չանթք ակօսաձև 'ի միգապատ ծայրից անտի երբեք երբեք հատանէին։ Ընդ հուպ և որոտընդոստ ահագին ճայթմունք ընդ մայրիս անտառաց, ընդ դաշտ և ընդ ձոր զամամբ հնչէին, և արկանէին յերկնից տարափք հեղեղատատք, և ուղխք փրփրադէզք 'ի կողից սաստի լերինս զահավիժէին։ Խորաձոր հովտիս ծովացեալ 'ի ջուրց սարա-

Digitized by Google

Հատոյթ [illegible]՝ յորում հնագոյն կան՝ երկնեղանիցենդ 'ի ծա-
ղկանցն, և առանձնարարոյն 'ի մուտս հովանոյ՝ ընդ որ խաղոն
'ի խաղս արտասուս հանեցն ընդ ողորմ զայլնն ժայռից կո-
ճեդք և հող. Եւ սորգարեան ընդ երկնս զաղաղակօքն ամ-
պոց. զարմանս հողմն հարուցեալ և ընդ ապականեալ հիւսի-
սոյ վարելոյ՝ ամենացնծութեամբ մահու մերձ 'ի մուտս իւր:

ԲԵՐՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ ՓԻԷՐ: Թրգ Կ. Մխիթարեան:

---

ԹՌԹՌՈ

Ա՜չ ինչ կարի քաղցրիկն էր 'ի կղզւոյ սորոյն Դոմի-
նիկեայ քան զփարաւոնս հայրենի, և չև ևս զէայք ինչ նշա-
նաւորք պատահեալ էին մեծ՝ յորմէ հետէ մեկնեցայն
յափանց Դոմինիկոյ: Հողմն առաւօտին՝ որ այգուն այգուն
հանդարտութեամբ շնչեալ՝ հարկ տանէր մեզ պարզել զա-
ռագաստն զամենայն, տալով թռչէր զբօսանալ. և այնա
զուգեա մեղմաբարձուց իմն յարեաւ հողմն յանդոյն, և
զամ քան զգամ սաստկացեալ՝ վարէր տանէր զնաւն մեր
ընդ կոյտս կոհակաց անհնարին երագութեամբ:

Սակայն սոյժմու և գեղեցիկ էր օդն և կապուտակ
երկին. յորմէ մինչ կուսէ յիշանել անդ որեգական մե-
ծութ ժամանք 'ի ծով, եղերք երկնից բոցավառեալ՝ զայ-
նածաւալ հրաշալեաց քերէին զկերպարան. յասարկալ
եռեալ ծաւալուն յանդիման տանէր տեսողնեցաց զանեզ-
րական իմն զնն մեռուղղաց 'ի բոլու հայեաց. և թէ յան-
կարծ ուրեք դէպ տայր հաւու թռչնական զալ անցանել
ընդ այն կողմն եռենից, աչք մեր կորովացեալ հետամտե-
րեալ նշմարէին զնա հանգոյն իմն արշնաթոյր շամանդա-
ղեաց, որ 'ի թռթռացումն [illegible] ցնդեալ թեթև և թռուցեալ
մերումն քան զօդ... Դէպ ուրեք յարեգակն կոյս նաւա-
րկեալ խառնուածոք մեք. և թէ որ 'ի զինն մերոյ ուղևո-

րութեանս կայր 'ի ժամուն, համօրէն անշարժութեա-
մբռնեալ 'ի հրապուրանս յայն վաղուցուան զմտաց եր-
Թանք, իբրեւ զԹիԹեռն անմիտ որ զլուսով ճրագին Թը-
ռչիցի անեալ 'ի նոյն եւ զԹեւս խանձասցէ։ Եւ տրոփէր
նաւուն առէջ առէջ այլատեսակ յերեւոյթ ծածանմանց
լուծակի ալեացն՝ նորանորանց հիմն ընծայէր մեզ տե-
սարան, եւ զնաւն մեր սոսկալի Թխոր շահապետ ծո-
վուց երեւեցուցանէր...։

Եւ ահա յանկարծակի կոհակք փոԹորկեալք, շառա-
գոյնք, լուսափայլք եւ փրփրաձեւք դիզան բարդեցան զա-
ռաջեաւ նաւին մերոյ, որ ճախր առեալ խաղայր ընդ ա-
լիս։ Ցեռանդն ուժգին հարան առ ժամայն պայծառ
ջուրցն հոսանաց, ծաւալեալք շուրջանակի անդր քան
զգրկաչափս հարիւր. եւ Թէ տեսանէր ոք զյոյզս կոհա-
կացն պսակեալս, իբրեւ 'ի սաստիկ ջերմանէ արդեաք
տագնապեալ զծովն վարկանէր։ Անդէն եւ անդ անբար-
ձաւ դիզաւ ջուրն բլրաձեւ, եւ յառաջէր քան զմեզ. եւ 'ի
գնալ իւրում երԹալով երԹայր եւ աճէր եւ ուռնոյր ա-
հագին գոչմամբ. եւ ես զմտան էրն անգիտանայի, բայց
եւ զարհուրէի ոչ 'ի տեսլենէն։ Գամ քան զգամ 'ի հո-
սանուտ լեռնէ անտի հատուածերացն բարձրացեալ սրա-
նհեԹեԹ մեծուԹեամբ, եւ մրրկեալ շնչմամբ երկայնե-
ցաւ ձգեցաւ եւ յամպս երկնից հցեցաւ։ Անոք էր տեսա-
նել տեսիլ վսեմ եւ ոքանչելի, զսիւնն բիւրեղեայ ընդ
երկինս եւ ընդ երկիր կանգնեալ. եւ ճառագայԹք արեգա-
կանն նորին ղկատար նորին գեղազարդէին իբր դծխա-
ծան բազմագունի, եւ ստուեր ահագին զատորանոն ան-
կեալ պղնձի խարտիսաց զտիգ յայն նկարէր, որ 'ի ձեռան
վերայ հանատանեալ կայցէ։

ԹաԹանն, ԹաԹանն, աղաղակեաց առ հասարակ
նաւավարն եւ նաւաստի։

Ընդ այս բարբառ դողումն անամենկալ առ վայր մի
անկաւ զինեւ. այն ոռոտջին նուագ էր զի տեսի ես զԹա-
Թառն, եւ անդէն 'ի միտ ածի եԹէ քանի՞ առասպելաբ

բանք էին՝ զորս երբեմն ընթերցեալ էր իմ զայնմանէ։ Կարծէի ես 'ի տեսիլ տագնապելոյ ծովուն մեծի, եթէ ահա անդէն 'ի յորձանուտ ահագին դիմեմք կուր լինել. այլ զուարթերես զմերձակայսն տեսեալ՝ վերստին ոգի առի. Նոյն ևեթ կայր նաւաստին, ոչ յերկիւղ՝ այլ 'ի զարմանս ըմբռնեալ, և 'ի մին միայն ուշ եդեալ հայէին-գի մի 'ի թաթառն ընդհարցին։

Պահ մի 'ի գնին տեսարանին կացեալ, ապա գոչեաց նաւապետն. Հապա 'ի հուր. — դարձո զեկավարդ. — մեկ-դեք. յառաջ. — հար...

Թնդաց ձայն ամպին յերեսս անդնդոց, և սիւնն խորտակեցաւ առ խորխսուն, զդողանի հարաւ, սասանեցաւ առ վայր մի, և վերուզեալ հոսեցաւ յանկարծակի իբրև զահագին ինչ հկուսս ձիւնակաղոս։

Յետ սուղ ինչ պահու՝ և հետք անգամ մեծի տեսարանին չերևէին 'ի ծովու և դարձեալ վարեցաք մեք զընթացս մեր 'ի մուտս լոյս արևուն։ Ամեն արեգական կիսովլ չափ ծովասուզեալ՝ զյետին ձառագայթս իւր առ ձակէր 'ի մեզ. լայնածաւալ ծովուն այլք տակաւ սառեցացան, և նաւն ճոխաձեւ սուրայր ընդ նոսա իբրև ըղ-ձեռ ոստուցեալ 'ի լայնալիձ աղեղանէ, և իբրու ընդ գիշերավար անտեղծ երագութեան եկեալ 'ի վեր։ Ցայնմ վայրի լոյս արեգական չիջաւ յանկարծակի, (քանզի չիք յաշխարհի անդ վերջալոյս երեկորին), և այլք ծովուն և հետք նաւուն, և ծովն և նաւն և եզերք երկնից միանգամայն ծածկեցան յաղջամուղջս գիշերոյ։

ՀԱՌԼԷՔԷՆ

## ՅԱՅՏՈՒՄՆ ԿՂԶՈՒԿԻ

Յամին 1717, յամսեանն Մայիսի, բազում տառապանաց ելեալ հասի 'ի գագաթն Վեզուվի, և տեսի անդ պատառուած մեծ և լցեալ ծխով՝ որ ճեղքուցանէր յինէն զխորս վհին և զկերպարանս նորին. այլ 'ի խորոց ահաւոր անդնդոցն լսելի լինէին ձայնք պայթուցիկք, որպէս թէ 'ի ներքուստ յեռացերաց լերինն վերահնչեալք, և մերձ ընդ մերձ որոտմամբ լեռն 'ի թնդմանց հրաբոթոց, և դղրդման կղմնտրաց 'ի բարձանց անտի տապոց թաւալելոց 'ի փոցոցս: Եւ երբեմն 'ի փոփոխել ընթացից հողմոյն, ծուխն անօսրացեալ երևեցուցանէր բոց շառագոյն և զեզերս խառնարանին կարմրագոյնս և դեղնորակս իմն առուերօք: Իբրև ժամ մի էանց, փարատեցաւ ծուխն հողմավար, և տեսանէաք եռ ընդ եռ զխառն՝ մեծի վհին, յորոյ տափաստակի նշմարէի հնոցս իմն երկուս զոգձիկ յարակիցս. ձախակողմեանն թուէր երկու զրկաչափ բացուածով. և ցոլայր շառագոյն իմն բոցով, վերաբձակելով քարինս տարաչէկս կիզանելոյս ահագին ձայթմամբ, յորոց անկանելն 'ի դարս՝ վերոյիշեալ դղրդիւնք ձայնիցն գործէին: Յութ մայիսի, յառաւօտուն երկրորդ անգամ ելի 'ի գագաթն Վեզուվի, և տեսարան նոր յանդիման եղև ինձ: Ծուխն ծառացեալ բարձրացեալ՝ թողլ տայր տեսանել զխառնարանն բովանդակ. որոյ շրջապատ ըստ ակնն կշռելոյ թուէր միղոնաւ չափ, և խորութիւն իբրև գերկս յիսուն: Ընդ վերջնոյ այցելութեանն՝ բարձրաւանդակ իմն կոնաձև կառուցեալ էր 'ի միջավայր յատակին, կուտակեալ 'ի քարանց արտաձգելոց 'ի հրաբղխէն, և յետս անդրէն 'ի ներքս անկելոց. Սոյին 'ի նորաձոյլ բլրի անդ երկոքին հնոցքն զօրս 'ի վեր անդր յիշեցի. մի 'ի նոցանէ ահագին շառաչմամբ արձակէր առ մէն երիս կամ չորս վայրկեանս՝ խուռն տարափ տարաչէկ կիզանուտ քարանց, թերևս ցերեք հարիւր ոտնաչափ բարձրութիւն 'ի վերոյ

դիմոյ իմոյն ամպոց ոչ չնչէր հողմն 'ի պաշտաման անդրէն
գնալ ուժգին անհնարին 'ի վերայ ասուր եղանակին։ Իսկ
մինչ զճեղքեալ կարմրորակն հանանանաւ եռացեալ նիւ-
թով, որպէս թէ անանաներ 'ի հանդէպ ապակեգործաց, զե-
ղանլի չարաչար հանդերձ ուժգին թափով ընդհատաւ և իւրոյ
հեշտամբերք, և մերթ եռացեալ բարձրացեալ նիւթոյն
հանէր զհեղեղս բոցավառեալ քարանց, զառածմէն շառա-
փեալ կայծերաբոյն երկնէին, և ամպոց տեղատարափ
ընդ ալեկոծեալն և թանձրանային։ Իսկ չնչեալ էր հողմոյն
յորժամ կործանու զմեզ. վասնզի ոչ փոքր 'ի վերայ կայր
մերոյ իսկ զգուշանալ լինելոյ 'ի ծծմբային ծխոյ անտի, կամ
ճանճախախելոյ ընդ կուտակս հրահոսեալ բոցոյն. որք 'ի
խորոց յառնէին 'ի վեր ցայտէին. այլ քանզի դիպող
էր հողմն, յաջողեաց մեզ նկատել զամենայն զարմա-
նալիսն, քան ընդ ժամ մի և կէս։

Ի հինգ յունիսի՝ յետ անհամար շատաչափան, անտուստ 'ի
Նէապօլսոյ ելեալն բարբոքեալ. և յետ երից աւուրց այն-
քան անէ՛ր ամէն որոտայր, զի ոչ միայն պատահմանքն,
այլ և ամենքն զլխովին սասանէին։ Ցայնժամէ անընդ-
հատ պայթէր և գեղոյր, և երբեմն 'ի գիշերի արձակէր
բոց սիւնաձև ընդ գագաթնն։ Ի սոսան աւուր ամանանն
իբրև ամենայն ինչ հանդարտեալ թուէր, նորոգեցան
արձաւիրքն, և սաստկագոյն ևս որոտայր և ժայթքէր
լեառնն. Անհնարին է ճշգրիտ հասու լինել դիպուածոց
'ի սաստկագոյն ճայթմանն, բայց կերպարանելով առ
միտս զխառն շչակ մանչման մրրկաց, զշառաչման ծո-
վու ծփելոյ, զորոտման շանթից և զրոմբիւն ամբարձիլ
անօթոց միանգամայն զաչեցելոց։ Թէպէտ և մեք երկո-
տասան մղոնաւ 'ի բացեալ լուէաք զձայնն, սակայն և
այնպէս ահաւոր էր յոյժ։ Խորհեցաք մօտագոյն մատ-
չել 'ի լեառնն. և երեք կամ չորք 'ի մէնջ մտեալք 'ի
նաւ, եկին 'ի քաղաք մի փոքրիկ առ ստորոտով լերինն.
և անդուստ յառաջ անցեալ գնացաք մղոնս իբրև չորս
կամ հինգ մինչև հասաք մօտ 'ի հեղեղն հրեղէն որ ի-

Զանգէր 'ի կողից հրաբղխին, ուստի ածցին յոյժ և ահաւորագոյն հնչէր չառաչիւնն։ Նկարէր յամայն որ 'ի վերջակողմանարանի լերինն խառնուրդ ամպոց գունոց, կանաչ, դեղին, կարմիր և կապոյտ։ Նաև զոք հարեալ էին լաղտ իմն գոյն չառագալն 'ի վերայ երկրին, յոր հաղէր խառնձն հրամարան։ Այսպէսի կերպարանք սաստկագոյն եւ ընծայեալք յարհաւրաց գիշերայնոյ, մանդիմական աղնէին ինձ տեսարան ահաւոր և աչեղ որպէսի չէր իմ երբեք տեսեալ, որ և եւս քան զեւ պաշէր ըստ մերձագոյնս մօտչելոյ մեր 'ի գետոն հրեղէն։ Հեղեղ լորդ հրահոսան 'ի զագաթանէ լերինն թաւալելով ընդ կողմն անդիմագարձ իմն թափով զայրացման, խլեալ վարէր ծալխէր զայգիս և զծիթենիս և զտունս, և ըստ անհարթ անհաւասար դրից լերինն բաժանէր ըստ բազում առաջս։ Ընդարձակագոյն յառաւացն աւելի քան կիսով մղոնաւ լայն էր, և հինգ մղոնաւ ձգէր ըստ երկայնն։ Յառաջեալ քան զընկերս իմ խաղացի 'ի վեր ընդ լեառնն ցայն վայր զեզերբ հրեղէն գետոյն, մինչև սոսկպեցայ յետս ընկրկել չորից սաստկութեան, ըմբռնեալ 'ի ծծմբային շոգւոյն, որ փոքր միւս ևս և հեղձամղձուկ առնէր զիս։ Ի դարձին մերում յերիր ժամու վաղորդդայնոյն, լսեաք անընդհատ զմռնչիւն լերինն, և նշմարեաք բոցս յորձանապտոյտս և քարինս հրաշէկս ժայթքեալս, որք յանկանէին բերէին զկերպարանս աստղաձև հրթիռաց։ Էր երբեք զի տեսանէի երկուս կամ երիս սիւնս հրուղէնս, և երբեմն մի միայն, այլ լայն և բաւական յունել զբովանդակ բերան բաժակին։ Սիւնքս բորբոքեալք և վէմք հրեղէնք թուէին ձգել ձկտել չեչտ ուղեղ ընդ գագաթն հրաբղխին իբրև հազար ոտնաչափ 'ի բարձրութիւն։ Զայս օրինակ տեսեաց ժայթքումն լերինն աւուրս վեց կամ ութ։ Իսկ յուռթ և 'ի տաւն ամսեանն՝ ամենայն հետք յուզմանցն խաղաղեցան, և հանդդարտեաց իսպառ Վեզուվ, չունելով ինչ նշան ծխոյ կամ բոցոյ։

ԳԷՐԺԼԷՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

## ԿՈՐՈՒՍՏ ՆԱՒԱՏՈՐՄԻՆ ԵՒ ԶՕՐԱՑ ՏԵՐԻՆ

### ԳԵՐՄԱՆԻԿՈՍԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ամառն 'ի ծաղկել այս խառնուրդ էր, և կէսք 'ի լեգէոնացն ցամաքակողմն ընդ ցամաք 'ի ձմեռոցս, իսկ զերծ կէսմասն նաւուցն ... ընդ Ամասիա գետ իջուցին Տէրեր էած յՈվկիան: Ծովն 'ի սկզբան անդ հանդարտ 'ի բազմութենէ թիակաց ևեթ բազմութեան նաւաց կայ 'ի բանութենէ առագաստից յուզեալ շառաչէր. այլ յապա յանկարծ 'ի կուտակելոց թուխ ամպոց թափեալ կարկուտ, և մրրիկք շուրջանակի յարուցեալ ալիք, ծածկէին յաչաց զամենայն և զղեկ փակ նաւակութեան խափանէին: Զօրականն անփորձ ծովու ահաբեկեալ՝ խռովեցուցանէր զնաւաստին, կամ ձախողակի օգնականութեամբ զնաւավարացն անգործ առնէր ճարտարութիւն: Եւ ապա հարաւահողմն ընդ երկիրս այս հաստատեալ և ընդ ծով տիրապետեալ, և 'ի բարձրագոյն ափանց Գերմանիոյ, 'ի յորձանաց գետոց և յամբաւութենէ ամպոց հալածականաց զօրացեալ, և բռնաւորագոյն 'ի խստութենէ մերձակայ հիւսիսականն նահանգին առաւելացեալ, զնո և ևս յանդգնեաց. Զնաւս զնաւակացս, կամ 'ի կղզիս շրջապատեալս 'ի ծովափս, և կամ 'ի խարակս աներևոյթս ընդ ալեօք, յորս բազում նաւակք հասին կործանեցին այլևս. Այլ 'ի մակընթացութեան ալեաց 'ի հաղթել կոյս՝ ոչ ևս կարացեալ նաւաց կալ 'ի խարիսխս, և ոչ զալիսն 'ի ներքս զեղեալ արտաքսել, զձիանն, զգրաստս, զկարասին և զզէնս իսկ 'ի ծով ընկեցին՝ թեթևացուցանել զողնափայտն, յոր ընդ հերձս կողից և ընդ տախտակամածն 'ի վերուստ զեղուին ալիք:

Որչափ Ովկիան բանագոյն քան զայլ ծովս է, և երկինք Գերմանիոյ որչափ քան զայլս 'ի նահանգաց դժընդակագոյն, այնչափ առաւելան արկածքն՝ յեղակարծ և

առ ազգին աղխաւորք։ Թշնամիք շուրջանակի ծովեզերք, և ծով այնպիսի ծովային անձնիլ և անհնարին, որ ափեզերայ Թուէր [illegible], և ոչ [illegible] անտի և անդր երկիր։ Կէսք 'ի նաւաց անտի ընկլեալ յանդունդս, և [illegible] 'ի կղզին [illegible], որ [illegible] յանձնեալ երկրին [illegible], կամ դիմադարձեալ ձիոց 'ի ծովեզերս անդր [illegible] [illegible]։

Նաւաթին ևեթ Գերմանիկեայ անհնար յերկիրն Քաւկայ. բայց նա 'ի ծովու և 'ի հրապարակս անդ զօրանամեծն ասաց դեղերեալ, դղոյզ և զցերեկ բնակէր զանազան [illegible] այնպիսեայ աղետից դիմաց հասանելոյ. և հարցիւ արգելին զնա հրամն ևս 'ի շիջուցանելոյ զանձն 'ի ծով անդր դառնալն։ Յետոյ ապա 'ի տեղի աւուր աւուրց, և 'ի շինել ախոյեանի հրացեց, [illegible] նաւատորմին Հռովմէացւոց, [illegible] [illegible], ձայն [illegible] [illegible] [illegible], զոր անկանէին։ Կէսք 'ի նոցանէ 'ի նաւաց խորտակելոցն 'ի քարշ առեալ։ Զօրս Գերմանիկեայ [illegible] դեղ հրամայեաց, զոր ամենայն 'ի կղզիս անդր առ 'ի խնդիր։ Ամենայն խնամով յանձնեաց 'ի նաւակոծելոց անտի ժողովեցին, բազումս ևս Անգրիւարք, զորս մի յաւուր զանխանելոյ, զոր տարան 'ի միջերկրեայս անտի դարձուցին. և ոմանք մինչև 'ի Բրիտանիա վարեալք էին' յետ խնդելոց երկրին յետս առաքեցան։ Եւ որչափ ոք 'ի հեռաւորաց դառնայր, հրաշապատումս ևս զինելոց, ըղ հաւուց անծանօթից, ընդհանեայց ծովուց, զմարդաշեղ գազանաց' աեսելոց կամ առ աճի երևութացելոց վիպէր։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

## ՆԿԱՐԱԳԻՐ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՆԱՒՈՒՑՆ ՎԸՆԵՏԱՑ

Քանզի և նաւք նոցա զայս ձև օրինակի էին կազմեալք և զինեալք։ Ասյրուց և ողունց նոցա փոքր ինչ տափափոր քան զմերոց նաւացս, որով ծանծաղի և ջուրցն նուազութեան դիւրատարք. առաջք նոցա ուղղաբերձ կանգնորդ, նոյն և խելք նոցին, մեծութեան կոհակաց ծովուն և կոծանացն համեմատ։ Նաւքն իսկ բնական կաղնիք, առ ամենայն բռնութիւն և միշտ մըտանգի դիպաւորք։ Տախտք նստարանացն 'ի գերանաց՝ առնաչափ մի լայն, հարստեալք բևեռօք երկաթեօք 'ի ստուարութիւն բոյթ մատին։ Խարիսխք փոխանակ կառանաց՝ երկաթեղէն շղթայիւք կապեալք. Ի տեղի առագաստի՝ է նոցա մորթ և կաշի վեր 'ի վերոյ համդերձեալ. առ 'ի չգոյէ կտաւոյ և առ տգիտութեան պիտոյից նորա, կամ որ առաւել ստուգութեան է նման, զի ոչ հեշտին ինչ համարէին ժուժկալել ընդդէմ այնչափ փոթորկաց աշխարհածովուն և այնչափ հողմոցն բռնութեան, և զնաւացն ահագին ծանրաբեռնութիւն վարել առագաստիւք։ Նաւացս այսոցիկ ընդ մերում նաւահանգիստ նոյնպիսի էր մրցութիւն, զի միայն արագութեամբ և թեւածակացն վարելով զանցուցանէր զնոքօք. այլ ամենայն ինչ՝ ըստ բնութեան տեղւոյն և փոթորկացն ամեհութեան՝ նոցա առաւել դիւրադէպ և յարմարագոյն էր։ Եւ մերքն ոչ ինչ կարէին տանել նոցա առաջակողմ ցռկաքն վասն անհնարին կարծրակուռ պնդութեան նոցա. և վասն բարձրութեան նոցին՝ ոչ դիւրին ինչ էր նետաձիգ առնել 'ի նոսա. և նորին աղագաւ հեշտաբար 'ի ժայռս 'ի խութս սալարեալ զօղէին։ Յաւել ևս՝ զի 'ի վայրենանալ մրրկին՝ և տային զինքեանս հողմոյն և պէկոծութեանն դիւրեաւ տանէին, և անկասկած 'ի խրուսան կային, և 'ի ջուրցն թողանալ՝ ոչ ինչ 'ի վիմաց և 'ի քարանց զանգիտէին, որ մերոցս նաւաց վտանգ երկիւղալի էր այս ամենայն։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք։



Digitized by Google

# ՍԱՀՄԱՆԱԿԱՆՔ

---

## ՍԱՀՄԱՆ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ.

### ՊԱՏՈՒԷՐՔ ԱՌ ԱՅՍ

Սահման ճարտասանական է լայնատարր ասպարէզ ճարտարախօսութեան. սովաւ լուծանին ամենայն խնդիրք իրաւաբանականք. զի 'ի միաբանել երկուստեք զգոյութենէ իրին և զպատճառաց նորա, ոչ այլ ինչ մնայ քննել՝ բայց զբնութիւն նորա, և սահմանել զաղերս նորա ընդ օրէնս։

Կղաւդիոս սպանաւ 'ի ստրկաց Միլոնի. այլ իցէ սպանութիւնս այս նախանկատեալ և կամաւ, թէ 'ի պաշտպանութիւն եւեթ անձին գործեալ։ Չիք տարաձայնութիւն զգործոյն. խնդիր զհանգամանաց նորին է։ Մուրենա հաճոյ եղև ժողովրդեան. այլ կաշառո՞վ արդեօք, կամ խորամանկելով զքուէս. զայս պարտ է սահմանել։ Բազմահռչակ 'ի Հռովմ եղև դատաստան ատենախօսութեանն Կարբոնի 'ի պաշտպանութիւն Լ. Օպիմեայ, որ յետ բդեշխութեանն ամբաստանէր 'ի դաւաճանութիւն Կ. Գրակքոսի։ Յայտնի էր գործն. այլ 'ի վտանգի հասարակապետութեան չէի՞ն իրաւունք բդեշխի հրովարտակաւ ծերակուտին տալ սպանանել զխռովարարն, կամ 'ի վտանգի անդ պա՞րտ էր նմա պատկառել օրինաց, որ պաշտպանէին զքաղաքացիս անդատապարտս 'ի նոցանէ։ Օրէ՞ն էր այն ըստ վճռոյ ծերակուտին 'ի պահպանութիւն հասարակապետութեան։ Զայսմա-

Digitized by Google

նէ էր խնդիրն. պարտ էր սահմանել զիրաւունս ապահովութեան աշխարհին, և զոր բդեշխն կոչէր վտանգ և փրկութիւն հասարակապետութեան. գիտել թէ ցոր վայր հասանէր իշխանութիւն ծերակուտին, և պարտք նորին իսկ բդեշխին ընդ օրէնս և ընդ վճիռ ծերակուտին:

Ապա ուրեմն սահմանել 'ի ճարտասանութեան՝ է ընդարձակել, 'ի ներքս ածել իմաստս և օրինակս և հանգամանս՝ որ զյատկութիւնս իւրին բացատրեն, յանդիման առնել զայն յեղանակաւ իւիք 'ի նպաստ կարծեաց՝ զոր կամք իցեն հաստատել, կենդանագրել ըզպատկեր նորին՝ ոչ միայն պայծառ երանգովք՝ այլ և խառնութեամբ լուսոյ ընդ ստուերի յաւելուլ զկենդանութիւն նորա: Իբր ոչ եթէ ճշգրիտ ինչ սահման չիցէ ուրեք պատկանաւոր 'ի հատանել զխնդիրն, այլ կարևոր է առ այս՝ զի իցէ յայտնապէս ճշգրիտ և անըստգտանելի ըստ ամենայն մասանց. և հանդերձ այսու ամենայնիւ՝ մարթ իսկ է նմա համառօտութեամբն խուսափել ձախողակի յիմացուածոյ դատաւորաց, եթէ ոչ խնամ կալցի ճարտարախօսն օժանդակել և տալ պարապ տպաւորելոյ զայն 'ի միտս նոցա: Չկարէ 'ի զգայութիւն և 'ի միտս դատաւորին մուտ գտանել. զի չև ըմբռնեալ՝ սահի 'ի բաց: (Յղ. Ճարտարախօսութեան):

Այլ ոչ ամենայն տեղ ճարտարախօսութեան զնոյն զգուշութիւն պահանջէ՝ որ ինչ ատենականն, ուր դատախազն և պաշտպան պարտին կալ միշտ 'ի պահ, և հարկանել և պաշտպանել զոգցես միանգամայն: Վասն որոյ սահման՝ որ յատենականին է միջակէտ ներգործութեան, և պարտ է պատսպարել զայն շուրջանակի ամենայն զօրութեամբ ճարտասանութեան, ոչ այնպէս վտանգաւոր է և զգուշալի 'ի ներբողականին և 'ի բաղխոհականին. բայց և աստ թէպէտ և չիցէ այն միջնաբերդ, այլ է իսկ ճակատ կամ անդաստակ ապարանից կամ տաճարի, ուր պարտ է ճարտասանութեան ժողովել զհանդէս զօրութեան իւրոյ և զհաստատութիւն:

Digitized by Google

Կիկերոն 'ի ճառին Մարկելեայ 'ի խօսելն առ Կեսար զպարտուց Նորա, այսպէս Նախ տայ զսահման փառաց. «Փառք են՝ յոլովից և՚ մեծամեծ վաստակոց առ իւրսն կամ առ հայրենիս կամ առ ամենայն ազգ մարդկան ընծայելոց պայծառ և աշխարհաքարոզ համբաւ»: Եւ ապա պարզաբանէ զայն, յարելով յինքն իսկ 'ի Կեսար. «Ոչ այդ կենցաղավարութիւն է քեզ անկ, որ 'ի մարմին և 'ի հոգի ամփոփեալ. այլ զայն ասեմ, զայն կենցաղ քեզ անկաւոր՝ որ դարուց 'ի դարս կեցցէ յիշատակաւ, զոր յետինք պահեսցեն, որում ինքեանք իսկ յաւիտեան պաշտպանեսցեն»: Ահա սահման ընդարձակութեան և մշտնջենաւորութեան փառաց. տեսցուք և զսահման հաստատութեան և ամրութեան Նորին: «Զարմացին ապաքէն յետինք 'ի լսել և յընթեռնուլ զինքնակալութիւնս, զգաւառս, զՀռենոս, զՈվկիան, զՆիլոս, զպատերազմունս անթիւս, զյաղթութիւնս անլուրս, զարձանս, զձօնիս և զյաղթանակս քո: Այլ եթէ ոչ քաղաքս այս քոյովք խորհրդովք և սահմանադրութեամբք հաստատեսցի, թափառեսցի ևեթ անուն քո հեռի և 'ի բացեայ շուրջանակի, այլ հաստատուն կայս և բնակութիւն անշարժ ոչ կալցի»: — Այս է սահման մեծավայելուչ:

Արդի ճարտարախօսք մեր ծանեան զարուեստ տալոյ սահմանս ճարտասանականս. ածից օրինակս երկուս զերկոսին ես 'ի դամբանական ճառէն 'ի Թիւրէն, որ յաճախէ փառս Ցլէշիէի. այսպէս նա անդ սահմանէ զճշմարիտ քաջութիւն վեհազինն իւրոյ. Իմա բանիւս (արութեան) ոչ զընդունայն և զանխորհուրդ յանդգնութիւն, և այլն: Տես 'ի դամբանականի անդ:

Միւս ևս սահման տայ զբանակի զօրաց. Զինչ է բանակ, և այլն: Տես անդ 'ի ստորև:

Սահմանք իմաստասիրականք այնչափ յաճախեն Նաև յընտանեկան լրս, զի առ չսահմանելոյ և կամ վասն ոչ բարւոք սահմանելոյ՝ անկանին վիճաբանք 'ի հակառա-

Digitized by Google

թուն։ Վրիպակն գրեթէ միշտ 'ի բառս է. զի որ ինչ հաստատեմ ես զիմեքէ, հաստատեմ զայն ըստ իմաստից՝ զոր ընծայեմս նմա. և զոր դուդ ժխտես զայնմանէ, ժխտես ըստ իմաստից՝ զոր տաս նմա։ Ապա չեմք ինչ ներհակախոհք որպէս թուիմքս. զի ընդ անուամբ միոյ իրիք զայլ և այլ իրաց բարբառիմք։ Եթէ դու պարզաբար զմիտս իմ իմանայիր և ես զքոյդ, հաստատէիր զոր եսն հաստատեմ, և զոր դու ժխտես՝ ժխտէի և ես։ Արդ այս միաբանութիւն իմաստից մնաց 'ի ձեռն սահմանաց եւեթ յաջողէ։

Են սահմանք՝ որ տեղի տան խորհելոյ, և են՝ որ խընայեն զլսողս յաշխատութենէ անտի. ընդ առաջինսն են տուեալքն յԱրիստոտելէ. Արդարն է օգտակարն հասարակաց։ Խոհեմութիւն է՝ առաքինութիւն իմացականին կարգեալ յերջանկութիւն։ Հեշտութիւն է միայն բարին՝ վասն անձին բաղձացեալ։ Բարութիւն կարծեաց անօգուտ էր, եթէ պարտ էր ունել զայն 'ի ծածուկ։

Ընդ երկրորդս են նորին իմաստասիրի սահմանքն. Բռնաւորութիւն է միապետութիւն անսահման։ Մեծանձնութիւն է բարերարութիւն՝ որ գործէ ճոխաբար։ Սեւամաղձութիւն է ցաւ և հեշտութիւն միանգամայն. ցաւ՝ 'ի տրտմութեան, և հեշտութիւն՝ յանցելոց իրաց յիշատակի։

Արդ յայտ է զի որք տեղի տան խորհելոյ սահմանք՝ չեն պատկանաւորք հռետորականին. զի ամենայն ինչ անդ պարտի գոլ դիւրիմաց՝ 'ի քթթելական խելամտելի։ Ունկնդրաց չիք ժամանակ կշռադատելոյ և 'ի վերայ կալոյ իրաց։ Խորհուրդք՝ հանգիտարագ բառից 'ի բաց թռուցեալ՝ պարտին թողուլ լուսահետ տպաւորութիւն. այս խտիր է ընդ ճարտասանութիւն ճառեալ և ընդ ճարտասանութիւն գրաւոր։

ՄԱՐՄՈՆԹԷԼ. Տարերք բանաստեղծութեան։

Digitized by Google

## ՄԱՐԴ

Զի՞նչ է մարդ, բայց մարմին տկար և դիւրեզծանելի, մերկ և անպատսպար 'ի բնէ, այլոց կարօտ օգնականութեան, ամենայն արկածից բախտի նշաւակ, և համայն իսկ խուռվ ջլապինդ զօրութեամբն՝ որս և ճարակ գազանաց. գործած թոյլ և լոյծ՝ վէր 'ի վերոյ ևեթ արտափայլեալ երևոյթիւ, անբաւական 'ի տօկ ցրտոյ. և տօթոյ և աշխատութեան, և հանգստեամբն դարձեալ և անգործութեամբ հիւծական: Անուանդ իսկ նորա բաղմավտանգ, մերթ առաւելութեամբ և մերթ նուազութեամբ կերակրոցն վնասի: Պահպանութիւն նորա բաղմահոգ և տարժանելի. մուրացածոյ և առանց հաստատութեան զօրութիւն նորա. յանկարծ երկիւղիւ սասանի և յեղակարծ ձայնիւ ընդոստնու, խեր միայնոյ անպիտան և վնասակար 'ի սնունդ: Եւ ո՞ ապա ընդ մեռանել միոյն զարմասցի, մինչ ամենեցուն իսկ հարկ 'ի վերայ կայ մեռանել: Ոչ մեծի ինչ զօրութեան պէտք են 'ի կորուստ նորա. հոտ և ճաշակ և աշխատութիւն և տըքնութիւն և կերակուր և ըմպելի և այլն ամենայն առ 'ի կեանս պիտանացուք՝ մահաբեր են նմա: Ընդ շարժելըն ուրեք՝ իսկ և իսկ իրազգած լինի տկարութեան իւրում. ընդ ամենայն երկնիւք կեալ ոչ կարէ. 'ի ջուրցն փոփոխելոյ և յանսովոր օդոց և 'ի դոյզն արկածից և 'ի պատճառաց դիւրավնասելի: Կենդանի աղկաղկ, փուտ և ախտաւոր՝ լալեօք եկեալ 'ի կեանս. սակայն ո՞րչափ աղմուկս յուզէ, յորպիսի խորհուրդս մտաբերի, մոռացեալ 'ի սպառ զիւրոյ՛ տկարութեանն զպայման: Անմահականս երկնէ և յաւէրժականս, և մինչ 'ի թոռունս և 'ի թոռնեայս դէտ ակն կայ և տնօրէն: Եւ այն ինչ զապագայիցն հոգայ զհեռաւորաց՝ գայ հասանէ մահ ըզգետնել զնա. զի և անուանեալն այն ծերութիւն զի՞նչ է, բայց սակաւօրեայ ամաց շրջան:

ՍԵՆԵԿԱՑ. Թղ. Միփ. առ Մարկի:

Digitized by Google

## ՄԱՀ

Ո՜վ, որպէս անգէտք են աղետից չարեացն իւրեանց՝ որք ոչ գովելի համարին զմահ՝ որպէս գիւտ գեղեցիկ հնարից բնութեան: Զի թէպէտ երջանկութեան իցէ պատճառ, թէպէտ թշուառութեանց կատարած, եթէ զառոյգ պատանեկութիւն՝ զզուարճացեալն 'ի յոյժ վայելից՝ 'ի ծաղկի անդ հասակին խլեալ տանիցի, և եթէ զմանկութիւն՝ մինչև զխիստ քայլափոխսն արարեալ յետս կոչեսցէ՝ ամենեցուն կատարած է, բազմաց դեղ՝ ոմանց ցանկալի և այլոց բարերար, մանաւանդ այնոցիկ՝ առ որս կանխէ ժամանել մինչև իցէ կոչեցեալ: Սա տայ ազատութիւն ստրկաց 'ի բռնութենէ տերանց նոցա, սա զգերեաց շղթայսն խզէ, սա հանէ 'ի բանտէ զորս հրաման բռնութեան արգելեալ պահէր անել. սա աքսորելոցն՝ որոց աչք և սիրտ ցանկութեամբ հայրենեացն հալին, ցուցանէ զի չիք ինչ խտիր թէ աստ ոք կամ անդ անկեալ դնիցի. սա զանհաւասարսն բախտի՝ որ զհաւասարակաց պարգևսն չարաչար բաշխէ և զծնեալսն նովին իրաւամբք զայլ ոք ընդ այլոյ արկանէ իշխանութեամբ՝ հաւասարէ առհասարակ. սա է որ ոչ գործեաց ինչ երբեք ըստ հաճոյս այլոց. սա է յորում ոչ ոք զնուաստութիւն իւր ծանեաւ, որ ոչ յումեքէ ակնածեաց: Սորա շնորհ է զի ոչ առ 'ի պատիժ ծնանիմք. տուաւ ընդդէմ ապառնալեաց բախտին խիզախեմք՝ ինքնիշխան և անբռնաբարելի պահեալ զոգիս. զսա ունիմ ինձ ապաւէն և պատսպարան:

ՍԵՆԵԿԱՅ Թղ. Մխիթ. առ Մարկի:

Digitized by Google

## ԶՐՈՒՑԱՑՐՈՒԹԻՒՆ

Եւ արդ եղիցի բանն, որպէս յայսմ մասին գերազանցեալ գտանին Սոկրատեանք առաւել, կակուղ, ոչ երբեք խիստ. աղու համեմ գտցի 'ի նմին: Եւ ոչ՝ որպէս թէ ինքն իցէ ժառանգ խօսիցն, արտաքոյ զայլս թողուցու. այլ որպէս յայլ իրս՝ նոյնպէս և 'ի խօսս հասարակաց՝ ոչ անպատեհ համարեսցի զտուրևառ. բայց յառաջ քան զամենայն տեսցէ, թէ զորոց խօսի իրաց. եթէ զլուրջ բանից՝ երևեսցի անուշառ. եթէ զկատակաց՝ աղուաբան: Նախ քան զամենայն յառաջատես լիցի, մի՛ արդեօք խօսքն տացեն զնշանակ պակասութեան անձին բարոյից. որ առաւել յաճախ պատահէ, յորժամ յլնի խօսել մտադիր զբացակայնաց՝ բամբասանաց աղագաւ, կամ ծաղրելով կամ խստութեամբ, չարաքանութեամբ և թշնամանադրութեամբ:

Բանք լինին ստէպ կամ զառտնին գործոց կամ ըզհասարակաց տէրութենէ կամ յաղագս արուեստից փութոյ և ուսման: Արդ պարտ է ջանալ՝ զի թէ սկսանիցի բերիլ յօտար զրոյցս, 'ի նոյնս վերադարձցի բանն, և այն որպէս դէպք իրացն պահանջիցեն. զի ոչ ամենեքին նովիմբք իրօք և ոչ յամենայն ժամանակի և ոչ միօրինակ զուարճանամք: Եւ զայն ևս պարտ է յուշ ածել՝ եթէ ցո՛ր վայր իցէ սփոփական զրոյցն. և զոր օրինակ սկսանելոյն գոյր պատճառ, նոյնպէս և վախճան առնելոյն գյեղանակն գիտասցէ:

ԿԻԿԵՐՈՆ. Յաղագս պատշաճից:

## ՃՇՄԱՐԻՏ ԱՐԻՈՒԹԻՒՆ

Այլ այն փքացումն ոգւոյ որ 'ի վիշտս վտանգի և 'ի վաստակս երևեալ, եթէ անմասն իցէ յարդարութենէ, և մաքառիցի ոչ վասն հասարակաց փրկութեան, այլ վասն անձին օգտաշահութեանց՝ մոլեկան է։ Զի ոչ միայն չէ այդ 'ի սահմանի առաքինութեան, այլ մանաւանդ անագորոյն մտաց է, որ զամենայն ցրէ զմարդկութիւն։ Սորին վասն իմաստութեամբ սահմանի արիութիւնն 'ի Ստոյիկեանց, յորժամ ասեն զայն՝ Առաքինութիւն մրցական 'ի կողմանէ արդարութեան։ Վասն այսորիկ ոչ ոք էր որ զարիութեան ստացաւ զփառս դաւաճանութեամբ և չարութեամբ, և գովութեան եղև ժառանգորդ. զի չէ հնար վայելչական լինել իմիք, որ անմասն է յարդարութենէ։

Եւ արդ արի և մեծասիրտ են համարելի՝ ոչ որ առնեն, այլ որ վանեն զանիրաւութիւն։ Իսկ ճշմարիտ և իմաստուն մեծանձնութիւնն զհամեստն զայն՝ որում առաւել զհետ երթայ բնութիւնս, 'ի գործս հաստատեալ գիտէ, և ոչ 'ի փառս. և առաւել կամի լինել՝ քան երևել իշխան։ Քանզի և որ կախի զոգէտ խառնաղանճին մոլորութենէ, այնպիսին մի գրեսցի 'ի թիւս վեհիցն արանց։ Եւ կարի իսկ դիւրագոյն դրդի 'ի գործս անիրաւս՝ որչափ ոք բարձրամիտ է և փառասէր։ Եւ այս է ապաքէն դիւրագայթ վայր. զի դժուարաւ ոք գտանի, որ յետ յանձին կրելոյ զվաստակս և 'ի վտանգս լինելոյ միջամուխ, ոչ ցանկանայցէ փառաց՝ որպէս վարձուց գործոց իւրոց։

Ամենայնիւ արին և մեծասիրտն՝ երկոքումբք իրօք առաւել 'ի վեր երևի. յորոց մին հաստատեալ է յանտեսն առնել զարտաքին իրօք, ուր դնէ ոք 'ի մտի թէ չէ արժան մարդոյ զարմանալ կամ ցանկանալ կամ ըղհետ լինել իմիք, բայց միայն որ համեստն իցէ և վայել-

Digitized by Google

*չական. և ոչ Ներքոյ արկանել՝ ոչ մարդոյ, ոչ խռովութեան ոգւոյ և ոչ բախտի։ Իսկ միւսն է, զի յորժամ զայդ սիրտ ունիցիս զոր առացիդ, գործս գործիցես ոչ միայն մեծամեծս և կարի օգտակարս, այլ և դժուարինս յոյժ և տարժանաւորս, և լիս վտանգօք կենաց և յոգունց իսկ իրաց՝ որ կենաց են անկ։*

*Եւ այս երկուց իրացս բովանդակ պարծանք և մեծութիւն, ընդ Նմին և օգտակարութիւն, 'ի վերջնումն անդ է. իսկ պատճառն և բան որ առնէ զոք այր մեծ՝ յառաջնումն անդ է։ Վասն զի յայնմ է բանն, որ առնէ վեհանձնեայ և արհամարհող մարդկեղէն իրաց։ Եւ այս տեսանի յերկուս՝ եթէ զայն ևեթ բարի համարիցիս որ համեստ է, միանգամայն և յամենայն ամբոխմանէ արտազատ իցես։ Քանզի և զորս գերապանծ և զարմանալի բազմաց թուին՝ դուզնաքեայ ինչ վարկանել, և քամահել զնոքօք անայլայլակ և հաստատուն խորհրդով, գործ է քաջասրտութեան և մեծանձնութեան. և զորս դառն թուին, ուր բազմապատիկ և պէսպէս հանդիպին այդպիսի զեանք կենաց և ընչից մարդկան, այնպէս տանել՝ զի ոչ իւիք օտարանայցես 'ի պայմանէ բնութեան կամ 'ի պատուոյ առն իմաստնոյ, արիական ոգւոյ է գործ և մեծամուր հաստատութեան։*

ԿԻԿԵՐՈՆ. *Յաղագս պատշաճից։*

---

## ՄՈԼԱՐ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ

*Վասն որոյ՝ մոլար ճանաչումն է բարեպաշտութեան Նկարել զնա 'ի մտի համակ զանգիտող, ապիկար, տարակուսեալ, խղճական և կարճամիտ, որ զպարտսն առ մ՚դս ունիցի և զտկարութիւնս առ առաքինութիւնս, որ ստիպիցի գործել՝ և չիշխիցէ ձեռնարկել, մշտատա-*

Digitized by Google

տան ընդ պէտս հասարակաց և ընդ բարեպաշտիկ խէթա-
կասկածանացն, և ոչ յայլ ինչ 'ի վար ղկրօնսն արկեալ՝
բայց 'ի խռով և 'ի շփոթ հարկանել, ուր պարտն էր օ-
րէնս և կարգս հաստատել։ Այս զեղծմունք մարդկան
են՝ զոր խառնավար առնեն 'ի բարեպաշտութիւնն. այլ
ոչ 'ի բնէ բարեպաշտութեանն են։ Նշանակ է այդ փա-
նաքի և տկարամիտ ոգւոյ, բայց ոչ հարկ ինչ բարձրու-
թեան և իմաստութեան կրօնից։ Միով բանիւ՝ անչա-
փութիւն առաքինութեան է. բայց ուր անչափութիւն
'ի ներքս սպրդի, անդ վախճան առնու առաքինութիւն։

ՄԱՍԻԼԼՈՆ. փոքրիկ քառասնորդք։

---

## ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Գիտեմ զի է ազնուական իմն նախանձաւորութիւն՝
որ ընդ հետս պարտուց ածէ 'ի փառս. սէրունդն ազգէ
'ի մեզ, կրօնքն համարձակէ. այն իսկ է որ հանէ աէ-
բութեանց նշանաւոր քաղաքացիս, իմաստուն և ժրա-
գլուխ պաշտօնեայս, զօրավարս առաքինիս, մատենա-
գիրս հռչակաւորս, իշխանս արժանագովելիս աւուրցն
յետնոց։ Ճշմարիտ բարեպաշտութիւն ոչ է ախտ վա-
տութեան և հեղգութեան. կրօնք ոչ նկուն առնեն և ոչ
մեղկեն զսիրտ, այլ ազնուացուցանեն և ամբառնան.
նա միայն գիտէ յերիւրել արս մեծամեծս. փոքր է միշտ
մարդ՝ եթէ ընդունայնութեամբ ևեթ մեծ իցէ. վասն ո-
րոյ գրգութիւն և անգործութիւն հակառակ են և՛ս օրի-
նաց բարեպաշտութեան և պարտուց քաղաքական կե-
նաց. և անպիտան քաղաքացին տարագիր է՝ ոչ միայն
յընկերութենէ, այլ և յԱւետարանէն։

Իսկ փառամոլութիւն՝ տենչ անյագ բարձրանալոյ
'ի վեր, և՛ս և 'ի վերայ աւերակացն այլոց, որդն՝ որ կըր-

Digitized by Google

ծէ զսիրտ և չտայ բնաւ հանգիստ, ախտ՝ որ է գրգիռ մեծ՝ խորամանգ հնարից և ամենայն յուզից արքունեաց. պատճառ յեղափոխ ստամբակութեանց պետութեանց, և ցուցիչ աշխարհի նորանոր տեսլեանցն հանապազօր. ախտ՝ որ յամենայն ձեռներէց է, և չիք ինչ նըմա ծանրագնի, նոյն ինքն առաւել ժանտագործ է տէրութեանց քան զծուլութիւն ինքնին գլխովին։

Արդ թշուառացուցանէ նախ զգերին իւր. փառասէրն յոչինչ վայելէ. ոչ 'ի փառսն, զոր աղօտանուաղ տեսանէ. ոչ 'ի բարձս պատուոյն, առաւել խնդրէ վերանալ. ոչ 'ի բարեկեցութեանն, ազազի և ոսնի 'ի լիութեան անդ իւրում. ոչ 'ի սպաս հարկի մեծարանացն, մահադեղ խառնեալ է նմա 'ի նոսին մեծարանքն՝ զոր ինքն պարտի հատուցանել այլում. ոչ յարքունատուր շնորհսն, դառն է նմա և այն, զի բազորդ են ընդ իւր և նախանձորդքն. ոչ 'ի հանգիստ իւր, թշուառական է որչափ ստիպլի 'ի հանդարտութեան կալ. Համան է, ցանկալի և նախանձելի ամենեցուն, բայց պատիւ մի ևեթ գլացեալ տարապայման իշխանութեան իւրում՝ իւրում իսկ անձին անհանդուրժելի առնէ զինքն։

Ապա ուրեմն թշուառացուցանէ զնա փառամոլութիւն, բայց և անարգէ և 'ի ստուոյն արկանէ։ Որչափ նուաստութիւնք 'ի հասանել բարձի և պատուոյ. երևել պարտ է՝ ոչ որ ինչ եմքս, այլ որպիսիս կամինն զմեզ։ Նուաստութիւն պաշտօն առնելոյ, խունկ և երկրպագութիւն մատուցանել անարգ կռոցն. նուաստութիւն վատութեան, գիտել կլանել լեղի լեղի պատառս, համբերել զլացութեանց, և իբրև շնորհս իմն ընդունել ըզնոսա. նուաստութիւն կեղծեաց, ոչ մի ինչ միտս ունել անձին սեփական, այլ ըստ այլոց ևեթ խորհել. նուաստութիւն ցոփանաց, մեղսակից լինել՝ թերևս և սպասաւոր՝ կարեաց այնոցիկ որոց ընդ ձեռամբ կայցէ, և հաղորդ անառակութեանցն լինել առ 'ի բաժանորդ անշուշտ շնորհացն լինելոյ. հուսկ ապա նուաստութիւն

Digitized by Google

պատճառանաց, պատճառիլ երբեմն 'ի կերպարանս բարեպաշտութեան, այր բարի ձեւանալ առ 'ի մեծանալ և 'ի պէտս փառամոլութեան առնուլ զկրօնսն իսկ՝ որ դատապարտեն զայն։ Ոչ մոռացածին ինչ պատկեր է այս. արքունեաց բարք են, և վարք յոլովից՝ որոց անդն կենցաղավարին։

Թող յետ այսորիկ ասասցեն մեզ՝ թէ մեծանձն ոգւոց է այս ախտ։ Դրոշմ է այդ անարգ և վայրաքարշ սըրտի, յայտանկատ նկարագիր ոգւոյն վատութեան։ Պարտուցն միայն խնամ՝ գիտէ ածել զմեզ 'ի փառս. իսկ որ 'ի նուաստութեանց անտի և 'ի հնարիմաց խորամանկութենէ փառասիրութեանն գայցէ, ընդ իւր բերէ միշտ կերպարանս ինչ ամօթոյ՝ մեզ 'ի նախատինս. ոչ խոստանայ զթագաւորութիւնս աշխարհի և զամենայն փառս նոցա, եթէ ոչ՝ որոց անկեալ երկիր պագանիցեն առաջի անօրէնութեան. Եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ։ Նուաստութիւնքդ կշտամբանք են միշտ բարձրութեան ձերում. բարձքդ և պատիւք յուշ առնեն անդադար ըղկորանսդ որովք արժանի եղեալդ էք. և անուանք իսկ պատուոցդ և պաշտամանց՝ զէնք լինին 'ի ձեռս ժողովրդեան 'ի նշաւակել զձեզ։ Բայց 'ի միտս փառասիրին՝ յաջողութիւնն ծածկէ զամօթ հնարողութեանն. կամի 'ի վեր 'ի վեր ժամանել, և որ ինչ անդր տանի զինքն՝ այն ևեթ է զոր խնդրէ իւր փառս. և զհռովմէականն առաքինութիւնսն որ ոչ իմիք կամին պարտապան լինել՝ բայց միայն լաւութեան՝ պատուոյ և վաստակոց, համարի վիպասանական և թատերական առաքինութիւնս, և կարծէ թէ խորհրդոց բարձրահայեցութեան էր երբեմն դիւցազունս յարդարել փառաց, իսկ բախտի՝ զարդիս նուաստութեան է ստեղծանել և անարգութեան։

Վասն որոյ՝ անիրաւութիւն ախտիս այսորիկ է վերջին հանգամանք իւր, յաւէտ ևս ատելի քան զանհանգըստութիւն իւր և քան զամօթանսն։ Այո, եղբարք

իմ, փառաւէրն ոչ այլ ինչ օրէնս ճանաչէ՝ բայց զոր նպաստամատոյց նմա լինիցի. եղեւն՝ որ զնա բարձր առնիցէ՝ առաքինութիւն ազնուագործ է առ նմա. ինքն բարեկամ անհաւատարիմ, ոչինչ է առ նմա բարեկամութիւն՝ իբրեւ վնասակար թուիցի բախտին իւրում. յոռի քաղաքացի, ոչ յարգի առ նմա ստուգութիւն՝ բայց եթէ օգտակար նմա եղիցի. արժանիք որ ընդ նմա 'ի հակառակս մտանեն՝ թշնամի աններելի են նմա. օգուտ հասարակաց՝ տեղի տայ միշտ իւրումն շահու. հեռի առնէ զաջողակսն 'ի հպատակս, եւ 'ի տեղի նոցա սպրդի. զփրկութիւն աշխարհին պարտ բաշխի տայ իւրոց մախանացն. եւ ոչ այնչափ ցաւեսցէ նմա կորուստ իւրոց աշխարհին 'ի ձեռս իւր, որչափ պահպանութիւն նոցին՝ խնամովք եւ իմաստութեամբ օտարին:

ՄԱՍԻԼԵՈՆ. փոքրիկ քառասնորդք:

---

## ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԽՏ

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յանիրաւի զիւրմէ բնութենէն քրթմնջէ մարդ, իբր զի ապիկար եւ սակաւաժամանակեայ՝ 'ի բաղդէն առաւել քան յառաքինութենէն վարիցի: Քանզի ընդ հակառակն քաջ կշռեալ, ոչինչ մեծ եւ գերագոյն քան զայն գտանիցէ, եւ զի փոյթ ճարտարութեան պակասէ նմա քան թէ զօրութիւն եւ ժամանակ: Այլ իշխան եւ առաջնորդ կենաց մահկանացուաց՝ միտքն է, որ եթէ ընդ շաւիղս առաքինութեան փառաց մխցի 'ի խնդիր, մեծապէս ճոխացեալ հզօր եւ չքեղ գտանի, եւ ոչ բախտին կարօտ՝ որ զանբծութիւն վարուց, զյաջողակութիւն եւ զայլ բարեմասնութիւնս՝ ոչ շնորհել ումեք կարէ եւ ոչ 'ի բաց առնուլ:

Digitized by Google

Իսկ եթէ 'ի թիւր ցանկութեանց ոք ըմբռնեալ 'ի դատարկութիւն և 'ի հեշտութիւնս մարմնոյ զառածանիցի, զմնասակար հեշտալեօք գամ մի դեգերեալ, կորուսանէ առ յուլութեան զզօրութիւն, զժամանակ և զհանճար, և տկար զբնութիւնն ամբաստանէ՝ զիւր մեղսն զնովաւ շփեալ։ Զի եթէ այնչափ փոյթ էր մարդկան զբարեաց գործոց, որչափ զհետ անպատշաճիցն և զանօգտակարաց և յաճախ իսկ զմնասակարաց դիմեն, ոչ արդեօք բաղդն զնոսա՝ այլ նոքա զբաղդն վարէին, և յայն հասեալ մեծութիւն, զի ոչ ևս մահկանացուք՝ այլ յաւէրժականք լինէին փառօք։

Եւ զի ազգ մարդոյ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ է կազմեալ, վասն այսորիկ և բովանդակ գործք մեր և ջանք՝ կէսք զմարմնոյ բնութեան, և կէսք զհոգւոյ զհետ երթան։ Արդ գեղեցկութիւն դիմաց, գանձուց մեծութիւն, առոյգ հանդերձ և մարմնոյ կորով և այլ ամենայն ինչ սոցին սակի՝ վաղանցուկ են և դիւրասահ. իսկ հանճարոյ վեհ են գործք և զօրէն հոգւոյ անմահք։ Եւ զի 'ի կարճոյ ասացից, մարմնոյ և բարեաց բախտին որպիսի սկիզբն՝ նոյնպիսի է և վախճան. ամենայն որ ծնանին՝ մեռանին, և որ աճեն՝ հնանայ։ Իսկ հոգին անեղծ է և յաւէրժական՝ ուղղիչ մարդկան ազգի, որ նուաճեալ վարէ զամենայն և ինքն ոչ յումեքէ նուաճի։ Որով զարմանալի ևս է նոցայն անմտութիւն, որք անձնատուր 'ի մարմնոյ հաճոյս՝ շուայտութեամբ և վատութեամբ գնան, և զհանճար՝ քան զոր չիք ինչ պատուականագոյն, չիք ինչ գերագոյն 'ի բնութեան մահկանացուաց, անմշակ և անխնամ թողուն վատութեամբ 'ի թմբիր ապականութեան, ուր բազմապատիկ և զանազան են մըտաց արուեստք. որովք մարթէրն նոցա պայծառանալ։

Բայց սակայն ատենախօսութիւնք և իշխանութիւնք, և միանգամայն ասացեալ՝ ամենայն խնամք գործոց հասարակաց ոչ ինչ ըղձալի թուին ինձ արդ. զի ոչ ևս առաքինութեան են վարձք. և ոչ որք նենգութեամբն հա-

սին յիշխանութիւն՝ անքոյթ ինչ այնու կամ առաւել առաքինիք ցուցան։ Զի թէպէտ և յաղօղեսցի քեզ բռնութեամբ իշխել հայրենեացդ և ազգակցաց և բառնալ զզեղծմունս, տակաւին անպատեհ է՝. մանաւանդ զի 'ի յեղափոխութիւն տեսչութեան՝ կոտորածոց հարկ է և տարաժդէմ փախստեան և այլոց թշնամութեանց։ Իսկ տարապարտ վաստակել և ոչ յայլ ինչ ճգնել՝ բայց 'ի խնդիր ատելութեան՝ յետին անմտութեան է գործ, որոց ոչ կամիցին անճահ և վնասակար տենչիւ 'ի շնորհս սակաւապետութեան նուիրել զպատշաճն և զազատութիւն։

Իսկ 'ի գործոց հանճարոյ ընդ պիտանեգոյնս համարի աւանդել գրով զյիշատակս անցից, զորոյ զառաւելութենէն քանզի բազումք ճառեցին՝ լռել հաւանիմ, որպէս զի մի՛ սնափառ ումեք թուեցայց, զանձին վաստակս 'ի գովութիւն առեալ։ Իցեն իսկ թերևս որք վասն հրաժարելոյ իմոյ 'ի գործոց հասարակաց՝ դատարկութիւն համարեսցին. սոքա ապաքէն այնոքիկ իցեն, առ որս ճարտարութիւն համարեալ է սպաս տանել ռամկին, և կոչնովք շնորհս խնդրել. որոց եթէ ընդ միտ ածեալ էր՝ թէ յոր ժամանակս դէպ եղև ինձ ատենակալութեան հասանել, և ոյք ոմանք չկարացին հասանել յայն, և որպիսիք ապա 'ի կարգ ծերակուտին ամբարձան, խելամուտ արդեօք լինէին զի ոչ առ վատութեան եղև ինձ փոխել զխորհուրդս, այլ զի առաւել օգուտ էր հասարակապետութեան յիմմէ դատարկութենէս քան յայլոցն գործառնութենէ։ Քանզի լուայ բազում անգամ թէ Կ. Մաքսիմոս, Պ. Սկիպիոն և արք ականաւորք 'ի մերոցս քաղաքացեաց սովոր էին ասել, զի 'ի հայելնոցա 'ի կենդանագիրս նախնեաց՝ վառեալ արծարծանէին միտք նոցա 'ի սէր առաքինութեան։ Իբր ոչ եթէ 'ի նիւթըն մոմեղէն և 'ի կերպարան պատկերին էր այն զօրութիւն, այլ 'ի յիշատակ գործոց նոցին վառէր բոցն այն 'ի սիրտ արանց աւագաց, և ոչ հանդարտէր մինչև

Digitized by Google

աստուածութեան խորհրդոց հաստատել համբաւոյ փառաց նախնեացն։

ՍԱՂԱԽՈՍՏԻՈՍ

---

ԳԻՐՔ ՅՈՎԲԱՅ

Ի դէպ է կարծել թէ և գիրս Յոբայ ինքն (Մովսէս) մատենագրեաց. զի և վսեմութիւն իմաստից, և շքեղութիւն կարգի բանիցն 'ի ճահ պատշաճեննն նմա։ Իբրու այն թէ՝ զի մի՛ յամբարտաւանութիւն կրթեսցին Հրէայքն՝ անձանց գրելով զշնորհս Աստուծոյ, պարտ էր խրատեալ առնել զնոսա թէ Աստուած ունի իւր ծառայս և 'ի տոհմին Եսաւայ։ Զինչ այլ ուսումն կարևոր, և զօր օգտակար խրատս հնար էր աւանդել Մովսէսի ժողովրդեան մշտացելոյ յանապատի անդ, իբրու զհանդէս նահատակութեանցն Յոբայ, որ թողեալ էր 'ի ձեռս սատանայի փորձիլ յամենայն ազգս տանջանաց. և թէպէտ մերկ և աղք յընչից, որդեկորոյս և անմասն յամենայն մխիթարութեանց, և 'ի վերայ այսոցիկ հարուածեալ չարաչար 'ի մարմնի և փորձեալ հայհոյութեամբ և յուսահատութեամբ 'ի միտս, սակայն արձանացեալ կայ անյողդողդ, յայտ արարեալ թէ այր հաւատարիմ օժանդակեալ յաստուածուստ՝ զիտէ և յասպարիզի անդ ահաւորագոյն մրցմանց և 'ի կարի դժնդակ վիշտս գերծանելոյ 'ի հնարից բանսարկուին՝ անպարտելի կալ, և անփոփոխ եղեալ ընդ աղէտս իբր ընդ աստիճանս, համբառնալ զինքն 'ի բարձրագունիցն նկատմունս, և 'ի միտ առնուլ 'ի չարչարանս անդ զապիկար բնութիւն մարդկան, զամենամեծ զօրութիւն Աստուծոյ և զանսահման իմաստութիւն նորա։ Այս զայս ամենայն խրատս բովանդակեն գիրք Յոբայ։ Առ 'ի պէտս ժամանակին զառաքինութիւն պսակ կատարեցին նմա հաւատք նորա.

բայց տակաւ 'ի միտ առնու ժողովուրդն. որ այն իցեն նըշանք առաքինութեանց, և մօտ է հուպ ճաշակել զշնորհըս՞. որ անանձրպետ լինելոյ էր 'ի խաչէն.

ՊՈՅԻԻԷ. *Խօսք 'ի վէպս ազգաց.*

---

## ԱՒԵՏԱՐԱՆՔ

Եթէ պատմագիրս ոմանս կամիցիք որ 'ի գործս իւրեանց զանկեղծ հաւատոց և զմիամտութեան տացեն ձեզ ընծայութիւնս, ընթերցջիք, աղէ, տեարք, զաւետարանագիրսն, և տեսանիցէք եթէ զիարդ պարզ և անխառն իցեն բանքն. չեն 'ի նոսա ինքնապաճոյճ խորհըրդածութիւնք և բառից ճոռոմութիւնք, այլ ամենայն ինչ պարզութեան և անմեղութեան յայտարարք, մինչև զանձանց իսկ ոչ պատրուակելով զթերութիւնս. զոմանց զանխորհուրդ նախանձաւորութիւն, զայլոց զանձնընտիր լինել մնափառութեամբ, զամենեցուն զտգիտութիւն և զչինականութիւն. զվատութիւն՝ որով ցրուեալ 'ի փախուստ դառնան, և զուրացութիւն Պետրոսի, և զայլն ամենայն որ ամօթ և կորանս ածեն ինքեանց, ոչ բնաւ յաւութեամբ ծածկեն: Միաձայնութիւն նոցա 'ի հիմնականսն՝ հաստատէ եթէ սկիզբն ճշմարտութեան մի է 'ի նոսա, և տարաձայնութիւն 'ի վիպագրութեան՝ երաշխաւորէ մեզ եթէ չէ 'ի նոսա գաղտնորոգայթ դաւակցութիւն: Ո՞ 'ի վիպասանից ոչ 'ի գովութիւն առնուցու զիւր նախահաստակսն, ոչ յասնուցու ընդ այպանումն նոցին, և ոչ զգայռեսցէ ընդդէմ թշնամեացն: Այլ յաւետարանագիրսն չեն ուրեք լուտանք և հայհոյութիւնք և կամ գովեստ զայրագին, նա և չերևին 'ի նոսա ատելութիւն և հետք ամբոխելոց, կամ ճոռոմութիւնք բանից. այլ նոքին անկեղծաւոր պարզութեամբ պատմեն և ցուցանե-

ցաւ և զտանջանս, որպէս և զհրաշագործ պանչելիս. և մինչ սաստուածային իմն զօրութեամբ ցուցանէն աւելցեալ, անդէն առաջի առնեն 'ի նմա և մարդկային ընթութեան զսկարութիւնս, և վէպք աՀաւոր տեսլեան խաչելութեանն Նորա յայսբան Համառօտին. « Անդ Հանեին զնա 'ի խաչ »: Եւ յասացուածս նոցա և 'ի բանս այնպիսի իմն պարզութիւն և ճշմարտութիւն տեսանի, որովք չէր մարթ խաբէութեանն կերպարանել. մինչ զի և յընթեռնուլն զնոսա ոչ ինչ կասկած պատրանաց 'ի միտս անկանի, և ոչ իսկ առաւելութեան բանից. նա և յափշտակիմք իսկ 'ի նոսին. և առաքինութիւն և անկեղծութիւն բռնաբար զհետ իւրեանց առեալ ձգեն ըզմեզ: Ի զուր է ասել թէ աւետարանագիրք զպարզութիւն և զանկեղծութիւն կերպարանիցին՝ առ Հեշտիւ նս Հրապուրելոյ. քանզի անմարթ էր ննենգաւպատիր ճշմարտութեան ամենուրեք կալ 'ի թագստի. զի զինչ այնուՀետև յայտարար կնիք ճշմարտութեան միայն, եթէ խաբէութիւն այնպէս ճշգրտագոյնս նմանող նմին լինէր, առանց երբեք խայտառակելոյ: Արդարև աւետարանք չազդեն ինչ բնաւ 'ի սիրտս սուտանուն իմաստնոց կարծրացելոցն նիւթապաշտութեամբ, և ոչ իսկ յապականեալ և 'ի խանգարեալ Հոգիս թերաՀաւատից, այլ ազդէր նա 'ի սիրտ Յովհաննու Յակոբայ Ռուսոյի, որոյ բանք ճշմարիտք 'ի բազմաց 'ի վկայութիւն առեալ են. « Խոստովանիմ, ասէ, եթէ մեծվայելչութիւն գրոց սրբոց Հիացուցանէ զիս, և սրբութիւն աւետարանաց խօսի 'ի սիրտ իմ. զի՞րդ մանուկք են առ նովաւ մեծապանծ մատեանք իմաստասիրաց... Մա՞րթ իցէ ասել եթէ ըստ Հաճոյս Հնարեալ իցեն վէպք աւետարանապատումք. այլ անՀնարին է այսպիսի Հնարագիտութիւն. ոչ այնչափ պնդագոյնս վկայեալք են Սոկրատայն գործք՝ ընդ որս ոչ ոք երկմտէ, որպէս սրարուածք Յիսուսի Քրիստոսի: Այն զի ոչ պարզել է զդժուարութիւնս, այլ և ևս յաւելուլ. զի անՀասանելի ևս է միտքն գործակցութեան

բազմաց համարել զգիրս, քան միոյ ևեթ տալ զդէպ-անցից որ 'ի Նոսա... Նա զի այնպիսի մեծ և յայտնի ե-անզուգական գործքն ճշմարտութեան են աւետարանաց, զի սքանչելի քան զդիւցազնն երևէր որ զնոսին ճարտարա-բեաց » ( Եմիլ. գիրք Դ)։

ՅՐԷՑՍԻՆՈՍ. Ցապագայեբրիստ. կրօնից։

# ԱՌԱԿՔ

ԵՒ

# ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

---

## ՆՊԱՏԱԿ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ԱՌԱԿԻ

### ՊԱՏՈՒԷՐՔ ԱՌ ԱՅՍ

*Յօժարութիւն է մարդոյ 'ի բնէ 'ի լուր պատմութեան. իսկ առակ զարթուցանէ զհետաքրքրութիւնն նորա, և զբօսացուցանէ զերևակայութիւն։ Անդստին 'ի վաղընջուց ժամանակաց են առակք, և 'ի կարի իսկ 'ի հին յիշատակարանս ամենայն ազգաց գտանին։ Գոգցես իմն յամենայն ժամանակի զանգիտեալ ճշմարտութեան 'ի մարդկանէ, և մարդկան 'ի ճշմարտութենէ։ Որ ոք և լեալ իցէ գտիչ առակաց, եթէ իրաւունք երկչոտ 'ի բերան ստրկի՝ վասն լսելի լինելոյ տեառն իւրում 'ի կիր առեալ իցէ զայն լեզու, և եթէ յիմաստնոց ոք՝ առ 'ի հաշտ առնել ընդ իրաւունս զզօրաւորագոյնն 'ի տերանց զանձնասիրութիւն՝ մտաբերեալ իցէ տալ նոցին զախորժ և զուարթ զայն կերպարան, մի յայնցանէ է գիւտս այս՝ որ մարդկեղէն մտաց առաւելագոյն յաճախեն փառս։ Սովին բարեյաջող արուեստիւ ճշմարտութիւն՝ մինչև յանդիման լեալ մարդկան՝ իրաւախոհ լինի ընդ գոռոզութեան նոցա, և տիրէ երևակայութեան։ Ընծայէ նոցա գիւտս իմն ախորժելի, և խնայէ զնոսա 'ի նախատանաց յանդիմանութեան և 'ի տաղտկութենէ խրատուց։ Միտք զբաղեալ 'ի գիւտ իմաստից առակին,*

Digitized by Google

չգտանէ պարապ ընդդէմ դառնալոյ խրատուն. և յերևել ուրեմն ճշմարտութեան՝ գտանի ապաղէն. անձամբ անձին հատանէ վճիռ, զոր չկամէրն լսել յայլմէ. քանզի է ուրեք զի կամիմք գալ յուղղութիւն, այլ ոչ կամիմք դատապարտիլ յայլմէ։

ԼԱԶԱՐԲ. Ներբող 'ի Լաֆոնթենէ։

---

## ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ոչխարք 'ի փարախն իւրեանց կային յակատանիչունք ննջէին, և հովիւն ընդ հովանեաւ բարձրաբերձ կնձենւոյ զուարճանայր սրնգաւն ընդ հովիւս մերձակայս։ Եկն անդր գայլ մի սովալլուկ, դիտել 'ի ցանկապատէն զհօտն։ Գառնուկ մի անփորձ, որոյ բնաւ իսկ չէր ինչ տեսեալ, սկսաւ բարբառել և ասէ առ որկորաժէտն.

Զի՞ խնդրես աստանօր։ — Դալար փափուկ և նորածիլ, պատասխանեաց գայլն. չիք ինչ անուշակ և անձկալի քան ճարակել զդալար 'ի կանաչազարդ մարգագետինս և անցուցանել զքաղց, և գնալ շիջուցանել զծարաւ 'ի մերձակայ ականակիտ վտակէ. գալ ես աստ զերկոսին ևս. իմ՝ այլ իմիք կարօտիմ. սիրող եմ իմաստասիրութեան, որ ուսուցանէ շատանալ սակաւուք. — Ճշմարիտ ուրեմն է, պատասխանի ետ գառնուկն, զի երբեք դու ոչ ճաշակես զմարմին կենդանեաց. և քեզ բաւական է սակաւ մի խոտ. ապա ուրեմն եղբայրաբար կեցցուք և ճարակեսցուք 'ի միասին։ Անդէն վաղվաղակի ել գառնուկն 'ի փարախէն և չոգաւ անդր 'ի մարգագետինն, ուր ժուժկալ իմաստասէրն յօշ յօշ պատառեաց և եկեր զնա։

Զգոյշ լերուք 'ի հրապուրող բանից մարդկան, որք

Digitized by Google

կեղծեն յինքեանս զառաքինութիւն. զատեցարուք զոյնպիսիս 'ի գործոց իւրեանց և ոչ 'ի բանից։

ՖԷՆԵԼՈՆ. Առակք։

## ԱՂՈՒԷՍՔ ԵՐԿՈՒ

Աղուէսք երկու յանկարծուստ զգիշերայն մտեալ 'ի հաւատուն ուրեք, խողխողեցին զաքաղաղն, զհաւսն և զվառեակս, և կոտորածիւն անցուցին զքաղց իւրեանց։ Մին՝ մանուկ եռանդուն՝ կամէր ծախեալ սպառել զամենայն. իսկ միւսն, ծեր և ագահ, խորհէր պահել պաշարէնս առյապայ, և ասէր. Որդեակ, իմաստուն արար զիս փորձն. իմ բազում ինչ տեսեալ է, յորմէհետէ եմս յաշխարհի. չէ արժան վատնել զամենայն բարութիւնս մեր առ օրին. յաջողեաց մեզ բախտն, և զանձ մեծ է զոր գտաք. պարտ է խնայութեամբ վարել նովաւ։ Առ որ պատասխանեաց կրտսերն. — Կամիմ զամենայն ինչ ուտել սպառել, մինչդեռ եմս աստ, և յագել և անձաշակ լինել զաւուրս ութ. քանզի ո՞ գիտէ թէ եկեալ միւսանգամ այսր՝ յաջողեսցի՞ մեզ օրն վաղուի. տանուտէրն սպանցէ զմեզ 'ի վրէժխնդրութիւն մահու հաւուց իւրոց։ Եւ յետ բանիցս այսոցիկ իւրաքանչիւրն հաճեաց զկամս մտաց իւրոց։ Կրտսերն եկեր կշտապինդ մերձ 'ի պայթել, մինչև հազիւ կարացեալ երթալ յորջ իւր, անդ մեռաւ։ Իսկ ծերն որ կարծէր առաւել իմաստութիւն՝ չափաւորել զախորժակ իւր և կեալ խնայութեամբ, դարձ արար 'ի վաղիւն անդր և սպանաւ 'ի տեառնէն։

Այսպէս ամենայն հասակի են իւր թերութիւնք իւր. երիտասարդք բուռնք են և ծայրայեղք 'ի հաճոյս իւրեանց, իսկ ծերք անուղղայք յագահութեան։

ՆՈՅՆ

## ԱՐՋ ԵՒ ԿՈՐԻՒՆ ԻՒՐ

Արջոյ ծնեալ կորիւն, կարի յոյժ տգեղ, զի և կերպարան կենդանւոյ չերևէր 'ի նմա. այլ մարմին անձև ժանտատեսիլ: Զամօթի հարեալ արջոյն ընդ զաւակ այնպիսի, երթայ հարցանել զորի զդրացի իւր, որ 'ի ծառին՝ շաղակրատ ձայնիւն ճչուկ մեծ յարուցանէր. Զի՞ արարից, ասէ, ազգակից իմ բարի, զճիւաղդ փոքրիկ. կամիմ խեղդամահ առնել զնա: Զգոյշ լեր, պատասխանի ետ նմա շատախօսն. տեսեալ է իմ բազում այլ արջս, 'ի նոյն վարուս քոյին ըմբռնեալս. երթ մեղմով լիզեսջիր զթօթիւնդ, և լիցի սիրուն և քեզ 'ի փառս:

Դիւրեաւ հաւանեցաւ մայրն խորհրդոյն 'ի շնորհս զաւակին, և երկայնմտութեամբ լիզոյր զկորիւն իւր ժամանակս ձիգս, մինչ ուր ուրեմն նուազէր տգեղութիւն նորա. և չոգաւ շնորհս մատուցանել մտերմին, ասելով. Եթէ չէր քո խրատեալ զկարճմտութիւն իմ, պատառեալ էր անգթաբար զորդեակն իմ, որ արդ միակ սփոփումն է կենացս:

Ո՜հ, որպիսի՜ բարիս խափանէ անհամբերութիւն, և քանի՜ չարեաց լինի պատճառք:

ՆՈՅՆ

---

## ՊԱՏԱՆԻՆ ԲԱՔՈՍ ԵՒ ՊԱՅ

Ցաւուր միում պատանեակն Բաքոս, որ մարզէր առ ատս Սիլենեայ, խնդրէր զմուսայս յանտառակի ուրեք, զորոյ թռչնոց ևեթ դայլայլիկ և աղբերաց խոխոջ աղմըկէին զլռութիւն: Ծառագայթք արեգական չկարէին թափ անցանել ընդ խիտ գալարութիւնն: Որդին Սեմելեայ, առ ուսանել զաստուածոցն բարբառ, նստաւ առ արմին հինաւուրց կաղնւոյ, յորոյ 'ի բնոյն ծնեալ էին

Digitized by Google

մարդկէկ բազում ոսկեղինիկ դարուն։ Տայր նա երբեմն և պատգամս. և ոսկերիմ ժամանակին չէր իշխեալ եղծանել զայն իւրումն տայրասուր մանգաղաւ։ Մերձ առ կաղնին հիմնաւուրց և Նուիրական՝ Թագուցեալ մանուկ մի՝ ունկն դնէր երգոց պատանւոյն, և 'ի ժպիտ ծաղրածու ծանուցանէր Սիլենեայ զվրիպանս աշակերտին։ Անդէն և Նայադք և այլ յաւերժհարսունք անտառին ծիծաղէին։ Գեղաւոր էր պարտուադիրն վայելչագեղ և զուարթ. զլուխ իւր պսակեալ 'ի բաղեղանց և 'ի բարունակաց որթոյ. ճակատ նորա պաճուճեալ յողկոյզս խաղողոյ, և փոքր բաղեղուն կախէր ուսընդանութ։ Պատանին Բաքոս զուարճանայր 'ի տեսանելն զտերևս Նուիրականս իւրումն աստուածութեան։ Իսկ Պայն 'ի գօտւոյն 'ի վայր ծածկեալ ահարկու և խոզանաւոր մորթով կորեան առիծու, զոր սպանեալն էր յանտառս։ Ունէր 'ի ձեռին զաւազան ծամածուռ և ոստախիտ. երևէր իմն յետուստ ագին՝ զքամակն ծեծելով։ Բայց քանզի Բաքոս ոչ կարէր տանել խորամանկ երգիծանագին, որ պատրաստ էր միշտ 'ի ծաղրել զվրիպանս իւր, ասաց նմա սաստիւ. Ո՞րպէս համարձակիս դու այպն առնել զորդին Արամազդայ։ Պայն անխռով պատասխանեաց նմա. Է՛հ, և որպէս որդին Արամազդայ իշխէ սխալել։

ՆՈՅՆ

---

## ԿԱԳԻԿ

Մեռեալ կապլիկ մի չարածեր, ոգի նորա էջ 'ի խաւարին կայս Պլուտոնի և խնդրէր դառնալ 'ի կեանս անդրէն։ Պլուտոն կամէր առաքել զնա 'ի դանդաղ և յապուշ մարմին իշոյ, և բառնալ 'ի նմանէ զդիւրաշարժութիւն, զաշխուժութիւն և զչարութիւն. իսկ նա այնչափ կերպարանս եցոյց ախորժականս և ծաղրածու,

մինչև անողորմելի սանդարապետին չկարացեալ բանաւորել զծաղր՝ եթող նմա ընտրել իւր բախտ։ Իսկ նա խնդրեաց մտանել 'ի մարմին թութակի, և ասէ. Գոնեա պահեսցես այսուիկ նմանութիւն ինչ ընդ մարդոյ, զորոյ ընդերկար տարւոյ յիս զպատկեր. զի մինչ կապիկն էի՝ առնէի շարժուածս իբրև զնոսա, և գոլով արդ թութակ՝ խառնեցայց 'ի նոցին հաճոյական զրոյցս։ Այն ինչ ոգի կապկին եմուտ 'ի նոր մարմինն, գնեաց զնա սպասաւոր միոյ շատախօսի, և սիրեաց զնա յոյժ, և եդ 'ի գեղեցիկ վանդակի։ Շուայտէր թութակն, և զօրն ողջոյն զրուցատրէր ընդ շատախօս պառաւին, որ ոչ ինչ իմաստնախօսն էր քան զնա։ Ի նոր արուեստն ընդարմացուցանելոյ զմարդիկ՝ յաւելոյր չգիտեմ որպիսի ինչ 'ի հին արուեստէ իւրմէ. շարժէր զգլուխն հտպտանօք, կափկափէր զկտուցն և 'ի բիւր եղանակս զթևսն տատանէր, և թաթիւքն այնպիսի դարձուածս առնէր, յորըս դեռ նշմարէին հտպտանք փակոտինսյ։ Պառաւն անոյր միշտ զակնոցն 'ի զնին, և յոյժ ցաւէր նմա ընդ ծանրալուրն լինել և չիմանալ երբեմն զբանս թութակին, առ որում առաւել գտանէր նա հաճար քան առ այլս 'ի մարդկանէ։ Այլ զեղծեալ սորա՝ եղև շատախօս խառնակիչ և յիմար. և այնպէս չարաչար նեղէր 'ի վանդակին և աքբենայր ընդ պառաւոյն՝ մինչև մեռաւ, և ել անդէն յանդիման Պլուտոնի։ Կամեցաւ նա յայնժամ առաքել զնա 'ի մարմին ձկան, առ 'ի համր կացուցանել զնա. իսկ նա վերստին հտպտեցաւ առաջի անդընդեհպետին. և զի իշխանք ոչ անսաստեն հայցուածոց վատթար մարդահաճոյից որ շնթեննն նոցա, հաւանեցաւ Պլուտոն առաքել զնա 'ի մարմին մարդոյ. բայց ամօթ համարեալ աստուծոյն առաքել զնա 'ի մարմին առաքինի և իմաստուն մարդոյ, խորհեցաւ մուծանել զնա 'ի մարմին առն շաղփաղփի և տաղտկացուցչի, որ ստէր միշտ և մեծաբանէր. առնէր շարժուածս ծաղրալիցս, և սպանէր զամենեսին. ընդհատէր զկարևոր և զիմաս-

տուն զրոյցս, առ 'ի խօսել չնչինս կամ բանս բերստ յիմարութեան։ Աթենաս՝ որ ծանեաւ զնա. յայգ 'ի Նորկերպարանս, ծիծաղեալ՝ ասէ. Ո՜հ է՜հ, ես ճանաչեմ ըզքեզ. դու խառնուրդ իմն ես 'ի կապկէ և 'ի թութակէ, զոր տեսեալ է իմ երբեմն. եթէ ոք բարձցէ 'ի քէն զձևս և զբարբառս, ուսեալս առանց իմն դատողութեան, այլ ինչ չմնայ 'ի քեզ։ Կապիկ մի գեղեցիկ և քաջ թութակ ոչ այլ ինչ յառաջ ածեալ կացուցանեն՝ բայց զայր տխմար։

Ո՜հ որչափ մարդիկ յաշխարհի՝ պաճուճեալ կերպարանաքն, անոտի շաղփաղփելով և ազնուական ձևով գիրկ են 'ի մտաց և 'ի պատշաճ վարուց։

ՆՈՅՆ

---

ԲՈՒ

Բուիճակի տեսեալ զանձն 'ի ջուրս աղբեր, և գեղեցկագոյն զանձն համարեալ, թէ ոչ քան զտիւ՝ որ անհաճոյ էր ինքեան, այլ առաւել քան զգիշեր՝ ընդ որ յայժ զուարճանայր, ասէր ընդ միտս իւր. — Մատուցի զոհս Շնորհաց. 'ի ծնանել իմում Աստղիկ արկ 'ի վերայ իմ զկամար իւր. գողտրիկ Սէր, Խաղք և Ծիծաղք թռիչս տան զինև 'ի գգուել զիս։ Արդ պարտ է զի և խարտեաշն Հիմեն տացէ ինձ մանկունս՝ գեղաւորս որպէս զիս, որք լիցին զարդ անտառաց և բերկրութիւն գիշերայ։ Աւա՜ղ զի ընտրելագոյն ազգ թռչնոց 'ի կորուստ մատնի. երանի հարսին, որ վարեսցէ զկեանսն՝ զիս տեսանելով։ Մինչ յայսմ խորհրդի էր, առաքեաց զորի խնդրել 'ի գիւմաց իւրոց զդուստր արծւոյ՝ թագաւորին օդոց։ Որի դժուարանայր կատարել զհրեշտակութիւնն. Ոչ բարւոք համդիպեցայց ընդունելութեան, ասէր. յառաջարկելս զայդպիսի անգէպ հարսանիս։ Եւ որպէս արծիւն այն՝ որ իշխէ յառել զակն իւր յարեգակն, ա-

Digitized by Google

մուսնացի ընդ քեզ, որ ոչ բաւես բանալ զաչս քո 'ի լոյս տուընջեան. այսու անհնար լիցի ամուսնացդ կալ 'ի միասին, միումն 'ի տուընջեան ելեալ, իսկ միւսն 'ի գիշերի։ Եւ 'ի չհաւանել ունայնամիտ և անձնասէր բուոյն, որի առ 'ի հաճել զնա՝ չոգաւ խնդրել զարծուին. և ծաղր եկաց վասն անմիտ խորհրդոյն։ Պատասխանի ետ նմա արծուին. Եթէ դու կամի հարսնանալ ընդ իս, եկեսցէ յետ ծագելոյ արեգական, տալ ինձ զողջոյն ընդ օդս։ Բուն յանձնապաստան՝ կամեցեալ զնալ, շլացան անդէն աչք իւր, և կուրացեալ 'ի ճառագայթից արեգական, անկաւ 'ի բարձանց 'ի ժայռ ուրեմն, և հաւք առ հասարակ յարձակեալ 'ի նա, փետրաթափ արարին զնա։ Բարւոք թուեցաւ նմա թաքչել 'ի քարանձաւ իւր, և հարսնացուցանել ինքեան զմի 'ի բուոց, որ եղև նմա հարսն արժանի։ Ի գիշերի կատարեցան հարսանիքն, և գեղեցիկք յոյժ և հաճոյք թուէին իրերաց։

Չէ արժան ումեք խնդրել ինչ 'ի վեր քան զինքն, և ոչ խաբիլ յիւրոցն բարեմասնութեանց։

ՆՈՅՆ

---

## ՎԻՇԱՊ ԵՒ ԱՂՈՒԷՍՔ

Վիշապ մի պահէր գանձ 'ի խոր քարայրի ուրեք, հսկելով առ նովաւ զտիւ և զգիշեր։ Աղուէսք երկու, խորամանկք յոյժ և անուանի աւազակք ըստ իւրեանցն արուեստի, շողոմիւք ընդ միտ մտեալ նորա, եղեն սորա մտերիմք։ Մարդահաճոյքն և փութկոտք չեն միշտ վըստահելիք։ Քաղաքավարէին ընդ նմա որպէս ընդ մեծի ումեք, զարմացեալք ընդ ամենայն մտացածին ցնորսն, և միշտ հաւանք 'ի կարծիս նորա, այլ առանձինն ծաղր առնէին զխաբեալն։ Յետոյ ուրեմն յաւուր միում 'ի քուն լինել նորա 'ի մէջի նոցա՝ խողխողեցին զնա, և

տիրեցին զանձուն։ Հարկ եղև բաժանել զայն ընդ մի-մեանս. գործ դժուարակնճռուն. զի անօրէնք չմիաբա-նին ընդ միմեանս բայց 'ի գործ չարութեան։ Մին 'ի նոցանէ սկսաւ բարոյախօսել, և ասէ. Ցինչ պիտանա-ցու լիցի մեզ արծաթս այս. լաւագոյն էր քան զայս՝ սա-կաւ ինչ որս. երբեք ոչ ուտի մետաղ և անմարս է ոսկի. յիմար են մարդիկ զի սիրեն զայդքան սնոտի ճոխու-թիւնս. մի և մեք հանգոյն նոցին լիցուք անմիտք։ Միւսն պատճառեցաւ համոզեալ իմն 'ի բանից նորա. ապահովս տեսար զնա, զի կամէր զիմաստասիրի վարել կենցաղ, որպէս զԲիաս, ընդ իւր տանելով զամենայն ստացուա-ծըս իւր։ Իւրաքանչիւր ոք կեղծաւորէր լքանել անդ ըղ-ձանձն, և իւրաքանչիւր զարանեալ ընկերին՝ պատառե-ցին զմիմեանս։ Մին 'ի նոցանէ 'ի մեռանելն ասէ ցըն-կերն, որ էր նոյնպէս վիրաւորեալ. Զինչ կամէիր առ-նել զարծաթն։ Զոր ինչ դու կամէիր առնել, ասաց միւսն։ Այր մի անցեալ առ նոքօք՝ գիտաց զպատահար նոցին, և յիմարս զերկոսին համարեցաւ։

Ոչ ինչ նուազ եք քան զմեզ, ասէ աղուէսն. և դուք իբրև զմեզ ոչ գիտէք վարել արծաթով, և սպանանէք զմիմեանս առ տանելոյ զայն։ Գէթ ազգ մեր իմաստ-նագոյն գտաւ ցարդ, ոչ 'ի գործ արկեալ զդրամ. զոր ընկալեալ է ձեր առ դիւրութիւն՝ 'ի վնաս ձեր է այն. զի կորուսանէք զստոյգ բարին ձեր՝ 'ի խնդիր մտացածին բարեաց։

ՆՈՅՆ

---

## ԱՌԱՍՊԵԼ ԵՒ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յերիտասարդուհեացն ոմն 'ի դից այգուն այգուն բանայ զդրունս Արևելից, ծաւալէ շաղ զովարար ընդ օ-դըս, ծաղկունս ընդ դաշտս և յակինթ ընդ շաւիղս արե-գական։ Զարթնու Երկիր ընդ առնուլ զազդ աւետեա-

ցըն, և պատրաստ ընդունել զաստուածն՝ որ օր ըստ օրէ նորոգէ զնորայն կենդանութիւն։ Իսկ աստուածն կենդանարար ծագէ, և երևի 'ի շուք վայելչական թագաւորին երկնից. ճախրեն կառք նորա լծեալք 'ի ձիամուց, և խաղայ ընդ անհուն ասպարէզս երկնից՝ համափիւռ լուսովն և ջահիւք ճառագայթեալ։ Ի հասանել նորա յարքունիս արևմտից ծովուց, Գիշերն՝ անանձրպետ նորին հետևորդ՝ պարզէ զքօղ իւր տխրերանգ, և ցանէ ընդ խորանարդ երկնից բոցկունս անթիւս։ Ցաւնեն ապա միւս այլ կառք, աղօտաչյահ և զուարթալոյս պայծառութեամբ՝ անուրջս 'ի սիրտս զգայունս արկանել. և վարիչ նորին մի յաստուածուհեաց բազմեալ՝ կառավարէ 'ի լռութեան, զըղձալի հարկն պահանջելով զԵնդիմիոնի հովուին։ Աղեղն երփներանգ, կամարաձև ոլորտացեալ 'ի ծագաց երկրի ընդ երկինս, հետք են Իռեայ լուսաշաւիղք՝ պատգամաւորին Հերայ։ Հողմք մեղմիկք և ահարկու մրրիկք Այոք են օդայինք, որք մերթ խաղան ընդ օդս և մերթ կռուեալ ընդ իրեարս՝ յարուցանեն զալիս 'ի ծով։

Ի ստորոտս բլրոյն քարայրն հովատուն և խաղաղաւէտ՝ օթևան է բարերար յաւերժհարսին, որ յանհատահոս սափորոյն անսպառելի կայլակեալ վտակ՝ արգասաւորէ զառընթերակայ դաշտն։ Անտի ընդունի նա զուխտս չքնաղ սրիորդին, որ զգեղ իւր 'ի փախստական ալիսն նկատէ։ Եթէ 'ի նուեմաստուեր մայրիս անդըր մտանիցես, ոչ լռութիւն անդ և ոչ միայնութիւն զարհուրեցուցանէ զսիրտ քո, այլ շահապետք անտառաց և դաշտաց բնակեն անդ, և արհաւիրք դիցական զօրութեան նոցա ազդեն 'ի քեզ։

ԲԱՐԹԵԼԸՄԻ. Ուղևոր. Անաքարսեայ.

## ՈԳԻՔ

Իբրև ժամ եղև չուոյ, զգացի խզելոյ կապանացն՝ որ պնդէի ընդ մարմին զոգեն յիս. և գնոյ յաշխարհ նոր, 'ի մէջ կենդանեաց էից, յորս էին բարիք և չարք, զուարթերեսք և խոժոռադէմք, խոհականք և ապուշք։ Զհետ եղաք նոցա առ վայր մի, և թուէր ինձ՝ յանձանձել նոցա զօգուտ պետութեանց և զիւրաքանչիւր արուք, և զխնդիրս իմաստնոց և զկարծիս ռամկին։

Ապա կին մի հսկայաձև տարածեալ զքօղ իւր սեաւ ընդ կամարաւ երկնից, և հեզիկ իջեալ յերկիր՝ ետ պատուէրս պաշտօնէից իւրոց, որ զհետ գնային նմա։ Ի տունս բազումս յարամբի 'ի ներքս մտաք. Քուն և երբանեակք նորա սփռէին անդ լիաբուռն զմեկոն. Լռութիւն և Խաղաղութիւն բազմէին սիրով առընթեր առաքինւոյն, և Խիղճ մնաց և Խուճապք անդոհականք տատասկապէս զմահիճս անօրինին շարժեալ տատանէին։ Պլատոն գրէր զթելադրութիւնս դիւին Հոմերոսի, և Երազք զուարճալիք թևապարէին զօրիորդաւն Լիկորեաւ։

Եւ կարապետն իմ ասէ ցիս. Արշալոյսն և ժամք բանան զասպարէզ աւուրն. ժամ է մեզ ամփոփելոյ յօդս։ Ահա Դիւք խնամակալք Աթենայ և Կորնթոսի և Սպարտայ սաւառնին զքաղաքօքն, և ճախր առեալ շուրջանակի վարեն 'ի բաց զօրս և կարեն 'ի չարեաց՝ որ սպառնան նոցա. սակայն դաշտք նոցա դիցեն յապականութիւն. զի Դիւք հարաւոյ դարանեալք յամպս խիտս դիմեն սպառնալեօք ընդդէմ հիւսիսայնոց։

Յաճախեն և 'ի գաւառս յայտնի պատերազմունք, որպէս 'ի ձերաց. և Տիտանեանցն և Տիփոնաց ճակատամարտք՝ դիւազունդ բանակաց էին բաղխմունք։

Հայեաց արդ 'ի ժիր արբանեակդ, որ հանգոյն ծիծռանց արագթռիչ և անդադար թևածեալ զերկրաւ՝ պարագիտեն խորազնին և հետազօտ ակամբ. սոքա են տե-

տուչք իրաց մարդկան։ Կէպք ազդմամբ հեզաբար ներգործեն 'ի մանկանցուս որոց խնամարկենն, և կէպք զանողոքելին Նեմեսիս 'ի վերայ չարագործաց արձակեն։ Տեսանես զհրեշտակսդ և զԹարգմանս, որ ելևէջս առնեն անդադար. դոքա են՝ որ զուխտս ձեր և զնուէրս մատուցանեն դից, և ածեն ձեզ 'ի նոցանէ երաշս բարեգուշակս կամ չարագոյժս, և զգաղտնիս հանդերձելոցն՝ որ ապա յայտնին 'ի ձեռն հրամանաց պատգախանեաց։

Յայնժամ ձայն բարձեալ. ասեմ. Ո՛ ոգի խնամակալ, ահա հասանեն առ մեզ ահարկուք յաղթահասակք և դժկերպք։ Եւ նա ասէ. Փախիցուք. դոքա են ոգիք Թշուառականք՝ որոց դժպհի է բարեբաստութիւն այլոց, և չխնայեն յոք՝ բայց միայն որք 'ի վիշտս կեան և յողբս։

Խոյս տուեալ 'ի մոլեգնութենէ նոցա, և ահա պատահեցաք այլոց՝ ոչ ինչ նուազ դժնդակաց։ Ժանտն Արէս, աղբիւր անսպառ հերձուածոց որ յուզեն զմարդիկ, ճեմէր սիգաքայլ 'ի վերայ գլխոց նոցա, և շնչէր 'ի սիրտ նոցա Թշնամանս և վրէժխնդրութիւն։ Ահաբեկ և ակընկոր զհետ նորա սողեալ գնային Աղաչանք, ողոքելով ըզնա ուր հերձուածք յառնէին։ Փառք փախստականգնային հալածեալ 'ի Նախանձուէ, որ անձամբ զանձին զկողս կեղեքէր. և Ճշմարտութիւն հալածեալ 'ի Կեղծաւորութենէ. խուսափանէր 'ի բազմահոյլ յոռութեանց, որ որոգայթս կամ սուսերս բարձեալ բերէին։

Տեսի յանկարծ և զԲախտն, և 'ի գոհանալն իմում զնմանէ վասն պարգևացն զոր բաշխէ մարդկան, ասէ ցիս սաստիւ. Չպարգևեմ ումեք երբեք ինչ, այլ փոխ տամ ծանր տոկոսեօք։ Եւ զայս ասելով, Թանայր աջովն միրգս և ծաղկունս 'ի բաժակ Թունալից՝ զոր 'ի ձախումն ունէր։

Անցին ապա առ մեօք երկու 'ի դիւցն հզօրք, Թողլով զհետ իւրեանց շաւիղ լուսաւոր. և առաջնորդն իմ ասէ ցիս. Սոքա են Արէսն ամեհի և խոհականն Աթենաս-

բանակք երկու ճակատին առ միմեանս 'ի Բէովտիա. Աստուածուհին իջանէ կալ առընթեր Եպամինոնդայ զօրավարին Թեբայեցւոց, և աստուածն փութայ յօգնութիւն Սպարտացւոց՝ որոց պարտութիւն առաջի կայ. զի պարտ է իմաստութեան յաղթանակել 'ի վերայ քաջութեան:

Հայեաց յերկոսին Դեւսդ որ յերկիր վայրաբերին, մին բարի և միւսն չար. դոքա գնան իշխել մանկան միոյ նորածնելոյ, և ընկերել նմա մինչև ցգերեզման: Այժմ ընդ հակառակս միմեանց հնարին զեղուլ 'ի նա զամենայն լաւութիւնս կամ զամենայն յոռութիւնս սրտի և մտաց, և յընթացս կենացն հնարեսցին ձգել զնա 'ի բարին կամ 'ի չար, ըստ զօրանալ ազդեցութեան միոյ յերկաքանչիւրոցն քան զմիւսոյն:

Ցուցայի տեսանել անդ ընդ աղօտ զիշխանն տիեզերաց պար առեալ յառընթերակացից աթոռոյ իւրոյ 'ի գերամաքուր Էիցն՝ զորս իմաստասէրք մեր կոչեն Երեւոյթս, Նախատիպս յաւիտենականս, Ոգիս անմահս: Այլ ասէ ցիս Ոգին. Բնակէ նա 'ի վայրս անմատոյցս մահկանացուաց. մատո՛ նմա երկրպագութիւն և իջցուք յերկիր:

ԳԱՐԹԷԼԸՄԻ. Ուղևոր. Անաքարսեայ:

---

## ԱՄՓԻՏՐԻՏ ԵՒ ՈՒՂԵԿԻՑՔ ԻՒՐ

Մինչդեռ զայսոսիկ ընդ միմեանս խօսէին (Ազայէլ և Մենտոր), և ահա դլփինք Թեփամորթք, ոսկեճաճանչք և կապոյտք խաղային ընդ ծով ամբառնալով փրփրադէզ զալիս: Զհետ նոցա գային Տրիտոնք, զխեցիսն փողարափողս հնչեցուցանելով, շուրջ պար առեալ զԱմփիտրիտեայ կառօքն՝ զոր ձգէին ծովաձիք ձիւնափայլք հրացայտ աչօք և ծխաշունչ ռնգամբք, և որ հեր-

ձեալ պաղտաղտուկ ալիս՝ ակօս զհետ իւր Թողոյր լայնատարր 'ի ծովուն, կոնք զհետ իւր հրաշագան ծովածին՝ սպիտակափայլ քան զփղոսկր, յեց յանխւս ոսկիս՝ որք ընդ խաղաղ մկանունս ջուրց Թեթև սլանային։ Գնային զհետ կառացն 'ի լոյղ Յաւերժհարսունք ծաղկապսակք գունդագունդ, և վարսք նոցա զուսովքն 'ի շունչ հողմոց ծեղածփեալ։ Իսկ դիցուհւոյն զաւազան ոսկի յաջումն 'ի սաստ կոհակաց, և 'ի ձախմէ զծնգաք նորա 'ի ծուծ ստեանցն կախեալ որդեակն իւր, մանկիկ աստուածն Պալեմոն։ Դէմք նորա զուարթատեսիլ, և մեծավայելուչ քաղցրութիւն ցածուցանէին զամպրոպ հողմայոյզս և զսեաւ մրրիկ։ Տրիտոնք զոսկեսանձ երիվարսն երասանակէին. լայնալիր 'ի վերոյ կառացն ծածանէր 'ի Թռիչս ծիրանեփայլ առագաստ, զոգ առեալ 'ի քաղցրասիւք շընմանց զեփիւռից՝ որ Թեւապարէին զնովաւ։ Անդ Եւոլոս ժիրաժիր գայր երևէր ընդ օդս եռանդուն և անհանդարտ, դէմք նորա տխուր և խորշոմ, բարբառ ըսպառնալից, յօնք Թաւք 'ի վայր անկեալք, և աչք նորա հրացայտք աղօտաճաճանչք և խոժոռք, կարկէին զհիւսիսակսն ամեհիս և ընկրկէին զամպրոպս։ Անդ և կէտք անհեթեթք և նհանգք առ հասարակ անդնդայինք ծըծեալ և զգայռեալ ընդ ռնգունս իւրեանց զաղտաղտուկ ալիս, խուժէին ճեպ 'ի ճեպ 'ի խորոց վհից 'ի զնին դիցուհւոյն։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

---

## ՄԱՀ ԵՒ ԸՆԿԵՐՔ ԻՒՐ ԱՌ ԳԱՀՈՅԻՒՔ ՊԼՈՒՏՈՆԻ

Առ պատուանդանաւ գահոյից դարանէր Մահ տըժգոյն և անյագ, գերանդի սայրասուր 'ի ձեռին՝ զոր յաւելոյր սրել անդադար։ Թռիչս զնովաւ առնուին հոգ սեւադէմ, կասկած անողորմ, վրէժխնդրութիւն արիւնա-

Թաթաւ և վիրալից, հեռ անիրաւ, ագահութիւն ան-
ձամբ անձին կեղեքիչ, յուսահատութիւն անձնասպան,
փառամոլութիւն արիւնախանձ՝ ապիկար 'ի վայելել
յարգասիս շարեացն գործեցելոց, նախանձ յինքն իսկ
թունաթափ, և առ'ի չկարելոյ վնասել այլոց՝ մոլեալ 'ի
զայրոյթ, ամպարշտութիւն՝ որ անձամբ անձին անյա-
տակ պեղեալ խորխորատ կործանի անդ անյայս. ցնորք
անժպիտք, տիպք մեռելոց՝ պակուցիչք կենդանեաց, ե-
րազք զահանդելիք, և տքնութիւն ոչ ինչ ընդհատ քան
զտխրագին անուրջս անհամբոյր։ Այսպիսի առ հասարակ
պատկերք դժնէատեսիլք պար առեալ զվէտն Պլուտո-
նիւ, լնուին զարքունիս նորա։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

---

## ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՔԱՐԱՅՐԻ

Կամիցիս գիտել թէ քանի՜ խտիր ընդ պայծառու-
թիւն և ընդ գեղ զգալւոյս այսորիկ և ընդ իմանալի լու-
սոյն կայցէ։ Համարեսջիր եթէ 'ի վիհ խոր ամբոխ մարդ-
կան 'ի շղթայս ծանունս կաշկանդեալ կայցեն անշարժք
ամենեքին՝ զհանդիպակացսն ևեթ տեսանելով, և յետ
կուսէ նոցա հեռագոյն ուրեք 'ի բարձունս հրատ բոր-
բոքեալ կայցէ, որոյ նշոյլք 'ի վիհ անդր ծաւալիցին. և ընդ
հրատն և ընդ վիհ որմ 'ի միջի կացցէ՝ առ որով մարդիկ
երթևեկիցեն, կէսք լռելեայն և այլք զրուցատրելով ընդ
միմեանս, և 'ի ձեռս իւրեանց կերպարանս մարդկան և
անասնոց և ազգի ազգի կահս 'ի վեր բարձեալ բերիցեն՝
որոց ստուերք 'ի կողմն վհին հանդէպ կապելոցն նկա-
րիցին։ Եւ 'ի տեսիլ պատկերացն շարժականաց պատ-
րեալ նոցա, կարծիցեն զստուերսն էակս գոյաւորս, և
նոցին իսկ զշարժմունսն և զկենդանութիւն և զխօսսն

Digitized by Google

համարեցին։ Կալցուք արդ զմի 'ի կապելոց սատի, և առ 'ի փարատել զպատրանս նորա՝ խզեսցուք զկապանսըն, և յորուցեալ զնա հոյեցուսցուք յետս։ Ի տեսիլ նորոց իրացն ափշեալ, յերկուսասցի նա ընդ ճշմարտութիւն նոցա. և շլացեալ յակնախտիղ նշուլից հրոյն, դարձուսցէ զաչս 'ի բաց յանգոյ երևոյթսն՝ յորս յառաջագոյն պշուցեալ կայր։ Անդրէն միւսանգամ մատուսցուք զնա 'ի փորձ. բռնի 'ի վեր ձգեսցուք զնա 'ի վհէն, թէպէտ և ճչիցէ, թէպէտ ընդդէմ կքքիցի և տաժանաքայլ յառաջ մատիցէ։ Հասեալ 'ի վերայ երկրի՝ ընկճեսցի անդէն 'ի պայծառութենէ տուընջեան, և յաճախ զփորձ առեալ՝ հազիւ ապա նշմարել կարասցէ զստուերս և ըզմարմինս և զաստեղս գիշերոյ, հայել յարեգակն և խելամուտ լինել զի նա փոփոխէ զյեղանակս և արգասաւորէ զզգալիքս ամենայն։

Որպիսի՞ ինչ արդեօք թուեսցին նմա այնուհետև գովութիւնքն 'ի խորափոր անձաւին ընծայեալք՝ որոց նախտեսանիցենն և նկատիցեն զստուերսն անցաւորս. զի՞նչ խորհիցի զնսապարծութեանցն և զատելութեանցն և զնախանձայուզութեանց, զորս զննութիւնք ստուերաց գրդեն 'ի խաւարարգել ամբոխ եղկելեացն։ Գութ գորովոյ ստիպեսցէ զնա դիմել յօգնութիւն նոցա, և նշաւակել զանոսի իմաստութիւնն և զծաղրելի գիտութիւնս․ այլ քանզի 'ի միջօրեայ պայծառութենէն 'ի խոր խաւարըն իսկոյն անցանելով ոչ ինչ 'ի սկզբան անդ տեսանել կարէ, յարիցեն նոքա ընդդէմ նորա, և կշտամբեսցեն զխարխափումն նորա, և համարեսցի նա առ նոսա օրինակ ահաւոր 'ի ցոյց վտանգին՝ որ պահի 'ի վերնագաւառ անդր երթելոցն։

Ահաւասիկ մերոյս դժնդակ պայմանի ճշգրիտ պատկեր. անկեալ դնի ազգ մարդկան 'ի լայնատարր վհէի շղթայակապ, պատաղեալ 'ի ստուերս ունայնս և պատրողականս։ Աստ բերկրութիւնք դառնութիւնս ձգեն զհետ. ընչից խաբուսիկ է ճաճանչ. առաքինութեանց

քարխուլ են հիմունք, և նիւթականացս իսկ պատրիչ է գոյութիւն։ Պարտ է մեզ ելանել 'ի խաւարէ աստի, քորտակել զշղթայս, ամբառնալ անխոնջ ճգամբք 'ի գերաշխարհն իմանալի, մօտել տակաւ 'ի գերաբուն իմացութիւնն, և նկատել զաստուածային էութիւն նորա անխառն 'ի զգայութեանց և 'ի կրից։ Յայնժամ լիցի մեզ տեսանել՝ զի յաթոռոյ նորա իջանեն 'ի բարոյական աշխարհն արդարութիւն և գիտութիւն և ճշմարտութիւն, և 'ի բնականն՝ լոյս արեգական և արգասիք երկրի և գոյութիւն ամենայն էից։ Միտք որ 'ի բարձրութիւնս յայս գամ մի ժամանեալ, զփորձ առնուցու ըզյուզմանցն և զխանդից և զմայլմանց՝ զորս տեսիլ վերաբուն բարւոյն ներգործէ 'ի նմա, ոչ ևս խոնարհեսցի յանձն առնուլ զճգունս մեր և զպատիւս, և կամ թէ խոնարհեսցի ևս առ մեզ, և հարկ լիցի նմա մինչև սովորեալ 'ի խաւար մեր՝ պատմել զարդարութիւն որոյ զստուերս ևեթ նորա ճանաչեն, նորալուր բանք նորա այնպէս անհեթեթք թուեսցին և վտասակարք, մինչև ծաղր առնել ամենեցուն իբրև զյիմար ոք, կամ որպէս զյանդուգն պատուհասել։

Սակայն այսպիսիս պարտ է գոլ իմաստնոցն մերոց՝ որք 'ի գլուխ հասարակապետութեանն կացցեն, և այսպիսիս պարտ է բանականին կրթել զնոսա մակացութեան։ Զամս հինգ պարապեալ նոցա յուսումն նորին, խոկասցեն յէութիւն ճշմարտութեան և արդարութեան և պատշաճից։ Մի զտարտամ և զանստոյգ զայժմու որ առ մեզս ծանօթութիւն՝ չատ համարեսցին, այլ զբուն զօհիզմն նոցա հետազօտեսցեն. մի ընթերցմամբ պատուիրանաց մարդկան ուսցին զպարտս իւրեանց, այլ 'ի հրահանգաց՝ զոր անդստին յանսկիզբն էէն ընդունին. և իբր անընդմէջ ընդ նմա խօսակցութեամբ ընկալցին զանախառ գիտութիւն հասու լինելոյ ճշմարտութեան, զարիութիւն անդրդուելի՝ 'ի կորովել զարդարութիւն. և զգեղեցիկ յամառութիւնն առնելոյ զբարի՝ որում ոչ ինչ կարէ յաղթել, և որ ամենայնի յաղթէ 'ի սպառ։

Digitized by Google

Այլ մինչ նոքա բոլորովին ընդ գերագուն բարւոյն միացեալ, և զճշմարիտ կեանսն կեալով, զերանելիքս ամենայն 'ի մտաւորսն դարձուցեն, հաստատակայութիւնն որ իշխէ առաքինութեանց նոցա՝ կոչեսցէ զկէսս 'ի նոցանէ 'ի գործ պատերազմի, զայլս 'ի պաշտօնս իւրաքանչիւր հասակին։ Դարձեալ վերստին փորձեսցէ զնոսա մինչև հասցեն 'ի յիսուն ամ տիոցն, և ապա վերառեալք ակամայ 'ի բարձրագոյն աւագութիւն՝ ևս քան զևս մերձեսցին լծիւք յէն գերագուն, և 'ի նմանէ աւղղեսցին։ Այնուհետև իմաստասիրութեամբ ընդ երկինս կցորդեալ, և աւագութեամբն ընդ երկիր՝ լուսաւորեսցեն զքաղաքացիս իւրեանց, բարեբաստս զնոսա յարդարեսցեն. և յետ մահուն իւրեանց կեցցեն 'ի յաջորդս՝ հրահանգեալս բանիւք և գործովք նոցա, և աշխարհն շնորհապարտ՝ կանգնեսցէ նոցա շիրիմս, և կարդասցէ զնոսա շահապետս իւր։

Ապա ուրեմն իմաստասէրքն, զորս կացուսցուք իշխանս 'ի վերայ հասարակապետութեանս մերոյ, մի՛ իցեն որպէս զճամարտակողսն անգործս և լիրբս զիմաստակսն արհամարհս յաչս ժողովրդեան՝ անկարողք առաջնորդել նմա. այլ իցեն անձինք արիասիրտք. մեծախոհք, պարապեալք յօգուտ ևեթ աշխարհին, քաջահմուտք ամենայն մասանց առաջնորդութեան երկար վարժիւքն և վեհ և վսեմ տեսականաւն նորին գիտութեամբ, և առաքինութեամբքն իւրեանց և մաքրութեամբք՝ պատկերք և թարգմանք դիցն 'ի վերայ երկրի։ Եւ վասն զի հասարակապետութեանս մերոյ անձուկ լիցին սահմանք, կարասցեն սոքա 'ի կշիռ ական ունել զամենայն կողմանս նորա։ Սաստ իշխանութեան նոցա մեծարեալ յամենեցունց, պատսպարան իւր կալցի 'ի կարևոր ժամանակի զգունդ անպարտելի և խաղաղասէր զօրականին, որ ոչ այլ ինչ իւր պարծանս խնդրեսցէ՝ բայց միայն պահ ունել օրինաց և հայրենեաց։ Ժողովուրդն կեցցէ երանաւէտ 'ի միջասահման՝ այլ յանկա-

պաւտ բախտի· զօրականն զերծ յաւտնելն հոգոց, և փառաւորեալ 'ի մարդկանէ արութեամբքն իւրովք. և աւագանին 'ի բերկրանս բարերարութեան, և ունելոյ այնմ վկայ զգերաբուն էն:

ՊԼԱՏՈՆ· Հասարակապ· Գիրք Է:

# ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԵՒ

# ԿՐՕՆԱԿԱՆՔ

---

## ԶԻ ԲԱՐՈՅԱԿԱՆԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ՝

## Է ՄԻԱԿ ՈՒՍՈՒՄՆ ԱՐԺԱՆԱՒՈՐ ԻՄԱՍՏՆՈՑ

Բարոյականն գիտութիւն էական մասն է իմաստասիրութեան, և միայն արժանի գեղեցիկ անուանն սիրելոյ զիմաստութիւն. զի իմաստուն ոչ այն է՝ որ խնդրէ խելամուտ լինել գաղտնեաց բնութեան, յարգասեաց անտի 'ի պատճառս վերամբառնալ, և մտաց իւրոց ներքոյ արկանել զընթացս համագոյից։ Բարեկամն Սոկրատ խոստովանէր չգիտել յայսպիսեաց աստի և ոչ ինչ. սակայն հարցուկն զնա յայտ արար իմաստուն. զի ամփոփէր նա զուսումն իւր յայն՝ զոր հարցուկն պատուիրէր մարդոյ 'ի վեր քան զամենայն. Ծանիր զանձն։

Այս ուսումն անձին, այս ճանաչումն մարդոյ, որ անտեսն լեալ էր մինչև ցՍոկրատ, և յետոյ բազում ջանիւ ածաւ 'ի զարգացումն, բովանդակի բարոյական գիտութիւն։ Բայց գիտութիւնս այս, որպէս յոգունքս այլք, եղև սնոտի և անարգասաւոր՝ ցորչափ յունայն տեսութիւնս պարապէր. զի մարթ է գիտութեան իմիք

Digitized by Google

գոլ ցանկալի, այլ ոչ և օգտակար, և չիք իսկ նորա խոհեմէս օգտակարութիւն, եթէ 'ի տեսականէ նորա ոչ յառաջ գայցեն հնարք և կանոնք արուեստի՝ զորոյ ըզգործնականն լուսաւորէ նա զմասն. զի 'ի կատարման է յարգ նորա։ Ըստ այսմ օրինակի աստեղաբաշխութիւն զտանի օգտակար երկրագործութեան. երկրաչափութիւն՝ մեքենականին գիտութեան. տարրաբաշխութիւն՝ բժշկութեան և ձուլագործութեան, այլովքն հանդերձ։

Այսպէս ուրեմն բարոյականն չէ գիտութիւն օգտակար, եթէ չիցէ ամենայն յարուեստ։ Արուեստս այս, որ է բարւոքն կենցաղավարել ընդ անձին և ընդ նմանիս իւր, և գոլ ըստ այսմ 'ի լինել երջանիկ, արուեստս այս ամփոփեալ յօգուտ ևեթ կենաց, կացուցանէ զբարոյականին գիտութիւն իմաստասիրական։ Եպիկուրեանք ոչ գիտէին այլ ինչ իմաստասիրութիւն. նիւթապաշտք արդէք 'ի նոյն ուշ նպատակի սահմանեն զայն։ Այլ այս իմաստասիրութիւն ոչ միայն անձուկ և սնոտի յառաջկայն իւր զտանի, այլ և տարտամ և յեղյեղուկ յօրէնս իւր. զի եթէ պարտք գոլոյ բարի հաստատեալ իցեն յիղձս երջանկութեան կարճատև կենացս, կանոնս այս զտանի փոփոխելի և յեղյեղուկ ըստ ախորժակաց, ըստ յօժարութեանց, ըստ կրից, ըստ բնաւորութեանց և ըստ ցնորից մտաց, որ այլայլեն և տատանեն զերջանկութեանն առարկայ։ Որ ոք ոչ պարտ անձին համարի գոլ բարի՝ բայց առ 'ի լինել երջանիկ 'ի կենցաղումս, ըստ ախորժակաց իւրոց և ըստ հաճոյից՝ փոփոխէ զհնարս. անվրէպ ևս վարկուցեալ ընդ այլ ճանապարհ 'ի նպատակն իւր ժամանել. և լինի մոլի և չար ըստ օրինի՝ 'ի կարծել իւրում պատշաճագոյն յերջանկութիւն իւր զմոլութիւն կամ զեղեռն. և վնասակար սոյնպէս զտանի իմաստասիրականն գիտութիւն՝ բարոյականին։

Իսկ կրօնականն գիտութիւն բարոյականին առանց համեմատութեան գեր 'ի վերոյ է և ընդարձակ և հաստատուն. և սահմանի՝ Գիտութիւն բարւոք կենցաղավա-

Digitized by Google

րութեան վասն յաւիտենից կենաց։ Արդ վասն յաւիտենից կենաց բարւոք կենցաղավարութիւն՝ է բարւոք կեալ և վասն անձին. և է իսկ այս ըստ առաւելագանցութեան արուեստ գոլոյ բարի՝ առ 'ի լինել երջանիկ. այլ չէ իսկ և չէ բարութիւն ըստ պատշաճից, և ոչ ըստ ցնորից մտաց երջանկութիւն։ Աստանօր կամք աստուածային միակ կանոն մարդկային կամաց, և օգուտք կենցաղոյս դաւանաքեայք՝ անտես լինին առաջի անսայլայլակ օգտի հանդերձելոյն մեծի։

Ըստ այսմ օրինակի բարոյականին կրօնական գիտութեան՝ գտանի հաստատուն սկիզբն և վախճան և միջոց. ամենայն ինչ անյեղլի. նպատակ նորա երևելի, և ճանապարհ յերիւրեալ. մինչ եթէ մարդոյ քաջ գիտել՝ որովք պայմանօք խոստացեալ է նմա երջանկութիւն, և որում բարութեան սահմանեալ է այն 'ի մրցանակ։

Գիտեմ ընծայեալ բարոյականին միւս այլ վսեմագոյն առարկայ, կենցաղավարել մարդոյ ըստ աստուածային կամաց՝ առ 'ի հաճոյ եթէ լինել նմա հնազանդութեամբ, և զկեանս իւր և զամենայն աստուածապարգև տուրս նուիրել որուչին նուէր մշտնջենաւոր գոհութեան և սիրոյ։ Ապաքէն չիք ինչ գովելի քան զայս. և առոյիկեանցն իսկ բարոյականին գիտութիւն ընծայէր անձին զայսր ներանձնական բարոյականի անապակ դիտաւորութիւն, ոչ ներելով առաքինութեան 'ի սիրտ մարդոյ այլ ինչ խնդիր օգտի՝ բաց յառաքինութենէ։ Այլ քանզի վտանգ է ցնդելոյ ամենայնի 'ի յոյժն անգայտանս ;, առաւելագանց թուի ինձ բոլորովին անտեսութիւն օգտի 'ի սովորական բարոյականի։ Զի Աստուած 'ի տալ մարդոյ զփոյթ փրկութեան անձին, կամի զի փրկութիւն նորա դրդեսցէ զնա. և զի ետ նմա զյոյս և հաւ ; նմա զայն յառաքինութիւն, ապա կամի զի յոյս զն ոչայերեսցէ, և խոստմունք իւր ամոքեսցեն, եթէ իցէ ինչ ծանր և խիստ յօրէնս իւր։ Զիք

երկրայել, ասէ Փասքալ, զի հոգի կամ մահկանացու է և կամ անմահ. և աստի յառաջ գայ խտիր ծայրալիր 'ի բարոյականին. սակայն իմաստասէրք առանց նկատելոյ զայս՝ յարմարեցին զբարոյական. որպիսի՛ կուրութիւն։ Ապա ուրեմն և Փասքալ վարկանի ինչ խնդիր օգտի 'ի բարոյականսն, զոր յեղափոխէ 'ի մարդում յաւիտենականն բարութիւն կամ գործ 'ի չգոյութիւն։ Հաւանիմ ընդ այս, և սահմանեմ զբարոյականն՝ Գիտութիւն կենաց ըստ յաւիտենականութեան,

Ապա ուրեմն գիտութիւնս այս 'ի գործ արկեալ՝ է առաւել ապահովելոյ զանապակ և զծայրալիր երջանկութիւն պատրաստեալ մարդոյ յանտի կեանս, առանց 'ի բաց դնելոյ և զփոյթ հայթայթելոյ անձին և յաստի կեանս զնշոյլս այնր երջանկութեան, որք 'ի հարևանցի ուղւոջն՝ են որպէս աղօտ փայլատակունք 'ի ծոց ամպոց։

ՄԱՐՄՈՆԹԷԼ. Բարոյական։

---

## ԱՍՏՈՒԱԾ ԱՂԲԻՒՐ ԼՈՒՍՈՅ ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՆ

Գիշերախառն յարուցեալ որպէս զԴաւիթ դիտել զերկինս, զի՞նչ էր զոր տեսի, ո՛վ Տէր, և քանի՜ սքանչելահրաշ պատկեր էր այն անհուն լուսոյդ։ Գալով գայր արեգակն, և երկնաձիր պայծառութիւն ծաւալեալ շուրջանակի՝ կարապետ լինէր գալստեան նորա. վերացան աստեղք, բայց կանգուն կայր դեռ լուսին 'ի մահիկս արծաթի գեղանի և լուսաբորբոք, կղկաթ կաթոգի զաչս յինքն յափշտակեալ. ուրանօր գողցես մեծարանս իմն կամեցեալ առնել ելիցն արևու՝ կայր զերեսս իւր 'ի նա հաստատեալ ջինջ և պայծառափայլ. և կիսաբոլորն այն փոքրիկ պարունակ 'ի կողմն այն ևեթ հիաքանչ և ճաճանչաւէտ փայլէր 'ի ճառագայթարձակ նշուլից արփե-

նւոյն՝ իբրև 'ի հօրէն լուսոյ, այլովք ամենայնիւ մնայր գոլով և խաւար։

Ըստ առաւելահրաշ լուսոյ պայծառութեան փառաւոր առնէր նա զպարգևատուն առատաձեռն. նա աւանիկ այլ իմն ազգ այսպէս շուք դնէր երկնաւոր լուսատուին. զի ըստ մտանել արեգականն գողանայր զինքն յաչաց, և մահիկ եղջերն տակաւ նուազեալ կարճանայր. մինչ զի ընդ լուսալիր ծագել արփենւոյն՝ ըստ ակն անկեալ թարշամ և չիջանուտ լուսոյն՝ իբրև խորտակեալ իմն կորնչել ընդ մեծաշխահ աստեղն նշուլիւք։

Այլ զի ոչ մնաց նա թափուր 'ի լուսոյ մօտագոյնս մերձեցելոյ արեգականն լուսատուի, այն յայտ իսկ էր, զի աստղ դուզնաքեայ՝ տեղի տայր վեհագունին, և նշոյլ աղօտաշխահ՝ խառնէր 'ի լոյս մեծապայծառ, և մահիկ լուսնին որ գեղայօրէն նախ փայլէրն 'ի մէջ աստեղաց, անհետանայր 'ի յերկնից։

Աստուած իմ, լոյսդ յաւիտենական, ո՞չ այս առակ օրինակի իցէ հանգունատիպ այնմ՝ որ 'ի հոգիս իմ ներգործի առ 'ի քէն լուսաւորելոյ. անդուստ ուրանօր ակնարկեսդ սպիտակափառ փայլէ. իսկ ուր ուրեք ոչ թափանցանեն ճառագայթք քոյին՝ տիրէ անդ մռայլ. այլ թէ երբեք բովանդակ զլոյսդ ամփոփեսցես, անհնարին անդ 'ի վերայ հասանէ խաւար և գայթակղութիւն . . . ։ Լո՛յսդ անճառելի, որում համայն վերընծայել պարտիմք միայնոյ պարգևատուիդ, որ ես արդարև հայր լուսոյ, ոչ լոկ զլոյս մեր և զշնորհս, այլ և առնել իսկ, զի լոյս մեր՝ որպէս ինչ և էն, ընկլցի 'ի լոյս քոյ, և բարձցի և կորիցէ յանդիման աչաց քոց։

ԳՈՑԻԻԷ

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԲՆՈՒԹԵՆԷ

Այլ շատ իցէ, տեարք, խօսեցեալս ցայս վայր 'ի միտըս ձեր. Թոյլ տուք ինձ առ վայր մի և ընդ սիրտս ձեր բարբառել. քաղումք 'ի ձէնջ նորատունկք նորարբունք էք, և հոգիք ձեր մատաղարբոյս. ոչ ծաղկընկէց թարշամեալ 'ի խորարմատ անաստուածութեանն թունից, ոչ գօսացեալ յօգտածարաւ շահուցն ակնկալութենէ, և ոչ խստացեալ յընդերկար հաճոյիցն ցանկութեանց. և յայն հասակ գեղաղէշ հասեալ ձեր՝ յորում խանդք սրաթռիչք և սիրտ դիւրազգած և արդարասէր՝ պատրաստականս զձեզ գործեն և դիւրամատոյցս վեհանձն խորհրդոց և անսուտ ճշմարտութեան. արդ չիցէ՞ բնաւ դիպեալ ձեզ զի առ վայր մի 'ի բաց եդեալ զգիրս և զբանադատութիւն, յառիցիք հիացեալ ընդ մեծասքանչ տեսիլ բնութեան. կարիցէ՞ք երբեք զյոյզս սրտիցդ սանձահարել և ոչ յափշտակեալ իբր 'ի հիացման՝ 'ի խորոց սրտից ձերոց հառաչիցէք զհառաչս ճշմարտութեան. Որպէ՜ս զի մեծ են գործք քո, Տէր։ Եւ ճշմարտիւ իսկ՝ եթէ զճաշակն առնուլ կամիցիմք սիրայորդոր յուզմանցս որ յաստուածութիւն անդր զմեզ վերաբերեն, թողցուք զքաղաքս և զապարանս մեր, թողցուք զգրաւորական ճոխութիւնս մեր և զճարտարագործ վաստակս. զի զբնութիւն ոչ 'ի գործարան իմաստնոյն խնդրելի է, ոչ 'ի թանգարանս հետախուզին, և ոչ յայնս որ զմարդկան զօրութիւն և զճարտարութիւն յանդիման առնիցեն. և ոչ դարձեալ ածից զձեզ 'ի շրջափակս պատուարացն, ուր գազանք Ափրիկոյ և և Ասիոյ և անտառաբնակք մայրեաց մերոց 'ի գառագեղսն շղթայակապ պահպանին, զվայրագ ազատութիւնն մոռացեալք. զի արծուին բանտարգել՝ յինքն արդարև զաշս իմ ձգեսցէ, բայց ոչ ինչ ազդեսցէ յիս 'ի հիասքանչ յուզմանց կրից՝ որպէս 'ի տեսանելս իմ զթագաւորն օդոց այերաց բարձրաթռիչ և հոլաթև.

խոյացեալ 'ի վերնագաւառս անդ որոտընդոստ շանթից կայծականց. և ոչ դարձեալ ասացից ձեզ զինուորել զաչս ձեր 'ի գործին հրաշադէտ՝ և 'ի հաստատութիւն երկնից ապաստակել. զի ոչ միայն պարտասեցուցիչ է ականողեաց, այլ և զի ծանր է ինձ զմի միայն կէտ զերկնից նկատել. քանզի ընդարձակատարր երկնից կամարացն փափաքեմ, ուր անեզր ազատութիւն՝ զմըտացս զօրութիւն և զսրտիս զազդմունս անպարագիծ ծաւալեսցէ։ Եւ ո՞ւր ուրեք գտանիցի, տեարք, բնութիւնն այն՝ որ ազդողագոյնս 'ի հոգիս մեր խօսի քան զամենայն մարդկային ճարտարխօսութիւն, եթէ ոչ 'ի մայրիս հովանաւորս և վսեմականս, ուր միայնութիւն և լռութիւն և ստուերք լայնատարածք զխորհրդականն ազդեն 'ի հոգիս զներանձնութիւն և զերկիւղ սրբանուէր. յեզերս անդ ծովու ետ ընդ ետ զայրացելոյ և անդորրացելոյ, որոյ ալիք գոգցես խաղալիկք ամենազօր ձեռինն Աստուծոյ՝ զորս ըստ կամս խռովեցուցանէ և ցածուցանէ. 'ի կատարս անդ լերանց բարձանց՝ ուր անպարագիծ է աչաց տեսութիւն, և ընդ եզերս անեզրս թերեալ աշխարհիս, անդանօր մարդ՝ թագաւոր տիեզերաց՝ զչափ առնու իւրոյ պետութեանն, և հիացեալ իմն ընդ տեսիլ ընդարձակատարր սահմանաց՝ ձորոց և հովտաց, լերանց և դաշտաց, անդաստանաց և մարգաց՝ որ ընդ ոտիւք նորա ծաւալին, ալանան միտք նորա յԱրարչապետ անդր սքանչելեացս։ Դարձեալ միւսանգամ զնոյն հարցուած 'ի մէջ առից. ո՞ւր արդեօք զհրաշալիս բնութեանն նկատիցեմք՝ եթէ ոչ յերկինս անդ վերինս. յորժամ գիշեր խաղաղ և պայծառ զնովաւ անկանիցի, և անշշունջ լռութիւն զերկիր և զայերս ունիցի, և լուսին՝ քողաձիգ լուսովն՝ գոգցես ցօղեսցէ աշխարհիս զանդորրութիւն և զառուգութիւն. և իցէ՞ թէ ոք ընդ մտ ածիցէ 'ի ժամուն եթէ ոչ գոյ Աստուած. նա մանաւանդ հեշտ և քաղցր ազդեցութիւնք զհոգիսդ լնուցուն, և արտասուք սքանչանաց և գոհովանաց յաչացդ ծորես

Digitized by Google

ցին, և 'ի ծունր իջեալ գոչեսջիք. Որպէ՛ս զի հրաշազեղ են գործք քո, Արարիչ տիեզերաց. Աստուած սրտի իմոյ, որպէ՛ս զի քաղցր են ինձ հաւատք քո, և զիա՞րդ հնար իցէ ինձ անծանօթ լինել 'ի քէն, մինչ ամենայն ուրեք փառք և մեծվայելչութիւն զքեզ քարոզեն. Աստուած, որ եսդ Աստուած բարութեանց, զմեղս մանկութեան իմոյ մի՛ յիշեր, և ընկալ զորդիդ մոլորեալ որ 'ի գիրկդ հայրենի ապաստան անկանի. մեծ է զօրութիւն քոյ յընթացս աստեղաց, այլ մեծագոյն ես ցուցցես յուղղել զշաւիղ սրտի իմոյ, և 'ի հնազանդել զնա միշտ օրինաց քոյոյ ամենազօր և երկրպագելի տէրութեանդ։

ՏՐԷՅՍՈՒՆՈՒՍ. Պաշտ. Քրիստ. Հաւատոյ։

---

## ԹԷ ՓՈՓՈԽԱԿԱՆ Է ԱՄԵՆԱՅՆ ԲԱՑ ՅԱՍՏՈՒԾՈՅ

Ցուց ածէք միանգամ զյաղթանակս, զտիրապետութիւնս տեղեաց տեղեաց, զչքեղ դաշնադրութիւնս, զճոխութիւնս և զդէպս փառաւորս՝ որք կուռ զմիմեամբք եղևեալ առնէին յամս անդ առաջինս թագաւորութեանս այսորիկ։ Դեռ ևս մօտ առ ձեզ են իրքդ. և ոչ միայն հանդիսատեսք, այլ և բազմաց իսկ 'ի ձէնջ անցեալ է անվեհեր ընդ վիշտս վտանգաց, և հաղորդակից լեալ հասարակաց ցաւոց և փառաց։ Այո՛, դրոշմեցին նոքա յարձանագիրս Գաղղիոյ մինչև ցյետին թոռունս մեր. այլ սակայն վասն ձեր այս ամենայն իբրև զերազ իմն է վաղանցիկ, և կամ որպէս զփայլակն՝ որ էանց, որոյ և յիշատակ օր քան զօր անկանի 'ի մտաց ձերոց։ Ո՞չ ապաքէն սուղ է ճանապարհն զոր մնայ ձեզ կատարել. կարծիցե՞մք արդեօք եթէ ապագայքս քան զանցեալսն առաւել լինիցին հաստատուն։

Ամք երկարագոյնս թուին գոլ՝ ցորչափ հեռի կան,

այլ մինչ հասեալք ժամանեն՝ անդէն վաղվաղակի դառնան 'ի չիք, խուսափեալք 'ի մէնջ իբրև 'ի միում վայրկենի։

Հայեցարո՛ւք յաշխարհ, զիա՞րդ և կամ յո՞ր վիճակ տեսանէիք զնա յառաջին ամս անդ կենաց ձերոց և զիա՞րդ այժմ։ Արքունիք նոր յաջորդեալ ընդ առաջնոյն. նոր անձինք հանդիսացեալ կան 'ի թատեր աշխարհիս. մեծագոյնք յարարուածոց նորանոր գուսանօք յաջորդեալ. նորանոր անցք և դէպք, նոր հնարք, նոր կիրք, և դիւցազունք նորանորք յառաջինութիւնս անդ որպէս և 'ի մոլութիւնս, որք գովեստից, թշնամանաց և կամ հասարակացն կշտամբանաց ընդ լծով գտանին։ Համառօտ ասել, նոր իմն աշխարհ տեսանեմք անզգալաբար եկեալ 'ի լոյս, և առանց գիտելոյ ձեր՝ 'ի վերայ նշխարաց առաջնոյն յարուցեալ։

Ընդ ձեզ և իբրև զձեզ անցանէ ամենայն. երազութիւն իմն անհնարին ածեալ ձգէ զամենայն 'ի խորս յաւիտենականութեան. նախնիք մեր յերէկն հորդեցին առաջի մեր զուղին, զնոյն և մեք 'ի վաղիւն արասցուք առաջի այնոցիկ՝ որոց յաջորդիցեն մեզ։ Նորոգին դարք, և կերպարանափոխ լինի տեսարան աշխարհիս. աճեալ բազմանան թիւք մեռելոց և կենդանեաց և հանապազ զմիմեանս յաջորդեն։ Անկայուն է ամենայն ինչ և չիջանի. Աստուած միայն է որ անփոփոխ մնայ։ Ուղխք դարուց՝ որք ընդ քարշ ածեն զմարդիկ՝ առաջի աչաց նորա ընթանան. և տեսանէ նա զտկար մահկանացուս, որ յերագընթաց հեղեղաց ստորև վարեալք՝ յընթացս անդ թշնամանս և նախատինս նմա դնեն, և յայն մի վայրկեան զերջանկութիւն խորհեանց կամին ամփոփել. և յանցանել այնորիկ գահավէժ թաւալին 'ի ձեռս բարկութեան նորա և վրէժխնդրութեան։

ՄԱՍԻՅԼՆՈՆ. Քառասնորդք։

## ՍՔԱՆՉԵԼԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ

Եւ արդ առցուք 'ի քնին զսքանչելիսն Աստուծոյ որ միօրինակ փայլեն 'ի մեծամեծսն և 'ի մանունս յէից: Տեսանեմ զարեգակն՝ բիւրիցս բիւրուք մեծ քան զերկիր՝ շրջան առնել 'ի միջոց վայրի, յորոյ ընդարձակութեանն կէտ իմն է նա լուսաւոր, և ոչ աւելի ինչ: Տեսանեմ և զայլս յարփից՝ մեծագոյնս արդեօք քան զարեգակն, որք ընդ այլ սահմանս թաւալին հեռաւորագոյնս առ 'ի մէնջ: Իսկ և անդր ևս քան զսահմանս անհուն վայրացն նշմարեմ և այլ ևս աստեղս աղօտագոյնս, անթիւս 'ի բազմութենէ և անտեսս յաչաց. և երկիր յորում կամս՝ ընդ այսմ ամենայնի համեմատեալ ոչ այլ ինչ իցէ, բայց կէտ անբաժան: Եւ այս ամենայն այնպէս կարգեալ և յօրինեալ, զի անմարթ է 'ի բաց բառնալ 'ի նոցանէ զհիւղ ինչ դուզնաքեայ, և չխանգարել զհրաշալոզան զկերտուածն, որ և յոր 'ի շարժման կայ, և յայնպիսում շարժման՝ զի նովին գոգցես յաւերժանան և յեղմունք տիեզերաց և կատարելութիւնք նոցին: Ապա ուրեմն հարկ 'ի վերայ կայ զի վարիցէ զկերտուածս զայս ձեռն ամենազօր և անվրիպակ 'ի բազմադարեան ժամանակաց և այսր, և մատունք նորա խաղայցեն սովաւ, զի ըստ աստուածեղէն տառիցն զխօսս բերիցեմք:

Սակայն նոյն կերտուած ոչ նուազ ինչ ածէ հիացումն և 'ի մանունս 'ի մասանցն քան զոր 'ի մեծամեծսն: Քանզի և զմանրն զայն նկատեալ՝ տեսանեմ ես անհուն և անհաս, և հիանան միտք իմ: Տես ինձ, որպէս յանդամս փղին և վիշապ ձկան՝ նոյն և 'ի չնչին որդան զգեղապատշաճ յօրինուած անդամոց. և գլուխ և մարմին, և սրունս և ոտս յարմարեալս՝ մեծամեծացն յար և նման կենդանեաց: Եւ յիւրաքանչիւր իսկ մասունս յէից աստի կենդանեաց՝ են և մկանունք և ջիղք, և

երակք և նեարդք և արիւն. և յարեան անդ ոգիք և հիւթք. և 'ի հիւթս անդ շիթք բազմամասնեայք. և անսահման բաղադրութեան սահմանաւոր այնր էակի չիք երբեք կայ և դադար:

Ի քաղցածանօթ էջս առ հասարակ բազում ինչ նշմարեմք մանրացուցիւ անծանօթս առ 'ի մէնջ: Եւ 'ի նոսին իսկ 'ի մանրացուցիւ նշմարեալսն՝ որչափ ինչ իրք են՝ յորս և ոչ նա զօրէ ինչ տեսանել: Եթէ հնար էր եւս քան զեւս նրբատեսս գործել զկազմածսն որք սատար լինին տկարութեան և խոշորութեան տեսանողեացս մերոց, քանի՜ նորս և չքնաղս տեսանէաք մեք արդեօք: Այլ յոր ոչն զօրեն աչք՝ բեր զմիտս յառեսցուք. միտք մեր զմանրացուցից կալեալ զտեղի, յանդիման արասցեն մեզ 'ի հիւղէս իւրաքանչիւր բիւրաւոր աշխարհս նորանորս և աներևոյթս: Սակայն ոչ բաւեսցուք մեք նկատել և նովաւ անդադար 'ի շամանդաղս անդ զիւտս նորահրաշս. այլ 'ի պարտասել նորին և 'ի լքեալ կասել՝ կացցեն մնասցեն անտեսք յաչաց մերոց և բիւր զանչելիք 'ի փոքրագունին յանդամս որդան զածածի...:

Ո՞ այն ոք իցէ որ պարզել մարթասցի զփափկութիւն զգայութեանցն որովք ընտրէ մարդ զազգի ազգի ճաշակս և զբուրմունս իրաց: Եւ զիա՞րդ այնչափ բազում հնչմունք ձայնից ընդ ունկն իմ ազդեալ միանգամայն, և անշփոթք ներգործիցեն. և ո՞րպէս 'ի դադարել ձայնիցն և 'ի չքանալ՝ տպաւորեալ մնասցեն յիս նկարագիրք նոցին ճշգրիտ և կենդանի: Առ ի՞նչ ճարտարին՝ որ զմարմինս մեր յօրինեաց՝ այնքանեաւ խնամով ծածկոյթ իմն խոնաւ և վայրաբեր արկանել զաչօք մերովք և զականջս մեր ընդէ՞ր անփակս արարեալ: Քանզի աչք մեր խնուն առ 'ի ննջել, ասէ Կիկերոն. իսկ ականջաց հարկ է 'ի խնուլ անդ աչացն կալ 'ի բաց՝ որպէս զի եթէ յանկարծադէպ ինչ վտանգ ուստեք հասանիցէ, ազդ 'ի չուինդն ձայնից արարեալ՝ զարթուցանիցեն զմեզ:

Ո՞ իսկ 'ի վայրկեան ժամանակի քանդակէ յաչս իմ

զերկին զերկիր և զծով, զտարակայեալսն յինէն զրեթէ յանբաւս։ Զիա՞րդ զետեղ և որիշ կարգ ըստ կարգէ 'ի յանձուկ կազմածին զկայ առեալ անեղծ կերպարանք էիցս առ հասարակ կայցեն՝ յականէն արևու մինչև 'ի դուզնաքեայս իսկ 'ի շամանդաղս։ Քանի՛ ևս հրաշակերտ իցէ ուղղոյս մերոյ յօրինուած, յորում զանձեալ պահին դարք դարք զանչելի տեսարանաց բազմապատիկ իրաց, որք յօրէ ծննդենէ մերմէ ազդումն ինչ ազդեալ իցեն 'ի մեզ։ Զարմանամք ապաքէն ընդ մատենիցն գիտոս. զի 'ի նոսա աւանդին յիշատակք անթիւ պատահարաց, և մթերք իմաստից. այլ զի՞նչ համեմատութիւն իցէ բնաւ ընդ չքնաղագոյնն 'ի մատենից և ընդ ուղեղ առն իմաստնոյ. և քանիօ՞ն առաւել պատուական է և նորահրաշ քան որ 'ի մատեանսն յայնոսիկ՝ մթերքն որ 'ի սմա։ Անդ 'ի փոքու շտեմարանին գտանես դրոշմեալ մի ըստ միոջէ զամենայն կերպարանս կարևորս. եթէ կարդաս զնոսա, գան. եթէ 'ի բաց արձակես, խորասուզին յալս չգիտեմ յո՛ր 'ի ներքինս, և մեկնին առ 'ի տալ այլոց տեղի։.. Ո՛ր ձեռն ճարտար գիտաց թագուցանել 'ի կարծեցեալ տձև զանգուածին զայնչափ նկարագիրսն չքնաղս և գեղարուեստս։

ՖԵՆԵԼՈՆ. *Ապացոյցք գոյութեան Աստուծոյ։*

---

## ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ

Վերին տեսչութիւնն ծածուկ հրամանօքն վարէ և ուղղէ զամենայն՝ որ 'ի կանգնումն և 'ի կործանումն պետութեանցն սպասաւորեն։

Աստուած ինքնին յերկինս 'ի վեր ունի զառաջնորդութիւն ամենայն թագաւորութեանց. ամենեցուն սիրտ

Digitized by Google

'ի ձեռին նորա կայ. է զի սանձակոծէ զյօժարութիւնս նոցա, և է զի թոյլ տայ, և գղորդէ զամենայն ազգ մարդկան։ Եթէ աշխարհակալս կամիցի յարուցանել, զահ և զերկիւղ գնացուցանէ առաջի նոցա, և աննկուն արութեամբ վառէ և կազմէ զնոսա և զզօրս նոցա։ Օրէնսդիրս կամիցի հանել. առաքէ 'ի նոսա զհոգի իմաստութեան իւրոյ և գիտութեան, և 'ի ձեռն նոցա զմտալուտ չարեացն զկուտակութիւն արգելու 'ի թագաւորութեանց, և հասարակաց խաղաղութեան հիմունս արկանէ։ Գիտէ նա, զի թերակատար է իմաստութիւն մարդկան. լուսաւոր առնէ զնոսա, որք և որահայեացս յարգարէ, և դարձեալ անդրէն թողու 'ի տգիտութեան իւրեանց, և խաւարին և գթեն և յամօթ լինին՝ 'ի խորագիտութեան իւրեանց ըմբռնեալք և հանճարոյն իւրեանց թակարդեալք։

Այսպէս ըստ անստերիւր շաւղաց արդարութեան իւրոյ առնէ զահաւոր զդատաստանսն. նա է որ 'ի հեռուստ ուղղէ և պատրաստէ զամենայն. հարկանէ զօրութեամբ, և 'ի բացեայ հարուածքն ազդին։

Եթէ վախճան խօսիցի և կործանումն 'ի վերայ թագաւորութեան, թիւր են և զաղփաղփուն հնարագիտութիւնք խորհրդականաց։ Եգիպտոս պանծացեալն 'ի հանճար՝ արբեցութեամբ դեդևէ, խուճապի և դանդաչէ. զի արկ Տէր հոգի յիմարութեան 'ի խորհուրդս նորա. չգիտէ զոր գործէն, և հուպ ընդ հուպ կորնչի։

Բայց մի՛ խաբեսցին մարդիկ. յորժամ հաճեսցի՝ դարձեալ կանգնէ զգլորեալն. և որ զկուրութեամբ այլոց այսպն առնէր, յետ թանձրամած խաւար ըմբռնի՝ նովին յաղթողութեամբքն իւրովք շլացեալ յաճախ։

Այսպէս թագաւորէ Աստուած 'ի վերայ ամենայն ազգաց։ Մի՛ ևս ապա լուիցին 'ի մէնջ բախտի կամ դիպուածոյ անուանք, կամ թէ ոչ՝ զտգիտութիւն մեր նոքօք առակեսցուք։ Քանզի որ ինչ թերատես մտաց մարդկան պատահարք թուին՝ գործ կատարեալ է այն

Digitized by Google

խորհրդոց Բարձրելոյն, յոր 'ի յաւիտենից սահմանեալ կան իրաց իւրաքանչիւր կատարումն և պատճառք միով տեսութեամբ։ Այսպէս 'ի կէտ նպատակի ձգի ամենայն. և առ անհասութեան մտաց մերոց՝ դէպք թուին մեզ և վրիպակք մարդկեղէնք։

Վասն այնորիկ իրաւամբք ասէ Առաքեալն՝ եթէ Աստուած է երանելի, և միայն հզօր, թագաւոր թագաւորաց և տէր տերանց։ Արդարև երանելի, զի յանխռով խաղաղութեան՝ անայլայլակ ամենևին զամենեցուն զփոփոխումն տեսանէ. փոփոխէ զամենայն անյեղլի խորհրդով. տայ և բառնայ զիշխանութիւնս, և յայլմէ յայլ փոխէ, ազգէ յազգ և ժողովուրդ 'ի ժողովրդենէ. զի գիտասցեն եթէ աւանդ տուաւ նոցա այն, և իւր միայնոյ է տիրապէս իշխանութիւն։

Վասն այնորիկ անձամբ զչափ առնուն թագաւորք՝ եթէ է նոցա իշխան գերագոյն։ Շատ կամ սակաւ գործեն քան զոր խորհին, և կեղակարծ են ցանգ ելք խորհրդոց նոցա։ Չեն տեարք նոքա հանգամանաց իրացն որովք յանցեալ ժամանակսն գործք գործեցան. նա և զայն ոչ գիտեն եթէ զինչ լինիցի առ յապա. ևս առաւել չեն բաւական բռնութեամբ զայն պահանջել։ Նա միայն ունի զամենայն 'ի ձեռին, և զգոյն և զչգոյն յանուանէ կոչէ, և ոչ ընդ ժամանակաւ է. և 'ի նմանէ հաստատեցան ամենայն ժամանակք, և կանխէ ունի զառաջս ամենայն խորհրդոց։

Ո՞չ ապաքէն անգիտանայր Աղեքսանդր՝ եթէ վասն սպարապետաց իւրոց ընդ արիւն և ընդ ապաժոյժ գայ, և երկրակալութեամբն կործանումն նիւթէ տան իւրոյ։ Իբրև 'ի բոց ազատութեան սիրոյ վառէր Բրուտոս ընդ Հռովմայեցիս, չերազէր անգամ՝ եթէ զապերասան ըմբոստութեանն զսերմն ժանտ սերմանիցէ յոգիսն, որով դժնդակագոյն ևս քան առ Տարկուինեօք արմատս արձակեսցէ բռնակալութիւն՝ զոր խլել խորհէր կարճնովին։ Յորժամ կայսերք շնորհուկս առնէին զօրականին,

Digitized by Google

ոչ այնու մտօք առնէին՝ զի տիրեսցեն յաղթողաց իւրեանց և թագաւորութեանն։

Համառօտ ասացից, բազում այն է զի տեսչութիւն մարդկան և յանկամս իսկ 'ի լրումն ածէ զխորհուրդս օտարոտիս։ Բարձրեալն միայն հնազանդ առնէ ընդ իւրև զամենայն։ Ցորժամ'ի մասնաւոր պատճառսն միայն հայիցիմք, նորագործ մեզ իրք թուին. սակայն ըստ ուղղութեան վճարի ամենայն։

ԳՈՍԻՒԷ. Խօսք 'ի վէպս ազգաց։

---

## ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ի կանխել քո յաղօթս, ո՞չ սիրտ քո թեթևանայ 'ի քեզ, և անդորրանայ անձն քո։

Զդառնութիւն վշտաց մեղմեն աղօթք, և սրբեն զուրախութիւն. միում քաղցրամոք և անպատում զօրութիւն ընծայեն, և միւսումն երկնային բուրմունս անուշից։

Զի՞նչ գործ է քո 'ի վերայ երկրի. և յորմէ հաստեցարդ՝ չուանիցե՞ս ինչ պէտս խնդրելոյ։

Ուղևոր ես՝ ելեալ 'ի խնդիր հայրենեաց. մի՛ զգլուխ քո շրջիցես յերկիր. ամբարձ զաչս քո, զի ծանիցես զուղին։

Հայրենիք քո յերկինս է. և մինչ վերականեալ յերկինս հայիցես, չզգա՞ս վրդով ինչ երբեք 'ի սրտի քում, և ո՞չ բուռն իմն տենչ վառիցի 'ի քեզ. և մի՞թէ համր ինչ լիցէ այդ ըղձումն։

Են որ ասեն. Զի՞ պիտոյ են աղօթք. անպատեհ է գերագունին Աստուծոյ քան զմերն բնութիւն՝ ցածուցեալ խոնարհել 'ի պաղատանս արարածոցս գուզնաքէից։

Այլ ո՞ արար զգուզնաքեայ արարածս. ո՞ ետ նոցա

Digitized by Google

զսիրտ և զհանճար և զբարբառ շրթանց. ո՞չ ապաքէն Աստուած։

Եւ որ այդչափ բարեբարեացն նոցա, ի՞բր ապա ընդ վայր հարցէ զնոսա, և 'ի բաց մերժիցէ յերեսաց։

Արդարև ասեմ ձեզ, զի եթէ ոք խորհիցի 'ի սրտի իւրում թէ արհամարհեալ անարգէ Աստուած զգործս ձեռաց իւրոց, հայհոյիչ է նա Աստուծոյ։

Են և այլք որ ասեն. Զի՞ պիտոյ են աղօթք. ո՞չ ապաքէն գիտէ Աստուած զպէտս մեր առաւել քան զոր խնդրեմքն և իմանամք։

Այո՛, արդարև գիտէ Աստուած զպէտս ձեր, և յայս սակս իսկ կամի զի խնդրիցէք 'ի նմանէ. քանզի սկիզբն կարևորաց՝ Աստուած է, և աղաչելն զԱստուած՝ սկիզբն է ստանալոյ զնա։

Զպէտս որդւոյն քաջ իսկ գիտէ հայրն. և միթէ չի՞ցէ արժան վասն այսր բարբառ ինչ հայցուածոց արձակել որդւոյն 'ի շրթանց, և նշան իմն յայտարար շնորհակալեաց առ հայրն իւր ցուցանել։

Յորժամ ցաւք զանասունս ըմբռնեն, յորժամ յերկիւղէ ուստեք զարհուրեսցին, և կամ յորժամ քաղցնուն, ո՞չ մռնչեն լալագին։ Այդ գոչիւն ձայնից նոցա ահա առ Աստուած աղօթք են. և Աստուած լսէ նոցա։ Յարարածոց անտի մարդո՞յ եւեթ ուրեմն բարբառ ո՞չ մտցէ յականջս Բարձրելոյն։

Դիմեն երբեք երբեք հողմունք ընդ անդաստանս ապականիչք գալարեաց, որք իսկ և իսկ թառամեալ խոնարհին յերկիր. այլ իջեալ ցօղոյ 'ի վերայ՝ կազդուրէ զնոսա, և զընդարմացեալ գլուխս նոցա դարձեալ 'ի վեր ամբառնայ։

Հողմք խորշակահարք անդադար զօդւով մարդկան շնչեալ՝ ցամաքեցուցանեն զնա. այլ ցօղ աղօթից զօդւոյն շիջուցանէ զտապ։

ՏՐ ԼԱ ՄՐՆԷ

## ԶՕՐՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ոչ խարիմք, քրիստոնեայք, եթէ զամենայն ինչ աղօթից ընծայեցուք. որ զայն թելադիրն լինի Աստուած, զլանալ ինչ այնմ չկարէ։ « Ոչ թէ, ասէ Դաւիթ, 'ի բազում զօրս իւր ապրեսցի թագաւոր, և ոչ սկայ 'ի բազում զօրութեան իւրում »։ Եւ ոչ հանճարեղ խորհրդոց գրեալ ինչ են յաջողութիւնք։ « Բազում խորհուրդք են, ասէ իմաստունն, 'ի սրտի առն ». Ծանեաւք զամբոխումն և զվարան մարդկեղէն խորհրդոց. բայց, 'ի վերայ կածէ « Խորհուրդ Աստուծոյ յաւիտեան մնայ ». և 'ի քնին մտանել մարդկան, կամք իւր միայն կատարին։ Ահաւորն ամենակալ որ յորժամ կամի, քաղէ զոգիս իշխանաց, թողու ևս զայն 'ի նոսա ըստ իւրում կամացն 'ի մեծ ևս ամօթ նոցին, և յըմբռնել զնոսա 'ի խորագիտութեան իւրեանց։ Զի ոչ է մարդոյ իմաստութիւն, ոչ արութիւն և ոչ խորհուրդ առ Աստուած։

Մակաբեանքն քաջ էին. և սակայն գրեալ է, թէ առաւել քան զինուքն՝ աղօթիւք խնդրուածոց տային ճակատս, վստահացեալք յօրինակն Մովսիսի. զի ձեռք առ Աստուած ամբարձեալք՝ քան զհարկանելեացն առաւել փլուզանեն զռազմն։ Իբրև ամենայն ինչ տապալէր առ ոտս Լուդուիկեայ, և հասեալ համարեցաք զաւուրս աքանչելեաց տեսանել, յորս պարիսպք անկանէին 'ի ձայն փողոց, ժողովուրդք ամենայն առ դշխոյս դարձուցանէին զաչսն, և 'ի տաճարէ իւրմէ հատեալ անկեալ համարէին զփայլատակումն սատակիչս քաղաքաց քաղաքայ։

Զի եթէ աղօթից շնորհէ Աստուած զանցաւոր յաջողուածս, քանի՛ն առաւել պարգևեսցէ նոցա զճշմարիտ բարիսն, զառաքինութիւնս ասեմ։ Այս ընաւոր արգասիք են ոգւոյ՝ աղօթիւք միացելոյ ընդ Աստուած. աղօթք որ ընդունին մեզ զայնս՝ ուսուցանեն և գործել

զնոյնս, ոչ միայն իբրև զկարևոր ինչ, այլ և իբրև առեալս 'ի Հօրէն լուսոյ՝ ուստի իջանեն առ մեզ ամենայն պարգևք կատարեալք. և անդ իսկ է լրումն կատարելութեան, զի խոնարհութեանն է հիմն։

ՊՈՍԻՒԷ. Ճառ դամբան. Մ. Թերեզայ։

---

## ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՔ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ԿՐՕՆԻՍ

Այլ տեսէք այժմ զի ընդ հակառակն չիք ոք ցականեալ և Թշուառ՝ որ անմասն եղցէ 'ի կարեկից ձեռնտուութենէ քրիստոսականս եկեղեցւոյ։ Վկայեն մեզ վէպք եթէ քանի՜ վառեալ էր նա հոգւով գթածութեան անդստին 'ի սկզբանէ, և զիա՛րդ փայլէր նովաւ և 'ի հալածանս անդ, և զիա՛րդ յազգաց յազգս մշտնջենաւորեալ, մինչև 'ի սպառ ծաւալեցաւ մարդասիրութիւն նորա կառուցմամբ ապաւէն տեղեաց պատսպարելոց ընդ ամենայն աշխարհ, առ 'ի ձեռնտու օգնականութիւն աղքատաց և չուառացելոց։ Յաւելից ասել և 'ի փառս կանանցն սեռի, որ այնչափ գործակիցք են և անձնանուէրք 'ի դարմանս վշտագնելոյ մարդկութեանս, զի առաջին հիմնադիր ապաւինի աղքատաց, կամ թէ ըստ անուանակոչութեանն աղքատանոցաց, որ 'ի տարեգիրս կրօնից յիշատակի, տիկին ումն է Հռովմայեցի՝ անուն Փաբիոլա 'ի չորրորդի դարուն։

Եւ զի՞նչ այլ բարիս մարդկութեան առնել էր կրօնիս, զոր չիցէ նա արարեալ արդեամբ. և 'ի մեր իսկ ժամանակս քանի՜ սքանչելիք ոչ հրաշագործեցան 'ի նմանէ։ Նա ինքն ժողովեաց զբազմութիւն մանկտւոյն լքելոց. և զոր մարքն լքանէին խժաբար, ինքն գթալից զնոսա յանձանձեաց. Նա ինքն հաւաքեաց և զմանկտին աղքատաց և ձրի ուսոյց նոցա զսկզբունս մարդկային

գիտութեանց և զանբիծ քաղաքավարութիւն, առանց մնոտի պաճուճանաց. Նա ինքն է որ ազդէ զմարդասիրութիւն և զարիութիւն 'ի սիրտս Դատերացն սիրոյ, որք իբրև զհրեշտակս մխիթարութեան՝ պատրաստ կան սրբանալ խոյանալ ուր ուրեք ձայն հեկեկանաց թշուառութեան գտոսա կոչեսցէ: Ո՞ք կանգնեաց զհիւրընկալ օթևանսն 'ի յաւէժական սառնապատս լերանց, յորում բազում անգամ զնչխարեալ կենացն զօր' պատըսպարեաց ուղևորն, եթէ ոչ քրիստոնէութիւն: Ո՞ք ազդեաց 'ի հոգիս արանց մեծաց զխորհուրդ նաւարկելոյ 'ի հրատապ և 'ի վայրենի ափունս՝ 'ի փրկանաւորել զեղբարս իւրեանց զգերեալս, եթէ ոչ քրիստոնէութիւն: Դարձեալ և յաւուրս մեր զի՞նչ հոգի իցէ անտեսանելի միաբանութեանցն՝ որք յայց ելանեն օթևանաց թշուառացելոց, իջանեն 'ի բանտս, ուսուցանեն զտգէտըս, և թուին դիւրապատրաստ և առ ձեռն տնել ամենայն ցաւոց մխիթարութիւնս և ամենայն կարօտութեանց դարմանս պիտոյից. ո՞չ ապաքէն քրիստոնէութիւն: Նմա միայնոյ են փառք անզուգականք, բարեզարդելոյ, լուսաւորելոյ և հրահանգելոյ վայրենեաց նորոյ աշխարհին, և կանգնելոյ ընկերահաճոյ ազատութեանց՝ որք զքրիստոնէական կրօնս դաւանին, և այնչափ առաւել գերազանցեն քան զհասարակապետութիւն Սպարտայ՝ անմեղութեամբ բարուց, իմաստութեամբ օրինաց և յերանաւէտ կենցաղս տնականս և քաղաքականս, որչափ աւետարանին վարդապետութիւն վերագոյն է քան զհեթանոսութիւն: Արդ խոստովան լիցուք միամտութեամբ սրտի եթէ քրիստոնէութիւն զամենայն ինչ 'ի բարօրութիւն քաղաքաժողով ընկերութեան, տնական կենցաղին և 'ի յանձանձանս շուառացելոցն տնօրինեաց. և եթէ չյաւելու և առ 'ի բարերարել, մեզ և ոչ նմա մեղս դնել պարտ է:

Ահաւասիկ այս է, տեարք, կրօնք քրիստոնէութեան. չ որպէս ախորժեն յանդիման առնել զնա թշնամիքն

նենգաւորք 'ի նկարս՝ որոց երփներանգք ստեղութիւն է և կարծիք նանրախորհուրդք, այլ որպէս նկարեցաւ նա 'ի ձեռաց աստուածային իւրումն հիմնադրի, ճառագայթարձակ փայլմամբն՝ որով զնա պայծառացոյց, առաքինութեամբն՝ որով զնա գեղազարդեաց, և յաղթանակօքն՝ զորս տարաւ 'ի վերայ ախտից և մոլորութեանց։ Սա այս կրօն է զոր կապտել 'ի մէնջ կամեցան ամբարիշտք. զայն՝ որ այնպէս միացեալն է ընդ մերոյ արքայութեանս, զի 'ի կործանել միոյն՝ և զմիւսն զհետ իւր առեալ ձգէ։ Այլ ահա եհաս ժամ զի անքակ զօդեսցին դարձեալ ըստ առաջնոյ ուխտին սեղանն և աթոռ։ Դարձցուք, տեարք, դարձցուք միւսանգամ վասն մերոյ օգտիս և վասն մերոյ բարօրութեան 'ի կրօնն սըրբութեան, որ ընդ երկար ժամանակս եկաց անծանօթ և արհամարհեալ. առ այն՝ որ միայն կարէ պատել զվէրս մեր և վախճան առնել թշուառութեանս և հաստատել զխաղաղութիւն 'ի պետութեանս. և համառօտ ասել, առ այն՝ որ միայն կարողն է վերանորոգել զարքայութիւն մեր 'ի ծերութեան նորա, որպէս և ինքն եւեթ կարաց պատրաստել և յօրինել 'ի մանկութեան նորա, և որ միայն կարողն է և ես բարգաւաճել զնա նորանոր փառօք և յաջողութեամբ։

ՏՐԷՑՍԻՆՈՒՍ. Պաշտպ. Քրիստ. Հաւատոյ։

---

## ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ ԵՒ ՍԷՐ

Ո՜վ մարդ, ցածո՛ զանձն քո. խոնարհեաց էջ յերկիր, յանցաւոր մահացու. արկ զճակատ քո 'ի հող և 'ի փոշի. և հեծութիւնք քո անմխիթարք լցուսցեն զսահման երկրի, ուր աթոռն է թշուառութեան, և զոր ետ քեզ Աստուած վրէժխնդիրն՝ յաքսոր և 'ի գերեզման,..

զոր օրինակ անկելոյ Թագաւորի դուզնաքեայ իմն սահմանի վիճակ: Այլ աղէ զի՞նչ ասեմ, նա մանաւանդ ուրախ լեր, և ընդ նորոյն Սիոնի գոչեա թէ Երանի՜ յանցուածոյն որ արժանացաւ զայդպիսի ունել փրկիչ մեծ: Կրօնք շնորհեն առ քեզ բազմապատիկ առաւել քան զոր կորուսեալ էր քո. Նա ինքն վերամբառնայ զքեզ յայն ծագ կատարելութեան, որ գերագոյն քան զհրեշտակս ընծայեցուցանէ զանձն քո, որքան առաքինութեանն յաղթանակք վեհագոյնք իցեն քան զանմեղութիւնն անդորրաւէտ և առանց մրցանաց: Զօրացեալ աստուածային շնորհօք՝ զշարասէր յօժարութիւնս ամենայն նկուն արարեալ ընկճեսցես: Մի՛ ոք այսուհետև զապականեալ բնութենէ մարդոյն բողոքիցէ առ իս. չկարեմ ես, նա և չտեսանեմ իսկ այլ բնութիւն, բայց որ վերականգնեալն է և զարդարեալ: Հաւատք բանան ինձ զերկինս առաջի, զտգիտութիւնս իմ լուսաւորեն, պնդեն զվարանս մտաց իմոց, և 'ի բաց վանեալ զոր զնովաւն մածանէր մուայլ նսեմաստուեր՝ հոսանս լուսոյ գնացուցանեն: Յոյսն զկնի գնայ հետոց նորա, կենաց զմայլումն անսպառ և մտերիմ ընկեր Սիրոյ: Հաւատալ, յուսալ, սիրել, այս է աւանիկ կրօնն ամենևին: Եւ ոչ մի զոհ ծանր գոյցէ, յորժամ աներկբայ առաջի կայ յոյս. պարտք ամենայն քաղցր են սիրողին: «Սիրեա, և զոր ինչ միանգամ հաճոյ թուեսցի քեզ՝ կատարեա», ոմն յեկեղեցւոյ վարդապետացն քարոզէր. զի չեն այլ ինչ կամք սիրողին՝ բայց 'ի կամաց սիրեցելոյն: Ո՜վ օրէնք սիրոյ, օրէնք վսեմ և սքանչելի, որ այն ինչ իցէ զոր զլասցի քեզ ճշմարիտն քրիստոնեայ: Ըստ օրինակի վարդապետին անցանեն նոքա յաշխարհի 'ի բարիս գործել: Գթութիւն իմն անսահման, որպէս և անսահման է որ շնչէ զայն 'ի նոսա Աստուած, կենագործէ զամենայն գործս նոցա, լցուցանէ զմիտս նոցա բովանդակ, և զզգացմունս նոցա արդասաւորէ: Մի թէ անձանց ինչ կեան դոքա, եթէ վասն այլոց արդեօք. տես

զիմրդ 'ի Թիկունս սրանան ամենայն ցաւոց մարդկու-
Թեան. տես զնոսա զի հանգոյն սամարացւոյն արկանեն
զիւղն պատուական 'ի վերայ վիրաց եղբարց իւրեանց։
Ոչ մի ինչ յքուցանէ զնոսա, և չիք ինչ որ զնոսա պար-
տասիցէ. որչափ և Թշուառական իցես, այնքան առա-
ւել սիրելի նոցին լինիցիս։ Գանձք նոցա 'ի ժառանգու-
Թիւն են տնանկաց. կեանք նոցա, ճիգն, արգահատանք,
սրտասուք, հասարակաց են ամենեցուն որոց կրիցեն։
Աղքատ իցես դու, հիւանդ, նուաղեալ 'ի զօրութենէ.
աղէ, դիւրեսցեն քեզ նոքա. վէրս ինչ ծածուկս զգայցէ
սիրտ քո, զոր ցանկալի իցէ քեզ 'ի դառն գթութենէ
անձնասէր մարդասիրութեանն ծածկել, ընթա, և ան-
պատում իմն մխիթարութեամբ լցուսցեն սոքա զսիրտ
քո, որ ամոքեսցէ զաղէտս քո և 'ի մոռացօնս դարձու-
ցէ քեզ զնոսա։ Վասն նոցա չիք ով յաշխարհի ստոր,
չիք ով օտար. զմարդիկ ևեթ խնդրեն նոքա։ Եթէ յան-
ցեար ինչ երբեք, աներկիւղ յառաջ մատիր. սուրբ են
'ի Թշնամանիչ կշտամբանաց շրԹունք նոցա. արգահա-
տեսցեն քեզ, սրտասուակցորդ լիցին քեզ, տկարս իբրև
զքեզ դաւանեսցեն զանձինս իւրեանց, և քաղցրաժպիտ
յուսոյն շրԹամբք ցուցցեն քեզ զերկիւղն հասարակաց։
Հարք առաքինիք, որդիք սիրասունք, փեսայք զգաստք,
մտերիմ բարեկամք, և հպատակք են հաւատարիմք. և
որպիսի՜ զօրութիւն է նոցա. սակայն և այնպէս ոչ միայն
ոչ հպարտանան 'ի վերայ անձանց, այլ և հեծեն ան-
դադար ընդ անարժանութիւն իւրեանց. զանձինս իբրև
ծառայս անպիտանս առ ոչ ինչ համարին, և յառատա-
բաշխ ողորմութենէ անտի անսպառ բարութեանն զփո-
խարինացն ընդունել ակն ունին տրիտուր զխոստա-
ցեալն առ նոսա։ Բաժանեալք յերկրաւոր բարեաց՝ եր-
կնաւոր հայրենեացն են ցանկացողք, յոր յառաջեալ կա-
րապետեաց նոցա Փրկիչն։ Պատիւք, հաճոյք, ճոխու-
Թիւնք, նա զի և ամենայն իրք աշխարհի ոչինչ են ա-
ռաջի նոցա. ոչ այլ ինչ, սիրեն նոքա, և ոչ այլում իմիք

փափաքեն, բայց վշտացն խաչի։ Արտասուք՝ ցօղ խնդութեան են նոցա, գձձութիւնք՝ փառք, տանջանք՝ մահիճ հանգստեան։ Ած ապտակ յաջմ ծնօտս նոցա, և ահա անդէն դարձուցեն քեզ զմիւսն. բարձ 'ի նոցանէ զբաճկոն, և զշապիկս շնորհեսցեն քեզ մտադիւր։ Վտարանդի հալածեա զնոսա, արկ զնոսա 'ի բանտի, բարձ զկեանս նոցա կտտամահ քերանօք, նոքա առ մեղսաքաւիչն Աստուած աղերս արկցեն վասն քո. և քաղցր նոցին բարբառք՝ օրհնութեան լիցին ձայնք։

Այլ աղէ մարդի՛կ իցեն ուքա, զորոց են բանքս. ոչ, աշակերտք Քրիստոսի։ Որ մարդկային իմն գիտս համարիցի զկրօնս, հա՛պա եկեսցէ նա և ասիցէ. Մարթ էր և ինձ զայն հնարել վարդապետութիւն, փոխել զբնութիւն մարդոյն, և ստեղծանել զՀաւատս, զՅոյս, և զՍէր։

ՏԸ ԼԱ ՄԸՆԷ

---

## ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Իսկ յի՞նչ այլ քաղցր և ախորժ պէտս ունիցիք, եղբարք իմ, վարել զաւագութիւնդ ձեր և զճոխութիւն։ Ի մեծարա՞նս յանձն կորզել. բայց հպարտութիւնն իսկ ինքնին տաղտկանայ։ Ի հրամայե՞լ այլոց և օրէնս տալ. այլ այդ՝ հոգք մեծութեան են, ոչ հեշտութիւնք։ Ի տեսանե՞լ զձեօք խռնեալ զանբաւ ամբոխութիւն ծառայիցդ և ստրկաց. այլ տեսողք են դոքա՝ նեղիչք և տագնապիչք, քան հանդէս շքեղութեան։ Ի բնակե՞լ յապարանս հոյակապս. այլ չինէք ձեզ, ասէ Յոբ, անապատս՝ յորս գան վաղվաղակի յարկակից ընդ ձեզ լինել հոգք և մառախլապատ տխրութիւնք։ Առ 'ի ժողովե՞լ անդր զամենայն զուարճութիւն. լցցեն թերևս զընդարձակ շինուածսդ, բայց դատարկ թողուցուն միշտ զսիրտս ձեր։ Ի գտանե՞լ զօր ամենայն 'ի ճոխութեան անդ ձե-

րում անսպառ աղբերս մտահաճոյ ցնորիցդ. պէսպէս աղբերականքդ ցամաքեն փութով. ամենայն ինչ ընդ փոյթ սպառի. հարկ է անդրէն յետս ընդ կրուկ դառնալ, անդադար սկսանել վերստին՝ զոր անհամէ տաղտկութիւն, այլ կարեւոր պիտոյ առնէ անգործութիւն։ Արկէք 'ի վար՝ որչափ և կամիք՝ զինչս ձեր և զիշխանութիւն յամենայն պէտս զոր ամբարտաւանութիւն և հաճոյք մարթել զօրեսցեն. յագեսջիք, այլ ոչ շատասջիք. ցուցցեն ձեզ զուրախութիւն, այլ ոչ թողուցուն 'ի սիրտըս ձեր։

Ի կիր արկէք զայնս 'ի պէտս երջանկութեան այլոց, 'ի մեղմացուցանել և սփոփել զտառապելոցն կեանս՝ զորս ծանրութիւն թշուառութեան ստիպեալ է թերևս բիւր անգամ փափագել իբրև զՅոբ. զի տիւն որ ետես զծնունդ նոցա՝ լինէր նոցա յաւիտենական գիշեր գերեզմանի. յայնժամ 'ի միտ առջիք զհեշտութիւն մեծութեանդ, ճաշակեսջիք զճշմարիտ քաղցրութիւն վիճակիդ. այս եւեթ շնորհ է՝ որ առնէ զայն նախանձելի։ Այն ամենայն որ զձեաքդ պերճանք, յաղագս այլոց է. իսկ ձեր է միայն այս հեշտութիւն։ Այլն ամենայն ունի զիւր դառնութիւն, իսկ այս եւեթ հեշտութիւն քաղցրացուցանէ զամենայն։ Ուրախութիւն բարի առնելոյ՝ գեր 'ի վերոյ քաղցր է և սրտալիր քան զընդունելոյն։ Դարձ անդրէն 'ի նոյն տարաբէք. հեշտութիւն է՝ որ ոչ երբեք հնանայ. որչափ ճաշակիցէ ոք, այնչափ արժանագոյն լինի ճաշակացն. զոյ սովորել 'ի բարեկենդանութիւն՝ որով և անզգայել, բայց է՛ միշտ անպակաս կրել յանձին՝ զուրախութիւն պատճառ լինելոյ բարեկեցութեան այլոց. ամենայն բարերարութիւն ընդ իւր ածէ 'ի սիրտս մեր զքաղցր և զթաքուն տրիտուրս զայս. սովորութիւն՝ որ կարծրացուցանէ զսիրտ առ ամենայն հեշտութիւն, աստանօր օր քան զօր առաւել ազդեւոր զնա յարդարէ։

ՄԱՍԻԼԼՈՆ. փոքրիկ Քառասնորդք։

## ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈԼՈՒԹԻՒՆ

Ցանկրաւի զիւրմէ բնութենէն քրթմնջէ մարդ, իբրու զի ապիկար և սակաւաժամանակեայ՝ 'ի բաղդէն առաւել քան յառաքինութենէն վարեցի։ Քանզի ընդ հակառակն քաջ կշռեալ՝ ոչինչ մեծ և գերագոյն քան զայնս գտանիցէ. և զի փոյթ ճարտարութեան պակասէ նմա, քան թէ զօրութիւն և ժամանակ։ Այլ իշխան և առաջնորդ կենաց մահկանացուաց՝ միտքն է, որ եթէ ընդ շաւիղս առաքինութեան փառաց լիցի 'ի խնդիր, մեծապէս ճոխացեալ հզօր և չքեղ գտանի, և ոչ բախտին կարօտ՝ որ զամբծութիւն վարուց, զյաջողակութիւն և զայլ բարեմասնութիւնս՝ ոչ շնորհել ումեք կարէ, և ոչ 'ի բաց առնուլ։ Իսկ եթէ 'ի թիւր ցանկութեանց ըմբռնեալ 'ի դատարկութիւն և 'ի հեշտութիւնս մարմնոյ զառածանիցի, զվնասակար հեշտալեօք զամ մի դեգերեալ, կորուսանէ առ յուլութեան զզօրութիւն, զժամանակ և զհանճար, և տկար զբնութիւնն ամբաստանէ՝ զիւր մեղսն զնովաւ շփեալ։ Զի եթէ այնչափ փոյթ էր մարդկան զբարեաց գործոց, որչափ զհետ անպատշաճիցն և զանօգտակարաց և յաճախ իսկ զվնասակարաց դիմեն, ոչ արդեօք բախտն զնոսա՝ այլ նոքա զբախտն վարէին, և յայն հասեալ մեծութիւն՝ զի ոչ ևս մահկանացուք՝ այլ յաւերժականք լինէին փառօք։

Եւ զի ազգ մարդոյ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ է կազմեալ, վասն այսորիկ և բովանդակ գործք մեր և ջանք՝ կէսք զմարմնոյ բնութեան, և կէսք զհոգւոյ զհետ երթան։ Արդ գեղեցկութիւն դիմաց, գանձուց մեծութիւն, սոքօք հանդերձ և մարմնոյ կորով և այլ ամենայն ինչ սոցին սակի՝ վաղանցուկ են և դիւրասահ. իսկ հանճարոյ վեհ են գործք և զօրէն հոգւոյ անմահք։ Եւ զի 'ի կարճոյ ասացից, մարմնոյ և բարեաց բաղդին որպիսի

ակիզբն՝ նոյնպիսի է և վախճան. ամենայն որ ծնանին՝ մեռանին, և որ աճէն՝ հնանայ: Իսկ հոգին անեղծ է և յաւերժական, ուղղիչ մարդկան ազգի, որ նուաճեալ վարէ զամենայն, և ինքն ոչ յումեքէ նուաճի: Որով զարմանալի ես է նոցայն անմտութիւն, որք անձնատուր 'ի մարմնոյ հաճոյս՝ շուայտութեամբ և վատութեամբ գնան, և զհանճար՝ քան զոր չիք ինչ պատուականագոյն, չիք ինչ գերագոյն 'ի բնութեան մահացուաց, անմշակ և անխնամ թողուն վատութեամբ 'ի թմբիր ապականութեան, ուր բազմապատիկ և զանազան են մտաց արուեստք, որովք մարթէրն նոցա պայծառանալ:

Իսկ 'ի գործոց հանճարոյ ընդ պիտանեգոյնս համարի աւանդել գրով զյիշատակս անցից: ... Քանզի լուայ բազում անգամ թէ Կ. Մաքսիմոս, Պ. Սկիպիոն և այլք ականաւորք 'ի մերոյս քաղաքացեայ սովոր էին ասել, թէ 'ի հայել նոցա 'ի կենդանագիրս նախնեաց՝ վառեալ արծարծանէին միտք նոցա 'ի սէր առաքինութեան. իբր ոչ եթէ 'ի նիւթն մոմեղէն և 'ի կերպարան պատկերին էր այն զօրութիւն, այլ 'ի յիշատակ գործոց նոցին վառէր բոցն այն 'ի սիրտ արանցն աւագաց, և ոչ հանդարտէր մինչև առաքինութեան իւրեանց հաւասարեալ համբաւոյ փառաց նոցա:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուզուրք:

---

## ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Գիտակցութիւնն ներքին՝ երկրորդ ընծայութիւն է անմահութեան հոգւոյ: Կայ 'ի սիրտս ամենեցուն ատեան ինչ հարցափորձի, ուր այր իւրաքանչիւր անձամբ զանձն եկակոչ արարեալ՝ ակն կալեալ միայ վճռոյ վե-

հազունի դատաւորին ։ Եթէ ախտիցն ցանկութիւնք բնութեանն կազմուածոյ արգասիք իցեն,՝ ուստի՞ իցէ ապա տագնապ տարակուսանացն որ յանձուկ արկանիցէ զաւուրս յօրացելոցն յանիրաւութենէ։ Ընդէ՞ր այդչափ ահաւոր իցէ խղճին տագնապ, մինչև նախապատիւ ընտրել մարդոյ՝ յաղքատութեան և յազգի ազգի տառապանս տուայտել, քան յանիրաւութենէ յաճախել իւր ստացուածս։ Զի՞ է զի բողոք արկանէ արիւն՝ և վէմ ձայն արձակէ. յափշտակեալ պատառեալ վազեր զօրս իւր՝ և ննջէ յանդորրու. մարդ 'ի սպանութիւն եկեալ, հատանի քուն յաչացն։ Ցամայի վայրս և յանապատս թափառի, սակայն և 'ի միայնութենէ իսկ սարսէ. զգերեզմանօք և զդամբանօք յածի, այլ 'ի գերեզմանաց իսկ երկիւղ է նմա. զաչս կկոցեալս զվայրօք յածէ, և 'ի տաճարի խրախութեան չիշխէ յօրմունս անդր յառել, երկուցեալ մի՛ գուցէ նշմարիցէ 'ի նմա զմահահրաւէր գիրսն։ Ցաւալութիւն տանջանացն զարթնուն բովանդակ իսկ զգայութիւնքն. 'ի մթան աղջամղջի երևութանան նմա խօլականք սպառնալիցք, և ժահահոտ ճապաղեաց ընդ ռնգունսն հարկանի. զդառնութիւն թիւնից ճաշակէ և 'ի կերակուրս անդ՝ զօրս ինքնին խահագործէ. մինչդեռ խաղաղական լռութիւն պատէ զաշխարհ համօրէն՝ զնորբալուր ականջս նորա խռովեն աղմուկք ողաղակի։ Ի գիրկընդխառն լինել ընդ սիրելւոյ բարեկամին, կարծէ ընդ հանդերձիւք նորա զդաշոյնն երկաթի ծածկեալ։

ՇԱԴՈԲՐԻԱՆ. Ոգի Քրիստոնէութեան։

Digitized by Google

## ԽԻՂՃ ՄՏԱՑ

Առեան իմն է գիտակցութիւն՝ ուր ոչ վայրապար հարկանի բողոք առաքինութեան, և ձայն Նորա զօրաւոր՝ թէ և առ վայր մի յաղմկայոյզ կրիցն ծածկիցի՝ որ զնա կամիցին հեղձուցանել, բայց սակս ժտութեանն՝ վաղ կամ անագան զարդարութեան զհատուցումն ընկալցի։ Եւ ոչ մտացածին ինչ ցնորս արժան է կարծել զգիտակցութիւն՝ 'ի տեսանել անդ զապականեալս ոմանս 'ի մարդկանէ, որ 'ի սպառ հեղձուցեալ իցէ զնոյն յանձինս իւրեանց. որպէս ագահութիւն՝ որ անլսողս առնէ զոմանս կողկողագին հեծութեան աղետից մարդկութեան. այլ պարտ է ուսանել զեղկելիսն՝ որ որչափ սակաւք են, նոյնչափ և ահագինք. զի մարդ ամբարիշտ անագորոյն՝ օտար է 'ի բնութենէս, որպէս դիւակն՝ որ ոչ 'ի մարդկան է համարի։ Քանի՜ սփոփական է միանգամայն և ահագին ներքինս այս դատաւոր՝ որ հաւանի ընդ գործս մեր և կամ բողոք հարկանէ, արդարացուցանէ և կամ դատապարտէ։ Սփոփանք՝ արդարոյն, զի զվարձս ճգանցն տայ ճաշակել 'ի քաղցր և 'ի սուրբ հըրճուանս ուրախութեան. ահագին՝ չարագործին, զի թողու զնա 'ի դառնութեան խղճի մտացն։ Բայց եթէ ամենայն ինչ անխտիր իցէ, և ոչ ինչ 'ի բնէ չար և կամ բարի, զիա՞րդ իցէ զի չարագործն անձամբ անձին կայ և դատախազ և դահիճ. զիա՞րդ սոյնպէս սաստկատանջ արդարութեամբ զանձն դատապարտէ. ընդէ՞ր տագնապէն զնա խորհուրդք վրէժխնդիրն Աստուծոյ, և մեղադնութեամբ ընդ անձին ոգորի և թշուառացուցանէ զինքըն. խայթ խղճի զեղեռն ինչ գոլ ցուցանէ, և եղեռն՝ հարկս իմն և պարտս՝ զոր արժան էր կատարել։

Այլ տեսէք, տեարք, թէ զի՜նչ հանգամանք իցեն խայթից խղճի, և զինչ դժնդակն այն զգայութիւն. ոչ

ցաւ ինչ է որ 'ի խօթութեանց ազդիցի 'ի մեզ, և ոչ տրտմութիւն՝ զոր ծնանին 'ի մեզ աղէտք թշուառութեան, այլ անձնադատ իմն յանդիմանութիւն. զոր առնէ մարդ անձին իւրում, իմացեալ զի հնազանդել պարտ էր նմա օրինաց, և նա ազատութեամբն ոտնհար եղև նոցին։ Ոչ յերկիւղէ պարսաւանաց կամ պատուհասի ծնանի 'ի նմա այս զգացումն, այլ 'ի խոստովանութենէ՝ զոր պարտաւորի առնել մեղապարտն անձին իւրում, եթէ կամաւ եկն 'ի զանցառութիւն պարտուցն. զի ահա յառնելն քո գործ ինչ արդարութեան և կամ գթութեան, ոչ բնաւ ընդ գործեցեալդ զղջասցիս, թէ և անշնորհ ապերախտութիւն հասցէ քեզ ընդ այնր ընդունել, և զատելութիւնս և զզարովանս աեթ ձգել յանձին. նա թէ և 'ի դժխապարտութիւն ևս համարեսցի քեզ առաքինութիւնդ, կամակար զանձն տալ յօժարեսցիս. անխիղճ 'ի մեզաց գիտելով զանձնդ. հեծեծեսցես ընդ անիրաւութիւն մարդկան և ընդ աղէտս ճակատագրիդ, բայց խայթ խղճի հեռի իցէ 'ի սրտէդ։ Իսկ ընդ հակառակն եթէ իւիք գտայց մեղապարտ, թէ և եղեռն յանցանաց 'ի կատար փառաց զիս ժամանեցուսցէ, և երկիր համօրէն ծափաձայն զգովութիւն իմ հնչեսցէ, բայց առ նմին խայթ խղճի զսիրտ իմ կեղեքեսցէ. այսչափ գեր 'ի վերոյ է գիտակցութիւն քան զկարծիս և քան զդաշնակցութիւնս մարդկան։ Այաքէն գիտակցութիւն և խայթ խղճի՝ ըստ լուսաւորութեան մտաց և ըստ ճշգրիտ կամ աղօտ ծանօթութեան պարտուց մերոց՝ բուռն է և կամ նուազեալ և առաւել քան զառաւել զարգացեալ. բայց մոլորութիւն մեծ իցէ ոչ բնածին զգայութիւն համարել զնա 'ի մարդիկ՝ ազատ յազգեցութեանց բաժնից երկրի, և դաստիարակութեան և ծննդեան. զի ոչ գաղտնութիւն իրաց, ոչ ստուերք մթութեան, ոչ օրինաց լռութիւն և ոչ զօրութիւն իշխանութեան՝ ոչ կարեն զվրիժահան խայթս խղճի եղեռնագործին ցածուցանել. և սաստ իշխանու-

թեան թէ և բազում անգամ անպատուհաս զմեղապարտն կացոյց, բայց ոչ բնաւ զյոյս գիտակցութեանն հանդարտեցոյց: Տիբեր և Ներոն ծանեան զխայթս նորին, և մերթ ընդ մերթ տուրէին երկիւղիւ՝ ահաբեկեալք 'ի յիշատակ եղեռանցն գործելոց: Մարթ է գիտակցութեանն զքնով անկանել, բայց մեռանել ոչ եւս. նա որչափ ընդ երկար 'ի քուն կացցէ, այնչափ եւս սաստասցի և դժնդակ խայթոցքն եղիցին. իբրև զառիւծ զարթուցեալ՝ որ 'ի քուն հանգստեանն նորանոր զօրութիւնս զգենու 'ի պատառել զյանցաւորութիւնն: Եւ արդարև, մտացածին ինչ խօլական էր ներքին այս անձին յանդիմանութիւն, որով ըստգտանէ մարդ զանձն իւր, զեր և կոչեմք խիղճ մտաց, եթէ մարթ էր 'ի բաց տարագրել զնախասկիզբն խտիր զանազանութեան բարւոյ և չարի, և եթէ հնար էր զամենայն ինչ ինքնահաճոյս համարել և զաշնակցութիւնս. եթէ այլ ուստեք չէր ինչ երկիւղ 'ի մարդկանէ, և պարտ էր զմիտսն ընդ ժոյր վրդովելոյ անզօրբացուցանել:

ՖՐԷՑՍԻՆՍԻՍ. Պաշտպ. Քրիստ. Հաւատոյ:

---

## ՅԵՏԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Ահագին էին բանքս, այլ ոչ վայրապար ասացեալ. յաճախ լսեմք, և յանհոգս կամք: Զի՞նչ քան զայս ահաւոր կայցէ որոց փոյթ 'ի մտի ունին ոգւոցն փրկութեան. սակայն բազումք և զգան իսկ ոչ. սակաւք գործեն ահիւ զանձանց փրկութիւն. այլք ցծաղու զան, և կէսք՝ ընդ բազումսն կեցեալ՝ 'ի մահուն յուսան որոշել 'ի նոցանէ. ամենեքին ակն ունին շնորհս գտանել, ամենեքին պարգևաց հանդիպել:

Digitized by Google

Իմ չեն կամք աստանօր խօսել զայլոց 'ի մարդկանէ. համարիմ թէ դուք միայն իցէք 'ի վերայ երկրի. և ահա ծոր այն խորհուրդ պաշարեալ ունի զիս, և ահիւ պակուցանէ զանձն իմ։ Համարիմ թէ յետին ժամ իցէ ձեր, և կատարած աշխարհի. և ահա պատառին երկինք 'ի վերուստ, իջանէ Քրիստոս փառօք 'ի տաճար այսր. ամենեքին նմա ակն ունիմք, ամենեքին իբրև պարտաւորք սրտաթունդք մնամք լսել զվճիռ շնորհացն կամ զդատակնիք անվախճան մահուն։

Արդ ես հարցանեմ առ ձեզ, և հարցանեմ ահիւ և դողութեամբ, ոչ խտիր ինչ արկանելով ընդ իս և ընդ ձեզ, և յայն կիրս ոգւոյ գտանելով՝ յոր ցանկամ լինել և ձեզ։ Հարցանեմ ուրեմն զձեզ. եթէ արդարև իջանէր այժմ Քրիստոս 'ի տաճար այսր, գայր յոյս ժողով դատել զմեզ և ընտրել ահաւոր ընտրութեամբ զոչխս յայծեաց, արդեօք ամենեքեան յաջմէ՞ն դասէաք. կէ՞սք արդեօք. արդեօք տասն միայն գտանէ՞ր արդարս, զոր երբեմն ոչ եգիտ 'ի հինգ քաղաքսն։ Այլ ես չգիտեմ. չգիտիցէք և դուք։ Դու, Տէր, դու միայն ճանաչես զքոյսդ։

Բայց թէպէտ և զայն չգիտիցեմք թէ ո՞յք նորայքն իցեն, այլ զայս ինչ քաջ գիտեմք՝ զի մեղաւորք չեն նորա։ Արդ որպիսի՞ ոմանք իցեն որ ժողովեալ իցեն աստանօր. բարձ և աւագութիւն առ ոչ ինչ համարին. մերկք և կողոպուտք կացջիք առաջի Քրիստոսի։ Ո՞յք ոմանք իցեն ապա. բազումք՝ մեղաւորք՝ որք ոչ կամին ապաշխարել, և բազմագոյնք որք կամին՝ այլ յապաղեն զդարձ իւրեանց. այլք ապաշխարեն՝ զի միւսանգամ անկանիցին, և առաւելագոյնք՝ որք համարին թէ չիցեն նոցա պէտք ապաշխարութեան։ Ահաւասիկ ամենեքին սոքա ամբոխ կորուսելոց։ Ի բաց բարձէք զայսոսիկ չորեսին ազգս մեղաւորաց 'ի ժողովոյ աստի, քանզի և 'ի մեծի աւուրն 'ի բաց հալածեսցին։ Արդ յառաջ մատիք, ո՞վ արդարք... և ո՞ւր իցէք։ Մնացորդք Իսրայելի՝ անցէք յաջակողմն. ցորեանք Քրիստոսի՝ զատարուք 'ի յար-

դէն, որ պատրաստեալ է 'ի ճարակ հրոյն... Ո՛վ Տէր, և ո՞ւր իցեն ընտրեալք քո. ո՛ւր իցէ բաժին քո։

ՄԱՍԻԼԼՈՆ. Քառասնորդք։

---

## ՆԵՐԿԱՅՆ ԵՒ ԱՊԱՌՆԻՆ

Այսպէս հանգոյն ծաղկան, որ փթթեալ այգուն և ընդ երեկս թարշամեալ՝ լինի կոխան, անցանեն մարդիկ. սահին ազգք իբր ալիք սրընթաց գետոյ. և ոչ ինչ զօրէ նահանջել զժամանակ, որ առեալ ձգէ ընդ իւր զամենայն ինչ անշարժ յերևման։ Դու իսկ, որդեակ իմ, դու իսկ որ այժմդ վայելես 'ի տիս առոյգ և բերկրապատար մանկութեան, յիշեա զի հասակդ այդ գեղածաղիկ ընդ փթթելն և գօսասցի. գտցիս յանկարծ այլափոխեալ. շնորհք գեղածիծաղք, զուարճութիւնք բերկրալիք՝ որ արդ զհետ քո գան, կորով, առողջութիւն և խնծիղք անցցեն որպէս երազք բերկրալիք՝ և թողցեն ևեթ տխուր յիշատակ. հասցէ ծերութիւն անզօր և անընդունակ բերկրանաց՝ խորշս քեզ 'ի յայտս արկանել, կորացուցանել զթիկունս քո, կթոտել զանդամս, ցամաքեցուցանել 'ի սրտի քում զաղբերակն խնդութեան, դառնացուցանել քեզ զկեանս, արկանել 'ի քեզ զահ հանդերձելոցն, և անզգայ զքեզ առնել ամենայնի բաց 'ի յուսոյ։

Հեռի 'ի քէն կարծես զժամանակդ. այլ աւա՜ղ, խաբիս դու, որդեակ իմ. զայ հասանէ նա վաղվաղակի, և որ այնպէս արագն հասանէ, չէ հեռի 'ի քէն. այլ հեռի 'ի քէն է վայրկեանդ՝ որ անցանէ, ոչնչացեալ այժմ իսկ մինչ խօսիմքս, և չիք նմա դարձ։ Մի՛ ապա, որդեակ իմ, վստահասցիս յոր կանս. այլ 'ի հանդերձեալս ակնկառոյց՝ պինդ կաց 'ի խիստ և 'ի դժուարուստ ճանա-

պարհի 'առաքինութեան, և անբիծ վարուք և սիրով ար-դարութեան 'պատրաստեսցիս քեզ տեղի յերանաւէտ օթևանս խաղաղութեան:

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք:

---

## ԳԵՐԵԶՄԱՆՔ

Շիրիմ՝ արձան յիշատակի է կանգնեալ յեզերս սահմանաց կրկին աշխարհաց, որ յանդիման առնէ մեզ նախ՝ զվախճան ընդունայն վշտակրութեանց կենցաղոյս, և զպատկեր մշտնջենաւոր հանգստեան. ապա զարթուցանէ 'ի միտս մեր խառն 'ի խուռն իմն յիշատակ երանական անմահութեան, որոյ հաւաստիք առաւելուն ըստ չափոյ առաքինութեան այնորիկ՝ զորոյ զյիշատակն յանդիման առնէ մեզ, և յայտմ իսկ հաստատեալ կան ամենայն մեծարանք մեր: Եւ արդարև թէպէտ չիցէ ինչ բնաւ խտիր ընդ աճիւն Սոկրատայ և ընդ Ներոնի, սակայն ոչ ոք է որ զկայսերն հռովմայեցւոյ կամիցի ունել յանտառին իւրում, թէ և ամփոփեալ 'ի սափոր արծաթի. և ոչ ոք է որ զՍոկրատայն ոչ գիցէ 'ի պատուականագոյն տեղւոջ բնակութեան իւրոյ, թէպէտ և 'ի սափոր խեցի իցէ ամփոփեալ:

Ահա 'ի պատճառս այսր ընդաբոյս բերման առ առաքինութիւն, շիրիմք երևելի մարդկանն ազդեն 'ի մեզ սրտառուչ իմն պատկառանս: Նոյն ազդումն ներգործէ 'ի մեզ զմորմոք՝ 'ի տեսանել անդ զտապանս որ զսիրելիս մեր ամփոփեցին: Եւ ահա այսր աղագաւ 'ի տեսիլ դոյզն հողակուտի որ ծածկէ զաճիւն մանկան սիրելւոյ, 'ի զութ խանդաղատիմք՝ յիշատակաւ անմեղութեան նորին. և դարձեալ սորին վասն գորովեալ փղձկիմք 'ի տեսիլ գերեզմանին, ուր հանգչի նորահարսն, սէր և

ակնկալութիւն ընտանեացն խորհուրդ առաքինութեանցն։ Նա 'ի մեծագոյն ընծայեցուցանէր զայնպիսի չքնաղս՝ ոչ կենացն ինչ պէտս են, ոչ պղնձեայս և ոչ ոսկի զբօսա-նաց. այլ որչափ անպաճոյճք իցեն՝ այնչափ խորհրդոյն ներգործեն զթափծութիւն։ Այդպաղարդոյնք ևս են ան-չափ սիրողութեանցն քան ճոխութեան, հնութեանն քան նորութեան, Թչուառութեանն յայտարար հան-դամանք քան պատուաւոր անուանք, առաքինու-թեանցն քան զօրութեան նշանակք։

Ի բացօթեայ և յանշէջ մայրս մանկանց խորհրդոյն է ազդեցութիւն նոցին, բաղում այն է զի զերեզման մի անպաճոյճ յորդաբոյն ասպ հեղուլ սպասաւս քան զպարծանաց զաղաղան 'ի մայր ծիկեղեցին. անդ ցուն տանու մեծամ իմն կերպարանս, և բարձրացեալ ընդ հին-ասուրց զեղձս զերեզմանաց, ձգի ընդ լայնն խորև զբա-ցարձակ դաշտս և դկերին շարժմանկի, և զաշնաւո-րեալ զուգաձայնի ամենայն երևութից բնութեան, ծագմանն առաւօտուն, մնչելոյ հովուց, մրտց արևուն, և խաւարչուտ գիշերոյ։ Վասնորոյ յողնատաժանք և մխծակ նուաստութեան ոչ կարեն չխլուցանել զազդե-ցութիւն նորին 'ի սիրտս հեծեծելոց։

ՊԷՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ ՊԻԷՐ

---

## ՆՐԲԱՆԿՈՒԹԻՒՆ ԱԹԵՆԱՑՒՈՑ ՅԵՂԻՍԵԱՆ ԴԱՇՏՍ

Յառաջ մատեաւ Տելեմաք առ նոսա, և էին նոքա բազմեալք 'ի խնկահոտ ծաղկաստանի 'ի յարադալար և 'ի մշտափթիթ դալարեաց. փոփկանի բազմահոյլ առա-նակիս ստորանէր զզեղեցիկ վայրսն. և զով հեշտալի գործէր անդանօր. և բազմերամք հաւուց հնչեցուցա-նէին զմայրիս 'ի քաղցրանուագ երգս իւրեանց. Դաշտք

գարնայնոյ՝ միահաւասար փթթէին անդ առ ոտս, և ազգ ազգ մրգոց աշնայնոյ կախէին զկողերց ծառոց։ Ոչ երբեք անդանօր հրատապ շնկանն այրէր բոց, և ոչ սառնուսի խշխէր անդ շնչել, կամ զձմերայնոյ ածել անդր զբուք։ Ոչ մարտ արիւնախանձ, ոչ մախանք չարաթոյն ժանեօք խածատիչք՝ որք իժս գալարունս կրեն 'ի ծոցի և զբաղիօք, ոչ սէր մոլեխնախանձ, ոչ կասկածանք, ոչ երկիւղ և ոչ տարապարտ իղձք յերանաւէտ անդր 'ի կայս խաղաղութեան մատչել կարէին։ Անդ աներևոյն ծագէր տիւ. գիշերոյ քօղ նսեմ բնաւին էր անդ անծանօթ. շուրջ պատեալք 'ի լոյս զուարթ և անաղօտ մարմինք արդարոց, ճառագայթազգեստք էին զարդարեալ։

Չիք այնմ լուսոյ նմանութիւն ընդ աղօտաճաճանչ լուսոյս՝ որ ճառագայթէ յաչս մահկանացուացս հիքաց ոչ ինչ ընդհատ 'ի խաւարէ. զի է այն փառք երկնահրաշ քան թէ լոյս. մտանէ թափանցանց անօսր նրբութեամբ ընդ մարմին թանձրախիտ քան թէ նշոյլք արեգական ընդ բիւրեղ ականակիտ. չէ ակնախտիղ, այլ մանաւանդ կազդուրէ զաչս, ազդէ 'ի հոգի զուարթութիւն անճառ. նովաւ սնանին երանեալքն այնորիկ. ծագէ 'ի նոցունց և ցոլանայ 'ի նոսին. ընդմտանէ 'ի նոսա, և տարրանայ 'ի հոգւոջ որպէս կերակուր 'ի մարմնի։ Տեսանեն զայն, զգան և շնչեն, և է այն 'ի նոսա աղբիւր անսպառ խաղաղութեան և խնդութեան. խորասուզեալ կան 'ի բերկրանս որպէս կայտառք 'ի ծովու. ոչ ևս ցանկան իմիք, ոչ ինչ ունին և անկարօտք են ամենևին. զի անապակ այնր լուսոյ ճաշակ՝ լնու ըղքաղց սրտի նոցա. յագին կշտապինդ ամենայն իղձք նոցա. և լիութեամբն այնուիկ զեր 'ի վերոյ արշաւեն ամենայնի, որոց 'ի խնդիր է յերկրի սիրտ մարդկան թափուր և սովեալ։ Պարառութիւն ամենայն զուարճութեանց զնոքօք՝ ոչ ինչ թուի յաչս նոցա. զի լիուլի երանութեամբն՝ որ 'ի ներքս 'ի նոսա է՝ անզգայք առ-գնին ամենայնի որ ինչ արտաքոյ նոցին են հեշտալիք։

զգիցն բերելով զնմանութիւն, որք ներկատարիւ եւ ամբա-
ռնեալ յազգեալք՝ ոչ կարօտին թանձր համադամից ազ-
նուագոյն իսկ կոչնոց երկրաւորաց։ Ի խաղաղաւէտ-
վայրաց անտի 'ի բաց խուսափեն ամենայն չարիք. մահ,
հիւանդութիւն, աղքատութիւն, ցաւ, զիղջ, երկիւղ, եւ
յորս իսկ՝ որ բազում այն է զի ոչ ինչ նուազ քան զեր-
կիւղ է տառապեցուցիչ. զժտութիւն, դժկամակութիւն
եւ զայրոյթ չգտանեն երբեք անդր մուտս։

Լերինք բարձունք թրակից, որք զձիւնախաղաղ
զսառնապատ գագաթունսն յաւերժական ծրարեն
յամայս, տապալեցին յանդնդայլիր 'ի հիմանցն 'ի մի-
ջակէտ երկրի կայկայելոց, եւ մի երբեք տիրտ արդարոցն
այնոցիկ սասանեացի։ Գորովին եւեթ ընդ աղէտս որոց
կեանն տակաւին յերկրի. այլ գորով նոցա քաղցր է եւ
անխռով; եւ ոչ այլայլէ զանյեղլի նոցայն երանութիւն։
Մանկութիւն անծերանալի, երջանկութիւն անեզրա-
կան, եւ փառք աստուածահրաշ նկարին 'ի դէմս նոցա.
բայց ցնծութիւն նոցա ոչ է խօլական եւ անպատեհ, այլ
զուարթ, ազնուական եւ մեծավայելուչ, այլ վեհ իմն
ճաշակ ճշմարտութեան եւ առաքինութեան՝ որ զմայլե-
ցուցանէ զնոսին։ Զնոյն ցնծութիւն սրտի կրեն յաւերժ
անընդհատ, զոր կրէ մայր 'ի տեսանել զորդի իւր սիրե-
լի ընդ մեռեալս համարեալ. բայց ցնծութիւնն այն մայ-
րենի վաղանցիկ՝ ոչ անցանէ 'ի նոցանէ, եւ ոչ վայրիկ
մի թուլանայ, այլ նորոգի միշտ 'ի նոսին. զմայլին ար-
բեցութեամբն, առանց ամբոխման մտաց եւ ապշու-
թեան։

Զրուցաւորեն ընդ միմեանս զորոց տեսանենն եւ յորս
վայելեն. առ ոտն կոխեն զմեղկ զգացմունս եւ զսնոտի մե-
ծութիւնս կենցաղոյս՝ զոր աւաղեն. յիշեն խնդութեամբ
զտխուր՝ այլ զարագավախճան աւուրս՝ յորս պարտ էր
նոցա մաքառել ընդ անձին եւ ընդ ամբոխ արանց ժան-
տից 'ի հանդէս առաքինութեան, եւ սքանչանան ընդ
օգնականութիւն դիցն՝ որոց կալեալ զձեռանէ ածին

զնոսա ընդ թագաւորէ մակեդոնացւոց յաղագս իմաստութեան։ Ուղղ-կին աստուածեղէն անձառելի հուր անապակ 'ի սիրտս նոցա ներգործեցաւ. 'ի միտ առնուլ և զգալ զերջանկութիւն իւրեանց, առանց վախճանի կատարածանաց։ Նուագեն օրհնութիւնս զկնի 'ի միասին. մի բարբառ է ամենեցուն, մի խորհուրդ, մի սիրտ, և մի երջանկութիւն ծովացեալ յամենեսին յոգեխառնեալս 'ի մի։

Ցաստուածահրաշ յայնմ հիացման անցանեն զարք երազանք քան զժամս առ մեզ. և բիւրք բիւրուց դարուց սահեալ՝ ոչ ինչ նուազեն զերանութիւն նոցա միշտ նոր և յար անթերի։ Թագաւորեն առ հասարակ, ոչ յաթոռս դիւրակործանս 'ի մարդկանէ, այլ յանձինս իւրեանց անկեղակիան իշխանութեամբ. զի ոչ ևս հարկ է նոցա մուրացածոյ իշխանութեամբ հէք և անարգ ռամկին զօր ահարկու. ոչ ևս կրեն զթագ կապտելի՝ որոյ շողին ծածկէ այնքան արհաւիրս և հոգս դառինս, այլ դիք ինքնին կապեն նոցա 'ի գլուխ թագ անկապուտ։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

---

## ՄԱՀ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

Եւ եմուտ 'ի Բաբելոն մեծաշուք փառօք որպիսի չէր երևեալ երբէք, և զքէն վրէժուն Եղլադայ խնդրեալ. և զամենայն աշխարհն Պարսից 'ի սուղ ժամանակի ընդ ձեռամբ նուաճեալ, ապա 'ի հաստատութիւն նորոյ պետութեանն, կամ մանաւանդ 'ի յագուրդ փառասիրութեան իւրոյ անուանի լինել առաւել քան զԴիոնիսոս, խաղաց գնաց 'ի Հնդիկս, և անդր ևս քան զյաղթօղն Հոչակաւոր ընդարձակեաց զիշխանութիւն իւր. Բայց որ ընդ անապատս ոգորէր, ընդ գետս և ընդ լերինս, և ոչ կարէր երբէք յընթանալոյ, հարկեցաւ լռել զօրակա

նին, որ վաստակեալ խնդրէր արձակուրդ. և արձանագրեալ քաջութեանցն զպատկերն Արտաշրայ Թողեալ՝ ընդ այլ ճանապարհ՝ դարձոյց զզօրս իւր, Նուաճեալ զծանապարհսյն զամենայն քաղաքս. և նին եմուտ վերստին 'ի Բաբելոն ոչ որպէս աշխարհակալ ոք, այլ աստուածակերպ ահաւոր պաշտելի փառօք։

Բայց թագաւորութիւն նորա մեծազօր ընդ համառօտ կենաց նորին սահմանեցաւ։ Երեսուն և երից ամաց՝ մինչդեռ երկնէր խորհուրդս մեծամեծս՝ որպիսի չէր ուրուք զմտաւ ածեալ, և հաստատութեամբ ակն ունէր բարեպատեհ ելից, վախճանեցաւ զկեանս իւր՝ մինչև հաստատագոյնս հրաման տուեալ վասն թագաւորութեանն. և եթող զեղբայր իւր զանզօր և զտկար և մանկունս տղայս՝ որ անբաւական էին ծանու բեռինն։ Բայց դառնագոյն ևս աղէտք տան իւրոյ և պետութեան այն էին, զի զզօրավարսն ուսեալս առ նմա 'ի պատերազմ և 'ի սէր փառաց՝ զհետ իւր թողոյր։ Յառաջատես եղև որոց յետ մահուն գործելոց էին. և առ չզայրացուցանելոյ զնոսա, և առ ահին դարձեալ զի մի անլոյս զնոսա արասցէ, ոչ ժտեաց ցուցանել զոք յաջորդ իշխանութեանն կամ խնամակալ որդւոցն. այլ գուշակեաց միայն զի 'ի հապաղիս պատերազմաց յուղարկաւորեսցեն զնա բարեկամքն իւր. և 'ի ծաղկեալ հասակին վախճանեցաւ զկեանս իւր, յոյժ թախծեալ և տագնապեալ վասն անցիցն որ անցանելոց էին յետ իւրոյ մահուն։ Որպէս և եղև իսկ, և տեսաք զպառակտել տէրութեան նորա, և զահագին կործանումն տանն. զի 'ի Մակեդոնիա 'ի հայրենի թագաւորութիւնն՝ զոր ընդ բազում դարս կալան նախնիք նորա, որպէս յաշխարհ անտէրունչ և յանծանօթ յամենայն կողմանց արշաւեցին թշնամիք. և ընդ բազում ժամանակս աւար լեալ բռնազօունին՝ ապա էանց յազգ այլ։ Այսպէս աշխարհակալն մեծ, համբաւեալ և վեհագոյն ամենեցուն՝ վերջին թագաւոր եկաց յազգի իւրում։ Եթէ խաղաղու-

թեամբ թագաւորէր 'ի Մակեդոնիա, մեծութեամբ թագաւորութեանն չհրապուրէին սպարապետք նորա. և այնպէս աղաղէր նմա ժառանգեցուցանել որդւոցն զթագաւորութիւն հարցն իւրոց։ Այլ առաւելութեամբ իշխանութեան եղև պատճառք իւրոցն կորստեան. և այս եղեն արգասիք փառաց բազմայաղթ աշխարհակալութեանցն։

ԳՈՍԻՒԷ. Խօսք 'ի վէպս ազգաց։

---

## ՍԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Հայրենասիրին անկ է զամենայն ջան 'ի մէջ առնուլ, զի հայրենիք իւր անհարկու իցեն արտաքոյ և խաղաղ 'ի ներքս։ Յաղթութիւնք և դաշինք, յօգուտ աշխարհին կնքեալք, պատկառելի զնա կացուցանեն առաջի ազգաց. պահպանութիւն օրինաց և ուղղութիւն բարուց՝ սոքա միայն հաստատեն 'ի նմա զխաղաղութիւն։ Վասն որոյ 'ի կացուցանել ընդդէմ թշնամեաց աշխարհին զօրավարս և պատգամաւորս քաջս, պարտ է ընդդէմ ապերասան համարձակութեան և ախտից՝ որ նկրտին 'ի կործանել զամենայն, կացուցանել զօրէնս և զառաքինութիւնս որ կանգնեն զամենայն։ Եւ աստի քանի՛ բազում պարտք կարևորք և անհրաժեշտք յաճախեն կարգաց իւրաքանչիւր քաղաքայնոց, և քաղաքայնոց իւրաքանչիւր առանձինն։

Արդ լուարուք ինձ դուք՝ զորոց բանքս են, և որոց վասն ցանկալի է ինձ բարբառ ազդողական առ 'ի բացատրել ըստ վայելուչն արժանեաց զճշմարտութիւնս՝ որոց եմս խելամուտ. դուք՝ յորս կամէի բորբոքել զհուր պատշաճից սիրոյ, որով բարեբաստագոյնք լինէիք։ Յիշեցէք զի իրաւունք անպարագրելիք և սրբազանք են հայ-

Digitized by Google

րենեացդ 'ի վերայ յաջողութեանց ձերոց եւ առաքինու-թեանց եւ ըղձից եւ գործոց առ հասարակ. Եւ զի յոր կարգ կենաց եւ իցէք, զինուորք նորա էք պահակերք, եւ պարտ է ձեզ հսկել միշտ նմա, եւ գիտել յօգնութիւն 'ի չչուկ. ինչ վտանգի։ Ոչ է ձեզ բաւական առ 'ի գոլ վայելուչ 'ի վեհ միճակիդ ձերում՝ կատարել եւեթ զյանձնեալ ձեզ 'ի նմանէ գործս, պաշտպանել օրինաց նորա, խնդրել զօգուտ նորա, եւ հեղուլ իսկ զարիւն ձեր 'ի բանակի կամ 'ի քաղաքամիջի վասն նորա։ Իբ է թշնամի վնասակարագոյն նմա քան զնիզակակցութիւն ազգաց եւ քան զհերձուած քաղաքայնոց, պատերազմն յամր եւ աներեւոյթ՝ այլ սաստիկ եւ յարատեւ, զոր մղեն հոյլք ախտից ընդդէմ ուղղութեան բարուց. պատե-րազմ այնչափ առաւել գժնդակագոյն, որչափ զի չէք հնար հայրենեացդ խափանելոյ զայն իւրովի կամ ժուժ-կալելոյ նմին։ Թոյլ տուք ինձ, զի ըստ օրինակին Սո-կրատայ տաց նմա բարբառել՝ որ ինչ անկ է նմա ասել առ որդիս իւր։

«Ցինէն ընկալայք դուք զկեանս, եւ իմաստուն սահ-մանադրութիւնք հրահանգեցին աստ զմիտս ձեր։ Օրէնք իմ հսկեն յապահովութիւն տրուպ քաղաքացւոյն, եւ ա-մենեքին դուք երդուայք յայտնի կամ լռելեայն՝ նուի-րել զկեանս ձեր ինձ 'ի ծառայութիւն։ Այսոքիկ են ի-րաւունք իմ. իսկ դուք որո՞վ իբաւամբք խախտէք զուղ-ղութիւն բարուց, որ հաստատագոյն քան զօրէնս հի-մունք են պետութեան իմոյ։ Զգիտիցէ՞ք զի եղծումն բա-րուց թոյնք են աշխարհաւեր, եւ միում եւեթ օրինակի ցոփութեան մարթ է ապականել զազգ մի ողջոյն, եւ լի-նել նմա վնասակարագոյն քան զպարտութիւն 'ի պա-տերազմի։ Եթէ արիութեան պէտք էին առ 'ի խիզա-խել ընդդէմ պատուհասից հասարակաց, մեծարէիք ար-դեօք զայնոսիկ. չգիտիցէ՞ք զի սնափառ պերճանքդ, ո-րով հանդէս առնէք անպատուհաս զեղխութեանցդ ձերոց՝ է վատութիւն զարովելի եւ ապիրատ։

«Այլ դուք խորհրդով մտածմանց զկնաւ իմ, իջխէք ամբարձանալ անդրէն օտարաց, որ էք ծնեալք 'ի քաղաքի ուր նստին Սոլոն և Արիստիդէս, և սնեալք 'ի դիւցազանց որ յաղթեցին 'ի բազում պատերազմունս եւտուն զմնուց խնոյ յաղթութեանն։ Այլ զի՞նչ բաժին ընդ իմաստութեան ընդ այնոսիկ և ընդ ձեզ. մանաւանդ թէ զի՞ կայ ձեր և հարցն ձերոց. գիտիցէք ոյք են հայրենակիցք և որդիք աւագ որերոյն այնորիկ. քաղաքացիք ազատութեան, յորում պայծառնի և յորում հաստատեալ է, և ծնեալք իցեն։

«Երանի էր հայրենեաց նոցա, եթէ ընդ առաքինութիւնս քուրմանց ոչ բերէին յանձին զձախողակի նկրտղամտութիւնն նպաստամատոյց 'ի կործանումն նոցա։ Լուարուք և դուք ձայնի իմում, դուք որք զարուց 'ի զարս մխոնջեմաւորէք զկենցաղօգուտ ազգ մարդկան։ Ապաշխարեցի օրէնս հնկառաւրս անիրաւութեանց, այլ ընդդէմ անարից ոչ ես. զի ձեզ եթէ մարթ է լինել իմ վրէժխնդիր, և հալածել զնոսա հզօր թշնամութեամբ։ Մի՛ զիջցի զոյրդ ձեր, այլ բորբոքեսցի 'ի վերայ յոխորտութեան՝ որ խանգարէ զբարս, 'ի վերայ բանութեանց, անիրաւութեանց և ննջութեանց՝ որք թագչին յերկրաւոց օրինաց, և 'ի վերայ կեղծ լաւութեան, վեր 'ի վերոյ պարկեշտութեան, սուտ բարեկամութեան, և 'ի վերայ ամենայն անարգ խարէութեանց՝ որք զողոնան զմեծարանս 'ի մարդկանէ։ Մի՛ ասիցէք՝ թէ փոխեցան ժամանակք, և պարտ է զգուշանալ յերկրաւոց զօրութեան յանցաւորաց. առաքինութիւն անապական՝ է առաքինութիւն անհիմն. զի ուր ոչն մնչէ նա 'ի տեսիլ յոռութեանց՝ չաղախի 'ի նոյնս։

«Որպիսի՜ հուր ոչ 'ի սիրտս ձեր բորբոքէր, եթէ յանկարծ հատանէր զուծկան՝ թէ զէն առեալ թշնամիք 'ի սահմանս այսր 'ի դրունս ձեր հասեալ են։ Իսկ արդ ոչ եթէ 'ի դրունս, այլ 'ի միջի ձերում կայ թշնամին, յատեան ատեանգանոյդ, 'ի ժողովս ազգիդ, 'ի դատաս-

տանտարանս և 'ի տունս ձեր։ Այնպէս արագ յառաջ խաղաց շարժն, զի եթէ ոչ դիք և ջանք առաքինեաց խափանեսցեն զնա՝ բարձցի ընդ հուպ ամենայն յոյս հնարից ազատութեան բարուց և փրկութեան աշխարհիդ »։

« Եթէ կշտամբանքս այսպիսի զօրս լուաք՝ ազդէին 'ի մեզ, ժողով մարդկան՝ տատանելազանց հեզութեամբս մերով լեալ կայան վարուց և օձից, փոխէր յօթեան խաղաղութեան և բարեբաստութեան։ Այլ մի յուսացուք տեսանել զփոփոխութիւնս զայս. զի թէպէտ և բազումք իցեն 'ի քաղաքայնոց առաքինութեամբ զարդարեալ, այլ չիք ինչ չքնաղագիւտ քան զայր առաքինի. զի ճշմարիտ առաքինին այն է, որ յամենայն ժամանակի և յամենայն դէպս, ընդդէմ ամենայն խաբանաց և հակառակ ամենայն հրապուրանաց է առաքինի։

Իսկ եթէ չիշխեն բարեսէրք գումարել ընդդէմ ստոց և կամակորաց, գէթ միաբանեսցին յօգնութիւն լաւաց, բերելով յանձին զմարդասիրութիւնն ընդակից բնութեան, զոր 'ի դէպ իսկ էր արդ դարձուցանել 'ի ժողով մարդկան, ուստի հալածեցին զնա մոլահաճութիւնք մեր և ախտք։ Ի նմանէ խրատէաք դաւարել 'ի պատերազմելոյ ընդ միմեանս, չառնուլ այլ ընդ այլոյ զխոթամտութիւն ընդ չարաարտութեան, 'ներել թերութեանց, և մերժել յանձանց զկանխակալ կարծիս և զկասկածանս՝ որք են աղբիւրք դժնդակք հերձուածոց և ատելութեանց բազմաց։ Ի նմանէ դարձեալ ուսանէաք, զի քան զհզօր պաշտպանութիւն և քան զառատաձեռն պարգևս՝ մեծ ևս բարերարութիւն այն է՝ կարեկից լինել թշուառաց։

Տեսանես հանապազ զբազումս 'ի քաղաքայնոց՝ որք հեծեն 'ի թշուառութեան, և զայլս՝ որ սփոփանաց ևեթ կարօտին բանից և կարեկցութեան այլոց, և հարցանես՝ թէ զիա՞րդ մարթ իցէ օգտակար լինել մարդկան, և թէ բնութիւնն ընդ վիշտս զորս ածէ զմեօք՝ յաւելցէ՞ արդեօք զփոխարէնսն։ Ցանկա՞րծ գիտէիր թէ քանի՛ բերկրու-

թիւնս զերջանաւ ’ի սիրտս հնազանդելոց ապրեցութեան խորոյ: Եթէ երբեք զոք ’ի լաւաց զերծուցանիցես ’ի կապտութենէ կամ ’ի մահուանէ և կամ ’ի նախատանաց, վկայեն ինձ կիրք սրտի քո՝ զի ’ի միտ առնուցուս, թէ են ’ի կենցաղս յայս վայրկենականք գործունէութեանց՝ որ զմշտալից ամաց հատուցանենն զփոխարէնս: Իսկ յայնժամ ողորմեսցիս ’ի վերայ այնոցիկ՝ որք զծաղր կատակին ընդ առաքինութիւնս քո, կամ որք յետ վայելելոյ յարգասիկս նոցա՝ մոռանայցեն զնոսա: Մի՛ լիցի քեզ երկնչել ’ի նախանձոտաց. կրեսցեն նոքա զարժանին պատուհաս յանկարծակիր սիրտս իւրեանց. զի նախանձն է ժանգ, որ ուտէ զերկաթ: Մի՛ զանգիտիցես. յերեսաց քոց փախիցեն, կամ մանաւանդ ’ի խնդիր քո շքեղասցին, եթէ ընդ բարերարութեան զոր ընկալան ’ի քէն՝ եղեն կըցորդ մեծարանք և շահ: Զի եթէ պարծանօք բարերարութեանդ եղծանիցիս՝ յանցաւոր ես, և եղկելի բարեբարեալն ’ի քէն: Զի՛ որպէս ամենք ասացին, պարտ է բարերարին մոռանալ զբարերարութիւն իւր, և ընդունողին յիշել զայն. և ես քեզ ասեմ, զի եթէ առաջինն մոռասցի զայն, երկրորդն յիշեսցէ: Ես զի՞ փոյթ թէ խաբիցիմ. մի՛ թէ առ շահ ինչ օգտի պարտ իցէ բարեբարել:

ԳԱՐԹԵԼԸՄԻ. Ուղևոր. Անապարանաց:

---

## ՍՐԲԱԶԱՆ ԳԵՐՃԱԽՕՍ

Ի բեմէ անտի, զոր քրիստոնեական ամբառնայր կրօն, վեհագոյն ճշմարտութիւնք մեծապարգեւ հնչէին ընդ ծագս տիեզերաց, և սրբագոյն հրահանգք բարոյից դիւրընդելս ընծայէին անկիրթ խուժանին. բեմ ահաւոր, որոյ առաջի ’ի հեզութիւն փոխէին՝ որք արեամբ

ժողովրդեանն շամշոտեցան հայեաց. քեւ խաղաղարար է խնամակալութեան, որ անապատին տոխացն բարգաւաճ արփամն անպաճունճ մարտոյց. քեւ՝ որ պաշտպան եկաց ընդ երկար դարից ամենայն արեաց ցեղից, և ինքն միայն 'ի մէջ անցեալ՝ զիրաւունս աղքատին ընդդէմ մեծատան ցուցանէր, տկարին ընդդէմ հարստահարողին, և մարդոյն ընդդէմ անձին իսկ իւրոյ։

Ընդ ամենայն ինչ ազնուական ընծայի և աստուածային. քարոզչին տիրեալ իմն ոգւոյ՝ մերթ ամբառնայ և մերթ հարկանէ զնոսա. և մարթ է նմա գերագոյն ինչ քան զիւրս դնել նոցա առաջի, և ահաւոր ինչ քան զմահ, և 'ի վերուստ երկնից յոյս իմն յաւիտենից 'ի գերեզմանս անդր իջուցանել, ուր տարշանս եւեթ բերէր Փերիկլէս։ Եթէ ըստ օրինակի Հռովմայ ճարտարախօսին՝ զլեզէտն նահատակացն Արիսի մեծահռչակս դղրդուաւորիցէ, անմահութիւն հոգւոց նոցա շնորհէ, զոր քրիստոնեայ նոցա միայն իշխէր խոստանալ Կիկերոն. և զհայրենեաց երախտագիտութեան պարտս՝ Աստուծոյ թողու հատուցանել։ Եթէ քարոզող լինել աւետարանին կամիցի, հարկ 'ի վերայ կայ նմա առձեռն ունել զուսումն գիտութեան բարուց, զփորձ մարդոյ և ըղձաղանիսկրից, յորոց իմաստասէրք և հռետորք նախնեաց սպառնալեցին 'ի քննութիւն մշտնջենաւոր։ Նմին է անկ առաւել քան զվարդեմի ճարտարախօս ճանաչել զճանապարհս սրտի մարդոյ, զյուզմունս ամենայն և զզգացմունս հոգւոյն բովանդակ. ոչ զի վառեալ զրգռիցէ ըղձաւոն կիրս ժողովրդեանն և կամ զզայրոյթ նորա, ոչ զախտից արծարծել հրդեհ ահաւոր, և ոչ զհուր վրէժխնդրութեան և զքինու՝ յորս նախնին այն յաղթանակէր արտաքսութիւն, այլ զի ցածուցանիցէ զնոսին և ամոքեալ սրբիցէ զոգիս։ Ամենայն կրից եղեալ ախոյեան, առանց 'ի նպաստ ինչ իւր արբանեկելոյ զնոսա, պարտի զայլ իմն ստեղծագործել կիրս, եթէ արժան իցէ այդու զխորին զայն և զմեծ անուանել զզգաց-

մունս, որ ամենայնի յաղթէ և զամենայնի 'ի սիրտս ունի զտեղի. զայն խանդ կրօնական, որոյ է 'ի բարբառ նորա, 'ի խորհուրդս և 'ի բանս մարգարէական իմն աղդել ոգի, քան եթէ զկիրս ատենախօսի:

ՎԻԼԸՄԷՆ

---

## ԹԱԳԱՒՈՐ

Զի՞նչ իցէ Թագաւոր եռանդուն 'ի ծնէ 'ի նահատակութիւն, որ անդստին 'ի մատաղ հասակէն կայծակունս շուրջ փայլատակեցուցանիցէ, եթէ երկիւղն Աստուծոյ ոչ առաջնորդեսցէ նմա և 'ի չափու ունիցի. աստղ մի նորահրատ և ժանտագործ՝ շարեաց ևեթ բոթաբեր յերկիր: Ըստ աճել նորա յարուեստն յայն եղեռնաւոր, ընդ նմին աճեսցեն և աշխարհին տառապանք. և կարի իսկ յանդուգն և խիզախ գործոց առաջարկութիւնք՝ հազիւ թէ դոյզն ինչ թումբ ընդդէմ դընիցեն անսաստելի ընթացիցն բռնութեան. 'ի շողիւն յաղթութեանցն համարեսցի շլացուցանել զեւլ զյանդըգնութիւն նոցին կամ զանիրաւութիւն. յոյս ևեթ յաջողութեան՝ հանցէ իրաւունս արդարութեան զինուցն. որ ինչ զամ մի թուիցի նմա 'ի փառս՝ օրինաւոր եղիցի. զժամս խոհական և մեծավայելուչ հանգստեան՝ վարկցի դատարկութիւն իմն ամօթալից և ժամս 'ի փառաց իւրոց գողացեալս. դրացիք իւր՝ որոց կարէ տիրապետել՝ 'ի թշնամիս դարձցին նմա. ժողովուրդք իւր ինքնին արտասուօք իւրեանց և արեամբ մատուսցեն նմա զծախս յաղթանակացն. սպառեսցէ և հիմնայատակ զաշխարհ իւր արասցէ առ այլոց տիրելոյ. յարուսցէ 'ի վերայ իւր զազգս և զազինս. զտիեզերաց խաղաղութիւն վրդովեսցէ. արասցէ իւր անուն՝ Թշուառացու-

Digitized by Google

ցեալ զխնդրս ըմբռնուց։ Ո՛վ հարուած ազգի մարդկան։ Եթէ գուցէ ուրեք յերկրի ժողովուրդ բաւական 'ի գովել զնա, չգիտի ինչ այլ՝ բայց ըղձանալնմին այնպիսի ոք տէր։

ՄԱՍԻԼԼՈՆ. Փոքրիկ քառասնորդք։

---

## ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Փառք նորա հանապազ արեամբ շաղախեսցի. անզգամ ոք նուազեսցէ թերևս զյաղթանակս նորա, բայց գաւառք և քաղաքք և անդաստանք ողբասցեն. կանգնեսցին նմա արձանք ամբարտաւանք անմահացուցանել զաշխարհակալութիւնն, բայց աճիւն տակաւին ծխեալ քաղաքաց՝ որ երբեմն ծաղկազուարճքն էին, բայց աւերած և ամայութիւն անդաստանաց կապուտ կողոպուտ եղելոց յառաջին գեղոյն, բայց քանդմունք պարսպաց՝ ընդ որովք հանդարտեալ ժողովք քաղաքացւոց թաղեալ մնացին, բայց աղէտք բազում և յետ նորա տեւեալ բաւեալ, ազազգեաց յիշատակք՝ եղիցին անմահացուցանել զընդունայնութիւն նորա և զանմտութիւն։ Անցցէ իբրև զհեղեղատ 'ի գերփել զերկիր, և ոչ իբրև զգետ մեծաքանչ՝ որ նոթծիցէ ուրախութիւն և առատութիւն. անուն իւր գրեսցի 'ի յիշատակարանս ապականեաց ընդ աշխարհակալս, այլ ոչ ընդ ընտիրս թագաւորաց. և չյիշեսցին վէպք արքայութեան իւրոյ՝ բայց 'ի յիշատակել զչարիսն զոր գործեաց մարդկան։ Այսպէս ամբարտաւանութիւն նորա, ասէ Հոգին աստուածեղէն, համբարձցի մինչև յերկինս. գլուխ նորա յամպս կցեսցի. ըստ ցանկութեան սրտի իւրոյ եղիցեն նմա յաջողուածք իւր, և այս ամենայն փառաց ամբարտաւանի՝ լիցի ապա

շեղջակոյտ տղմոյ, որ ոչինչ թողուցու զկնի իւր՝ բայց ժահ և թշնամանս։

ՄԱՍԻԼԼՈՆ. Փոքրիկ քառասնորդք.

---

## ԱՂԷՏՔ ՄԱՐԴԱՀԱՃՈՒԹԵԱՆ

Վասն զի մարդահաճութիւն՝ զամբարհաւաճութիւն ծնանի, և ամբարհաւաճութիւն է մահահոտ վտանգ առաքինութեանց։ Մարդահաճոյն՝ շնորհուկս մեծամեծաց առնելով անդոյ լաւութիւնս, տայ նոցա կորուսանել և զբնածիրսն. միտութիւնք՝ որ յոյս առաքինութեան էին 'ի նոսա՝ փոխէ զայնս յաւիւթս յոռութեանց. առատութիւնն այլանդակի 'ի յանդգնութիւն. անհաւատութիւնն 'ի սերնդենէն ազդեալ և յոյժ վայելուչ առն թագաւորի՝ ոչ այլ ինչ է այնուհետև, բայց գրգապանծ գոռոզութիւն՝ յարհամարհանս նմին և յանարգութիւն. սէրն փառաց՝ որ խաղայ 'ի նոսին ընդ արեան նախնեացն իւրեանց թագաւորաց, փոխի յանմխտ անապարծութիւն՝ որ զտիեզերս առ հասարակ կամի տեսանել յոտս նոցա խոնարհեալ. ցանկայ պատերազմաց՝ առ 'ի ժառանգել զանուն պարծանս յաղթութեան, և ոչ միայն չնուաճէ զթշնամիսն, այլ և նորա բուսուցանէ, և զինէ ընդդէմ նոցա զսահմանորդսն և զդաշնաւորս. մարդասիրութիւնն՝ սիրելի 'ի բարձրութեան, և գոգ առաջին ազդումն 'ի մանկութենէ հետէ հեղեալ 'ի սիրտս արքայից, ամփոփի յանձուկ առատութիւն և յանխտիր ընտանութիւն սակաւուց ոմանց սիրելեաց, և չթողու ինչ այլ 'ի նոսա՝ բայց խստասիրտ անզգայութիւն 'ի տառապանս ժողովրդեան. և ինքն իսկ կրօնիցն պարտք, որում առաջին պահապանք նոքա են, և խնամոտ պարապումն էր տղայական հասակին, ոչ ևս ինչ երևին

Digitized by Google

նոցա ; բայց մանկաւոյ խնդիք և զբօսանք տղայութեան : Ոչ. թագաւորք՝ առաքինի ծնանին յանձին, և յաճա-րութեամբք՝ կարգին իւրեանց արժանաւորք. սերուն-դըն այդ մեզ զնոյն՝ որպիսիս պիտոյին լինել. մարդա-հաճութիւնն միայն առնէ որպիսիս ենն :

Ի գովութեանց զամ մի աղաւաղեալք, ոչ ոք այնու-հետև իշխէ խօսել առ նոսա զլեզու ճշմարտութեան. նոքա միայն անգիտանան 'ի ակէրութեան իւրեանց՝ զոր նոցա ևեթ անկն էր գիտել. առաքեն դեսպանս յար-քունիս և 'ի թագաւորութիւնս հեռաւորս խնամել զզաղտնիս նոցա, և որ ինչ յաղագս այսութեան անդ իւ-րեանց անցք անցանեն՝ չիշխէ ոք ցուցանել նոցա. շա-ղաւաշուրթն բանք դորանեալ կան զաթոռովն, պա-շարեն զամենայն անցս, և չտան մուտ ճշմարտութեան : Վասն որոյ թագաւորն միայն հիւր է 'ի ժողովրդեան իւրում. կարծէ 'ի ձեռին ունել և վարել զամենայն թա-քուն զօրութիւնս տէրութեանն, և հրապարակագոյժ անգամ եղելոցն անծանօթ է. ծածկեն 'ի նմանէ զխռովս, ստուարացուցանեն զօգուտս, զտառապանս աշխարհին նուաղեն, բազում մեծարանօքն խաբեն զնա. ոչ ինչ ստուգութեամբ տեսանէ. ամենայն ըստ սրտի իւրում թուի նմա :

Այս դառն կատարած է շողոքորթութեան : Սակայն այս ախտ հասարակ է ամենայն արքունեաց, և լաւա-գոյն թագաւորացն խութ : Մանուկ արքային Յովասայ՝ այն ինչ կորուսեալ զհաւատարիմ քահանայապետն Յո-վիդայէ՝ զիմաստուն խնամակալ մանկութեան իւրոյ, և զայր՝ ընդ որ միայն հասանէր դեռ ևս ճշմարտութիւն մինչև առ աթոռոյն, և ահա հրապուրեալ 'ի շո-ղոմ գրանկացն, աւէ գիրն, մատնեաց զանձն 'ի խոր-հուրդս նոցա և 'ի կարիս իւր. Դրջեցին զմիտսն Յովա-սու. յայնժամ լուաւ նոցա արքայ : Զթագաւոր բարի՝ շողոմութիւնն առնէ թագաւոր ծնեալ 'ի թշուառու-թիւն ժողովրդեան իւրոյ. նա է որ զքաւազանն փոխէ

'ի լուծ բռնութեան, և չնթելով թերութեան արքայից՝ զառաքինութիւնսն և յանարգութիւն տանի։

ՄԱՍԻԼԼՈՆ. փոքրիկ քառասնորդք։

---

## ՆԱԽԱՄԵԾԱՐ ԵՆ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՔԱՆ ԶՔԱՂԱՔԱՑԻՈՑՆ

Զայս ամենայն Եւթիմէն մտադիւրագոյնս ճառէր մեզ զվաստակոց երկրի, զմայլեալ քաղցրութեամբ շի-նական կենաց։ Յաւուր միում ընդ երեկս բազմեալ էաք առաջի տան նորա 'ի սեղան ընդ հովանեաւ սօ-սեաց խոնարհելոց զմեօք՝ և ասէ ցմեզ. Յորժամ ընդ անդաստանս իմ ճեմիմ՝ ամենայն ինչ զուարթ և գե-ղածիծաղ է յաչս իմ։ Հունձքս այսոքիկ և ծառք և բան-ջարք վասն իմ են, մանաւանդ թէ վասն կարօտելոց՝ զորոց խնամեմ զպէտսն, և պատրանս ինձ քաղցունս երբեմն հնարիմ առ 'ի յաճախել զերկրութիւն վայել-չութեան կենացս. Թուի ինձ յաւելուլ երկրի զխնամս իւր մինչեւ 'ի զորով, և զի կանխեն քան զպտուղս ծա-ղիկք, որպէս և բարերարութեանցն առ մեզ զուարթ-առատս պարտ է գոլ։

Նախանձ առանց հակառակութեան է ընդ իս և ընդ դրացիսն իմ. գան յաճախ առ իս, և բազմին ընդ իս 'ի սեղանս՝ որ բարեկամաց ևեթ իմոց պատրաստեալ է։ Վստահք և անկասկածք ճառս արկեալ խօսիմք ընդ մի-մեանս, և յայտնեմք իրերաց զհնարագիտութիւնս մեր. զի իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ՝ յոյժ այլ ազգ յայլոց ճարտարաց հնարագիտաց, այնչափ փոյթ է 'ի հմտու-թիւն այլոց որչափ անձին։

Եւ ապա դարձաւ առ աթենացիս ոմանս՝ որ այն ինչ եկեալ էին 'ի քաղաքէն, ասէ. Համարիք դուք կեալ ազատք 'ի շրջապատ պարսպաց ձերոց. այլ զազատու-

Digitized by Google

թիւնդ զայդ, զոր շնորհեն ձեզ օրէնք, բառնայ ամենայն բանաւորութիւն քաղաքաժողով կենակցութեան. ճիգն հասանելոյ աւագութեանց և զգայարանս այնոցիկ կատարելոյ, հնարք շնորհս գտանելոյ առաջի հզօրաց, զգուշութիւն առ 'ի զերծանել յապիրատութեանց, պարտք և պատշաճք խստագոյնք քան զկարգաց բռնութիւն, հարկ հանապազորդ 'ի զգեստս, 'ի գնացս և 'ի խօսս, անբերելի ծանրութիւն անգործութեան, յամր հալածանք ծանրատաղտուկ մարդկան. և զի՞ մի մի թուիցեմ. չիք ինչ 'ի գերութեանց որ ոչ զձեզ կաշկանդեալ ունիցի:

Շքեղ են տունք ձեր, այլ մերքս զուարթք. բերկրութիւնք ձեր վեր 'ի վերոյ և վաղանցուկք. մերքս խոկականք և կայունք. և բնաւ իսկ ուսագութիւնքն ձեր կացուցանե՞ն զոք 'ի գործ ազնուականագոյն քան զհրահանգս արուեստից, առանց որոյ ամենայն ճարտարութիւն և վաճառականութիւն կործան անկանին:

Շնչիցէ՞ք երբեք յոսկեձեղուն ապարանս ձեր զօդս զայս զովարար, որ ընդ դալարագեղ կամարաւս փարի. և ճաշք ձեր բազմածախք՝ իցե՞ն լաւագոյնք քան զտաշտս փրփրադէզ կաթինդ՝ որ արդ իսկ ահա կթեալ, և քան րժահամ մրգունքս ձեռօք իսկ մերովք քաղեալս: Եւ զո՞ր համ ոչ յաւելուցուն 'ի կերակուրս մեր վաստակք, որ և 'ի սառամանիս ձմերայնոյ և 'ի բոցակէզ տօթ ամարայնի ցանկալի են մեզ, և զորոց զխոնջ աշխատութեանն քաղցր է բժշկել մերթ 'ի թանձրախիտ մայրիս անտառին՝ 'ի շունչ զեփիւռից որ 'ի դալարուոջ 'ի քուն հրաւիրեն, և մերթ առ ճարճատիւն հրատին՝ որում արկանեմ ճարակ զկոճեղս ձեռատունկ իմոցս ծառոց. ուր մանկունքս իմ հանդերձ մարբն իւրեանց կան առ ինև, միշտ իսկ ցանկալիք խանդակաթ սիրոյ. և ուր պատսպարիմ անքոյթ 'ի բքայոյզ մրրկաց, որ շուրջ զբնակութեամբս իմով մռնչեն:

Բա՛րէ, զի՞նչ է բարեբաստութիւն, եթէ ոչ առողջութիւն հոգւոյ. և եթէ այսպէս իցէ, ո՞ւր այլ մարթիցէ

Digitized by Google

զտանել զայն. բայց ուր պէտք քնգ ցանկութիւնք 'ի կեանս հասարակութեան կան, ուր աշխատութեան յաջողէ միշտ հանգիստ, և ընդ հոգս կցորդ է միշտ խաղաղութիւն:

ԳԱՐԹԻԼԸՄԻ. Ուղեւոր. Անապարհեալ:

---

## ԱՔՍՈՐԵԱԼՆ

Ցածէր նա թափառական ընդ եզերս. Աստուած առաւօտուց տարաբաղդ աքսորելոյն:

Անցք ընդ ժողովուրդս. հայեցան յիս և ես 'ի նոսա, և ոչ 'ի ծանօթութեան եկաք միմեանց:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ի խոնարհել արեգական' տեսեալ իմ ծուխ շինի 'ի վեր ամբարձեալ 'ի ծոցոյ հովտին, ասէի. Վա՜յ որ ընդ երեկս գտանիցէ գյարկ իւր ընտանի և առ իւրսն ա՛ ն. ցեալ բազմիցի:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ցո՞ գնան ամպքդ վտարանդիք 'ի մրրկէ. վարիմ և ես հանգոյն դոցին, զի՞ փոյթ թէ ո՛ւր:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Գեղեցիկք են ծառքս և ծաղկունքս գեղանի. այլ չեն ծաղիկք և ծառք հայրենեաց իմոց. չբարբառին ինչ ընդ իս:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Ընդ մարգագետին գնայ առուակս մեղմընթաց, այլ մրմունջք իւր չեն այնք, զորս լուայ 'ի մանկութեան, և ոչ յիշատակս ինչ զարթուցանեն 'ի սիրտ իմ:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք:

Քաղցր են ինձ երգքս. այլ զթախիծ և զխինդ զոր բերեն' չեն թախծութիւնքն իմ և խինդք:

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք։

Հարցին զիս. Զի՞ լաս։ Ասեմ զպատճառն ցնոսա. և ոչ ոք ելաց. զի չիմացան զբանս իմ։

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք։

Տեսի զծերունիս շուրջ պատ առեալս 'ի մանկանց, իբրև զձիթենի յիւրոց շառաւիղաց. սակայն ոչ ոք 'ի ծերոց կարգաց զիս իւր որդի, և ոչ 'ի մանկանցն ոք եղբայր իւր զիս ձայնեաց։

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք։

Տեսի և զծիծաղել օրիորդաց առ սիրատարփ ամուսինս՝ զծիծաղ սուրբ՝ որպէս զսիւգ առաւօտու, և մի 'ի նոցանէ ոչ ժմտէր առ իս։

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք։

Տեսի և զերիտասարդս լանջս 'ի լանջս յարեալ զիրկընդխառն զիրերօք գոգցես 'ի մի կցորդեալ զշունչ. բայց ոչ ոք 'ի նոցանէ կարկառեաց զաջ իւր առ իս։

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք։

Ի հայրենիս են և եթ բարեկամք, հարսունք, հարք և եղբարք։

Միայնակ է աքսորեալն ամենայն ուրեք։

Աքսորեա՛լդ դու տարաբաղդ, հանգիր 'ի լալոյդ. ամենեքին վտարանդիք են իբրև զքեզ, և ամենեքին տեսանեն զհարս, զեղբարս, զհարսունս, զբարեկամս զի անցանեն և լինին աներևոյթ։

Հայրենիք չեն աստ 'ի խոնարհ. 'ի նանիր խնդրէ զնա մարդ աստանօր. և զոր ունին՝ օթևան է գիշերոյ։

Ցածի նա թափառական ընդ երկիր։ Աստուած առաջնորդեսցէ տարաբաղդ աքսորելոյն։

ԼԱՄԸՆԷ

# ՆԿԱՐԱԳԻՐՔ

# ԿԵՆԴԱՆԱԳԻՐՔ ԵՒ ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

## ՊԱՏՈՒԷՐՔ ՎԱՍՆ ԱՅՆՑ

Կենդանագիր. Ստորագրութիւն կերպարանաց կամ բարուց ուրուք, և մերթ երկուքանչիւրոցն ևս. եթէ լիցէ ոք այնպիսի, որպիսի նկարագրի, որպէս ագահ ոք կամ նախանձոտ, կեղծաւոր, կերպարանեալ ոք պարկեշտ, սիրող հաճոյ լինելոյ, ոչ ևս է նկարագրութիւնն այն կենդանագիր, այլ նկարագիր բարուց. և այս է խտիր ընդ երգիծաբանութիւն ներելի և ընդ երգիծաբանութիւն աններելի։ Լապրիւյէր, որոյ նկարագիրս ևեթ բարուց էր արարեալ, ամբաստանեցաւ՝ որպէս թէ աքարեալ էր նորա կենդանագիրս. բայց չարամտութիւն պատշաճեցուցեալ զնոսին և նոքօք զրպարտեալ զնկարիչն, կրկնակի հայթհայթեաց իւր ախորժ միահաղոյն։ Բանաստեղծութիւն, ճարտասանութիւն և պատմութիւն կարեն հաւասարապէս նկարագրել. այլ ոչ նոյն եղանակ է նկարագրելոյ իւրաքանչիւրոցն։

Յամենայն ազգի ազգի ճարտասանական ճառս կարէ տեղի ունել կենդանագիր. 'ի գովութեան և 'ի պարսաւանս չիք ինչ քան զայն բնականագոյն. 'ի բաղխոհականին կարևորագոյն ևս է տալ ծանօթութիւն զմարդկանէ, վասն որոյ և նկարագրել զնոսա. յատենականին ևս բազում այն է զի ըստ անձնական հանգամանաց

Digitized by Google

մարթ է գտանել զդիտաւորութիւն և զհաւանականութիւն, զիսկն իսկ գործոյն և զաստիճան ներելոյ կամ խառնութեան՝ որում է ոք արժանի։

Արդ ամենայն իսկ ուրեք, ուր կարևոր իցէ ճարտարախօսին տալ ճանաչել զոք, իրաւունք են նմա նկարագրելոյ զնա. և որչափ ճշգրիտ իցէ կենդանագիրն և յանկուցիչ և կարեւոր դատին, այնչափ եւս իսկական գեղեցկութիւն իցէ նորա. զի գեղ 'ի ճարտասանութեան ոչ այլ ինչ է, բայց զուգաւորութիւն բարութեան ընդ զօրութեան հնարից։

Քան զամենայն առաւել եւս պատմութեան սեփականագոյն և ընդելագոյն թուի այս եղանակ ծայրաքաղ առնելոյ զտիպս նկարագրի և ճշգրիտ գծագրելոյ։ Այլ և անդ իսկ 'ի պատմութեան, եթէ կարի յաճախեսցեն կենդանագիրք՝ լինին տաղտկալի։ Եթէ իցեն ճշմարիտք, անզուգականք, կարևորք յիմացուած գործոյն և դիմաց՝ զոր բերեն անձինք, ազդոյք նմանութեամբն և զօրութեամբ, ճշդութեամբն և յորոյ կազմինն՝ մասանցըն նորութեամբ, ներգործեն 'ի մեզ զտպաւորութիւն լուսափայլ ճշմարտութեան՝ որ քաջ 'ի բաց ծաւալէ ըզճառագայթս իւր։ Այլ կենդանագիր առանձինն մարդոյ՝ որոյ նկարագիր բարուց չունի ինչ ազդեցութիւն, չէ ինչ յանկուցիչ. և է զարդ իմն աւելորդ 'ի պատմութեան, զբօսուցեալ միայն զընդունայն հետաքրքրութիւն, անարժան իսկապէս իմաստնոյ և լրջամիտ ընթերցողին։ Ապա ուրեմն միոյն կանոն լիցի նկարագրել ևեթ անձինս, որ բարուքն և պաշտամամբք և կցորդութեամբն ընդ գործս կարևորս՝ կարեն ցանկալի առնել միւսումն զճանաչումն և զտեսութիւն այնոցիկ ըստ նախատիպին։ Սովին սակաւաւորք և ցանկալի լիցին կենդանագիրք։

Պլուտարքոս կցորդեաց զերկոսին, այլ յառնել անդ զզուգակշիռս. յայնժամ անհրաժեշտ կարևոր է 'ի ներքըս ածել զամենայն համեմատութիւն։ Սակայն 'ի կա-

տարած պետութեան կամ կենաց ուրուք եթէ սուղ ինչ վերջաւորան յուշ ածցէ զնշանաւոր հանգամանս նորա, և յանդիման առնիցէ զամենայն տիպս նկարագրին միանգամայն, զգեղեցմունս, զդիմապատկերս, զայլ և այլ կամ զհակառակ հանգամանս՝ զորս դիպաց երևեցուցեալ իցէ 'ի նմա, չիք երկբայել զի լիցի այն 'ի ճարտարութիւն և 'ի գեղեցկութիւն մեծ։ Այսպիսի է 'ի գիրս Տակիտոսի կենդանագիր Տիբերեայ 'ի կատարած ինքնակալութեանն, զարհուրեցուցիչն այն, զի մի՛ ասասցից թէ և լքուցիչ օրինակ ճշգրտաբանութեան, կորովութեան և յստակութեան։

Դիւրին է 'ի միտ առնուլ թէ ընդէ՞ր յառանձին յիշատակագիրս կենդանագիրք յաճախեն բնաւորապէս քան 'ի պատմութեան։ Զի սմա կարևոր ևեթ է ծանօթացուցանել զայր հասարակաց. և դէպք ցուցանեն զայն. իսկ յիշատակագիրք յանդիման առնեն զայր սոսկական և հարևանցի զհասարակաց գործովք անցանեն։ Կարդինալն Ռէց 'ի յիշատակագիրս իւր ընդ քողով յանդիման առնէ զտեսարան Պարսաւորաց. իսկ 'ի կենդանագիրսն, յորս գծագրէ զգլխաւոր անձինս դիւցազնախառն կատակերգութեանն այնորիկ, յանդիման առնէ մեզ յաճախ զոր ինչ և ոչ գործք նոցա ցուցանեն։

Այսր աղագաւ ուր ուրեք 'ի պատմութեան առաւել ազդեցութիւն է ուրուք քան երևոյթ, և որ առաւել գործէ ներքոյ քան արտաքոյ, ցանկալի է նկարագրել խնամով զներքին զայն գաղտնածածուկ ներգործիչ անցիցն պատմելոց։ Վասն որոյ չիք կարևորագոյն ինչ և առաւել յանկուցիչ 'ի վէպս ինքնակալութեանն Տիբերեայ քան զկենդանագիր Սէանոսի։

Ի ճարտարախօս պատմագիրս, որպիսիք էին հինք գրեթէ առ հասարակ, և առհաւատչեայ Թուկիդիդէս, Քսենոփոն, Սալլուստիոս, Տիտոս Լիւիոս և Տակիտոս, եղանակ նկարագրութեան ոչ այլով իւիք ընդհատ է 'ի ճարտասանականէն, բայց միայն խստագոյն ճշգու-

թեամբ և ճշգրտութեամբ։ Ցուցից զայս օրինակաց՝ որ ամաչեցեն զցամաքութիւն տեսութեանցս։

Սաղուստիոս առնէ զնկարագիր Լ. Կատիլինայ. և 'ի նկարագրէ աստի և 'ի կեսարուն՝ Թուի ձևակերպեալ Պօսիւէի զկենդանագիր Կրոմուելի, ուր եղանակ ճարտարխօսութեան բարձրագոյն քան զպատմութեանն է։

Բայց զանազանութիւնս այս զգալի ևս է 'ի կենդանագրին, զոր Կիկերոն տայ զԿատիլինայ, յարդարացուցանելն զԿեղիոսի կուսակցութիւն ընդ դաւագործին. պարծաւ մեծ զոր կարևոր էր հերքել։ Ջհատուածն՝ «Էր Կատիլինայ՝» պարտ է բաղդատել ընդ Սալուստեայն. և է տեսանել յերկաքանչիւրում օրինակ կատարելութեան յարուեստի անդ նկարագրելոյ որպէս ճարտարախօս և որպէս պատմագիր։

Այլ որոց ոչն գիտիցեն զբարբառ Կիկերոնի և զՍալուստեայ, առաջի առնեմք 'ի մերումս զերկաքանչիւր ազգի նկարագրութեան ընտիր օրինակս։ Կարդինալն Ռեց 'ի յիշատակագիրս իւր յօրինէ զկենդանագիրս մեծին Կոնտէի և զԹիւրեննի.

«Իշխանն Կոնտէ ծնեալ զօրավար», և այլն։ Ահա քեզ պատմագիր։

«Թիւրեննի էր 'ի մանկութենէ», և այլն։ Ահա քեզ ճարտարախօս։

«Տեսանէ ուրեք երբեք յարս երկուս, և այլն»։

Չիք ինչ ակնախտիղ հարևանցի ընթերցողաց քան զկենդանագիրս մտացածինս, և չիք ինչ որ առաւել 'ի յայտ ածէ զտգիտութիւն մատենագրի առաջի գիտնաւորի և խոհականի առն։ Առանց իսկ ընթեռնլոյ զանցս և առաջի աչաց ունելոյ զնախատիպն, զանազանէ խոհական ընթերցող զկենդանագիր նմանատիպ 'ի տարտամ և 'ի մտացածին կենդանագրէ։

ՄԱՐՄՈՆԹԷԼ. Տարերք բանասիրութեան. Գիրք. Դ։

## ՅՈՅՆՔ

Յոյնք հանճարեղք 'ի բնէ և քաջասիրտք՝ յառաջ ժամանակաւ հրահանգեցան 'ի Թագաւորաց և 'ի գաղթելոցն յԵգիպտոսէ, որք հատուածի աղագաւ սփռեալ 'ի զանազան կողմանս Եղլադայ՝ ծաւալեցին շուրջանակի զգեղեցիկ կարգս կենցաղականս յաշխարհին իւրեանց. Նոքա զկրթանս մարմնոյ ուսուցին նոցա և զգօտեկռիւ, զհետի ընթացս, զձիընթացս, զկառարշաւս՝ այլովքն հանդերձ. զոր ևս առաւել կատարեցին գեղապանծպսակացն յուսով յոլիմպիական ասպարիզին:

Օգտակարն քան զամենայն զոր ուսուցին նոցա Եգիպտացիք՝ էր հլութեամբ հպատակել օրինաց, որպէս և գիարդ մատակարարեսցէ նոցա յօգուտ աշխարհին: Չէին իբրև զռսկականս ոմանս՝ որ զանձանց միայն խորհիցին, և յայնժամ զհասարակաց աղետից զշափ առնուն՝ յորժամ ինքնին համօրէն 'ի նոյն ըմբռնիցին, կամ յորժամ ընդ այլոց ամբոխեսցի և խաղաղութիւն տան նոցա: Քաջ ծանեան Յոյնք մասն համարել զանձինս և զտոհմ իւրեանց՝ մեծի մարմնոյ Թագաւորութեանն: Ի սոյն իմաստս սնուցանէին հարք զորդիս. և անդստին 'ի խանձարրոց ուսանէր մանկտին իբրև 'ի մայր հասարակաց հայել 'ի հայրենիս, որում առաւել քան ծնողացն իւրեանց՝ երախտապարտ զանձինս համարէին: Քաղաքականութիւնն առ Յոյնս ոչ ցուցանէր զբարեմոյնն միայն և զառ միմեանս պատուասիրութիւն. որով ընտելասէրս եմք. այլ այր քաղաքային կարգային նոքա զլաւ որեարն, որ զանձինս կցորդակից առնէին պետութեանն, և անխափան առաջնորդութեան օրինացն անսայլն, և յօգուտ հասարակաց ճգնէին, զրկեալ և ոչ զոք: Ի միտս ամենայն յոյն մարդոյ զայս խորհուրդ տընկեցին՝ որ 'ի նախնումն կացին նոցա Թագաւորք 'ի զա-

Digitized by Google

նաղան քաղաքս , որպէս Մինովս , Կեկրոփս , Թեսէոս , Կոդրոս , Տիմենոս , Կրեսփոնտ , Եւրիսթենէս , Պատրոկլ , և այլ նմանիք նոցին ։ Ամենեքին սոքա սիրելի եղեն ժողովրդեանն՝ ոչ մարդահաճելով , այլ յօգուտ նոցա ճգնեալ միշտ և 'ի հաստատութիւն իշխանութեան օրինաց ։

ԲՈՍՍԻՒԷ. Խօսք 'ի վէպս ազգաց ։

---

## ԱԹԵՆԱՑԻՔ

Մերթ 'ի կերպարանս ծերոյ երևի 'ի վէպս՝ դիւրախաբ , և մերթ 'ի դէմս մանկան տղայոյ՝ զոր պարտ է գրգռել հանապազ. երբեք երբեք պայծառացեալ յիմաստս մեծախոհութեան. ծայրայեղ 'ի սէր զբօսանաց և ազատութեան , հանգստութեան և փառաց. զմայլեալ 'ի գովութիւնս իւր , և հաճ ընդ իրաւացի կշտամբանս. արագամիտ 'ի հասու լինել առաջարկութեան խորհրդոց. կարճամիտ 'ի տեղեկանալ ստուգիւ հանգամանաց նորա և 'ի կանխատես լինել ելիցն. անհարկու աւագանւոյն անդէն 'ի ներել իւրում ոխերիմ թշնամեաց իւրոց. 'ի սրտմտութենէ 'ի գթութիւն , 'ի վհատութենէ 'ի ստահակութիւն , և յանիրաւութենէ 'ի ստրջանս իբրև զփայլակն դիւրայեղ. և առաւել քան զամենայն յողդողդ և թեթևամիտ , մինչև 'ի կարևոր իրս և 'ի ծանունս և յանհնարինս իսկ՝ բառ մի վաղեալ ընդ շրթունս կամ բան ինչ ճարտար , դոյզն տեսիլ կամ պատահար , բայց միայն յեղակարծ , բաւական է 'ի փարատել զամենայն երկիւղ 'ի նմանէ , և 'ի մոռացօնս ածել զամենայն շահ օգտի ։

ԲԱՐԹԵԼԸՄԻ. Ուղևոր. Անաքարսեայ ։

20

Digitized by Google

## ՅՈՅՆՔ ԵՒ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ

Այլ արդարև բաղդն է իշխան ամենայնի, և ըստ հաճոյս քան ըստ իրաւանց փայլէ և մթագնի։ Աթենացւոցն արութիւնք, որպէս ես կարծեմ, մեծամեծք էին ապաքէն և չքեղք, այլ նուազ քան զհռչակ համբաւոյն. այլ քանզի ականաւոր մատենագրաց հանճարք կացին առ նոսա, ընդ տիեզերս համօրէն մեծապէս հռչակեցան գործք նոցին։

Այսպէս այնչափ ինչ մեծ գրեցան արութիւնք գործելեացն, որքան հանճարք զարմանալիք կարացին բարբառել զայնս։ Իսկ ժողովրդեան Հռովմայ չեղև նոյն յոլովութիւն վիպագրաց. քանզի խոհականագոյնն 'ի նոցանէ գործօն ևս գտանէր յոյժ, և ոչ ոք զհանճար առանց ուժոյ 'ի կիր առնոյր. և ամենայն ոք լաւագոյն զգործելն քան զխօսել համարէր, և սիրելի զարութիւնս իւր յայլոց տեսանել գովեալ, քան թէ ինքն զայլոցն պատմել։

Այսր աղագաւ առ տնին և 'ի բանակի վարք անըստգիւտք պաշտէին։ Միաբանութիւն համաշունչ, ագահութիւն և ոչ մի. իրաւունքն և պատշաճ 'ի բնէ քան թէ օրինօք բարգաւաճէին։ Զկագ և զկռիւ և զպատրանս ընդ թշնամիս վարէին. քաղաքացւոյ ընդ քաղաքացի զառաքինութեանց էր մրցումն։ Ի պաշտամունս դից մեծափարթամք, 'ի տան սակաւապէտք, ընդ բարեկամս հաւատարիմք էին։

Այսոքիւք կրկին հնարիւք, ասեմ իսկ քաջութեամբ 'ի մարտի և 'ի յաջորդել խաղաղութեան՝ արդարութեամբ, և անձանց և իրաց աշխարհին հոգ խնամոյ տանէին։

Եւ ասացելոցս հաւաստիք մեծամեծք, զի բազում անգամ պատուհասակոծ 'ի պատերազմի արարին զյարուցեալս ընդդէմ հրամանաց 'ի կռիւ, և զդանդաղեալս

՚ի կոչ փողոյն մեկնել ՚ի մարտէ, քան որոց պիլոշն ըմբռնել կամ հալածականք թիկնադարձոյց լինել իշխեալ էր: Իսկ ՚ի խաղաղութեան՝ բարերարութեամբ քան ահարկութեամբ զիշխանութիւն վարէին. և անիրաւեալք՝ լաւագոյն ընտրէին ներողամիտ լինել քան վրէժխնդիր:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ

---

## ՆԿԱՐԱԳԻՐ ԱԶԳԻՆ ՍՈՒԵՒԱՑ

Ազգ Սուեւաց մեծ է յոյժ, և քան զբնաւ գերմանացիս զօռ պատերազմող: Աւանդի ունել նոցա մարզս հարիւր, յորոց ամի ամի հազար սպառազէն ՚ի միջէ միջէ հանեն արտաքս ՚ի սահմանաց իւրեանց ՚ի պատերազմ: Այլք ՚ի տան մնան, և վասն իւրեանց և վասն նոցա մշակեն զերկիրն: Սոքա դարձեալ փոխանակաւ ՚ի լնուլ ամին զինուորին, և նոքա ՚ի տան կան. որով ոչ հողագործութիւն և ոչ արուեստ և պատերազմափորձ հմտութիւն մարտի խափանի: Այլ առանձին և սեփական զատուցեալ ինչ ոչ են նոցա անդք, և չէ օրէն քան զտարի մի առաւել կալ մնալ ՚ի միում տեղւոջ ՚ի բնակութիւն. և ոչ շատ ինչ ցորենով, այլ մանաւանդ կաթամբ և խաշամբ կեան, և յաճախ յորսորդութիւն պարապեն. որ պարենիցն բնութեամբ և հանապազորդ կրթութեամբն և ազատութեամբ կենացն, (զի ՚ի մանկութենէ ոչ ՚ի գործ ինչ և ոչ յուսումն երբեք բերեալ պարապ՝ չառնեն ինչ ամենևին յակամայս), և զոյժն աճեցուցանէ, և անարի յաղթանդամս և վիթխարիս գործէ: Եւ յայն հասին սովորութեամբն, զի ի ցրտասառոյց անգամ վայրս ոչ ինչ այլ քան զմաշկեակս ունին ձորձս, (յորոց ՚ի կարի իմն փոքրկութե-

նէ՝ մերկ է մեծ մասն մարմնոյն), և լոգանան 'ի գետս։

Վաճառականաց գոյ առ նոսա մուտ, առաւել 'ի վաճառել նոցա զկապուտս պատերազմացն, քան թէ առ 'ի տալ ինչ բերել առ ինքեանս 'ի ցանկալեաց։ Եւս և գրաստս՝ զորս յոյժ սիրէ Գալլիա և մեծագնի առնուն, գերմանացիքդ ոչ վարեն եկամուտս. այլ որ բուն անդրէնածինքն են յոռիք և տգեղք, զնոսա ժիրս և տոկունս որ ըստ օրէ կրթանացն յարդարեն։ Ի հեծելազօր պատերազմունս վազեն ստէպ 'ի ձիոցն և հետի կռուին, և զերիվարսն անդէն 'ի նմին տեղւոջ սպասել ուսուցանեն, յորս և երագս դառնան ելանեն 'ի պահանջել պիտոյիցն։ Եւ 'ի բարս նոցա չիք ինչ անարգ և վատ քան 'ի թամբս հեծանել. վասն որոյ թէպէտ և սակաւաւորք իցեն՝ իշխեն ընդ ամենայն ամբոխ թամբեալ առն և ձիոյ 'ի կռիւ մատչել։ Գինի ամենևին ոչ թողուն մուծանել առ նոսա, զի նովաւ համարին լուծանել մարդկան 'ի ժրութենէ և մեղկել։

Մեծ պարծանս համարին աշխարհին իւրեանց՝ անդուստ 'ի սահմանաց իւրեանց ցմեծ վայրս ամայի լինել երկրին. զի յայտ իմն այնպէս առնէ՝ թէ քաղաքք անդամ բազմաթիւք ոչ ունին հանդուրժել բռնութեան իւրեանց։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք։

---

## ՕԳՈՍՏՈՍ ԵՒ ԿԻՆՆԱ

Դիւցազնն Օգոստոս, եթէ 'ի միահեծան իշխանութենէն առնուցու ոք զնա կշռել, թագաւոր հեզաբարոյ էր. բայց ընդ իշխանակիցսն սուր խաղացոյց 'ի հասարակապետութեան։ Այն ինչ զութուտասնամենիւքն անցեալ էր, զգաչոյն 'ի ծոցին առ բարեկամսն թագոյց՝

զՄ. Անտոնինոս հիւպատ դաւով 'ի կողմն եհար, և բազմաց տարագրութեան եղև գործակից: Այլ զքառասնամենիւքն անցեալ՝ մինչ դեգերէրն 'ի Գալլիա՝ ազդ եղև նմա թէ Լ. Կիննա այր խօթամիտ՝ դարանակալ լինի քեզ. և որ գուշակն եղև՝ մի 'ի դաւակցացն էր. և զտեղի դաւոյն և զժամանակն և զորպէսն՝ եցոյց ճշգրտիւ: Ցայնժամ խորհեցաւ վրէժ առնուլ 'ի նմանէ. հրաման ետ 'ի խորհուրդ կոչել զբարեկամս: Ցագնապեցաւ զգիշերն ողջոյն, զմտաւ ածեալ զի դատապարտելոց էր զազնուատոհմ երիտասարդն՝ զքեռորդի Կն. Պոմպէոսի՝ զանպարտն այլով մասամբ: Եւ ահա չկարէր սպանանել զայր մի՝ որ յընթրիս ընդ Մ. Անտոնինոսի զտարագրութեանն թելադրեալ էր զդատակնիքն: Ցոգւոց հանէր ստէպ, բարբառ արձակէր պէսպէս և միմեանց հակառակս: Իսկ զինարդ. թողացուցի՞ց զդաւաճանն կենաց իմոց գնալ աներկեան, և ես 'ի ծուփս եղէց. և միթէ ո՞չ լուծցէ զվրէժ նա որ զայս գլուխ՝ զխնդրեալն վայրապար յայնչափ քաղաքական կռիւս, և զպահեալն ողջանդամ յայնչափ ծովային և ցամաքային պատերազմունս, 'ի ծագել արդ խաղաղութեանն ընդ ծով և ընդ ցամաք, 'ի մտի եդեալ է ոչ եթէ սպանանել, այլ զոհել. քանզի 'ի ժամ զոհագործութեան նորա ունէր 'ի վերայ յարձակել: Դարձեալ՝ յետ լռելոյ պահ մի, մեծ ևս ձայնիւ բարբառոյ՝ ընդ անձին ոգորէր բարկութեամբ քան ընդ Կիննայի: Զի՞ ևս կեաս, եթէ կորուստ քո օգտէ այնչափ բազմութեան, և վախճան եղիցի պատուհասից, և արեան ճապաղեաց: Գլուխ իմ նշաւակ եդեալ կայ ազնուատոհմիկ պատանեկաց, որք սրեն զսուսերս իւրեանց 'ի վերայ իմ: Ոչ այնչափ մեծագին են կեանք՝ մինչ առ 'ի չկորուսանելոյ ինձ զայն, այնչափ բազմութեան հարկ իցէ կորնչել: Անդ ուրեմն յողոք մատեաւ առ նա կինն իւր Լիւիա և ասէ. Եթէ հաճոյ իցէ քեզ խորհուրդ կանացի, արա ըստ բժշկացն օրինակի, որք յոլն օգտել սովորական դեղոց՝ զհակառական փորձեն:

Digitized by Google

Մինչև ցարդ խստութեամբ ինչ ոչ շահեցար. զՍալուֆդեն յաջորդեաց Լեպիդոս. Լեպիդոսի՝ Մուրենա. Մուրենայի՝ Կեպիոն և Կեպիոնի՝ Եգնատիոս, զի զայլոց լռեցից, որոց ամօթ մեծ էր յայնչափն յանդգնիլ. փորձ փորձեա այժմ զգթութեան, թէ որպէս յաջողեսցէ. Ներեա Կիննայի. ըմբռնեցաւ 'ի յանցանսն՝ այսուհետև չկարէ ստնանել ինչ քեզ: Զուարթացաւ յոգի իւր, զի եգիտ փաստաբան ինքնամատոյց. շնորհս կալաւ կնոջն, և անդէն վաղվաղակի արձակեալ զժողով բարեկամացն, զԿիննա միայն առ ինքն կոչեաց. և հանեալ զամենեսին 'ի սենեկէ անտի, և հրաման տուեալ աթոռ արկանել Կիննայի, խօսել սկսաւ և ասէ. Զայս ինչ 'ի սկզբանէ խնդրեմ 'ի քէն. զխօսս իմ մի ընդմիջեսցես և յընթացս բանից իմոց մի բողոք արկանիցես. տացի քեզ ժամանակ խօսելոյ համարձակ: Զքեզ, Կիննա, 'ի ժամանակին՝ յորում գտի 'ի բանակի անդ թշնամեաց, զքեզ ասեմ՝ ոչ զեղեալդ ևեթ, այլ և զծնեալդ ինձ թշնամի, ապրեցուցի. և զհայրենի քո ժառանգութիւն բովանդակ քեզ շնորհեցի. և յաւուր յայսմիկ այնչափ բարեբաղդ ես և այնչափ ճոխ, մինչ զի յաղթեցելոյդ յաղթականքն նախանձին: Քրմութիւն քեզ ետու ըստ քումդ խնդրոյ, զանց զայլովք արարեալ բազմօք՝ որոց ծնողք զինուորակիցք իմ էին: Արդ յետ այսչափ առ քեզ երախտեացս՝ սպանանել զիս եդեր 'ի մտի: Եւ 'ի գոչել նորա յայս բան. Հեռի է յինէն խելագարութիւն այդպիսի. 'ի վերայ էած Օգոստոս. Կաց 'ի դաշինդ, Կիննա, քանզի յանձն առեր չընդմիջել զբանս իմ: Սպանանել, ասեմ, զիս խորհիս: Եւ ած ևս 'ի մէջ զտեղին, զընկերսն, զօրն, զկարգ դաւադրութեանն, և զայրն՝ որում ապսպարեալ էր սուրն: Եւ իբրև ետես՝ զի զերկիր նշմարէր, և լուռ ևեթ կայր՝ ոչ ըստ հարկի դաշանցն, այլ առ մտացն խղճի, ասէ դարձեալ. Եւ որո՞վ հոգւով գործես զայդ. զի դու՞ տրդեօք ինքնակալեսցես. օն և օն ասեմ, եղուկ ժողովրդեանն հռովմէա-

կանի, եթէ բաց յինէն չիցէ այլ ինչ խափան տու 'ի թագաւորելոյ քեզ։ Զես բաւական և տան քում պաշտպանել. գեռ ևս իսկ ընդ առն միոյ ազատագրելոյ յառանձին դատ մտեալ՝ յաղթեցար։ Ա՞յդպէս դիւրին քան զամենայն ինչ համարիցիս ընդդէմ Կայսեր խիզախել։ Ներեալ քեզ՝ եթէ ես միայն իցեմ դիմամարտ յուսոյ քո. այլ միթէ տանիցի՞ն քեզ Պաւլոս և Փաւիոս Մաքսիմոս, և Կոսսեանք և Սերուիլեանք և այնչափ բազմութիւն ասպ արանց, որք ոչ ընդունայն անուամբք պանծան, այլ որ պատկերաց իւրեանց են չքեղապանծք։ Բայց զի մի զատուարագոյն մասն մատենիս գրաւեսցեն բանք նորա, թէ երկրորդեցից բովանդակ, քանզի ընդ ժամս երկուս և աւելի խօսեցաւ, յերկարել կամեցեալ զայս պատիժ, որով ևեթ ունէր շատանալ, ասէ ապա. Ահաւասիկ կեանս քեզ, Կիննա, շնորհեմ վերստին, երբեմն թշնամւոյն, այժմ դաւաճանի և տիրասպանի։ Յայսմ օրէ սկիզբն եղիցի բարեկամութեան ընդ իս և ընդ քեզ. և այս պայքար կացցէ 'ի մեզ թէ ե՞ս արդեօք հաւատարմագոյն գտայ 'ի շնորհել քեզ զկեանսդ, թէ դու երախտապարտ ինձ գոլով։ Յետ այնորիկ կամակարութեամբ ետ նմա հիւպատոսութիւն. շնորհ զոր ոչն համարձակէր խնդրել. և եղև նմա այնուհետև հաւատարիմ բարեկամ, և միայնակ ժառանգորդ. և ոչ մի ինչ դաւ գործեցաւ այնուհետև 'ի նմանէ։

ՍԵՆԵԿԱՅ. Յղ. Գթութեան. առ Ներոն։

---

ԿԱՑԻԼԻՆԱ

Կատիլինա, այր ազնուազգի, կորովամիտ և ուժեղ, այլ ժանտ և չարաբարոյ. որում անդստին 'ի պատանեկութենէ պատերազմ համազգեաց և սպանութիւնք,

Digitized by Google

յափշտակութիւնք և առանին գժտութիւնք ախորժելի էին. և յայնս զմանկութիւն իւր կատարեաց։ Մարմին ժուժկալ քաղցոյ և սառամանեաց, և տքնութիւն 'ի վեր քան զհաւատս. միտս յանդուգն, նենգաւոր, յեղյեղուկ, կեղծաւոր և խորամանկ. չարակն յայլոց իրս, իւրոցն վատնիչ, ախտամոլ 'ի ցանկութիւնս. առաւելեալ 'ի ճարտարխօսութիւն, նուազ յիմաստութենէ, միտս լայնատարր, յանչափս և յանհնարինս և 'ի գեր 'ի վերոյս միշտ նկրտեալ։

Յետ տիրապետութեան Ղուկիոսի Սիւղղայ մեծատենչ ըղձիւք մոլէր սա՝ նուաճել ընդ իւրև զհասարակաց պետութիւն. և յամենայն ինչ անխտիր լինէր ձեռներէց՝ միայն զի իշխանութեանն հասանել կարասցէ։

Եւ եւս քան զեւս երթայր և վարանէր մտայոյզ վայրագն այն 'ի չքաւորութենէ և 'ի խղճէ եղեռանցն, որոց երկաքանչիւր յաճախեալ էին չարեօքն՝ զորոց 'ի վեր անդր ասացաք։ Հանդերձ սոքիմբք 'ի նոյն զնա դրդէին և ապականեալ բարք քաղաքացւոցն, զորս կրկին ախտք չարաչարք և ներհականք տագնապէին՝ զանառակ շռայլութիւն ասեմ և զագահութիւն...։ Քանզի անձն նորա ժանտ, աստուածոց և մարդկան ատելի, ոչ յարթմնի և ոչ 'ի քուն հանգչել կարէր. այնպէս խայթ խղճի կեղեքէր զմիտս նորա։ Դէմք մեռելատիպ, աչք սորսորեալ, գնացք մերթ շոյտ և մերթ յամրաքայլ, և ապշութիւն իմն յերեսս նորա և 'ի կերպարանս նկարեալ երևէր։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ

---

## ՍԻՂԼԱ

Արդ Սիղղա էր յազգէ պատրկաց ազնուական, այլ առ յուլութեան նախնեացն շիջելափառ գոգցես ազգա-

տոհմ նորա։ Ի յոյն և 'ի լատին դպրութիւնս հաւասա-րապէս ներհուն․ մեծահոգի, սիրող դրգանաց՝ այլ առաւել ևս փառաց․ պարապեալ 'ի զեղխութիւն, այլ ոչ բնաւ առ հեշտութեան 'ի պարապոյ թերացեալ․ բայց միայն պարկեշտագոյնս մարթ էր նմա գնալ ընդ ամուսնոյն։ Էր նա պերճախօս, խորագէտ, դիւրընկալ, և ճարտարութեամբն 'ի կեղծել չհաւատալի։ Առատաձեռն 'ի բաշխս, մանաւանդ դրամոց․ և թէպէտ երջանկագոյն քան զամենայն ոք էր յառաջ քան զքաղաքական յաղթութիւնն, այլ ոչ երբեք գեր 'ի վերոյ քան զքաջութիւն նորա գտաւ բաղդն, մինչև բազմաց յերկբայս լինել՝ քաջագոյն արդեօք թէ բարեբաղդագոյն գտաւ նա։

Յորդ Սիւղղա եկեալ յԱփրիկէ 'ի բանակն Մարիոսի հեծելազօրօք, անհմուտ և անփորձ մարտի, 'ի սուղ ժամանակի յաջողագոյն քան զամենեսեան գտանէր։ Դարձեալ զի և քաղցրութեամբ վարէր ընդ զօրականսն, առատաձեռնէր խնդրողաց, և բազմաց ևս ինքնայօժար տայր, և դժկամութեամբ ընդունէր բարերարութիւնս, և փութայր 'ի հատուցումն նոցին առաւել քան պարտուց արծաթոյ։ Իսկ ինքն ոչ պահանջէր փոխարէնս բարեացն, այլ գուն գործէր առաւելագոյնս իւր շնորհապարտս կացուցանել։ Ընդ նուաստագոյնս զիջանէր խօսել զկարևորաց և զզբօսանաց․ 'ի վաստակս, 'ի չու և 'ի պահ կանխէր ընդ նոսա․ և ոչ երբեք որպէս փառամոլութեան է սովորութիւն՝ զբդեշխէն կամ զայլմէ ումեքէ չարախօսէր․ բայց միայն չներէր ումեք խորհրդով կամ քաջութեամբ զերազանցել զիւրև, և քան զբազումս վեհագոյն գտանէր․ որովք ընդ հուպ Մարիոսի և զօրականին սիրելի եղև։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ

---

## ՋՈՒԳԱԿՇԻՌ ԿԵՍԱՐՈՒ ԵՒ ԿԱՏՈՆԻ

Արդ զուգահաւասարք գոգցես սոքա յազնուականութեան, 'ի տիս և 'ի պերճախօսութեան, նոյն և 'ի մեծանձնութեան, հանդիսապատիւ և 'ի փառս. սակայն այլ և այլ ճանապարհաւ։ Կեսար բարերարութեամբքն և մեծագործութեամբ երևելի. արդարակերով կենօքն Կատոն։ Նա գթութեամբ և հեզութեամբ պանծալի. սա անաչառ խստութեամբ յաւելեալ զանձին պատիւ։ Կեսար սփռելովն, և նպաստելով. Կատոն ճշդելով փառս ստացեալ։ Մին ապաւէն չուառաց, միւսն թակն կոշկոճիչ գլխոց անօրինաց։ Նորայն ներող քաղցրութիւն, և սորայս անվկանդ հաստատութիւն պանծալի լեալ։ Հակիրճ ասել, Կեսար կիրթ 'ի վաստակս և 'ի տքնութիւն, խնամոտ զգործոց բարեկամաց և զիւրոցն անփոյթ, առատաբաշխ յարժանաւորս, ցանկացող մեծի իշխանութեան, զօրավարութեան և նորանոր պատերազմաց՝ ուր շքեղ փայլէ առաքինութիւն. իսկ Կատոն սիրող համեստին և վայելուչ կարգաց, այլ յոյժ առաւելեալ 'ի խստութեան, ոչ ընդ ճոխս ճոխութեամբ, ոչ ընդ խազմարարս կռուով, այլ ընդ արս քաջակորովս՝ առաքինութեամբ, ընդ համեստս՝ ցածութեամբ, ընդ անմեղս՝ ժուժկալութեամբ մրցէր. զլինելն լաւաբարոյ քան զերևել՝ նախամեծար ընտրէր. որչափ չէրն փառախնդիր, նոյնչափ ևս զհետ նորա յորդէին փառք։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ

---

## ՊՈՄՊԷՈՍ

Պոմպէոս՝ գերաշխարհիկ լաւութեամբ, անստգիւտ ուղղութեամբ, աննիազ 'ի ճարտարխօսութենէ, ցան-

կացող փառաց իշխանութեան, հրաւիրանաւ և ոչ հետամտութեամբ: Ի պատերազմի՝ զօրավար քաջափորձ. 'ի խաղաղութեան՝ քաղաքացի ամենայնիւ համեստ, ցորչափ չէր նմա ուստեք երկիւղ՝ ունելոյ զոք հաւասարորդ: Ի բարեկամութեան անյեղլի. յընդունելութեան արհամարհանաց ոչ անողոքելի. յանդրէն հաշտութեան ամենայն իրօք հաւատարիմ. 'ի լինել առ նա հատուցման՝ կարի դիւրալուր: Յիշխանութեան իւրում ոչ երբեք կամ դուն ուրեք վարեալ անչափութեամբ: Գոզցես յամենայն մոլութեանց անմասն, սակայն թէ ոչ ընդ նմա մեծագոյնս գրեցի, 'ի քաղաքի որ ազատն է և ազգաց տիրուհի, յորում և ամենայն քաղաքացիք իրաւամբք են հաւասար, գժդմնութիւնն 'ի տեսանել զոք իւր զուգապատիւ:

ՎԻԼԼԷՅՈՍ

---

## ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ ՅՈՒԳՈՒՐԹԱՅ

Իբրև յարբուն եհաս Յուգուրթ, արութեամբ մարմնոյ, վայելչութեամբ կերպարանաց, և մանաւանդ զօրութեամբ հանճարոյն մեծապէս փայլեալ, ոչ 'ի շուայտութիւն և 'ի դատարկութիւն անձնատուր գտանէր, այլ ըստ բարուց ազգին 'ի հեծելութիւն, յաղեղնաւորութիւն և 'ի ձիարշաւս ընդ հասակակիցս իւր մրցէր. և թէպէտ զամենեսեան գերազանցէր փառօք, սակայն ամենեցուն սիրելի էր: Դարձեալ և յաճախ յորս հեծանէր. զառիւծունս և զայլ գազանս առաջին կամ ընդ առաջինս վիրաւորէր. բազումս գործէր սակաւ պարծելոյ: ...Յուգուրթ, այր ժիր և խորագէտ, խելամուտ լեալ բնաւորութեան Պ. Սկիպիոնի՝ որ զօրավարէրն յայնժամ Հռովմայեցւոց, և 'ի վերայ հասեալ գնացից

թշնամեացն, մեծաջան և մեծափառատակ. հզօր, յամենայնի և դիմադրաւ ՚ի վտանգս, ՚ի սուղ ժամանակի յայն հռչակաւորութիւն եհաս, մինչև մերոյն սիրելի և Նումանտացւոց ահընկէց գոլ։ Եւ որ արդարև դժուարին է յոյժ, քաջ ՚ի պատերազմի և հանճարեղ ՚ի խորհուրդս էր. յորոց առաջինն՝ ՚ի քաջութենէ ՚ի յանդգնութիւն, և երկրորդն՝ ՚ի զգուշութենէ յերկիւղ զբազումս սովոր է արկանել։ Վասն այսորիկ Սկիպիոն ՚ի բազում գործս զՅուգուրթ յառաջ վարէր, ընդ բարեկամս զնա ունէր, և օր ըստ օրէ յաւելոյր ընդ նմա ՚ի մտերմութիւն. զի բանք նորա և գործք ոչ ընաւ վրիպէին։ Յորոց հանդերձ և մտացն ազատականութեամբ և առատութեամբ հանճարոյն զբազումս ՚ի Հռովմայեցւոց սիրով բարեկամութեան յինքն յանկուցանէր։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ։

---

## ՄԱՐԻՈՍ

Ի բազմաց հետէ տենչ հիւպատոսութեան տագնապէր զնա. և առ այս՝ բաց յազնուականութենէն ոչ ինչ պակասէր նմա. զի էր աշխոյժ, արդարակորով, քաջահմուտ ՚ի զինուորութեան, գոռ ՚ի մարտի, սակաւապէտ տունին, անվկանդ ՚ի գրգանաց և ՚ի ճոխութեանց, փառաց եւեթ ցանկացող։ Քանզի ծնեալ և սնեալ յԱրպինոն, իբրև յարբունս և ՚ի հասակ զինուց ժամանէր, դարձոյց զաչս ՚ի զինուորութիւն. ոչ ՚ի յունական պերճախօսութիւն և ոչ ՚ի քաղաքական փափկութիւնս վարժեալ, ՚ի բարւոքն և յառաքինի ճարտարութիւն զարգացաւ ընդ հուպ ոգի նորա անեղծ։ Վասն որոյ յառաջնումն անդ նուագի ՚ի խնդրել նորա զզինուորական տրիբունութիւն ՚ի ժողովրդենէ, թէպէտ

Digitized by Google

և անծանօթ էր բազմաց երեսք, համբաւոյն ևեթ ան-դէն հասանէր խնդրոյն: Եւ այսպէս յառաջնակալութենէ անտի յայլ առաքինութիւնս հետզհետէ ամբարձեալ, այնպէս մինչ փորձէր յիշխանութեան՝ զի մեծագունին ևս համարէր արժանի: Բայց առ ինքն այր պայազատ՝ չիշխէր թերևս ածել զայնր իշխանութեան, յոր այսպէս փառաւո-րութեամբն զիմեաց գահավէժ: Զի թէպէտ զայլ առե-նախօսս ուսմինն ընտրէր; այլ զբարեխնամութիւն ազնուա-կանս իւրեանց աւանդէին. և ոչ ոք յանտոհմից, թէպէտ ականաւոր և փառաւորագոյն երևելի, արժանի դատէր այնմ պատուոյ, իբր սուտերածս զնովաւ ածելով:

ՍԱՂՈՒՍՏԻՈՍ

---

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Անդ տեսի զԱղեքսանդր, զայն՝ որ այսպէս ելից զերկիր զարմացմամբ և ահիւ: Էին նորա աչք ուժգ և տաք, և ահագինն 'ի բազում պատերազմունս պայծառացեալ էր. և 'ի Քերոնեայ ճակատամարտին բեկեալ և 'ի փախուստ դարձուցեալ էր զաջոյ թևն բանակին թշնամեաց. որ 'ի գեղ դիմաց նորա շուք մեծ յաւելոյր յաղթութիւնն այն:

Ցիւք կերպարանաց նորա համեմատք, դէմն երեսացն պայծառ և կարմիր, արծուենգն, աչեղ և հրաչեայ. հերք նորա խարտեաշ և գանգուր. բարձրապարանոց, և փոքր ինչ յահեակ կոյս գլուխ նորա հակեալ. հասակ միջահասակման՝ նրբաւարտ և ուղղորդ. մարմին բարեյօդ և 'ի համապազօր հրահանգս կազդուրեալ. այլ և թեթևընթաց զնա առեն զօլ, և կազմիկ յայտ 'ի հանգերձս: Եւ եմուտ նա յԱթէնս հեծեալ 'ի ձի անհրապարանոց, որ Ցլագլուխն կոչէր, ոչ ուրուք յառաջ քան

զնա նուաճել կարացեալ զերիվարն զայն, և որոյ երեքտասան քանքար էին գինք։

Ամենայն ուրեք այնուհետև զԱղեքսանդրէ ճառս արկեալ խօսէին. տրտմութիւն չեթող ինձ անձամբ հետազօտել զնա. այլ հարցի զնմանէ զոմն աթենացի՝ որոյ բազում ժամանակս լեալ էր 'ի Մակեդոնիա, և ասաց ցիս։

Ընդ բազում հանճարոյ և աջողութեան մտաց բերէ նա յանձին ուսումնասիրութիւն անյագ, և ախորժակս արուեստից՝ որոց նպաստէ, թէ և անծանօթ գոլով այնոցիկ։ Սիրելի է կենակցութիւն նորա, հեզ և հաւատարիմ բարեկամութիւն, և իղձք նորա և խորհուրդք ազնուականք։ Բնութեանն տնկեալ 'ի նմա զբողբոջս ամենայն առաքինութեանց, Արիստոտէլ ուռճացոյց զնոսա իմաստիւք. Այլ ընդ այս ամենայն բարեմասնութիւնս՝ բռնանայ 'ի նմա ախտ աղիտաբեր նմին, գուցէ թէ և բոլոր ազգի մարդկան. զփառամոլ իշխանասիրութիւնն ասեմ, որ տագնապէ զնա զցայգ և զցերեկ, և այնպէս ակներեւ 'ի հայեցուածս նորա, 'ի շարժուածս, 'ի խօսս և 'ի վարկպարազի իսկ գործս երևեալ, զի զմատուցելոցն առ նա պատկառանք և երկիւղ զրաւեն զօգիս։ Ցանկայ նա միահեծան իշխել ընդ տիեզերս, և զգիտութեանց մարդկայնոց յինքն եւեթ բովանդակել զգանձս։ Տենչ փառաց, և բնաւ ամենայն պայծառ բարեմասնութիւնք հօրն զարմանալիք՝ երևին յորդին. այլ այս եւեթ ընտրութիւն կայ 'ի միջի, զի 'ի մին բարեխառնին այլովք բնաւորութեամբքն, իսկ 'ի միւսն հաստատութիւն զառածանի 'ի յամառութիւն, փառասիրութիւն 'ի խելայեղութիւն, և արիութիւն 'ի կատաղութիւն։ Զի ամենայն կամք նորա անդարձք իբրև զճակատագրին սահման, խուժեն ընդդէմ խափանաց՝ հանգոյն ուղխից յարուցելոց ահագին խոխոջիւք զժայռիւ, որ ընդդէմ հոսանաց նոցա կայցէ։

Փիլիպպոս այլևայլ հնարս 'ի կիր արկանէ առ 'ի հասանել յուշ նպատակին. իսկ Աղեքսանդր զսուսեր մի-

Digitized by Google

այն. Փիլիպպոս ոչ ամօթ համարի 'ի խաղս ոլիմպիականս յաղթել տինլքոր ոստխաց. իսկ Աղեքսանդր ընդ թագաւորս եւեթ կամի անդ ստոխել: Թուի բնութեանն իսկ ազդել առաջնումն՝ զի ճգամբք յայն բարձրութիւն հասանել է, իսկ երկրորդին՝ զի 'ի ծոց մեծութեան է ծնեալ: Նախանձաւոր հօրն, ցանկայ գերազանցել զնովաւ. և 'ի նմանութիւն Աքիլլեայ նկրտեալ, ջանայ հաւասարել նմա: ԶԱքիլլէս համարի վեհ 'ի դիւցազունս, և զՀոմերոս վեհ 'ի քերթողս, այնու՝ զի անմահացոյց զդիւցազնն: Զնախատիպին զոր ընտրեաց իւր՝ զբաղում ինչ տիպս նմանութեան բերէ նա յանձին. զնոյն բղունութիւն բարուց, զնոյն տատկութիւն 'ի մարտս պատերազմի, և նոյն զգացումն սրտի: Երանէր նա ուրեք զԱքիլլէս քան զամենայն մարդիկ, զի բարեկամ այնպիսի եղև նմա Պատրոկլ, և գովասան այնպիսի Հոմերոս:

ՊԱՐԹԵԼԸՄԻ. Ուղևոր. Անաքարսեայ:

---

## ՊԵՐԻԿԼԷՍ

Ցառաջագոյն գիտաց Պերիկլէս զի ազնուատոհմութիւն և մեծութիւնք մատուցանէին նմա իրաւունս և կասկածելի առնէին զնա. 'ի վերայ այսորիկ և միւս ևս երկիւղ էր նմա: Ծերք՝ որոց ընդ Պիսիստրատեայ ձգեալ էր զկեանս՝ 'ի նա ինքն կերպարանէին զՊերիկլէս անդէն 'ի մանկութեանն, և թուէր նոցա զձայն Պիսիստրատեայ և զնոյն նորին ճարտարխօսութիւնն լսել 'ի բարբառ Պերիկլեայ. և զիա՞րդ մարթէր տալ անտես առնել նոցա զայնքան նմանութիւնն հանդերձ այլովք բարեմասնութեամբքն: Վասն այսր ամենայնի Պերիկլէս զառաջին հասակն ետ յուսումն իմաստասիրու-

թեան, ոչ խառնելով 'ի յանձնաձանս իրաց աշխարհականս, և ոչ այլ ինչ փառասիրելով՝ բայց զանուն քաջութեան։ Յետ Արիստիդեայ մեռանելոյ և աքսորանացն Թեմիս-տոկլի, Կիմոն զերասանակս 'ի ձեռն էառ ուղղութեան աշխարհին. Այլ 'ի սակս արշաւանս պատերազմաց՝ թողոյր զվստահութիւն Աթենացւոց սպարտացւոց յայս 'ի հետամա-ակց. զի ոչ որ 'ի նոցանէ բաւական էր յինքն հաստա-տել զայն։

Զայժմանեայս յայնժամ Պերիկլէս երբեմն 'ի մարզ-կանէ և հրաժարեալ 'ի զբօսանաց, զամենեցուն յինքն ձգելով զուշ՝ հանդարտ գնացիւքն, պարզասանօք, հա-մեստութեամբ և անաղարտ վարուք։

Եւ նա 'ի հասանել ժամանակին 'ի բեմ, և ընդ նախ-ընծայ փորձ ճառիցն զարմացոյց զԱթենացիս. քանզի բարեձևաւորին հասեալ 'ի բնէ՝ զօրով ճոխարան քան զա-մենայն մարդիկ, վեհագոյն 'ի ճարտարախօսս Եղլադայ եկաց ջանիւ։ Վարժապետք քաջք որ դաստիարակեցին զնա 'ի մանկութեան, նոքին դարձեալ օգնական լինէին նմա խրատուք՝ ներածելով զնա 'ի խորս բարոյականին և օրինաց քաղաքավարութեան. և զամենայն գիտու-թիւնս նոցա գրաւէր յինքն հանճարովն։ Աստի խորու-թիւն ճառից նորա և լիակատար հմտութիւն. անտի ուժգնութիւն բանիցն, զոր մեղմէրն ըստ պատշաճի. աստի վայելչութիւն նոցին, զորմէ ոչ երբեք անփոյթ առնէր, վճարեալ յամենայն բանաքրօս մանուածոյ և 'ի ձևոյ. աստի և այլ ամենայն հանգամանք բանից նո-րա, որովք համոզէրն և զայնոսիկ՝ զորոց չյաղթահարէր զմիտս, և զհետ բանիցն իւրոց առեալ ձգէր՝ զորս չյաղ-թահարէրն իսկ և չհամոզէր։

Էր 'ի ճառս նորա վսեմութիւն ինչ ահեղ, յորմէ ընկճէին միտք. և այն արգասիք էին կենակցութեան նորա ընդ Անաքսագորայ իմաստասիրի, որոյ զէիցս և զգաղտնեաց սոցա պարզելով նմա զօրէնս՝ զգերիմաստ միտս նորա երևի և եւս վերամբարձեալ։

Digitized by Google

Այնչափ հնազանդ զարմանալի էր ճարտարութիւն նորա 'ի բանավիճելս զհակառակորդսն, եւ 'ի խոյս տալ 'ի բանաւորութենէ նոցա, վարժեալ 'ի Զենոնէ իմաստասիրէ եղէացւոյ, որ 'ի պատ, 'ի պատ դարձուածս բանից ածէր մոլորեցուցանէր զնոսա՝ առ ուսուցանելոյ նմա զգուշացի էր փախուստ։ Նմին իրի մի 'ի հզօր ռոտխաց նորա ասէր. Եթէ զգեստաւորեալ արկից զնա ընդ իւր, նա զհակառակս կարծեցուցանէ մարտախօսացն՝ կանգուն կալ յառաջն անդրադարձելի։

Բայց Գերիկլէս քանզի քաջ խելամուտ էր բնաւորութեան ազգին, զամենայն յոյս իւր եդ 'ի ճարտարխօսութիւն. և զճարտարախօսութեանն եւս քաջ գիտելով զկարգ, առաւել քան զամենեսին փոյթ ունէր այնմ։ Մինչ չև երեւեալ յատեան՝ յուշ առնէր անձին զի առ ատենադպրաց մատչէր խօսել, առ Ցոյնս, և առ Աթենացիս.

Եւ որչափ մարթէրն՝ խորշէր 'ի բեմէ. քանզի հանապազ գոլն գործեալ 'ի ծայր բարձրութեան յուշիկ 'ի վէր ելանել, երկնչէր թէ գուցէ յաղթանակք զյաղթանակս մեծաց՝ կարի վաղ զզարմացումն ժողովրդեանն հատուցեն 'ի ծագ անդր, որում էջք յաջորդեն։ Բայց ժողովուրդն ածէր զմտաւ, զի ճարտարախօսն՝ որ յանշուշտ զգօնութենէ խոյս տայր, կարի իսկ արժանի էր հաստատամտութեան՝ զոր ոչն խնդրէր, և զի հարկ էր կարեւոր գոլ իրացն ճառելոց 'ի նմանէ, որ ստիպէին զնա լուծանել զլռութիւն։

Ցոյժ զարմացոյց նա զԱթենացիս և տիրական իշխանութեամբն 'ի վերայ կրիցն։ Տարաժամեալ երբեմն ժողովոյն մինչև ցգիշեր, և ուրումն 'ի ռամկէն խափանելով ստէպ թշնամանօք զճառս նորա, և նախատինս զհետ նորա ձգելով՝ մինչ գնայրն 'ի տուն, նա հանդարտ և անխռով պատուէր եստ միում 'ի ստրկացն՝ ջահ առեալ նորա ածել, և ընդունել զնա 'ի տուն իւր։

Եւ զի երկարեմ. իբրև տեսանէր ժողովուրդն ամե-

նոյն ուրեք ոչ միայն զհանճար նորա, այլ և զառաքի-նութիւն ըստ տեղւոյն և ըստ ժամանակին, այլ զմեծամե-ձուց ժամանակացն յանձին բերէր զհանդարտութիւն և զանկաշառութիւն, 'ի յանձնառութեան իւրոց [illegible]-հին՝ անտեսութիւն անձին և ուղղութիւն ձեռնականի, և 'ի զօրավարութեան՝ փոյթ և զգուշութիւն չափաւոր, 'ի բաղդն ապաստան, և զանձն մատուցանել, զնել 'ի կրկնա-քան 'ի վտանգ արկանել զփրկութիւն աշխարհին. զայս ամենայն տեսեալ ժողովրդեանն՝ խորհէին 'ի մտի, զի որ զզօրութիւնս և զնախատինս արհամարհէր, և զմե-ծութիւնս և զաւելին քան զկարևորն նշխարս ինչ ան-տես առնէր, հարկ էր նմա այնպիսի ունել ստամոքս հայրենասիրութեան, որ խափանէր 'ի նմա զայլ կիրս, կամ 'ի մի յայն տենչ զամենայնն ժողովէր։

Այս պատրանք առաւել քան զամենայն ինչ զօրա-ւորեցին եղեն Պերիկլեայ 'ի բարձրութիւնն. և զիարդ նա զամս իբր քառասուն ունել 'ի պատրանսն զազգ իմաս-տուն՝ վրէժխնդիր իշխանութեան իւրոյ. և որ ոչ ինչ ընդհատ դիւրատազդուկն էր ընդ զարմացումն քան ընդ հնազանդութիւն։ Բայց 'ի սկզբանն ոչ ամենայն ժողովուրդն յարեալ էր 'ի նա։ ...Փայփայելով զամ-բոխն՝ նուաճեալ զնոսա, նուաճեաց առաւ և զամբոխն՝ սանձահարելով զանձնահաճ կամս նորա, մերթ անդր-ջանելի խստութեամբ, մերթ հանճարեղ խրատուք և մերթ ողոքանօք ճարտարխօսութեանն։

Ամենայն ինչ ըստ կամաց նորա գործէր, և ամենայն ինչ ըստ օրինադիր կարգաց կատարէր յերևելոյն. և ազատութիւն յեցեալ անկասկած 'ի պահպանութիւն ձևոց հասարակապետական կարգաց, ընկճէր յանդգնա-տեց ընդ աջողութեամբ մտաց։

Բայց Պերիկլէս ըստ զօրանալ իշխանութեանն՝ նուա-զագոյն զաստ 'ի կիր արկանէր և զուն ուրեք երևէր։ Մենացեալ առտնին ընդ ազգականս իւր և ընդ բարե-կամս, հսկէր 'ի հեռուստ 'ի վերայ ամենայն իրաց, մինչ

դեռ ամենեքին կարծէին պատրաստեալ զնա 'ի խաղաղել կամ 'ի կերպարանափոխ առնել զաշխարհն: Աթենացիք անդիմադարձք զօրութեան՝ որ դրդէր զնոսա, ակն ածէին 'ի դրդողէն. զի հազիւ երբեք աղերսէր զօգնութիւն նոցա: և բռունք յիմաստս և 'ի բացատրութիւն, 'ի տիպս կերպարանաց վեհագունին դից յանդիման առնէին զՊերիկլէս: Զի 'ի լսելի առնել նորա զձայն իւր 'ի դէպս կարևորս, առէին՝ Արամազդայ աւանդեալ նմա զփայլատակունս իւր և զշանթիս. իսկ արդանեկութեամբ ձեռասուն բարեկամացն գործելով նորա զդուզնաքեայս, դարձեալ Արամազդայ նմանեցուցանէին զնա, իբր թէ 'ի վարել զտիեզերս՝ զթեթև ինչ յոյլս 'ի դից 'ի սպասաւորկաց իւր թողոյր...:

Այլ անփոխանակելի և մեծ քան զամենայն կորուստս եղև մահ Պերիկլեայ, որ յերրորդումն ամի պատերազմին ժանտ ախտիւն վարակեալ՝ զրաւեցաւ 'ի կենաց: Բայց յառաջագոյն դառնացեալ Աթենացւոց 'ի մեծոս չարեացն, և կապտեալ 'ի նմանէ զիշխանութիւնն՝ զատապարտեալ էին զնա 'ի տուգանս. այլ ապա սորջջացեալ նոցա ընդ անիրաւութիւնն, և Պերիկլեայ հաշտեալ էր ընդ նոսա, թէպէտ և տաղտկացեալ ընդ հրամատարութիւն, վասն յեղյեղուկ մտաց ժողովրդեանն, և վասն բազմաց յընտանեացն իւրոց և 'ի բարեկամաց մեռանելոյ 'ի ժանտ ախտէն: Եւ իբրև 'ի շունչ վախճանին հասեալ կայր, և թուէր իսկ մեռեալ, գլխաւորք Աթենացւոց շուրջ կացեալ զմահճօքն՝ սփոփէին զմիմեանս, յիշելով զվաստակս քաջութեան նորա և զբազմութիւն յաղթանակացն: Իսկ նորա յանկարծ 'ի վեր առեալ զգլուխ իւր, ասէ. Յաղթանակքդ այդոքիկ բաղդին են արգասիք, հասարակաց ինձ և այլոց զօրավարաց. այլ ինձ սեփական պարծանք այն են, զի ոչ զոք երբեք 'ի քաղաքայնոց նստուցի 'ի սուգ:

ՆՈՅՆ

## ԱԼԿԻԲԻԱԴ

Վիպագիրք զաթենացւոյ առնս նսեմացուցին զյիշատակ. բայց այլք պանծացուցանեն զնա կարի յիրաւի զերծք յաչառանաց։ Թուի ինձ համահաւաքեալ 'բնութեանն 'ի նմա զհզօրագոյն արգասիս յոռութեան և առաքինութեան։ Տեսցուք զնա արդ ըստ քաղաքավարական մասին, որով ճեպեցոյց զկործանումն պետութեանն. և ապա 'ի ստորև ըստ կենցաղավարականին, որով ետ լրումն զեղծման միաբանութեան մարդկան։ Ազնուատոհմութիւն, փարթամմեծութիւն, չքնաղ կերպարան, ողոք շրթանց հրապուրող, միտք աջողակ և ընդարձակ, և կցորդութիւն ընդ Պերիկլեայ, այս ամենայն նախամասնութիւնք շլացուցին անդէն և անդ զԱթենացիս, և զնոյն ինքն զԱլկիբիադ նախ քան զնոսին։ Ի տիս՝ յորում կարեկցութեան ևեթ կարօտ էր՝ նա և խրատուց, հոյլք փաղաքշաց շնթէին զնովաւ. զարմացոյց նա զվարժապետս իւր հլութեամբն, և զԱթենացիս ցուփ համարձակութեամբն։

Սոկրատայ յառաջագոյն նկատեալ, զի կարի վնասակար քաղաքայնոցն հարկ էր լինել պատանւոյն՝ եթէ ոչ լինէր նա նոցին կարի յոյժ պիտանի, խնդրեաց առնել ընդ նմա բարեկամութիւն. և արար իսկ խնամոտջանիւքն, և մինչև 'ի սպառ եկաց 'ի նմին։ Եւ ապա ձեռն էարկ նա 'ի զսպել զհպարտութիւն պատանւոյն, որ ոչն հանդուրժէր ստորանկել ումեք, և ոչ հաւասարել. և այնպէս հզօր էին ճշմարտութիւն և առաքինութիւն 'ի բերանն Սոկրատայ, մինչև արտասուել աշակերտին ընդ զառածանս իւր, և կրել զձաղանս անտրտունջ։

Ի մտանելն յասպարէզ աւագութեան, եդ 'ի մտի ճարտարխօսութեանն ողոքանօք յաղթել 'ի նմա՝ քան չքով պարգևաց և առատաձեռնութեան. և անց եկաց

ջնա 'ի բեմ: Դոյզն ինչ թերութիւն լեզուին զշնորհս իմն անպաճուճառ ասաչոյ մանկութեան յաւելոյր 'ի բարբառ նորա. և թէպէտ զանգաչէր ուրեք ուրեք 'ի ճառան առ 'ի զառանել զպատշաճ բառան, սակայն ընդ վեհագունից ճարտարախօսացն աթենացւոց 'ի համարի է: Վաղ ուրեմն եւս նա զփորձ քաղաքութեանն. և 'ի գործելոց արութեանց նորա զհանդերձեալն գուշակելով, ակն ունէին ամենեքին՝ կալոյ նորա մի 'ի քաղաց զօրավարացն Եղլադայ: Թողում զհեզութիւն նորա և զքաղցրութիւն և զայլ ևս մասունս բարեաց, որովք սիրելի էր այլոց: Չէր 'ի նմա սառքինութեանն մեծախոհութիւն, այլ քաղաքրտութիւն ազդեալ 'ի գիտութենէ բաւականութեան իւրոյ: Ոչ խոշք և խութք, և ոչ արկածք թշուառութեանց պակուցանէին զնա կամ վհատեցուցանէին. և թուէր իմն նմա այնպէս՝ թէ իցեն ոմանք, որք ոչ վասն այլ իրիք շառնեն զամենայն զոր կամին՝ բայց զի չիշխեն առնել զամենայն զոր կարեն:

Ըստ հարկի իրաց ժամանակին ստիպեալ 'ի տպատաւորել թշնամեաց իւրոյ հայրենեացն, յաղողեցաւ նմա նովին նախամասնութեամբքն վստահացուցանել զնոսա յինքն 'ի սպառ, և վարել զնոսա հանճարեղ խրատուքն: Եւ այս ինչ ուրոյն էր նմա, զի յոր կոյս և ձեռն տայր՝ յաղթանակէր կողմն այն, և ոչ մի 'ի բազում այնչափ յաղթութեանցն նորա նսեմացաւ պարտութեամբ:

Ի յանձանձանս իրաց՝ էր զի զհնարս աշխոյժ և խորախորհուրդ մտացն եւեթ 'ի կիր արկանէր, և էր զի զխորամանկութիւն և զնենգ՝ որ ոչն երբեք պատճառանօք բարեաց աշխարհին են անբասրելի. և այլ ուրեք զհլութիւն, որով կամ առ 'ի տիրել և կամ առ 'ի հաճոյ լինել յերիւրէր զանձն դիւրաւ ըստ իրաց ժամանակին: Ամենայն ուրեք զաչս ամենեցուն յինքն ձգէր, և նուաճէր զվարկ ամենեցուն. զարմացեալ էին Սպարտացիք ընդ սակաւապիտութիւն նորա, և Թրակացիք ընդ շուայտութիւնն. Բիովտացիք ընդ սէր նորա առ-

Digitized by Google

խստագոյն հրահանգս, և Յոնիացիք ընդ յուլութիւն նորա և ընդ հեշտասիրութիւն, և նախարարք Ասիոյ ընդ զեղխութիւն նորա՝ որում ոչ կարէին հաւասարել։ Առաքինագոյն քան զամենայն որ երևէր, եթէ օրինակս ախտից չունէր առաջի. բայց ախտք ձգէին զնա 'ի քարշ, առանց ծառայեցուցանելոյ։ Զօրինագանցութիւն և զզառածանս ախտից համարէր յաղթանակս իւր 'ի վերայ օրինաց և բարուց. և յառութիւնք թուէին 'ի նմա նափառութեան արգասիք։

Նշմարանք ինչ թեթևամտութեան և խոլութեան և անզգաստութեան, երևեալք 'ի մանկութեան նորա և 'ի պարապորդութեան, վաղվաղակի անհետ լինէին 'ի դէպս՝ ուր զգաստութեան և հաստատութեան պէտք էին. յայնժամ զժրութիւն յաւելոյր 'ի խոհականութիւն. և ոչ գողանային գրգանք վայրկեան մի ժամանակի, զոր վասն փառաց կամ առ 'ի շահ ինչ օգտի պարտ էր նմա 'ի կիր արկանել։

Հարկ էր հպարտութեան նորա եթէ վաղ և թէ անագան զառածանել 'ի փառամոլութիւն. քանզի չէր իսկ հնար՝ զի որ գեր 'ի վերոյ քան զայլսն միճակեալ էր 'ի բնէ, և իշխանասիրութեան անձկով մաշեալ, չմտաբերէր 'ի հնազանդեցուցանել իւր զամենեսին՝ յետ ձգելոյ յինքն զզարմացումն ամենեցուն։

Նմին իրի և յամենայն կեանս իւր կասկածելի եղև գլխաւորաց 'ի քաղաքայնոցն. զի կէսք 'ի հանճարոյ նորա, այլք 'ի զառածանացն զանգիտեալ կասկածէին. որով մերթ սիրելի լինէր, մերթ երկիւղալի, և մերթ ատելի ժողովրդեան՝ որ ոչն կարէր հրաժարել 'ի նմանէ. և ամենեցուն զնմանէ կարծիք միշտ 'ի մոլութիւն զակատեալ, մերթ ծայրայեղ ցնծութեամբ փառաց 'ի փառս զնա ամբառնային, և մերթ մոլեգին սրտմտութեամբ 'ի մահ զնա դատապարտէին. դարձուցեալ զնա յաքսորանաց, և դարձեալ վերստին յաքսոր զնա յուղարկէին։ Մարդատեացն Տիմոն յուղւոջ ուրեմն համ-

Digitized by Google

[illegible] դաւանէյր նա 'ի տուն՝ զըրա-
ւնելոյ [illegible] զպմենեցուն զմիտս, և անդր
[illegible] ժողովն, այլ խաղաղութեան
[illegible] ջանայից, որդեակ, և մեծացիր.
[illegible] կացուսցէ ամենայն ժողովրդեան: Նա
այլ [illegible] առանկին, կամէր թագաւորել
նմա [illegible]. այլ նա թագաւորութեամբ ևեթ ոչ
[illegible] և ոչ իշխանութիւն փոքու գաւառի յԱթէնս
[illegible] այլ [illegible]ութիւն մեծ որով մարթէր
[illegible]: Պարտ էր նմա զհասարակապետու-
թիւնն յորում ծնեալն էր՝ ամբառնալ զեր 'ի վերոյ, և
առաջս խոնարհեցուցանել զնա յոտս իւր: Սովին խոր-
հրդով մղեաց նա զԱթենացիս 'ի պայծառ նահատա-
կութիւնս. որպէս զի մինչ զօրաց նոցա նուաճէր զազ-
գս, յանզգաստից զտանէին ընդ նովաւ նուաճեալ:

Բայց նախկին զծղմնութիւն Աթենացւոց ընդ նմա,
երբ անդէն 'ի մուսս ապարիզին խափանեալ զնա,
յայտ արար՝ զի հանճար նորա և խորհուրդք կարի յոյժ
ընդարձակք էին, և ոչ 'ի բարեկենդանութիւն հայրե-
նեացն անկատարք: Արդարև չկարէր Եղլադա, ըստ ա-
ռացուածին, Ալկիբիադս տանել երկուս. այլ յաւելուլ
'ի դէպ է, զի և մին աւելի իսկ էր աթենացւոց:

ՆՈՅՆ

---

## ԱՆՆԻԲԱՂ

Առաքեցաւ Աննիբաղ 'ի Սպանիա. իսկ և իսկ յա-
ռաջին անդ երկուորութեան՝ յինքն յանկոյց զամենայն
զօրականն: Հինաւուրց զօրականք՝ յարուցեալ 'ի մեռե-
լոց համարէին զԱմիլկար՝ և անդրէն առ նոսա դար-
ձեալ. զնոյն նկատէին աչխոյժս 'ի դէմս, զբոց յաչս,

Digitized by Google

զտեսիլ երեսաց, և զգծագրութիւն։ Յետ տաղ ժամանակաց 'ի վերայ անցանելոյ, տարար՝ զի նմանակցութիւն հօրն՝ փոքր եղև 'ի յորդորս զամենեցուն զգլուխ առ ինքն ձգելոյ։ Չեղև երբեք բնաւորութիւն՝ քան զարտաքս յանկագոյն առ երկու ինչ գլխաւորն այլատարազ, հրամայել և հնազանդել։ Վասն որոյ ոչ գիտէին էր որոշել, ո՛ւմ առաւել սիրելի իցէ, զօրագլուխն, եթէ զօրականսն։ Եւ ոչ իսկ Աստրուբալ, յորժամ հարկ 'ի վերայ կայր առնել ինչ գործ մեծի քաջութեան, զայլ ոք ընտրէր զլուխ կարգել. այլ և ոչ զօրականն՝ յայլ ոք զօրավար առաւել վստահէր կամ դիմագրաւէր։ Բազում էր նորա համարձակութիւն մխել 'ի վտանգս, բազում և խոհեմութիւն անդ 'ի վտանգս։ Ոչինչ աշխատութեանց պարտաւէր նորա մարմինն, կամ ընկճէր հոգին։ Ի տօթ և 'ի ցուրտ հաւասար էր համբերութիւն. կերակրոյ և ըմպելեաց՝ կանոնաւոր չափ ըստ բնաւոր փափաքանացն՝ և ոչ ըստ հեշտութեան։ Արթնութեան և քնոյ՝ անխտիր էին ժամանակք 'ի տուէ և 'ի գիշերի. որ ինչ յաւելեալն այր 'ի գործառնութեանցն՝ այն էր բաժին հանգստեան. և այնմ ոչ փափուկ անկողին էր հրաւիրակ, և ոչ լռութիւն։ Բազումք բազում անգամ տեսին զնա զինուորական տառատոկաւն ծածկեալ գետնախշտի խառն ընդ պահապանս և 'ի դադարս զինուորաց։ Հանդերձք ոչինչ առաւելեալք քան զհաւասարիցն. զէնք և երիվարք՝ երևելի էին աչաց։ Ի հեծելազօրու անդ և 'ի հետևակախումբս՝ ամենայնիւ առաջին էր ամենեցուն։ Ի պատերազմի՝ յառաջընթաց, յետ մարտին կատարման՝ վերջին 'ի դարձ։ Այսպիսի և այսչափ առաքինութեանց առնս հաւասարէին և մոլութիւնք մեծամեծք. անգթութիւն տմարդի. հաւատադրժութիւն գեր 'ի վերոյ քան զպունիկեանն. ոչինչ ճշմարտութիւն, ոչինչ սրբազան, ոչինչ երկիւղ աստուածոց, ոչինչ երդումն, կրօն և ոչ մի։ Այսուիկ բնաւորութեամբ առաքինութեանց և մոլութեանց զինուորեցաւ երեամ մի ընդ զօրավարու-

[illegible]

ԼԻՎԻՈՍ

---

## ՊԻԳՄԱԼԻՈՆ

Պիգմալիոն տառապեալ անյագ ընչաքաղցութեամբ, յաղետից յաղէտս որ ըստ օրէ զառածանի, ատելի լեալ ժողովրդեան։ Ոճիր է 'ի զուր ժառանգել ինչս. ագահութիւն՝ խէթ և կասկածանս 'ի միտս արկանէ անգութ բռնաւորին. հալածէ նա զընչաւէտս, և երկնչի յաղքատաց։ Դարձեալ և դժնէագոյն ոճիր՝ առաքինութիւն. զի անհնար թուի բռնաւորին՝ համբերել առաքինեաց ընդ անիրաւութիւնս իւր և ընդ ապիրատութիւնս, և դառնացեալ զգրգռի ընդդէմ առաքինութեան՝ որ դատապարտ առնէ զնա։ Ցուցի տագնապի յամենայնէ. ամենայն ինչ կեղեքէ զսիրտ նորա. զարհուրի 'ի ստուերէ իւրմէ. քուն հատեալ է յաչաց նորա զցայգ և զցերեկ. և առ 'ի պատուհաս յաճախեն նմա դիք զգանձս, յորս չիշխէ վայելել։ Որով իւիք երջանկանալն խնդրէ, նովին իսկ վրէպ յերջանկութենէ գտանի. վշտանայ ընդ տուրսն, երկնչի 'ի կորուսանելոյ զոր ժառանգէն, և Ակի ցանկութեամբ ստանալոյ։

Դուն ուրեք երևի նա արտաքոյ. նստի տխուր միայնակ լքեալ 'ի խորս արքունեացն, բարեկամաց իսկ նորա ոչ իշխելով մատչել առ նա՝ թէ գուցէ լիցին կասկածելի։ Գունդ ահեղ սուսերամերկ տիգաւոր պահակերէ հանապազ զարքունեօքն։ Ինքն 'ի ներքս անդ ամրափակեալ կայ, ուր սենեակք երեսուն հաղորդականք են միմեանց դրամբք երկաթեօք, զորս նիգք աղխեն վե-

ցեալք [illegible] [illegible]. և [illegible] եր-կու անընդմէջ գիշերել նմա չէ [illegible]՝ [illegible] խողխող 'ի Թշնամեաց լինելոյ։ Անծանօթ են նմա քաղցրր բերկրութիւնք, և քաղցրագոյն քան զայնոսիկ բարեկամութիւն. եթէ զուրախութենէ լիցին բանք, մերժեալ համարի զայն յիւրմէ և յանմատոյց 'ի սիրտ իւր։ Աչք նորա խորասոյզք հրացայտք դժնեայք և արիւնըռուշտք՝ յեղյեղեալ յածին շուրջանակի. 'ի սին սօսաւիւն՝ արհաւրաց ականջէ. մահատիպ, նիհար. և 'ի հոգս տըխուրս դէմք նորա հանապազ խորշոմեալ։ Լալ կայ. հառաչէ, և սրտատուչ յոգւոց հանէ, չկարացեալ ծածկել զխիղճ մտացն՝ որ զաղխս նորա կրծեքեն։ Անախորժ են նմա համագամք. որպէս նորա փոխանակ յուսոյ՝ ազդեն 'ի նա տոսկումն. զի Թշնամիս իւր զնոսա ախերթեմս առնէ. չիք կենաց նորա վայրկեան մի աներկեան, և 'ի ճանապարհս արեան այնոցիկ՝ յորոց կասկածէ՝ յերկարաձգէ զկեանս իւր։ Զանձն անմխոն 'ի միտ՝ զի անգթութիւն, յոր ապաւինի, նոյն զնա կորուսցէ. յընտանեաց նորա ոք, հանգոյն նմին կասկածաւոր, փութասցի փրկել զաշխարհ 'ի ձեռանէ մարդակերպ գազանին։

ՖԷՆԷԼՈՆ. Տելեմաք։

---

## ՍԱՒՈՒՂ

Տեսէք աղէ զՍաւուղ 'ի յաջողութեան իւրում և 'ի փառսն։ Ո՞ւմ ումեք գոյր անցուցանել աւուրս առաւել ցանկալիս և երջանիկս։ Ցանձնչան և 'ի տոհմական բախտէ՝ տեսանէր զանձն ամբարձեալ 'ի գահ արքայական. Թագաւորութեան իւրոյ սկիզբն եղեն յաղթանակք.

որդւոց՝ [illegible] թէպէտ յառաջանալ-
վել զխաչն [illegible] խորան. ամենայն ցեղք հաւատացելոց
սպաս · հարկանէին [illegible] նորա և հանդերձ. Եւ բազ-
զմի այր կային նմա հնազանդ: Իսկ այլ իմիք կարօտէր
յերկնաւորութիւն, եթէ [illegible] Աստուծոյ:

Կորոյս զերկիւղն տեառն, և ընդ նմին զհանգիստ
իւր և զամենայն երանութիւն կենացն: Մատնեալ այ-
սոյ չարի և թուլս և այլանդակ մրրկաց փոթորկելոց, ոչ
ևս ոք ճանաչէր զնա, և ոչ ինքն՝ զինքն: Տարիք հովուե
միոյ փոխանակ զբօսուցանելոյ զտխրութիւն նորա, բոր-
բոքէ զմոլութիւնն: Գրաւատիք նորա և յաղթանակք
նուաճեալք 'ի դատերացն Յուդայ, պարսաւ իւն և պա-
խարականք են նմա: Խոյս տայ 'ի մեծարանաց աշխար-
հին և չմարթէ լռուել յանձնէ: Դաւիթ առ ոտս գա-
հուն երևեալ՝ ատելի լինի, և 'ի հեռանալն՝ գիտէ ան-
շուշտ տուաւել ատելութեան պատահել: Խանդաղա-
տեալ ընդ մտերմութիւն նորա՝ զովէ զնա, և քան զնա
մեղաւոր և անիրաւ դատի զանձն. իսկ 'ի վաղիւ անդր
դարան գործէ նմա՝ ըմբռնել և արկանել զնա յարգել:
Դժկամակ լինի և ընդ գութ սիրոյ որդւոյն և 'ի խէթ
կասկածանաց ընդ այն մտանէ: Ամենայն դրանիկք որ-
քունի ջանան խնդրեն՝ թէ իւ քաղցրանայցէ տխուր և
վխատական դառնութիւն նորա. զուր ջան, ինքն իսկ ոչ
գիտէ: Արհամարհեաց զՍամուէլ առ կենդանեաւ մար-
գարէին, և հնարի կոչել զնա 'ի գերեզմանէն և խոր-
հուրդ հարցանել յետ մահուն: Ոչ ևս հաւատայ յԱս-
տուած, և դիւրահաւան գտանի դիւահարց լինել: Ամ-
պարիշտ է, և սնապաշտ. վիճակ՝ 'ի հարևանցի առա-
ցեալ աստանօր՝ յոյժ սովորեալ առ անհաւատս: Խա-
բեբայս անուանեն զՍամուէլսն զմարգարէս առաքեալս
երբեմն առ 'ի յԱստուծոյ. կորով մտաց համարին իմն
արհամարհել զպատկառելի թարգմանս խորհրդոցն յա՛
ւիտենականաց, և ծաղր առնել զկանխասացութիւնսն,
յելից իւրեանց սուտ գեալս. ժխտեն բարձրեալն զգիտու-

թիւն հանդերձելոց, և զկարողութիւն պարգևելոյ զնոյն հաւատարիմ ծառայից իւրոց, և ապա զիջեալ 'ի տկարամտութիւն ռամկին՝ երթան հարցանեն զվհուկն:

ՄԱՍԻԼԼՈՆ. Փոքրիկ քառասնորդք:

---

## ԳՐՈՄՈՒԷԼ

Գտաւ այր մի խորամանգ ծածկամիտ անհնարին, կեղծաւոր բազմահնար որպէս և ճարտար քաղաքական, ձեռներէց յամենայն և գաղտնագործ, 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի ժիր և անխոնջ. որ ոչինչ թողացուցանէր բախտին յորոց կարէրն շորթել 'ի նմանէ հանճարով և յառաջատեսութեամբ. բայց և այնպիսի արթուն և կազմ առ ամենայն, զի ոչ երբեք ապախտ արար զդիպող ինչ ժամու 'ի նմանէ մատուցելով. բովանդակ ասել, մի յանհանդարտ և 'ի ժպիրհ ոգւոց անտի՝ որ թուին ծնեալ 'ի կերպարանափոխ առնել զաշխարհ: Քանի՛ բազմավտանգ է վիճակ ոգւոց այսպիսեաց, և քանի՛ք երևին 'ի պատմութեան՝ որոց յանդըգնութիւն մահագոյժ եղև նոցա: Բայց և զինչ չգործեն, յորժամ Աստուած 'ի ձեռս առնուլ կամիցի զնոսա:

Տուաւ սմա պատրել զժողովուրդս, և յաղթահարել զթագաւորս: Քանզի իբրև ետես, զի յանբաւ խառնակութեան անդ աղանդոց տատանելոց առանց ինչ հաստատուն օրինաց, հեշտութիւն վարդապետելոյ անսաստ և անարգել յամենայն իշխանութենէ յեկեղեցական և յաշխարհական՝ կախարդեալ էր զոգիսն, գիտաց այնպէս ճարտար յանգուցանել զնոսա առ իրեարս, մինչև յայլանդակ շեղջակուտէ անտի կազմել մարմին մի ահաւոր: Իբրև գամ մի գտանէ ոք զմարթանս որսալոյ զխա-

Digitized by Google

ծաղանձն խանձիւ ազատութեան, շատ է լսել եւեթ նմա-
զայնի անուն. այնուհետեւ կուրաբար զհետ ընթանայ։
Սոցա ուր եղեալ յառաջին խնդիրն որ մղեցոյց զնոսա,
երթային միշտ առանց հայելոյ զի 'ի ծառայութիւն եր-
թային, և խորամանգ առաջնորդքն նոցա, որ կամէր և
վարդապետէր և բիւր այլ և այլ դէմս խառնէր 'ի մի-
վարդապետ լինէր և մարգարէ՝ որպէս և զինուոր և զօ-
րավար, տեսեալ թէ այնպէս զուշ և զուրուշ մոգեալ
էր զամբոխին, զի իբրև յաստուածառաք ոմն զլուխ-
հայէին 'ի նա զօրքն ամենայն՝ 'ի պաշտպանութիւն ա-
զատութեան. սկսաւ խելամուտ լինել, թէ մարթէր ան-
դրագոյն եւս վարել ածել զնոսա։

Ոչ ճառեցից ձեզ զամենայն տարապայման յաջո-
ղուածս գործոց նորա, ոչ զհռչակաւոր յաղթութիւնսն
ընդ որ սրտմտեալ կայր առաքինութիւն, և ոչ զերկար-
խաղաղութիւնն՝ որ ապշեցոյց զտիեզերս։

ԲՈՍԻՒԷ. Դամբանականք։

---

## ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ.

Նա ուստի՞ յառաջ գայցեն այլ ընդ այլոյ կարծիք
զթագաւորութենէ Լուդովիկոսի ԺԴի. արքայութիւն մե-
ծափառագոյն քան զայլս ամենեսեան, և որ հաւասարէ
գեղեցկագոյն դարուց հանճարոյ մարդոյն, թէ ոչ և քան
զնոսա գերազանցիցէ, բայց եթէ 'ի մտահաճութեանն
պատրանաց։ Զի զկնի բազմավրդով ժամանակաց ան-
տիական հատակին՝ ամբառնայ Լուդովիկոս յաթոռ ար-
քայութեանն, յորմէ 'ի գերեզմանի եւեթ հասցէ նմա
հրաժարել. քանի՜ սքանչելիք զթագաւորութիւն նորին
պայծառացուցանեն. զի յօժանդակութիւն բարւոյ ժո-
ղովրդոց՝ պաշտպան կայ նա կրօնից աստուածպաշտո-

Digitized by Google

թեամբք պայծառացուցանել զգեղեցկութիւնս, և զհա-
սարակաց անձնութեանն խնամոյ կարգել առհասարակ
հրամանագրովքն, ընդ որ զարդ հիմամբք զորպիսու-
ցանել զգիտութիւնս, զճարտարութիւնս և զարհեստս, զը-
ղագործական զուսումնարանս չափաւորականաց, և ամենայն ու-
րեք հաստատել զարդարութիւն, զօրէնս և զխաղաղու-
թիւն. առ թագաւորութեամբն Նորա պայծառանային
պարծանք Փռանկիոյ՝ ճարտարախօսք և քերթողք, ի-
մաստունք և իմաստասէրք, աստեղագէտք և աշխարհա-
գիրք, և դասք առաքելագործ եպիսկոպոսաց։ Յաւելու
Լուդովիկոս վեց գաւառս ՚ի հայրենական թագաւո-
րութիւնն, և յամուրս ամրականացս զսահմանակցու-
թեանն պարսպէ. ժառանգեցուցանէ թոռին իւրում
զգահն Սպանիացւոց. և յաւելոյթս ծերութեանն խռզա-
խէ ընդդէմ բանութեան դաշնակցացն Եւրոպայ արիա-
սիրտ մեհանձնութեամբ. և անուն Փռանկաց և փառք
մինչև ՚ի ծագս աշխարհի սաւառնեալ ընթանան ՚ի ձեռն
Նորա. մինչև յայտնի լինել ընդ համայն Եւրոպէ գերա-
զանցութիւն մտաց և հանճարոյ զոր ցարդ ազգէ Փրան-
կիս զկնի հարիւրոց ամաց և բազմավրդով յեղափոխու-
թեանց. որպիսի թագաւորութիւն և քանի փառք պար-
ծանաց, զոր վկայել վկայեցին և այնոքիկ որք ոչ կեղա-
կարծք յունկնդրացդ իմոց համարեսցին. զի և չէր իսկ
մարթ հանճարեղիցն արանց պարտաւորք լինել հան-
ճարաչաց դարուն, որպիսիք կացին Մոնդէսքիէօ, Վոլ-
դէռ և Փրէդերիկ։ Իսկ զարդիս յինչ միտս արդեօք
զայնց ժամանակաց բերիցեն մտահաճքդ ինքնապանծք.
յանցանս իմն համարին Լուդովիկեայ զի ոչ արկ ՚ի կիր
զյեղանակս և զտեսչութիւն որ օտարք էին ՚ի Նորա
ժամանակս. մեծապարգեւ յանցիմանեն զքաղաքական
ինչ զառանցանս Նորա և զյանցուածս փառասիրու-
թեանն և զանձնական թերութիւնս՝ զոր ինքն իսկ մեծ-
անձնութեամբն դատապարտէր. և զոր ՚ի սոսկական
ոք այլ չմարթէ պահանջել յամենայնի անպարտաւ զոլ

[illegible] Թագաւորութեանն [illegible], [illegible], զի [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] հարստա-թիւնք, Եւ [illegible] [illegible] [illegible] յաւերժացի ա-նուն Լուդովիկոսի 'ի [illegible] [illegible], և որ գտցեն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Լուդովիկոսի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Աւգոստոսեայ։ Եւ ինձ խնդութիւն մեծ է զի 'ի մե-ծամեծագէտ հրապարակիս առաւ ինձ դէպ և պատեհ յառաջադրել կալ յիշատակի մեծին Լուդովիկեայ. նա ա-ռանձին և [illegible] այս որով զբօսնու [illegible] [illegible]՝ վկայէ ինձ եթէ գոյ և 'ի ձեզ սիրտ հայրենասէր որպէս և յիս։

ՅՐԻՑՕՐՆԱՒՍ. Պաշտ. Քրիս. Հաւատոյ։

---

ՔՈՂՑԷՐ

Բարերանմտիկ պայծառութիւն Թագաւորութեան Լուդովիկոսի ԺԴ-ի, իշխանականն պերճութիւն, և ժողովրդոց բարօրութիւն՝ տային առաւել միշտ գերարուտ մեծագունին 'ի պաշտօնէայս Գաղղիոյ։ Նոքա յայն ծայր պայծառութեան ամբարձան արուեստք, մինչև Լուդովկեայ Թագաւորութեանն լինել գեղեցկագոյն արքայութիւն միահեծան իշխանութեան։ Եւ որ մեծն է և զարմանալի, չնորհեալն առ նոսա նշանաւորն այն հոփանաւորութիւն՝ ոչ արգիւնք միայն էին ախորժակաց խրոց և ծանօթութեան. ոչ զգացումն էր որ սիրելի նմա զարուեստագէտն և գիտնականս առ հասարակ ընծայեցուցանէր, այլ պաշտպան կայր նոցա բարև զայր

մեծամեծեան: քանզի ծանօթ լինել մեր ծնեալ ... գետոց մտածմանց միայն է յարգարել պատկերացուցանել անմահութիւն անձն նոցա: Այս արժանիք անմահացուցիչ պերճաբանեան, որ հաւատար խնամով զխոնարհութիւն եւ պատմագրութիւն 'ի գործ արկանէր. յառաջնոյն առաջնոյ բարեայօրինեալ ինքն մնալ՝ որ ստեղծագործեցին էր նմա, խնամքն զոր ինչ հարկ 'ի մեծայն կարգ նմա տառադարձանակ, անխնայ յաշխ հանճարեղն Եւրոպայի 'ի պատմագրութեան ... նոյ, եւ կամ 'ի Հայաստանի հայրենեաց նախնի . մտաւոր պատմութ. անձնուրան 'ի Հայաստանի: Ոչ որ 'ի գործս ... վիպագրութիւն (Տակիտոս): Ուր առաւել եղեւ եկեղեցի 'ի թուղթեան. ... 'ի մեծահան յերկնից աշխարհի. խոստումն մեծ վերած պատմաբանից:

ՀԷՆՈՂ

## ՋՈՒԳԱԿՇԻՌ ԳՈՆԴԷԻ ԵՒ ԹԻՒՐԷՆԻ

Տեսա՞ն երբեք ուրեք յարս երկուս նոյն առաքինութիւնք 'ի բարս այնքան այլ և այլս, զի մի ասացից հակառակս: Մին գործել թուի խորախորհուրդ հանճարով, միւսն յանկարծածագ լուսաւորութեամբ. ուստի սա առաւել եռանդնոտ, բայց առանց հրոյն իւրոյ շտապիչ լինելոյ. իսկ նա ցրտագոյն իմն, այլ առանց երբեք տարտամութեան. քան 'ի խօսել՝ առաւել 'ի գործելն խիզախ. թէ և տատանեալ ինչ արտաքոյ, այլ 'ի ներքոյ պինդ և հաստատուն: Մին ընդ երևելն 'ի ճակատարս՝ բարձրագոյն իմն տայ կարծիս զիւրմէ քաջութենէն, և նորանշան իմն իրաց տայ ակն ունել. առկայծ կարգաւ յառաջ խաղայ, և ոտն ոտն գայ 'ի նորակերպ ահաւորութիւնս՝ որ զընթացս կենաց իւրոց զարմանալցին. միւսն՝ իբրև հոգեշունչ ոք՝ անդստին յառաջնմէ

ուսզմէն հասանէ 'ի չափ ամենակատար ճարտարապետաց. մին անդուլ և սաստիկ ճգնութեամբ՝ 'ի հիացումն յափշտակէ զազգ մարդկան, և պապանձեցուցանէ զնախանձ. միւսն՝ անգէն 'ի սկզբան այնպիսի իմն յորձակէ շողիւն փայլակնանշոյլ, մինչև չիշխել մախանաց 'ի վերայ երթալ նորա. մին՝ բարձրութեամբ հանճարոյն և չաւատալի հնարիւք արութեան՝ ամբառնայ զեր 'ի վերոյ ամենայն վտանգից, և 'ի դրժանաց իսկ բախտին հանէ իւր օգուտ. միւսն՝ առաւելութեամբ բարձրաշուք զարմին և մեծազանց երկնառաք խորհըրդովք, և սխրալի իմն բնածին բարուք՝ որ անծանօթ մարդկան է գաղտնիք, ծնեալ Թուի ձգել ածել զբախտըն զհետ կամաց սրտի իւրոյ, և ստիպել տագնապել զճակատագիրսն։

Եւ որպէս զի յարող երկոսեան տեսցին միշտ նկարագիրք մեծամեծք, բայց այլ և այլք, մին 'ի յեղակարծ հարուածոյ խլեալ՝ մեռանի 'ի վերայ աշխարհին՝ իբրև զՅուդայ ոմն Մակաբեան. կծծի զնա բանակն որպէս զհայր իւր. արքունիքն և ժողովուրդն ամենայն հեծէ. բարեպաշտութիւն իւր գովի զոյգ ընդ արութեանն, և յիշատակ նորա ոչ խամրի ժամանակաւ։ Միւսն՝ ամբարձեալ զինուք 'ի ծայրս փառաց հանգոյն Դաւթի, մեռանի 'ի մահիճս իւր՝ քարոզելով զգովութիւնս Արարչին, և խրատելով զազգատոհմն, և Թողու զամենայն սիրտ լի պատարուն փառօք կենացն և քաղցրութեամբ մահուն իւրոյ։ Որպիսի՛ տեսիլ հայել և նկատել զերկոսին սրող, և 'ի միտ առնուլ 'ի միոյ միոյ յայնցանէ զարժանաւոր յարգանս միւսոյն։

ԲՈՍԻՒԷ. Դամբանականք։

## ՆԱՓՈԼԷՈՆ ՄԵԾՆ

Նափոլէոն Պոնափարթէ դիւցազն է մերոյս ժամանակաց. և յորժամ դիւցազն ասեմ, ըստ նախնեացն առաջնոց իմանամ ես, այր հանգունատիպ վեհիցն այնոցիկ՝ որ զաստուածականն գոգցես ընկալան յերկրէ զպատիւ. լցաւ աշխարհ ամենայն գործովք արութեան նորա. անջինջ տպաւորեալ կացին մնացին 'ի միտս մարդկան յիշատակք նորա ազգաց յազգս, և փառաւորեցան դարուց 'ի դարս. զի մեծամեծս յոյժ գործեցին քան զմարդոյ կարողութիւն, և պատճառս այնու ետուն առասպելեացն ստեղծաբանութեանց. վասն որոյ և յիրաւի է իմաստնոց 'ի կարծիս կասկածանաց անկանել, եթէ արդարև կացեա՞լ իցէ երբեք Հերակլէս ոք և կամ Սեսոստր և Հռոմուլոս, որ ընդ ամենայն տեղիս գովլին հռչակաւ: Եթէ յանկարծ անհետասցին երբեմն ուրեմն կարգք քաղաքականք յերեսաց երից մասանց աշխարհի, և նշխարեալ մնասցեն քերթածք և երգարանք և պատմութիւնք և պատկերք պղնձիք, և դերբուկք աւերակաց, և յընդաղօտ ժամանակս աւերածոցն այնոցիկ հարկանիցի յաչս վիպասանին նոյն և մի անուն արձանագրեալ և 'ի վիմին որ յՍկուրիալ և 'ի մարմարիոնին որ 'ի Կապիտօլ, և 'ի բրգունս որ յԵգիպտոս. նոյն դարձեալ անուն յաւերակս Շէնպրունայ, Փոցտամայ և Քրիմլինոյ, նոյն և ընդ աւազովք անհուն անապատին, ո՞րպէս արդեօք և կամ զիա՞րդ հաւատարիմ լինիցի նմա եթէ միոյ ևեթ աշխարհակալի, միոյ ևեթ միահեծան ինքնակալի իցէ այն անուն, անուն գերագոյն օրէնսդրի և քաջամարտիկ Թագաւորի: Իցէ՞ բնաւ կարծելի տիեզերակալութիւն այսպիսի, և այսգունակ փոփոխութիւն աշխարհիս կերպարանաց 'ի ձեռաց միոյ առն, այսչափ ազգաց այլափոխութիւն, և այսքան ցեղապետութեանց 'ի տասնամեայ ժամանակի քակտումն և հաստատու-

Digitized by Google

թիւն։ Ո՞ք երբեք դիւրահաւան լինիցի այնչափ յաղթութեանց անթուելեաց, այնչափ անհուն աշխարհակալութեանց, միանգամայն և այնչափ բարգաւաճելոյ արուեստից, յարդարելոյ ճանապարհաց, տաճարաց շքեղացելոց, կամրջաց կառուցելոց, ճեմարանաց կանգնելոց, միանգամայն և Անվերսայ պեղելոյ և Ալպեան լերանցն հարթելոյ։ Իսկ զի՞նչ ինչ առել իցէ և զառաւելագունիցն կերտուածոց, զսահմանադրութեանց, ըզմատենից օրինաց և զկարգաց քաղաքականութեան, յորս բովանդակին կեանք և քաղաքավարութիւն ազգաց և ժողովրդոց. և այսուքիկ վաղ ընդ փոյթ զկնի համայնաշխին խռովութեան, և 'ի ժամանակի անդուլ մարտից պատերազմաց անհետ 'ի վերայ եկելոց։ Եւ ո՞վ ոք պանծացի 'ի մի միաբանութիւն ածել ընդ այնչափ արութեանն և զկործանումն ահագին, ընդ այնչափ փառացն զթողուլ լքանել 'ի մարդկանէ. այլ և 'ի լքանել անդ՝ զտագնապ թագաւորաց, և զդաշնակցութիւն Եւրոպայ համօրէն՝ առ անձանց զգուշանալոյ յերեսաց միոյ ևեթ առն, զՈվկիան ինքնին նմին կարգեալ պահանորդ. քանզի և ոտնփոխ մի նորա շատ էր 'ի տատանել զաշխարհս. զարտասահմանութիւն նորա 'ի վէմն ապառաժուտ հանդէպ Ադամաստորայ հսկային, և ըզտագնապ մահու նորոյն Պրոմեթեայ, որք առհասարակ զնախնեացն առասպելեաց քան թէ զպատմութեանց բերեն զկերպարանս։ Որպէս արդեօք 'ի գրի հարցեն պատմաբանք ժամանակաց զմահ Նափոլէոնի զանյայտն և զանզօր՝ հանգոյն ծննդեան նորին. ուր և զկնի բազմամեայ ժամանակաց այնչափ հզօր է անուն նորա, մինչև մեծացուցանել զայր՝ որ զնա մեծարիցէ, և կազդուրել զթագաւոր՝ որ 'ի գլուխ անցեալ ժողովրդոց բազմաց մատչի 'ի պատուել զանդրին կանգնեալ վասն նորա. ուր և նոքին իսկ, որ 'ի վաեր ընդ նմա եկին՝ ելևելս զմիմեամբք առնեն 'ի պահպանել զյիշատակ նորա, իբր զմրցանակ յաղթութեան և իբրու զէն և զասպար.

Digitized by Google

հանգոյն գոգցես նահապետացն Հելլենաց՝ որ զզէնսն Աքիլլեայ առ 'ի միմեանց կորզէին։ Հոմերական է առատանօր ամենայն. ամենայն ինչ ահագին, ամենայն ինչ զարմանալի է յաչս առն, որ դէտակն կալեալ ուշ ունիցի ընթացից կենաց քաջիս անդատին 'ի կղզւոյ անտի, յորում խանձարրեցաւն՝ մինչև 'ի կղզին յոր զթաղումն ընկալաւ. արդարև վարսամ գեղափայլ և ահարկու, որ առ 'ի ծագելոյ յարևելս և յարևմուտս առհասարակ, 'ի խորոց ծովու 'ի վեր ամբարձեալ՝ 'ի նոյն դարձ առնէ խորասուզեալ։

ՍԱԼՎԱՆՏԻ

---

## ՀՈՄԵՐՈՍ

Այսպէքն սկիւթականիս անկիրթ զգայարանաց անզգալի իսկ է բազում ուրեք հոմերական տաղիցն ներդաշնակութիւն՝ որ զմայլեցուցանէն զՀելլէնս. բայց սակայն հիացեալ զարմանամ, մինչ տեսանեմ զնա բարձրաթռիչ որպէս թէ ընդ երկինս սաւառնեալ՝ բոցատիպ ակամբ դիտելով զառ 'ի յերկրէքս, և որ ինչ 'ի նոսա հուր կամ երփն երփն փայլեն երանգք՝ յինքն ժողովելով, մինչ տեսանեմ զնա մերթ առընթերակաց աստուածախումբ դիցն ակմբի, և մերթ զի քննէ զսիրտս և զերիկամունս մարդկան։ Է զի բազմահնար 'ի գիւտս, և գեղով էիցս զուարճացեալ, ոչ ևս կարելով բերել յինքեան զհուրն ծախիչ՝ ծաւալէ զայն 'ի նկարագրութիւնս իւր և 'ի բացատրութիւնս. և է զի զերկինս ընդ երկրի համախմբէ 'ի կռիւ, և զկիրս ընդ միմեանս, և փայլատակմանբք հանճարոյն շլացուցանէ զմիտս, և յափշտակէ զայն ցոլիւք իմաստիցն՝ որ բուն վսեմքն իսկ են, և այնպիսի ազդմունս տպաւորէ 'ի խորս սրտի, ու-

Digitized by Google

րովք Թուի զեղուլ և ընդարձակել զայն։ Զի յայսոսիկ մանաւանդ փայլեն գերազանցութիւնք քերթողիս. շունչ իմն և հոգի տալ ամենայնի, և զյոյզս անդադարս կրից խորոց ազդել յայլս. արբանեկեցուցանել բռնագունին 'ի կրից զամենայն, և զյարձակմունս նորա և զզառածանս և զզառանցանսն հետազօտել. հանել զնա մինչև յամպս 'ի վեր, և յորժամ պէտք իցեն՝ 'ի վայր կործանել զնա զօրութեամբ իմաստից լաւութեան և առաքինութեան, զօրէն իմն բոցոյ հրաբուղխ լերին՝ զոր հողմն անդրէն 'ի վայր 'ի վիհսն մղիցէ. քաջ 'ի դէմս ածել ընկարագիրս աւագաց, և զանազանել 'ի միմեանց զիշխանութիւն, զկորովութիւն և զայլ ևս իւրաքանչիւրոյն քաջամասնութիւնս, ոչ անճաշակ ինչ և տաղտկալի ստորագրութեամբ՝ այլ 'ի հզօր և յարագ շարժուած երփնունակ գրչի, կամ նորանոր ստեղծիւք մտաց անխնամաբար իմն 'ի քերթածսն անդ սփռելովք։

Վերամբարձեալ ընդ նմա յեթերս, նկատեմ անդ զԱստղիկ կամարաւն՝ ուստի անսպառ բոցք տարփանաց հատանին, իղձք ապաժոյժք, ողջք հրապոյրք, և շըրթունք և աչք զօշոտիչք։ Նկատեմ անդ զԱթենաս և զսրտմտութիւնս նորա յայծենական ասպարէն՝ զորմէ կախին Արհաւիրք և Հերձուածք և Բռնութիւն, և զարհուրելւոյն Գորգոնայ պակուցանողական դէմք։ Անդ Արամազդ և Պիսիդոն հզօրագոյնք՝ 'ի դիս. բայց Պիսիդոն երեքարձենիւն շարժէ զերկիր, իսկ Արամազդ յօնիւքն ևեթ ակնարկութեամբ դղորդեալ սասանեցուցանէ զՈլիմպոս։ Իջանեմ յերկիր, և անդ Աքիլլէս և Էաս և Դիոմեդէս ահաւորագոյնք 'ի Հելլէնս. բայց Դիոմեդէս խուսէ յերեսաց տրովական բանակին. Էաս յետ բազում դիմամարտութեան ապա տայ տեղի. իսկ Աքիլլէս երևի ևեթ, և յերեսաց նորա հալածին Թըշնամիք։

ԲԱՐԹԵԼԸՄԻ. Ուղևոր. Անաքարսեայ։

### ԵՍՔԻԼԵՍ

Եսքիլոս ընկալաւ զայն (զողբերգութիւն) 'ի ձեռանէ նորա (Փրինիքոսեայ) գծուծ զգեցեալ, անգոյր 'ի յայտարն ծեփեալ կամ դիմակ անկենդան զերեսօքն ածեալ· չգոյր նորա շնորհ և ոչ վայելչութիւն 'ի շարժմունսն· ազդէր իղձս իմն կարեկցութեան՝ հազիւ զկիրս յուզելով, չև ևս ցրտացեալ 'ի սրտի ծաղրածութեանցն և խեղկատակութեանց՝ յորս զբօսնոյրն յառաջին ամսն, և տխուր կերպարանաց բանիցն 'ի նմա ուրեք ուրեք ընտիրք և վեհք, այլ բազում ուրեք անզօրք էին, նուաստք և աղտեղիք թանձր խենէշութեամբք։

Եսքիլոս՝ հայր ողբերգութեան, զի այսպէս արժան է կոչել զայրն մեծ, հզօր և եռանդուն ոգւոյ 'ի բնութենէ էր դիպեալ։ Լռութիւն նորա և հանդարտութիւն դխըղատութիւն բուսոյ բարուցն յանդիման առնէին։ Ի ճակատամարտս որ 'ի Մարաթոն, 'ի Սալամիս և 'ի Պլատիէս, ուր աթենացիք բազումք առաքինացան, անդ և Եսքիլոս պայծառացաւ քաջութեամբ։ Անդստին 'ի տըղայ տիոց վարժեալ էր 'ի գիրս քերթողաց, որք մերձ 'ի ժամանակս դիւցազանց կացեալ՝ բերէին իմաստս մեծամեծս ըստ մեծագործութեանց նոցա։ Վէպք անցելոց դարուցն ընծայէին աշխոյժ մտաց նորա յաջողութիւնս և արկածս նշանաւորս, գահոյս շաղախեալս արեամբ, կիրս բռնաւորս և ծախողականս, առաքինութիւնս վսեմս, ոճիրս և վրէժխնդրութիւնս դժնդակս, ամենայն ուրեք տիպս մեծութեան, և յաճախ ուրեք վայրագութեան։

Առ 'ի տպաւորագոյն գործել զազդեցութիւն պատկերացս՝ պարտ էր զատուցանել զմի մի 'ի համախըմբութենէն, յոր հնոց քերթողացն կցորդեալ էր զնոսա։ Վաղ իսկ քերթողք երկդռնենին տաղից և առաջնոց ողբերգութեանցն արարին զայս. այլ չեղև նոցա փոյթ

մերձ մատուցանել մեզ զայնոսիկ։ Եւ զի յոյժ տաւել յուզին գութք յականատես լինել թշուառութեանց՝ քան 'ի լսել զպատմութիւն նոցա, նմին իրի Եւքիլոս 'ի կեր ճարկ զամենայն հնարս թատերական յանդիմանութեան, առ 'ի դնել առաջի աչաց զժամանակ և զտեղի տեսարանին, որով պատրանք փոխեցան իմն 'ի ճշմարտութիւն։

Եմոյծ նա և միւս այլ դերասան յողբերգութիւնս իւր առաջինս. և ապա օրինակ առեալ 'ի Սոփոկլէ՝ որ այն ինչ յասպարէզ անգր մտեալ էր, կացոյց և երրորդ զոք, և էր զի յաւելոյր և չորրորդ։ Ի բազմանալ անձանց՝ մին 'ի դիւցազն վիպացն կերպարանէր, յինքն առաւել զկարեկցութիւն ձգելով. և զի այնուհետև արքանեկէր ևեթ պարն, Եւքիլոս համառօտեաց զնորին մասն, այլ թերևս ոչ բաւականապէս։

Բայց Եւքիլոս ստգտանի վասն 'ի ներքս մուծանելոյ անձինս համերս. զի Աքիլլէս յետ մահու բարեկամին իւրոյ, և Նիոբէ յետ որդւոցն իւրոց մեռանելոյ ձգին 'ի թատր, և փոփոխին բազում տեսարանք, իսկ նոքա անշարժ կան քօղարկեալ դիմօք անբարբառ։ Այլ եթէ տայր արտասուել նոցա և ողբոց բանս բարբառել, ներգործէ՞ր արդեօք զստսկումն՝ զոր ազդէ քօղումն այնուիկ և լռութեամբ և լքեալ թողեալ թաղծութեամբն։

Ցոմանս 'ի քերթութեանց նորա կարի յոյժ ընդարձակ է բացատրութիւն վիպացն, յայլս ոչ բացայայտ. և թէպէտ սխալէ յաճախ ընդդէմ կարգաց որ յետոյ սահմանեցան, այլ գրեթէ զամենայն իսկ նշմարեաց ընդաղօտ։

Ի դէպ է ասել զնմանէ՝ որ ինչ ինքն յաղագս Իպպոմեդոնի դիւցազին ասաց, թէ պակուցումն գնայ առաջի նորա՝ յամպս զգլուխն ծրարեալ։ Ամենայն ուրեք ազդէ արհաւիրս սաստիկս և պիտանիս. զի ոչ առ այլ ինչ շարժեալ տատանէ զոգի մեր, բայց առ 'ի վերացուցանել զնա անգէն 'ի հանդէս զօրութեան իւրոյ։

Digitized by Google

Դիւցազունք նորա լաւ համարին ամփոփահար սատակիլ քան զվատութիւն երբեք յանձն առնուլ, և արիութիւն նոցա անողոքելի ևս է քան զանհրաժեշտ օրէնս հարկին։ Այլ որ այնպէսն ջանահնար լինէր 'ի յուզել զկիրս, գիտէր զպատշաճ չափ յուզմանն։ Զգուշացաւ նա շաղախել երբեք զտեսարանն արեամբ. զի պարտ համարէր նկարագրութեանցն իւրոց պակուցիչս գոլ, և մի ածել սոսկումն։

Դուն ուրեք շարժէ նա զարտասուս կամ յուզէ զգութս, բնութեան գրկելով զնա 'ի քաղցր զգացմանէն' որ կարեկիցս խնդրէ իւր, և կամ մանաւանդ զի զանգիտէր 'ի մեղկելոյ զլսողս։ Ոչ զՓեդրա և ոչ զԱթենովպէ մարթէր նմա ածել 'ի տեսարան, կամ նկարագրել զողոքանս և զմոլեգնութիւնս սիրոյ։ Զի 'ի յարձակմունս կրից այսոցիկ նկատէր մեղկութիւնս և ոճիրս զեղծուցիչս բարուց վնասակար օրինակաւն. և կամէր զի որոց կարեկիցն ստիպիմք լինել, ստիպեսցիմք և 'ի մեծարել զնոսա։

Անցցուք յառաջ հետևել նմա ընդ անհուն ասպարէզն զոր եհատ. և առցուք 'ի քնին' որպէս զայլ և այլ մասունս ողբերգութեան յարդարիցէ, զվէպսն, զբարս, զիմաստս, զբառս, զտեսարանս և զերգս։

Տրագիր քերթութեանց նորա է ամենապարզ. չէր ինչ նմա փոյթ, կամ մանաւանդ անծանօթ իսկ էր նմա արուեստ պատրուակելոյ զդժուարահաւատալիս, կաշկանդելոյ և լուծանելոյ զհանգոյց գլխաւոր նիւթոյն, կապակցելոյ սերտիւ զմասունս նորա ընդ միմեանս, փութացուցանելոյ կամ յամեցուցանելոյ զելս իրացն' յայտնութեամբ անծանօթին և կամ այլովք հանգոյն իմն անակնկալ պատահարօք։ Է ուրեք' զի պատմութեամբ ևեթ իրացն և կենդանութեամբ զրուցատրութեանցն շարժէ զունկնդիրս, և է դարձեալ' զի կորովութեամբ ասացուածոյն կամ արհաւրօք տեսլեանն։ Զմիութիւն գլխաւոր նիւթոյն և ժամանակի կարևորագոյն համա-

Digitized by Google

րէր, որպէս երևի. իսկ զանեղական մխութիւն ոչ նոյնպէս կարէր:

Պարն ոչ եւս առ 'ի նուազել ևեթ 'ի քերթութիւնս նորա մնանէ, այլ կցորդի ամենայնի: Պատապարան է նա տառապելոց, խորհրդական թագաւորաց, անհարկու բռնաւորաց, մտերիմ ամենեցուն. և է զի խառնի նա 'ի գլխաւոր նիւթն 'ի սկզբանէ մինչև ցվախճան: Պարտ էր քերթողաց, որ յետ նորա կացին, յաճախագոյն 'ի կիր արկանել զայս. այլ և ոչ ինքն Եսքիլոս վարէր միշտ առվաւ:

Նկարագիր և բարք անձանց իւրաքանչիւր զորս 'ի ներքս ածէ՝ պատկանաւորք են նոցա, և դուն ուրեք թողուն զիւրեանց պայմանն: Ի դիւցազանցն ժամանակաց առնու գրեթէ զամենայն նախատիպս իւր, և գերակայէ զնոսա 'ի բարձու՝ ուր Հոմերոս զիւրսն կացոյց: Անսորժէ նկարագրել զարս քաջասիրտս, խիզախս, գերազանցս երկիւղի, ինքնանուէրս հայրենեաց, անյագս 'ի տենչ փառաց և պատերազմի, վեհագոյնս քան զորեար ժամանակին, այնպիսիս՝ որպիսիս կամէրն պատրաստել ախոյեանս Եղլադայ. զի յաւուրս պատերազմին Պարսից գրէր զքերթութիւնսն:

Ի մէջ լուսափայլ ճառագայթիցս ուրեք ուրեք 'ի քերթածս նորա գտանի մթութիւն, ոչ 'ի կարի համառօտութենէն ևեթ և 'ի յանդուգն ձևոցն 'ի ներքս անկեալ, այլ և 'ի նորանոր բառիցն, որովք ջանայ ճոխացուցանել կամ ամբակուռ զբանսն կազմել: Ոչ հաճոյ թուէր Եսքիլեայ բարբառել դիւցազանցն իւրոց իբրև զայլս 'ի մարդկանէ. զրուցատրութեան նոցա վայելէր իսկ զօլ 'ի վեր քան զհետևակ խօսս. այլ յաճախ ուրեք և քան զծանօթ բարբառ նկրտի 'ի վեր: Բառք ստուարակարկառք և խիտք՝ յաւերակաց այլոց բառից կազմեալք՝ ամբառնան երբեք երբեք 'ի միջոյ բանիցն յամրութիւն առացուածոյն, հանգոյն իմն աշտարակաց բարձանց՝ որ զքաղաքորմովք 'ի վեր կանգնեալ, որպէս ասքաբանէ Արիստոփան:

Կարի հուժկու էր ճարտարխօսութիւն Եսքիլեայ, և ոչ է 'ի դէպ խնդրել 'ի նմա ընտրութիւն, ներդաշնակութիւն և ճշդութիւն կանոնաց։ Թռիչք մտաց նորա կարի յանդգունք էին, և չէր մարթ ազատ լինել նոցա յարտուղութեանց և յանկմանց։ Ոճ նորա առ հասարակ վեհ և վսեմ է. ուրեք ուրեք կարի յոյժ մեծ և չքեղ մինչև ցճամարտակութիւն, և մերթ օտարախորթ և դժպհի՝ անարգ նմանութեամբքն, և մանկական խաղիւք բառից, և այլովք թերութեամբք ընդելականօք դրչաց՝ որոց առաւել հանճարոյ է զօրութիւն քան կիրթ ախորժակաց։ Այլ հանդերձ ամենայն թերութեամբքն արժանի է նա բարձրագոյն դասու ընդ գերահռչակ քերթողս Ելլադայ։

ՆՈՑՆ

---

## ԵՍՔԻԼՈՍ, ՍՈՓՈԿԼ ԵՒ ԵՒՐԻՊԻԴԷՍ

Բայց թէպէտ և Արիստոփան դժկամակութեամբ էր ընդ Եւրիպիդեայ, վճիռ նորա 'ի տալ Եսքիլեայ զառաջին տեղին, և Սոփոկլի զերկրորդն, և զերրորդն Եւրիպիդեայ, էր յայնժամ համաձայն կարծեաց առաւելագունիցն յԱթենացւոց։ Այլ ես առանց հաստատելոյ կամ եղծանելոյ զայն, պատմեցից որ ինչ փոփոխմունս Սոփոկլ և Եւրիպիդէս արարին 'ի վաստակս Եսքիլեայ։

Սոփոկլ, ըստ նախապատուեմն իմոյ բանիս, եմոյծ երրորդ զոք գուսան յառաջին ողբերգութիւնս իւր. Թողում զյաւելուած նկարուցն՝ որովք զարդարեաց ըղխաղետղն, և զնշանակս՝ զորս յաւել 'ի ձեռս ոմանց յանձանցն իւրոց։ Ստգտանէր զերեսին զայսոսիկ յԵսքիլոս, զկարի բարձրութիւն իմաստից նորա, զհսկայա֊

ձև կերպարանս ստացուածոյ, և զտաժանաւոր կարգաւորութիւն ծրագրաց. և համարէր խոյս տուեալ իւր ’ի թերութեանց սառի:

Եթէ նախատիպք որ յանդիման առնին մեզ ’ի տեսարանի՝ յոյժ բարձունք էին, ոչ ևս մարթէր աղետից նոցա գորովել զմեզ, և ոչ օրինակի նոցա խրատել զմեզ: Դիւցազունք Սոփոկլի են կշիռ ’ի բարձրութեան, ուր զարմանք մեր և կարեկցութիւն հասանեն. և վասն զի ’ի վեր են քան զմեզ, և ոչ հեռի ’ի մէնջ, ամենայն որ ինչ պատկանի նոցա՝ ոչ անընտանի է մեզ, և ոչ յոյժ ընդելական. և վասն զի յևս ահագին հանդէսս քաջութեան պահեն զտկարութիւն, ածեն գորով իմն վսեմ՝ որ առաւելագոյն զտիպս նկարագրի քերթողիս ընծայեն:

Այնպէս իմն ջանայ կալ ’ի սահմանս ճշմարիտ մեծութեան, զի առ ահի արտասահման անկանելոյ՝ չմօտի իսկ երբեմն անդր: Ցարշաւասոյր ընթացս՝ մինչդեռ ահա բոցածաւալ բորբոքի, յանկարծ կասեալ շիջանի. զի լաւ արգեօք համարի զանկումն քան զարտուղութիւն:

Չէր նա քաջայարմար զկայ առնլոյ ’ի տկարութիւնս մարդկեղէն սրտի և ոչ ’ի նուաստ ոճիրս. այլ խնդրէր հոգի հզօր և բազմագութ, նովին իսկ և շարժիչ ’ի գութ. հոգի՝ որ սասանիցի յարկածից, այլ աննկուն առանց ամբարհաւանութեան:

Սոփոկլ յածելն զդիւցազնութիւն ’ի պատշաճ չափն, ցածոյց զբարբառ ողբերգութեան և մերժեաց ’ի բաց զբացատրութիւնս՝ զորս աշխոյժ ցնորք մտաց թելադրէին Եսքիլեայ, և որք արհաւիրս ’ի սիրտս տեսողաց արկանէին: Եղանակ բանից նորա՝ որպէս զհոմերականն՝ զօրաւոր է և մեծավայելուչ, ազնուական և քաղցր, և ’ի նկարագրութիւն բռնագոյն իսկ կրից՝ քաջ պատշաճեալ պայմանի խօսելեացն:

Եսքիլ նկարեաց զմարդիկ վեհագոյնս քան զկար

նոցա. Սոփոկլ որպիսիս անկ էր նոցա գոլ. իսկ Եւրիպիդէս որպիսիք ենն։ Առաջինքն երկոքին թողին 'ի բաց զկիրս և զհանգամանս, զորս երրորդն վարկաւ ընդունականս մեծամեծ արգասեաց։ Մերթ յանդիման արար տիկնայս բորբոքեալս սիրով, տոփացեալս 'ի չնութիւն և յոճիրս. և մերթ թագաւորս կործանեալս յարկածից 'ի թշուառութիւն, մինչև մուրացիկ շրջել ցնցոտաւովք։ Նկարագիրքս այսոքիկ՝ յորս ոչ ևս նշմարէին զրոշմք ձեռինն Եսքիլեայ և Սոփոկլի, սարտուցին անդէն 'ի սկզբան զոգիս։ Կէսք ասէին՝ թէ չէ պարտ և ոչ միով իւիք պատճառանօք արատել զբարս և զաստիճան դիւցազանց 'ի տեսարանի. իսկ այլք՝ թէ անպատիւ է գծագրել արուեստիւ պատկերս անհամեստս, և վտանգաւոր՝ ընծայել ախտից զզօրութիւն օրինակի արանց աւագաց։

Այլ ոչ ևս այն ժամանակ էր, յորժամ օրէնք պատուհասակոծ առնէին զճարտարս՝ որք անպարկեշտս զձեռակերտսն յօրինէին։ Մեղկէին ոգիք, և սահմանք պատշաճից օր ըստ օրէ ընդարձակէին։ Բազմագոյնք յԱթենացւոց փոխանակ դժկամակելոյ ընդ հարուածսըն՝ զորս քերթութիւնք Եւրիպիդեայ տային հասարակաց կարծեաց, զգածէին կրիւք՝ յորս գրգռէրն զնոսա։ Քանզի քերթողս այս, աչողակ 'ի յանդիման առնել զամենայն կիրս, զարմանալի ևս է 'ի նկարագրել զմոլեգնութիւնս սիրոյ և 'ի յուզել զգութս. զի անդ արդարև գեր 'ի վերոյ և քան զանձն իսկ ամբառնայ, և հասանէ 'ի վսեմն՝ յոր բնութեանն չերևի սահմանեալ զնա։ Աթենացիք 'ի գութ խանդաղատեցան ընդ աղէտըս Փեդրայ անդէն իսկ 'ի յանցանսն, արտասուեցին ընդ թշուառութիւն Տելեփեայ, և ոչ ինչ մեղադրեցին քերթողին։

Եւրիպիդէս մինչ ամբաստանէրն մեղկիչ ողբերգութեան, գուն գործէր 'ի յարդարել զայն դպրոց իմաստութեան։ Է 'ի քերթածս նորա վարդապետութիւն Ա-

Digitized by Google

Նաքսագորայ վարժապետին իւրոյ յաղագս լինելութեան էից և կարգաց բարոյականին՝ զորոց վարդապետէրն յայնժամ Սոկրատ բարեկամն իւր։ Եւ վասն զի ախորժելի էր Աթենացւոց բազմարուեստն ճարտարխօսութիւն՝ յոր 'ի Պրոտիկեայ վարժեալն էր, ջանայր մանաւանդ պարարել նովաւ զլսելիս նոցա։ Որով վարժք իմաստասիրութեան և հռետորականին զարդք ընդունելի եղեն յողբերգութեան. և այսու ևս մասամբ Եւրիպիդէս քան զքերթողս՝ որ յառաջ քան զնա կացին՝ գտաւ երևելի։

Ի քերթութիւնս Եսքիլեայ և Սոփոկլի փութան կիրք 'ի նպատակն, առանց յաճախելոյ իմաստս՝ նահանջիչս ընթացից իւրեանց. մանաւանդ Սոփոկլ ճեպ 'ի ճեպոյ և գոգցես իմն անխորհրդաբար սահմանէ միանգամայն զբարս, և յայտնէ զկիրս գաղտնիս զայնոցիկ՝ զորս ածէ 'ի տեսարան։ Այսպէս յողբերգութեանն Անտիգոնեայ, բառիւ միով վազելով ընդ շրթունս տիկնոջն, յայտ առնէ զտռփանս նորա ընդ որդւոյ իւրում Կրէոնի։

Եւրիպիդէս յաճախեաց զվճիռս և զխորհրդածութիւնս. ախորժէ նա և պարտ իսկ համարի հոլանել զգիտութիւնս իւր, և բազում ուրեք պարապէ 'ի ձևս ճարտասանականս։ Սմին իրի պէսպէս դատաստանք առնին զքերթողէս, և յայլ և այլ դէմս նկատի։ Իբրև մի յիմաստասիրաց բազումս ունի իւր կուսակիցս. աշակերտք Անաքսագորայ և Սոկրատայ ըստ օրինակի վարժապետացն, ուրախ լինէին ընդ յաղթանակել վարդապետութեան իւրեանց 'ի տեսարանի. և հերքեալ միայն զբացատրութիւնս ինչ նորոյ թարգմանին իւրեանց նպաստամատոյցս ինքնիշխանութեան, համարձակ կացին ջատագով այնմ՝ որ յորդորէրն 'ի սէր պարտոյից և առաքինութեան, և որ ոչ անդ զկայ առեալ՝ քարոզէրն յայտնաբարբառ, զի ոչ զդիս պարտ է ամբաստանել 'ի կիրս ամօթալիս, այլ զմարդիկ՝ որ չարախօսեն զնոցանէ։ Եւ վասն զի պնդագոյնս հաստատէր զվարդա-

պետութիւնս կարեւորս բարոյականին, դառնցաւ նա 'ի թիւ իմաստնոցն. և համարեցի մինչև 'ի սպառ իմաստասէր ողբերգու։

Ճարտասանութիւն նորա՝ զառածեալ ուրեք ուրեք 'ի սնոտի յորդութիւն բառից, ոչ ինչ նուազ կացոյց զնա հռչակաւոր 'ի ճարտարախօսս առհասարակ, և մանաւանդ 'ի փաստաբանս։ Համոզէ եռանդուն իմաստիւքն, և խելամուտ առնէ ճարտարութեամբն՝ որով ածեալ թափէ զմիմեամբք զպատասխանիսն։

Գեղեցկութիւնք քերթածաց նորա, ընդ որս զարմանան իմաստասէրք և ճարտարախօսք, թուին յաչս պարսաւաղիտաց նորա թերութիւնք ծանունք։ Իբր զի այն յաճախաւոր ասացուածք հռետորականք և առածք չեղջակուտեալք, և դրուագք հմտութեանց և վէճք ընդվայրաքնինք, խափանիցեն զյոյզս կրից։ Եւ յայն սակս իսկ յոյժ 'ի վայր դասեն զԵւրիպիդէս քան զՍոփոկլ, որ ոչ ինչ աւելորդ 'ի ներքս խառնէ։

Եւքլեայ 'ի տիպս կերպարանաց բանից պահեալ զքաղջայանդուգն ձևս երկդռնենին տաղից, և Սոփոկլի զմեծվայելչութիւն դիւցազնականին, իսկ Եւրիպիդէս սահմանեաց զբարբառ ողբերգութեան։ Զգահեաց նա գրեթէ և ոչ մի ինչ 'ի բացատրութեանց սեփականելոց բանաստեղծութեան, այլ գիտաց այնպէս ընտրանաւ 'ի կիր արկանել զսովորականս, զի ճարտար զուգադրութեամբ նոցա՝ տկարութիւն իմաստիցն գոգցես իմն ծածկէր, և կարի իսկ հասարակք 'ի բառից ազնուանային։ Այնպիսի կախարդանք են դիւթական այնր ասացուածոյ, զի կշիռ 'ի միջասահմանին կացեալ նուաստութեան և բարձրութեան՝ գրեթէ միշտ ընտիր և յստակ գտանի, գրեթէ միշտ քաղցրալուր, հեզասահ և առ ամենայն իմաստս մտաց դիւրայարմար։

Այլ նա կարի տաժանէր 'ի կազմել զտողս դիւրինս. հանգոյն Պլատոնի և Զեւքսեայ, և ամենեցուն որ միանգամ նկրտին 'ի կատարելութիւն, դատէր զերկս իւր

խստութեամբ ոսոխի, և խնամէր հայրենի գթով։ Ցաւել նորա երբեմն՝ զի 'ի յօրինուած երից տողից զաւուրս երիս աշխատ լեալ էր, ասէ ցնա մի 'ի սինլքոր քերթողաց. Թէ ես էի, տողս հարիւր յերիս աւուրս յօրինէի։ Եւ Եւրիպիդէս ասէ. Գիտեմ և ես. այլ ոչ ինչ աւելի քան զերիս աւուրս յերկարակեաց լինէին տողք քո։

Այլ ըստ կազմածոյ ողբերգութեանց՝ յաղթող 'ի բազմաց վկայի Սոփոկլ։ Մարթի իսկ ցուցանել, զի գրեթէ ամենայն օրէնք ողբերգութեան 'ի քերթութեանց նորա առան. այլ քանզի ուր զկիրթ ախորժակաց բանք իցեն, քննութիւն բարւոյ մատենի գրեթէ միշտ գտանի մատեան յոռի, անտես 'ի նմա լեալ զգօն և պատկանաւոր գեղեցկութեանցն մասն ոչ սակաւ, նմին իրի հասարակաբար ևեթ շատ լիցի ասել զքերթողէս, զի ազատ գտաւ 'ի մեծամեծ թերութեանցն՝ որ ստգտանին 'ի քերթութիւնս իւրոյ ոսոխին։

Դուն ուրեք Եւրիպիդէս յաջողի 'ի կարգաւորութիւն նիւթոյն. մերթ 'ի հաւանականութիւն իրացն ստնանէ, և մերթ բունի զեկամուտ դէպս 'ի ներքս մուծանէ. և է ուրեք՝ զի ոչ ևս մի ինչ գլխաւոր նիւթն գըտանի, և գրեթէ միշտ 'ի կնճիռն վիպացն և 'ի լուծումն նորա մնայ ինչ թերակատար, և բազում այն է՝ զի պարք նորա ոչ քաջ ընդ գլխաւոր նիւթոյն կցորդին։

Իսկ Եսքիլ և Սոփոկլ ճարտար արուեստիւ անդըստին 'ի սկզբանէ ողբերգութեանն յայտ առնեն զառաջարկութիւնն, զոր և Եւրիպիդեայ երևի գողացեալ 'ի նոցանէ 'ի Մեդեայն իւր և յԻփիգենեայն ողբերգութեան։ Բայց տարազ քերթութեան նորա թէպէտ և գրեթէ միշտ անարուեստ, ոչ է դատապարտեալ 'ի հանճարեղ քննողաց։

Եսքիլ. Սոփոկլ և Եւրիպիդէս եղեն և լիցին միշտ նախապատիւք 'ի պայծառացուցիչս տեսարանին։ Եւ զիա՞րդ ապա 'ի բազմապատիկ քերթութեանցն զորս

ածին 'ի պայքար, երեքտասան ողբերգութիւնք ևեթ առաջնոյն պսակեցան, երկրորդին ութևտասն, և հինգ երրորդին։ Քանզի զյաղթութիւնն ամբոխն սահմանեաց, իսկ զկարգ քաջութեան նոցա՝ հասարակաց դատաւորան։ Ամբոխին էին խնամակալք՝ զորոց գգուէր նա զկիրս, և սիրելիք՝ որոց պատսպարան լինէր շահուցըն. աստի չարարուեստ հնարքն և բռնութիւնք և անիրաւութիւնք 'ի ժամ վճռոյն 'ի ներքս մտանէին։ Իսկ դատաւորան հասարակաց, այս ինքն է ողջամտագոյն մասին ազգին, թէպէտ և երբեք երբեք չլացաւ յաղօտ ինչ նշուլից գեղեցկութեան սփռելոց 'ի հեռաւոր գըրուածս, այլ ոչ յամեաց հատուցանել հանճարեղ մարդկան զիւրեանց կարգ և տեղի՝ խելամտեալ գերակայութեան նոցա յընդունայն ճգանց անտի ոսոխաց նոցա և յաջորդաց։

ՆՈՅՆ

---

## ԻՊՈԿՐԱՏ ԿԱՄ ՄՏՈՑԳ ԲԺԻՇԿ

Ի Կով կղզւոջ ծնաւ Իպոկրատ յառաջնումն ամի ութսներորդի ոլիմպիադին։ Եւ էր նա յազգէ ասկլեպեանց, որք դարուց 'ի դարս պահեն զուսումն աւանդեալ յԱսկլեպեայ՝ զոր նախահայր ազգատոհմին իւրեանց համարին. և են նոցա դպրոցք երեք, 'ի Հռոդոս, 'ի Կնիդոս և 'ի Կով։

Ասկլեպիաս 'ի հօրէն իւրմէ 'ի Հերակլիդեայ զնախակրթութիւնս գիտութեանց ընկալաւ. բայց վաղ խելամուտ լեալ, զի առ 'ի գիտել զէութիւն մարմնոց իւրաքանչիւր՝ հարկ էր հետազօտել զբաղկացու մասունս տիեզերաց, այնու մտադիւրութեամբ պարապեցաւ 'ի բնազննութիւն առ հասարակ՝ զի ընդ երևելագոյնս 'ի բնագիտաց դասեցաւ փառօք։

Բժշկականին յաջողեալ արուեստի աւանդապահք էին կրկին զաւաք արանց, որք զանխուլ 'ի միմեանց զուն գործէին կարգեալ նմա պայծառ յաղթանակ։

Այս իմաստասէրք պարապեալք 'ի հետազօտութիւն էից աշխարհի՝ չկարէին անտես առնել զմարմին մարդկեղէն, և չաշխատել պատճառս որ 'ի նմա ներգործեալ առէջ յեղափոխութեանցն. և անդ զաւակն Ասկղեպեայ զարմանէր զախտս ըստ կարգաց հաստատելոց 'ի բազմաց բժշկութենէ, և երբեակ զպրոցք նորա պանծային նախանձընդդէմ իրերաց 'ի հնարագիտութիւնս բուժանց բազումս. Մինչդեռ իմաստասէրք ճառէին, և ասկլեպեանք գործէին, Իպոկրատ զհմտութիւնս իւրաքանչիւրոցն յանձին բերելով, երկնեաց զմի 'ի մեծամեծացն և 'ի կարևոր խորհրդոց՝ որ թուականութիւնս նորա 'ի վէպս հանճարոյ սահմանեն. քանզի պատճառաց պայծառացոյց զփորձ, և զանսութիւնս գիտութեան գործովք հաստատեաց։ Այլ 'ի տեսութիւնս յայտնաբիկ այլ ինչ ոչ 'ի ներքս խառնեաց՝ բաց 'ի պատճառաց ազդի ազդի կրից, որ երևին 'ի մարդկեղէն մարմնի՝ նկատեալ ըստ հիւանդութեան և ըստ առողջութեան։

Սովին ոճով ամբարձեալ արուեստն 'ի փառս գիտութեան, անսայթաքելի ևս յառաջ խաղաց ընդ ուղին՝ այն ինչ բացեալ առաջի. և Իպոկրատ կատարեաց խաղաղութեամբ զնորաձևութիւնն, որ զբժշկականն կերպարանափոխ արար զարուեստ։ Լսեմ աստանօր զդեղոցն յաջողութեան զհանդէս, և զզարմանալիսն գործեցեալս ուր և հասանէին ասք նորա. մանաւանդ 'ի Թեսալիա, ուր և կեցեալ բազում ժամանակս՝ վախճանեցաւ սակաւ ինչ յառաջ քան զհասանելն իմ յԵլլադա։ Այլ զայն ոչ լուեցի, զի ոչ խնդիր ինչ շահու և ոչ իղձք համբաւոյ ածին զնա 'ի տար աշխարհս, այլ յամենայնէ՝ որ ինչ յաղագս նորա պատմեցաւ ինձ՝ խելամուտ եղէ, զի մի ինչ էր նորա ցանկութիւն՝ սէր



Digitized by Google

բարւոյ, և մի յամենայն կեանս նորա պարապումն՝ խնամել զախտաժէտս։

Եթող նա բազում գիրս, յորոց կէսք օրագիրք են ախտից դարմանելոց 'ի նմանէ անընդհատ. այլք բովանդակեն որ ինչ 'ի փորձոյ իւրմէ եւ անցելոց դարուց լեալ արգասիք. և կէսք դարձեալ ճառեն զպարտուց բժշկի, և զյոգունց մասանց բժշկութեան կամ բնաբանութեան։

Ուշիմ միտք արժան է զամենայն գիրս նորա ընթեռնուլ. քանզի բազում անգամ զանհուն եւեթ վարդապետութեանն արկանէ 'ի նոսա, և ամենայն իսկ ուրեք համառօտագոյն ճառէ, այլ 'ի սուղ բանսն բազում ինչ բովանդակեալ. ոչ երբեք զարտուղի յառաջարկեալ նպատակէն, և 'ի դիմեն անդր՝ թողու զհետ իւր նշոյլս առաւել կամ նուազ լուսաւորս ըստ կարողութեան մտաց ընթերցողացն։ Զի այսպէս սովոր էին նախնի իմաստասէրք յաւելուլ նորանոր հմտութիւնս՝ քան յաճախել ճառս գրոցանց։ Մատեանք առնս մեծի զմատենագրին բերեն յիւրեանս զնկարագիր։ Զիք ինչ տիրելի քան զանկեղծութիւն, որով խոստովան լինի զարկածս և զվրիպակս իւր։ Տեսցես անդ զցուցակ ախտացելոց զորս 'ի ճարակել ժամանակին դարմանէր, և յորոց բազմագոյնք 'ի վերայ բազկաց իւրոց անշընչացան։ Եւ այլուր տեսցես զնա առընթեր թեսալացւոյ ուրումն հարուածելոյ 'ի գլուխ իւր քարամբ։ Ոչ 'ի դէպ թուի նմա 'ի սկզբան անդ ձեռնարկել 'ի հատումն. այլ ապա 'ի դժնդակ նշանացն 'ի միտ առեալ զսխալանս իւր, անագան 'ի հնգետասաներորդում աւուր ձեռն 'ի գործ առնէ. և 'ի վաղիւ անդր մեռանի վիրաւորեալն։ Զայս ամենայն ինքնին խոստովան լինի, և գեր 'ի վերոյ արշաւեալ ամենայն ըղձից անձնասիրութեան՝ զսխալանս իսկ իւր աւանդէ առ 'ի խրատ։ Եւ ոչ շատ համարեալ նուիրել զկեանս իւր 'ի սփոփումն վշտացելոց, և աւանդել 'ի գիրս իւր զվարժս գիտու-

թեան՝ որոյ ինքն եղև հաւակ, եթող և կանոնս 'ի հրահանգս բժշկաց, զորոց աստանօր 'ի հարևանցի տամ զտեսութիւն։

Կեանք սուղ, և արուեստ՝ որով վարիմք՝ այնքանեաց կարօտ վարժից, զի անդստին 'ի մատաղ տիոց պարտ է կրթել մեզ 'ի նոյն։ Եթէ առաջի կայցէ քեզ վարժել զոք 'ի համբակաց, քննեա յուշիկ զյարմարութիւն նորա. զի եթէ իցէ նորա 'ի բնէ քաջ ընտրութիւն և ողջամիտ դատումն, հեզութիւն հանդերձ անյողդողդ հաստատութեամբ, աշխատասիրութիւն և առ 'ի պատշաճն յօժարութիւն, յուսալի է քեզ։ Իսկ եթէ վշտանայ ընդ վշտացեալս, և սիրտ նորա բարեգորով ախորժէ կարեկից լինել մարդկանց, գիտասջիր զի կապեսցի ոգի նորա ընդ արուեստին՝ որ ուսուցանէ օգնել նոցա։

Ուսո 'ի մանկութենէ զձեռս նորա 'ի դարմանս վիրաբուժութեան, այլ ոչ 'ի հատումն. զի զայն 'ի ճարտարս արուեստին պարտ է ապաստան առնել։ Ած զնա ընդ կարգս գիտութեանց, և ուսցի 'ի բնաբանութենէ զազդեցութիւն նահանգին 'ի մարմին մարդկեղէն. եթէ կամիցի շրջել ընդ քաղաքս առ 'ի յուսելոյ 'ի հմտութիւն, խրատեա զնա զննել զդիրս վայրաց, զյեղմունս օդոց, զջուրս երկրին ըմպելիս, և զերս՝ որովք բնակիչք երկրին կերակրին, և համայն ասացեալ, որ ինչ այլայլէ զկազմած կենդանւոյ։ Ցուցցես նմա որ սյն նշանք ախտից իւրաքանչիւր կարապետք լինին, և որով զգուշութեամբ մարթ է խուսափել 'ի նոցանէ, և որպիսի ինչ դարմանով բժշկել զնոսա։

Եւ իբրև 'ի միտ առցէ զվարդապետութիւնս քո պարզաբանեալս 'ի կարգ գրուցատրութեանց, և համառօտեալս 'ի քէն 'ի վճիռս դիւրընկալս յիշողականին, ուսուսցես նմա զի բազմավտանգ ևս է գիտութիւն առանց փորձոյ, քան փորձն ինքնին միայնակ. և զի ժամ է այնուհետև զօրէնսն հանրականս բաղդատելոյ ընդ դէպս իւրաքանչիւր, որոց հանապազ փոփոխելով պատրեն

յաճախ զբժիշկս վեր 'ի վերոյ նմանութեամբքն. և զի դարձեալ ոչ 'ի փոշւոյ դպրոցաց և ոչ 'ի գիրս իմաստասիրաց և օրէնսգիտաց է ուսանել զարուեստ հարցանելոյ զբնութիւն, և զդժուարին ևս արուեստ՝ առնլոյ 'ի նմանէ պատասխանի: Զև ևս ճանաչէ նա զբնութիւն, զի մինչև ցայսվայր նկատեաց զնա 'ի զօրութեան և անխափան յընթացս իւր: Ածցես զնա յօթևանս ցաւոց, ուր բնութիւնն ծածկեալ 'ի ստուերաց մահու, նշաւակ հինից թշնամւոյն սաստիկ յարձակմանց, անկեալ և կանգնեալ առ 'ի վերստին անկումն, յանդիման առնէ ական զննողի զկարօտութիւն իւր և զզօրութիւն: Ի տեսիլ այնր կռուոյ համբակն ահարեկ՝ տեսցէ զքեզ դէտ կացեալ առ 'ի գտանել պարապ կանգնելոյ զյաղթութիւն, և սահմանելոյ զկեանս ախտացելոյն: Եթէ վայրիկ մի հասցէ քեզ մեկնել 'ի ճակատուն տեղւոջէն, հրամայեսցես նմա կալ անդ և դիտել, և տալ ապա զհամար անցիցն և զփոփոխութեանց՝ որ դիպիցին 'ի կալ քո 'ի բացեայ, և որ ինչ դեղ դարմանոյ 'ի դէպ թուիցի նմա առնել:

Քանզի կացուցանելով զնա ստէպ 'ի զնիրն ահաւոր և հրահանգիչ տեսարանին, ընծայեսցես զնա ըստ կարի 'ի խորհուրդս թագունս բնութեան և արուեստին: Եւ ոչ այսչափ միայն, այլ և զի յաշակերտել քո զնա խուն ինչ վարձու՝ երդուաւ նա 'ի պահել 'ի բարս իւր և 'ի պաշտաման ուղղութիւն անյեղլի. բայց մի՛ զուխտն զայնչափ համարեսցի. զի առանց առաքինութեանց, որ իւրում պայմանին են անկ, ոչ երբեք լինել կարասցէ ըզպարտսն: Եւ ո՞ր այն՛ առաքինութիւնքն իցեն. ոչ 'ի բաց առնուլ գրեթէ և ոչ զմի ինչ. քանզի այն իսկ է պատիւ պաշտաման նորա. զի խնդրի առ այն պարառութիւն ամենայն բարեմասնութեանց մտաց և սրտի: Զի եթէ ոչ 'ի զգաւշութիւն և յիմաստութիւն նորա արժան իցէ վստահել, ո՞ 'ի տանուտեարց 'ի կոչելն զնա չերկընչիցի՝ թէ գուցէ լրտես զօք կամ նենգաւոր 'ի տուն

իւր մուծանիցէ, կամ ապականիչ կնոջ իւրոյ և դստերաց։ Եւ զիա՞րդ մարթի վստահել 'ի մարդասիրութիւն նորա, եթէ անպատկանաւոր զուարթութեամբ մատիցէ առ ախտաժէտս, և կամ խստութեամբ իմն և տաժանութեամբ. զիա՞րդ 'ի հաստատութիւն մտացն, եթէ տրկարար մարդահաճութեամբ՝ զգուիցէ զդժկամակութիւն նոցա, և զիջանիցի յանձնահաճ կամս նոցա. զիա՞րդ 'ի խոհականութիւն նորա, եթէ զարդուց պարապիցի, և իւղովք անուշիւք օծանիցի, և հանդերձս չքեղս զգեցեալ շրջիցի քաղաք 'ի քաղաքէ, արտասանել 'ի պարծանս արուեստին իւրոյ ճառս՝ յեղյեղելով վկայութիւնս 'ի քերթողաց։ Զիա՞րդ 'ի գիտութիւնս նորա, եթէ ընդ արդարութեան հասարակաց՝ որով այր լաւ վարի առ ամենայն մարդիկ՝ ոչ ուղղիցէ և զայն, որով այր իմաստուն վարի ընդ անձին իւրում, և որ ուսուցանէ նմա, զի և բազմահմուտ ոք թէ իցէ՝ կարօտ գտանի քան թէ առաւելեալ գիտութեամբք։ Զիա՞րդ 'ի դիտաւորութիւնս նորա, եթէ իշխենն նմա խօլ ամբարտաւանութիւն և նախանձ՝ որ ոչն երբեք եղև բաժին առն մեծախոհի, եթէ զամենայն ազնուական մտածութիւնս փոխանակեալ ընդ շահուց՝ մեծատանց ևեթ սպաս մատուցանիցէ, և եթէ օրէն համարեալ զսովորութիւնն յառաջագոյն սակ արկանելոյ բժշկութեան, յամառիցի 'ի կատարել զդաշնադրութիւնն՝ թէպէտ և հիւանդին ժամ 'ի ժամ զայրանայցէ ախտն։

Ցոռութիւնքս այսոքիկ և թերութիւնք՝ զոգէտ և զյանդուգն մարդկանն բերեն ճշգրիտ զնկարագիր, որովք լի է Եղլադա, որք անարգեն զազնուականագոյնն յարուեստս, վաճառականք լինելով կենաց մարդկան և մահու. խարեբայք մնասակարագոյնք ևս այնու՝ զի օրէնք ինչ նոցա ոչ ստնանեն, և ոչ նախատինք կորացուցանեն զնոսա։

Եւ ո՞ր այն բժիշկ իցէ, որ պատուէ զարուեստ իւր։ Այն՝ որ ըստ արժանւոյն մեծարի յամենեցունց ներհուն

գիտութեամբն, բազմաժամանակեայ փորձով, արդարակորով ուղղութեամբ, և անստգիւտ վարուք. այն՝ որ յամենայն վշտացեալս հաւասար գթով ակնարկէ, որպէս Աստուած 'ի մարդիկ. հասանէ 'ի կարդալ նոցա յօգնութիւն առանց ակնառութեան, խօսի ընդ նոսա քաղցրութեամբ, լսէ նոցա մտադիւրութեամբ, երկայնամտէ կարճմտութեան նոցա, և ազդէ 'ի նոսա արիութիւն իմն՝ որ բաւական է երբեմն դարձուցանելոյ զնոսա 'ի կեանս. այն՝ որ կարեկից լեալ չարեաց նոցա, ընդագոյնս հետազօտէ զպատճառս և զզայրացումն նոցա, որ 'ի յեղակարծ պատահարաց ոչ ամբոխի, և որ պարտ անձին վարկանի կոչել զհամարուեստս իւր յօգնութիւն 'ի կարիս՝ խորհրդակից լինել ընդ նոսա, և այն դարձեալ, որ ամենայն զօրութեամբ մաքառեալ ընդ ախտին, գտանի հաճ և անպարծ 'ի յաղթանակելն. իսկ 'ի չյաջողելն՝ ուրախ լինի դարձեալ, զի գէթ վայրիկ մի դուլ արար ցաւոցն և սփոփանս ախտացելոյն։

Ահա բժիշկն իմաստասէր՝ զոր Իպոկրատ Աստուծոյ նմանեցուցանէ, զանձին իւրոյ յանգէտս ցուցեալ այնու զնկարագիր։ Արք բազմահանճարք, գերազանցութեան հանճարոյ նորա խելամուտք, լուայ բազում անգամ զի ասէին՝ թէ մինչև 'ի սպառ մեծարեսցի նա 'ի բժշկաց որպէս նախասկիզբն և ճարտարագոյն օրէնսդիր նոցա, և զի վարդապետութիւն նորա ընդունելի լեալ առ ամենայն ազգս՝ գործեսցէ բիւրս բիւրուց բժշկութեանց ընդ բազմահոլով պարագայս դարուց։ Եթէ գուշակութիւնս այս լցցի, ինքնակալութիւնք լայնատարածք ոչ հաւասարեսցեն ընդ անձուկ կղզւոյն՝ որ ետ զայրն օգտակարագոյն մարդկան, և յաչս իմաստնոց խոնարհեսցին անուանք աշխարհակալաց հզօրաց առաջի անուանն Իպոկրատայ։

ՆՈՅՆ

Digitized by Google

## ՀԵՐՈՆԻՄՈՍ, ԱՒԳՈՍՏԻՆՈՍ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ

*Հերոնիմոս՝ տոհմիկ պանոնիացի՝ անդստին յմանկական հասակէն երևեցուցանէր զհանճար իւր գեղեցիկ, այլ և զեռանդն կրից. ցնորք մտաց նորա անսանձելի՝ չտային նմա դուլ և դադար. 'ի ծայրայեղ ուսումնասիրութենէ յանառակութիւն արագ արագ դառածանէր չհաւատալի: Ցասկոտ, անհանդարտ, դժուարին 'ի ներել թշնամեաց, մերթ խուժադուժ և մերթ վսեմ հանճարով՝ թուի իմն սահմանեալ յօրինակ մեծաց խակագործութեանց և կամ խստակրօն առաքինութեանց. բուռն միտք նորա 'ի Հռովմ և կամ յանապատի վայելուչ գոն:*

*Միւսն 'ի բարեկամաց իմոց Աւգոստինոս՝ 'ի շինի ուրեք կուսակալութեան Կարքեդոնի ծնեալ, թէպէտ և իբրև զՀերոնիմոս դիւրայոյզ 'ի կիրս, այլ ախորժելի իմն քաղցրութիւն բերէ յանձին, ընդաբոյս մտախոհութեամբ բարեխառնեալ բնաւորութիւն նորա: Բայց պարտաւելի է զեղծանել նորա հանճարովն իւրով. և առաւելագանց գորով սրտի՝ ղառածանէ զնա երբեմն յաւիւն: Խուռն 'ի բերանոյ նորա զեղուն անդադար պերճ բացատրութիւնք և իմաստք խորինք, պայծառ նկարագրութեամբք զարդարեալ: Ծնեալ յԱփրիկէ, եգիտ նա 'ի կանայս՝ որպէս զՀերոնիմոս՝ վտանգս առաքինութեանց իւրոց և աղբիւրս վրիպանացն: Հռետորականին գեղոյ տարփացեալ, գայցէ թերևս օր՝ յորում ա՛ք 'ի հոգեկիր ճարտասանից ածցէ զնա 'ի հաւատս ուղղութեան. և եթէ երբեք մտցէ Աւգոստինոս 'ի ծոց եկեղեցւոյ, լիցի նա միւս այլ Պղատոն քրիստոնեայ:*

*Իսկ Կոստանդին, որդի մեծի ինքնակալին, բերէ յանձին բովանդակ զնկարագիր առն մեծի: Ընդ կորով սրտի կցորդեալ և զկերպարանաց վայելչութիւն, պիտանի յոյժ իշխանաց, յաճախելով զպայծառութիւն*

գեղեցիկ գործոց նոցա։ Մայր նորա Հեղինէ գտաւ բա-րեպաշտիկ, ծնեալ 'ի հաւատս Քրիստոսի. և Կոստան-դին ըստ օրինակի հօր իւրոյ Թուլի միաւորեալ 'ի նոյն օրէնս աստուածային։ Ընդ կարի հեզութեան երևի 'ի նմա դիւցազնական արութիւն, և չգիտեմ որպիսի ինչ հրա-շափառագոյն՝ զոր տպաւորեն երկինք յայնսիկ՝ որք 'ի յեղափոխութիւն աշխարհի են սահմանեալ։ Եղանի նմա եթէ ոչ զառածանիցի 'ի զայրոյթ բարկութեան, դառ-նաղէտ յայնսիկ՝ որք հեզքն են բնաւորեալ։ Աւա՜ղ, քանի՛ ողբոց են արժանի իշխանք՝ վասն հրամանաց նո-ցա անդէն վաղվաղակի կատարելոյ. քանի՛ կարեկից ար-ժան է լինել նոցա, ածեալ զմտաւ՝ զի արգասիք են նախկին չարժման նոցա, որ ինչ 'ի նոսա տեսանեմք, և զի Աստուած առ 'ի խրատել զնոսա 'ի զգուշութիւն կրիցն՝ ոչ տայ նոցա վայրկեան ժամանակի ընդ մէջ մտածութեան և կատարման խորհրդոյ իրիք եղեռնու-թեան։

ՇԱԴՈԳՐԻԵԱՆ

---

## ԿԱՐԴԵՆԻՈՍ

Որք մեծահանճարք, յո՛ր ծագս աշխարհի և իցէք, այս է ձեր ճակատագիր. վիշտք և զզուանք և հալածանք, արհամարհութիւն իշխանաց, հովութիւն սոսկականաց, չարախօսութիւնք նախանձորդաց կամ որոց նախան-ձորդս ձեզ զանձինս համարիցին, աղքատութիւն և վը-տարանդութիւնք, թերևս և մահ անգամ անծանօթ 'ի հեռաւոր օտարութեան 'ի ձերոց հայրենեաց. այսոքիկ են ահա բաժինք վիճակի ձերոյ։ Եւ զի՞նչ աստի. գուցէ արդեօք ձեռնթափ 'ի հրահանգելոյ զմարդիկ լինիցիք. ոչ. մի՛ այդպէս։ Սակայն թէ և կամիցիք իսկ, մի՛թէ ձեռնհաս իցէք 'ի նոյն. մի՛թէ կարօղ ինչ իցէք սանձ

զնել ձերումդ հանճարոյ, կամ զգէմ ունել զահագին թափոյ ուժգնութեանն որով վարէ նա զձեզ։ Ո՞չ ապաքէն ոչ 'ի խաղալ եկեալ է ձեր յաշխարհս, զոր օրինակ և արեգակն 'ի լուսաւորել զաշխարհ, ո՞չ ապաքէն և ձերդ շարժումն եկամուտ է 'ի ձեզ իբրև զնորայն։ Հա՛պա անսասջիք ձերոցդ օրինաց, և մի՛ բնաւ եղուկ զանձինս կարդայցէք։ Զի՞նչ ինչ ազդիցեն թշնամիք ձեր ընդդէմ ճշմարտութեան. յաւերժական է նա, և այլն ամենայն անցեալ գնայ։ Ճշմարտութիւնն է վարձ վաստակոց ձերոց. նոյն ճարակ հանճարոյ, և նոյն զօրավիգն յաղթութիւնս ձեր։ Բազումք իցեն որ յանմտութենէ կամ 'ի ցրտութենէ և կամ 'ի խուժադուժ բարոյից բերեալք ըկեն զձեզ և հալածեն. այլ և շատք ևս համախորհուրդք ընդ ձեզ գտանին ծագաց 'ի ծագս աշխարհի։ Յիշեցէք առաքինիք, զի և նոքա չարչարակից են ձեզ և խորհրդակից. յիշեցէք զի Սոկրատ և Պղատոն և նոցին նմանիքն՝ Աթէպէտ վաղամեռիկք՝ այլ բարեկամք ձեր են, և 'ի դարս որ զկնի՝ կացցեն անշուշտ այլք յոլովք, որ խելամուտ բանից ձերոց եղիցին, և ձեզ հանգոյն զամենայնէ խորհեսցին։ Մի ազգ և մի տոհմ էք դուք և համօրէն արք առագք՝ որ եղենն և որ գալոց են։ Ոչ զի յայս ինչ վայրի կամ յայն ինչ ժամանակի զետղ առեալ գագարիցէք՝ լեալ էք դուք. հա՛պա կեցջիք սակս ամենայն աշխարհաց և ամենայն ժամանակաց. ծաւալեսջիք զկեանս ձեր 'ի վերայ կենաց ազգի մարդկան. նա և անդր 'ի վեր ևս ամբարձջիք զմիտս ձեր. տեսէք զի ըստ պատկերի Աստուծոյ կերպարանեալ է հոգիդ ձեր. քաջացարուք ապա առաջի նորին, որպէս վայել է ճշմարտութեանն սիրողաց։ Բա՛րէ, 'ի ձեզ ակնարկէ Աստուած, ձեզ անսայ, ընդ ձեզ հաճի, և դուք եղո՞ւկ անձանց կարդայցէք։ Հանդերձ սովիմք, եթէ դարձեալ և զմարդկան ինչ խնդրիցէք զվկայութիւն, ահաւասիկ ես ձեզ այնմ երաշխաւոր. վկայութիւն ասեմ ոչ անզօր ինչ և անյայտ, որպէս այն որ 'ի վաղանցուկ յայս կեանս

Digitized by Google

մեր ընծայի, այլ անեզր և անկորուստ ընդ ժամանակս ձիգս դարուց բազմաց։ Ցեսէք աւանիկ՝ որպէս խաղացեալ գայ մատչի հանդերձեալն ազգ, և զայս առ մի մի 'ի ձէնջ արձակէ բարբառ. Սրբեա՛ զարտասուս քո. խրաւունս առնել քեզ եկի ես և վախճան տառապանաց քոց. ինև արք մեծահանճարք չնչեն զկենդանութիւն. ես վրէժխնդիր կացի Կարդեսեայ 'ի թշնամեաց անձին նորա. ես զնշխարս նորին յապառաժ վիմաց և 'ի ձիւնախաղաղ լերանց հանեալ փոխեցի 'ի Փարիզ. ես եմ որ զբանսարկուսն կռփահարեմ, և զբռնաւորս նկուն կացուցանեմ. ես եմ որ խոստան զրեմ զչիրիմս կանգնեալս 'ի մէջ տաճարաց 'ի շուք իշխանաց աշխարհի, և մեծարեալ պատուեմ զանսաշն վէմ, որ զնշխարս հանճարեղին ծածկիցէ։ Ցուշ լիցի քեզ, զի անմահ է հոգի քո, և անունդ անմահասցի ընդ նմին։ Ժամանակն 'ի փախուստ սրանայ, և վայրկեանք զվայրկեանս փոխանակեն, և սահեալ 'ի բաց գնայ երագ կենցաղոյս։ Փոքր միւս ևս՝ և կեցցես դու, և ներեսցես անիրաւութեանց քոյոյ ժամանակիդ, անգթութեան հալածչացն քոց, և բնութեանն՝ փոխանակ զի զքեզ ընտրեաց 'ի հրահանգել և 'ի խրատել զմարդիկ։

ԹՈՄԱՍ

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՔ

## ՎԱՍՆ ԽՈՐԱՄԱՆԳՈՒԹԵԱՆ

Արդ խորամանգութիւն ըստ իւրում նկարագրին՝ թուի լինել կեղծիք բանից և գործոց առ 'ի չարն։ Եւ խորամանգ այն ոք է, որոյ առ թշնամիսն մատուցեալ՝ խօսել կամի ընդ նոսա, որպէս այն թէ ոչ ինչ ամենևին ունիցի խէթ ընդ նոսա. և յերեսս գովէ զնոսա, որոց 'ի թիկանց դարան գործէր. ընդ վնասս նոցա տրտմի ընդ նոսա, և չարախօսացն իւրոց թողութիւն շնորհէ։ Յաղագս անձին բամբասանաց և առ զրկեալս և առ զչարեալս հեզութեամբ խօսի։

Եւ որ ստիպյաւ տեսանել զնա և խօսել ինչ կամիցին, պատուիրէ դառնալ անդրէն յայլում ժամու. և պատճառի՝ թէ այն ինչ եկեալ է, և թէ օրն տարաժամեալ է և ինքն տկար։

Եւ որ փոխ 'ի նմանէն խնդրիցեն և հանգանակ ժողովիցեն. Տուրևառ վաճառաց ոչ է, ասէ։ Եւ յորժամ ոչ ինչ վաճառիցէ. Շահավաճառ, ասէ, բարւոք ընթանայ։ Թէ լսէ ինչ՝ չլսելոյն առնէ, և թէ տեսանէ՝ չհայելոյն ։

Ոչ երբեք ասէ յայտ զոր գործէն, այլ թէ՝ Խորհուրդ 'ի մտի ունիմ. և թէ խոստովան ինչ ուրեք լինիցի. Մոռացեալ եմ, ասէ։ Է ինչ զոր՝ Տեսից, ասէ. է զոր՝ Չըգիտեմ, և է ընդ որ՝ Զարմանամ, և է ուրեք զի՝ Եւ ես ինքն զդոյն խորհիմ, ասէ։

Digitized by Google

Միով բանիւ, ճարտար է միշտ յայս ձեւս խօսից. Է՛հ ոչ հաւատամ, ոչ կարծեմ, զարմանք է. և յաւելու թէ՝ Այլ յայլմէ եղեալ եմ. և թէ՝ Այդ ոչ պատմեցաւ ինձ. Նոր և չքնաղ իրք են առ իս. Երթ այլում ումեք ասա. քե՞զ արդեօք անհաւատացից՝ եթէ նմա եղից մեղ, ոչ գիտեմ, տարակոյս է ինձ։

Այլ զգո՛յշ լեր, մի՛ փաղփաղակի հաւատացես այսպիսի ձայնից և պատ 'ի պատ բանից և շատախօսութեանց, քան զոր չիք ինչ գտանել չար։ Ի կեղծաւոր և 'ի նենգաժէտ բարուց առաւել պարտ է զգուշանալ՝ քան յիժից։

ԹԷՈՓՐԱՍՏՈՍ. Նկարագիրք։

---

## ՎԱՍՆ ԶՕՇԱՔԱՂՈՒԹԵԱՆ

Զօշաքաղութեան է ժողովել շահս անպատեհս։ Եւ այնպիսի է զօշաքաղն, որ եթէ հաց տայցէ՝ չդնէ 'ի սեղան բաւական նկանակս. հիւր՝ որ առ նմա իջևանեալ իցէ՝ փոխ առնու 'ի նմանէ. 'ի բաշխելն բաժին յընթրեկերս, Արժան է, ասէ, կրկին մասունս տալ մատակարարին. և անդէն առեալ դնէ առաջի իւր։ Գինի եթէ վաճառեսցէ՝ բարեկամին ևս ջրախառն տայ։ Ի թատրն յայնժամ երթայ հանդերձ որդւովք, յորժամ հանդիսադիրքն ձրի թողացուցանիցեն։ Իբրև հրեշտակութեամբ ուրեք ընդ այլս առաքիցի յիշխանութենէն, զթոշակ ճանապարհին տուեալ նմա 'ի քաղաքէն՝ 'ի տան թողու, և յուղեկցացն փոխ մուրանայ։ Ծառային իւրում բառնայ բեռն 'ի վեր քան զկար, և սակաւ քան զայլոցն տայ նմա զպէտսն։ Եւ որ ինչ նմա անկանի տալ հիւրոյթ ասպնջականին իւրում, զայն ևս 'ի (յուղեկցաց) նոցանէն խնդրեալ՝ երթայ վաճառէ։ Յօժա-

Digitized by Google

նելն 'ի բաղանիս, ճահահոտ է իւղդ զոր գնեցեր ինձ, ասէ ցմանուկն. և օտարին խաղալ օծանի: Թէ ոք յընդոծնացն գտանիցէ պղինձ 'ի փողոցի, չպատկառէ հայցել և իւր մասն, ասելով՝ թէ Հերմէս հասարակաց է: Զպարեգօտ իւր տուեալ 'ի լուացումն, երթայ առնուլ յանօթ 'ի ծանօթիցն, և զայն ագանի յերկարեալ զբաղում աւուրս, մինչև անդրէն յետս պահանջեսցի: Եւ այլս այսպիսիս:

Ճշգաչափ և բարձրայատակ ամանով ինքնին բաժանէ ընտանեացն զպէտսն, քաջ հարթելով զերեսս թաթաղուն անօթոյն: Դիւրագին առնու 'ի բարեկամէն, և երթայ վաճառէ մեծագնի: Ի հատուցանելն զպարտս քառասուն մնասուց՝ խորէ դրամս չորս:

Եթէ առ հիւանդութեան չգնայցեն մանկունք իւր աւուրս ինչ 'ի դպրոց, ըստ նմին չափոյ հատանէ զվարձսն. և զԱնթեստիրիոն ամիսն ողջոյն չյղէ զնոսա յուսումն՝ վասն տեսարանաց թատերցն յաճախելոյ, որպէս զի մի՛ զվարձս ամսոյն բովանդակ տայցէ: Յորժամ 'ի ծառայէն հաս առնուցու, 'ի նմանէ տուգանէ զտոյժս դրամոցն. զնոյն առնէ և յորժամ 'ի գործակալէն համարս առնուցու:

Իբրև կոչունս առնիցէ երգակցացն, 'ի միջոյ անտի կերակրոյն բաժին խնդրէ որդւոց իւրոց. և զկէսս անգամ բողկից՝ զկոտորոց սեղանոյն ընդ գրով արկանէ, զի մի՛ սպասաւորկու մանկտին գողանայցէ: Ուղեկից լեալ ուրեք ընդ ծանօթս իւր, նոցա ծառայիւքն պաշտի 'ի պէտսն, և զիւրն 'ի վարձու տայ յայնժամ հեռի ուրեք, և զգինսն ոչ բերէ 'ի ծախս հասարակաց:

Եթէ հանգանակք 'ի տան նորա լինիցին, 'ի համարի առնէ և զոր յիւրմէ անտի արկանիցէ փայտ, պոյտն, աղ, քացախ և ձէթ 'ի ճրագ: Յորժամ 'ի սիրելեացն ոք իւր կամ դստերն հարսանիս առնիցէ, աւուրբք ինչ յառաջ անապարէ խոյս տայ 'ի քաղաքէն, զի մի՛ և ինքն օժտաբեր ընծայատար լինիցի: Ի ծանօթիցն զայն ինչ

իրս առնու 'ի փոխ' որ բնաւ և չպահանջիցին յետս. և եթէ դարձուսցէ ևս' ոչ ումեք փոյթ լինիցի առնուլ:

ՆՈՅՆ

---

## ՎԱՍՆ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Ագահութիւն է չգիտել զպատիւ անձին' որ ծախիւքն լինիցի: Եւ այնպիսի ինչ ոք է ագահն, որ զի թէ յողբերգական յաղթանակ տարցի' պսակ փայտեղէն նուիրէ Սպանդարամետին, մակագրեալ յանուն իւր: Իբրև տուրք մատուսցին 'ի ժողովս ժողովրդեան, ինքն լուռ կայ, և կամ յարուցեալ 'ի միջոյ անտի զանձն արտաքս ճողոպրէ: Ի հարսանիս դստերն' զամենայն միս զոհին, բաց 'ի նուիրականացն, տարեալ վաճառէ. և հարսանեացն սպասաւորս 'ի վարձու ունի առանց ռոճկաց: Իշխան նաւապետ կացեալ 'ի պատերազմի, զղեկավարին անկողինսն տայ արկանել իւր 'ի պաղպաջունսըն, և զիւրսն խնայէ:

Յորժամ աւուրք ընծայաբերութեան իցեն մանկանց առ վարժապետն, չառաքէ զնոսա առ նա, պատճառելով' թէ խօթ իցեն, զի մի նպաստ 'ի հանգանակն լինիցին: Եւ 'ի վաճառանոցէ առեալ պաշարս, միս և խաւարտս, ինքնին յանթի հարեալ տանի: Եւ եթէ զպատմուճանն 'ի լուացս տայցէ, 'ի տան նստի:

Եւ իբրև ազդ լինիցի նմա թէ բարեկամն հանգանակ ժողովիցէ, յառաջագոյն զգուշացեալ խոտորի 'ի նմանէ զճանապարհայն, և երկայն շրջանաւ դնայ մտանէ 'ի տուն իւր. կնոջ իւրում, որ և պռոյգ մեծ իցէ բերեալ նմա, ոչ առնու գնածոյ նաժիշտս, այլ մանկիկ մի որքանեալ 'ի վարձու ունի նմա 'ի պէտս' յորժամ 'ի կանանոցէն 'ի դուրս ելանիցէ: Յարուցեալ ընդ այգն ինքն

Digitized by Google

ածէ առեալ տանն, և զմահիճսն յարգարէ։ Եթէ նստել ուրեք հարկանիցէ, բազմական արկանէ իւր զգրգլեակն՝ զոր զգեցեալն է։

ՆՈՅՆ

---

## ՎԱՍՆ ԱՄԲԱՐՀԱՒԱՃՈՒԹԵԱՆ

Ամբարհաւաճութիւն անշուշտ թուի լինել ցոյց անգոյ բարեաց։ Եւ ամբարհաւաճ այնպիսին է, որոյ կացեալ 'ի կիրճ ծովուն՝ պատմէ եկաց և պանդխտաց, թէ քանի՜ բազում են նորա ինչք 'ի վերայ ծովու. ճառէ և զշահից փոխի՝ թէ քանիօն իցեն, և թէ ինքն որչափ ինչ շահեցաւ և կորոյս. և զայս այսպէս մեծամեծս կոտորեալ, առաքէ անդէն զմանուկն առ լումայափոխն, առ որում զրամ մի եւէթ կայ նորա։

Եւ առ ուղեկցին պատեհ առեալ գիտէ ասել զճանապարհայն, թէ որպէս ընդ Աղեքսանդրի զինուորեցաւ, և զիարդ եղև ընդ նմա, և որչափ ականակուռ բաժակս յաւարի առեալ եբեր ընդ իւր. և զարհեստից ճարտարացն վիճի՝ թէ քաջ քան զեւրոպէացիսն են։

Եւ զայս ամենայն համբաւ զրուցէ առանց 'ի տարաշխարհ ուրեք 'ի քաղաքէն ելանելոյ։

Ասէ եւս, թէ գիր հասեալ կայ նմա յԱնտիպատրոսէ, որ պատմէ՝ թէ երրորդ ինքն է մտեալ 'ի Մակեդոնիա։

Եւ թէ տուաւ նմա իշխանութիւն առանց մաքսի վաճառս փայտից անտի հանելոյ, սակայն ինքն հրաժարեաց, զի մի՛ ինչ յումեքէ յաշաղեսցի. զի առ մակեդոնացիսն առաւել զգաստութիւն պիտոյ է։

Եւ թէ որպէս 'ի սովի առաւել քան զհինգ տաղանդ ծախք իւր հաշուիցին՝ վասն չքաւորաց քաղաքացւոցն զպէտսն մատակարարելոյ. զի զլանալ ումեք ոչ գիտէ։

Digitized by Google

Եւ եթէ անծանօթք ոմանք առ նովաւ լինին բազմեալ, առնէ զմի 'ի նոցանէն քուեայս առնուլ՝ հաշուս արկանել. և աճեցուցեալ զնոսա ցվեցհարիւր առ միոյ, եղեալ և անուանս իւրաքանչիւր նոցա 'ի դէպ, գտանէ տաղանդս տասն. և զայն ամենայն նպաստ լինել առնէ յիւրմէ 'ի հանգանակ սեղանոյ նոցա. և յաւելու՝ թէ ոչ արկանէ 'ի համար զվերակացութիւնս պատերազմին նաւացն, և ոչ զայլ ևս հասարակաց պաշտամունս զորս պաշտեաց ձրի։

Մատուցեալ և առ վաճառականս ընտիր երիվարաց՝ պատճառի գնել. անտի 'ի թանգարանսն անցեալ՝ խնդրէ հանդերձս երկուց տաղանդաց, և մարտնչի ընդ ծառային՝ թէ ընդէ՞ր առանց արծաթոյ չբերիր զիմ կնիք։ Եւ թէ վարձուք 'ի տան բնակիցէ, իմ հայրենի ապարանք են, ասէ առ անգէտսն, և վաճառել կամիմ, զի անձուկ է ինձ յընդունելութիւն հիւրոց. և թէ կայ առ նմա ջուր ցուրտ 'ի ջրհորոյ աննման, և պարտէզ ուռճացեալ առատ և փափուկ բանջարօք, և խոհակեր հմուտ 'ի պատրաստութիւն համադամոց, և թէ տուն նորա գո՛գ իջևան է, քանզի լի է զօրհանապազ, և թէ բարեկամք իւր են կարասն ծակ, զի ամենայն բարեացն զոր առնէ՝ ոչ կարէ լնուլ զնոսա։

ՆՈՅՆ

---

## ՎԱՍՆ ՉԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Լեզու, ասէ առաքեալն, հուր ծախիչ է, աշխարհ և ժողով եղեռնութեանց, չարիք անհանդարտ. աղբիւր լի թունօք մահաբերին. լեզու հուր է. հանուրց վրդովիչ. ախտ վրդովայոյզ և լի թունով մահաբերիւ։ (Յակոբ. Գ. 6–8)։ Զայսոսիկ ահա բերէի 'ի վերայ լեզուի չարախօս-

ախն եթէ ձեռն արկեալ էր իմ զճշգրիտ և զհարազատ պատկեր դժնդակագունի տխուր տալ ձեզ. աստ է իսկ՝ եթէ լեզու յաչաղկոտին հուր ծախիչ է, որ տոչորէ զամենայն յոր հասանէ. որ զխորդն և զցորեան ընտիր. ըզպիղծն և զսուրբ հաւասար խառնէ. որ զաւեր և զամայութիւն եհեթ թողու ընդ որ անցանէ. որ զընդերս անդամ երկրի պեղէ՝ գնալ խառնել ընդ ծածկագունիցն տարերաց. որ զպատուականն և զչքնաղ յաչս մեր՝ յեղաշրջէ յաճիւն անարգ. որ և մինչ թաղեալն թուի և մերձ 'ի շիջանել, հզօրագոյնս և աղիտագոյնս գործէ. և զոր սպառելն չբաւէ՝ մթագնէ. գիտէ և երբեք հաճոյանալ և փայլել՝ մինչև իցէ վնասել. լեզու՝ հուր է։ Ասէի ես թէ չարախօսութիւն է ժողով եղեռնութեանց, ամբարտաւանութիւն իմն զաղտնածածուկ, որ զչիւղ յական եղբօրն ականէ մեզ, թագուցեալ 'ի մէնջ զգերանն որ յաչս մեր. Նախանձ վատթար, որ 'ի բնական ձրից և յաջողուածոց ընկերին վիրաւորեալ՝ խնդրէ զնա, ջան 'ի գործ արկեալ մթագնել ըզպայծառութիւն այնր ամենայնի որ տան գլել զնովաւ. ատելութիւն կեղծադէմ, որ զպատրուակեալն զատնութիւն սրտին 'ի խօսսն ծաւալէ. անարժան կեղծաւորութիւն, որ զովեալ յերեսս՝ յօշոտէ 'ի ծածուկ. թեթևամտութիւն ամօթալի, որ անձին իւրում տիրել չգիտէ և ոչ անյողդողդ կալ 'ի բանին, և որ զկեանս իւր յաճախ և զանդորր 'ի վտանգ արկանէ 'ի պատճառս անխորհուրդ իրիք եպերանաց՝ զոր հաճոյական զոլ գիտիցէ. անվըրդով գազանութիւն, որ զհեւաւոր եղբայրն պատառէ. գայթագղութիւն՝ առիթ գլորման և մեղաց՝ որոց ձեզն լսեն. անիրաւութիւն՝ որով կապտէք յեղբօրէդ ձերմէ որ ինչ գոյ նորա ցանկալի քան զամենայն. լեզու՝ հանուրց վրդովիչ։ Եւ դարձեալ թէ ախտ վրդովայոյզ է չարախօսութիւն, որ աղմկէ զընկերութիւն, երկփեղկէ զարքունիս և զքաղաքանի, քակտէ զսերտ մտերիմս. աղբիւր է քինայոյզ ատելութեանց, և յոյժ և մտանէ՝ լնու ադ-

մրկաւ և խռովութեամբ. ամենուրեք թշնամի խաղաղութեան, քաղցրութեան և քրիստոնէական բարեկրթութեան. լեզու՝ ախտ վրդովայոյզ։ Ցաւելով 'ի վերջէ թէ աղբիւր է մահաբեր թունից. ապականեալ է ամենայն որ բղխէ 'ի նմանէ, և ապականէ զորս զնովաւն իցեն. գեղեալ են և գովութիւնք նորա, դրուատիք նորա շարտրուեստ և լռութիւնն եղեռնաւոր. 'ի շարժուածս և 'ի գնացս և 'ի հայեցուածս իւր կրէ զթոյն, զոր ծաւալէ ըստ հաճոյից կամաց իւրոց. լեզու՝ լի թունօք մահաբերիւք։

ՄԱՍԻԼԼՈՆ. Քարոզք։

---

## ԲԱՐԻ ԹԱԳԱՒՈՐ

Խաբի որ միանգամ ապահով կարծէ զթագաւորն անդ՝ ուր չիք ինչ ապահովութիւն 'ի թագաւորէն։ Ապահովութիւն ապահովութեամբ դաշնաւորեսցի։ Չեն պէտք կանգնելոյ բարձրաբերձ ամուրս, և ոչ ամրացուցանել զդժուարամատոյց բլուրս, ոչ զկողս լերանց հատանել, և բազմապատիկ պարսպօք և աշտարակօք զանձն պարըսպել. զթութիւն՝ անպատասպար ապահովէ զփրկութիւն թագաւորի։ Միայն ամրութիւն անպարտելի՝ սէր քաղաքացւոցն է։ Իբրև զի գեղեցիկ է կեալ փափագմամբ բոլորեցուն, որոց և ուխտք սրտից՝ ոչ լու 'ի լու ոստիկանացն իցեն. և թէ դոյզն ինչ դեդեւեսցի առողջութիւն, ոչ յոյս արծարծեսցի 'ի մարդիկ, այլ երկիւղ. չկայցէ ինչ ուրուք այնչափ պատուական՝ զոր ոչն յօժարեսցի փոխանակել ընդ կենդանութեան իշխանին իւրոյ. զամենայն որ ընդ նա անցանէ՝ ընդ անձն իւր զըլխովին անցեալ համարեսցի։ Այսպիսօրէն անդուլ ցուցակութեամբ լաւութեան յայտ առնէ զի ոչ եթէ տէրութիւնն է իւր, այլ ինքն տէրութեան հասարակաց։ Ո՞ համարձակեսցի դաւ ինչ գործել նմա. ո՞ ոք՝ եթէ 'ի

Ձեռն իւր իցէ՝ զչարաբաղդութիւնս անգամ չկամիցի յետոյս նահանջել 'ի նմանէ, առ որով ծաղկին արդարութիւն, խաղաղութիւն, ապահովութիւն և փառք. և քաղաքն ճոխացեալ՝ յորդեալ զեղու առատութեամբ ամենայն բարութեանց։ Եւ ոչ այլով ոգւով նայեցի ընդ առաջնորդ իւր, բայց որպէս 'ի դիսն անմահս՝ թէ գայցին մեզ յանկարծ 'ի տեսութիւն՝ պատկառանօք և բարեպաշտութեամբ։ Իսկ արդ զի՞նչ իցէ. միթէ չիցէ նոցին մերձաւոր ետեղակալ նա՝ որ աստուածանման երևի վարուք, բարերար և բազմապարգև և կարող 'ի լաւ անդր։ Այսոցիկ արժան է իղձ լինել և զայսոցիկ զհետ երթալ, և այնպէս մեծանուն եղանիլ, զի և լաւանուն միանգամայն եղիցիս։

ՍԵՆԵԿԱ. Թղ. Գրուշեան։

---

## ԲՌՆԱՒՈՐ

Բռնաւորաց ընդարոյս է անողորմութիւն։ Բռնաւորն զանազանեալ է 'ի թագաւորէ ոչ անուամբ, այլ արդեամբք. քանզի և Դիոնեսիոս Մեծն իրաւամբք մարթի նախապատիւ համարիլ քան զբազումս 'ի թագաւորաց։ Իսկ զՂ. Սիլլա զի՞նչ արգելուցու բռնաւոր կոչել, որ 'ի սպանելոյ թշնամեաց վախճան եդ սպանութեանց։ Թող իջցէ 'ի պատուոյ դիկտատորութեան և 'ի կարգ մտցէ պատմուճանազգեցից. սակայն ո՞ ոք երբեք 'ի բռնաւորաց այնչափ անյագութեամբ արբ զարիւն մարդկային՝ որպէս զնա, որ հրաման ետ սրախողխող առնել զեօթն հազարս 'ի քաղաքացւոց անտի Հռովմայ։ Եւ մինչ մօտ առ տեղւոյն բազմեալ 'ի տաճարին Բելլոնայ՝ լսէր զմիաձայն գոչիւն աղաղակի հազարաւորաց որք հեծէին ընդ սրով, 'ի սոսկալ ծերակուտին՝ ասէ.

Digitized by Google

„Մեք մերոցս ուշ դիցուք, հարք ատենակալք. սակաւք ոմանք խռովարարք 'ի մահ մատնին իմովս հրամանաւ„: Զայդ ոչ ստեաց, զի յաչս Միլլայի սակաւք թըւէին: Գթութեամբ ևեթ մեծապէս որոշին 'ի միմեանց թագաւորն և բռնաւոր. թէպէտ և երկոքին նովին զինուք են ամրացեալ, բայց առաջինն 'ի պատսպարանս խաղաղութեան վարի նոքօք. իսկ երկրորդն առ 'ի սանձել մեծաւ ահարկութեամբ զատելութիւն մեծ: Հակառակօք 'ի հակառակսն վարի. ատելի է՝ քանզի ահընկէց է, և կամի ահընկէց լինել, քանզի ատելի է: Ողորմ վիճակ. այլ անձամբ անձին ողորմելի. զի չէ մարթ այլոց ողորմել այնպիսումն՝ որ արիւնհեղութեամբք և յափշտակութեամբք վարեաց զիշխանութիւնն. և խիթալիս անձինն կացոյց զամենեսին, զօտարս և զընտանիս 'ի զինուց երկուցեալ՝ 'ի զէնս անդր եղև ապաստան. ոչ 'ի հաւատս բարեկամացն յուսացեալ, և ոչ 'ի զաւակացն բարեպաշտութիւն: Որոյ շուրջ հայեցեալ յորս արարն և զորս առնելոցն է, և զխիղճ մըտացն տեսեալ յայտնապէս լի և ծանրացեալ ժանտագործութեամբ և տանջանօք, մերթ երկնչի 'ի մահուանէ, և մերթ ևս բղձ լինի այնմ. ատելի անձին՝ քան իւրոց ծառայից:

ՆՈՅՆ

---

## ԱՅՐ ԲԱՐԿԱՑՈՂ

Եւ զի գիտասցես թէ չեն առողջ մտօք՝ ըմբռնեալքն 'ի բարկութենէ, հայեաց և 'ի կերպարանս նոցա: Զի որպէս մոլեգնելոցն սեպհական նշանակք են դէմք յոխորտ և սպառնական, ճակատ կնճռեալ, աչք խոժոռահայեացք, գնացք խուճապեալ, ձեռք անհանդարտ, գոյն թափեալ, ստէպ և ուժգին յոգւոցհանութիւնք, նը-

մանապէս և բարկացողացն նոյն նշանք են։ Աչք փայլակնացեալք և բոց արձակեն, երեսք հրացեալք համակ՝ 'ի յորձնեռանդն յուզելոյ արեանն 'ի խորոց սրտին. շրթունքն դողդոջեն, աղխեալ փակին ատամունք, քստմնին հերքն և դիզանան, հատկլեալ անձկանայ շունչն, անդամոցն յօդք ճարճատեն ինքնատանջ, հեծումն և մռնչիւն և բարբառ կիսահազագ և կցկտուր, ձեռաց ստէպ ստէպ ընդ իրեարս բախումն, գետինն ընդ ոտիւք դոփեալ և բովանդակ մարմինն դեդևի. ոբոտայ սպառնալից, և համայն՝ տեսիլ իմն գարշ և քստմնելի կերպարան անգեղեայց և սոնքացելոց երևի։

Եթէ առաւել նզովելի իցէ ախտն թէ առաւել գարշելի՝ չմարթէ ասել։ Զայլս 'ի կրից թաքուցանել մարթ է և ծածկապէս սպաս տանել նոցա. բայց բարկութիւն անձնամատն նշաւակի յերեսս ցոլացեալ. և որչափ բուռն իցէ և սաստիկ՝ այնչափ մեծաբորբոք 'ի յայտ գայ։ Ո՞չ տեսանես զի և կենդանեաց ամենեցուն՝ ընդ դրդելն 'ի բարկութիւն և 'ի մխաս՝ անդէն այլափոխին երևոյթք, և թողեալ զբնիկ կերպարանս հեզութեան և հանդարտութեան՝ բովանդակ մարմնովքն դժնէանան։ Վարազուց բերանքն փրփրին և կրճտելով սրին ատամունք. ցլուցն եղջիւրք տատանին ընդ օդս և աւազ ընդ ոտիւքն փոթորկի 'ի բախմանէ. առիւծք մռնչեն. օձից գրգռելոց փքոցուռոյց այտնուպարանոց, և շանց կատաղելոց դժնեայ է տեսիլն։ Զիք կենդանի այնպէս ահագնատեսիլ և այնպէս վայրագ 'ի բնէ, յոր 'ի բորբոքելոյ բարկութեանն՝ ոչ յաւելցի դըժնէութիւն։ Են են արդարև և այլք 'ի կրից անթաքչելիք, ոչ ժխտեմ. ցանկութեանն, երկիւղի և յանդըգնութեան են նշանք սեփականք՝ որովք նշաւակին. և սրտի յուզելոյ յուժգնագոյն կրից՝ հարկ է զի գուշակ լիցին երեսք։ Զի՞նչ ապա խտիրն իցէ. — Այն՝ զի ուր այլք 'ի կրից նշմարին եւեթ, սա մերկապարանոց կայ։

ՍԵՆԵԿԱ. Յղ. Բարկութեան.

Digitized by Google

## ԱՅՐ ՇՈՂՈՔՈՐԹ

Էր 'ի բանակի անդ յազգէ Դօլօպաց՝ Եւրիմաք ոմն անուն, որ դիտէր շողոքորթութեամբ ընդ միտ մտանել և ըստ ախորժակաց և բնաւորութեան արքայից զանձն պատշաճել, հանճարեղ և ճարտար 'ի գիւտ հնարից հաճոյ լինելոյ նոցա: Ոչ էր ինչ յաչս նորա դժուարին, և 'ի խնդրել ուրուք զկարծիս նորա, գուշակէր զնոյն ախորժելին: Զուարճախօս էր, երգիծանող տկարաց և մարդահաճոյ այնոցիկ՝ յորոց երկնչէրն, ճարտար 'ի յերիւրել մեղմախառն դրուատիս համեստագոյն իսկ օրերոյ ընդունելի. զգօն ընդ զգօնս, զուարթ ընդ զուարթաբարոյս, և յամենայն կերպարանս դիւրափոփոխ:

Անկեղծք և առաքինիք, որ միշտ նոյնպիսիք՝ պատկառ կան կարգաց առաքինութեան, ոչ երբեք այնպէս հաճոյ գտանին իշխանաց՝ որպէս որք շողոմենն զկիրս բռնացեալս 'ի նոսա:

Հմուտ էր Եւրիմաք պատերազմի և 'ի յանձանձանս իրաց տեսչութեան, և 'ի խնդիր բախտի յարեալ էր 'ի Նեստոր, և ստացեալ զմտերմութիւն նորա. և որ ինչ կամէրն գիտել՝ որսայր հանէր 'ի խորոց անապարծ սրտի նորա՝ որում ոչ անհաճոյ էին գովութիւնք:

ՖԷՆԵԼՈՆ. Տելեմաք:

---

## ԵՐԻՔԹՈՆ ԿԱՄ ԳԻՒՏ ԴՐԱՄՈՅ

Պարտ է ինձ և զԵրիքթոն ցուցանել քեզ յանձուկ հատիս, զայն որ արծաթի հնարաւորեաց դրամս՝ առ 'ի դիւրել զտուրևառիկ շահաւէտութիւն ընդ կղզիս Եւլա-

Digitized by Google

դայ, բայց չարեաց հետևանաց հնարիցն նախատես լեալ՝ խրատ ետ ազգաց բնաւորականօք ճոխանալ գոյիւք, որ ճշմարիտ մեծութիւնքն են. Գործեցէք, ասէր, զերկիր, ժողովել հունձս յորդառատ և զեղուն գինւոյ և ձիթոյ և ամենայն բերոց. յաճախեսջիք զանդեայս՝ սնանել կաթամբ նոցա և զգենուլ զասր. այսու օրինակաւ հեռի լիցի 'ի ձէնջ վտանգ կարօտութեան: Ըստ առաւելուլ ձեզ որդւոց՝ յաւելցին մեծութիւնք ձեր, եթէ միայն վաստակասէրս զնոսա ուսուցանիցէք. զի անսպառ է զօրութիւն երկրի, և ըստ թուոյ և ըստ ժրութեան աշխատաւորաց՝ գործի բեղնաւորագոյն, առատաձեռն է 'ի հատուցումն երկոց, ուղիղ և ժլատ թերահոգ մշակին: Խնդրեցէք ապա նախ զատոյգ մեծութիւնս, որ լնուն զանհրաժեշտ պէտս մարդկան. իսկ զդրամս արծաթիս յարգեցէք որչափ պիտոյն է վասն զգուշութեան 'ի հինից անխարշելի պատերազմաց, և 'ի տուրևառս կարևորաց՝ որ պակասեն յերկրի ձերում. իսկ այլոց առ հասարակ տուրևառք իւրաց, որ զեղխութիւն եւեթ տածեն և զմնափառ պերճանս և զմեղկութիւն, իցէ՛ թէ անկանէին 'ի սպառ:

Յաւելոյր դարձեալ նոյն ինքն Երիքթոն ասէպ յեղյեղել. Երկիւղ մեծ է ինձ, որդեակք իմ, զի աղխտաբեր լիցին ձեզ հնարք դրամոցս: Կասկածեմ զի զրգռեսցէ սա զագահութիւն, զփառամոլութիւն և զպերճանս. տածեսցէ արուեստս բազումս մնասակարս՝ մեղկիչս և ապականիչս բարուց. տաղտկացուսցէ զերջանիկն պարզութիւն, որ պատրաստէ զամենայն հանգիստ և աներկեանութիւն կենաց, և յարհամարհանս դիցէ զերկրագործութիւն՝ որ է հիմն կենցաղոյս և աղբիւր ամենայն ճշմարիտ բարեաց. այլ վկայեն ինձ դիք, զի բարեսէր մտօք աւանդեմ ձեզ զհնարս զայս օգտակար 'ի բնէ:

Ի տեսանել ապա Երիքթոնի ապականեալ յարծաթոյ զազգս՝ որպէս գուշակեալն էր, խոյս ետ առ վշտին 'ի լեառն ուրեք ամայի, և եկեաց անդ աղքատութեամբ

հեռի 'ի մարդկանէ մինչև յալիս ծերութեան՝ հրաժարեալ յամենայն իրաց տեսչութենէ։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

---

## ՄԵԾԱՅՈՒՆՔ ԱՇԽԱՐՀԻ

Այո՛, եղբարք իմ, ոչ դիպուածոյ տուրք են ծնանելդ մեծ և հզօր. Աստուած ինքնին 'ի սկզբանէ աշխարհի սահմանեալ էր զձեզ 'ի ժամանակեայ փառս, դրոշմեալ 'ի կնիք իւրոյ մեծութեանն և որոշեալ յամբոխէն՝ մարդկորէն մեծապայծառ պատուովք և աւագութեամբք։ Զինչ ինչ արարեալ ձեր նմա՝ առաւել մեծարեցայք քան զայլ մարդիկ, մանաւանդ քան զայնչափ անչափ տառապեալսն, որ հազիւ հաց արտասուաց և դառնութեան ճաշակեն։ Ո՞չ և նոքա իբրև զձեզ գործք ձեռաց նորա են և նոցին գնոց գնեալ--. ո՞չ 'ի նմին կաւոյ ելէք. չիցէ՞ք թերևս առաւել ծանրաբեռինք մեղօք. արիւնն՝ որոյ սերունդ էք, թէպէտ և չքեղ յաչս մարդկան, ո՞չ ապաքէն 'ի նմին թունաւոր ականէ բղխէ՝ որ ապականեաց զազգ մարդկան առհասարակ։ Անուն մեծափառ ժառանգեցէք 'ի բնուստ, բայց առէ՞ք եւս հոգի այլաբուն և յայլ իմն յաւիտենական արքայութիւն սահմանեալ քան զդուզնաքեայս 'ի մարդկանէ։ Զինչ առաւել իցէ ձեր առաջի նորա՝ որ յարարածս իւր չգիտէ այլ ինչ անուանս և խտիրս՝ բաց 'ի պարգևաց շնորհաց իւրոց։ Սակայն Աստուած՝ հայր նոցին որպէս և ձեր, մատնէ զնոսա յաշխատութիւն, 'ի վիշտս, 'ի ցաւս և 'ի տառապանս, և ձեզ պահէ զուրախութիւն, զհանգիստ, զփառս և զյղփութիւն. նոքա ծնանին 'ի չարչարանս, 'ի բառնալ զծանրութիւն աւուրն և զտօթ, 'ի պահարել վաստակովք և քրտամբք իւրեանց զփափկութիւնս ձեր և ըզշռայլութիւնսդ, 'ի ձգել՝ թէ իշխիցեմ ասել՝ հանգոյն ա-

Digitized by Google

Նաանոց զկառս մեծութեան ձերոյ և անխնամութեան։ Այս անջրպետ ահագին՝ զոր Թողու Աստուած ընդ ձեզ և ընդ նոսա, իցէ՞ ինչ տուեալ երբեք պատճառս ձեզ մըտախոհութեան, թող թէ շնորհակալութեան։ Ի ծնէ ժառանգ գտայք այսմ ամենայնի առաւելութեանց. և առանց զմիտսդ 'ի վեր առ գերագոյն պարգևատուն ամենայն մարդկեղինաց տանելոյ, համարեալ էք թէ կարևոր ինչ պէտք էին ձեզ այն ամենայն, քանզի միշտ 'ի նոսին վայելեցէք։ Եղո՜ւկ. դուք 'ի ձեռականաց ձերոց պահանջէք գոհացողութիւն սրտ՝ նշանաւոր և անընդհատ, յերախտաւորելոցդ՝ ծառայութիւն յայտնասեալ. չմորթի նոցա և ոչ վայրկեան մի մոռանալ զառ ձեզ պարտսն. բարերարութիւնդ ձեր տայ ձեզ 'ի վերայ նոցա իրաւունս՝ ունել զնոսա 'ի մշտնջենաւոր ծառայս։ Այտի չափեցէ՛ք զոր պարտիք առ Տէր՝ առ բարերարն հարց ձերոց և բոլոր զարմից։ Իսկ զի՞նչ. շնորհք ձեր գերի՞ս ձեզ կացուցեն, իսկ երախտիքն Աստուծոյ՝ ապերախտս և ապստամբս ևեթ յարուցե՞ն նմա։

ՄԱՍԻԼԼՈՆ. փոքրիկ քառասնորդք։

---

## ԱՍՏՈՒԱԾԱՄՈՌԱՑ ՄԵԾԱՏՈՒՆ

Հուսկ ապա, ամենայն ախտից հանդէս արարէք, դժնդակ և գոռոզ բռնութիւն վառեն 'ի սիրտս աստուածամոռաց մեծամեծացն։ Թշուառութիւնք նոցա առաւել ծանրատաղտուկ են. ըստ տարապայման հպարտութեանն՝ դաժանագոյն են և կորանքն։ Ատելութիւն նոցին անհնարին. քանզի փառասիրութիւն յոյժ փքացուցանէ զնոսա, մոլեգինս և անողոքս գտանէ զնոսին արհամարհանքն։ Երկիւղ նոցին անչափ. 'ի ճշմարիտ չարեաց յապահովացեալք՝ անձամբք անձանց ստեղծանեն մտացածինս, և հողմաշարժ խարշափուն տերև՝ նոցա

Digitized by Google

լեառն թմն է որ գայ տապալի 'ի վերայ իւրեանց: Հիւանդութիւնք նոցա ցաւագինք. որչափ հարեալ 'ի կեանս իցեմք, նոյնչափ որ զայն վտանգէ՝ զարհուրեցուցանէ զմեզ: Սովորեալք յամենայն անուշունս և հեշտալիս զգայութեանց, թէ թև ինչ ցաւ խանգարէ զերջանկութիւն նոցին, և անհանդուրժելի է նոցա. ոչ գիտեն մտացեբար վարիլ, ոչ խօթութեամբ, ոչ առողջութեամբ, ոչ բարեաց և ոչ չարեաց, որ անբաժանելի են 'ի մարդկեղէն բնութենէ: Ջաւուրս նոցա կարճեն հեշտութիւնք, և տրտմութիւնք՝ անմեկին ուղեկիցք նոցին. ճեպեն տագնապեն զմնացուած ամաց նոցա: Առողջութիւնն անժուժկալութեամբ խարխալեալ՝ 'ի յաճախութենէ դեղոցն խաթարի: Անչափ փոյթ զգուշութեան խնամոց յանգ հանեն՝ զոր հեշտութեանցն անչափութիւն չէր մարթացեալ. և եթէ յանչափութեանց փախուցեալք իցեն, փափկութիւնն և դատարկութիւն ինքնին լինի նոցա հիւանդութիւն ինչ և հիւծումն՝ ապստամբ յամենայն հնարից ճարտարութեան, և նոյն իսկ հնարքն մաշեն և սպառեն զայն: Հուսկ ամենայնի՝ հպատակութիւն նոցա թախծալից. սնեալք 'ի կեանս քմաց և հաճոյից, որ ինչ նեղէ և տագնապէ ըզձոսին՝ խեղդ ընդ անձն անկանի նոցա: Հեռի յարքունեացն՝ համարին 'ի տխուր աքսորս կեալ. զառաջեաւ տեառնն՝ քրթմնջեն անդադար զհպատակութենէ պարտուցն և զնեղութենէ բարեվայելչութեանց. ոչ կարեն տանել՝ ոչ հանգստեան սակական պայմանի, և ոչ փառաց աւագամեծար կենացն:

Այնպէս անտանելի է նոցա հանգիստ՝ որպէս ամբոխումն, կամ մանաւանդ ամենայն օրեք ինքեանք ինքեանց բեռն են ծանր: Որ ապերասան և անօրէն կամի կեալ. լուծ ծանր է նմա ամենայն:

ՆՈՅՆ

## ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Այսպէս ահա քրիստոնէական քահանայութեան աղբիւր իմն է անսպառ, յորմէ բղխեն անդադար ջուրք զովարարք՝ յամենայն ուրեք զկեանս և զարդասաւորութիւն տարբերելով. և ի՞ցէ ուրեք գտանել յաշխարհի պաշտօն օգտակարագոյն քան զսա: Այսպէսն փառաւոր և կենսաւոր է պաշտօն զօրականի՝ որ 'ի ղէն վառիցի 'ի պաշտպանութիւն հայրենեաց, և իմաստնոյ՝ որ ճոխացուցանէ զնա յարգասիս անձուն ուղնութեանց և հնարագիտութեանց, և դատաւորի՝ որ պահ ունիցի անմեղկելի հաստատութեան օրինաց աշխարհին. բայց զի՞նչ լինիցի կարգաց ընկերութեանն առանց կրօնից՝ թէ և անսասան կայցեն և զօրութիւն և իմաստութիւն և օրէնք. և զի՞նչ լինիցին կրօնք առանց ուխտի քահանայութեան՝ որ մշտնջենաւորէ զուսումն նորին և զհրահանգս, շնչէ 'ի սիրտ մարդոյ զնորա ազդեցութիւնս, և տայ գործով կատարել զառաքինութիւնս պատուիրեալս 'ի նմանէ: Արդարև ոչ զինու և սպառազինութեամբ՝ որպէս զզօրականն պաշտպանեմք մեք պետութեանս. այլ զինուորք Քրիստոսի Յիսուսի՝ պահանորդք արթունք եմք 'ի վերայ պարսպաց քաղաքին սրբոյ. 'ի միում ձեռին կալեալ զաւազանփող աւետարանին, առ 'ի ազդ առնել և զգուշացուցանել յախտից և 'ի գայթակղութեանց ապականաբարոյ վարուց և ընտանեաց. և 'ի միւսումն զսուսեր ճշմարտութեան՝ առ 'ի վանելոյ զվատթար վարդապետութիւնս՝ որ չարս գործեն զմարդ հաւանութեամբ իսկ մտաց: Ոչ ուսուցանեմք մարդկան, որպէս զիմաստունն, ճանաչել զշրջանս աստեղաց և զկազմած հողագնտոյս, զերէս վայրի որ բնակեն 'ի նմա և զբոյսս դալարւոյ որ պճնեն զերեսս նորա. այլ ուսուցանեմք ժողովրդեան՝ երկիր պագանել և սիրել զարարիչ եղականացս սքանչելեաց. և աւանդեմք նմա զառաջինն 'ի գիտութիւնս՝ զծանօթութիւն պարտուց իւրոց: Արդարև գեղեցիկ իմն է դա-

տաւորի հսկել 'ի պահպանութիւն օրինաց, 'ի սանձահարել զչարս, և 'ի պարսպել զանմեղն 'ի ձեռաց այնորիկ որ զզուէն զնա. այլ եթէ դատաւորն իշխանութեամբն զոր ունի 'ի վերայ գործոց մարդոյ՝ պատուհասէ զյանցանս եղեռանց գործեցելոց, սակայն քահանայն իշխանութեամբն զոր ազդէ 'ի խիղճն՝ զառաջս առնու մանաւանդ եղեռանցն. եթէ նա վերջ տայ կռուոց և անմիաբանութեանց, իսկ սա հեղձուցանէ զնոսին անդէն 'ի սկզբանն:

ՖՐԷՅՍԻՆՈՒՍ. Պաշտ. Քրիստ. Հաւատոյ:

# ՆԱՄԱԿԱՆԻ

## ՊԱՏՈՒԷՐՔ ՅԱՂԱԳՍ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ԵՒ ՕՐԻՆԱԿ ԿՐԹԵԼՈՑ Ի ՆՈՅՆ

Նամակագրութեան արուեստ եղև 'ի համարի մեծի՝ յաւուրս Լուդովիկեայ ԺԴ-ի. նովաւ եղեն անուանի Պալզակ և Վուաթիւր. և եղեն նմանօղք նոցին բազումք յայնցանէ, որք միշտ գյաջողուածոց զհետ գնան։ Այլ եթէ օրինակագիրք ոչ ևս գան յընթերցումն, հետևօղք նոցին անկեալ են 'ի սպառ 'ի մոռացօնս։ Որք հետաքրքրիրք առաւել քան թէ դժուարահաճք՝ պարապեն 'ի խնդրել մասնադէպս 'ի նամականին Կիփաթենի և Տիւնուայէի տիկնոջ, և Մարանայի՝ որոց նամականին մակագրի « Տանիկ լրտես », այլովքն հանդերձ։ Այս ամենայն մատեանք անտես լեալ առ գիտունս, չեն այլ ինչ՝ բայց հաւաքումն անհեթեթ երգիծաբանութեանց, առասպելանման վիպաց և ռամկական պատմութեանց, վաղանցիկ ճարակ չարաբարութեան այնր ժամանակի աբերոյն, խոտեալ յառ ապա եկելոց։ Մի միայն հաւաքումն նամականւոյ՝ արժանի գտաւ հասանելոյ մինչև ցմեզ և կելոյ յառ ապայս, և է այն՝ որոյ խմբագիր ոչ խորհէր՝ ոչ վիպասանութիւն ինչ յօրինել, ոչ երգիծաբանութիւն

Digitized by Google

և ոչ այլ ինչ յայսպիսեաց. ամենեցուն է իմանալ զի զՍեւիննեայ տիկնոջն է բանս։ Ի քերթուածի ուրումն, որոյ վէպք 'ի բարեբաստագոյն ժամանակի ծրագրեալ՝ ոչ ևս է զարդիս կատարելի, յիրաւի առ ի զնմանէ.

Սեւիննէ զմայլելի, քանի՛ վայել են քեզ փառք,
Որոց եղեր դու արժանի՝ ոչ յուսալով այնոցիկ,
Եւ ոչ ընդ միտ իսկ ածէիր զի քեզ որեար յառ աղայս
Լիցի սիրատարփ, յոր գուն գործեն ճըգնին այլք։
Դու 'ի սիրտ Կրիննեանու ըղձոյդ բացեալ զեղուիր.
Թուղթք քոյին ածեն քեզ փառս, և Նիւթ խօսից են մերոց.
Զոր 'ի զուր խնդրեն այլք, դու անաշխատ գըտանես։
Քանզի ետուր դու արտասուել ինձ ընդ վախճան Թիւրեննի.
Ո՞վ ոք քեզ յաղթական լիցի յարուեստ պատմելոյ.
Կենդանագիր տիպք արքունեաց, ոյց ցանկալի են մեզ վէպք,
Լաւ ևս 'ի քէն քան 'ի մատեանըս վիպագրաց նըկարին.
Ըզքաջագունս, զորոց ըզփառս ևեթ այլուր ուսանիմք
Տեսանեմ առ քեւ, լսեմ և խօսակցիմ ընդ նոսա։

Եթէ առաւելագոյն գովութիւն նամականւոյ է ստէպ ընթերցումն նոցին, զի՞նչ առաւել գովեալ քան զնամականին Սեւիննեայ կայցէ. ամենայն ուրեք այնոքիկ ընթերցանին, 'ի քաղաքի, 'ի գեղջ և յուղւոջ։ Զիք մատեան պատուական քան զայն՝ որ զքեզ զբօսուցանէ, որ ցանկալի լինի քեզ, որ զքեզ ուսուցանէ զուգես իմն առանց խնդրելոյ 'ի քէն մտադրութիւն։ Խօսակցութիւն իմն է տիկնոջ սիրելւոյ, ուր չեն պէտք ճգանց, և ձգէ յինքն զոգի յոյլ՝ որպիսի ենն գրեթէ ամենայն մարդիկ, գէթ զկէս աւուր։

Քաջ գիտեմ զի մանրապատում անցք դարուն այնորիկ և արքունեաց՝ որ անուանի եղեն յոյժ՝ կացուցանեն

և այնոքիկ ըստ մասնէ ցանկալի զընթերցումն Նամականւոյն Սևւինեայ. այլ և արքունիք զերմանուհւոյն Աննայի և անցք Ֆրոնդեանց դրդեն զհետաքրքրութիւն. և տակայն տիկինն Մոթուէլ նուազ ընթերցանի քան զտիկինն Սեւինեէ. Է՛ ինչ ապա 'ի սմա առաւելութիւն մատենագրին. և ո՞ կարիցէ անգիտանալ զայն կամ չճանաչել: Եւ է այն 'ի բարեխառնութեան բնականին ընդ փափուկ զգացման և ընդ կիրթ ախորժակի. է եղանակ իմն պատմելոյ յատուկ նմին: Ոչ ոք հաւասարէ կենդանութեան զարձուածոյ բանից նորա և գեղեցիկ բացատրութեանցն. զգայ միշտ զոր ասէն և զոր պատմէ. նկարագրէ՝ որպէս թէ առաջի աչաց ունելով զնախատիպն, և թուի ընթերցողին տեսանել զայն: Երևակայութիւն ազդու և շարժուն, որպիսի է սովորաբար 'ի կանայս, հետզհետէ յարընչէ զնա առ ամենայն և տիրապետէ նմա յորս պարապէ: Տես 'ի նամականին նորա զմահ Թիւրեննի. ոչ ոք այնպէս 'ի սրտէ ելաց զնա. այլ և ոչ ետ ոք այնչափ արտասուել 'ի վերայ նորա. քան զամենայն զամբանական ճառս առնն մեծի՝ առաւել գորովէ սա զսիրտ. ոչ միայն զի զամենայն ինչ ճշմարտիւ և զգալով պատմէ, այլ և զի չէ կասկածելի որ ինչ գրեալ 'ի նամակի, որպէս այն որ 'ի ներբողենի. ոչ է մարթ ժխտել զայս: Դժուարին յոյժ ճիգն է ասել՝ լուարուք ինձ, զովելոց եմ. լուարուք ինձ, արտասուելոց էք. զի յայնժամ մանաւանդ զոգին արտասուք և զարմանք: Ի սոփյել ճարտասանին զմեզ՝ զարուեստ իւր 'ի գործ դնէ, և արուեստի նորա մարթ է ընծայել զմասն ինչ փառացն քաղցրինն գովասանելոյ: Տիկինն Սեւինեէ չկարէր արդեօք յօրինել զգեղեցիկն ճառ Ֆլէշիէի. և եթէ տուաւ ազդէ նամականն, յընտանեկան խօսիցն է՝ որովք խօսի ընդ մեզ. չիք նորա պաշտօն յանձն առեալ 'ի կատարումն. խօսին միտք նորա ընդ մերս՝ առանց զեկուցանելոյ զառաջարկութիւն խօսիցն, և զի խօսի որ ինչ և զգայ:

Որ ոք կամի խելամուտ լինել և ուսանել ինչ 'ի գրա-

Digitized by Google

տանս իսկ իւր, գտանէ 'ի նամականւոջ անդ և այլ ինչ օգուտ. այս է՝ տեսանել անդ անաղօտ զոգի այնր ժամանակի, զինչ էր յայնժամ անուն Լուդովիկեայ ԺԴ֊ի, զինչ արքունիքն, զինչ պաշտօնասիրութիւն, զինչ քարոզիչ ոք 'ի Վերսայլ, զինչ ոք է խոստովանահայրն արքայի՝ յիսուսեան Հայրն Լաշէզ, առ որ ամբաստանեալն 'ի Լիւքսամպուրկ՝ երթայր առանձնանալ 'ի կըրթութիւն հոգևոր: Տեսանել անդ զտկարութիւնս խառն ընդ կրօնից և զբօսանաց՝ որ բերէին զնկարագիր տիկնայց երևելագունից. զփափկութիւն ոգւոյ՝ որ յոստանիկս անդ խառնէր ընդ շողոմս. զեղանակն տակաւին փոքր ինչ ասպետական և դիւցազնական, ոչ անմասն 'ի ծածուկ հնարագիտութեանցն տաղանդոյ: Սակաւք են մատեանք՝ որ առաւել տայցեն խորհել ընթեռնլեաց, որք 'ի խելամտութիւն քան 'ի զբօսանս գան զնոքօք:

Միւս ևս է 'ի միտ առնուլ 'ի նամականին Սեւինեայ տիկնոջ. զի մարթ է ումեք 'ի ձև բանիցն ցուցանել ախորժակ բազում, իսկ 'ի դատմունսն սակաւ. վասն զի ձև բանից 'ի մտաց մերոց է, իսկ դատումն ոչ դուն ուրեք 'ի մտաց այլոց, մանաւանդ կոչեցելոցն հասարակաց: Բանասիրաց վտանգ է ոչ բարւոք դատելոյ առ շահախնդրութեան, որ մինչև 'ի մոլորութիւն զառածանի. իսկ հասարակաց մարդկան՝ 'ի սկզբան անդ անընտրութեամբ՝ որ տայ նոցա ընդունել դիւրաւ զկարծիս տուեալս նոցա, և ապա յամառութեամբ՝ որով վճռեալ պնդին յընկալեալ կարծիս: Այս իսկ է որ տայ աւելի կամ նուազ տևել մտահաճութեանց ընկերութեան, աղբիւր այնքանեաց անիրաւութեանց: Աստի տիկնոջն Սեւինեայ անիրաւութիւն առ Ռասին, զորմէ ասէ՝ թէ « Անցցէ որպէս զխահուէն ». և փակէր զզարմանս իւր 'ի նմանէ, զի մի կարծիցի շրջեալ 'ի կարծեացն իւրոց զՔոռնեյլեայ: Եւ սակայն թուի թէ չկայցէ պարզագոյն ինչ և դիւրագոյն քան զաքանչացուցումն ընդ երկուս մեծանուն մատենագիրս միանգամայն. այլ ոչ այդպէս առնեն

տառաւելագոյնք 'ի մարդկանէ։ Թուի ինձ այնպէս թէ չգուցէ նոցա ախորժակ առաւել քան զարմանալոյ ընդ մի ոք, և իցեն նախանձոտք և կասկածոտք 'ի կարծիս իւրեանց որպէս տարփաւորացն է բնաւորութիւն, և չկարիցեն ներել զի համեմատեսցի ոք ընտրելոյն 'ի նոցանէ. դարձեալ չիցէ իսկ պարտ յիրաւ տանել միում՝ զլանալ և միւսումն զիւր իրաւունս, և խառնել 'ի ներքս զշարաբարութիւն։ Են որք առ 'ի պարառել ևեթ զայլ՝ զուլեն զոք. և առ 'ի չհեռանալ 'ի մերմէ ժամանակէս, անտի 'ի քսան ամս՝ եօթն կամ ութ մատենագիրս, յառաջ իւրաքանչիւր մի ըստ միոջէ եկաց որպէս « միակ քերթող, միակ հանճար, միակ քանքար », իբր թէ չգոյր այլ առ մեզ։ Այսպէսն յետոյ ուրեմն միաբանեցին ամենեքեան 'ի մոռացօնս արկանել զնոսա առ հասարակ. զի պարտ է տեղի տալ այլոց։

Ես այլ ինձ ստգիւտ ծանրագոյն եղև զՍեվինեայ տիկնոջէ, այլ ոչ յիրաւի, իբր թէ ցոյցս առնիցէ 'ի նամականին սուտ զգացմանց, և թէ չսիրէր նա զդուստր իւր։ Ամբաստանութիւնս այս ոչ միայն առանց ապացուցի է, այլ և ընդդէմ հաւանականութեան. ոչ է մարթ արուեստակել զեղանակն զայն բանից. եթէ տիկինն Սևինեէ չսիրէր զդուստրն՝ մ՛ ստիպէր զնա 'ի զեղուլ այնպիսի գորով խանդակաթ. առ ի՞նչ տաժանաւորն այն կեղծաւորութիւն, որ ըստ բարի պատահման չէ ինչ հնարաւոր. դիւրագոյն իսկ է կեղծել զտարփանս քան զգորով մայրենի. և չէր մարթ տիկնոջս առանց այնր գորովոյ յառաջ բերել զայն հրաշազան յորդութիւն բացատրութեանց, զոր անկեղծութիւն ևեթ կարէ կացուցանել զերծ 'ի ծանրատաղտուկ միաձայնութենէ։

Միշտ անալի է ստութիւն, միշտ ձանձրալի և անզօր.
Իսկ բնութիւն միշտ ճշմարիտ և նոյն հետայն ըղ-
ձալի։

Գուպոյի է առացուածս. այլ եթէ չէր նորին, էր իսկ առողջ մտաց։

ԼԱՀԱՐՓ. Ընթացք բանասիրութեան։



Digitized by Google

## ՏԻԿԻՆՆ ՍԵՎԻՆԵԷ ԱՌ ԴՈՒՍՏՐՆ ԻՒՐ

Ահա օր սոսկալի, դուստր իմ սիրեցեալ. վկայեմ և
ես ինքնին զի ոչ ևս այլ կարեմ հանդուրժել: Ընդ այն
ցաւէ ինձ մանաւանդ զի թողի զքեզ այդպէս. խորհիմ
և թուեմ զամենայն քայլափոխս քո, թուեմ և զիմսն.
և իցէ՞ մեզ հնար այդ օրինակ գնացիւք հանդիպել եր֊
բեք իրերաց: Սիրտ իմ առ քև ևեթ կայ յանդորրու֊
անդ՝ 'ի բնիկ կայի իւրում կայ, և ընդ այն միայն ա֊
խորժէ:

Որ ինչ եղեն յառաւօտուս՝ ազդէ յիս ցաւ սաստիկ,
և կեղեքէ զսիրտ իմ, զորոյ զվաղն էրն քեզ անկ է իմա֊
տասիրել: Ես յանձին իմում կրեցի զայն և կրեցից ընդ
երկար: Զսիրտ իմ և զմիտս դու ինքն գրաւեալ ունիս
բովանդակ. առանց արտասուաց խորհել զքէն ոչ կա֊
րեմ, և զքէն խորհիմ միշտ, մինչ զի անըմբերելի են ինձ
կիրքս. այլ զի ծայրացեալ են, ակն ունիմ զի ոչ երկա֊
րատևք իցեն 'ի նմին սաստկութեան: Ամենուրեք զքեզ
խնդրեմ միշտ, և ամենուրեք պակասէ ինձ ամենայն, զի
դու ինձ պակասես: Աչք իմ՝ սովորեալք 'ի հանդիպել
քեզ յաճախ՝ այս չորեքտասան ամիսք են զի ոչ ևս գտա֊
նեն զքեզ: Անցեալն ժամանակ քաղցր և սիրելի, ցաւա֊
գին գործէ զառաջիկայն, մինչև առ սակաւ սակաւ սո֊
վորեալ ընդելացայց. բայց ոչ ցայնվայր զի ոչ ևս անձկա֊
րեաց կարօտացայց տեսանել զքեզ վերստին և գիրկս
զքև արկանել:

Չիք ինձ առաւել քան զանցեալն ակն ունել յապա֊
գայէն. գիտեմ ո՛րչափ ինչ 'ի բացակայութեան քո կրե֊
ցի. և այնու առաւել եղկելի գտանիմ, զի յանխորհուր֊
դըս արարի ինձ սովորոյթ անհրաժեշտ տեսանելոյ ըզ֊
քեզ: Թուի ինձ՝ զի 'ի մեկնելն իմ ոչ որչափ պարտն էր
փարեցայ զքև: Եւ ընդէ՞ր էր ինձ խնայել. ոչ ցուցի քեզ

Digitized by Google

ըստ բաւականին թէ ո՛րչափ գոհ գտայ ընդ գործավալքր խանդաղատանս քո. ոչ ըստ բաւականին յանձն արարի զքեզ Կրինեանի. և ոչ ըստ բաւականին շնորհս կալայ Նմա վասն ամենայն խնամոցն և սիրոյն զոր խոստացաւ ինձ. ապաստեալ Միացից արդեանց Նոցին ըստ ամենայն գլխոց:

Ապաստիմ անձկակարօտ, և չիք ինձ մխիթարութեան ուստեք ակն ունել՝ բայց 'ի թղթոց քոց, որոց հառաչախառն ապաստեալ Միամ և Միացից դեռ ևս: Համայն առել, դուստր իմ, կեամ միայն վասն քո: Տացէ ինձ Տէր շնորհս սիրելոյ զինքն յաւուր միում այնպէս որպէս ըզքեզդ սիրեմ: Չեղև երբեք անճառումն թախծագին քան զմերն. զի և ոչ բանիւ միով շարժեցան շրթունք: Ողջամբ Միա, որդեակ իմ սիրեցեալ. կարեկից լեր ինձ զի թողի զքեզ: Աւա՜ղ, ահա դարձեալ Նամականի:

---

## ՔՐԻՍՏԱՓՈՐ ԳՈԼՈՄՊՈՍ ԱՌ ԱՐՔԱՅՆ ՍՊԱՆԻՈՅ

Տէր արքայ,

Ի Տիէկո–Մենտեայ և 'ի թղթոցն զորս աւանդեմ Նմա, գիտասցէ վեհափառութիւն ձեր եթէ որպիսի՛ ձոխ բովս ոսկւոյ գտի 'ի Վերակուա և թէ որպէս խորհէի թողուլ զեղբայրն իմ առ գետովն Պեռլինայ, եթէ կամք երկնից և աղէտք մեծագոյնք քան զամենայն չէին լեալ ինձ խափան: Սակայն շատ է ինձ զի Տէրութիւն ձեր մեծափառ և որք զհետ ձեր, ժողովեսցեն զփառս և զօգուտ ամենայնի. զի գիւտն յանկ ելցէ, և զի ձեռն բարեբախտագունի ուրուք քան զթշուառն Գոլոմպոս՝ արկցէ աստ զհիմունս աշխարհակալութեան: Եթէ հաճեացին երկինք հաստուցանել զՄէնտէս 'ի Սպանիա, նա ինքն խելամուտ արասցէ անշուշտ զդշխոյն իմ տիրուհի, որ-

Digitized by Google

պէս և զՏէրութիւնդ մեծափառ, զի ոչ ամրոցի միայ կամ դղեկի գիւղք են աստանօր, այլ բազմաժողով հըպատակաց, և գաւառաց և անբաւ ճոխութեանց՝ զորս ոչ լայնատարր միտք բովանդակել կարեն, և ոչ ընչաքաղց ագահութիւն ցանկանալ:

Բայց ոչ քարտէս, և ոչ լեզու մահկանացուի կարասցեն երբեք բացայայտել զվիշտս և զկիրս հոգւոյ իմոյ և զմարմնոյ, և ոչ նկարագրել զաղէտս և զվտանգս որդւոյ իմոյ և եղբօր և բարեկամաց: Այս տասն ամիսք են և աւելի զի 'ի տախտակամածս նաւացն մերոց՝ խրելոց առ ծովեզերբ՝ ագանիմք բացօթեայք: Առողջագոյնքն մնացեալք 'ի նաւաստեայն իմոց, ապստամբեցին ընդ առաջնորդութեամբ Սեվիլեանն Բերասայ, և բարեկամք իմ հաւատարիմք առ իս, կամ խօթացեալք են և կամ յոգիս ապաստանք: Սպառեցան պաշարք հնդկայնոց, և լքանեն նոքա զմեզ, և անշուշտ կորիցուք 'ի սովոյ: Աղէտքս այսոքիկ յարակից այլ ևս հանգամանօք՝ այնպէս ծանրացան 'ի վերայ իմ, զի եղէ ես ողորմ խաղալիկ բախտին, և թշուառագոյն քան զոր ուրեք երբեք ետես աշխարհ. որպէս այն թէ և երկինք ցասուցեալ սատարիցեն մախանաց սպանիացւոց՝ պատուհասելով իբրև ոճիր զսպաս ծառայութեան մեծի ձեռնարկութեանս իմոյ՝ զարժանաւորն վարձուց: Երկինք, և որք 'ի նմա բնակեալքդ էք սուրբք, թող գիտասցէ արքայն Փերտինանտոս, և վեհագոյն տիկինն իմ՝ դշխոյն Իզապէլլա, զի վասն առաւելութեան եռանդեանս իմոյ 'ի ծառայութիւն և 'ի շահ օգտի նոցա՝ գտայ վատաբախտ քան զամենայն մարդ կենդանի. քանզի անհնար է վշտակիր լինել իբրև զիս և տեսել 'ի կեանս: Խիթամ և աստատեն իսկ տեսանեմ սարսափմամբ զչարաման վախճանն իմ և զորոց ընդ իս զքաջացն հիքացելոց, որք առ սէր իմ կորնչելոց են ընդ իս: Աւա՜ղ, արդարութիւն և գթութիւն տեղի ալւեալ ամփոփեցան յերկինս, և եղեռն մեծ թուեցի այսօր մեծապէս բարերարել մարդկան, և կամ լինել յու-

տադիր։ Յաղեսից տասի չարեաց բեռն անբերելի եղեն ինձ կեանք, և խիթամ գուցէ սնոտի անուանք պատուոյ մեծանշխանաւոր ծովակալութեան և փոխանորդի արքայի տանելի արարեալ իցեն զիս ազգին սպանիացւոց։

Ծիծաղեսցի ոք արդեօք առ սրտմտութեան, տեսեալ զհնարան որք գործին 'ի խզել զԹել կենաց՝ որ մերձ 'ի հատանել է. քանզի ծերացեալ իսկ եմ հասակաւ, և յօդացաւ անբերելի տանջէ զիս, և 'ի ցաւոց այտի և 'ի բիւրուց եւս այլոց պատահեալ՝ անկեալ դնիմ ոգեսպառ 'ի վշտալիենեաց միջի, ուր չեն իմ ոչ կերակուր և ոչ դեղ 'ի դարման մարմնոյ, և ոչ քահանայ կամ խորհուրդք սուրբք 'ի զօրավիգն հոգւոյ. մարդիկն որ ընդ իմն էին՝ ապըստամբեալ են յինէն, և որդին իմ և ամենայն բարեկամք խոյթացեալ կան, հիւծեալք և օրհասականք։ Աքին զիս Հնդիկք, և քաղաքապետն Սրբոյն Դոմինիկոսի առաքեաց առ իս սաստկել յաւէտ զմահ իմ, կամ 'ի Թաղել զիս աստ կենդանւոյն, քան Թէ 'ի Նպաստաւորել մեզ. քանզի Նաւակն առ 'ի Նմանէ առաքեալ չեբեր առ մեզ ոչ. զրոյց ինչ և ոչ Թուղթ, և ոչ առնուլ ինչ 'ի մէնջ կամեցաւ. յորմէ առնում գուշակել զի պաշտօնէից մեծափառ Տեառնդ կամք այս իցեն՝ աստ վախճան առնել ուղեւորութեանցն իմոց և կենաց։

Ո՜վ խնկունհի մայրդ Աստուծոյ, որ կարեկից ես Թշուառացելոց և զրկելոց, ընդէ՞ր չեղև ինձ կորնչել 'ի Կենելեայ Գովատիլլայ, յորժամ կողոպտեացն զիս և զեղբայրն իմ յասկւոյն՝ որ այնքան ծանրագնի լեալ էր մեզ, և առանց դատելոյ, առանց յանցանաց և առանց ատուերաց իսկ եղեռան, արկեալ 'ի շղԹայս՝ առաքեաց զմեզ 'ի Սպանիա։ ՇղԹայքս այսոքիկ, աւա՜ղ, միակ գանձք իմ են այսօր՝ որք Թաղեսցին ընդ իս, եԹէ գտայց բարեբախտ՝ գագաղաց և գերեզմանի միոյ լինել արժանի. քանզի ցանկամ 'ի պատիւ անուանն Սպանիացւոց՝ զի և յիշատակ եղեռական և անիրաւ աղխտից կորիցէ ընդ իս իսպառ։ ԵԹէ այդպէս լեալ էին իրք, ո՜վ փառաւո-

բեալ Կոյս, ոչ ընդ ամիսս տասն կամ երկոտասան թողեալ էր զմեզ Ովրանդոսի առ ափն չարախոտավէտ կորստեան, որոյ ապիրատութիւն ոչ ինչ 'ի վայր քան զաղէտս մեր է։ Ո՛հ, գէթ մի և այս եղեան ամօթապարտ՝ յաւելցէ արատել զանուն Կաստիլեան, և երանի թէ դարք ապագայք մի գիտասցեն երբեք զի 'ի դարու յայսմիկ գտան ապիրատք յայն վատութիւն հասեալք, մինչև կարծել պաշտօն առնել Ֆերդինանդոսի՝ կործանելով զվաստաքախտն Գողոմպոս, ոչ վասն իւրոյ ինչ յանցանաց, այլ զի եգիտ և պարգևեաց Սպանիոյ աշխարհ մի նոր.

Դու լինքնին, Աստուած ամենազօր, դու ազդեցեր և առաջնորդեցեր ինձ յայդ։ Ցոյց ինձ զողորմութիւն քո, և հաճեաց ակնարկել քաղցրութեամբ յայս գործ վատաքախտիկ. ողբասցէ զիս աշխարհ ամենայն և որ 'ի նմա սիրողն է արդարութեան և մարդասիրութեան. և դուք, հոգիք սուրբք երկնաւորք, որք գիտակդ էք անմեղութեանս իմոյ, ներեսջիք մարդկան ժամանակիս, որ նախանձոտն է յոյժ և անկարեկիր 'ի վիշտս իմ։ Նոքա որք ծնանելոցն են՝ լացցեն անշուշտ յաւուր միում, 'ի լսել զի Գողոմպոս իւրովք ընչիւք և սակաւ ինչ ծախիւք, մանաւանդ թէ առանց իրիք արքունական նպաստից, վտանգաւ կենաց իւրոց և եղբօրն, 'ի քսան ամս, չորիցս ուղևորութեամբ, այնպիսիս մատոյց Սպանիոյ սպասս մեծամեծ ծառայութեանց՝ որպիսիս չիք ուրուք 'ի թագաւորաց և 'ի թագաւորութեանց ընկալեալ երբեք. և սակայն առանց իրիք ամբաստանութեան եղելոյ զնմանէ՝ լքեալ թողաւ կորնչել աղքատ և հէգ, կապտեալ յամենայնէ՝ բաց 'ի կապանացն իւրոց. այնպէս զի որ ետն Սպանիոյ աշխարհ մի նոր, չկարաց ոչ 'ի նորն յայն և ոչ 'ի հինն գտանել հիւղ մի աղքատին 'ի պատըսպարանս իւր և թշուառ ընտանեացն։

Սակայն եթէ երկնից կամք իցեն տակաւին հալածել զիս, և չիցէ հաճ ընդ գործս իմ. իբրու եթէ գիւտ նորոյ

Digitized by Google

աշխարհիս ազատաբեր իցէ հնոյն, և կամիցի պատուհասել զիս․ փոխճան անձնելով փառաբանէիկ կենացս 'ի թշուառութեան վայրիս, դուք, հրեշտակք սուրբք, որք նպաստամատոյց էք անմեղին և զրկելոյն, հատուցէք ըզթուղթս զայս առ վեհազն իմ տիրուհի․ գիտէ նա որչափ ինչ կրեցի ես 'ի փառս իւր և 'ի ծառայութիւն․ մեծ է արդարութիւն նորա և գթութիւն, և ոչ հանգուրժեսցէ զի եղբայր և որդիք այնորիկ՝ որ ետուն Սպանիոյ ճոխութիւնս անբաւ, և յաւել յինքնակալութիւն նորա աշխարհս լայնածաւալս և Թագաւորութիւնս անծանօթս, կարօտ գտցին հացի, և մուրողութեամբ հայթայթեսցեն զկեանս իւրեանց։ Տեսցէ նա, եթէ կեայ, զի անգթութիւն և ապախտաւորութիւն յուզեն զցասումն երկնից։ Ճոխութիւնքն զորս յայտնեցի՝ կոչեսցեն համօրէն զազգ մարդկան 'ի յաւար և յարուսցեն ինձ վրէժխնդիրս․ և գուցէ յաւուր միում կրեսցէ ազգն զպատուհաս անօրէնութեանցն, զորս չարութիւն․ ապախտաւորութիւն և նախանձ գործեն այսօր։

---

## ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ՏԱԿԻՏՈՍ

Ընթերցայ զգիրս քո, և խնամով, որչափ յիմն էր, նըշանակեցի զոր ինչ զեղչելի և զոր ինչ փոփոխելի համարեցայ 'ի նմա։ Քանզի սիրելի է ինձ ասել զճշմարտութիւն, որպէս և քեզ լսել յօժարութեամբ․ զի որ առաւելագոյն գովութեան է արժանի, առաւելագոյն սիրով զպարսաւանս ընդունի։ Այժմ ես ինքն փոխարէն ակն ունիմ գրոցն իմոց առ 'ի քէն նշանագրութեամբք։ Ո՜վ գեղեցիկ և ցանկալի փոխանակութեանս։ Զիա՞րդ բերկրալի է ինձ՝ զի թէ յետնոց փոյթ ինչ զմէնջ իցէ, պատմեսցի որով միաբանութեամբ և պարզութեամբ սրտի և հաւատարմութեամբ եղեաք առ միմեանս։ Անտոնոր և

նորանշան իրք են երկուց ոմանց, գրեթէ հասակակցաց, և ոչ 'ի սպառ աննշան եղելոց 'ի գրականութեան, (հարկ է ինձ ճշդելով խօսել զքէն, քանզի և զինէն են բանքն), օժանդակել իւրեանց 'ի վաստակս։ Ի պատանեկութեանս իմում՝ մինչդեռ անուամբ և փառօք փայլէիր դու, ցանկալի էր ինձ նախանձաւոր և հետևող 'ի բացուստ՝ այլ մերձաւորագոյն քեզ քան զայլ ոք գոլ և երևել։ Են և այլք բազումք պայծառացեալք հանճարով, այլ ես՝ 'ի նըմանութենէ բնութեան բերեալ՝ զքեզ ընտրեցի ինձ օրինակ գերագոյն և արժանաւոր 'ի նմանութիւն։ Եւ ընդ այն խնդամ մեծապէս, զի ուր զգրականութենէ բանք լինին, անբաժան յիրերաց յիշատակիմք. զի ողք զքէն առնուն խօսել, զիս ինքն տեսանեն յանդիման։ Իցեն և այլք վերադասեալք քան զմեզ զերկոսեան. այլ զի՛ փոյթ է ինձ թէ յորում վայրի հաւասարիցիմք իրերաց. քանզի որ մերձաւորագոյնն է քեզ՝ նա է ինձ առաջին։ Զայս և 'ի կտակս տեսեալ իցէ քո. զի երկաքանչիւր մեզ, 'ի բաց առեալ զոր միոյ ուրուք 'ի մէնջ մերձաւորագոյն լեալ իցէ ոք բարեկամ, յամենեցունց նոյն հրիտակ և նոյն բաժին հաւասար կարգեալ է։

Այս ամենայն յայն յանգին՝ զի ջերմագոյն ևս սիրով սիրեսցուք զմիմեանս, զորս այսչափ բազմադիմի զօդք գիտութեան, բարուց, համբաւոյ, և կտակագրաց ևս կամք կցորդեն ընդ իրեարս. Ողջ լեր։

## ՍԵՆԵԿԱ ԱՌ ԼՈՒԿԻԼԻՈՍ

Ցո՛ և դառնամ զծերութիւն իմ տեսանեմ յանդիմանեալ։ Եկի այսր յագարակն իմ և բողոք ունէի վասն ծախուց տանն մերձ 'ի փուլ եղելոյ։ Ասէ ցիս տնտեսն. ոչ յիմոց ինչ թերահոգ խնամոց են վնասքն. զի որ ինչ 'ի կարե իմում էր արարի. այլ զի հինաւուրց տունն է։ Սակայն

Digitized by Google

այն դաստակերտ իմ է. և զի՞նչ ինձ լինիցի, եթէ ժամանակակիցք իմ քարինք այդպէս խարխալին: Զայրացեալ ընդ այն՝ իսկ և իսկ կալայ պատեհ թափելոյ զցասումն իմ. Ահա, ասեմ, անխնամ թողեալ թուին ինձ սօսիքդ տերևաթափք ամենևին, գօս և խեղաթիւր ոստովք վարակեալք, և որպէս զազիր և բորբոսեալ բունքն են. զորս թէ շուրջ զարմամբքն պեղեալ ոք և բաժակեալ էր, ոչ այդպէս լինէին: Երդուեալ այրն 'ի բախտն իմ՝ ոչինչ ամենևին պակասեցուցեալ 'ի խնամոց. այլ ծառքդ այդոքիկ ծերացեալք են: Բայց սօսիքն այնոքիկ, (մի ոք լուիցէ) ձեռատունկք իմ են, և ես ինքն տեսի զաղարթանալ նոցա զառաջինն: Եւ դարձեալ 'ի դուռն կողմն՝ ասեմ. Ո՞ է զառամեալդ այդ ծեր՝ արժանապէս առ դըրանն կառուցեալ, զի և երեսք իւր 'ի դուրս են[1]: Ո՞ւր գտեր դու զդա. և զի՞նչ այդ հաճոյք իցեն քեզ բառնալոյ զմեռեալ օտարի: — Իսկ զի՞նչ, ասէ կանգնեալն. ո՞չ ճանաչես զիս. ես եմ Փիլիկիոս, վարձաւորի քո Փիլոսիտեայ որդի, մանկիկ զբօսանաց քոց, որում զպատկերիկսն բերէիր խաղալիկս: — Ասեմ. Արդարև զառանցէ դա. ի՞նքն մանկիկ 'ի զբօսանս ինձ. սակայն մարթի. զի և ատամունք նորա մեծաւ մասամբ թօթափեալ են:

Շնորհապարտ եմ ագարակին իմում որ այդպէս ամենուրեք զծերութիւն իմ կացոյց ինձ յանդիման: Հապա, ընդգրկեսցուք զայն սիրով. լի և առաւելեալ է մըխիթարութեամբք՝ եթէ գիտասցէ ոք վարել նովաւ. համեղագոյնք են պտուղք հասունացեալք. մանկութիւն վայելչագոյն ևս 'ի կատարածին է. արբեցողաց բերկրալի ևս է ումպն վերջին, որով զգլխեալ և զինահարին իսպառ. հեշտութեանց ամենայնի 'ի սպառուածին է հզօրագոյն ազդեցութիւն: Հաճոյագոյն ևս է անցեալն հա-

[1] Քանզի 'ի հնումն սովորութիւն էր առ դրան կանգնել զմեռեալն՝ երեսս 'ի դուրս ունելով. յայն ակնարկեն բանքս հեգնօրէն ասացեալք:

Digitized by Google

տակ՝ այլ ոչ ապառեալ. նա և այնմ իսկ՝ որ մօտ 'ի վախճանել է, թուի ինձ՝ զի ոչ սակաւք իցեն իւր բերկրութիւնք. զէթ՝ զի ազատ 'ի ցանկութեանց է՝ լցի նմա այն 'ի բերկրանս։ Զիարդ քաղցր է խոյս տալ 'ի ցանկութեանց և պարտասեցուցանել զնոսա։ Ասիցես. ծանր է և դժպհի տեսանել զմահ զառաջեաւ։ Այլ նախ՝ որպէս ծերոյ նոյնպէս և երիտասարդի պարտ է զառաջեաւ ունել զմահ. զի ոչ եթէ որպէս 'ի համարակալաց՝ կոչիցիմք ըստ կարգի։ Եւ դարձեալ՝ չիք ոք այնչափ զառամեալ, որում չիցէ օրէն միոյ ևս աւուր ակն ունել. և մէն մի օր՝ ոտնփոխ մի է ընթացից կենաց։ Կենացն բովանդակութիւն յաջորդութեամբ մասանցն բոլորի. և են նորա շրջանակք՝ մեծագոյնք զփոքումբք պարունակեալք, և մի այլ որ զամենեքումբք ոլորտացեալ պարունակի։ Է որ յօրէ ծննդեան ձգի մինչև ցօրն վերջին, է որ ըզպատանեկութիւնն բովանդակէ, է որ զընթացս մանկութեան, և հուսկ ապա՝ է որ զտարեւորականն բերէ զչափ ժամանակի, որոյ բազմապատկութեամբն բովանդակին կեանք։ Ամսականն շրջան անձուկ է. անձկագոյն ևս աւուրն. սակայն և այնր սկիզբն է և կատարած՝ յարևելից յարևմուտս ձգեալ։ Այսր աղագաւ Հերակլիտոս, որ վասն դժուարիմաց բանիցն Սկոտինոս (Մթին) կոչեցաւ՝ ասէ. «Մէն մի յաւուրց հաւասար է այլոց». զոր այլ ոք այլազգ առնու իմանալ. ոմն ըստ ժամուցն թուոյ զհաւասարութիւնն դնելով, և ոչ սխալէ. զի եթէ քսան և չորս ժամք են աւուր, հարկ է ամենայն աւուրց հաւասար գոլ իրերաց. զի որով չափով կարճի տիւն, նովին չափով գիշերն երկայնի. այլ ոք ըստ նմանութեան առնու իմանալ զմի օրն հաւասար այլոց. իբրև զի ոչ ինչ երկարագոյն է և նորա չափ ժամանակի քան զբովանդակեալն 'ի մի օր ընդ տիւ և ընդ գիշեր. որոց թէպէտ ըստ յաջորդել եղանակաց փոփոխին չափք՝ մերթ երկայնելով և մերթ կարճելով, բայց ոչ այլայլին։

Հարկ է մեզ ապա զմէն մի յաւուրց որպէս վերջա-

պահս կարգել չուոյ կենաց մերոց և իբրև լրումն նորին և սպառուած։ Գոկովխոս որ զԱսորիս յերկար վարչութեամբն մեփականեաց, 'ի զիներրուս և 'ի խրախճանութիւնս զգալից հացկերոյթ մահուն իւրոյ կատարեալ, ընթրեաց անտի յառագաստ իւր 'ի խրախճանակցացն յուղարկաւորէր ծափաձայն հնչմամբ ներդաշնակաւոր երգոց դոչելով Եկեաց, եկեաց (Βεβίωται)· և զայս նա զօր ամենայն։ Արդ զոր նա անխիղճ մտօք՝ մեզ ուղղութեամբ սրտի ասնել պարտ է. և մինչև 'ի քուն մտեալ՝ ասել բերկրալից խնդութեամբ՝

Կեցի, զընթացս իմ կատարեալ, զոր ինձ Հրամանքըն կընքեցին։

Զվաղիւն եթէ հաճեսցի տալ մեզ Աստուած, ընկալցուք զայն ուրախութեամբ։ Երանելի է և վստահ յանձն իւր՝ որ անդորր մտօք վաղորդայնոյն ակն ունի։ Որ ասէն թէ՝ կեցի, աւուր աւուր յարիցէ 'ի շահել։

Այլ արդ ժամ է կնքելոյ զթուղթս։ Սակայն, ասիցես. Այդպէս զուրկ և անմասն 'ի շահաւէտ ճոխութենէ հասցէ առ իս թուղթդ։ — Մի՞ ինչ հոգար. դոյզն ինչ ածցէ ընդ իւր. բայց զի՞նչ ասեմ դոյզն. մեծ ինչ մանաւանդ. զի զի՞նչ պատուականագոյն քան զիմաստս զայս՝ զոր աւանդեմս նմա բերել առ քեզ թէ՝ Զար է կեալ 'ի կարօտութեան։ Բայց չիք ինչ հարկ կալոյ 'ի կարօտութեան։ — Ու զիարդ։ — Բաց են ամենուստ ճանապարհք դիւրին և համառօտ ելանելոյ յազատութիւն [1]. շնորհք են Աստուծոյ զի ոչ զոք կաշկանդեալ ունի 'ի կեանս. մարթ է և օրէն զկարօտութիւնս իսկ առ ոտն կոխել։ — Ասիցես. Եպիկուրեայ են այդ բանք. և զի՞ է

[1] Այս վրիպակ վարդապետութիւն է Ստոյիկեանց, յորոց առանու և Սենեկա օրինաւոր համարել զանձնասպանութիւն՝ ասա և յայլ գիրս իւր. ուչինչ յիշելով զի կեանք գերագոյն պարգևք են Աստուծոյ. և որ պարգևեացն զայն, ինքն է տէր կենաց և մահու։

Digitized by Google

քեզ և ընդ բանս օտարի։ — Որ ինչ արդարն է և ճըշմարիտ, այն իմ է։ Ոչ դադարեցայց զեպիկուրեայն երկբորդել առ քեզ. զի ոըք բառից ևեթ ուշ ունին, և ոչ ըստ խօսեցելոցն՝ այլ ըստ խօսելեաց զբանսն յորդեն, ՚ի միտ առցեն զի որ ինչ յաշխարհի բարութիւնք են՝ հասարակաց են համայն։

---

## Յ. Ց. ՌՈՒՍՍՈՅ ԱՌ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՄՆ ՈՐ ԽՆԴՐԷՐ ԲՆԱԿԱՆԱԼ Ի ՄՈՆՄՈՐԱՆՍԻ ՁԻ ՕԳՏԵՍՑԻ Ի ԼՈՒՐ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ

Ոչ գիտես, տէր, առ ո՛ գրես. առ այր մի ապիկար, ծանրացեալ կարեօք, և որ ևսն է՝ բազմազբաղ յոյժ, մինչև չկարել յաճախ տալ քեզ պատասխանի, թող թէ ընկերել ընդ քեզ որպէս կամիսդ։ Պատուասիրես զիս՝ կարծելով թէ կարող իցեմ օգտել քեզ. և գովելի ևս ես այնու որով բերիս յայդ ցանկութիւն։ Սակայն և ոչ վասն այնորիկ հարկ իցէ քեզ բնականալ ՚ի Մոնմորանսի։ Չեն պէտք այդչափ ՚ի հեռաստան երթալոյ ՚ի խնդիր սկզբնատարերց բարոյականին։

Խորամուխ լեր ՚ի սիրտ քո, և անդ գտցես զայնսաիկ. և ինձ չէ մարթ աւելի ինչ ասել քան զոր թելադրէ քեզ խիղճ քո՝ եթէ կալցիս զնա քեզ խրատտու։ Առաքինութիւնն չէ ՚ի գիտութեանց սակի՝ յորոց ուսումն այդչափ պատրաստութեանց պէտք իցեն. շատ է թէ կամեսցիս ոք՝ և եղիցի առաքինի. եթէ իցեն ՚ի քեզ տիրապէս այդ կամք, կատարեալ է ամենայն և երանութիւն քո պատրաստ։

Եթէ ինձ անկ էր խրատտու կալ քեզ, զայս առաջին տայի քեզ խրատ. Մի՛ երթալ զհետ ցանկութեան սրտիդ, որով բերիլ ասես առ տեսողական կեանս՝ որ

անգործութիւն իմն է հոգւոյ։ Մարդ հաստեալ է ոչ 'ի խօսկալ, այլ 'ի գործել։ Աշխատաւոր կեանք, սահմանեալ մեզ յԱրարչէն, քաղցր է և հեշտալի սրտի առն բարւոյ՝ որ անձնատուրն իցէ 'ի նոյն 'ի կատարել զպարտըս իւր; և զօրութիւն առողջ հաստակիրդ չէ տուեալ քեզ առ 'ի վատնել զայն յանգործ տեսութիւնս։

Աշխատեաց ապա, տէր, 'ի պայմանի կենացդ՝ յորում եդին զքեզ ծնողք քո և տեսչութիւնն։ Այս առաջին պատուէրք են առաքինութեան որում տենչաս. և եթէ կալ քո 'ի Բարիզ՝ պարապելով 'ի գործ պաշտամանդ յորում ես, դժուարընդել թուեսցի քեզ ընդ առաքինութեան, արա զոր լաւագոյնն է. դարձ 'ի գաւառ քո հայրենի. երթ առ ընտանիս քո, սպաս տար և խնամեա զծնողս քո առաքինիս. անդ լցցես տիրապէս ըզպարտսն՝ զոր դնէ 'ի վերայ քո առաքինութիւն։

Առաւել դիւրըմբռնելի է կեանք տաժանական 'ի բնիկ գաւառի, քան հետամուտ գոլ բախտի 'ի Բարիզ, գիտելով շատ, որպէս ոչ անծանօթ ինչ է և քեզ, զի ամենայն վատթարագոյն և հնարիւք՝ յաճախագոյնք են անդ դատարկապորտ որիկայք քան յաջողեալք 'ի բախտ։

Մի՛ 'ի թշուառութիւն թուեսցի քեզ կեալ որպէս կեայ հայր քո. չիք պայման կենաց՝ որ աշխատութեամբ, արթնութեամբ, անմեղութեամբ և բաւականութեամբ չըլնիցի դիւրատար՝ որոց մտադիւր հպատակեսցեն այնմ 'ի կատարումն պարտուց իւրեանց։

Ահաւասիկ, տէր, խրատք՝ համազօրք այնոցիկ համայն զորս թէ գայիր ընդունել աստ 'ի Մոնմորանսի։ Զիցեն թերևս ըստ քմաց քոց, և խիթամ զի ոչ յօժարեսցիս զհետ երթալ այսոցիկ. բայց ոչինչ երկբայիմ զի տըրջացիս ապա յաւուր միում։ Մաղթեմ քեզ բախտ այնպիսի՝ որոյ յիշատակ չիցէ երբեք դժպհի քեզ։

Digitized by Google

## ԳՈՄԷԼ ԱՌ ՎՈԼԹԷՌ ՅԵՏ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԴԺԲԱԽՏՈՒԹԵԱՆ ԻՒՐԵԱՆՑ

Ահաւասիկ մեզ, տէր, ազատութիւն. վրէժխնդիր լիցուք զչարեացս՝ յօգուտ մեզ զայնս 'ի վար արկանելով։ Թողցուք 'ի բաց զգրագիտական փանաքութիւնսն, որք այնչափ մռայլ արկին զկենցաղավարութեամբդ քով, և այսպէս դառնացուցին զերիտասարդութիւն իմ։ Դոյզն ինչ առաւելութիւն փառաց, դոյզն յաւելուած ճոխութեանց բնաւ իսկ զինչ իցեն։ Երջանկութեան լիցուք զհետ և ոչ երևութից երջանկութեան։ Համբաւ իսկ գերափայլեալ ոչ արժէ երբեք զաշխատութիւնն։ Կարոլոս Ե տենչայր յառանձնութիւն, և Ովիդիոս ցանկայր լինել յիմար։

Ահաւասիկ մեզ ազատութիւն. ոչ ես 'ի Պաստիլ կամ եմ, և ոչ դու յարքունիս 'ի Պէռլին։ Յօգուտ մեզ 'ի վար արկցուք զպատեհս զայս որում յամենայն վայրկենի կարընչել մարթ է։ Յարգեսցուք զմեծութիւնն՝ վնասակար որոց մերձենանն առ նա, և զզօրութիւնն՝ սոսկալի և այնոցիկ որք վարեննն զայն։ Եւ թէ ճշմարիտ է զի չիցէ մարթ խորհել անվտանգ, խորհեսցուք մի։ Որ ինչ բերկրութիւն իցէ 'ի խորհելոյ, հաւասարեսցի՞ երբեք բերկրանաց աներկեան ապահովութեան։ Շատ լիցին մեզ քո վաթսնամեայ փորձ, և իմ վեցամեայ նուաստանալ։ Յաւելցուք 'ի զգօնութիւն, կամ գէթ 'ի խոհեմութիւն. և ամենայն խորշումք ծերութեան և յիշատակ աղխից և փականաց, թշնամանք ժամանակի և իշխանութեան, փոխեսցին մեզ իսկապէս 'ի բարիս։

Digitized by Google

## ԱՆՆԱ ՏԸ ՊՈՒԼԷՆ ԱՌ ԱՅՐ ԻՒՐ ՀԵՆՐԻԿՈՍ Ը.

Դժկամակութիւն Քումդ Մեծութեան և բանտարգելութիւնս իմ այնպէս յեղակարծք թուին ինձ՝ զի չգիտեմ զինչ գրել և յիմ իմիք անբասիր առնել զանձն իմ։ Առաքեցեր առ իս պատգամաւոր զոք, զորոյ գիտես ըղձնացեալ ոխութիւնն առ իս, ասել՝ զի չիցէ ինձ մարթ գտանել շնորհս առաջի քո մինչև խոստովանեալ զճշմարտութիւն։ Զև կատարեալ Նորա զպատգամաւորութիւն իւր՝ քաջ իսկ խելամուտ եղէ խորհրդոց մտացդ։ Սակայն եթէ խոստովանութեամբ ճշմարտութեան լիցի ինձ, որպէս ասես, ելանել յազատութիւն, մտադիւր յօժարութեամբ հպատակեցայց հրամանացդ։ Բայց Մեծութիւնդ քո մի՛ ակն ունիցի երբեք զի կողակից քո հէգ յանձն առնուցու մեղանս, զոր և զմտաւ ածեալ չէ։ Զի ոչ երբեք երբեք լեալ թագաւորի լծակից հաւատարիմ յամենայն 'ի պարտս իւր և առաւելեալ խանդակաթ և անկեղծ սիրով՝ քան զոր եգիտ Մեծութիւն քո յԱննա տը Պուլէն. որոյ շատացեալ արդեօք անուամբն այնուիկ՝ կացեալ մնացեալ էր յիւրումն շափու պայմանին, յոր թէ հաճեցեալ էր Աստուծոյ և Մեծութեանդ քո թողուլ զնա։ Այլ և 'ի փառս անդ՝ յոր ամբարձերն զիս քեզ զուգակից, ոչ այնպէս անկայ ես 'ի քուն մոռացութեան անձին իմոյ, մինչև չխիթալ յարթնութենէ աստի յորում գտանիմս արդ։ Քանզի բարձրութիւն իմ ոչինչ աւելի հիմն հաստատութեան ունելով քան զվաղանցուկ հաճոյս՝ զոր կալարն առ իս, ոչինչ երկմտէի՝ զի դոյզն յեղափոխութիւն 'ի տիպ դիտակին յոր հաճեցարն, բաւական իցէ 'ի դարձուցանել այլուր զաչս քո։ Ամբարձեր զիս 'ի Նուաստութենէ 'ի գահ արքունական՝ վերացեալ 'ի չքեղաշուք փառս տիկնութեան։ Բարձրութիւն արդարև կեր 'ի վերոյ արժանեացս, որպէս և առանց

Digitized by Google

ինչ իմոց իրաւանց։ Սակայն եթէ հաճեցար արժանի համարել զիս այնմ, մի՛ լիցի քեզ, Թագաւորդ մեծ, անիրաւ յողդողդութեամբ մտաց և չարանենգ սադրանօք թշնամեաց իմոց՝ մերժել զիս յարքայական երեսացդ. և մի՛ Թողուցուս զի կեղտ դժնեայ և չարաշուք, որպիսի է անհաւատարիմն գոլ առ քեզ, աղարտեսցէ զհամբաւ անուանոյ քո և զդստերդ իշխանուհւոյ։

Հրաման տուր ապա, Թագաւորդ իմ. առնել հարց փորձ դատաստանի, բայց ըստ օրինաց արդարութեան. և մի՛ Թողուցուս զի թշնամիք իմ ոխերիմք՝ լիցին ինձ դատախազ և դատաւոր։ Հրամայեա զի հրապարակաւ լիցի հարցափորձն. ոչ ինչ երկնչիմ թէ գուցէ ամօթապարտ գտցի հաւատարմութիւնս իմ. նա՝ տեսցես զի եղցէ 'ի լոյս արդարութիւն իմ, փարատեսցի խէթ մտացդ, անդորրասցի սիրտ քո, և զրպարտութիւն փակեսցէ զբերան իւր. կամ եթէ ոչ՝ աշխարհալուր նշաւակեսցին մեղք իմ։ Այսու օրինակաւ՝ որպէս և զիարդ կամք լիցին երկնից և կամ քեզ՝ տնօրինել զինէն, փառք քո անստգիւտ իցէ յաչս աշխարհի, և մեղք իմ յանդիմանեալ յարդարութենէ՝ համարձակութիւն լիցին քեզ առաջի Աստուծոյ և մարդկան, ոչ միայն 'ի պատուհասել զիս որպէս ամուսին անհաւատարիմ, այլ և զհետ գնալ սիրոյ սրտիդ առ նա՝ որ պատճառքն է աղետիցս իմոց, և զոր վաղագոյն ես անուանել իսկ քեզ կարէի. զի ոչ անծանօթ ինչ էր և քոյոյ Մեծութեանդ եթէ մինչև ցօր վայր ժամանէր խէթ կասկածանաց իմոց յիրիդ յայդմիկ։

Ի վերջէ՝ եթէ հաստատութեամբ եդեալ է քո 'ի մտի կորուսանել զիս, և եթէ մահուամբ իմով, զոր ածէ 'ի վերայ իմ զրպարտութիւն. հարկ է քեզ հասանել 'ի վայելս ցանկացելոյ երջանկութեանդ, աղաչեմ զԱստուած ներել մեծեղեռն յանցանացդ. ներել և թշնամեացն իմոց որք արբանեակեն քեզ 'ի նոյն. և 'ի յետնումն աւուր 'ի նստել իւր յատենի, որում և ես և դու հաւ

ընդ հուպ կացցուք յանդիման, և տալ արդարութիւնս իմ, որպէս և զիարդ զատեցեալն աստ՝ ցուցցի յայտ յանդիմանութեամբ, աղաչեմ զքեզ մի խնդրել 'ի քէն համար աստուածպաշտանիշ վասն անողորմ գնացիցն՝ զոր թէ կարցես ընդ իս:

Իմ միակ և վերջին խնդիր առ 'ի քէն այս է՝ զի յիս եթ թափեսցի բովանդակ ցասումն բարկութեան քո, և ազատորեարն հէգ և անպարտական, որ վասն իմ՝ որպէս լսեմ՝ ամբաստանեալ կան 'ի բանտի, արձակեսցին անպատուհաս: Իսկ թէ գտի երբեք շնորհս առաջի քո, եթէ անուն Աննայի քաղցրացաւ երբեք յունկն քո, մի զլասցիս ինձ զշնորհս զայս. և ես ոչ ևս յաւելից աշխատ առնել զքեզ ձր և է օրինակաւ. այլ ընդ հակառակն ջերմեռանդն պաղատանօք խնդրեցից անդուլ 'ի Տեառնէ զի հաճեսցի խնամարկել քեզ և առաջնորդել յամենայն գործս քո:

Ի տխուր բանտէս...

---

## ԳԵՏՐՈՍ ԳՈՄԳԷՑ ԱՌ ԱԻԳՈՍՏԻՆՈՍ ՖՈԼԻԵՏՏԱ
## Ի ՀՌՈՎՄ

Համարիմ զի լուար զուղևորութենէ իմմէ յիմոյն Ափլեայ, և յԱւգոստինեայ Գէացցարոյ: Բայց զի լիցին և ինձ պատճառք խօսելոյ ընդ քեզ, կամիմ զի երկրորդ անգամ լուիցես զայն յինէն: Հեծայ յերիվար, որպէս տեսերդ, կարի տկար 'ի խօթութենէս, զոր շնորհեաց ինձ Հռովմ 'ի վարձ փոխարինի այցելութեանս իմոյ առ նա: Սակայն ըստ յամելս 'ի հեծելութեան, և կազդուրեցայ. մինչ զի 'ի վախճան ուղւոյս գտի զանձն իմ այնպիսի, որպիսի սովոր իսկ եմ լինել: Կամ իզձք՝ զոր ունէի խուսափելոյ 'ի Հռովմայ « յորմէ հիւրընկալ մեծարեցայ », կամ փոփոխութիւն օդոց կամ շարժումն մար-



Digitized by Google

մեայս չնորհեցին ինձ զառողջութիւնդ, կամ թէ ըստ դիպաց երկրին եւս 'ի միասին: Իբրեւ եղէ 'ի Պատաւիոն՝ այց ելի բարեկամաց, և նոքա ինձ. և իջի անտի ապա 'ի գիւղեկն իմ աստ, որ յոյժ խնդութեամբ ընկալաւ զիս, յորում և բնակեմս խաղաղագին, մինչդեռ 'ի Հռովմ ցանգ 'ի վաստակս և յաղմուկս: Ոչ եւս լսեմ լուրս տաղտկալիս և անհաճոյս, ոչ եւս խորհիմ 'ի դատս, ոչ եւս ընդ հոգաբարձուն խօսիմ, կամ ընթանամ 'ի ժողովս քննութեանց. ոչ եւս լսեմ աղաղակ, բայց զոր լսելի առնեն ինձ սոխակք չուրջանակի ընդհակառակս իմն մտեալ ընդ իրեարս, և այլ երամք թռչնոց, ամենեցուն միանգամայն խուրեանց ընտանի ներդաշնակութեամբքն թըւին հաճել զիս: Ընթեռնում յորժամ կամիմ, շրջագայիմ մերթ 'ի հետիոտս, մերթ 'ի ձի, և յաճախ գնամ յանտառակն որ 'ի գլուխ պարտիզիս. և 'ի պարտիզէ անտի իմմէ, որ յոյժ զուարճալի է և գեղեցիկ, է զի ընդ երեկոյս քաղեմ ձեռամբս իմով զմրգեղէնս ընթրեացն, և է զի ընդ առաւօտս լնում կողովակ մի ելակաց, որք ոչ միայն քաղցրացուցանեն զբերան, այլ և զսեղանն բովանդակ լի առնեն հոտովք: Լռեմ ասել զի պարտէզն իմ և տուն և ամենայն ինչ՝ զօրն ողջոյն լի են վարդիւք: Բաց 'ի սոցունց՝ ունիմ և նաւակ մի փոքր, յորում մտեալ ճեմս առնում նախ ընդ գեղեցիկ գետակն, որ միջանցս ընթանայ զառաջեաւ տան իմոյ, և ապա ընդ Պրենդա, ընդ որ խառնի գետակն իմ ողագոյն անցիւք. և է Պրենդա գետ գեղեցիկ և զուարթատեսիլ, որ և այլուր ուրեմն զարտորայսն իմ առոգանէ. ընդ երեկոյս՝ ժամանակս ձիգս գնամ 'ի նմա ոսղապաճեմ, յորում ժամու ջուրք քան զցամաքս հաճոյ ընծային ինձ: Այսպէս ունիմ 'ի մտի լինել աստ զամառն ողջոյն և զաշունն բովանդակ, ընդ ժամանակ ժամանակս գնալով 'ի Պատաւիոն 'ի տեսանել զբարեկամս՝ զաւուրս երկուս կամ զերիս, որպէս զի առ քաղաքաւ վայելչագոյն եւս երեւեսցի ինձ գիւղ.

Ողջ լեր:

Ի գեղջէ 'ի 6 Մայիսի, 1525:

Digitized by Google

## ՏՈՐԿՈՒԱՏՈՅ ԹԱՍՍՈՅ ԱՌ ԱՆՏՈՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ

Զի՜նչ արդեօք ասիցէ տէրն իմ Անտոնիոս՝ զմահ լսելով իւրումն Թասսոյի. զի որպէս և ինձ Թուի ոչ յամեսցէ հասանել այս գուժկան. զգամ զմօտալուտ ելս կենաց իմոց՝ յորմէ հետէ ոչ գտաւ դեղ բուժիչ տաղտկալի ախտիս, որ յաւելաւ 'ի վերայ առաջնոց այլոցն բազմաց, և որպէս հեղեղ սրընթաց և անարգել ահա գայ յափըշտակել զիս: Ոչ է ժամանակս խօսելոյ զապառում բաղդէս, զի մի կոչեցից զայն աննշնորհակալութիւն աշխարհի, որ յաղթութիւն համարեցաւ իբրև զմուրացկան մի վարել զիս 'ի գերեզման, մինչդեռ համարեալ կարծէի՝ եթէ փառքն այն՝ զոր 'ի կորանս յաշաղկոտաց ժառանգելոց էր դարս այս յիմոց գրուածոց, ոչ իսպառ աներախտի զիս թողցէ: Տանել ետու զիս 'ի վանս յայս Ս. Ոնոփրեայ, ոչ յայն սակս միայն զի գլաւութիւն օդոց տեղւոյս բժիշկք գերագոյն ասեն քան զամենայն Հռովմայ, այլ զոգչիր առ սկիզբն առնելոյ 'ի վսեմական տեղւոջէ աստ և կենակցութեան աստուածազգեաց հարցս՝ զքաղաքավարութեան իմոյ յերկինս: Աղօթեսջիր վասն իմ առ Աստուած. և հաւատա աներկբայ, զի որպէս ոչ դադարեցի 'ի սիրելոյ և 'ի պատուի ունելոյ զքեզ 'ի կեանս յայս, զնոյն և 'ի հանդերձելումն 'ի ստոյգ կեանան աբարից, որպէս ինչ վայելէ անկեղծ և ճշմարիտ սիրոյ: Ցանձն առնեմ զքեզ շնորհաց Աստուծոյ, որպէս և զիս ինքնին:

Հռովմ, 'ի Ս. Ոնոփրիոս, 1595:

Digitized by Google

## ՊԵՏՐՈՍ ԲԷՄԲՈՅ ԱՌ ԵՂԲՕՐՈՐԴԻ ԻՒՐ Կ. ԲԵՄԲՈՅ

Ոչ գիտեմ թէ իցէ ինձ արժան աշխատ լինել առ 'ի յիշեցուցանելոյ զպարտս քո. քանզի ամենեցուն իսկ՝ արոց գուցէ պատեհ, որպէս և է իսկ քոյ, պարտք են լինել քաջողք, առաքինի և գիտուն։ Մերթ 'ի զուր յօգացրուել զբանս իմ վարկանիմ, լուեալ թէ զիարդ յամառոց հետէ հեղգացեալ ես յուսումն և պղերգ գտեալ առ ամենայն ինչ. և մերթ զիղջ է ինձ ընդ այս, և փափագեմ գտանել քեզ այնպիսի՝ որպէս և հարկ է գտանել քեզ, զոր երբեւ որդի սնուցի և առ որդի ունիմ։ Այլ 'ի բաց թողեալ զվարանս իմ, ոչ լռեցից յասելոյ՝ թէ ջանասջիր չմնալ պարտական անձին քում. զի չիք քան զայդ պարտականութիւն մեծ և վնասիչ զանցառուին։ Առողջ ես մարմնով և առոյգ հասակաւ, բաւական առ ամենայն վաստակ. ունիս դաստիարակ, որպիսի ոչ ունին որդիք թագաւորին Փռանկաց. և ոչ 'ի պարգևաց բաղդի պակասէ ինչ քեզ։ Արդ յուշ լիցի քեզ, զի թէ ոչ աշխատ լինիցիս ամբարել քեզ արդիւնս, 'ի զարգանալ տիոցդ՝ անձամբ անձին չկարասցես. և ոչ լինիցի քեզ բաւական զոր ես ինչ տաց քեզ։

---

## ՍԵՐՎԻՈՍ ՍՈՒԼՊԻԿԻՈՍ ԱՌ ԿԻԿԵՐՈՆ

Իբրև ազդ եղև ինձ զոյժ մահուան դստեր քոյ Տուլլիոյ, ցաւեաց ինձ մեծապէս՝ որպէս պարտն էր, և հասարակաց մեզ զաղէտսն համարեցայ։ Եթէ ոչ աստ՝ այլ այդր առ քեզ կայի, տեսանէիր արդեօք զցաւս իմ։ Եթէպէտ մխիթարութիւն այգպիսի ապիկար է և դառն, զի որոց մատուցանելն զայն պարտ է՝ մերձաւորք և ըն-

տանիք՝ Նոյին կրիւք զգածեալք, առանց ճգանց և բա-
զում արտասուաց զայդ այսօր հարկանել ոչ կարեն. զի
խնդրանք մանաւանդ յայլոց կարօտին ընդունել մխիթա-
րութիւն քան տալ զայն այլում. սակայն որ ինչ 'ի միտս
իմ գայ 'ի ժամուս՝ կամեցայ գրել առ քեզ համառօտիւ։
Իսկ ոչ եթէ 'ի մոռացօնս քեզ համարիցիմ զգրեալքս
լինել, այլ զի միտք գրաւեալ 'ի ցաւոց՝ չկարիցէ թերևս
խորհել 'ի նոսին։

Ընդէ՞ր իցէ քեզ այդչափ փրկուել յընտանի ցաւոցդ.
յաւէ լիցի քեզ զոր մինչև ցարդ արար ընդ մեզ բախտն.
Երարձ 'ի մէնջ զամենայն՝ որք ոչ ինչ ընդհատ քան զոր-
գիս՝ սիրելիք մարդկան պարտ է թէ իցեն. զերկիր հայ-
րենի, զյարգ, զհամբաւ և համայն իսկ՝ զպատիւ. և զի՞նչ
միտքս ևս այսուիկ ցաւով յաւելուլ կարիցէ. կամ մի՞ այն
սիրտ, որ ընդ այնքաննեաց ցաւոց անցեալ ընդ կիրթ՝ և
ոչ պնդացեալ իցէ և սովորեալ առ ոչինչ գրել զամե-
նայն։ — Բայց ընդ մահ դստերդ մորմոքի սիրտ քո. գի-
տեմ և ես։ Սակայն և 'ի ցաւս անդ խորհել քեզ պարտ
է և զայն՝ զոր և մեք իսկ յեղյեղեմք յաճախ՝ թէ 'ի չա-
րեաց ժամանակիս ոչ չարաբաստ ինչ են նոքա՝ որոց
մարթ իցէ անցու և անվրդով սրտիւ զմահ ընդ կենաց
փոխանակել։ Եւ զի՞նչ 'ի ժամանակի աստ յայսմիկ ա-
ռաջի մնայր դստեր քո. մի՞ գործ, մի՞ ակնկալութիւն բա-
րեաց կամ մխիթարութիւն սրտի։ Թերևս՝ զի ընդ մեծ-
ազգւոյ ուրուք պատանւոյ լծակցեալ՝ վայելէ՞ր 'ի կեանս։
Այո, ոչ դժպատեհ ինչ է քեզ՝ որպէս կարծեմ. 'ի պա-
տանեաց ժամանակիս՝ ըստ արժանի պատուոյ անուանդ
ընտրել զոք փեսայ, յոր կարիցես անկասկած հաւատալ
զծնունդս քո։ Թերևս զի ծնցի՞ որդիս և խնդասցէ 'ի նո-
սա՝ տեսեալ զի բարգաւաճեն փառօք, զի զհայրենի ժա-
ռանգութիւնն անտեսեն անձամբ, զի 'ի պատիւ և յա-
ւագութիւնս պետութեան վերամբառնան տակաւ, զի 'ի
պէտս և 'ի կարիս բարեկամաց ազատաբար լինին ձեռըն-
կալու։ Այլ մի՞ այն յառաջելոցդ որ մինչև տուեալ՝ չիցէ
բարձեալ առ 'ի մէնջ։

Digitized by Google

Սակայն դժուարին է կորուսանել զորդի։ — Դժուարին է այո, բայց դառնագոյն յայժմ՝ կրել զոր կրեմքս արդ և հանդուրժել։ Կամիմ աստանօր յուշ քեզ առնել զայն որ ոչ սակաւ եղև ինձ 'ի մխիթարութիւն, թերևս և զքո խոկ զցաւոց մեղմել կարասցէ։

Ի դառնալ իմում յԱսիոյ՝ մինչ յԷգինայ նաւէի 'ի Մեգարա, զաչս շուրջ զվայրօքն արկեալ դիտէի. Էգինա կայր ինձ յետկուսէ, 'ի հանդիպոյ Մեգարա, յաջմէ Պիրէոն և 'ի ձախմէ Կորնթոս։ Համայն քաղաքք բարգաւաճեալք երբեմն, և զարդիս հարթյատակ անապատացեալք 'ի տեսիլ. և մտախոհ եղեալ յանձնիմ՝ ասեմ. Մեք՝ դուզնաքեայք ոմանք մարդիկ զչարիմք և վշտանամք եթէ մեռցի կամ սպանցի ոք 'ի մէնջ, և ահա քաղաքք և մեծամեծք անկեալ գնին դիականացեալք 'ի միում վայրի։ Եւ ընդէ՞ր ոչ քեզ, Սերուիէ, մտաւանել՝ զի մարդ մահկանացու ես ծնեալ։ Զայսոսիկ ածեալ զմտաւ, հաւաստի ինձ, զի քաջալերեալ զօրացայ ոչ սակաւ։ Նոյնպէս և դու, եթէ հաճոյ քեզ իցէ, ած կացո զառաջեաւ զայնչափ բազմութիւն մեծապայծառ արանց արդ իսկ եղելոց 'ի կորուստ, զաշխարհիս նուազել, և զաստանել զաւառաց. և միթէ ցաւեսցե՞ս քեզ այդչափ ընդ դուզնաքեայ կորուստ կենաց կնոջ միոյ, որում թէ ոչ այժմ, բայց յետ սակաւուց հարկ էր մեռանել՝ զի մահկանացու էր ծնեալ։ Եւ ապա 'ի տեսութեանց աստի ամփոփեալ զմիտս քո՝ զայն խորհեսջիր առաւել որ արժանի և վայելուչ քեզ իցէ. զի դուստրն քո եկեաց՝ որչափ անկ էր նմա կեալ. զի եկեաց ընդ ընկերհաշտութեան. զի զքեզ զհայր իւր ետես կուսակալ, բդեաշխ և հաւահմայ. զի ընդ մեծազգի երիտասարդաց ամուսնացաւ. զի համօրէն զրեթէ 'ի բարութիւնս և 'ի հաճոյս վայելեալ, և հուպ 'ի վախճան ընկերհաշտութեան զկեանս իւր վճարեաց։ Եւ զի՞նչ պատճառք իցեն քեզ և կամ դստերդ՝ բողոքելոյ զբաղդէն։ Հուսկ ապա՝ յուշ լիցի քեզ զի Կիկերոն ես, այն՝ որ զայլս խրատէիր յաճախ։ Մի՛ իբրև զյոռի բժիշկան ե-

Digitized by Google

զեցես՝ որք յախտակրութիւնս այլոց խոստանան ունել զգիտութիւն արուեստին, և զանձինս բժշկել ոչ գիտեն։ Այլ դու զոր այլոցն օրինադրես 'ի հաստատութենէ մը-տաց, նոցին և ինքնդ հպատակեսջիր՝ հաստատութեամբ մտաց յուշի կալեալ զխրատսդ։ Չիք ցաւ՝ որ երկարութեամբ ժամանակաց ոչ ցածուցեալ մեղմասցի. բայց քեզ ոչ արժան, ոչ 'ի դէպ՝ անսալ ժամանակի, այլ իմաստութեամբ քով կանխել ընդ առաջ։ Եւ թէ զուցեն խմացք 'ի դժոխս, նա՝ որ սիրեացն զքեզ այնչափ և որ զութ մեծ առ իւրսն բերէր, դժկամակեացի անշուշտ ընդ ցաւոցդ անչափութիւն. լո՛ւր արա դստեր քո, լուր բարեկամացդ և ընտանեաց, որոց ցաւ մեծ է ընդ տրտմութիւն քո. լուր և աշխարհին քում, որում թէ պէտք ինչ լինիցին, գիտասցէ վարել խորհրդով քով և օգնականութեամբ։ Հուսկ արա, քանզի յայն հասեալ կամք 'ի պայման՝ զի և զզուշութեանս այսմիկ մեզ պէտք են, տե՛ս չտալ ումեք կարծիս՝ որպէս թէ ոչ զդուստր քո, այլ զժամանակս ընկերհաշտութեանն և զյաղթութիւնս այլոց աշխարհացս։

Աղաչեմ այլ ևս յերկարել առ քեզ զբանս իմ, զուցէ անվտանգ 'ի խոհականութիւն քո երևեցայց։ Վասն որոյ և մինչև ես այսուիկ վախճան տարից գրութեանս։ Տեսաք զքեզ 'ի նուագս նուագս գեղեցկապէս վարեալ 'ի յաջողութիւնս բախտին, և մեծամեծ գովութեանց եղեալ արժանի. ցո՛յց մեզ արդ, զի և 'ի ձախողակս բախտին գիտիցես վարել նովին չափաւորութեամբ. և մի առաւել քան զարժանն ծանրացցին քեզ ցաւքդ, զի մի յամենայն առաքինութեանց՝ յայսմ միայնում թերացեալ երևեսցիս։

Իսկ ես յինէն կողմանէ՝ յարժամ գիտացից զի հանդարտեալ իցես և անդորրացեալ հոգւով, ոչ վերջացայց 'ի գրելոյ քեզ զգործեցեալսն աստ, և թէ զի՛արդ կայցէ գաւառս. Ողջ լեր։

## ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՍԵՐՈՒԻՈՍ ՍՈՒԼՊԻԿԻՈՍ

Ես իսկ արդարեւ ցանկայի, Սերուիէ, զի որպէս ասես՝ մերձ առ իս կայիր առ 'ի ծանր եւ 'ի դառնակսկիծ աղէտս իմ։ Եւ թէ քանի՜ օգտամատոյց ինձ լինէիր մերձաւորութեամբդ՝ մխիթարելով զիս, եւ որպէս հաւասարորդ ցաւոցս լինելով, ոչ ինչ դժուարին է ինձ 'ի միտ առնուլ այնու՝ զի ընթեռնուլն իմ զթուղթդ, մխիթարեցայ ոչ սակաւ։ Քանզի եւ զայնպիսիս գրէիր առ իս, որք բաւականք եղեն մեղմել զսուգ իմ, եւ զքո իսկ ցաւցանել զկիրս ցաւոց 'ի մխիթարելդ զիս։ Սակայն որդի քո Սերուիոս՝ ամենայն կարեւոր սպասահարկութեամբք, որոց յայնպիսումն պահու ինձ պէտք էին, եցոյց զիւր առ իս մեծարանսն, եւ զայն իսկ՝ եթէ որչափ հաճոյական ինչ քեզ առնել համարէր՝ այնու հոգւով մարդասիրութեան բերեալ առ իս։ Էր նորա արդարեւ ուրեք ուրեք սպասս հաճոյականս հարեալ առ իս, այլ ոչ ուրեք հաճոյագոյն քան զայս։

Բայց ես ոչ բանիւք քովք միայն եւ համակարիք ընդ իս ցաւակցութեամբդ մխիթարիմ, այլ եւ քոյով մեծազօր արժանեօքդ. քանզի ամօթ ինձ համարիմ՝ ոչ այնու հոգւով տանել ցաւոցս, որով դու՝ ճոխացեալդ այդքանեաւ իմաստութեամբ՝ արժան համարիս ինձ տանել։ Սակայն ընկճեալ ուրեք 'ի ցաւոցս, հանդուրժել ոչ կարեմ. զի զուրկ եմ 'ի մխիթարութեանց անտի՝ որք 'ի նմանօրինակ աղէտս մերձ կային այնոցիկ, զորս օրինակ ինձ կալեալ եմ զառաջեաւ։ Քանզի Կ. Մաքսիմոս, որ զորդին իւր կորոյս զայր հիւպատոսական՝ զպայծառացեալն մեծագործ արութեամբք, եւ Լ. Պաւղոս՝ որ զերկուս՝ յաւուրս եօթն կորոյս, եւ ձերդ Գալլոս եւ Մ. Կատոն՝ որ զպերճացեալն հանճարով եւ արութեամբ կորոյս զորդին, յայնպիսում կացին ժամանակի՝ յորում

պատուեալք և մեծարեալք աւագութեամբք 'ի հասարակաց Պետութենէ, մեղմէին ցաւք նոցա. իսկ ես արդ զուրկ և անմասն յամենայն վայելչութեանց անտի զորս գտեր յիշատակես, և որք բազում քրտանց և վաստակոց ինձ եղեն, մի միայն մխիթարութիւն որ կայրն՝ զայն եւս կորուսի։ Անդ յայնժամ չէր ինձ ոչ 'ի նպաստ բարեկամաց և ոչ 'ի հոգս տեսչութեան հասարակաց պետութեան զբաղնուլ և սփոփիլ մտօք. ոչ դատաստանաց 'ի հրապարակ ելանել յօժարէի, և ոչ յատեան խորհրդոյ երևել. Թուէր ինձ, որպէս և էրն իսկ, եթէ ամենայն արգասիք վաստակոցն իմոց և բախտին կորուսեալ իցեն 'ի սպառ։ Սակայն ածեալ զմտաւ թէ այդպիսիկ ամենայն՝ և քեզ և այլոց ոմանց հասարակաց են աղէտք, մինչ բուռն առնէի անձին հանդուրժել, էր որ իմ զօրավիգն և ապաւէն, որոյ քաղցրախօս բանիւք փարատէին յինէն ամենայն ցաւք և հոգք։ Այլ արդ կարեվէր հարուածովս այսուիկ՝ և առաջինքն այն վէրք, որք ողջանալն թուէին, զայրանան և եւս։ Զի ոչ եթէ, որպէս երբեմն, մինչ 'ի հոգոց Պետութեան դառնայի թախծագին՝ ընդունէր զիս տունն և սփոփէր, նոյնպէս արդ՝ թախծեալս 'ի տան՝ կարիցեմ 'ի գործս Պետութեան ապաստանս անձին գտանել և 'ի բարութիւնս նորա վայելել։ Վասն որոյ և 'ի տանէ և 'ի պետութենէ զուրկ և ամայի լքեալ կամ։ Ոչ տունն զատ 'ի պետութենէ ընկալեալ զցաւս իմ գիտէ փարատել, և ոչ պետութիւնն զընկալեալսն առտնին։ Նմին իրի քեզ մեծամ անձկանօք և վաղագոյն որչափ մարթ է՝ ցանկամ տեսանել զքեզ։ Զիք ինչ այլ որ այնպէս սփոփել զիս կարասցէ՝ որպէս կենակից քեզ լինել և խօսակից ընդ միմեանս, որում և վաղ իսկ, որպէս լու լինէր, հանդիպել ակն ունէի։ Քանզի 'ի բազում գլխոց ցանկամ տեսանել զքեզ փութապէս. և առաւել ևս զի կանխեալ խօսեցաք ընդ միմեանս թէ որպէս արժան իցէ վարել 'ի ժամանակի աստ՝ յորում հարկ է մեզ յարմարել զանձինս կամաց միում, որ խոհականն է և բարե-

բարոյ, և որչափ գիտեմս՝ ընդ իս հակառակութիւն ինչ ոչ ունի, և ընդ քեզ բարեկամութիւն մեծ։ Նմին իրի բաղում խոհականութեան գործ է՝ ընտրել թէ զո՛ր զընացս պարտ իցէ մեզ ունել ընդ նմա. ոչ 'ի գործել ինչ, այլ 'ի բարեկամութիւն նորա և 'ի մարդասիրութիւն անգորր գտանել. Ողջ լեր։

---

## ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ԲԵԲԻՈՍ

Տրանկուիլլոս բնակիցն իմ ցանկայ ստանալ զագարակն փոքրիկ, զոր բարեկամն քո լսեմ թէ վաճառէ։ Փոյթ կալջիր աղաչեմ, զի ստասցի նա զայն ըստ արդար գնոց. զի այնպէս ցանկայ ստանալ։ Քանզի ստացեալն չարաչար՝ դժպհի է միշտ, վասն այն մանաւանդ զի յանդիմանէ իմն հանապազ զանմտութիւն տեառնն։ Յայնմ փոքրիկ ագարակի, թէ ըստ արժանւոյն միայն գնեսցի, բազում ինչ իրք են ցանկալիք իմուոյս Տրանկուիլլեայ. մերձաւորութիւն 'ի քաղաքն, դիւրութիւն ճանապարհաց, վայրացն չափաւորութիւն և հանգամանք անդաստանին, որ զբօսեցուցիչք են առաւել քան եթէ աշխատեցուցիչք։ Արդարև պարապելոց յուսումն, զորպիսւոյ ումեքէ է բանս, շատ իսկ է այնչափ ինչ տեղի՝ ուր մարթ իցէ նոցա կազդուրել զմիտս, սփոփել զաչս, շուրջ զվայրօքն գալ, հորգել ուղի մի առ 'ի ճեմ, այց առնել որթատնկացն և թուել զնորատունկս իւր։ Զայսոսիկ բացայայտեցի քեզ, զի գիտասցես քաջ որչափ նա ինձ և որչափ ես քեզ եղէց շնորհապարտ, եթէ զագարակիկն զայն՝ զդիւրատեալն այդպիսեօք առաւելութեամբք, լիցի նմա ստանալ այնու յաջողութեամբ՝ զի մի՛ ապա տրտնջանաց լիցի պատճառ։

## ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ՄԱՐԿԵԼԼԻՆՈՍ

Տրտմութեամբ գրեմ քեզ զթուղթս. Փոնդանի մերոյ դուստր կրտսեր վախճանեցաւ։ Ոչ տեսի երբեք օրիորդ զուարթագէմ իբրև զնա, սիրելի իբրև զնա և իբրև զնա արժանաւոր ոչ երկայնակեաց միայն լինելոյ, այլ գոգցես և անմահութեան։ Չև ևս չորեքտասանամեայ՝ և ծերունւոյ խոհականութիւն և զտիկնոջ զգօնութիւն բերէր յինքեան՝ մանկականաւ հանդերձ քաղցրութեամբ և կուսական պարկեշտութեամբ։ Զիա՛րդ զպարանոցաւ հօրն փարէր. որո՛վ համեստութեամբ և սիրով ընդ մեզ՝ ընդ հայրենի բարեկամս դրկախառնէր. ո՛րպէս զսնուցիչս իւր, զդաստիարակս և զվարժապետս ըստ իւրաքանչիւր պաշտամանցն անկի պատուասիրէր. որո՛վ փութով և մտադիւրութեամբ ուսանէր. ո՛րչափ ճշդելով և զգուշութեամբ զբօսնոյր. զիա՛րդ համբերատար ժուժկալութեամբ և որո՛վ պնդութեամբ հոգւոյ յետնումն ևս տակաց ախտակրութեան։ Հլու էր բժշկաց, քաջալերէր ըղքոյրն, քաջալերէր և զհայր իւր և զանձն իսկ, զթողացեալն յամենայն զօրութենէ մարմնոյ՝ սրտապնդէր հոգւոյն զօրութեամբ, որ ոչ եթող զնա մինչև 'ի սպառ, ոչ երկարատև հիւանդութեամբն և ոչ երկիւղիւ մահուն նուաղեալ. որով բազմադէմ, ծանր և անձկայրեաց ցաւոց եթող մեզ պատճառս։ Ո՛վ մահ, արդարև դառն և եղերական. ո՛վ, և քան զմահն իսկ՝ մահուն տարադէպ օրհաս։ Այն ինչ պատրաստեալ էր 'ի հարսնութիւն ազնիւ պատանւոյ, այն ինչ հարսանեացն օր սահմանեալ, այն ինչ և մեք կոչեցեալք 'ի նոյն, և ահա զուրախութիւն այնպիսի՝ որպիսի՛ սուգ փոխանակեաց։ Չկարեմ բացայայտել բանիւ զոր ազդոյ վէրս ընկալայ 'ի հոգի 'ի լսել իմում թէ Փոնդանոս ինքնին (քանզի բազմահնար են ցաւք 'ի ցոյցս աղխտից) հրաման տայր՝ զի որ ինչ 'ի հան-

դերձանս զգեստուց, ականց և մարգարտաց սահմանեալ էին ծախք, 'ի խունկս, յօծանելիս և 'ի բուրմունս անուշից ծախեցին բովանդակ: Է նա արդարև հանճարեղ, և 'ի սկզբնարոյս հասակէ հետամուտ բարձրագոյն գիտութեանց և արուեստից. այլ զոր ինչ լուաւն և զոր ինքն իսկ ասաց յաճախ՝ մերժէ սրդ համայն. և յայլոց ամենայն առաքինութեանց 'ի բաց կացեալ՝ 'ի գութ և 'ի գորով համակի: Ներեսցես նմա զայն, նա և գովեսցես իսկ զնա՝ եթէ զոր կորոյսն ածցես զմտաւ: Զի կորոյս ընդ-դուստր՝ որ ոչ զբարսն միայն, այլ և զդէմս, զկերպարանս նորա բերէր, այնչափ ճշգրտատիպ զհօրն պատկեր կենդանագրելով յինքեան: Վասն որոյ 'ի գրելդ առ նա վասն այնքանոյ արդար ցաւոցն, յուշ լիցի քեզ մի խրատականաւ իմն ուժգնութեամբ զնա մխիթարել, այլ կարեկցաբար և ամոք բանիւք: Ժամանակ 'ի վերայ անցեալ՝ զօրեսցէ ոչ սակաւ հեշտընկալ առնել նմա զայն: Նորախոց վէրք 'ի դարմանող ձեռաց զարհուրեալ նախ՝ և ապա ժուժկալեն, և տակաւ 'ի խնդիր իսկ լինին այնմ: Նոյնպէս և նորահաս ցաւք հոգւոյ՝ զառաջինն անընդունակք մխիթարութեան՝ մերժեն զայն. այլ սակաւիկ մի յետոյ կարեկցաբար մատուցելոցն՝ լսել ախորժեն. Ողջ լեր:

---

## Ց. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻՐՈՆ

Որպէս յառաջագոյն գրեցի քեզ յԱլիզիոյ՝ զոր մի յամեցաք անդ. զի Կուինտիոս չև էր հասեալ առ մեզ: Անտի նախ քան զլուսանալ առաւօտուն չուեալ՝ յառաջ քան զվեցերորդ օր Նոյեմբերի գրեցաք քեզ զայս թուղթ: Դու եթէ սիրես զմեզ զամենեսին՝ մանաւանդ զիս ընդ-վարժապետ քո, կազդուրեաց և զօրացիր: Ի բազմահոգ վարանս՝ քեզ նախ սպասեալ Յեամ արդարև, ապա Մարիոնի քոյովդ Թղթով: Անձկամք ամենեքեան, մանա-

ւանեղ ես, տեսանել զքեզ վաղաքայն, այլ քաջառողջ, ո՛վ իմս Տիրոն. վասն որոյ մի՛ կարի շտապեսցես. քանզի իսկ տեսից զքեզ զօր ամենայն, եթէ առողջանասցիս։ Մարթ է ինձ կալ զուրկ 'ի քոյոց սպասաւորութեանց. ցանկամ առողջութեանդ նախ վասն քո, և ապա վասն իմ, ո՛վ իմս Տիրոն. Ողջ լեր։

---

## Ց. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ Մ. ՄԱՐԻՈՍ

Ի քսաներորդի չորրորդի ամսոյս եկի 'ի Կումա ընդ քոյումդ՝ մանաւանդ թէ ընդ մերումս Լիբոնի. ընդ հուպ խորհիմ երթալ 'ի Պոմպէա. այլ կանխեցից գրել առ քեզ։

Ապաքէն միշտ իսկ ցանկալի է ինձ լինել ընդ քեզ, այլ առաւել ևս յորժամ աստ կայցեմք. և ահա հուպ ընդ հուպ լիցուք 'ի միասին. վասն որոյ եթէ իցէ քո դաշն ինչ ընդ ռանաւութեան՝ յայլ օր թողցես զայն։ Խնամ կալջիր առողջութեան անձինդ, և մնա ինձ յետ երկուց կամ երից աւուրց. Ողջ լեր։

---

## Ց. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻԼԻՈՍ

Ընդէ՞ր իցէ ինձ յանձն առնել քեզ զնա ինքն՝ զոր և դու ինքնին սիրես։ Այլ զի գիտասցես թէ ոչ միայն սիրեմ ես զնա, այլ և խանդաղատիմ զնովաւ, վասն այնորիկ գրեմ զայս։ Քան զամենայն շնորհս քո, որք բազումք են և մեծամեծք, հաճոյական ինձ իցէ՝ եթէ խնամեսցես զԼիգնատիոս այնպէս, զի ծանիցէ թէ ես զինքն և դու զիս սիրիցես։ Զայս ես խնդրելով խնդրեմ առ 'ի քէն։

Անցին գնացին մերքն համայն. մխիթարեսցուք աղաս և մեք հաստատակաց բանիւն թէ՝ Զ՞ինչ այլ, երբ լաւագոյնն այս է: Բայց զայցանէ բերան 'ի բերան: Արա զաւզոր առնեսդ. սիրեա զիս և զիտասջիր զի և ես սիրեմ զքեզ. Ողջ լեր:

## Ը. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ԳԼԱՆԿԻՈՍ

Ընկալայ զհամառօտագիծդ՝ յորմէ չեղէ գիտակ որում ցանկայի, և գիտացի զայն ինչ՝ որ քաջածանօթն էր ինձ: Քանզի որով արիութեամբ արտի հաստատակաց աղխտիցն տոկայցես՝ ծանեայ ոչ. իսկ թէ որչափ սիրեցես զիս՝ քաջ իսկ գիտէի: Բայց թէ և զմիւսն զայն գիտէի, ըստ այնմ զթուղթն իմ յերիւրեալ յարմարէի: Եւ թէպէտ գրեալ էր իմ յառաջագոյն զոր ինչ պարտ վարկայ գրել, սակայն յայսպիսում ժամանակի հարկ համարիմ ազդ առնել քեզ համառօտիւ՝ զի մի՛ զքեզ միայն համարեսցիս լինել 'ի վտանգի. մեք ամենեքեան 'ի մեծի կամք և 'ի հաստատակաց վտանգի: Նմին իրի՝ չէ քեզ արժան զանձինն ևեթ խնդրել և ընդ քոյդ միայն հոգալ ընդ բախտ՝ խոյս տալով 'ի հաստատակաց աղետից: Վասն որոյ նովին հոգւով որով միշտն՝ ամրապինդ կացցուք ընդ միմեանս: Զայս ես կարեմ յուսալ առ 'ի քէն, և յինէն կողմանէ խոստանալ. Ողջ լեր:

## Թ. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻՐՈՆ

Անգրիկոս աւուրբ միով քան զոր մնայի՝ անազանեաց հասանել, վասն որոյ զգիշերն 'ի գլուխ հանի յերկիւղի և 'ի վարանս: Ի գրելոցդ չեղև ինձ յայտ եթէ զիարդ

կացցես, բայց գիտեր եղև որոր իմոյ։ Եւ արդ հեռի յամենայն զուարճութենէ և 'ի բնաւից զգայութեանց՝ մինչչև զքեզ տեսեալ՝ չկարեմ դառնալ 'ի Նաւին։ Զվարձս բժշկին որչափ ինչ և խնդրեսցէ՝ հրաման տուր խոստանալ. զայս և առ Սուլմիոս գրեցի։ Լսեմ զի անձկակաբոտ նեղիցիս, և բժշկին զայդ տուեալ պատճառս վտանգելոյ առողջութեանդ։ Վասն այսորիկ եթէ սիրես զիս, զարթո 'ի թմրութենէ զդիւրութիւնս քո և զվարժս զիտութեանց, որոց վասն սիրելի ես ինձ յոյժ։ Պարտ է քեզ զօրանալ նախ հոգւով, զի և մարմնով զօրասցիս։ Զայս խնդրեմ ես 'ի քէն վասն քո և վասն իմ։ ԶԱկաստոս առ քեզ կալջիր, զի լաւագոյն սպաս հարցէ քեզ։ Պահեսջիր ինձ զանձն քո. օրն խոստացեալ մերձ հասեալ կայ. կանխեսցիս իսկ քան զայն՝ եթէ եկեսցես. Ողջ լեր և դարձեալ ողջ լեր։

---

### Ց. ԿԻԿԵՐՈՆ ԱՌ ՏԻՐՈՆ

Եգիպտա եկն եհաս առ իս յերկոտասան Ապրիլի. և թէպէտ ծանոյց ինձ զի զերծ 'ի սպառ 'ի ջերմանէ և բարւոք կայցես, սակայն զի ասաց թէ ոչ կարացեր գրել առ իս՝ անկայ 'ի հոգս. և վասն այն մանաւանդ՝ զի Հերմիա, որ գալոցն էր յայնմ աւուր, ոչ եհաս։ Ցանհնարին վարանս կամ վասն խօթութեանդ քո, յորմէ թէ զերծուսցես զիս, զերծուցից և ես զքեզ յամենայն հոգոցդ քոց։ Եթէ գիտէի թէ համարձակ կարես ընթեռնուլ՝ բազում ինչ գրէի արդեօք։ Ցոյց ինձ զհանճար քո, զոր մեծարեմս յոյժ, 'ի պահել զքեզ ինձ և քեզ. խնամելով խնամեսջիր զանձն քո ամենայն զգուշութեամբ և ողջ լեր։

Այն ինչ առաքեալ զթուղթս՝ եհաս Հերմիա. ընկալայ 'ի նմանէ զդողդողջուն դրութիւնդ. չեն ինչ զարմանք՝ յետ այնքանեաց ծանր ախտակրութեանդ։ Զնդիրտաս առ. քեզ դարձուցի. զի չէ անհամբոյր բարուք, և որպէս ինձ թուեցաւ՝ սիրէ զքեզ. ընդ նմա և զխոհականերն՝ զի սպաս հարցէ քեզ. Ողջ լեր։

---

## Կ. ՊԼԻՆԻՈՍ ԱՌ ՓԱԲԻՈՍ ՅՈՒՍՏՈՍ

Բազում ժամանակք են զի ոչ գրես թուղթ առ իս. ասես չունել ինչ 'ի գրել։ Գրեա՛ լիր գէթ զայդ զի գրելոյ ինչ ոչ ունիս. և կամ զայն՝ որով սկիզբն առնէին ծերունիք մեր, եթէ «Խնդամ ընդ քաջողջութիւնդ, և ես ինքնին ողջ եմ»։ Շատ է ինձ այս, զի և չիք ինչ կարևոր իբրև զդա։ Կարծիցես թէ առ ծա՞ղր ինչ ասիցեմ զայս. ոչ այդպէս, այլ հաւաստի ստուգապէս։ Ծանո ինձ զի՛ գործես, զի վիշտ մեծ է ինձ չգիտել զայդ. Ողջ լեր։

---

Digitized by Google

# ՅԱՌԱՋԱԲԱՆՔ

---

## ՊԱՅՄԱՆՔ ՅԱՂԱԳՍ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ

*Հանճարաբանութիւն՝ ախորժելի է 'ի վերտառութեան և 'ի տաղի. այլ 'ի բեմ վարդապետութեան, յատենի կամ 'ի կայանի փաստաբանից, է մանրանկար ինն 'ի բարձու յայժ զետեղեալ առ 'ի տեսիլ. և ոչ յառաջ բերէ արգասիս մեծամեծս 'ի բազմահոյլ հրապարակի: Իսկապէսն ճարտասանութիւն տարագրէ զամենայն նուրբ և հետազօտեալ իմաստս, դժուարիմացս ժողովրդեան: Ո՜ն անդր, և զի՞նչ իսկ օգնէ իմաստ ինն փայլուն 'ի շարժել կամ 'ի վառել զոգի մարդակոյտ բազմութեան՝ որ 'ի սկզբան անգ յանդիման լինի ճարտարախօսին որպէս թումբ անշարժ, քաջ 'ի բաց 'ի զգացմանց նորին և զուրկ 'ի պատրաստ յօժարութենէ, և որ հազիւ ընծայէ նմա ցուրտ ինն և տարտամ ունկնդրութիւն:*

*Սկսուածոյ ճառին պարտ է գոլ պարզ և համեստ առ 'ի ձգել յինքն զսիրտ ունկնդրաց. այլ արժան է բազում խնամով յօրինել զայն: Վարդապետութիւն և օրինակ վարժապետաց արուեստին՝ խրատեն ամփոփել զայն 'ի բացատրութեան միոյ ևեթ գլխաւոր մտածութեան, նովին յայտ առնելով և որոշելով զամենայն ընդարձակութիւն առաջարկութեան ճառին, կամ իրաց զորմէ կամք իցեն ճառել: Անդէն 'ի յայտ առնել զայն ճարտա-*



Digitized by Google

տանին՝ նովին իսկ ցուցցէ տեանց բազմապատկելոյ զուղ նպատակին, և տարերք ծրագրին անդէն 'ի յայտ գայցեն՝ որպէս բնական և կարևոր բացատրութիւն առաջարկութեանն, և ողջմտութիւն իմն հանճարոյ քան մտախորհութիւն. տնօրինեաց զընտրութիւն յարակից իրաց՝ յորս պարտ իցէ ամփոփել, 'ի բաց եղեալ որ ինչ հեռաւորն է և օտարոտի, մթին և ամուլ, և պարագրեալ զճառն ընտրողութեամբ ճշդելով բացայայտութեամբ և ճշգրտիւ. և համայն առացեալ՝ տարերք պայծառք կարևոր արգասեօքն ցուցցեն զիմաստս խորինս ճարտարախօսին խելամտութեան, որ յաւելցէ զազդեցութիւն հանճարոյ 'ի զօրութիւն պաշտաման իւրոյ, առ 'ի գերել զմտադրութիւն ակմբահոյլ ժողովոյ, յանկուցանելով զնա յամենայն խորհուրդս իւր, կարևորս զայնոսիկ ընծայելով և ցանկալիս.

Այսպիսի է Բոսիւէի ճարտարութիւն, ուր առ 'ի զարթուցանել ազդողաբար զոգիս՝ ասէ 'ի յառաջաբանի դամբանականին 'ի Հենրիկէ Անգլիոյ, կամել 'ի մի աղէտս ողբալ զամենայն վիշտս մարդկան ազգի, և 'ի միում մահու ցուցանել զմահ և զոչնչութիւն զամենայն մարդկային մեծութեանց։ Որ ինչ ոչն պատրաստէ առ գլխաւոր դիտաւորութիւնս ճառին, ունայն է 'ի յառաջաբանութեան. ապա 'ի բաց կացցեն 'ի մասնէ աստի ճարտասանութեան ամենայն նուրբ խելամտութիւնք, ճոխաբանութիւնք, հասարակ տեղիք, և նկարագրութիւնք իսկ և փոխաբերութիւնք սեթևեթեալք. զի Ոչ է պարտ, ասէ ճարտարախօսն հռովմայեցի, և ոչ 'ի կիր առնուլ անդ զբառս արտաքոյ սովորական իւրեանցն իմացուածոյ, զի մի՛ թուեսցի ճառն բազում հանդերձանօք յօրինեալ։ Ընդ կարճագոյն ճանապարհ 'ի նպատակ անդր դիմեսցուք. ամենայնի պարտ է գոլ առաջարկութեան սեփական. զի ըստ բացատրութեանն Կիկերոնի, յառաջաբանութիւն ոչ այլ ինչ է, բայց դուռն ճառին։ Մի՛ նմանեսցուք ճարտասանացն նախաբանից, որք փոխա-

նակ մտանելոյ. խոկումն յառաջարկութիւն անդր՝ յոյժ և յանհնարին զարմանազարդ ասանեն՝ որպէս ուղևոր անգէտ տեղւոյն, և թողուն զանկնդիրն տարտամ զիրաց՝ զորոց հանդերձեալ են ճառել: Յառաջաբանին ակիզբն խոկա-ցէս անդր է, որ 'ի յայս գան պատճառք և դիտաւո-րութիւն ճառին:

Ընդ ածել 'ի յայս առաջարկութեանն՝ պարտ է փու-թալ քաջ սահմանել զայն: Կարևոր է զգուշութիւնս այս մանաւանդ 'ի դժուարիմաց խնդիրս, զի անմրէպ զհետ զայս թափանել 'ի տարտամ տեսութիւնս, եթէ ոչ կանխեսցէ զգուշութիւնս այս սահմանելոյ զայն 'ի սկըզ-բան ճշգրիտ յայտարարութեամբ: Ազգաքէն վտանգաւոր է բարձրաբանել 'ի յառաջաբանի. և 'ի հանապազորդ փորձոյ խրատիմք չվստահել յիղձս պերճ նախերգանաց. սակայն և կարևոր է, որպէս յառաջ ասացաք, ցանկալի առնել զճառն մտադրութեան զբաղելոց ունկնդրաց. և չհամարիմ հակառակ կանոնաց արուեստին՝ ընդոստու-ցանել անակնկալ իմաստիւք զմիտս նոցա յիւրեանցն խորհրդոց, և ձգել զհետ կամաց ճարտասանին՝ որ զի-տիցէ գերել զնոսա և տիրել նոցա. բայց միայն զի ուժ-գինն այն շարժումն մի պատրեսցէ զակնկալութիւն նո-ցա, և զի յաղթանակ ճարտարախօսին տակաւ յառաջ խաղասցէ:

Կամիմ, ասէ Մոնթայն, ճառս՝ որ զնախկին յարձա-կումն 'ի հզօրագոյն մասն խնդրոյն տայցեն. խնդրեմ փաստս հզօրս և հաստատունս անդէն 'ի սկզբան: Եւ յիրաւի. զի չիք ինչ կարևորագոյն և դժուարագոյն քան տիրել ունկնդրաց, յանկուցանել զնոսա յինքն իսկոյն, և 'ի մուտս անդ առաջարկութեանն շարժել զնոսա, քան թողուլ յերերի զխնդրելին նոցա, և տարտամ զե-րեւակայութիւն: Սենեկայի Տրովադայն իւր ողբերգու-թիւն բանայ զնախկինն տեսարան վսեմական իմն մեծա-խօսութեամբ, երբեակ եւթ տողիւք շարժելով զսիրտս ամենեցուն. երեւի 'ի բացեայն քաղաքն Տրովադայ հըր-

Digitized by Google

դնենալ. Եկայք շղթայակապ մենաւոր 'ի թատեր, 'ի նստանել անդ զտեսիլն զայն՝ ոչ ինչ ընդհատ յաղխագործ բախտէն իւրմէ՝ հառաչելով բացագանչէ զպերճախօս զայս բան. Ո՜վ բանք, որ 'ի զօրութիւն ձեր վստահէք, որ տիրէքդ բազմահոյլ արքունեաց, որ ածէք խորթայք 'ի յողդողդ նպաստից դիցն, որ քաղցր 'ի քուն զարտեւանունս փակէք 'ի յաղօղութեան, հայեցարուք յԵկարէ, տեսէք զՑրոմլադա: Ո՜վ որ 'ի լսել բանից ոչ յինքն մտանէ. ում կարէ խօսել յարհաւրաց այսպիսաց հակառակութեան, և ոչ ամբարձեալ զաչս 'ի յերկինս խորհի՝ եթէ ոչ յայլ ինչ՝ այլ յանհատատատութիւն և 'ի վտանգս իւրոյ բախտին: Այսպէս քաջի ճարտասանի պարտ է յօգուտ 'ի կիր արկանել զամենայն որ ինչ շուրջ զիւրև է, առ 'ի շարժել զսիրտս մարդկան և յինքն յանկուցանել: Գեղեցիկ է ըստ այսմ օրինակի յօրինել պերճ զսկիզբն ճառի. այլ չկարեմ ըստ բաւականին կրկնել, զի պարտ է հետեւորդացն արժանալուրս զոլ՝ 'ի վերամբառնալն միանգամ զունկնդիրս յայս բարձրութիւն:

ԾԻՐԱՆԱՒՈՐՆ ՄՏՐԻ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ՈՐ ԸՆԴԴԷՄ ԿՏԵՍԻՓՈՆԻ

Տեսանէք, ո՜վ արք աթենացիք, քանիօն պատրաստութիւնք և ճակատք յօրինեալ կայցեն, և պաղատանք ընդ հրապարակս 'ի գործ առեալք յոմանց՝ զի շափոյքն և օրինաւորք մի՛ յարդիւնս եկեսցեն 'ի քաղաքիս: Այլ ես՝ նախ 'ի դիւն, երկրորդ անգամ յօրէնսն և 'ի ձեզ մեծահաւատ հաւեալ կամ այսր, և ոչ մի ինչ կազմութիւն մեծագոյր քան զօրէնսն և զիրաւունս առ ձեզ համարեալ:

Յանկալի էր արդ, ո՜ արք աթենացիք, թէ համօրէն ժողովք խորհրդեան Հինգհարիւրոցն և ժողովք ժողովրդ-

Digitized by Google

զհետսն ուղիղ վարէին՝ 'ի վերակացուացն, և օրինադրեալ-քըն 'ի Սողոնէ 'ի հաստատել լինէին օրէնք 'ի բարեկարգութիւն ճարտարախօսաց։ Զի մարթիցի նախ երիցագունին 'ի քաղաքացիս ըստ օրինացն հրամանի ցածութեամբ մատուցել յատեան, առանց ամբոխի և խռովութեան, տալ խորհուրդ բարեաց քաղաքիս 'ի հմտութենէ իւրեանց. և ապա՝ ում ումեք և յայլոց քաղաքացւոց կամ իցէ՝ կարգաւ ըստ հասակին մի ըստ միոջէ յայտնի առնել զամենայնէ զմիտս իւր։ Զի թուի ինձ, թէ այսու օրինակաւ քաղաքս բարւոք տնօրինեցի, և նուազ լինիցին փոփոխիք դատաստանաց։ Բայց քանզի որ ինչ գամ մի յառաջագոյն բարւաքն էին վկայեալ՝ եղծաւ բարձաւ այժմ ամենայն, և համարձակ գրեն ոմանք արտաքոյ օրինացն հրամանս, և զգիրսն զայն այլք ոմանք 'ի վճիռ հանեն, ոչ արդարապէս մինակեալք դաւհերիցութեան, այլ հայթայթանօք առեալք զաթոռն. և եթէ յայլոց խորհրդականաց ոք՝ իրաւամբք միաբանեալ 'ի դաւհերիցութիւն հասեալ գտանիցի, և զձեր ընտրութիւնսդ ուղղութեամբ հրատարակիցէ, որք զքաղաքավարութիւնն ոչ հաստատակաց ինչ՝ այլ սեփական իւրեանց ձեռականն փարկանին, սաստեն նմա՝ մի՛ իշխել պատմել։ Եւ զնամինն 'ի հարկի ծառայութեան կացուցեալ, և անձամբք անձանց առեալ իշխանութիւնս, և զօրինի դատաստանացն լրեալ, որ ինչ ըստ իւրեանց անձնակամակ հաճութեանն իցեն՝ զայնս ընտրեն խորհուրդ. լռեալ կայ զեղեցկագոյնն և իմաստնագոյն 'ի քարոզս քաղաքիս, թէ « Որոց ըստ յիսներամեակն եղեալ իցեն՝ ո՛ 'ի նոցանէն կամիցի հրապարակախօս լինել, և դարձեալ յայլոց աթենացւոց մի ըստ միոջէ »։ Եւ ճարտասանիցն սահմանակութեան ոչ զօրեն առնել զդէմ, ոչ օրէնք, ոչ նախապետք, ոչ տոհմն դահերէց, տասներորդ մասն քաղաքիս։

Եւ զի այս այսպէս, և ժամանակք քաղաքիս այսպիսի՝ որպիսի դուք իսկ տեսանէք, մի ևեթ մասն տեսչութեան կայ մնայ 'ի ձեռս, եթէ և ես նշմարեմ ինչ, զանիրաւաց

փութայիցէք ամբաստանութեան։ Իսկ եթէ և զայս քան-
տիցէք, կամ քակտելեացն տալիք թոյլ, ահա կանխաւ
ասեմ ձեզ՝ զի առ փոքր փոքր զվարչութիւնն բովանդակ
'ի ձեռս ոմանց լքանիցէք յանգէտս։ Քանզի քաջ գի-
տէք, որք աթենացիք, զի առ մարդիկ համօրէն՝ եր-
բեակ քաղաքավարութիւնք են. միապետութիւն, ա-
կաւապետութիւն և ընկերհաշտութիւն. միապետու-
թիւնք և սակաւապետութիւնք վարին ըստ կամս իշխե-
ցողացն, իսկ քաղաքք ընկերահաշտք՝ հաստատուն օրի-
նօք։ Մի ոք ապա 'ի ձէնջ անգիտասցի զայս, այլ հա-
ւաստի գիտասցէ ամենայն ոք, զի յորժամ եկեալ յա-
տեան մտանիցէ՝ դատել զամբաստանութիւն անիրա-
ւութեան, յաւուրն յայնմիկ առաջի կայ նմա զազատու-
թենէ իւրմէ հատանել վճիռ։ Վասն որոյ և օրէնսդիրն
զայս նախ կարգեաց յերդման անդ դատաւորացն. «Վը-
ճիռ ըստ օրինացն տաց». զի ճարտար գիտէր թէ յոր-
ժամ պահեսցին քաղաքին օրէնք, և ընկերհաշտութիւն
կացցէ յակատանի։

Զայս ընդ ուշի կալեալ ձեր՝ ատեալ պարտիք զորս
հակառակ ինչ օրինաց տայցեն հրաման, և մի ինչ յան-
իրաւութեանց անտի փոքր համարել, այլ մեծագոյն
զամենայն։ Եւ զայս իրաւունս ձեր՝ մի ումեք 'ի մարդկա-
նէ տալ թոյլ յափշտակել. ոչ զօրավարացն բարեխօսու-
թեանց, որ 'ի բազում ժամանակաց հետէ գործակից ո-
մանց եղեալ ճարտարախօսաց՝ ապականեն զքաղաքա-
վարութիւնն, և ոչ աղաչանացն հիւրոց, զորս 'ի մէջ ա-
ծեալ ոմանց՝ զերծանին 'ի ձեռաց ատենից անօրէն քա-
ղաքավարութեամբ իւրեանց։ Այլ զոր օրինակ ամենայն
ոք 'ի ձէնջ յամօթ մտանէր՝ դասալիք լինել յոր կարգե-
ցաւն 'ի մարտի, նոյնպէս և այժմ ամաչեսջիք թողուլ
զտեղին՝ յոր յօրինացն դասեցայք պահապանք ընկեր-
հաշտութեան յաւուր յայսմիկ։

Եւ զայն ևս պարտ է յուշ ածել, զի զարդիս քաղա-
քացիք ամենայն՝ որոց զքաղաքս ձե՛զ յանձն արարեալ

Digitized by Google

է, և զվարչութիւնն 'ի ձեզ հաւատացեալ, կէպք առաւ են և ունէին զննեն դատաստանին, և այլք հեռի՝ իւրաքան-չիւր 'ի գործ իւր. յորոց պատկառեալ, և նոյնմանցն զորս նորդաւայք յիշող եղեալ և օրինացն, եթէ յանդիմանեա-ցուք զկտակարիչսն՝ տրտապէց օրինացն գիր հանեալ. և տուաւս զրեալ և մխաաակարս քաղաքիս, լուծէք, արք ա-թենացիք, զանօրէն հրամանան, պինդ կալջիք քաղաքիս զընկերհաշտութիւն, զթշնամիս օրինացն և քաղաքիս պատասհամեալք, և որ հակառակ օգուտ ձերում գնա-ցեալքն իցեն: Եթէ սովին մասք ունէին մատուցիք առա-ջնկայ խօսիցս, քաջ գիտեմ զի արդար և ուղիղ ըստ երդ-մանց՝ և 'ի շահ օգտի ձերոյ և ամենայն քաղաքիս առ-նիցէք դատ:

ԵՍՔԻՆԷՍ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ՈՐ ՅԱՂԱԳՍ ՊՍԱԿԻՆ

Նախ քան զամենայն, ով արք աթենացիք, ուխտիւք խնդրեմ յաստուածոց և յաստուածուհեաց բոլորեցունց, զի զխնամսն զոր ընդ քաղաքիս և ընդ ձեզ ամենեսին ունիմ ես հանապազ, նոյն և 'ի ձէնջ առ իս դատանիցի 'ի հանդիսի աստ յայսմիկ. և ապա, որ վասն ձեր է մանա-ւանդ և 'ի ձեր բարեպաշտութիւն և 'ի փառս, զի տա-ցեն ձեզ դիք՝ մի խորհրդակից առնուլ զդատախազն, եթէ զինչ պարտ իցէ ձեզ լսել ինձ. զի անագորոյն իմն այդ լինիցի. այլ զօրէնսն և զերդումնդ, յորում առ այլովք ամենեքումբք իրաւամբք՝ գրեալ կայ և այս. Եր-կոցուն կողմանցն միապէս գնել ունկն. Որ այն ինքն է, ոչ միայն մի ինչ կանխել առնել դատապարտ. և զնոյն միաբանութիւն երկոցունցն շնորհել, այլ և որով կարգաւ և որով ոճով և կամիցի և ընտրիցէ իւրաքանչիւր ոք յա-տախօսացն, թողուլ տալ նոյին և վարել:

Արդ ես յոյժ նիրազ դատանիմ 'ի մարտի առա քան զԵւ-քլինէս, մանաւանդ երկուք այսոքիւք մեծամեծօք, ո՛վ արք աթենացիք: Մի՛ զի ոչ զնոցին իրաց գուպարիմք. քանզի ոչ նոյն է ինձ այժմ 'ի ձերմէ մտերմութենէդ վրիպել, և նմա չյաջողել 'ի դատախազութիւնն. այլ ինձ... բայց չկամիմ ասել ինչ դժպատեհ 'ի մուտս առա ճառիս. իսկ դա՝ վարկպարազի անխէթ յիմեքէ չարա-խօսէ զինէն: Եւ միւս ես, որ յամենայն մարդիկ 'ի բնէ հաստատեալ է, բամբասանաց և ամբաստանութեանց մտադիւր մատուցանել ունկն, իսկ ընդ անձնադովսն խածանել: Արդ՝ որ հեշտալին է յայտարիկ, այն դմա տը-ւեալ է. իսկ որ, որպէս բանից կարգ է ասել, զամենե-ւեան խեղդէ և մղձկէ, այն ինձ մնայ: Եւ եթէ սովին երկիւղած մտօք չարկից 'ի ճառ զառ 'ի յինէն գործե-ցեալսն, թուեցայց չունել ինչ 'ի հերքումն չարախօսու-թեանցն, և ոչ՝ որովք խնդրեմն պսակիլ՝ յայտ առնել: Իսկ եթէ 'ի գործս իմ և 'ի տնտեսութիւնս անցանիցեմ, բազում անգամ հարկ լիցի ինձ խօսել զանձնէ: Այսու-հետև գուն գործեցից կարի իմն չափով զայն առնել. իսկ զոր իրքն ինքնին ստիպեսցեն, այն մեղս 'ի նա յիրաւի երթեալ կրթեսցի՝ որ յարոյցն զայսպիսի պայքար:

Թուի ինձ, ո՛վ արք դատաւորք, թէ խոստովան լինի-ցիք դուք ամենեքեան, զի այս հասարակ ընդ իս և ընդ Կտեսիփոն է գուպարած, և ինձ ոչ նուազ ինչ փութոյ արժանի: Զի յամենայնէն անկանել դառն է և դժնդակ, մանաւանդ եթէ յառնէ թշնամւոյ հասանիցէ այդ 'ի վե-րայ, և ևս առաւել 'ի ձերմէ խնամոց և մարդասէր կա-մացն վրիպել, որչափ և մեծ իսկ է՝ այդմ լինել արժա-նի: Եւ քանզի այսպիսի ինչ է պատերազմս այս, աղա-չեմ և խնդրեմ յամենեցունց 'ի ձէնջ առ հասարակ՝ ունկն մատուցանել պատասխանատուութեանս իմում առ բողոքն՝ ըստ ամենայն իրաւանց, որպէս ինչ օրէնքն հրամայեն, զորս օրինադրողն 'ի սկզբանէ Սոլոն, իրա-ւախոհ առ ձեզ և ժողովրդախնամ, ոչ գրով եւեթ հաս-

Digitized by Google

ատատուն լինել պարտ համարեցաւ, այլ և ձեռով դատա-ւորացդ երդմամբ: Ոչ եթէ թերահաւատ ինչ 'ի ձէնջ լինելով, որպէս ինձ թուի, այլ տեսեալ՝ զի զբաղայն և զբազմբաւանս՝ որովք վասն յառաջնագոյն հաւելոյն զօ-րաւոր գտանի դատախազն, չիք գատափետելոյն 'ի բաց անցուցանել, եթէ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ 'ի դատա-ւորացդ՝ ոչ երկիւղածութեան առ դիւն պատկառ կա-ցեալ, երկրորդի ևս խօսողին իրաւանցն մեծարանս առ-նիցէ, և երկոցունցն հարթ և հաւասար յունկնդրու-թիւն մատուցեալ՝ այնպէս ամենայնի տեղեակ և խե-լամուտ լինիցի:

Արդ, քանզի որպէս թուի՝ զբովանդակ կենաց ան-ձինս առաջի կայ ինձ այսօր տալ համար և զհամաշխար-հի քաղաքավարութենէս, կամ է ինձ՝ որպէս 'ի սկզբ-բանն՝ միաանգամ պաղատել առ դիս. և աղաչեմ, ձեզ լու 'ի լու, նախ՝ զի զոր իմ առ քաղաքս և առ ձեզ ա-մենեցունս կայեալ է միշտ խնամս, նոյն և 'ի ձէնջ առ իս լինիցի 'ի մարտի աստ. և դարձեալ, զի որ օգուտ ինչ է 'ի հասարակաց ամենեցուն փառս և 'ի բարեպաշտօն իւ-րաքանչիւր, զնոյն ամենեցուն ձեզ շնորհեսցեն դիք խոր-հել և իմանալ զդատէս զայսմանէ.

ԴԻՄՈՍԹԵՆԷՍ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՄԻԼՈՆԻ ՃԱՌԻՆ

Վասն քաջի առնն մատուցեալ տալ պատասխանի, ո՛ ատենակալք, թէպէտ և խիթամ երկիւղ դժպատեհ, ոչ կարելով 'ի դատ Ա. Միլոնի բերել յանձին զարժանին զայն հոգի արիական նորայումն զուգահաւասար՝ որ ա-ռաւել քան ընդ անձինն, ընդ ընկերհաշտութեանն հո-գայ փրկութիւն, սակայն նորոյ հրապարակիս նորաձև

կերպարան ահարկու է աչաց, որք յար կայս և հայեցցին՝ զնախնիքն խնդրեն կարգ ատենական, և զհին ատեանց օրէնս դատաստանաց: Զի ոչ՝ որպէս միշտն՝ ակմբահոյլ ատեանց պարփակեալ է 'ի շրջակայից, և ոչ՝ որպէս ամօրն էր՝ ժողովուրդ խառնեալ զմեօք. և պահապանք՝ զորս տեսանէք առ ամենայն մեհենիւք՝ Թէպէտ և ընդդէմ բռնութեան կարգեալք, այլ ոչ ազդեն մեզ երախոյս: Զի Թէպէտ և ամենայն կարևոր և փրկաւէտ պահպանութեամբք իցեմք պատսպարեալք յատենի աստ և 'ի դատաստանի, սակայն չկարեմք կալ ամենևին աներկեան: Եւ կասկած ինչ Թէ էր ինձ, ատենակալք, զի ընդդէմ Միլոնի կարգեալք իցեն զգուշութիւնքդ, արդ իսկ արդեօք տեղի տայի. գիտելով չափ՝ զի 'ի խառն ակնքանեաց զինուց և բռնութեանց չիք տեղի ատենախօսի: Այլ խրախուսեալ արտասպնդէ զիս Դն. Պոմպէոսի՝ մեծիմաստ և արդարակորով ամեն խոհականութիւն, որ արդարութեան իբրուլ ոչ արժան համարի՝ զամբաստանեալն, զոր իբրև մեղապարտ արկ ընդ դատաստանաւ ատենակալաց, նետից զօրականին տալ նըշչաւակ. և ոչ իմաստութեան իբրուլ 'ի ձեռն զգրգռեցելոց խուժանին յանդգնութիւն՝ հասարակաց իշխանութեամբ պաշտպանել: Ապա ուրեմն այդ ամենայն համդերձանք զինուց և հարիւրապետաց և զօրականին՝ ոչ չարագուշակ ինչ 'ի վտանգ մեր, այլ մանաւանդ 'ի պատսպարանս մեզ պատրաստեալ իցեն և 'ի յորդոր՝ բերելոյ յանձին սիրտ ոչ միայն անվրդով, այլ և արիական. և ոչ միայն օժանդակեն ինձ 'ի պատասխանատուութիւն, այլ և խառտանան զլռութիւն: Իսկ այլն ամենայն ժողով բազմութեան քաղաքացեաց, զորս տեսանէք ակնկառոյցս առասի և որչափ ծայր ինչ ատենիս իցէ երևելի, և ակնկալու ելից դատիս այսորիկ, ամենեքեան 'ի մեր կոյս են, և չիք ոք 'ի նոցանէ, որ 'ի կալ իւր ջատագով ազդութեանց Միլոնի՝ չհամարիցի իւր զերկեանս զայս դատ, և վասն որդւոց իւրոց և ընչից և հայրենի աշխարհին:

Միայն թշնամի և վնասակար մեզ այնպիսիք են՝ զորս Գ. Նկարագրեաց մոլեգնութիւն յափշտակութեամբք, հեշտկիզու-թեամբք և ամենապատիր աղիտիւք հասարակաց պատու-հասեաց. որք և յերկեան համախմբութեան խորա-մանկ գրգռեցան կանխել քան զձեզ և տալ զաշմամբ զգաստացեալսն՝ զոր ձեզ պարտ է սահմանել։ Որոց աղա-ղակ եթէ երբեք լիցի լսելի, զայս ձեզ յուշ արասցէ, զնա նենգ ունել առ քաղաքացիս, որ վասն փրկութեան ձե-րոց անդադրեալ արհամարհեաց միշտ զայս ազգ մարդ-կան, և զմեծագոյն աղաղակ նոցա։

Համակս զօրացարուք, իբրու արարելք, 'ի բաց դիք զամե-նայն երկիւղ՝ եթէ իցէ 'ի ձեզ։ Եւ եթէ երբեք զլսես և և զքաջորեարն, եթէ երբեք զվստահաւորս 'ի քաղա-քացեաց իցէ ձեզ իշխանութիւն գտանելոյ, և բովանդակ տանել՝ եթէ ուրեք երբեք տուեալ իցեն դէպք արանց ընտ-րականաց 'ի մեհագունիցն դասէ՝ հաստատել արդեամբք և վճռով զփոյթ խնամոցն զոր 'ի դէմս իւրեանց և 'ի խօսս ցուցանեն յանձնս առաքինելոցն, այս է ահա ժամ և ժամանակ, յորում ամենայն իշխանութիւն տուեալ է ձեզ սահմանելոյ, եթէ պարտ իցէ նուիրելոցս 'ի վե-րոյ իշխանութեան ձերոյ՝ հեծել միշտ հկքարար, թէ նեղելոցս ընդերկար 'ի չարախօսական քաղաքացեաց՝ ձեռք և ձերով զօրութեամբ, ուխտապահութեամբ և ի-մաստութեամբ խունինչ յանդորր եղանել։ Քանզի զի՞նչ այլ դժոխըմբեր և տանել վշտալի և տագնապեցուցիչ, ատենակալք, քան զկիրս երկպառակչաց, որք մեծա-շուք վարձուց անկեալութեամբ տուեալ զանձինս մեր 'ի ապաս հասարակաց պետութեան, և յերկիւղէ խժդժա-կոյն պատուհասից չեմք ինչ դերծ։ Այսպէս գիտէի զի յայլ ամենայն մրրկայոյզ ժողովս՝ ամբոխք և մրրիկք նայթեալք էին 'ի գլուխ Միլոնի, զի պաշտպան և ջատա-գով եկաց միշտ լաւաց՝ ընդդէմ անօրինաց. այլ առա յայսմ ատենի և 'ի ժողովի՝ ուր արք մեծապայծառք յա-մենայն կարգաց բազմին դատաւորք, ոչ անկաւ բնաւ

Digitized by Google

'ի միտս իմ՝ թէ հակառակորդաց Միլոնի լիցի երբեք անձն առնել ոչ միայն չիջուցանելոյ 'ի ձեռն այդքանեաց ա֊ րանց զկեանս նորա, այլ և փառաց նորա ածել առան֊ րանձ ս։

Բայց 'ի սերկեանս պատասխանատուութեան վասն առաջիկայ եղեռանս, ով ատենակալք, ոչ առից խօսել զհազարապետութենէն Միլոնի և զգործեցելոցն 'ի նմա֊ նէ 'ի փրկութիւն հասարակաց պետութեան՝ մինչև ցա֊ ցեալ ձեզ ակն յայտնի զառ 'ի Կլաւդիոսէ պատրաս֊ տեալ դարանսն ընդդէմ նորա։ Եւ ոչ արկից ձեզ աղերս ներել մեզ զոճիրն 'ի շնորհս մեծապայծառ երախտեաց նորա առ հասարակապետութիւնն։ Եւ ոչ, եթէ Կլաւ֊ դեայ մահուամբ եղև ձեզ փրկութիւն, խնդրեցից՝ զի Միլոնի քաջութեանն գրեսջիք զայն, քան թէ բարեբախ֊ տութեան հռովմէական ժողովրդեան։ Ապա եթէ պայ֊ ծառագոյն քան զլոյս յայտնեսցին ձեզ ամենայն դաւա֊ ճանութիւնք նորա, աղաչել աղաչեմ և երդմնեցուցա֊ նեմ զձեզ, ով դատաւորք, զայս ևեթ շնորհել մեզ յայն֊ ժամ, զի 'ի կորուսանել մեր զամենայն՝ տացի մեզ գէթ ազատութիւն պաշտպանելոյ կենաց մերոց 'ի ժպրհու֊ թենէ և 'ի զինուց թշնամեաց։

ԿԻԿԵՐՈՆ

---

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ Ա. ԼԻԿԻՆԻՈՍԻ
ԱՐՔԻԱՅ ՔԵՐԹՈՂԻ

Եթէ գուցէ ինչ յիս հանճար, դատաւորք, որոյ իրա֊ զէտ եմ նուազութեանն, կամ թէ խօսից վարժութիւն՝ յորում ոչ ժխտեմ փոքր 'ի շատէ զիս պարապեալ, կամ թէ ինչ այսր իրի հմտութիւն՝ 'ի կրթութենէ ազնուա֊ կան արուեստից և 'ի հրահանգաց, յորոց վկայեմ զի ոչ երբեք սառուցեալ եմ 'ի կեանս իմ, զայնր զամենայնի

նորա Ա. Լ. Լիկինիոսս այս յիրաւի պահանջեսցէ յինէն զպ-
տուղ՝ գրեթէ սեփական իւր իրաւամբք։ Զի որչափ հե-
ռագոյնս զօրեն ակնարկել միտք իմ յետս անցեալ զաւան-
ցեալ ժամանակաց՝ և զմանկութեանս յուշ ածել խորին
յիշատակ, անդստին ՚ի վերուստ առեալ արկեալ ՚ի միտ՝
զսա տեսանեմ իշխան առաջնորդ ինձ կացեալ ՚ի սկսա-
նել և ՚ի զարգանալ ՚ի կիրթս ուսմանցս այսոցիկ։ Զի ե-
թէ ձայնս այս բարբառոյս, սորա խրախուսանօքն և օրի-
նաքն յարդարեալ, եղև երբեմն ոմանց ՚ի փրկութիւն,
ապա յորմէ զոյնս ընկալաք առ ՚ի զօրավիգն այլոց լի-
նելոյ և զայլս կեցուցանելոյ, սմին ինքեան ապաքէն, որ-
չափ ՚ի կարի մերում է, և օգնութիւն և փրկութիւն ար-
ժան է մատուցանել։ Եւ մի ոք ընդ այս բանս մեր զար-
մասցի թերևս, որպէս զի այլ իմն ՚ի սմա իցէ հանճարոյ
զօրութիւն քան զայս գիտութիւն և զհրահանգս խօսից,
և ոչ մեք յայս ևեթ ջանս համակ նուիրեցաք զանձինս։
Զի և ամենայն արուեստք առ մարդկութիւն պատկա-
նաւորք՝ ունին ինչ ընդ միմեանս աղերս, և իբրև ազգա-
կանութեամբ իմն ընդ իրեարս յեռեալ են։

Այլ զի մի՛ ումեք ՚ի ձէնջ զարմանս թուեսցի, յօրինա-
կան յայս խնդիր և ՚ի հրապարակաւ դատաստան, ուր
դատ վարի առ դատաւորի հռովմէական ժողովրդեան,
առ առն ընտրականի, և առաջի անաչառ քննողաց, ՚ի
ժողովի և ՚ի խռան այսքան մարդահոյլ բազմութեան,
այսպիսի արկանել ինձ ճառս, որ ոչ միայն ՚ի սովորու-
թենէ դատաստանաց, այլ և յատենական ոճոյ խօսից օ-
տար են, աղաչեմ զձեզ՝ շնորհել ինձ ՚ի դատի աստ զայս
ներումն վայելչական դատախնդրելոյս, և ձեզ՝ որպէս
ակն ունիմ՝ ոչինչ դժպհի. զի ՚ի ճառելս զգերապանծ
քերթողէս և զբանիբուն առնէս՝ ՚ի հրապարակի աստ ա-
րանց գիտնաւորաց, և առ բարեխրատութեանդ ձերում,
և ՚ի դատողութեան այսր դատաւորի, թողութիւն առ-
նիցէք ինձ խօսել փոքր մի համարձակագոյնս՝ և վասն
առն այսպիսւոյ, որոյ առ խաղաղական և ուսմնասէր կե-

նոցին՝ չիք երբեք 'ի դատ ինչ և 'ի վտանգ անկեալ, վա-
րել նոր իմն և անսովոր օրինակ բանից։ Զոր եթէ ան-
ցեալ շնորհեալ ինձ առ 'ի ձէնջ, արարից անշուշտ, զի ըզ-
Լիկինիոսս զայս՝ զմեր քաղաքացի՝ ոչ միայն չզատուցեք
արժանի վարկեալք 'ի համարոյ քաղաքացեաց, այլ մա-
նաւանդ ընդունելոյ, թէպէտ և չէր իսկ բնաւ։

ԿԻԿԵՐՈՆ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ԿԻԿԵՐՈՆԻ ՈՐ ՎԱՍՆ ԱՐՔԱՅԻՆ ԴԻՈՏԱՐՈՍ

Մինչ իսկ յամենայն ատեանս, կ. կեսար, 'ի սկըզ-
բան խօսիցս սովոր եմ խռովել առաւել, քան
զոր 'ի դէպ թուիցի վարժութեանս և հասակիս. այլ մա-
նաւանդ այնպէս ամբոխէ զիս բազում ինչ յայս դատ,
զի որչափ վստահութիւն իմ բերէ յիս փոյթ և ջան առ
'ի պաշտպան կալ փրկութեան արքային Դիոտարայ,
նոյնչափ խէթ կասկածի անբաւականութեան անձինս
'ի դերև հանէ։ Նախ, պաշտպան լինիմ գլխոյ և բախտի
առն թագաւորի, որ թէպէտ և ինքնին չէ ինչ անիրաւ
'ի քում ևեթ վտանգին, բայց այնպէս անսովոր ինչ է
առն թագաւորի գլխապարտ լինել, զի յառաջ քան զայս
անլուր իմն է։ Երկրորդ, զայն թագաւոր՝ զոր յառաջին
համօրէն ատագանաւ հանդերձ սովոր էի գովաբանել
վասն անհատ երախտեացն առ պետութիւնս մեր, այժմ
ստիպիմ ջատագով նմին կալ 'ի գժնդակ յանցանաց։
Առ սոքօք, և յանագորոնութենէ միայն 'ի դատախազիցն,
և 'ի քարուականութենէ միւսոյն՝ յաւելու յիս ամբո-
խումն։ Անգութ Կաստոր, զի մի ասացից ամպարիշտ
և անօրէն, որ թոռն գոլով զհաւն 'ի վտանգ գլխապար-
տութեան ընկէց, և զահափետս երիտասարդութեան

իւրոյ արկ զնովաւ՝ զորոյ զալիսն պահել և պահպանելն պարտ էր, և զպարծանս քաղաքութեան դեռածաղիկ հասակին՝ անօրէնութեամբ և եղերամբ հանեաւ. զհաւատ ծառայ՝ վարձուք կաշառաբեկ արարեալ՝ վարեաց 'ի չարախօսութիւն զտեառնէն, և 'ի հրեշտակացն հեռոց ընդ արտաուղի եհան։ Իսկ զփախստական ծառայսն՝ զչարախօսի տեառն իւրոյ, և տեառն հեռաւորի, և տեառըն սերտ մտերմի պետութեանս, յորժամ զերեսն տեսանէի, յորժամ զբանսն լսէի, ոչ այնչափ ընդ վշտա արքայական աստիճանին ցաւէր ինձ, որչափ ընդ հասարակաց մեր ամենեցուն վտանգս երկիւղ յիս ընթանայր։ Զի ուր ըստ նախնեացն կրօնից՝ և ոչ խոշտանգանօք օրէն է պահանջել զծառայ այր զտեառնէ իւրմէ, յորում տանջանացն ցաւք գիտեն տալ և յակամայ կամս զճշմարիտ ձայնն արձակել, երևեցաւ ծառայ մի՝ որ զոր յերաշխաւորան անդ չմարթէր նմա 'ի բերան առնուլ՝ զնա յայտ յանդիմանս համարձակ չարախօսեաց։

Եւ այն ևս, Կ. Կեսար, խռովէ զիս երբեմն. բայց 'ի խոր ծանուցեալ զքեզ՝ դադարեմ յերկիւղէս։ Քանզի ինքնին անօրէն իմն է, բայց քոյով իմաստութեամբդ յոյժ արդարանայ։ Զի զյանցանաց առ նա խօսել, յորոյ 'ի կեանս նենգ գործել յանդիմանի յանցուածն, եթէ առանձինն ուշողի ակնարկեսցես, ծանր է. զի չիք դրեթէ ոք, որ իւրում վտանգին դատաւոր նստեալ՝ ոչ առ ինքն մանաւանդ նպաստաւոր լինիցի քան առ ատենաքարշն. այլ քո, Կեսար, վեհագոյն և չնաշխարհիկ բնութիւն ցածուցանէ յիս զայս տագնապ։ Զի ոչ այնչափ խիթամ՝ զինչ դու զարքայէն Դիոտարայ, որչափ խելամուտս եմ՝ զինչ այլոց զքէն գաստաստան առնել կամիցիս։ Խռովեալ եմ և տեղւոյս օտարութեամբ. զի զդատ մի մեծ այսպիսի, որ ոչ երբեք 'ի պայքար եկեալ է, ընդ յարկաւ տանդ խօսիմ, արտաքոյ ժողովոյ խօսիմ և ամբոխին, յոր ճարտարախօսացն յեցեալ են և են առնեն մրցութիւնք. յաչս քո, 'ի բերան քո և յերեսս ակնկա-

տայց կամ, 'ի՛ քեզ միայն նկատեմ, առ քեզ միայն հայիմ ամենայն բանիւք։ Որ ինչ ինձ 'ի յայս գամագիտ ճշմարտութեան լինելոյ զօրաւորքն են, առ եռանդն հոգւոյս և առ ամենայն ուժգնութիւն խօսից և 'ի մրցութիւն՝ յոյժ թեթևք։ Զի եթէ զայս զատ, Կ. Կեսար, 'ի հրապարակին խօսէի՝ քեզ իսկ լու 'ի լու և քո դատաւորութեամբ, որպիսի զուարթութիւն բերէր յիս խունկընթաց խնճոյ հռովմէական ժողովրդեան։ Զի մի այն քաղաքացի՝ որ թագաւորին այնմիկ չլինէր թիկունք, զորոյ զաւուրսն զամենայն 'ի միտ ածէր մաշեալ 'ի պատերազմունս հռովմէական ժողովրդեան։ Գոյր ինձ զէտակն ամբառնալ 'ի տաճար անդր խորհրդոյ, հայել 'ի հրապարակ անդր, և զինքնին իսկ զՆերկինս վկայ առնել։ Այսպէս 'ի յիշատակել ինձ զաստուածոցն անմահից և զժողովրդեանն Հռովմայ և զաւագանւոյն բարերարութիւնս առ Դիոտարոս արքայ, անհնար է պակասել յինէն բանից։ Զորս քանզի 'ի նեղ արկեալ յանձկի կացուցանեն արմունքս, ճնշեալ նուաղի տեղեաւն և դատաստանութիւնս։ Քո է, Կեսար, բազում անգամ զբազմաց ատենախօս եղելոյդ, յանձին քում նկարել՝ որ ինչ այժմ յիմ կրէ. զի դիւրաւ քո արդարութիւնդ և ունկնդրութեանդ մտադիւրութիւն՝ զամբոխումնս զայս կարճեսցէ յինէն։

ԿԻԿԵՐՈՆ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ԵՐԿՐՈՐԴԻ ՓԻԼԻՊԵԱՆ ՃԱՌԻՆ

Որո՞վ բախտիւս լինել ասացից, Հարք ատենականք, զի 'ի քսաներին ամսս յայսոսիկ չեկաց ոք ընկերհաշտութեանս թշնամի, որոյ չիցէ 'ի նմին ժամանակի և ընդ իս 'ի մարտ գռուացեալ։ Չէ ինձ ինչ հարկ յանուանէ զոք նշանակել, դուք ձեզէն 'ի ձեզ յուշ ածէք։ Նոքա՝ տուա-

Digitized by Google

ւել քան զոր գայր ինձ ցանկալ՝ ետուն ինձ վրէժս։ Ընդ քեզ զարմանամ, Անտոնիէ, զի որոց գործոցն նմանող եղեր, 'ի նոցա կատարածէն ոչ ինչ զարհուրիս։ Ընդ այս ոչ այնչափ զարմանայի յայլս. ոչ ոք 'ի նոցանէ ամբարձաւ ինձ ինքնակամ թշնամի. ամենեցուն՝ ընկերհաշտութեանս աղագաւ՝ յինէն զայրացեալ։ Դու՝ և ոչ բանիւ ինչ իւիք զկծեալ, որպէս զի յանդգնագոյն քան զԼ. Կատիլինա, մոլեգին քան զԿ. Կղոդիոս երևեցիս, ինքնաձեռն յարձակեցար յիս թշնամանօք. իբրև զի զխռովութիւն ընդ իս՝ գովութիւն քեզ լինել առ քաղաքացիս համարեցար։ Զի՞նչ վարկայց. արհամարհեա՞լ զիս. ոչ նշմարեմ՝ ոչ 'ի կեանս իմ, ոչ 'ի շնորհս, ոչ 'ի գործս պաշտամանցս և ոչ 'ի չափաւորութեանս հանճարոյ, թէ զի՞նչ արդեօք անգոսնել կարիցէ Անտոնիոս։ Արդեօք 'ի կարծիս ինչ եղև, թէ յատենի աւագանւոյս՝ դիւրին իցէ նմա բամբասել զիս. բայց ատեանս այս՝ քաղաքացւոց բազմաց հռչակաւորից զբարւոք տեսչութեան պետութեանս ետ վկայութիւն, իսկ ինձ միայնոյ՝ զփրկութեանն։ Արդեօք ոգորե՞լ ընդ իս կամեցաւ 'ի պայքար բանից. այլ այդ շնորհք է առ իս. զի զի՞նչ յորդագոյն, զի՞նչ պարարտագոյն՝ քան ինձ փոխանակ անձինս և ընդդէմ Անտոնիոսի ճառ արկանել։ Այլ այս իսկ է անշուշտ. ոչ համարեցաւ հաւաստի լինել առ իւր նմանիսն՝ թէ թշնամի հայրենեաց իցէ, եթէ չլինիցի ինձ ոխերիմ։ Առ որ յառաջ քան զայլոց իրաց տալոյ պատասխանի, ըզբարեկամութենէն ապախտ առնելոյ՝ որով զիսն ըստգիտ, և յաչս իմ ոճիր յանցանք են, ասացից սակաւուք։

ԿԻԿԵՐՈՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՏԻԼԻՆԵԱՆ ՃԱՌԻՆ ԿԻԿԵՐՈՆԻ

Ցե՞րբ իցէ քեզ այդ, Կատիլինա, մերով երկայնմտութեամբս զեղծանել. ցո՞ր ժամ խաղ առնիցէ զմեզ տակաւին գաղանութիւն քո այդ. մինչև ցո՞ր վայր մոլեսցի անձակոտոր ապերասանութիւն: Ո՞չ պալատականն գիշերապահք, ո՞չ պարեկապանք ոստանիս, ո՞չ երկիւղ ժողովրդեան, ո՞չ առաքինեացն համօրէն միաբանութիւն, ո՞չ տեղիս ամրապահեստ ատենի ծերակուտին, ո՞չ տեսիլ սոցա և երեսք համբուն սասանեցուցին զքեզ: Զիմանա՞ս զի հոլանեալ նշաւակ կան խորհուրդք սրտի քո և զի սոցա ամենեցուն 'ի միտս ըմբռնեալ է դաւաճանութիւն քո՝ ո՞չ տեսանես: Թէ 'ի գիշերի աստ յայսմիկ և թէ 'ի գնացելումն զինչ ինչ քո գործեալ իցէ, յո՞վ երթեալ, զո՞յս գումարեալ և զի՞նչ առեալ խորհուրդ՝ զո՞'ի մէնջ կարծես անգիտանալ: Ո՛վ ժամանակացս, ո՛վ սովորութեանցս: Զայդ ամենայն գիտէ ծերակոյտն. բդեաշխն տեսանէ, այլ դեռ ևս կենդանի կայ դա: Կենդանի՞ կայ. նա աւանիկ և յատեան այսր եկեալ՝ համաշխարհի խորհըրդեան լինի խորհրդակից. զմի մի 'ի մէնջ՝ ակնարկելովն 'ի մահ սահմանէ և կնքէ: Եւ մեք, եհէ՛ արքս զօրութեան, հատուցեալ համարիմք պետութեան զպարտըս, եթէ 'ի դորա մոլեգնութենէն և վրիժակացն ևեթ ապրեսցուք: Վաղ ուրեմն 'ի մահ արժան էր, յուղարկել Կատիլինա՝ զքեզ 'ի հրամանէ բդեշխին, 'ի գլուխ քո հանել զեղեռնն՝ զոր դու վաղուց ամենեցուն մեզ նիւթես:

ԿԻԿԵՐՈՆ

Digitized by Google

## ՅԱՌԱՋԱԲԱՆ Կ. ՏԱԿԻՏՈՍԻ ՏԱՐԵԳՐԱՑՆ

Արքայք 'ի սկզբանէ կացին 'ի Հռովմ· զազատութիւն ապա անդ և զբդեաշխան կացոյց Բրուտոս: Իշխանապետք անդ 'ի սահմանեալ ժամանակի ընտրէին, և ոչ տասնապետաց իշխանութիւն քան զերկեամ մի և անդր ապարթանէր:

Հազարապետաց զօրականին սաստ բդեշխական ոչ ընդերկարեաց: Ոչ Կիննայ և ոչ Սիլլայի եղև երկարատև տիրապետութիւն: Պոմպէի և Կրասոսի վաղ 'ի Կեսար անց իշխանութիւն, և սպառազինութիւնք Լեպիդեայ և Անտոնիոսի յանձն եղին յԱւգոստոս, որ իշխանական անուամբ զաշխարհ պարտասեալ յընտանի գժտութեանց ընդ իւրև նուաճեաց:

Վաղնջական ազգին հռովմայեցւոց յաջողութիւնք և արկածք յականաւոր մատենագրաց արձանագրեցան, և ոչ պակասեցին արք գերահանճարք ժամանակագրել զիրս Աւգոստեայ, մինչև շողոմից զվեհերոտութիւն 'ի ներքս մուծեալ: Վասն որոյ Տիբերի, Կայիոսի, Կլաւդեայ և Ներոնի պատմութիւնք առ իշխանակալութեամբն նոցա' առ երկիւղի, և յետ մահու նոցա' զի դեռ ևս վառ և բորբոք էր ատելութիւն' ստայօդք աւանդեցան:

Այսր աղագաւ խորհեցայ սակաւուք և զԱւգոստեայ աւուրցն վերջնոց անցանել, և ապա զՏիբերի և որ զհետ նոցին իշխանակալաց 'ի գրի առնել զպատմութիւն, յերկաքանչիւրոցն իսկ անայլայլակ յատելութենէ և յաշառութենէ, որոց պատճառք քաջ 'ի բացեայ են յինէն:

ՏԱԿԻՏՈՍ

Digitized by Google

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ԿԱՏԻԼԻՆԵԱՆ ԴԱՒԱԴՐՈՒԹԵԱՆ

Որք միանգամ գլել զայլովք կենդանեօք ջանան, պարտ է նոցա մեծաճիգն զուն դնել՝ չվարելոյ կեանս զատարկապորտս հանգոյն անասնոց, զորս բնութիւնն երկրաքարշս արար և որովայնի ստրուկս։ Այլ մեր բովանդակ զօրութիւն 'ի հոգւոջ և 'ի մարմնի եդեալ է. զհոգին 'ի հրամանատար գիտեմք, և զմարմին 'ի ծառայ. մին ընդ անմահս է բաժանակից՝ և միւսն ընդ անբանս։ Վասն այսորիկ արդարագոյն ինձ թուի հանճարով քան զօրութեամբ ուժոյ՝ փառաց լինել 'ի խնդիր. և քանզի կեանքս զոր վարեմք՝ վաղանցուկ է, յիշատակս ըստ կարի երկարագոյնս թողուլ զանձանց։ Զի սակաւատև է և դիւրաթարշամ՝ ընչից և գեղեցկութեան փառք, իսկ առաքինութեան՝ շքեղ և յաւերժական։ Սակայն ընդերկար վէճ էր 'ի մարդիկ, ուժո՞վ արդեօք թէ արութեամբ ոգւոյ պատերազմ վճարիցի։ Քանզի չև իսկ ձեռն 'ի գործ արարեալ՝ խորհրդոց պէտք են, և ապա արդեանց 'ի դէպ ժամանակի։ Այսպէս երկաքանչիւրն ինքնին անբաւական՝ իրերաց կարօտին սատարութեան։

Վասն այսորիկ՝ 'ի սկզբան անդ թագաւորք, քանզի այս եղև յերկրի առաջին յորջորջումն իշխանութեան, զանազան կալան շաւիղ. կէսք զհանճար, այլք զմարմնոյ կորով կրթէին. և զի դեռ յայնժամ կեանս անցանկաւերս վարէին մարդիկ, այր այր իւրովքն բաւականացեալ վայելէր։ Այլ զկնի ապա իբրև Կիւրոս յԱսիա, Լակեդեմոն և Աթէնք 'ի Յունաստան՝ զքաղաքս նուաճէին և զժողովուրդս զբռամբ ածէին, և տենչ տիրապետութեան դրդէր զնոսա 'ի պատերազմ, և ծայր փառաց 'ի գերագոյն իշխանութեան դնէր, յայնժամ ուրեմն յայտ իմն այսպէս 'ի վտանգաց և յարդեանց իրացն եղև՝ զի բազում ինչ զօրէ 'ի պատերազմի հանճար։ Զի եթէ հան-

Digitized by Google

ճար Թագաւորաց և իշխանաց 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի միայնչեռ զօրանայր հաստատագոյնս, եւս և օրինաց վճարէին խրաց կենցաղոյս պայմանք. և չտեսանէաք զօտարին ընչից յափշտակութիւն, և զամենայն ինչ կերպարանափոխ լեալ կամ մեր 'ի վայր խառնակեալ: Քանզի նախին եթէ հնարիւք հեշտեաւ յակաստանի կայ տէրութիւն, որով և կանգնեցուն յառաջագոյն: Այլ իբրև փոխանակ արութեան՝ վատութիւն, և զգաստութեան և արդարութեան՝ զեղխութիւն և զառազութիւն յարդեալ 'ի ներքս զեղուն, յայնժամ ապա և բաղդն և տէրութիւնք յայլ իմն կերպարանս առեալ փոխին: Այսպէս ըստ բախտի եթէ իշխանութիւն 'ի լաւագոյն դ 'ի նուազ բարւոյն փոխարերի: Ցորժամ մարդկան ազգ զերկիր գործեն, ընդ ծով նաւարկեն, շինուածս կառուցանեն, այն ամենայն՝ առաքինութեանց սակի են. այլ յոլովագոյնք 'ի մահացուաց՝ որովայնի և քնոց անձնատուրք, անգէտք և անկիրթք իբրև զնժդեհս ամանս անցին ընդ կեանս, որոց արդարև հակառակ օրինաց բնութեան մարմինքն հեշտալի, իսկ հոգիքն եղեն ծանրաբեռն: Ես ոչ ինչ ընդհատ 'ի մահուանէ զնոցա կեանս համարիմ. զի երկաքանչիւր ընդ լռութեամբ ծածկին: Իսկ արդ ինձ այսպէս թուի թէ կեալ և վայելել հոգւով այնոցիկ է՝ որ վաստակոց ինչ պարապեալ, զօվէլի ինչ գործով և պիտանի արուեստիւք 'ի խնդիր լինին համբաւոյ: Սակայն 'ի խուռն բազմութեան գործոց, բընութիւն ցուցցէ զիւրաքանչիւր ճանապարհ:

Գեղեցիկ է բարիս գործել հասարակաց, այլ և բարւոք խօսել ոչ ինչ անաւեղի. 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի պարտ է մեծանուն հանդիսանալ. որ գործեցին և որ զայլոց գործս 'ի գիր հարին՝ գովութեանց արժանաւորք: Թէպէտ և ինձ զլխովին ոչ զուգական փառաց համարիցին արժանի մատենագիրն և մատենագրելոյն գործօն, սակայն և այնպէս ամենադժուարին վարկանիմ գործ՝ վիպագրել զդէպս. Նախ այնու իսկ՝ զի բանքն հա-

ւասարել պիտոյն գործոցն. երկրորդ անգամ, զի եթէ ուրեք զերծեալ են 'ի պարապել ամենայնի, բազմաց առ չարութեան և առ նախանձու թուեցին բանքդ: Որ եթէ զմեծամեծ արութեանց և զփառաց լաւագոյն յիշատակ առնիցես, զոր ինչ ոք դիւրագործ անձին վարկանի՝ առ ոչ ինչ գրէ. իսկ եթէ գեր 'ի վեր.ս՝ կեղծիս սոսայօղս առագնէ: Այլ ես 'ի սկզբան անդ 'ի պատանեկութեան հանգոյն բազմաց մխեցայ ծրաշխան 'ի գործ հասարակաց. և ընդ առաջ եկին ինձ խոչ. ընդ ոտն խափանարարք ոչ սակաւ: Քանզի փոխան ցածութեան, ժուժկալութեան և առաքինութեան՝ զօրանայրին յայնժամ ժպրհութիւն, ընչից վատնումն և արծաթսիրութիւն: Ցորչափ թէպէտ 'ի բաց գարշէին միտք իմ յանօրէն չարագործս արուեստիցըն, սակայն դիւրահրապոյր 'ի բազմադիմի յաւութիւնս անդ տիք՝ որսացեալ կային 'ի ծուղակ փառասիրութեան. և մինչդեռ 'ի խառնաժամ զնացից այլոց խորշէի՝ նոյն տենչ փառաց և համբաւոյ և մախանք՝ ըստ օրինակի այլոց և զիս տանջէին:

Իսկ յորժամ 'ի բազմապատիկ աղետից և 'ի վտանգաց անդորրացան միտք իմ, և ընտրեցի զմնացորդ կենաց իմոց անցուցանել հեռի 'ի հասարակաց գործառնութենէ, ոչ յօժարեցի մեղկութեամբ և դատարկութեամբ զպատուական ժամանակն պարապոյ վատնել, և ոչ 'ի գործել զերկիր, կամ յարշաւանս որսոյ, կամ յայլ ինչ ծառայական վարել զկեանս 'ի գործ. այլ կրկին դարձ առնելով 'ի ձեռնարկեալն յինէն ուսումն, յորմէ անխորհուրդն փառասիրութիւն ստորոյց զիս, եդի 'ի մտի՝ ընտիր առնելով 'ի հռովմէական վիպաց՝ գրել որ ինչ արժանի յիշատակի ինձ թուէին. մանաւանդ զի յակնկալութենէ, յերկիւղէ և 'ի կողմնասէր խորհրդոց ազատ էին միտք իմ: Եւ արդ զկատիլինեայ դաւակցութենէն, որչափ ինչ ճշգրտագոյնս մարթացայց. սակաւուք աւանդեցից: Քանզի զայդ գործ վասն եղեւանն նորութեան և մեծի վտանգին, ընդ առաջին յիշատակելիս

համարիմ։ Այլ մինչև բուռն հարեալ զանցիցն պատմել, արժան է սակաւուք տալ զնկարագիր առնն, թէ որպի-սի ոք էր։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՃԱՌԻՍ ՀԵՆՐԻԿԷԻ ՄԱՐԻԱՄՈՒ ԳԱԼԼԻՈՑ

Որ թագաւորէն յերկինս՝ հանուրց թագաւորութեանց տէր, որում միայնոյ են փառք՝ մեծութիւն և իշխա-նութիւն, նա ինքն միայն է փառաւորեալ 'ի դնել օրէնս թագաւորաց, և տալ նոցա յորժամ հաճեսցի՝ խրատս մեծամեծս և ահագինս։ Թէպէտ բարձր առնիցէ զգահս, թէպէտ նկուն, թէ հաղորդս զօրութեան իւրում ա-րասցէ զիշխանս, և թէ առ ինքն զայն ամփոփեալ՝ զհի-քութիւն և եթ նոցին թողցէ 'ի նոսա, զպարտս նոցուն ուսուցանէ նոցա բարձրագոյն օրինակաւ ըստ իւրում արժանին։ Քանզի յընձեռել նոցա զզօրութիւն իւր, հրաման տայ 'ի պէտս բարեաց աշխարհի վարել զայն՝ իբրև զինքն. և յամփոփելն՝ յայտ առնէ նոցա՝ թէ ա-մենայն մեծութիւն նոցին փոխ առեալ է, և զի թէ և յաթոռ ամբարձեալք՝ ոչ ինչ ընդհատ ընդ ձեռամբ իւ-րով են և ընդ գերակայ իշխանութեամբն։ Այսպէս խը-րատէ նա զթագաւորս՝ ոչ բանիւք և եթ և պատգամօք, այլ և արդեամբք և օրինակօք. Արդ, թագաւորք, զայս 'ի միտ առէք, խրատեցարուք ամենեքեան որք դատիք զերկիր։

Քրիստոնեայք, զորս յիշատակ մեծի դշխոյիս. դը-ստեր՝ թոռին և մօր թագաւորաց հզօրաց, և երից թագաւորութեանց բամբշանս, ժողովէ 'ի կողմանց կող-մանց յայս պաշտօն սգաւոր, ճառս այս ցուցցէ ձեզ մի յահաւոր օրինակաց անտի՝ որ յանդիման առնեն

յաչս աշխարհի զունայնութիւն իւր բովանդակ։ Ի մի ևեթ կեանս տեսանիցէք համօրէն զծայրս երից մարդկայնոց. երջանկութիւն անսահման, նոյն և տառապանք. երկար և խաղաղ վայելք միոյ յերևելի թագաց տիեզերաց. ամենայն փառք զարմի և մեծութեան հաւաքեալ 'ի մի գլուխ, որ մատնի ապա յամենայն թշնամանս բաղդին. իրաւունք արդարութեան՝ յաջողութիւն գտեալ նախ, և ապա յետս ընդդէմ յանկարծ պատահարք. անլուր փոփոխմունք, ապստամբութիւն յերկար սանձահարեալ, հուսկ ապա ընդվզեալ տիրացեալ 'ի սպառ. ստամբակութիւն ապերասան ամենևին, օրէնք բարձեալ, թագին մեծվայելչութիւն առ ոտն հարեալ՝ ցայնժամ անծանօթ ոճրագործութեամբք. յափշտակութիւն և բռնակալութիւն՝ ընդ անուամբ ազատութեան. դշխոյ մի փախստեայ՝ ոչ ուրեք ինչ գտեալ ապաստան յերեսին թագաւորութեանն, և աշխարհ իսկ իւր հայրենի՝ տեղի աքսորանաց միայն լեալ նմա այնուհետև. ինն ճանապարհք բամբշան ընդ ծով մրրկածուփ. ովկէանոս հիացեալ՝ տեսանելով զինքն յայնքան նաւաքր հատեալ անցեալ պէսպէս հանդերձանօք և յայլ և այլ պատճառս. աթոռ մի անարգաբար տապալեալ, և սքանչելապէս կանգնեալ վերստին։

Զայդ աւագիկ ուսուցանէ Աստուած զթագաւորսն, այդպէս ցուցանէ աշխարհի զոչնչութիւն փառաց նորա և պերճանաց։ Եթէ մեզ պակասեսցեն բանք, եթէ ճառքս ոչ հաւասարեսցեն մեծութեան և բարձրութեան առաջարկութեանս, արդիւնք իրացն ինքնին խօսեսցին բաւական. սիրտ մեծի դշխոյին՝ ամբարձեալ երբեմն բազմապատիկ երկար բարեբախտութեամբք, և ապա յեղակարծումն տարակարծի 'ի խորս ընկղմեալ դառնութեան, չատ իսկ բարձրաբարբառ խօսեսցի. և եթէ չիցէ օրէն առանձին ումեք խօսել խրատս առ իշխանս ընտրանչան անցիցս, թագաւոր ոմն մատուսցէ ինձ զբարբառ իւր՝ ասել ցնոսա. Արդ, թագաւորք, զայս 'ի միտ

առէք, խրատեցարուք ամենեքեան ոյք դատիք զերկիր. Խնկլամուտ լերուք՝ ով մեծամեծք երկրի, ուսարուք՝ զա-տաւորք աշխարհի:

ԳՈՍԻՒԷԹ. Դաւմբրանակեանք:

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ԼՈՒԴՈՎԻԿԵԱՅ ԳՈՒՐԳՈՆԵԱՆ ԻՇԽԱՆԻՆ ԳՈՆՏԷԻ

Ի բանալ բերանոյս 'ի գովեստ անմահ փառաց Գուր-պոնեանն Լուդովիկեայ՝ իշխանին Գոնտէի, նոյնչափ խը-ռովեալ տեսանեմ զանձն իմ և 'ի մեծութենէ իրացն, և եթէ ներեսցի ինձ խոստովան լինել, յանշահութենէ խակ աշխատութեանս: Ո՞ր այն կողմ մարդաբնակ տիեզե-րաց՝ ուր ոչ իցէ լուեալ զյաղթանակս իշխանին Գոնտէի և զզարմանալիս կենաց նորա. ամենայն ուրեք պատ-մեալ հաչակին. գալլիացին պանծացեալ նոքօք՝ ոչինչ ուսուցանէ օտարոտւոյն: Եւ որ զինչ և ճառեցից ես ձեզ այսօր զնմանէ, յետնեալ յամենայնի քան զմիտս ձեր, կայցէ ինձ տակաւին տալ պատասխանի զազտնի մե-ղադրութեանց զինէն՝ 'ի վայր յոյժ քան զիրացն արդիւնս ձգելոյ: Անկար ճարտարախօսքս ոչինչ զօրեմք 'ի փառս ոգւոց գերագունից. արդար է իմաստունն 'ի բանս իւր թէ՝ Գործք իւր եւեթ գովեսցեն զնա: Առ անուամբք մեծամեծօք՝ այլ ամենայն դրուատիք նուաստանան, և անպաճոյճ պարզութիւն եւեթ հաւաստարիմ պատմու-թեան՝ կարասցէ թերևս կալ տոկալ առաջի փառաց իշխանին Գոնտէի:

Սակայն, մինչև զվէպս զայս հանցէ 'ի լոյս պատմու-թիւն՝ որ հաստուցանելոց է զայն հանդերձեալ յաւի-տեանցն, պարտ է ըստ կարի մերում հաճել զչնորհա-կալու միտս հասարակաց, և հպատակել հրամանի մեծին

'ի Թագաւորս։ Նա որ երախտիք չիցեն առ Թագաւորութիւնս յիշխանէ անտի՝ որ զառեն զայլքրական փառաւորեաց, ողջոյն զանունն զայլիացի, զազգ իւր և զողջես զմարդկութիւն առ հասարակ։ Լուդուիկ Մեծն իսկ՝ եկն եւ յայս իմաստս մտաց, ողբացեալ նախ զայրս զայս զմեծ, և արտասուօքն 'ի մէջի անդ բովանդակ արքունեացն տուեալ նմա զհրաշափառագոյն զօրութիւնն զոր մարթ էր նմա ընդունել, ժողովէ աստանօր 'ի հաշականուն տաճարիս զամենայն փառաւորս արքայութեան իւրոյ՝ առ 'ի զհամաշխարհի պարտս հատուցանել յիշատակի իշխանիս. և կամի զի բարբառս իմ անզօր՝ կենդանացուսցէ զայս սգազգած տեսիլ և զամենայն զայս Թաղմանական հանդէս։ Ո՛հ, եկայք արդ բուռն արտասուք ցաւոցս։

Աստանօր՝ մեծ իմն և արժանավայելուչ այսմ բեմբի՝ յանդիման լինի մտացս. այն ինքն է Աստուած՝ որ ածանէ զպատերազմողս և զաշխարհակալս։ Դու ես, ասէր առ նա Դաւիթ, որ ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ, և զմատունս իմ 'ի ճակատամարտ։ Եթէ նա է որ շնչէ զարութիւն, ապա նա տայ և զայլ մեծամեծ ձիրս ըզբնականս և զգերաբունս՝ զսրտի և զմտաց։ Ամենայն 'ի ձեռանէ նորա 'ի հզօրէ գայ, նա է որ առաքէ յերկնից զազնուական մտածութիւնս, զխորհուրդս իմաստութեան և զամենայն հանճար բարի. այլ կամի մեզ գիտել ընտրութիւն առնել 'ի մէջ պարգևաց զորս Թողու 'ի Թշնամիս իւր, և որոց պահէ ծառայից իւրոց։ Որ որոշէն ընդ բարեկամս իւր և ընդ այլս ամենեսին՝ բարեպաշտութիւնն է. մինչ չև զայս պարգև ընկալեալ յերկնից, այլն ամենայն ոչ միայն չեն ինչ, այլ և դառնան լինին 'ի կործանումն փերևերտելոցն նոքօք։ Առանց այսր անկշիռ պարգևի բարեպաշտութեան՝ զինչ լինէր իշխանն Գոնտէի մեծաւ սրտիւն հանդերձ և մեծաւ հանճարովն։

Ոչ, եղբարք իմ. եթէ բարեպաշտութեան չէր սրբեալ զայլ ևս առաքինութիւնսն, ոչ դոքա իշխանքդ սփոփանս

ինչ դատանէին զաւացն, ոչ աստուածածնեալ քահանայա-
պետաց ինչ յաղթն իւր վստահութիւն, և ոչ ևս ինչ
զօրավիգն 'ի զօրութիւնս՝ զոր պարտին պաշտպանելոյ
մեծի առն։ Արդ, օրինակաւս այսուիկ կարկեցուցուք
զփառս մարգարէտէնս, փշրեցուք զկուռս փառամոլիցն.
անկցին կործանեալ առաջի սորա նենգամիտք։ Հալածեցուք
այսօր 'ի մէջ, — զի և մարթի ինչ 'ի հրապարակ առնել —
զամենայն զեղեցիկ զեղեցիկ հանգամանս վեհմակրան
բնութեան, և 'ի պարծանս ճշմարտութեան՝ յանդիման
կացուցուք յաղթաբերանող իշխանին, թէ որ ինչ դիւ-
ցազնս կատարէ, որ ինչ զարմանալի փառս 'ի ծագ
բարձրութեան տարեալ հանէ, քաջութիւն, մեծանձնու-
թիւն, բարեբարութիւն՝ ըստ արտաքին մասանց, աշխոյժք,
սուր միտք, պերճութիւն և վեհիմաց հանճար ըստ մա-
սանց ոգւոյ, պատիր երևոյթք լինէին՝ եթէ բարեպաշ-
տութիւն չգոյր ընդ նոսին. և զի բարեպաշտութիւն է
մարդոյ ամենայն ինչ։ Զայս տեսջիք, տեսէք, 'ի յաւէրժ
յիշատակաց արժանի վարս բարձրապատիւ և մեծազօր
իշխանին Լուդովիկեայ Պուրպոնեան, իշխանին Գոնտէի
և առաջին արեանառու Թագազարմ իշխանի։

ՊՈՍԻՒԷԹ. Դամբանականք։

---

## ՑՈՒՑԱԶԱՐԴԱՆ ՃԱՌԻՆ ՀԵՆՐԻԿԷԻ ԱՆՆԱՅԻ ԱՆԳԼԻՈՅ

Ինձ ուրեմն պահեալ կայր և զայս հարկ սգաւոր պաշտաման հատուցանել բարձրապատիւ և հզօր բամբշանս Հենրիկէի Աննայ Անգլիոյ՝ տիկնոջ իշխանին Օռլէանայ։ Այն՝ որ տեսանէի այնպէս մտադիւր ուշակալ 'ի հարկանելս իմ զայն սպաս մօր իւրում դշխոյի, այսպէս ուրեմն վաղվաղակի էր լինելոց պատճառ նոյնօրինակ ճառի, և ինոյ ցաւագին ձայնիս մնայր այս տխրաղորմ սպասաւորու-

Digitized by Google

թիւն։ Ո՛վ ունայնութիւն, ո՛վ ոչինչ, ո՛վ անցաւորք բախ-տին երեւանց մահկանացուաց։ Կարծէ՞ր ինչ նա ընտա-յաւաղ քան զամիսս տասն. և դուք, տեսիլք, ածէի՞ք ինչ զմտաւ, մինչդեռ յանհնարին արտասուս հարեալ կայր 'ի տեղւոջն յայսմիկ, թէ այսպէս փութանակի ժողովելոց իցէ զձեզ անդր՝ աշխարհել և զինքն։ Ո՛վ բամբիշն, զարմանալիդ երկուց մեծաց թագաւորու-թեանց. չէ՞ր չատ Անգղիոյ լալ զբաժանումն քո 'ի Նմանէ՝ առանց հարկ լինելոյ նմա ողբալ և զմահդ. և Գաղղիոյ՝ որ եւտես զքեզ դարձեալ վերստին այնչափ ցնծութեամբ պար առեալ 'ի Նորանշոյլ փառաց, միթէ չէի՞ն այլ եւս հանդէսք և այլ ինչ յաղթանակք վասն քո՝ 'ի դարձիդ քում այսրէն 'ի հռչակելի ուղւոյդ, ուստի ա-ռեալ ածեր այնքան պարծանս և այնպիսի գեղեցիկ ակնկալիս։ Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է։

Այս բարբառ և եթ մնայ ինձ, զայս միայն Ներէ ինձ խօսել՝ 'ի Նորանշան պատահարիս՝ ցաւ մի այսպիսի ար-դար և կարեւոր։ Վասն որոյ ոչ յուզեցի 'ի գիրս սուրբս՝ գտանել բնաբան մի պատշաճող տիկնոջս. զոր անաշ-խատ և անխտիր զառաջին բանս ձօղովողին, յորս թէպէտ և յեղյեղուկս արկեալ է ունայնութիւն, այլ ըստ իս՝ դեռ եւս ոչ բաւական 'ի պէտս առաջի եդեալս խորհրդոյ։ Կամ է ինձ՝ 'ի միոյ միայնում թշուառութեան աշխարհել զթշուառութիւնս ազգի մարդկան առ հասա-րակ, և 'ի միում և եթ մահու՝ յանդիման առնել զմահ և զոչինչն ամենայն մարդկեղէն մեծութեանց։ Այս բը-նաբան՝ յոյժ 'ի դէպ ամենայն վիճակի և ամենայն գի-պուածոյ կենցաղիս, առանձին իմն իրաւամբք վայելուչ է ողբանուէր առաջարկութեանս. զի ոչ ուրեք այսպէս յայտ յանդիման մերկացան և համարձակաձայն նշաւա-կեցան ունայնութիւնք աշխարհիս։ Ո՛չ. յետ զամ մի զայս տեսանելոյ մեր, առողջութիւն չէ ինչ՝ բայց անուն և եթ, կեանքն՝ երազ, փառքն՝ երեւոյթ, շնորհքն և հաճոյք՝ վտանգաւոր զբօսանք. ամենայն ինչ ունայն է 'ի մեզ

Digitized by Google

բայց յանկերծ խոստովանութենէ ընդունայնութեանցս
աշխարհիս Աստուծոյ, և 'ի հաստատուն խորհրդոց արհա֊
մարհելոյ զամենայն որ ինչ և իցէ։

Այլ միթէ զնշմարտութի՞ւն խօսիցիմ. զոր 'ի պատկեր
իւր արար Աստուած զմարդն՝ միթէ առուն՞ր եւեթ իցէ.
զոր յերկնից յերկիր եկն խնդրել Յիսուս Քրիստոս, զոր
ոչ անարգութիւն համարեցաւ գնել բովորով իւրով ա֊
րեամբն՝ չի՞նչ եւեթ իցէ։ Աղէ 'ի միտս եկեսցուք 'ի մոլո֊
րութենէս. տպաքէն պատրէ զմեզ այս տխուր տեսիլ
մարդկային ունայնութեանց. և յոյս աշխարհիս 'ի դերև
ելեալ յանկարծոյն մահուամբ տիկնոջս՝ անդրադարձուցա֊
բէ զմեզ։ Ոչ ներելի է մարդոյս խոտել բովորովին զանձն՝
զուցէ ընդ ամպարիշտսն խաղ իմն 'ի ձեռս դիպուածոյ
վարկուցեալ զկեանս, ստերիւր և ստահակ գնայցէ ըստ
կամս զաչացու յօժարութեանցն։ Սմին իրի ճողովողին
սկիզբն եղեալ աստուածեղէն գրոյն զասացեալ բանքս,
և զամենայն էջսն լցեալ արհամարհութեամբ մարդկայ֊
նոցս, կամի ապա հաստատուն ինչ առաջի առնել մար֊
դոյն, և զամենայն ճառսն տանի կնքէ յայս. Յաս֊
տուծոյ երկի՛ր և զպատուիրանս նորա պահեա. զի այս
է մարդն ամենևին, զի զամենայն արարածս ածցէ
Աստուած 'ի դատաստան՝ յամենայնի անտես արա֊
րելոցն, եթէ բարի և եթէ չար։ Վասն որոյ՝ ամենայն
ինչ սնոտի է 'ի մարդն, եթէ յայն հայիցիմք՝ զոր տայն
աշխարհի. իսկ եթէ զոր Աստուծոյն պարտի՝ զայն
մտաւ ածիցեմք՝ մեծարգի է ամենայն։ Դարձեալ միւս֊
անգամ սնոտի է ամենայն 'ի մարդն, եթէ միտ եդեալ
նայիցիմք յընթացս մահկանացու կենացն. բայց պա֊
տուական է ամենայն, կարևոր ամենայն, եթէ զվախ֊
ճանն յոր յանգ ելանէ՝ նկատիցեմք, և զհամար զոր
պարտի տալ զամենայնէ։

Խօսեսցուք ուրեմն այսօր առաջի սեղանոյս և զամբա֊
նիս զառաջին և զվերջին պատգամս ճողովողին. զմին՝
որ զունայնութիւն մարդոյն ցուցանէ, և զմիւսն՝ որ սահ֊

մանէ զմեծութիւն նորա։ Դամբանս այս տարացէ զմեզ խեղամուտ աշնչութեան մերում. միայն թէ սեղանս՝ յարում հանապազօր մատչի վասն մեր պատարագ մեծագին՝ ուսուսցէ մեզ միանգամայն զպատիւ մեր. երկրացուն եւս վկայ հաւատարիմ եղիցի տիկինս՝ զոր արտասուեմք։ Տեսցուք՝ զոր մահ արտադավախեան խլեաց 'ի նմանէ, տեսցուք զոր մահ բարձ պարգեւեաց նմա։ Այսպէս ուսցուք արհամարհել զոր նա 'անմխիթ եւլիք, զի զմիտս մեր բովանդակ յայն յառեսցուք՝ զոր ընդգրկեաց նա ջերմեռանդն տենչմամբ, յորժամ հոգի իւր պարզեալ յամենայն երկրաւոր խորհրդոց եւ երկնիւք լցեալ՝ յոր հուպն կայր, ետես զլոյսն յայտ յանդիման։ Այդ են ճշմարտութիւնքն՝ զորոց ճառելոյս եմ, արժանի զայնս համարեալ լսելեաց իշխանիս մեծի, եւ ժողովս ականաւորի ընդ տիեզերս։

ՊՈՍԻՒԷԹ. Դամբանականք։

---

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ ՅԱՂԱԳՍ ՕՐԻՆԱԿԻ ՄԵԾԱՄԵԾԱՑ

Տէր արքայ,

Այս վիճակ է թագաւորաց եւ իշխանաց աշխարհի, զի կան 'ի կորուստ եւ 'ի փրկութիւն մարդկան. եւ 'ի տալ երկնից զնոսա յերկիր, մարթի ասել զնոսա շնորհս եւ կամ պատուհաս յողորմութենէ կամ յարդարութենէ իւրմէ պատրաստեալս ժողովրդոց։

Այո, տէր արքայ, յաւուրն թարութեան՝ յորում ընծայեցար աշխարհի Գաղղիացւոց, եւ ածեալ 'ի տաճարն սուրբ՝ կնքեաց զքեզ քահանայապետն 'ի վերայ սեղանոյն սրբով նշանաւն հաւատոց, ճշմարիտ էր ասել զքէն. Մանուկս այս մեծաշուք՝ ծնեալ է 'ի կորուստ եւ 'ի փրկութիւն բազմաց։

Յիսուս ինքնին 'ի ժառանգելն այսօր 'ի տաճարին ըզնոր թագաւորութիւն իւր, չէ ազատ յօրինաց աստի: Օրինակք իւր և գանձելիք և վարդապետութիւն, որ գործելոցն են զփրկութիւն յոգնահոյլ հօտին Իսրայելի, չիցեն արդարև պատճառք գլորման և գայթագղութեան այլոց Հրէից, բայց եթէ յանհաւատութենէ իւրեանց՝ որով առաւել անպատասխանի լինիցին. և նոյն աւետարան եղիցի կիսոց 'ի փրկութիւն և յազատութիւն, և այլոց 'ի կործանումն և 'ի դատապարտութիւն:

Երանի՜ իշխանաց և մեծամեծաց, եթէ սրբութիւն նոցա միայն իցէ պատճառ պարսաւի և գայթակղելոյ արանց ապականելոց, և օրինակք նոցա՝ իբրև զՅիսուսին՝ մի՛ լինիցին 'ի խոչ և 'ի դատապարտութիւն անտի՝ բայց միայն առաւել ևս անպատասխանի զնոյն կացուցանելով, և օրինակ լինելով առաքինութեան և պատըսպարան:

Վասն որոյ, եղբարք իմ, դուք՝ զորս խնամք աստուածային բարձրացոյց քան զայլս 'ի մարդկանէ, մանաւանդ դու, Տէր արքայ, զոր ձեռն աստուածեղէն՝ պահապան արքայութեանս՝ կորզեաց 'ի մէջոյ կործանման և աւերակաց տանն արքունի, առ 'ի կանգնելոյ զքեզ 'ի վերայ գլխոց մերոց, դու՝ զոր իբրև զկայծակն ինչ պատուական՝ արծարծեաց 'ի ծոց ստուերաց մահու, ուր զմեծափառ տոհմն քո շիջոյց, ուր և դու ինքնին 'ի շիջանել կայիր, այո՝ Տէր արքայ, դարձեալ առնում ասել, այդ ահաւադիրկ է պատրաստ'ալ քեզ յերկնից վիճակ. կաս դու 'ի կորուստ և 'ի փրկութիւն բազմաց. Սա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայելի: Իշխանաց և մեծամեծաց օրինակք 'ի մի յայս կամ 'ի միւս կողմն շրջին անհրաժեշտ. անմարթ է նոցա միայն առանձինն կորնչել կամ փրկիլ: Այս ճշմարտութիւն մեծ՝ լինիցի հիմն ճառիս:

ՄԱՍԻԼԼՈՆ· Փոքրիկ Քառասնորդք:

Digitized by Google

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԿՐՕՆԻՑ ՔԱՐՈԶԻՆ

*Տէր արքայ,*

*Ընդունայն յաղթանակք աշխարհակալաց՝ տեսիլ իմն ևեթ էին ամբարհաւանութեան, արտասուաց, յուսահատութեան և մահու, զի մարդկային ախտից էին յաղթանակ տխրալի, և զհետ իւրեանց ոչ այլ ինչ թողուին քան զշարաշուք հետս փառամոլութեան յաղթողացն, և գերութեան պարտելոցն:*

*Յաղթանակ Յիսուսի այսօր՝ ազգացն իսկ նուաճելոց յաղթանակ է խաղաղութեան, ազատութեան և փառաց:*

*Յաղթանակէ թշնամեացն՝ առ 'ի փրկել զնոսա և հաղորդս առնել իշխանութեան իւրում: Յաղթանակէ մեղաց՝ ջնջեալ և բեւեռեալ 'ի խաչափայտին զմահահրաւէր ձեռագիր մերոյ դատապարտութեանս, և բղխեցուցանէ անտի 'ի վերայ մեր աղբիւր բժշկութեան և շնորհաց: Յաղթանակէ մահու՝ առ 'ի հաւատարիմ առնելոյ մեզ զանմահութիւն:*

*Այս են փառք աստուածպաշտութեան. ցուցանէ նախ զնախատինս և զշարշարանս խաչին, այլ յաղթանակ է այն շքեղ, և հանդէս մեծ ընծայեալ երկրի 'ի մարդոյն: Զի՞ք ինչ յաշխարհի մեծ քան զառաքինութիւն. այլ ամենայն պէս պէս փառք՝ կամ 'ի դիպաց են արդասիք, կամ շողոքորթութեան և մոլորութեան մարդկան գիւտք, իսկ սա՛ յԱրարչէն միայն է և յիւրաքանչիւր անձնէ: Թագաւորաց և իշխանաց սա ամօթ համարի. և սակայն սովաւ ևեթ է նոցա մեծ լինել. զի սովաւ ևեթ կարեն յաղթող լինել թշնամեաց իւրեանց, կարեաց իւրեանց, և մահու իսկ գլխովին:*

*Յայտ արասցուք զճշմարտութիւնս զայսոսիկ՝ որ հաւատոց 'ի մեծ փառս են, և նուիրեսցուք 'ի պարծանս*

կրծնից զկարգս աւուրս վերջնոյ, որ է օր մեծ յաղթա-նակացն Յիսուսի:

ՄԱՏԻԼԵԱՆ. փոքրիկ քնարասաներգք:

---

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀՕՐՆ ԲՐԻՏԵՆԱՑ

Ի տեսիլ Նորանշան հանդիսի այդքանոյ ունկնդրացդ՝ Թուի ինձ, եղբարք իմ, թէ արժան էր ինձ առաջէն բանալ զշրթունս իմ առ 'ի զներողութիւն ձեր աղերսել ձեր՝ 'ի շնորհս աննշանի ուրուք քարողչի, որ 'ի խնդրելոցն 'ի ձէնջ բարեաց հանճարոյ զրկեալ իցէ, յորժամ զձերոյ փրկութեանն ճառք 'ի մէջ անկանիցին: Այլ ասկայն այսօր այլազգ ինձ կիրք ազդին յիս: Այս տրտում եմ յանձնէ, բայց թէ ինչ առ ունայնութեան անարգ խուճապիւք խռնարհիցիմ. զայդ և զլխովին հանէք 'ի մտաց: Ո՛ն անդր 'ի բաց տար՝ թէ պաշտօնեայ ոք երկնաւոր ձերումդ ներողամտութեան կարօտանալ խորհիցի: Չի ամենեքեան դուք, ո՛ ոք և իցէք, մեղանչականք էք թերև զիս: Առաջի երեսաց Աստուծոյն իմոյ և ձեր՝ բանալ զկուրծս իմ 'ի պահուս յորդորեալ ստիպիմ:

Մինչև ցայսօր ընդ յարկաւ յարդածածկոյթ տաճարաց զարդարութիւնս բարձրելոյն պատմեալ, քարոզէի տառապելոց՝ որ կարօտէին հացի, զխիստ ճգունս աշխատութեան, և լաւաբարոյ բնակչաց դաշտացն զահագնալուր ճշմարտութիւնս հաւատոց իմոց ծանուցանէի: Վա՜յ թշուառացելումս, և զի՞նչ գործեցի զայդ: Զտնանկսն դառնացուցի, զսիրելի բարեկամս Աստուծոյ և զաննենգ և զմիամիտ մարդիկն փոխանակ սփոփանաց և կարեկից գթոյն՝ ահիւ և դառնութեամբ լցուցի: Ահա աստանօր յաւագանին, 'ի մեծատունս, 'ի հարստահարողս տառապելոց, կամ 'ի յանդուգն և յանապաշաւ

մեղաւորս եւեթ աչք իմ թարթափին։ Ա՛հ, սոսա միայն արժան էր զորբանուէր բարբառն ըստ համօրէն որոտագոչ ազդեցութեանն հնչեցուցանել, և յաջոյ բեմիս արձանացուցանել ընդ իս զմահ՝ սպառնալեօք վառեալ, և 'ի ձախմէ զմեծազօրն Աստուած՝ հասեալ 'ի դատաստան։ Երկերուք ապա դողութեամբ առաջի իմ, որ լսէքդ ինձ, արք ամբարտաւանք և անարգուք. զի ահա 'ի ձեռին ունիմ այսօր զվճիռ ձերոյ դատակնքոյդ։ Կարեւորութիւն փրկութեան, մահուն ստուգութիւն, և ահաւոր պահուն անստուգութիւն, անապաշաւ խստութիւն, դատաստանն յետին, ընտրելոց սակաւութիւն, դժոխք, և 'ի վեր քան զամենայն՝ յաւիտենականութիւն, ո՜հ յաւիտենականութիւն. այսոքիկ են ահա զորոց խօսել հանդերձեալ եմ, և զորս ձեզ միայն արժան էր պահել։ Ինձ չեն պէտք ձերումդ հաճութեան, որ զուցէ ինձ 'ի դատապարտութիւն և ձեզ 'ի կորուստ լինիցի։ Այլ մինչդեռ ես անարժան պաշտօնեայս Բարձրելոյն ընդ ձեզ խօսիցիմ, Նա ազդեսցէ 'ի սիրտս ձեր. զի չեմ իսկ անտեղեակ ողորմութեանց Նորա։ Ընդ յայնժամ առ ահի անցելոց ամբարշտութեանցդ զարհուրեալ, 'ի գիրկս իմ դիմեալ անկանիցիք՝ արտասուօք զղջութեան և ապաշաւանաց. և առ խայթ մտացդ խղճի խեղամուտ լինիցիք թէ ոչ անճահս ինչ իցեմ բարբառեալ։

# ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆՔ

---

## ԶՈՒԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԽՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ

Զուր է կարծել ճարտասանին՝ թէ լիցէ նմա հանճար համոզելոյ զմարդիկ, եթէ չիցէ նորա ուսեալ զարուեստ ճանաչելոյ զնոսա։ Ուսումն բարոյականին և ճարտարխօսութեան համածինք են. և զուգաւորութիւն նոցա այնպէս է վաղեմի, որպէս խորհելոյ ընդ խօսելոյ։ Ոչ բաժանէին երբեմն 'ի միմեանց գիտութիւնքս այսոքիկ երկոքին՝ անբաժանելիք 'ի բնէ. իմաստասիրին և ճարտարախօսի հասարակաց էր ստացուած իմաստութիւն. բարեբաստիկ տուրևառ էր նոցա, և կատարեալ համաձայնութիւն ընդ արուեստ բարւոք խորհելոյ և բարւոք խօսելոյ. և չև էր անկեալ 'ի միտս զանազանութիւնն այն թշնամանագիր ճարտասանից, վնասակարն այն ճարտարխօսութեան՝ երկպառակութիւն մտաց և բանին, բացատրութեան և զգացման, ճարտարախօսի և իմաստասիրի։ Եթէ գոյր ինչ 'ի միջի նոցա խտիր, բոլորովին էր այն 'ի նպաստ ճարտարխօսութեան. իմաստասիրութիւն շատանայր յաղթահարել, ճարտարխօսութիւն գուն գործէր 'ի համոզել. նա համարէր մտադիրս և բարեսէրս զունկնդիրս. սա դիտէր ազդել 'ի նոսա մտադրութիւն, հլութիւն և բարեսիրութիւն։

Մեծարոյ կարծիք բարւոք բարոյից, անաչառութիւն բանին, ճիշդ և խիստ տրամախոհութիւն՝ զարմանալի

Digitized by Google

կացուցանէին զիմաստասիրութիւն. հեզութիւն ոգւոյ
բնական կամ հանճարիմաց, գեղեցկութիւն բանի, և
ձիրք երևակայութեան՝ սիրելի առնէին զճարտարախօս։
Միումն միտք, միւսումն սիրտ՝ էին ձեռնտու. այլ սիրտ
ապստամբէր յաճախ 'ի ճշմարտութեանց, որոց հաւա-
նեալ էին միտք. իսկ միտք չհրաժարէր երբեք 'ի հպա-
տակելոյ զգացմանց սրտի։ Իմաստասէրն՝ օրինաւոր
Թագաւոր՝ եղանէր յաճախ անհարկու իբրև զբռնաւոր.
իսկ ճարտարախօսն վարէր բռնութիւն այնպիսի քաղցր
և ախորժ, որ Թուէր օրինաւոր տէրութիւն։

Ցառաջնումն դարու ճարտասանութեան՝ եղև երբեմն
տեսանել Ելլադայ զի վեհագոյնն 'ի ճարտարախօսաց
իւրոց զազդեցութիւն ճարտարաբանութեան հիմնեաց 'ի
վերայ ճանաչման մարդոյ և 'ի վերայ օրինաց բարոյա-
կանին։ Բնութիւն՝ վրէժխնդիր փառաց իւրոց, 'ի զուր
ժխտէ նմա զարտաքին ձիրս, զհամր զայն ճարտարխօ-
սութիւն, զիշխանութիւն զայն ակներև՝ որ հիացուցանէ
զոգիս ունկնդրաց, և յինքն ձգէ զհաւանութիւն նոցա,
չև ճարտարախօսին արժանի լեալ հաճութեան նոցա։
Վսեմութիւն բանից նորա ոչ տայցէ ունկնդրին յափշտա-
կելոյ 'ի հիացումն՝ պարապ և ազատութիւն՝ զպակասու-
Թիւնսն զայնոսիկ դիտելոյ. ծածկին այնուքիկ 'ի փայլ-
մանէ զօրութեան նորա. տեղի տայցէ ունկնդիրն առաջի
Թափոյ նորա, առանց զընԹացս նորա տեսանելոյ, և
որպէս արծւոյ ընդ օդս զհետ երԹիցէ, առանց գիտելոյ
որպէս վերացաւ յերկրէ։

Ճարտարախօսն՝ գնացից ժողովրդեան իւրոյ դատա-
ւոր անաչառ, մարդասիրագոյն քան զընԹողս նորին երե-
ւեսցի. իշխեսցէ առաջի առնել նմա զտխուր պատկեր
զդժնդակ և զտաժանաւոր առաքինութեան, և ածցէ
զնա 'ի մեծարել զդժուարին և յաճախ զչարաբաստիկ
պատշաճն, քան զախորժ պիտանին և քան զերկրանս
անարժան յաջողուածոյ։

Իշխանութիւն արքային Մակեդոնիոյ սարսեցէ ա-

ռաջի զօրութեան բանից աթենացւոյ ճարտարախօսին. Բանս Ելլադայ կացցէ 'ի կարգ ընդ Փիլիպպոս և ընդ Դեմոսթենի, և որպէս չկարէ նա երկարակեաց քան զազատութիւն հայրենեացն լինել, այսպէս և ոչ հայրենիք նորա կեալ առանց նորա։ Եւ ուստի՞ արդարօք այսպիսեաց գերահռչակաբանիցն ճարտասանութեան. ո՞ր այն ազգերակն հրաշից այնքանեաց, որոց պատմութիւն ևեթ յետ այսչափ դարուց ածէ տակաւին զմեզ 'ի զարմացումն։ Չեն և չեն այսորքիկ զէնք պատրաստեալք 'ի վարժոցի ճառամութեան. փայլատակունքս այսորքիկ և շանթք, յորոց զգօղանի հարկանին Թագաւորք 'ի գահոյս իւրեանց, կազմեալ են 'ի գերակայ ուրեք վայրի։ Ի ծոցոյ իմաստութեան առեալ էր նորա զայս քաղաքավարութիւն յանդուգն և արիական, զայս ազատութիւն անյողդողդ և աներկիւղ, զայս հայրենասիրութիւն անպարտելի. 'ի բարոյականին ուսման ընկալեալ էր նորա 'ի ձեռանէ բանականին զայս ամենազօր տէրութիւն, զայս գերագոյն իշխանութիւն 'ի վերայ ոգւոց ունկնդրաց։ Պղատոնի պէտք էին առ 'ի կազմել զԴեմոսթէն. որպէս զի վեհագոյնն ճարտասանից զհարկ իւրոյ համբաւոյն բովանդակ ընծայեսցէ վեհագունին իմաստասիրաց։

ՏԱԿԷՍՈՑ

---

## ԲԱՆՔ ԿԱՏԻԼԻՆԱՑ ԱՌ ԽԻՐՈՆ

Եթէ ոչ արութիւն ձեր և հաւատարմութիւն յայտնի էր ինձ, 'ի զուր դէպքս բարեպատեհ ընդ առաջ լինէին մեզ, և վայրապար արդեօք էր ակնկալութիւնս այս մեծ տիրապետելոյ, և ոչ ես առ ապշութեան կամ առ յանդըգնութեան զանստոյգն փոխանակ ստուգին խնդրէի։ Այլ զի 'ի բազում և 'ի մեծամեծ վտանգս ծանեայ զձեզ

քաջս և ինձ հաւատարիմս, 'ի շքեղ և 'ի մեծամեծ ա-րութիւնս ձեռնարկել խրախուսեմ, զի հասարակ ձեզ և ինձ շահ և զեան առաջի աչաց նկատեմ։ Քանզի համա-կամութիւն 'ի կամել զնոյն և 'ի չկամել՝ հաստատուն բարեկամութեան է նշանակ։

Զոր խորհեցայն՝ իւրաքանչիւր ումեք 'ի ձէնջ կանխաւ ծանուցի. բայց արդ որ ըստ օրէ և ևս վառի յիս եռանդ՝ յածել զմտաւ թէ որպիսի պայման կենաց առաջի կայ մեզ, եթէ մեք մեզէն չհանիցեմք զանձինս յազատու-թիւն։ Քանզի յորմէ հետէ հասարակաց պետութիւն 'ի ձեռս և 'ի կամս սակաւուց ոմանց հզօրաց անկաւ, թա-գաւորք և չորրորդապետք՝ հարկատուք նոցին կացին միշտ, և ազգք և ազինք ընծայաբերք նոցին. այլք առ հասարակ անզօրք և զօրաւորք, տոհմիկք և անտոհմք՝ ընդ ռամիկս 'ի համարի եմք առանց շնորհի, թափուր յիշխանութենէ, հպատակք նոցա, որոց՝ եթէ հասարա-կաց պետութիւնս յուժի կայր, ահաւորք լինէաք։ Այս-պէս ամենայն շնորհք, իշխանութիւն, պատիւ և ճոխու-թիւնք առ նոսա են, կամ առ որս նոքայն ախորժեն. և մեզ բաժին՝ մերժումն միայն, վտանգք, դատափետու-թիւն և աղքատութիւն։

Ցե՞րբ այսոցիկ ժուժայցեմք, ո՛ քաջք. չիցէ՞ լաւագոյն մեռանել արութեամբ քան զթշուառ և զամօթալից զայս կեանս, այպն և կատակ ամբարտաւանութեան այլոց լինել, և 'ի վախճանի անարգանօք կորնչել։

Երդուեալ 'ի դիս և 'ի մարդիկ, զի 'ի ձեռս մեր է յաղթութիւն։ Հասակ առոյգ և ոգի արիական մեզ է. իսկ 'ի նոսա ամօք և ճոխութեամբ ամենայն ինչ ծերա-ցեալ. շատ է ձեռն 'ի գործ առնել, և յաջողեսցի ամե-նայն։ Քանզի ո՞ ոք 'ի մահկանացուաց, որոյ իցեն արիա-կան միտք, և հանդուրժել մարթասցի ընդ առաւելու-թիւն մեծութեանց նոցա՝ զորս վատնեն առ 'ի լիր ար-կանել 'ի ծովս, և առ հարթելոյ զլերինս, ուր մեզ առ-տնինքն անգամ կարևորք պակասեն։

Digitized by Google

Նոքա տուն 'ի տուն յարեն, իսկ մեզ և ոչ յարկք աղքատին․ պատկերս գնեն, անդրիս և դրուագս․ քանդեն զշինուածս, և այլս փոխանակ կազմեն, և համառօտիւ ասացեալ՝ ամենայն հնարիւք վատնեն զդրամս և շռայլեն, սակայն և այնու տարապայման զեղխութեամբ սպառեն զգանձս․ իսկ մեզ կարօտութիւն 'ի տան, պարտք արտաքոյ, ձախողութիւնք, և դժնդակագունիցն կասկած։ Արդ զի՞նչ այլ մնայ մեզ, քան զթշուառ կենդանութիւն։ Նա առ ի՞նչ թմբրեալ չզարթնուցումք տակաւին։ Ահա, ահաւասիկ որում յաճախ ըղձակերտն լինէիք, ազատութիւն, ընդ նմին փարթամութիւն, փառք և վայելչութիւն առաջի կան մեզ. զայս ամենայն յաղթականաց ետ բաղդն 'ի վարձ։ Իրքնին իսկ դէպք, ժամանակն, վտանգք, կարօտութիւն, փարթամ կողոպուտ պատերազմին՝ քան զյորդոր ճառիս քաջալերեալ զձեզ խրախուսեն։

Թէպէտ իբրև զօրապետս ընդունիցիք զիս և թէ որպէս զինուորակից, ոչ հանճարով և ոչ արութեամբ վերջացայց յօժանդակելոյ ձեզ։ Զայսոսիկ, թէպէտ և հիւպատ, հաւատարակից ընդ ձեզ, որպէս յուսացեալս եմ՝ գործեցից. և դուք, եթէ չխաբիմ, 'ի հպատակել առաւել քան 'ի հրամայել լինիք կազմք։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Կատիլինա։

---

## ԲԱՆՔ ԿԱՏՈՆԻ ԸՆԴԴԷՄ ԽՈՐՀՐԴՈՑՆ ԿԵՍԱՐՈՒ

Ցոյժ այլազգ են ինձ կարծիք, ո՛ հարք համագրեալք, 'ի կշռել անդ զհանգամանս ժամանակիս և զվտանգ, և 'ի խորհել զկարծիս ոմանց։ Ընդունայն թուի ինձ երկայնել ճառս զպատուհասէ՝ որոց ընդդէմ հայրենեաց, ծնողաց, դից և ընտանեաց զէն առեալ է. յապահովել

զանձինս 'ի նոցանց խրատէ ժամանակս, քան նոսա է՛ր 'ի խորհուրդ թէ զի՞նչ արժան իցէ առնել նոցա պատուհաս։ Այլոց եղերանց՝ յետ 'ի գլուխ ելանելոյ նոցին՝ դնի պատուհաս. իսկ աստ՝ եթէ ոչ նախահաս զպատուհաս առնուցումք, ընդվայր ապա 'ի կատարել իրացն խնդրեսցի վրէժ. յետ միանգամ 'ի ձեռս անկանելոյ քաղաքի իրիք, չմնայ ինչ այնուհետև պարտելոցն։ Այլ՝ ով և ով երդուեալ յանմահ դիս, առ ձեզ բողոքեմ, որ զապարանս ձեր միշտ և զագարակս, զանդրիս և զնկարս նախամեծար եդիք քան զհասարակաց պետութիւնս, եթէ զըղձալիս ձեր զայդոսիկ, որ զինչ և իցեն, պահել ախորժէք, և զրգանաց ձերոց պարապել, սթափեցարուք աղէ փոքր մի, և խնամ կալէք հասարակապետութեանս։ Չեն աստ բանք զբաժից և զանիրաւութեանց առ դաշնակիցս, ազատութիւն մեր և կեանք կան 'ի վտանգի։ Բազումս բազում անգամ, ո՛ հարք համագրեալք, խօսեցայ յատենիս, բողոք կալեալ զգեղխս զնոցա և զագահութենէ քաղաքացւոցս, և զբազումս այսր աղագաւ հակառակորդս ինձ յարուցի. զի որ ինձ և մտաց իմոց չշնորհեցի երբեք անկղխտանալ 'ի չարիս, չկարէի այլոցն անառակ չարագործութեանց ներել։ Թէպէտ բանք իմ արհամարհ ձեզ թուէին, սակայն հաստատուն էր հասարակապետութիւնն, և հզօր զօրութեամբն կարէր զծուլութիւնդ ձեր անտես առնել։ Այլ արդ ոչ ևս են բանք զբարելաւ կամ զյոռի կենաց, և ոչ թէ ո՞րչափ և քանի հզօր իցէ տէրութիւն ժողովրդեան Հռովմայ. այլ թէ այսոքիկ որպիսի ինչ և իցեն՝ մնասցե՞ն մեզ, եթէ մեօք հանդերձ անկցին 'ի ձեռս թշնամեաց։

Զգթութենէ աստանօր և զհեզութենէ՞ իցեն բանք. առաջքէն 'ի բազմաց հետէ կորուսաք զստոյգ անուանս իրաց. քանզի շռայլել օտարին ընչիւք՝ առատաձեռնութիւն կոչի, և ժպրհութիւն 'ի չարիս՝ արութիւն քաջութեան. այսպէս ահա 'ի խորս չարեաց հասեալ կամք։ Թող առատաձեռնեսցեն՝ քանզի այս է սովորոյթ ժա-

մանկանս՝ յընչից գաշնակցաց. լիցին ողորմածք 'ի գան-
ձանս հասարակաց, այլ մի՛ զարիւն մեր շռայլեսցեն, և մի՛ առ 'ի խնայել անօրինաց ոմանց՝ զլաւ որեարն համօրէն 'ի կորուստ մատնեսցեն: Ճարտար և գեղեցիկս կ. Կեսար փոքր մի յառաջ խօսեցաւ յատենիս զկենաց և զմահուանէ. թուի թէ յառաջակելս համարիցի նա՝ որ ինչ պատմին զդժոխոց, և չհաւատայցէ զորոշումն չարագործաց 'ի բարեաց, և զկայս նոցա խաւարինս, տըխուրս, ահաւորս և դժոխըմբերս: Վասն այսորիկ իսկ և առաջարկէր՝ զինչս նոցա 'ի գանձս հասարակաց առնուլ, և զնոսա 'ի քաղաքս ամուրս 'ի պահեստի ունել. թէ գուցէ 'ի կալ մնալ նոցա 'ի Հռոմ՝ կամ յամբոխէ դաւաճրաց կամ 'ի վարձկան խուժանէն յափշտակեսցին բռնութեամբ:

Արդէն եթէ ժանտագործ և եղեռնաւոր մարդիկ 'ի քաղաքիս միայն իցեն և ոչ ընդ բովանդակ Իտալիա. կամ թէ ոչ առաւել եւս զօրասցի անդ ժպրհութիւն, ուր ակար իցէ ընդդիմարգել զօրութիւն: Ընդունայն է ապա խորհուրդ նորա եթէ երկնչիցի 'ի վտանգաց նոցին. իսկ եթէ 'ի հասարակաց երկիւղին ինքն միայն չերկնչի, այնչափ եւս առաւել ինձ և ձեզ երկեղուկս արկանէ: Եւ արդ որ ինչ զԼենտուլեայ և զընկերաց նորին սահմանեսցիք, անշուշտ լերուք զի և զողջոյն իսկ զօրացն Կատիլինեայ և զդաւաճրաց հատէք վճիռ:

Որչափ դուք արիագոյնս գործիցէք, այնչափ եւս առաւել նոքա սրտաբեկեալ վհատեսցին. իսկ եթէ փոքր մի մեղկացեալ զձեզ տեսանիցեն, անդէն վայրագագոյնս զրոհ տայցեն: Մի՛ համարիցիք թէ նախնիք մեր զինուք ընդարձակեցին զպետութիւնս. եթէ այդպէս էր, պայծառագոյնս զնոյն առ մեօք պարտ էր տեսանել. զի քան առ նոքօք՝ յաճախագոյն է մեզ և նիզակակցաց և քաղաքացւոց և զինուց և երիվարաց բազմութիւն: Ա՛յլ ինչ էր ապա որ զնոսա հայակապս արար և երևելիս, որոց և հետք անգամ չերևին արդ. առտնին աշխատա-

սիրութիւն, արտաքոյ՝ արդարակարով վարչութիւն, և 'ի խորհուրդս՝ միտք ազատ և անզբաղ 'ի հեշտութենէ և յախտից։ Սոցին փոխան տիրէ այժմ 'ի մեզ շռայլութիւն և ագահութիւն, կարօտութիւն հասարակաց և ճոխութիւն իւրաքանչիւրոց։ Գովեմք զփարթամութիւն և 'ի դատարկութիւն հանեալ կամք. չիք խտիր ընդ յոռին և ընդ լաւ. զամենայն վարձս առաքինութեանց կապտէ գահասիրութիւն։ Ու չեն ինչ զարմանք, զի ուր իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զանձին եւեթ խորհիցի, և առնին՝ հեշտութեան, և աստ՝ արծաթոյ և շնորհաց սպաստարցի, հասարակապետութեան լքելոյ 'ի վերայ յարձակեսցին Թշնամիք. այլ Թողում զայս ամենայն։

Երդուեալ ազնուականք 'ի քաղաքացւոց՝ հրայրեաց կորուսանել զհայրենիս, զազգն գաղղիացւոց զոխերիմ անուան Հռովմայ 'ի մարտ հրաւիրեն. զօրագլուխ Թըշնամեաց՝ բանակաւ առ դուրս հասեալ կայ, և դուք զանգաղիք տակաւին և երկմտէք Թէ զինչ ընդ առնուլ պաբըսպացն գործիցէք։

Ողորմեցարուք, քաջ է, ողորմեցարուք 'ի մանկտին, առ սէր փառաց զառածեալ, արձակեցէք զնոսա զէն 'ի ձեռին. այլ զուցէ հեզութիւնդ ձեր այդ և գԹութիւն՝ 'ի զինել նոցին դարձցի ձեզ 'ի Թշուառութիւն։ Ահագին 'ի վերայ հասեալ ձեր վտանգ, և դուք չերկնչիք այտի։ Սխալեցի, և կարի իսկ երկնչիք. բայց առ՚ պղերգութեան և Թուլութեան՝ միմեանց մնալով դանդաղիք։ Թերևս յանմահ դիս յուսացեալ իցէք, որ բազում անգամ պահեցին զհասարակապետութիւնս զայս 'ի ծանր վտանգաց. բայց ոչ ուխտիւք և ոչ աղերսանօք խոնարհին դիք յօգնականութիւն. այլ հսկելով. ժրութեամբ և իմաստուն խորհրդով յաջողի ամենայն. Իսկ եԹէ 'ի վատութիւն հանեալ հեղգայցես, վայրապար կարդաս զաստուածս ցասուցեալս ընդ քեզ և Թշնամիս։

Առ նախնեօք մերովք՝ Տ. Մանլիոս Տորկուատոս 'ի գաղղիական պատերազմի հրամայեաց 'ի մահ տալ զոր-

Digitized by Google

զէն, զի ընդդէմ իշխանութեան հօրն ընդ թշնամւոյն կռուեցաւ. և պատանեակն վեհազգն դատապարտայման քաջութեանն ելոյծ մահուամբ զպատուհաս. Եւ դուք վեհերեալ դանդաղիք զեռ ևս թէ զինչ վճիռ տայցէք անգութ հայրենադաւ մարդկան. իբր այն եթէ անցեալ կեանք նոցա պայծառ եղեռնեան քաւիցեն: Խնայեցէք ՚ի պատիւ իշխանութեան Լենտուլեայ, եթէ երբէք խնայեաց նա յանձն պատկառանաց, ՚ի համբաւ իւր, ՚ի դիս և ՚ի մարդիկ. ներեցէք Կեթեգեայ մանկութեանն, եթէ այս առաջին նուագ իցէ զէն առեալ նորա ընդդէմ հայրենեաց: Եւ զինչ զԳաբինեայ, զՍտատիլիոսէ և զԿեպարեայ ասացից. եթէ առողջ միտք էին նոցա, ոչ արդեօք յայնպիսի խորհուրդս ընդդէմ հասարակապետութեան մտաբերէին: Կնիք բանիս, ո հարք համագրեալք, եթէ գոյր եղի աղուսդա ՚ի վրիպանաց զգանել, երդնում ՚ի դիս՝ զի համբերէի արդեօք դիւրեաւ, որպէս զի խրատեալ ՚ի վտանգէն՝ ուսանէիք չարհամարհել զբանքս: Այլ արդ յամենուստ պաշարեալ կամք. Կատիլինա ունի զօրօք զանցս. այլք ՚ի պարսպի և ՚ի քաղաքամիջի են թշնամիք. չիք հնար խորհել ինչ կամ գործել ՚ի ծածուկ. փութալոյ պէտք են:

Եւ քանզի եղեռնաւոր խորհրդով անօրէն քաղաքացւոց անկաւ պետութիւնս ՚ի վտանգ մեծ, և վկայութեամբ Վուլտուրտեայ և Ալլոբրոգաց յաղթահարեալք խոստովան եղեն նոքա զկոտորածս, զհրդեհս և զայլ գժնդակ և անգութ եղեռունս ընդդէմ քաղաքացւոց և ընդդէմ հայրենեաց պատրաստեալս, ինձ թուի զի խոստովանեցելոցն՝ որպէս յայտնեաց՝ ըստ նախնեացն մերոց օրինաց պարտ է պատուհաս մահու կապել ՚ի վերայ:

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Կատիլինեա:

## ԱՂԷՏՔ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ

Աւա՜ղ, այսոքիկ ուրեմն են աղէտք՝ զորս զհետ իւրեանց առնել ձգեն պատերազմունք: Որպիսի՜ կոյր մոլեգնութիւն վարէ զհէք ազգ մահկանացուաց. աւուրք սակաւք տուեալ նոցա յերկրի, և այնոքիկ լի աղէտիւք. առ ի՞նչ իցէ ճեպել նոցա և ևս զմօտալուտն մահ. առ ի՞մէ՞ յաւելուլ վիշտս դժոխմբերս 'ի դառնութիւն անդր, որով լցին դիք զկարճատև զայս կենցաղ: Եղբարք միմեանց գոլով, զմիմեանս գիշատեն՝ անագորոյնք քան զգազանս վայրենիս:

Ոչ ագռաւ առիւծ ընդ առիւծ, և ոչ վագր ընդ վագեր մաքառի. չհամազգեաց ևեթ դարանին նոքա: Մարդ ևեթ բանաւոր գժնէագոյն քան զանբանս՝ և առ համազգիսն անգգամ: Եւ զի՞նչ շահ 'ի պատերազմացդ. միթէ չկայցէ՞ երկիր առնուլ քան զկար մշակութեան մարդկան: Եւ զի՞նչ այլս, բայց ընափառութիւն և իղձ համբաւի աշխարհակալութեան յուզէ պատերազմունս 'ի գաւառս բազումս. և մի ոք 'ի ցասմանէ դիցն առաքեալ յաշխարհ՝ ընափառութեան իւրում զոհէ գազանաբար զբազումս. հարկ է ամենայնի մատնել 'ի կորուստ, ամենայնի թաթառել յարիւն, ամենայնի ճարակ գոլ հրոյ, և ապրելոցն 'ի հրոյ և 'ի սրոյ՝ սովալլուկ կորնչել, որպէս զի այր մի՝ բոլոր մարդկութեանս առնհար՝ բերկրեսցի և ընափառեսցի ընդ աւեր համաշխարհական: Աւա՜ղ այլանդակ փառացն. և իցէ՞ իսկ մարթ ըստ արժան բաւականին գարշել յայնպիսեաց և եպերել զայնպիսիսն օտարախորթս 'ի մարդկութենէ: Զեն իսկ և չեն այնպիսիքն դիւցազունք, և ոչ իսկ մարդիկ, այլ նզովեալք դարուց 'ի դարս՝ որոց զարմանալիս կարծէին գոլ: Ո՜հ, քանի՜ զգուշութեան պէտք են թագաւորի 'ի պատերազմէ. չէ իսկ բաւական թէ իցէ այն արդար, այլ պարտ է զի և կարևոր իցէ յօգուտ հասարակաց. ոչ է օրէն

Digitized by Google

հեղուլ զարիւն ժողովրդեան, բայց միայն առ 'ի փրկել զնոյն ինքն յանհնարին կարիս իւր։ Բայց բազում այն է՝ զի հրապոյրք մարդահաճոյից, ձախողակի պարծանք, ընդունայն վրէժխնդրութիւն, զօշաքաղութիւն ընդ գե-ղեցիկ կերպարանօք պատրուակեալ, և գաղտնի համա-խոհութիւնք, առեալ ձգեն զԹագաւորս 'ի պատերազմ որ ածէ 'ի վերայ նոցա Թշուառութիւն, և ամենայնի վնասուց տարապարտս, և նոյնչափ աղէտս ժողովրդոց նոցա՝ որչափ Թշնամեաց։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։

---

## ՃԱՌ ՄԻ ՍԻՐԱԿՈՒՍԱՑԻ ԶԱԶԱՏՈՒԹԵՆԷ ԳԵՐԵԱՑ

Անդ ծեր ոմն (Նիկողայոս) պատկառելի տիովքն և հանդարտութեամբ, որոյ որդիք երկու 'ի պատերազմի անդ անկեալ՝ միայն ժառանգք ազգին և մեծութեանցն, հրաման ետ ծառայից իւրոց յառաջ զինքն մատուցանել 'ի բեմբ ատենախօսութեանն։ Եւ իբրև եկ, դադարեցին ամենայն ամբոխն 'ի խոր լռութիւն. և ասէ. Զիք ոք հայր եղուկ քան զիս, որ քան զբնաւ սիրակուսացիսդ զաղէտս պատերազմիս կրեալ, որդիս կրկին կորուսի, զսփոփումն և զցուպ ծերութեան իմոյ։ Զարմանամ իսկ ընդ արիութիւն նոցա և ընդ բաղդ. զի 'ի վերայ հայրե-նեաց զկեանս փոխանակեցին՝ զոր վաղ կամ անագան անհրաժարելի օրինաց բնութեանն տուժել հարկ էր. այլ ոչ կարեմ անընդոստ կալ 'ի կարեվէր խոցոյս՝ որ մահուամբ նոցա հարաւ յիս, և չգարշել և չխորշել յա-թենացւոց՝ որ պատճառք եղեն մարտին մարդախողխողք, և զիս անզաւակեցին։ Այլ քան զայս վիշտս իմ՝ առա-ւել դառն են ինձ նախատինք հայրենեաց. ո՞րպէս լռել կարեմ. և անմահ նախատինս հրապոյրքդ անզգութեան

ածեն զնովաւ ։ Արժանի իսկ են ամենայն պատուհասից և չարեաց աթենացիք՝ որք զտարապարտս պատերազմս յարուցին . այլ ոչ վրէժխնդիր մեղաց. արդարադատ դիք պատուհասեցին զնոսա, և լի զվրէժ մեր լուծին ։ Եւ արդ վասն զի զընդդիմակեացս նուաճին 'ի մեզ զօրավարք նոցա՝ յուսալ շնորհի կենացն, որպէս առանց կշտամբութեան զկեանս նոցա բառնայցեմք, կոխելով զիրաւունս ազգաց, և նախատիցեմք զյաղթութիւն մարտին՝ խուժադուժ անգթութեամբ ։ Համբերիցէք տեսանել զփառս ձեր անարգեալ ընդ ամենայն երկիր . զի ասիցեն . Ազգ՝ որ նախ քան զամենայն ազգս 'ի քաղաքի իւրում կանգնեաց տաճար Ողորմութեան, ինքն և ոչ եգիտ 'ի քաղաքի ձերում ողորմութիւն ։ Միթէ յաղթութիւնք և ախոյեանք միայն յաւէրժ պանծացուցանեն զքաղաքս, և ոչ գթութիւն 'ի նուաճեալս, զգաստութիւն 'ի ծագ բախտին, և երկիւղ՝ զի մի պերճ և հպարտ ճոխութիւն՝ 'ի ցասումն ածցեն զդիս ։ Յիշէք ապաքէն՝ զի սա ինքն Նիկիաս, զորոյ զբաղդ սահմանէք, զդատ ձեր յատենի աթենացւոցն ետ, ամենայն զօրութեամբ իւրով և ճարտարութեամբ բանից շրջել ջանացեալ զնասա 'ի խորհրդոց պատերազմիդ ։ Եւ է՞ դատակնիք մահուդ հատուցումն արդար քաջի զօրավարին նախանձուն՝ զոր վասն ձեր նախանձեցաւ ։ Այլ ինձ լաւ է մահու չարաւ մեռանել, քան զանիրաւութիւնդ զայդ տեսանել յաշխարհին իմում 'ի քաղաքայնոց իմոց ներգործեալ .

ՌՈԼԼԷՆ . Հնախօսութիւն ։

Digitized by Google

## ԹԷ ԸՆՏՐԵԼԻ Է ԹԱԳԱՒՈՐ ԽԱՂԱՂԱՍԷՐ ՔԱՆ ՔԱՋՈՂԱԿԱՆ ՄԻԱՅՆ Ի ՄԱՐՏԻ

Թագաւոր՝ որ 'ի խաղաղութեան եւեթ կամ 'ի պատերազմի գիտիցէ վարել զժողովուրդ իւր, և չիցէ կարող յերկոսին եւս, կիսամասնեայ է նա թագաւոր։ Սակայն զաջողակն եւեթ 'ի մարտի զԹագաւոր 'ի կչիռ եդեալ ընդ իմաստուն Թագաւորի, որ թէպէտ անհմուտ 'ի մարտ, այլ 'ի կարևոր ժամանակի գիտիցէ մղել զայն 'ի ձեռն զօրավարաց իւրոց, նախամեծար զսա քան զնա համարիմ։ Թագաւոր պատերազմասէր՝ զակատեալ միշտ 'ի պատերազմունս, առ 'ի տարածանել զպետութիւն իւր և զփառս, խուժան աւերանաց ածէ զաշխարհաւն։ Զինչ օգուտ իցէ ժողովրդեան՝ նուաճել Թագաւորի զազգս և զազինս, եթէ չիցէ ինքն բարեբաստիկ ընդ նովաւ։ Այն զի երկայն պատերազմաց զհետ գան և չարիք, նոյին իսկ յաղթականացն 'ի շփոթ անդ զառանցեալ։ Յուշ լիցի՝ քանի ծանրագնի եղև Ելլադայ յաղթանակել 'ի վերայ Տրովադայ. զի զամս տասն մնաց նա անտէրունչ անԹագաւոր։ Ամենայն ինչ վեր 'ի վայր դղրդի պատերազմաւ, անկանին և օրէնք և մշակութիւն և արուեստք. և լաւագոյնք իսկ 'ի Թագաւորաց զայնու աղմկաւ տարեալն 'ի մեծագոյնն 'ի չարեաց, ներել ապերասան համարձակութեան և զչարս վարել 'ի գործ։ Քանիք 'ի չարագործաց՝ 'ի ժամանակի խաղաղութեան պարտաւորք պատժոց՝ 'ի վրդովմունս պատերազմաց վասն յանդգնութեանն վարձատրին։ Աշխարհակալ արբեցեալ 'ի փառաց՝ ոչինչ ընդհատ քան զպարտեալսն՝ կործանէ զազգ իւր յաղթական։ Թագաւոր անբաժ 'ի բարեմասնութեանց, որ 'ի ժամանակի խաղաղութեան են կարևոր, չկարէ տալ ժողովրդեան իւրում 'ի վայելումն զարգասիս յաղթութեան մարտի. որպէս ոք զի դաշտապանիցէ զանդաստանս իւր 'ի յափշտակութենէ

դրացւոյն, և զնորայն իսկ գրաւիցէ, այլ չգիտիցէ վարել զայն և սերմանել առ 'ի ծաղկել դշտնկաւ։ Յաւէր յապականութիւն և 'ի կործանումն թուի այնպիսին ծնեալ, և ոչ 'ի յարդարել զբարեկենդանութիւն ժողովրդեան իմաստուն տեսչութեամբ։

Մատիցուք արդ առ Թագաւոր խաղաղասէր։ Ապաքէն չէ նա բաւական յաղթահարականութեանս մեծամեծս, և կամ զի տպաւորագոյնս տացից՝ շաղմկէ նա զբարեկենդանութիւն ժողովրդեան իւրոյ առ 'ի նուաճել զազգս յանիրաւի։ Այլ եթէ արդարև կարող իցէ նա բարւոք առաջնորդել 'ի խաղաղութեան, ոչ ինչ կարօտի 'ի պահպանել զժողովուրդ իւր յերեսաց թշնամեաց։ Եւ թէ որպէս՝ լուարո՛ւք։ Քանզի արդար է նա, հեզ և բարեհամբոյր ընդ սահմանակիցս իւր, չտայ երբեք նոցա պատճառս խռովելոյ զխաղաղութիւն. հաւատարիմ է 'ի դաշինս, և սիրեն զնա նիզակակիցք իւր՝ վստահացեալ 'ի նա անկասկած։ Եթէ իցէ ոք 'ի սահմանակիցս նորա անխաղաղասէր, գոռոզ և ամբարտաւան, այլք 'ի նոցանէ առ հասարակ կասկածեալ 'ի խռովասէր դրացւոյն, և չունելով ինչ խէթ 'ի խաղաղասէր Թագաւորէն, միաբանին ընդ բարւոյն՝ զի մի՛ հարստահարեսցին 'ի չարէն։ Ուղղութիւն, հաւատարմութիւն և հեզութիւն՝ կացուցանեն զնա իրաւարար որոց շուրջ զիւրև բնակեն պետութիւնք։ Եւ ուր Թագաւոր յանդուգն ատելի է այլոց ամենեցուն Թագաւորաց, և նշաւակ զինուց նիզակակցութեան նոցա, նա փառաւորի որպէս հայր և պաշտպան յամենեցունց 'ի նոցանէ։

Այսոքիկ են բարեմասնութիւնք նորա առ արտաքինս. իսկ 'ի ներքս կարևորագոյնք ևս։ Զի եթէ բարւոք առաջնորդէ նա 'ի խաղաղութեան, յայտ է զի իմաստնագոյն օրինօք վարի. խափանէ զշեղխութիւն, զմեղկութիւն և զամենայն արուեստս տածիչս ախտից, ծաղկեցուցեալ զպիտանիսն առ կարևոր պէտս կենաց, և մանաւանդ սովորեցուցեալ զժողովուրդ իւր յերկրագոր-

Digitized by Google

ծութիւն, որով զեղուն առատապէս պիտոյք. և ժողո-
վուրդն աւելով աշխատաւորք՝ անդադրեալ 'ի կեանս և
ամպարտակաց, զինչպէս զօրութեամբն հայթայթելով 'ի
մշակութենէ անդաստանացն, անէ և բազմանայ։ Անդ
է տեսանել ժողովուրդ ամբոխ, որք քաջառողջ հուժկու
և հզօրք, ոչ կնատեալ 'ի հեշտութենէ, կիրթ յառա-
քինութիւն, ոչ 'ի հրապարակս վաճառ և փափկասուն կենաց
զուարճանալ, արհամարհող մահու, որ զմեռանելն լաւ
համարին քան զկորուստ ազատութեան՝ յոր վայելէ ընդ
տերութեամբ իմաստուն թագաւորի, որ ընդ բանիւ և
ոչ թէ ընդ իւրև հնազանդեցուցանէ զժողովուրդ իւր։
Եթէ հէն սահմանակից 'ի վերայ յարձակեսցի, թերևս
ազգն այն ոչ գտցէ քաջամարտ՝ ոչ բանակ հարկանել, ոչ
ճակատ յարդարել, և ոչ 'ի պաշարումն քաղաքաց զկազ-
մած մեքենայից ուղղել. այլ բազմութեամբն և արիու-
թեամբ և ժուժկալութեամբն 'ի վտանգս, և առողջու-
թեամբն յաղթութիւն և կորովութեամբն 'ի մրցումն
և անձնկուն յարկածից առաքինութեամբն գտցի անպար-
տելի։ Իսկ եթէ չզինեսցէ թագաւոր իւրքինն զօրավարել,
զօրավարս կացուցէ հմուտս, վարել նոքօք՝ անկորուստ
զերրն պահելով զիշխանութիւն, և նպաստս 'ի կոյս զնէ
զդակակիցս իւր առեալ զօգնս. և որք ընդ ձեռամբ նորա
իցեն, լաւ համարեսցին զմահ քան մնալ ընդ լծով
բռնաւոր և անիրաւ թագաւորի. և դիւր իսկ փոխանակ նո-
րա մատուցեն։ Տե՛ս ինձ քանի՞ պատերազմունք 'ի վաղնջա
իսկ մեծամեծս պատահեալ կան նմա։ Այս արժանի թա-
գաւոր խաղաղասէր՝ որ անհնարին իցէ մարտի, թէպէտ
և թերի գտանի՝ չկարելով լինել զմի 'ի կարևորագոյն
պաշտամանց իւրոց և յաղթել թշնամեաց, սակայն գեր
'ի վերոյ է քան զթագաւոր աշխարհակալ՝ որ վերջացեալ
'ի բարեմասնութեանց կարևորաց 'ի խաղաղութեան,
քաջ եւեթ իցէ 'ի պատերազմի։

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք։



Digitized by Google

## ԹԱԳԱՒՈՐԻ ՉԷ ԲԱՒԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ

Ոչ, Տէր արքայ. Թագաւոր՝ որ զինուորական առաքինութեամբք եւեթ իցէ զարդարեալ, 'ի խեթի կայ՝ չլինել մեծ առ յապայսն: Վասն իւր միայն է ջանացեալ, և ոչ ինչ արարեալ ժողովրդոցն. և ժողովրդոցն է միշտ՝ յապահովել զփառս և զմեծութիւն Թագաւորին: Համարեսցի Թերևս աշխարհակալ ոք մեծ, այլ ոչ երբեք Թագաւոր մեծ. յաղթեսցէ պատերազմաց, այլ զհպատակացն սիրտ նուաճեսցէ ոչ. տիրեսցէ 'ի տարաշխարհս, այլ սպառեսցէ զիւրսն. հակիրճ ասացեալ, զօրավարեսցէ բանակաց քաջութեամբ, այլ չարաչար անտեսացէ զհնազանդեալսն:

Իսկ Թագաւոր, Տէր արքայ, որ միայն յերջանկութեան հպատակացն խնդրիցէ իւր փառս, առաւել ընտրեսցէ զխաղաղութիւն և զհանդարտութիւն՝ որում միայն է երանելիս առնել զնոսա, քան զմարտից յաղթութիւնս՝ որ իւր միայնոյ իցեն, և զնոստի պարծանան փաղաքշիցեն. Թագաւոր՝ որ ոչ այլ ինչ համարիցի զանձըն՝ բայց պաշտօնեայ ժողովրդոցն, և զանձն պատուական՝ զսիրտս հպատակացն. Թագաւոր՝ որ օրինացն և օրինակացն զգօնութեամբ՝ հալածիցէ յաշխարհէն զանկարգութիւնս, զչարին սովորութիւնս յուղղութիւն ածիցէ, 'ի հաստոչ պահիցէ զվայելչութիւն վարուց հասարակաց, զամենայն ոք 'ի կարգին ունիցի, զզեխութիւն և զստահակութիւն սանձիցէ՝ որ քան զմարտս պատերազմաց և քան զդժնդակ հարուածս առաւել որհասաբեր են տէրութեանց, պաշտաման և կրօնից հարցն համարձակութիւն տայցէ, պայծառութիւն և մեծվայելչութիւն, և միահարթ հաւասարութիւն՝ որ զմեծարանս նոցին անկորուստ պահէ 'ի ժողովրդեան, պինդ կալցի զսուրբ աւանդ հաւատոցն՝ ընդդէմ ամենայն յանդգնու-

Digitized by Google

թեան խռու և՝ ստամբակ ոգւոց, որ զհպատակական իւրև արգիլս անտանիցէ, զարքայութիւնն՝ իւրև զաղջատանձն խեր, և զիշխանութիւնն վարիցէ համակ յերջանկութեան որոց հաւատացին նմա զայն, - Թագաւոր այսպիսի՝ յամենայն ժամ եղիցի մեծ. զի և է իսկ 'ի սիրտս ժողովրդոցն: Պատմեսցեն հայրք որդւոց զերանութիւն կենաց իւրեանց առ բարեգործ տերամբն. տղայք զրուցեսցեն զԹոռունս իւրեանց, և յիշատակն տացէ յազգ պահել 'ի տունս, եղիցի արձան ընդակից՝ կանգնեալ 'ի ցանկի որմոցն հայրենականաց, յաւերժացուցանել յամենայն յաւիտեանս զանուն բարեհամբաւ Թագաւորին:

Ոչ, Տէր արքայ, ոչ եթէ անդրիք և արձանագիրք իցեն՝ որ անմահացուցանիցեն զԹագաւորս. թէ փող թէ անագան՝ այն ամենայն խաղալիկ լինին ժամանակին և յեղափոխութեան տօրէիցս: Հռոմ և Յունաստան 'ի նանիր յանձնեցին երբեմն յանրաւս զպատկերս Թագաւորացն իւրեանց և կայսերաց, և զամենայն հանճար արուեստին Թափեցին՝ պատուական ընծայեցուցանել զնոսա հանդերձելոց յաւիտեանցն. 'ի խորոխս արձանաց անտի բաշխեցաւ հազիւ մի եւեթ հասեալ կայ ցմեզ: Որ ինչ 'ի կուճ և 'ի պղինձ դրոշմի՝ փութով եղծանի. իսկ որ 'ի սիրտս՝ յաւիտեան կայ:

ՄԱՍԻԼԸՈՆ. փոկքրիկ քառասնորդք:

---

## ԴԻՄՈՍԹԷՆ ՑԱՂԱԳՍ ՊՍԱԿԻՆ

Սակայն զմեծամեծսն 'ի վարչութեանցս և 'ի գործոց 'ի բաց Թողում. զի նախ՝ այնպէս համարիմ, թէ ըստ կարգի՝ զանխրաւին համարս պարտիմ տալ. և երկրորդ՝ թէ և ինչ ոչ տացից զայլոց քաղաքավարութեանցս, համայն իւրաքանչիւր ուրուք 'ի ձէնջ վկայ են ինձ միտք:

Բայց զբանսն զորս դա վեր 'ի վայր հարեալ շաղաղանեաց յաղագս առընթերադիր օրինաց, աստուածայինն երդուեալ, ոչ զձեզ ինչ նոցին խնդրամտս եղեալ համարիմ. բաղձանաց 'ի նոցանէ և ոչ ես ինքն ինչ մարթացի կալ 'ի վերայ։ Այս պարզաբար ընդ ուղիղ ճանապարհ զերրուանց խառնեցայց։

Այնչափ օտար է յինէն անպարտական զանձն առնել համարոյ, որպէս դա այժմիկ բաղում անգամ չարախօսէր և խնդէր, որպէս զի և խոստովանս ես յինէն զամենայն առտրս կենաց իմոց պարտապան լինել համարոյ դաղնեմ ամենայնէ, որոց զամ ինչ մատակարար կամ տնօրէն եղեալցայ 'ի մէջի ձերում։ Իսկ զորոց յիմոց ընչիցս ինձէն 'ի կամակարուց եսոռ ժողովրդեան, և ոչ մի օր պարտ զատիմ զանձն համարս տալոյ, լսե՞ս, Եսքինէս, և ոչ զայլ ոք ամենեւին, թէ և յինուենց անոր ոք իշխանացն լինիցի։ Զի ո՞ր այն օրէնք իցեն՝ այդչափ անիրաւութեամբ և ամարդութեամբ լի, մինչ զի և որ յիւրոցն ինչ տայցէ, և գործ մարդասիրութեան և առատութեան գործիցէ, զրկել զնա 'ի շնորհակալութենէ, և մատնել 'ի ձեռս զրպարտչաց, և զնոսա՝ համարատուանելոյ դատոցն կացուցանել 'ի վերայ գլխոյ նորա. փարդաստ, և ոչ մի ամենեւին։ Իսկ թէ դա ասէ, թող ցուցանէ, և ես հանգեայց և լուռ եղէց։ Այլ չիք ուրեք, ո՛վ արք աթենացիք։ Բայց դորա զրպարտել առեալ, քանզի 'ի տալն զինչս 'ի վերայ տեսլարանացն կայի յայնժամ, ատեանն, ասէ, գովեաց զնա մինչդեռ տակաւին պարտականն էր հաշիւ տալոյ։ Ոչ և վասն միոյ իրիք յորոց հաշուի պարտականն էի, ո՛վ զրպարտիչ, այլ վասն որոց ետուս։ — Բայց և պատուապաշէն էիր, ասէ։ — Եւ յայդ իսկ սակս իրաւամբք գովեցայ, զի զծախսն մատուցի, և ոչ ինչ հաշուեցայ։ Զի հաշիւք՝ հաւաստեաց և քննողաց կարօտին, իսկ տուրք՝ գոհութեան և գովեստի է արժանի։ Վասն այսորիկ և սա (Կտեսիփոն) զինէն ղայդոսիկ։

ԴԻՄՈՍԹԷՆ

## ԴԱՏԱՍՏԱՆ ՅԱՂԱԳՍ ՊՍԱԿԻ

Փիլիպպոս՝ որ զԵւբիա յիւր վարկեալ՝ պատուաստ պատրաստեաց ընդդէմ Ատտիկէացւոց, որ ձեռն արձակեաց 'ի Մեգարա, որ զՈրէոսն առ, որ զՊորթմոս քակեաց, որ կացոյց յՈրէոս զՓիլիստիդէս բռնաւոր և յԵրետրիա զԿլիտարքոս, որ զՀելլեսպոնտոս նուաճեաց, որ պաշարեաց զԲիւզանդիոն ; և զՀելլենականն քաղաքանին՝ էր որ աւերակաւ ջինջ առնէր, էր յոր վտարանդիս տարեալ զանդուլթ բնակեցոյց. որ զայս ամենայն առնէր և կատարեաց՝ բուռն ինչ եղև արդեօք, և զրկեաց զլացուս և զրժեաց զդաշանսն և խղծ զհաշտութիւնն, թէ ոչ. և արժան էր արդեօք երևել ումեք 'ի Հելլենացւոց՝ կանգնել կալ նմա կրճիմ 'ի գնացից նորա, թէ ոչ. Եթէ այնմ չէր արժան, այլ Ելլադայ երևել կալ Միւսացւոցն անաւանեալ առ և առար, մինչ դեռ տակաւին ողջ են և 'ի միջի աթենացիք, ապա ընդ վայր վաստակ եղէ ես խօսել զայսպիսիս, ընդունայն ճգնեցաւ և քաղաքս՝ ինձ անսացեալ. և այն ամենայն որ գործեցան՝ լիցին մեղանք։ Իսկ եթէ պարտ էր յառնել ումեք ընդդէմ այդպիսի ախոյեան ընդդիմակաց, ում այլ արժան էր լինել՝ բայց միայն ժողովրդեանն աթենացւոց։

Այդր զայդ տնօրինեցի ես յայնժամ. և դէտ առին 'ի վերայ եդեալ՝ զի զամենայն մարդիկ նա 'ի ծառայութիւն արկանէր, ընդդէմ կացի, և անդադար եղէ 'ի փոյթ խօսելոյ և խրատելոյ՝ մի թողուլ լքանել զայդպիսիկ Փիլիպպոսի։

ԴԻՄՈՍԹԷՆ

## ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈԿՐԱՏԱՅ

Զեօթանասնամենիւք անցեալ՝ զայս առաջին նուագ յանդիման լինիմ ատենի։ Աստանօր ատարաղ բանից և ձևք՝ ամենայն ինչ նոր է ինձ. և զի 'ի լեզու օտար հանգերձեալ եմ խօսել, այս մի ինչ խնդիր է ինձ 'ի ձէնջ, միտ դնել փաստից քան բանից. զի ձեզ պարտ է առնել զարդարութիւն. և ինձ խօսել զճշմարտութիւն։

Ես յետ որքելոյ յանձնէ զկեղծ ամպարշտութեան, անցանէ յերկրորդ գլուխ ամբաստանութեանն։ — Զեղծուցիչ մանկտւոյն աթենացւոց ամբաստանիմ. ցուցցեն զմի ոք յաշակերտաց իմոց, զոր 'ի յոռութիւն ձգեալ իցեմ։ Զբազումս 'ի նոցանէ տեսանեմ յատենիս. յառնկացցեն, վկայեսցեն ընդդէմ զեղծուցողին իւրեանց։ Եւ եթէ զաքա ակն ածեն յինէն, ընդէր հարք և եղբարք դոցա և ազգականք չկարդայցեն զխոստութիւն օրինաց 'ի վրէժխնդրութիւն, և ընդէ՛ր Մելիտոս զվկայութիւն նոցա անտես առնիցէ։ Զի նոքա ոչ միայն չամբաստանեն զինէն, այլ և 'ի թիկունս ինձ հասեալ կան։

Ոչ գրպարտութիւնք Մելիտեայ և Անիտոսի զատապարտեսցեն զիս 'ի մահ, այլ ատելութիւն սնափառ և անիրաւ մարդկանն, զորոց նշաւակեցի զտգիտութիւն և զախտս. ատելութիւն՝ որ զբազումս 'ի լաւաց կորոյս և կորուսցէ. զի չհամարիմ թէ մահուամբ իմով յագեսցի։

Զատելութիւնն զայն յանձն ձգեցի ցանկութեամբ խելամուտ լինելոյ զօրութեան հրամանին պատասխանւոյ դելփական հարցկին, որ վեհ քան զամենայն իմաստունս եցոյց զիս։ — Աստանօր 'ի բարկութիւն բրդեցան դատաւորք. բայց Սոկրատայ յառաջ ածեալ զբանսն, ասէ. Զարմացեալ ընդ պատգամն՝ հարցի զականաւորս յամենայն կարգէ քաղաքայնոց. և ամենայն ուրեք գտի յանդգնութիւն և կեղծաւորութիւն։ Զանացայ երկմըտեցուցանել զնոսա ընդ իւրաքանչիւր քաջութիւն, և

Digitized by Google

տարաժի ինձ ասելս անհաշտելիս. և 'ի միտ առ՝ զի չիք ոք իմաստուն, բայց միայն Աստուած. և զի պատգամախօսին այլաբանութեան այս էին իմաստք, զի որ չհամարի զանձն իմաստուն՝ նա իմաստնագոյն է 'ի մարդիկ։

Եթէ վասն անցուցանելոյ իմոյ զամս բազումս 'ի խնդիրս վաստակաւորս զիս ամբաստանիցեն, իմ պատասխանի այս է. Արհամարհելի են կեանք և մահ՝ առ 'ի լինել աշխատանի մարդկան։ Գիտացէք՝ զի 'ի հրահանգել զնոսա սահմանեցին զիս երկինք. և որ զվտանգ մահու յանձն առեալ՝ ոչ լքի զգաս իմ յոր կացուցին զիս զօրավարք յԱմփիպօլիս, 'ի Պոտիտէա և 'ի Դելիոն, պարտ է ինձ արիագոյն ևս կալ՝ ուր կացուցին զիս դիք 'ի մէջ ձերում, և չկարեմ դասալիք լինել առանց ընդդէմ դառնալոյ հրամանաց նոցա, և զխստութիւն յանձն առնելոյ։

Եւ ոչ այսչափ միայն. այլ թէ և անպարտ կամիցիք արձակել զիս՝ զի մի ևս խօսիցիմ, ասացից ձեզ, Դատաւորք արդարք և սիրելիք ինձ. Աստուծոյ պարտիմ հնազանդել առաւել քան ձեզ. և մինչև իցէ յիս շունչ՝ ոչ դադարեցայց, որպէս մինչև ցայժմ, յառելոյ համարձակաձայն առնելոցն՝ որ ընդ առաջ լինին ինձ. Ո՞չ ամօթ համարիցիք հետամուտ լինել մեծութեանց և փառաց, և անփոյթ առնել զգանձուց իմաստութեան և զճշմարտութեան, որ հոգւոյդ ձերում զարդ գործեն և կատարումն։ Թախանձեցուցից զնոսա ժտութեամբք և խնդրովք, և ամաչեցուցից ընդ կուրութիւն իւրեանց և ընդ սուտ առաքինութիւնս, և ցուցից զի նախամեծար առնեն քան զամենայն բարիս՝ որ ինչ արհամարհանաց են արժանի։

Զայսոսիկ հրաման է ինձ յԱստուծոյ քարոզել անլռելի մանկանց և ծերոց, քաղաքայնոց և օտարաց. և որովհետև 'ի հնազանդելն իմում հրամանի նորա՝ պարգևք մեծագոյնք պարգևեին ձեզ, նովին իսկ 'ի մատնելդ ձերում զիս 'ի մահ՝ մերժեսջիք զպարգևսն Աստուծոյ, և ոչ ևս զոք գտանիցէք յայս նախանձ վառեալ։ Ձեզ պաշտպան

կամ յատենին՝ մինչ թուիմս պաշտպանել անձին. զի թէպէտ և Անիտոս և Մելիտոս կարեն զրպարտել զիս և ամբաստանել և բանադրել 'ի կենաց, այլ վնասել ինձ ոչ կարեն, և աւաղելիք են քան զիս, զի են անիրաւք:

Աւ 'ի խուսել 'ի հարուածոց նոցա, ոչ ըստ օրինակի այլոց ամբաստանելոց հնարս գաղտնածածուկ 'ի կերտրկի կամ յայտնի աղերսանս: Աւ յայտ մեծարանաց և ոչ գութ հնարեցայ արկանել 'ի ձեզ արտասուօք իմովք կամ որդւոց իմոց կամ բարեկամաց, շուրջ ածեալ զնոսա զինեւ. զի զգութ 'ի տեսարանի արժան է յուզել ողորմելի տեսլեամբք, իսկ աստ ճշմարտութեան ևեթ պարտ է լսելի առնել զձայն: Երդուեալ իսկ է ձեր յանդիման ամենեցուն՝ դատել ըստ օրինաց. արդ եթէ երդմնահարութեան հրապոյրս 'ի ներքս արկից՝ ամպարշտութեան գոլոյ մեղապարտ: Այլ ես խելամտագոյն եմ քան զհակառակորդս իմ թէ է Աստուած, և անվեհեր յարդարութիւն նորա և 'ի ձերդ լինիմ ապաստան:

ԲԱՐԹԵԼԸՄԻ. Ուղեւոր. Անաքարսեայ:

---

ԷՍՔԻՆԷՍ ԸՆԴԴԷՄ ԿՏԵՍԻՓՈՆԻ

Դիք 'ի մտի տեսանել զՍոլոն՝ որ գեղեցիկ գեղեցիկ օրինօք զընկերհասարակութիւնս զարդարեաց, զայրն հաւտարամիտ և զօրէնսդիր քաջ, որ իւրով վայելչականաւն իմաստութեամբ հայցէ 'ի ձէնջ, մի՛ և մի՛ բնաւ զճարտարութենն իսկ նախամեծար ընտրել քան զերդմունսն և զօրէնսն. զԱրիստիդէս, որ զհարկս Հելլենաց բարեկարգեաց, յորոյ 'ի վախճանելն՝ զդստերսն ժողովուրդն ամուսնացոյց, որ արդ կոծ առնու 'ի վերայ անարգանաց արդարութեան, և հարցանէ՝ թէ համբաւն ամաչիցէք

ոչ. զի զԱրթմիոս զԶելիացի, այն որ երբեք եմոյծ յԵլլադա զՄարաց ոսկին, և եկ բնակեցեալ էր 'ի քաղաքիս և հիւր ժողովրդեան աթենացւոց, փոքր մնաց թէ և 'ի սպանանել եկեալ էին հարքն ձեր, և 'ի հասարակ կամաց հասարակութենէ աքսորագիր արարին 'ի քաղաքէս և յամենայն երկրէ տէրութեան իւրեանց. իսկ զսա՝ զԴեմոսթենէս, ոչ զատ 'ի Մարացն զօրքին բերեալ, այլ և զկաշառսն, և արդ ևս կաշառօքն յղփացեալ, ոսկի պսակաւ հանդերձեք պատուել. և զԹեմիստոկլէս և զանկեալսն 'ի Մարաթոն և 'ի Պղատէէս, և զնոսին իսկ զնախահարցդ շիրիմս, ո՞չ կարծիցէք անդ հառաչել հառաչել յոգւոց հանել, եթէ զա որ ինքնին իսկ խոստովան լինի խառն ընդ խուժադուժան հակառակ հելլենացւոց մրցեալ, պսակի առնիցի արժանի.

ԷՍՔԻՆԷՍ

---

## ԿԱԼԱՒԻՈՍ ՏՐԴԷ ԶՈՐԴԻՆ ՅԱՆԱԳՈՐԾՈՒԹԵՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Աղաչեմ զքեզ, որդեակ իմ, զութ արկեալ օրինացն որ կցորդեն զորդիս ընդ ծնողաց, մի գործել և կրել քեզ զանխուրս՝ հօր քո ակներև։

Յանկաւ ժամքեն յորմէհետէ երդուեալ աստուածային ամենայն և այլ խաղաղութեան տուեալք՝ հաւատարմութիւն խոստացաք. արդ զնուիրական ձեռս, այն ինչ մեկնեալ 'ի խոստակիցն լինելոյ, զինեցաք անդէն ընդդէմ նորա։ Ելեալ 'ի հիւրասենեակ եղունոյդ, յորում երդումն 'ի կամպանիացւոց պատուեցաք յԱննիբաղայ, շաղախեցեմս զայն արեամբ հիւրընկալին։ ԶԱննիբաղ կարող եղէ հաշտ առնել ընդ որդւոյս, և զորդիդ չկարեցեմ ընդ Աննիբաղայ։ Գիր թէ սրբութիւնք չկային, ոչ հաւատարմութիւն, ոչ կրօնք և բարեպաշտութիւն. յան-

զղջնեցուք յետղեան, թէ չհասանէ մեզ անտի կորուստ։ Մխիթարեա՛ յարձակեցիր յԱննիբաղ. առ ի՞նչ ապա ամբոխ ապստամբացն այնոցիկ և գերեաց. Էր աղագաւ ամենեքին 'ի մին յայն ակնկառոյցք. զի՞նչ բաղձալքն անթիւք. ընդդարձմացի՞ն թերեւս 'ի քում կատարողութեանդ։ Երեսացն Աննիբաղայ, որում ապաւագինացն բանակք չհանդուրժեն, յորմէ տարաւ հռովմէականն ժողովուրդ, դու հանդուրժիցես։

Անօգնական կայցէ. հանդուրժիցես խոցել զիս ինքն, յորժամ զմարմին իմ արկից պատուար մարմնոյն Աննիբաղայ, զի ընդ խոցել քո զիս՝ հարցես և զնա։ [redacted]

Ամէն իսկ յանձն առ զպարտութիւն, քան թէ անզէն յաղթեցիր։ Պատուեսցին առաջի քո խնդրուածք իմ, որպէս եղենն այսօր վասն քո։

ԼԻՎԻՈՍ

---

## ՑԱՆԿԱՏՐԱՍՑԻՑ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿՐԱՍՍՈՍԻ Ի ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ ՊԼԱՆԿԻՈՍԻ

Ձի՞ բազմեալ կաս, Բրուտէ. զի՞նչ կամիս թէ պատուէր այդ զքէն հօր քում պատմեսցէ. զի՞նչ այնոցիկ, զորոց պատկերսն տանին ընդ դէմս. զի՞նչ նախնեացն քոց, և զի՞նչ առ Բրուտոս, որ յարքայական իշխանութենէ զժողովուրդն 'ի բաց թափեաց։ Ցո՞ր գործ կամ 'ի պատիւ կամ յառաքինութիւն դեգերեալ է քո՝ զոր նա երթեալ ծանուսցէ նմա. 'ի յաճախութիւն հայրենեաց ստացուածոց, այլ այդ ազնուատոհմ զարմիդ չէ ինչ վայելուչ. բայց դիր թէ այդպէս իցէ. սակայն տես ինձ զի չկայ ինչ առ քեզ, հեշտութեանցն վատնեալ զամենայն. թէ 'ի հրահանգս քաղաքական իրաւանց, այդ եւս հօր քոյ է սեփական. իսկ քո զօրասա տանեն կարասեաց

հանեալ 'ի փախուստ, և զօրութեան անզգամ չթողեր՝ յորս նա բազմերին 'ի ժամ խորհրդոց. Թէ 'ի մարգս զինուորական կրթանաց, այլ քո 'ի կեանս չէք տեսեալ զձախաւոր պատերազմի: Ի հարստութենական սարգեաց, յորմէ Թագաւոր են ամենեքին, և զամենայն հեռու ընդունիլ և զբարբառոյ ծառայեցեր յաղթապարա ապաւեն զբազաւորք: Եւ զու համարձակեա զերդ անտանել, արկանել զանձն 'ի գոյս, կալ յառաջ, 'ի քաղաքի, յանդգնութեան ապաց քաղաքացեաց, և 'ի մեռելոյն նա և 'ի պատերազմացն բնդդիմ ոչ զարհուրեա, յորոց ոչ միայն 'ի նմանապետ հաւատարմութենէ, այլ և 'ի բնակաւորաց դատաւորութենէն վերջացեալ դատաւորս:

ՌԱՅՆԱԼ. Պատմ. Հնդկ:

---

## ԳԵՐՄԱՆԻԿԵԱՑ ԵՒ ԱՐՄԻՆԻՈՍԻ ՔԱՋԱԼԵՐ ԱՌ ԲԱՆԱԿՍ ԻՒՐԵԱՆՑ

Գիշերոյն այնորիկ զուարթարար եղև հանգիստ Գերմանիկեայ: Թուէր նմա 'ի տեսլեան զոհ մատուցանել; և 'ի ցայտել արեան զոհին զձորձով իւրով, միւս այլ գեղեցկագոյն մատուցանէր նմա Աւգոստա հան իւր: Քաջալերեալ աւետաւոր գուշակութեամբն՝ զոր և հաւանեալք հաստատէին, համախմբեաց զզօրականն, եւ նոցա նախահոգ իմաստութեամբ հրահանգս վասն առաջիկայ պատերազմին, և ասէ. Մի կարծէք թէ դաշտավայրք եւեթ նպաստաւորութիւնք իցեն հռովմայեցւոց զօրականին, այլ և մայրիք և անտառք՝ եթէ զիտիցէ յօգուտ 'ի կիր արկանել զայնս: Բարբարոսացն ասպարք անհարդիկք և նիզակք երկայնաբունք չեն ինչ դիւրաւելիք 'ի թփուտս և յանտառախիտս՝ որպէս զնէգ և զուսեր

և զգուշանալ պատուիրանացն 'ի մարտին։ Յաճախեսցէք զՀռո-մայեցիս, 'ի մէջ նեղանձուկ արահետաց ձգեալս. գերմանացւոց ոչ զգեստք են և ոչ սաղաւարտք, և վահանք խակ նոցա ոչ երկաթապատք և ոչ ճաղիւք ամրացեալ՝ այլ ոստոստիւ, այլ տախտակի նուրբ ներկածոյ։ Առաջին եթէ ուրեմն ճակա-տամն նոցա է նիզակաւոր, այլոց բազում եթէ մինչեւ 'ի հասար կամ գեղջարդաւոր կարճառօտ կալեալ։ Մարմին նոցա գժնէատեսիլ առոգ իսկ եթէ սակայն ընդդէմ յար-ձակման. չկարեն նոքա ժուժկալել հարուածոց, ան-զգայք են նախատանաց, անփոյթք հանդուրժելոյ զօրա-վարաց, դասալիք, փախստեայք, անհոգեկք 'ի ձախո-ղակս, և անհնարք հրամանաց աստուածայնոց և մարդկայ-նոց 'ի յաջողութեան։ Եթէ խոնջք 'ի նաւարկութենէ՝ ցանկայք վախճան առնել աշխատութեան, 'ի ճակատա-մարտի պատրաստեալ կայ այն։ Մերձ կայք յԱլբիս քան 'ի Հռենոս. անդ վախճան լիցի պատերազմի, եթէ զզօրավար ձեր՝ որ զհետ քաջութեան հօր իւրոյ և հօր-եղբօր նկրտի, յաղթող 'ի նմին երկրի կացուցանիցէք։

Ի բանից աստի վառեցաւ եռանդն զօրականին. և տուաւ նշան 'ի պատերազմ։

Անտի և Արմինիոս և զօրավարք գերմանացւոց խրա-խուսէին զզօրս իւրեանց, ասէին. Հռովմայեցիքն՝ քան զբանակն Վարոսի վատք, առ 'ի խուսել 'ի պատերազմէ յապստամբութիւն մտաբերեն։ Կէսք վիրաւորք 'ի թի-կունս, այլք յալեկոծութենէ և 'ի մրրկաց խեղեալք։ գան դարձեալ ձայնատուր քինին վրէժխնդրութեան թշնամեաց և սրտմտութեան դից. 'ի նաւս ապաստա-նեալ և յանկանոնաց ուղին ովկիանոսի՝ զի մի ոք զհետ ա-նել կարասցէ և հալածել զփախստեանս։ Այլ յորժամ պա-տերազմ խառնեսցի, ոչ օգնեսցեն պարտելոց հողմք և թիակք։ Յուշ լիցի ձեզ ագահութիւն նոցա, անգթու-թիւն և գոռոզութիւն. զի՞նչ այլ մնայ ձեզ, բայց պաշտ-պանել ազատութեան կամ մեռանել նախ քան զգե-րութիւն։

Digitized by Google

Այսպէս յետամնացն պատերազմի զզօրս վարելով՝ իշխե-ցին զնոսա 'ի դաշտն անտառանեալ խորխորատս:

ՏԱԿԻՏՈՍ. Ագրիկոլա.

---

## ԿԻԿԵՐՈՆԻ ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ ԳԼԱՆԿԻԱՍԻ

Զի թէպէտ ցանկալի է ինձ՝ ամենայն առաքինութեամբք ճոխանալ, բայց չիք առաւելագոյն քան լինել ինձ և երևել երախտագէտ: Զի այս առաքինութիւն միակ՝ ոչ մեծ միայն քան զամենայն, այլ և մայր է այլոց առհասարակ: Զինչ է բարեպաշտութիւն, բայց կամք երախտագէտ առ ծնողս: Ո՞յք իցեն բարի քաղաքացիք, ոյք 'ի պատերազմի, ոյք առանձին բարեացապարտք առ հայրենիս: Ո՞յք իցեն սուրբք, ոյք պաշտօնեայք, բայց որք զդից անմահից զպարտուպատշաճ շնորհս՝ արդար պատուասիրութեամբք և երախտաճանաչ միտք մատուցանեն: Զինչ բերկրութիւն լինէր 'ի կենցաղումս 'ի բառնիլ բարեկամութեանց: Իսկ ո՞ր բարեկամութիւն եղիցի 'ի մէջ ապերախտից: Ո՞ 'ի մէնջ քաջամանունք, որ ոչ հանապազ յուշի ունիցի շնորհակալութ յիշատակազանուցիչս, զդաստիարակս և զուսուցիչս, այլ և զտեղիս անգամ զանձնառնիչս՝ ուր սնաւն և ուսաւ: Որպէս հնար է լինել այնպէս զօրաւոր, կամ եղև երբեք, որ կարող իցէ կալ յառին՝ առանց առատութեան բազում բարեկամաց, որում արդարև անհնար է կալ միայն՝ 'ի բառնիլ յիշատակի և երախտագիտութեան: Քանզի ոչ ինչ այնպէս սեփհական զատիմ մարդոյ, որչափ ընդ միմեանս կապիլ՝ ոչ միայն բարերարութեամբ, այլ և լաւկամութեանն ցուցակութեամբ. և ոչ ինչ այնպէս ասմարդի, այնպէս անագորոյն և վայրենի, քան գործել զործ՝ մինչև երևել ընկալեալ բարերարութեանն չառնել

անարժան, այլ և ընկճեալ յաղթեալն է։ Իսկ զի այս այսպէս է, տարաժամեան եղէց, ոչ յառաջագոյն, ամբաստանութեանց զինէն և յերախտապարտութեան մասին՝ յորում անհնար է լինել անչափ. բայց քանզի այսպէս են քո կամք, խոստովան եղէց թէ եմ անչափ. և խնդրեցից ՚ի ձէնջ ո՛ դատաւորք՝ բարերարել առն, որոյ պարտաւորիր՝ յայնմ զնա պարտաւէ, զի անչափ երախտագէտ սաբիմ։

ԿԻԿԵՐՈՆ

---

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՎԻԲԻԱՅԻ ՎԻՐԻԱՅԻ ԸՆԴԴԷՄ
ԵՐՈՑՄԱՆ ԾԵՐԱԿՈՒՑԻՆ ԿԱՊՈՒԱՅ

Ոչ տեսից զԱպպիոս Կղոդիոս և զԿ. Փուլվիոս ամբարհաւաճ յաղթութեամբ խրոխտապանծս, և ոչ ձեռնակապք ձգեցայց ընդ քարշ ընդ Հռովմ քաղաք ՚ի տեսիլ յաղթանակի, զի ապա ՚ի բանտ կամ ՚ի ցից պրկեալ գաւազանահարձ թիկամբք՝ արկից զպարանոցս ընդ հռովմէական տապարաւ. և ոչ քանդեալ տեսից և հրկէզ զհայրենիս, և ոչ յափշտակեալ ՚ի պղծութիւն զմարս կամպանիացիս, և զկուսանս. և զաղատազգի մանկունս։ ԶԱլբա՝ յորմէ էր ծագումն նոցա, հիմն ՚ի վեր տապալեցին, առ ՚ի չմնալոյ յիշատակի արմատոյ նոցա և ծագման. թո՛ղ թէ համարեցայց խնայել նոցա ՚ի Կապուա, առ որ առաւել է նոցա ոխերիմ ատելութիւն, քան առ Կարքեդոն։ Վասն որոյ՝ որոց ՚ի ձէնջ կամք են տեղի տալ յաւէտ օրհասի, քան տեսանել զայս ամենայն դժնդակագոյնս, նոցին պատրաստեալ են այսօր և յօրինեալ առ իս կոչունք։ Որոց կշտացեալ վայելեսցեն ՚ի գինի և ՚ի կերակուր, շուրջ յածեսցուսցեն զնոյն բաժակ՝ որ ինձն մատուսակի։ Այն ըմպելիք՝ ազատ կացուսցեն զմարմինս ՚ի տանջանաց, զոգի՝ ՚ի թշնամանաց, զաչս և զականջս ՚ի տեսոյ և ՚ի լրոյ ամե-

նոյն գծնգակաց և յանարժանից՝ որք կան մնան պարտեզաց։ Եղիցին և արք պատրաստականք, որք 'ի փոյտակոյս մեծ վառեալ 'ի գաւթի ատեանիցս՝ արկցեն գդիմակնացեալ մարմինս։ Այս մի միայն է ճանապարհ համեստ և ազատ՝ առ մահ։ Նոյն իսկ թշնամիք զարմասցին ընդ արութիւն, գիտասցէ և Աննիբաղ՝ զի եթող զինքն և մատնեաց զքաղ Նիզակակիցս։

ԼԻՎԻՈՍ

---

## ԿԵՍԱՐ ԽՐԱԽՈՒՍԷ ԶԶՕՐՍՆ ՉԵՐԿՆՉԵԼ Ի ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՅ ԸՆԴ ԳԵՐՄԱՆԱՑԻՍ

Այսոցիկ միտ եդեալ Կեսարու, ժողով կոչեալ, և յամենայն կարգէ զհարիւրապետսն յատեան անդր մատուցեալ, ծանուցանէ յանդիմանեաց զնոսա. նախ, զի չէր արժան նոցա խնդրել կամ զմտաւ ածել՝ յոր կողմ վարիցին կամ որով խորհրդով։ Ի բդեշխութեան իւրում՝ ջերմագոյնս ցանկացեալ Արիովիստ բարեկամութեան հռովմէական ժողովրդեանն, է՞ր իցէ ումեք համարել զնա յանդգնաբար յիւրոց պատշաճիցն նշկահել. ի միտ առեալ զխնդիրս իմ և յարդարութիւն պայմանացս հայեցեալ, հաւանեալ եմ թէ ոչ զիմ ինչ և ոչ զհռովմէական ժողովրդեան զշնորհս արհամարհիցէ նա։ Իսկ եթէ մոլեգնեալ և խելագարութեամբ ճակատ տայցէ, զմէ՞ զանգիտիցէք. կամ ընդէ՞ր զանձանց քաջութենէ կամ զիմմէ խնամոց անյոյսք իցէք. այդմ թշնամւոյ եղեալ է հանդէս յաւուրս հարց մերոց, յորժամ Կիմբրացւոց և Տեւտոնաց հալածեալ 'ի Կ. Մարիոսէ՝ ոչ սակաւ գովութեան զօրն քան զինքնին իսկ զզօրավարն դատեցաւ արժանի. եղեւ և զարդիս յիտալիա 'ի ծառայապատամբ խազմի անդ, որոց և փոքր ինչ և հրահանգք առ 'ի մէնջ

ընկալեալքն՝ նորաստ լինէին. յորմէ իմանալ է, քանզի տանուկլութիւն իցէ արքունական ժուժկալութեան. զի յա-րաց երբեմն յանգիմնաց անգամ երկնչէին վայրապար, յետոյ զզինեալն խոկ և զյաղթականսն 'ի պարտու-թիւն մատնեցին. հուսկ այդս, որքա այն գերմանացիք են՝ ընդ որս յաճախ պատերազմեալ հելուետացւոց, ոչ միայն յիւրեանց աշխարհին, այլ և 'ի նոցայն ևս յաղ-թահարեալ են զնոսա. և սակայն մերում զօրականին ոչ ունիցին գալ 'ի կշիռ: Իսկ եթէ ումանց խրտուիլ ինչ անկանիցի ձախող պատերազմն և փախուստ գալլիա-ցւոց, սոքա եթէ քննիցեն՝ 'ի վերայ հասանիցեն, զի յերկարութենէ գուպարածին յոգնեալ գալլիացւոց, իբ-րև Արիովիստ ամիսս բազում կայր մեկուսի 'ի ճահճուտին և 'ի ճահիճսն և ոչ 'ի կռիւ ինչ ելանէր, 'ի յուսահատել նոցա 'ի մարտէ և 'ի ցրուել՝ նա յանկարծի յեղակար-ծուստ իմն անկեալ նոցա 'ի վերայ, խելօք և հանճարով քան քաջութեամբ յաղթեաց նոցա: Բայց խելք որ ընդ խուժս և անհմուտս տեղի ունիցի, նովին և ոչ ինքն ակն ունի զմեր զօրս ըմբռնել: Իսկ որք զերկիւղ 'ի ցա-րեան և յանձուկս ճանապարհաց պատճառիցեն, ժրպր-հութեամբ գնան. զի կամ զխնամոց զօրավարին լինին յուսահատ, կամ պատուէր հրամանի նմա 'ի վերայ դնել թուին. այդպիսիք ինձ անկ են. զցորեան՝ Սեկուանացիք, Լեւկացիք, Լինկոնք մատակարարեսցեն. կայ իսկ այժ-մէն ցորեան հասուն յանդաստանս: Զճանապարհէն՝ դոքա ձեզէն 'ի կարճոյ լինիջիք խելամուտ: Իսկ զի ան-ունկնդիր ասին լինել հրամանիս և ոչ դիմագրաւ ար-շաւել, ոչ ինչ ընդ այդ խռովիմ. քանզի գիտեմ ընդ ոյս ամանս է զօրուն անսաստութիւն հրամանի. զի կամ չարաւ վճարեալ իրացն՝ ձախողանք պատահեալ են, կամ եղեռն ինչ երևեալ՝ ագահութիւն յանդիմանեալ. իմ անարատութիւն՝ 'ի բովանդակ կեանս իմ, իսկ յաջո-ղութիւն՝ 'ի հելուետացւոց անդ մարտին տեսաւ: Վասն որոյ, զոր յապաղելոցն էի այլ ևս աւուրս, վճարեցից 'ի

Digitized by Google

մեռոյ. և 'ի գիշերի սոսա յայտնին զշողորդաց պահու՝ չա-տարրից զի փութով առից 'ի միտ, պատահմանք տա-դեաց և հարկ պաշտաման ազգազգային իցէ 'ի ձեզ, թէ երկիւղ: Իսկ եթէ այնուհետև ոչ ոք եկեսցէ զհետ, ա-կոյն ես՝ տասներորդ գնդաւն ևեթ երթայց, զորմէ ոչ ինչ յերկուանամ, և եղիցի ինձ այն՝ գունդ պահապան։ — Ընդ գունդն ընդ այն առաւել սիրական էր Կեսար, և վասն քաջութեանն՝ վստահ յոյժ 'ի նոսա։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. Յիշատակարանք։

---

## ԲԱՆՔ ԱՐԻՈՎԻՍՏՈՍԱՅ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՈՑ ԱՌ ԿԵՍԱՐ

Առ պահանջանս Կեսարու սակաւ ինչ ետ Արիովիստ պատասխանի, զանձին առաքինութեանց բազում ինչ ճառեաց. իմ ոչ կամաւ է, ասէ, անցեալ ընդ Հռենոս, այլ 'ի ժտելոյ և 'ի հրաւիրմանէ նոցին գաղղիացւոց. ոչ առանց մեծի յուսոյ և մեծաց փոխարինաց զտուն և զազգ իմ լքեալ. տուն բնակութեան է իմ 'ի Գաղղիա՝ 'ի նոցունց շնորհեալ, պատանդքն նոցա յօժարակամ մատուցան ինձ. հարկս հանեմ իրաւամբք պատերազմի՝ զոր յաղթողաց է արկանել պարտելոց. ոչ ես ընդ Գաղղիացիսն, այլ Գաղղիացիք ընդ իս եդուն պատերազմ. ամենայն քաղաքք Գաղղիոյ յարեան 'ի վերայ իմ 'ի պատերազմ և ընդդէմ ինձ բանակ կառուցին. զամենայն զօրն զայն միով ճակատու վարատեցի վկանդեալ. եթէ այլ կամիցին փորձ փորձել, 'ի մաքառել պատրաստ եմ. իսկ եթէ 'ի խաղաղութեան կալ լաւ համարին, անօրէն է յուրաստ կալ 'ի հարկաց՝ զոր ցայսօր ժամանակի հատուցեալ է։ Բարեկամութեան հռովմէական ժողովրդեան ինձ 'ի զարդ և 'ի թիկունս արժան է լի-



Digitized by Google

նել, ոչ 'ի կամաց. և նախկին յուսով խնդրեցի ես զայն. եթէ յժողովուրդն հռովմէական հասանիցէ զհարկս և հանցէ յինէն զհպատակս, ոչ սակաւ յօժարութեամբ հրաժարեցայց մտադիւր 'ի բարեկամութենէ ժողովրդեանն Հռովմայ, քան զոր փափաքեցի: Իսկ զբազմութիւն զերմանացւոց 'ի Գալլիա անցուցանել, զայդ ոչ 'ի կռուել ընդ նոսա առնեմ, այլ յիմ յապահովութիւն. վկայ է այսմ, զի չեկի՝ բայց եթէ աղաչեալ. և ոչ պատերազմ ետու, այլ ընդդէմ կացի: Իմ նախ քան ըզժողովուրդն հռովմէական եկեալ է 'ի Գալլիա: Յառաջ քան զայս ժամանակ՝ ոչ երբեք բանակք ժողովրդեանն Հռովմայ ըստ սահմանս նահանգին Գալլիոյ ելեալ էին: Արդ զի՞նչ կամիցի այս լինել. ընդէ՞ր իցէ գալ 'ի ստացուածս իմ. այս իմ է նահանգ Գալլիա, որպէս այն՝ ձեր: Որպէս ինձ չէ օրէն 'ի ձեր սահմանս արշաւել, այսպէս և ձեզ անիրաւ է՝ խափանել զիս յիմոց իրաւանցս: Իսկ զի զԵդուացիս բարեկամս ասես կոչեցեալ 'ի հրամանէ ատագանւոյն, ոչ այնպէս խժական ոք եմ ես և ոչ այնպէս անտեղեակ իրաց, մինչև չգիտել՝ թէ յայն ինչ անցեալ պատերազմին Ալոբրոգաց՝ օգնականութիւն մատուցին Եդուացիք Հռովմայեցւոց, և նոքա 'ի մարտս պատերազմացն ընդ իս և ընդ Սեկուանացիս 'ի թիկունս առին զժողովուրդն հռովմէական: Պարտ է ինձ կասկածել թէ կեղծուպատիր բարեկամութեամբ ունիս դու զօրս 'ի Գալլիա առ 'ի զիս նուաճել: Եթէ ոչ 'ի բաց գնայցես կամ զզօրսն 'ի կողմանց աստի հանիցես, ես զքեզ ոչ առ բարեկամս, այլ առ թշնամիս կալայց. զի եթէ սպանից ևս զքեզ՝ բազմաց յազնուականաց և յիշխանաց ժողովրդեանն Հռովմայ մտահաճոյ ինչ գործիցեմ. զայս ես 'ի հրեշտակաց անտի նոցա տեղեկացեալ գիտեմ, զորոց ամենեցուն նոցա զշնորհս և զբարեկամութիւն՝ քոյով մահուամբդ շահիցիմ. իսկ եթէ թափեսցիս յինէն, և ազատ թողուցուս ինձ զգալլիական ստացուածս, պարգևս մեծամեծս ընդ այնր հա-

տուցից քեզ. և որ զինչ պատերազմ կամիցիս մղել, անաշխատ և անվտանգ վճարեսցես։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. *Յիշատակարանք*։

---

## ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԻՆՈՒԿԻՈՍԻ

Իշխանապետդ իմ (փաբիոս), կրկին եղեն 'ի սմին աւուր՝ քո յաղթութիւնք պայծառափայլք. քաջութեամբ քով թշնամեաց յաղթեցեր, խոհեմութեամբդ և մեծանձնութեամբ յաղթեցեր քում իշխանակցի։ Առաջնով յաղթութեամբդ փրկեցեր զմեզ, և երկրորդաւն՝ խրատեցեր. և որչափ իմս պարտութիւն յԱննիբաղայ՝ ամօթալի եղև ինձ և մահառիթ, նոյնչափ և յաղթել քո ինձ՝ եղև ինձ կենսառիթ և պանծալի։ Վասն որոյ կոչեմ զքեզ՝ իմ հայր, չունելով այլ ինչ անուն յարգական քեզ ընծայել. թէպէտ և իմ առ քեզ պարտիք՝ մեծ իցեն քան զոր ունիմ առ հայր՝ որ զիս ծնաւ։ Զի նմա պարտիմ զանձին իմոյ եւեթ զկեանս, իսկ քեզ պարտիմ իմովս հանդերձ՝ և զփրկութիւն քաջացս այսոցիկ առ հասարակ։

ԼԻՎԻՈՍ

---

## ԿԻԿԵՐՈՆ ԸՆԴԴԷՄ ՎԵՐՐԷՍԻ

Փակին 'ի բանտ դատապարտեալքն. կարգի նոցա պատուհաս մահուն, զորոյ զչափ առնուն տառապեալ ծնողք նաւապետացն. արգելուն նոցա մատչել առ որդիս իւրեանց. արգելուն բերել առ զաւակս իւրեանց կերակուր և հանդերձ։ Հարք..... անկեալ դնէին առ

Digitized by Google

ռեմօք, և մարք Թշուառականք՝ զգիշերն ագանէին առ դրամբք բանտին՝ զրկեալք 'ի վերջին տեսոյ որդւոցն. որք ոչ այլ ինչ աղերս արկանէին, բայց հրաման՝ զի զորդւոց զյետին շունչ ընկալցին 'ի բերան: Կայր անդէն բանդապետն՝ խաշահանու պրետորին, մահ և արհաւիրք դաշնաւորաց և քաղաքացւոց, զՍեստիոսն զայն ասեմ զզահիճ, որ յամենայն հեծութեանց և 'ի ցաւոց՝ վարձս շահէր հաւաստիս: Զի մտանիցես առ նա՝ տուր այսչափ. զի առցես հրաման կերակուր տանել առ նա՝ այսչափ: Ո՛չ ոք 'ի բաց հրաժարէր: Զի՞նչ տացես ինձ, զի մեռուցից զորդի քո՝ միով ևեթ բախմամբ տապարի. և զի՞նչ՝ զի մի՛ բազում անգամ հարցի. զի առանց ինչ ցաւոց կամ կտտանաց կարճեսցի 'ի կենաց: Եւ յաղագս այսր իսկ վճարիւր արծաթ դահճին: Ո՛վ մեծի և անտերելի ցաւոցս. ո՛վ դառն և դժնդակ աղետիցս: Ո՛չ ըզկեանս որդւոց, այլ զմահուն շութափութիւն գնոց գնել բռնադատէին ծնողքն: Ինքեանք իսկ գլխովին պատանեակքն զայսմ զարկուածոյ խօսէին ընդ Սեստիոսի, զայսմ միակ բախմանէ. և զայն յետին շնորհ պաղատէին որդիք 'ի ծնողաց, արծաթ մատուցանել դահճին առ 'ի դիւր չարչարանաց նոցա:

Բազում մորմոք և ծանունք նիւթեցան ծնողաց և մերձաւորաց. բազո՛ւմք: Բայց և այնպէս՝ գէթ մահն լինէր վերջինն: Ո՛չ այդպէս: Եւ միթէ գուցէ՞ ինչ՝ անդր ևս քան զայս ձգիլ անգթութեան: Այո՛՝ կայ միւս ևս: Զի որդիք նոցա իբրև գլխատեցին տապարաւ և սպանցին, մարմինքն անկցին գազանակուր: Թէ դառնաղէտ իցէ այս ծնողին, թող գնեսցէ արծաթոյ զիշխանութիւն թաղման:

ԿԻԿԵՐՈՆ

Digitized by Google

## ԿԻԿԵՐՈՆ ՎԱՍՆ Կ. ԼԻԳԱՐԻԱՅԻ

Ես արդ, Կեսար, իցէ՞ թէ թուիցիմ քեզ ինչ 'ի դատ Լիգարիոսի մատչիւր պաշտպանել, զոչէստ նորին ճառեալ։ Որ զինչ և խօսեցայս՝ կամիմ բովանդակել 'ի մի գլուխ մարդասիրութեան քոյ կամ գթութեան կամ ողորմութեանդ։ Բազում դատս խօսեալ է իմ, Կեսար, և ընդ քեզ ևս, յորժամ 'ի պատճառս պատուոյ և փառաց քոց յամէիր յատենի հրապարակիս. բայց ո՛չ և ո՛չ, ոչ երբեք այսու ոճով. «Ներեցէք, դատաւորք. սխալեաց, վրիպեաց, ոչ կարծեաց. եթէ երբեք այսուհետև. ....»։ Զայդ օրինակ՝ առ հայր օրէն է բարբառել. իսկ առ դատաւորս՝ «Ոչ արար, ոչ արկ 'ի միտ, սուտ են վկայք, մեռաս ստայօդ»։ Դիր, Կեսար, թէ 'ի դատիս Լիգարիոսի՝ դատաւոր իցես. հայեաց, յորում պահապան գնդի եղեալ իցէ։ Լուռ լինիմ. և ոչ զայսոսիկ 'ի հանդիսի անցուցանեմ, որ առ դատաւոր ևս իցեն թերևս զօրաւորք։ Տեղապահ երթեալ յառաջ քան զպատերազմն, թողեալ լքեալ 'ի խաղաղութեան, մարտիւ պաշարեալ, յայնմ ոչ դաժան, այլ և հոգւով և ջանիւք բովանդակ քոյ։ Առ դատաւոր սովոր են այս բանք. այլ ես առ հայր բարբառիմ. մոլորեցայ, ընդ խոլ գործեցի, զղջի է ինձ, 'ի գթութիւնդ ապաւինիմ, թողութիւն խնդրեմ յանցանացս, ներել աղաչեմ։ Եթէ չիք ուրուք առեալ զխնդրելին, յանդգնաբար (թախանձեմ). եթէ բազմաց, դու նոյն ինքնդ ձեռն կորկառ՝ որ զյոյսն ետուր։ Եթէ չիցե՞ն ինչ Լիգարիոսի պատճառք յուսոյ, մինչդեռ ինձ առ քե՝ և վասն այլոց ևս գոյ տեղի մաղթանաց. թէպէտ և ոչ 'ի ճառս յայս՝ եդեալ է յոյս դատիս, և ոչ 'ի ճգունս այնոցիկ՝ որ պաղատին առ քեզ վասն Լիգարիոսի ջերմեռանդ քո կարևորք։ Զի տեսի և 'ի միտ առի, յինչ առաւել դէտակն ունէիր, յորժամ բազումք 'ի մերայ փրկութեան ուրուք գուն գործէին. քան զաղերս՝

հաճոյագոյն էին քեզ աղաչաւորացն դատք. և ոչ յայն հայէիր՝ թէ քանի՛ սիրելի քեզ իցէ աղերսաւորդ, այլ թէ քանի այնմ՝ որոյ վասն տառապէր։ Ուստի և այնպէս ճոխաբար ընձեռես դու քոյոցդ, զի երանելի ևս թուին ինձ երբեմն՝ վայելեալքն յառատութիւնս քո, քան ըզ-քեզ՝ որ այնպիսի առատապարգև առ նոսա գտանիս։ Սակայն, որպէս ասացի, տեսանեմ զի առ քև առաւել զօրեն աղերսարկուացն դատք քան պաղատանք. և դու առաւել 'ի նոցանէ շարժիս՝ զորոց զճշմարիտ աղէտսն 'ի խնդրուածսն անդ տեսանիցես։

ԿԻԿԵՐՈՆ

---

## ԿԻԿԵՐՈՆ ԸՆԴԴԷՄ ԱՆՏՈՆԻՈՍԻ

Ջերծաւ Կեսար յԱղեքսանդրիոյ բարեբախտ, որպէս թուէր յաչս իւր. բայց ըստ իս, որ առ ընկերհաշտութիւն շարաբաստ իցէ, բարեբախտ լինել ոչ ունի։ Կանգնեալ նիզակ առ աջի մեհենին Արամազդայ նահանջողի, ստացուածք Կն. Պոմպէոսի, — աւա՜ղ ինձ, արտասուք հատեալ, այլ կսկիծ ցաւոց 'ի սիրտս մխեալ հարատեալ կայ, — ստացուածք, ասեմ, Պոմպէոսի մեծի՝ 'ի գժընդակ բարբառ քարոզին մատնեալ։ Յայն տեսիլ միայն՝ մոռացեալ քաղաքիս զգերութիւն իւր՝ հեծեծաց. և 'ի սարկանեալ ոգւոց, յահ և յերկիւղ պաշարեալ ամենայնի, ազատ մնաց հեծութիւն հռովմայեցի ժողովրդեան։ Յակըն ունել ամենեցուն, թէ ո՛ իցէ այնպէս ամպարիշտ, այնպէս խելագար, այնպէս դից և մարդկան թշնամի՝ որ յայն եղեռն վաճառու հոլանեալ յանդգնեալ զանձն յառաջ վարեսցէ, գտաւ և ոչ ոք՝ բայց Անտոնիոս միայն. նա զի և բազում ամբոխութիւնք կային զնիզակաւն, յայլ ամենայն կամակարողք ձեռներէցք։ Մի ոք ևեթ

Digitized by Google

գտաւ յայն ինչ լպրշեալ, յորմէ զարհուրեալ խուսա-
փէր ամենեցուն ժպրհութիւն։ Այս ուրեմն՝ ափշու-
թիւն այնպիսի զքեւ անկաւ, կամ ճշգրտագոյնս ասել՝
կատաղութիւն այնպիսի, զի նախատաս փախստեայց զկնի
հատանող 'ի ոտիցս յայս ծնեալ առ 'ի շրջել, ապա
զինս և Պոմպէոսի հատանող. և չգիտացե՞ս տակաւին
զքեզ զազիր և զարշելի հռովմէական ժողովրդեան, ո՞չ
և զզիս ամենայն և զամենայն մարդիկ թշնամիս քեզ
լեալ և լինելոց։

ԿԻԿԵՐՈՆ

---

## ՄԵԿԻՊՍԱ ՀՕԳԵՎԱՐ ԱՌ ՅՈՒԳՈՒՐԹ

Մանուկ զքեզ, ո՛ Յուգուրթ, որբ 'ի հօրէ, անյոյս և անստացուած, յարքայութիւն իմ ընկալայ՝ ակն ունելով բարերարութեամբս իմով սիրելի լինել քեզ իբրև զհայր, և չխաբեցայ բնաւ։ Զի զայլ ամենայն պանծալի արութիւնս քո թողեալ, 'ի դառնալ քում 'ի մօտոյ 'ի պատերազմէն Նումանտիոյ՝ զիս և զթագաւորութիւնս իմ փառօք պայծառացուցեր. քաջութեամբ քով զբարեկամս մեր հռովմայեցիս՝ մտերմագոյնս գործեցեր. 'ի Սպանիա զհամբաւ ազգատոհմիդ նորոգեցեր, և որ դըժուարագոյնն է 'ի մահկանացուս՝ փառօք յաղթանակեցեր նախանձուն։ Եւ արդ, քանզի բնութիւնն վախճան առնէ կենացս, երդմնեցուցանեմ զքեզ յաջս յայս և 'ի թագաւորութիւն իմ, և աղաչեմ զքեզ, զի զսոսա ըղտահմակիցս քո և բարերարութեամբս իմով եղբարս՝ ըստ սիրելիս քո կալցիս, և մի՛ քան զարիւն քո՝ զօտարս քեզ նախամեծար ընտրեսցես։ Ոչ զօրաց խումբ և ոչ գանձք՝ պատսպարանք են թագաւորութեան, այլ բարեկամք՝ զորս ոչ զինուք է ստանալ և ոչ գանձուք ժողո-

վել, այլ արդեամբ և հաստատամտութեամբ ։ Իսկ ո՞ ար-
գեաք բարեկամագոյն կայցէ եղբօր քան զեղբայր . և զո՞
ոք յօտարաց հաւատարիմ գտցես, եթէ քոյոց լիցիս
թշնամի ։ Թողում ձեզ (երից որդւոցդ) թագաւորութիւն
հաստատուն՝ եթէ առաքինասջիք, իսկ եթէ անպի-
տանք իցէք՝ թագաւորութիւն խախուտ. զի միաբանու-
թեամբ աճեն փոքունք, իսկ գժտութեամբ ապականին
հզօրք ։ Այլ քեզ, Յուգուրթ, որ երիցագոյնդ հասակաւ և
իմաստութեամբ, անկ է ստանալ քան զնոսա զգոյշ լի-
նել, զի մի յայսպիսեաց ինչ հանդիպեսցի. զի յամե-
նայն մեծս հզօրագոյնն՝ թէպէտ և հարստահարիցի,
քանզի կարողագոյն է՝ թուի հարստահարել ։ Իսկ դուք
Ադերբաղ և Հիմբսաղ, մեծարեալ պատուեսջիք զայր
այդպիսի, նմանող լերուք առաքինութեանց նորա, ջան
գիք զի մի միայն յորդեգիրս իմ, այլ և յորդիս բարե-
բաղդ գտայց ։

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. Յուգուրթ ։

---

ԳԱՏԱՄԻԱՆԻ ՏԻԲԵՐԻ ԱՌ ԲԱՂԽՔ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ
ԶԶԵՂԽՈՒԹԵՆԷ ԱՒԱԳԱՆԻՈՑՆ

Յայլ դէպս, Հարք ատենակալք, լաւագոյն թերեւս
էր բերան 'ի բերան առ հարցուածոց ձերոց պատաս-
խանի տալ ինչ յօգուտ համարէի հասարակապետութեան.
այլ յայսմ լաւ ևս դիպաւ կալ ինձ 'ի բացեայ, զի մի
գուցէ յանկարծել ձերում 'ի դէմս և 'ի կասկած այնա-
ցիկ՝ որք անմթապարտ զեղխութեամբն կշտամբիցին,
ես ինքնին ականաւոր նոցին որպէս թէ յանդիմանի-
ցեն զնոսա ։ Եթէ չինուածապետքդ՝ արք հօյակապք՝
կանխէին հարցանել զիս, թերեւս համարէի անսալ առ-
նել զյառաթիւնան աննչցեալս և արմատացեալս, քան

յանձնիշխանութեան՝ զի յայտնի լիցի զօրաց եղեռնաւորաց աղէ-
կարգութեանցն զդէմ ունելոյ:

Այլ նոքա ապառաժին զգայութեամբ պաշտպանեալ իւրեանց կատարեցին, որպէս կամէին զի և այլք յաւատոց զիւրեանցն ընդունին: Իսկ ինձ արդ ոչ արժան է լսել, և ոչ զիւրեանց բարբառել. զի ոչ զխնամակալութեան, ոչ զզանձակալեալ և ոչ զդէմս կրեմ զդրդեցելոց. մեծագոյն ինչ և բարձրագոյն խնդրի յինքնակալէ. զի ոչ զյաղթութեանց իւրաքանչիւր որ ամենայն ընծայէ զփառս, մեղադրանք ամենայն զնոցա անկանին: Զի զօ՞ր ինչ նոցա ակնայց արգելուլ, և յառաջին կարգն զարձուցանել. զամբարտաւանից անօրէն ընդարձակութիւն. զապատաւորաց ազգ ազգ և զբազմութիւն. զարծաթոյ և զոսկւոյ կշիռ, զպղնձոյ և զառատագոյն հրաշակերտս, զարա՞նց իւրև զկամաւորաց ամենայն հանդերձանին, թէ զկանանց պատճառ ականակուռ արկանելիս՝ որով զանձք մեր 'ի տար աշխարհս առ թշնամիս մեր անցանեն զնան:

Գիտեմ իսկ զի 'ի խորախնամս և 'ի ժողովս առաքանին այսորիկ, և խնդրին հնարք ուղղութեան. այլ եթէ որ օրէնս դիցէ, տոյժս եթէ սահմանեսցէ, նոքին իսկ բողոքեսցեն՝ որպէս կործանումն այնուիկ Հռովմայ և կորուստ մեծապայծառ որերոյ ածեալ, և ոչ զոք անփոյթ 'ի չարեաց թողեալ: Սակայն, և ոչ մարմնոյ ախտք 'ի պատուելն և 'ի զայրանալ՝ առանց սաստիկ և դառն դեղոց ապաքինին. այսպէս և հրատարակ ախտաժէտ հոգին, որ ապականեալ և զայլս ապականէ. ոչ շիջանի դեղովք նուազ զօրաւորաց քան զախտաբեր ցանկութիւնն՝ որով տոչորի: Այնչափ 'ի նախնեաց մերոց օրէնք հնարեալք, այնչափ և զօրս դիւցազնն Աւգոստ օրինադրեաց, այնոքիկ 'ի մոռացօնս անկան, և այսոքիկ՝ որ չար ևս են է՝ արհամարհեալ խափանեցան, և առաւել ևս համարձակութիւն ետուն զեղխութեան. զի որ զչև արգելեալն կամի, խիթայ ևս զի մի արգելցի. իսկ որ զարգելեալն առ ոտն կոխէ անպատուհաս, ոչ ևս երկիւղ 'ի

Digitized by Google

նմա և ոչ ամօթ անդի գտանէ։ Ահ ի՞նչ պանծալի երա-նելի էր խնայութիւն. զի ամենայն ոք զանձն 'ի չափա-ւորէր, զի միոյ քաղաքի էաք քաղաքակիցք. և ոչ 'ի տի-րել մերում Իտալիոյ՝ ցայս վայր զառածեալ էին հրա-պոյրք. արտաքին յաղթութեամբք զայլոց սովորեցաք վատնել, զմերսն ներքինովք։ Քանի՜ դուզնաքեայ, քանի՜ թեթև թուեցին՝ զորոց շինուածապետաց բողոքեն, եթէ այլուր զուշս դարձուցանիցեմք։ Զի՞նչ ոք՝ որում փոյթ իցէ առնել թէ Իտալիա նպաստից արտաքուստ կարօտի, թէ կեանք ժողովրդեան Հռովմայ ընդ արկածս ծովու և մրրկաց ծփին, և եթէ ոչ պտղաբերութիւն գաւառաց հասցէ յօգնութիւն տերանց և ծառայից և անկեր մե-րոց անդաստանաց, ոչ անտառք մեր և ոչ հովոցք կե-րակրեսցեն զմեզ։ Այս հոգ՝ ինքնակալին թողեալ է, Հարք ատենակալք, և յապախտ առնել նորա զայս՝ հիմն 'ի վեր տապալեսցի հասարակապետութիւնն։

Այլոց չարեաց անդստին 'ի նոցունց պատրաստի դար-ման. զմեզ ամօթ, զաղքատս հարկ, և զմեծատունս յագուրդ՝ ածէ 'ի լաւ անդր. իսկ եթէ ոք յուսացանիցէ այնքան բերէ յանձին ճարտարութիւն և աստ զզէմ ունելոյ չարեացս, գովեմ զնա, և շնորհ ունիմ զի զհոգ իմ թեթևացուսցէ։ Իսկ որոց միանգամ կամք իցեն կշ-տամբել ներ գյոռութիւն, և զփառս այնուիկ ժառան-գեալ՝ գրգռեն զնեա, և յիս զրեան զամենայն ատեն ապատան. յայտ լիցի ձեզ, Հարք ատենակալք, զի և ոչ ինձ կամք են թշնամութեանց լինել ձայնատուր. զի ուր ծանուսս, և բազում այն է՝ զի և անիրաւս կրեմ ես վասն հասարակապետութեան. խրատեմք խնայեմ զանձն յայնցանէ՝ որ ոչ ձեզ և ոչ ինձ իցեն յօգուտ։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

Digitized by Google

## ԽՕՍՔ ԳԵՐՄԱՆԻԿԵԱՅ ԱՌ ԶՕՐՍ ԻՒՐ Ի ՄԵՌԱՆԵԼ ԱԳՐԻՊՊԻՆԱՅ ԱՌ Ի ՆՄԱՆԷ

Զեն ինձ հարան և որդի քան զհայր և քան զհայրենիս սիրելագոյնք. այլ հօր խնամ փառք իւր, և ինքնակալութեան Հռովմայ իցեն այլ բանակք՝ որ պաշտպանեսցեն նոցա։ Զկին և զորդի, զորս 'ի փառս ձեր սիրելի էր ինձ նուիրել, զերծուցանեմ 'ի մոլեգնելոց. որպէս զի որ առաջին կայ ոճիր՝ խնովս ևեթ արկանի քաւեսցի, մի մահուամբ Թոռինն Աւգոստեայ և սպանմամբ նորայն Տիբերի պարտաւորապագայնք զատանիցէք։ Զի զի՞նչ յաւուրս յայսոսիկ ոչ իշխեցիք գործել, զի՞նչ ոչ առ ոտն կոխել։ Զի՞նչ կոչեցից զձեզ, զօրակա՞նս, որք զորդի ինքնակալին ձերոյ շուրջ պաշարեցիք զինուք. քաղաքացի՞ս, որք 'ի բաց մերժէք զիշխանութիւն ծերակուտին, որք զթշնամեաց իսկ իրաւունս, զսրբութիւն հրեշտակութեան, և զօրէս ազգաց լուծիք. Դիւցազնն Յուլիոս միով բանիւ զապստամբութիւն բանակին ցածոյց, Կուիրինեանս ձայնելով զայնոսիկ՝ որք երդմնազանցքն լեալ էին. և դիւցազն Աւգոստոս տեսոտիւ ևեթ զիմացն և ակնարկութեամբ զլեգէոնսն ակտիականս ահացոյց։ Թէպէտ չև եմ հաւասար նոցին՝ այլ նոցին սերունդ եմք և մեք. զոր սպանիացին իսկ և ասորին զօրական թէ արհամարհէր՝ զարմանք թուէին և զժպհի. իսկ դուք առաջին և քսաներորդ լեգէոնք, մինդ զրօշս 'ի Տիբերեայ ընկալեալ, և միւսդ 'ի բազում պատերազմունս մարտակից նմին, և այնքան մրցանակօք 'ի նմանէ ճոխացեալ, զայդ պերճ փոխարէն զօրավարիդ ձերում հատուցանէք։ Զա՞յս ուրեմն մնայ ինձ ածել առ հայր իմ զրոյց, (մինչդեռ 'ի գաւառաց առ հասարակ ընդունի զրոյցս աւետաւորս), զի նորին իսկ զօրք՝ նորին իսկ հինաւուրց զօրական՝ ոչ շատ համարին զարձակուրդ և զմրցանակ, և աստ ևեթ գործին սպանութիւնք հարիւ-

Digitized by Google

բանակեաց, մերժումն հազարապետաց, բռնաբարու-
թիւն՝ պատանդամաւորաց. առառ պատանէչք: և զէնք ա-
րեամբ ներկեալ, առ իբրև 'ի մէջ թշնամեաց միայն ինձ
ժամ 'ի ժամ սպասել մահու:

Ընդէ՛ր յառաջնումն իսկ աւուր առանձինն ոչ թողէք ձը-
գել ինձ 'ի կող զերկաթն զայն, բարեկամքդ խորհրդա-
կորոյսք. բարեկամագոյն քան զձեզ էր և բարերար՝ որ
տուեալ ինձ մատուցանէր: Զի լաւ էր ինձ մեռանել
յայնժամ չև զայսքան եղերուկս զօրացն իմոց տեսեալ.
և ընտրեալն 'ի ձէնջ զօրավար թողոյր արդեօք անպա-
տուհաս զիմ մահ, այլ զվարուսի և զերեցունց լեգէո-
նացն խնդրել խնդրէր զվրէժ: Մի՛ ներեսցեն դիք յա-
փըշտակել Բելգացւոց, որ պատրաստ կան, զփառս և
զպարծանս ձեռնտուութեան հռովմէական պետութեան
առ 'ի նուաճել զազգս Գերմանիոյ: Հոգի քոյին աստուա-
ծարեալ, դիւցազնդ Աւգոստէ, և պատկեր քո, հայր
իմ Դրուսէ, յիշատակ քոյին, զզօրականքս՝ որ զամօթի
հարեալ կայ, 'ի սէր փառաց՝ քաւեսցեն զքիծ, և 'ի կո-
րուստ թշնամեաց շրջեսցեն զզայրոյթ քաղաքական: Իսկ
դուք, զորոց փոխեալ արդ նկատեմ զդէմս և զսիրտ,
եթէ ծերակուտին՝ զհրեշտակս, հնազանդութիւն՝ զօրա-
վարիդ, և ինձ՝ զկին և զորդի կամիք հատուցանել, մեկ-
նեցարուք, 'ի բաց կացէք 'ի խռովարարաց այտի. այդ
առհաւատչեայ ապաշխարանաց, այդ իսկ հաւատարմութեան
ձերոյ լիցի գրաւական:

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք:

## Մ. ՏԵՐԵՆՏԻՈՍ ՎԱՍՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՍԵՅԱՆՈՍԻ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԷ ՎԱՍՆ ԱՆՁԻՆ

Մեծապէս վտանգաւոր չարիք էին այնց ժամանակաց, յանդգնագոյն բուռն ամբաստանութիւնք 'ի գործ արկանել գլխաւորաց ծերակուտին, կիսոց յայտնապէս, և բազմաց 'ի ծածուկ: Ոչ ինչ էր խտիր ընդ օտար և ընդ ազգական, ընդ բարեկամ և ընդ անծանօթ, ընդ նորագէտ ինչ և ընդ վաղեմի: Որ ինչ 'ի հրապարակի, որ ինչ 'ի խրախուճս՝ զիմնէ իմեքէ խօսեցեալ՝ ելանէր յատեան. այլ քան զընկեր փութայր կանխել ցուցանել զոք յանցաւոր. կէսք 'ի պաշտպանութիւն անձանց, և առաւելագոյնք օրինակաւ այլոց որպէս 'ի ժանտախտէ բռնականեալ: Բայց Մինուկիոս և Սերուէոս դատապարտեալ, յանձն առին 'ի վեր հանել զդաւակցութիւն. 'ի նոյն ստիպեցան և Յուլիոս Ափրիկանոս 'ի Սանտոնեայ քաղաքէ Գալլիացւոց, և Սէոս Կուադրատոս, զորոյ ոչ գտի զբնագաւառ: Գիտեմ զի բազումք 'ի պատմագրաց լռեն զյոգունց այլոց զվտանգ և զպատուհաս, պարտասեալք 'ի յաճախութենէ նոցա, և կամ առ 'ի հոգալոյ ընթերցողաց զծանր և զտխուր տաղտկութիւն՝ կրեալ յինքեանց. այլ մեզ թուի բազում ինչ արժանի գիտելոյ, թողեալ յայլոց անյիշատակ:

Զի 'ի նմին ժամանակի, յորում այլք ուրանային զբարեկամութիւն Սէյանոսի, Մ. Տերենտիոս ասպետ հռովմայեցի ամբաստանեալ 'ի նոյն՝ խոստովան եղև զայն, այսպէս առ ատենակալս բարբառեալ. Առաւել արդեօք՝ օգնէ ինձ 'ի յաջողութիւն յուրաստ կալ քան խոստովան լինել զյանցանս իմ. այլ որ ինչ և ելք իրացն դիպիցին, խոստովանիմ բարեկամ լեալ Սէյանոսի, ցանկացեալ բարեկամութեան նորա, և 'ի գտանելն զայն՝ ուրախ լեալ: Տեսի զնա ընդ հօր իւրում ոստիկան ատենական զօրաց և ապա 'ի քաղաքական և 'ի պատե-

բազմական պաշտամունս հասեալ. ազգականք նորա և մերձաւորք ամբառնային 'ի բարձ և 'ի պատիւ, և որ ոք Ստեփանոսի էր բարեկամ՝ շնորհս առ ինքնակալին գտանէր. իսկ որոց թշնամի էր նա՝ կային յերկիւղի և 'ի թշուառութեան։ Ոչ զոք ածից յօրինակ. իմով ևեթ վտանգաւ պաշտպանեցից ամենեցուն, որ անպարտք եմք յեղեռանէ յետին դաւոյն։ Զի ոչ Վոլսենացւոյն Ստեփանու սպաս հարկանէաք, այլ մտօքն կլաւդեան և յուլեան ազգատոհմից՝ յորս խառնեալն էր խնամութեամբ քումդ փեսայի, Կեսար, քումդ իշխանակցի 'ի բդեշխութեան, 'ի քէն կարգելոյ 'ի յանձանձանս հասարակապետութեան։ Ոչ է մեզ դատել զոր 'ի վերայ այլոց և վասն էր կացուցանես։ Քեզ զգերագոյն իշխանութիւն ետուն դիք, մեզ միան փառք հնազանդելոյ։ Տեսանեմք մեք որ ինչ յայտնապէս աչաց մերոց ընծային, ժամ 'ի քէն գանձք և պատիւք, և ո՞յց ումանց առաւելագոյն իշխանութիւն բարերարելոյ կամ վնասելոյ շնորհեալ. և ոչ ոք ուրանալ կարասցէ զՍտեփանոսի շնորհիս այսմիկ հանդիպել։ Զգաղտնի խորհուրդս իշխանին և որ ինչ պատրաստէ նա զանխուլ՝ ոչ է արժան հետազօտել, երկրայելի իսկ է և վտանգաւոր, և ոչ իսկ յաջողէ։ Հայրք ատենակալք, մի զվերջին ևեթ աւուրս Ստեփանոսի առաջի աչաց ունիջիք, այլ զվեշտասան ամս. մեծարէաք և զՍատրիոս և զՊոմպոնիոս ձերբազատս իսկ և բարապանս նորա գոլ՝ պատիւ մեծ համարէր։ Զի՞նչ ապա. պաշտպանեսցէ՞ այս ամենեցուն անխտիր. քա՛ւ լիցի. այլ 'ի խտիր արդար սահմանեալ, պատուհասեսցին դաւանակալութիւնք հասարակապետութեան և դաւակցութիւնք ընդդէմ ինքնակալին. այլ բարեկամութեան և մեծարանացն Ստեփանու ելք՝ և զքեզ քաջդ արանց և զմեզ անպարտ արձակեսցեն։

Վստահութիւն բանիցն, և այն զի գտաւ ոք որ յայտ առնէր որ ինչ յածէրն 'ի սիրտս ամենեցուն՝ այնպէս ազդոյ եղև, զի շարախօսք նորա ըստ չարեացն յաւա-

Digitized by Google

ջլացոյն գործեցելոց՝ աքսորանօք կամ մահուամբ պատուհասեցան։

ՏԱԿԻՏՈՍ. Տարեգիրք։

---

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՅԻՇԽԱՆՆ ԳՈՆՏԷ

Չի հարկ է խօսել միանգամ զիրացն զորոց յաւիտեան լռել կամէի, մինչև 'ի բանտարգել կալանսն՝ և ոչ ընդ միտ անգամ ածեալ էր նորա թէ իցէ բնաւ համարձակել յապիրատ ինչ ընդդէմ տէրութեան. և 'ի մեծի անդ պատուհն՝ եթէ ցանկայր ինչ շնորհաց, առաւել ևս արժանի լինել ցանկայր։ Այս իսկ տայր նմա ասել. — մարթի ինձ աստանօր առաջի սրբոց խորանացս կրկնել զբանսն զորս իմ իսկ լուեալ է 'ի բերանոյ նորա, քանզի զխորս սրտի նորա յայտ 'ի վեր հանեն. — այդ յորժամ բանք անկանէին զողորմ բանտարգելութենէն, ասէր, թէ անյանց քան զամենեսին մտի անդր, և ելի յանցաւոր քան զբնաւս։

Եղո՜ւկ. ածէր թափէր նա, իմ չունչ և կեանք՝ ծառայութիւն արքային էր և տէրութեանն բարգաւաճանք։ Էր 'ի բանս նորա տեսանել զանկեղծ ապաշաւ ընդ ցայն վայր մղել արկանել անբախտութեան իւրոյ զինքն։ Բայց առանց արդարացուցանել նկրտելոյ՝ զոր նա ինքն համարձակաձայն դատապարտ արար, առ չխօսելոյ բնաւ զայնմանէ՝ ասասցուք, թէ զոր օրինակ 'ի մշանջենաւոր փառսն՝ սրբոց ապաշխարելոցն յանցանք, ծածկեալք յորոց արարինն 'ի քաւութիւն նոցին, և յանբաւ փառաւորութենէ աստուածեղէն ողորմութեանցն, ոչ ևս երևին այնուհետև, այսպէս 'ի յանցանս յայս սերտիւ խոստովանեալս և ապա այնպէս ճոխաբար քաւեալս հաւատարիմ ծառայութեամբք, չէ արժան

յայլ ինչ հայել՝ բայց 'ի խոնարհ խոստովանութիւն իշխանիս զղջականի, և 'ի գթութիւն արքային մեծի՝ որ մոռացօնս արար նոցին։

ՊՈՍՍԻՒԷ. Դամբանականք։

---

## ՅԱՂԱԳՍ ՎՏԱՆԳԱՑ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՄԵԾԱՑ

Կոստանդիանոսք և Թէոդոսք տեսին երբեմն զսէր իւրեանց առ Եկեղեցի՝ շրջեալ հակառակ Եկեղեցւոյ, և նախանձու ճշմարտութեան՝ ձեռն տուեալ մոլորութեան։ Իշխանաց, Տէր արքայ, չէ արժան ձեռն 'ի կրօնսն կարկառել, բայց եթէ 'ի հովանի լինել և պահպանել զայն. եռանդն նոցա անդ միայն օգուտ է Եկեղեցւոյ՝ ուր 'ի հովուացն խնդրիցի։ Ի խնդիրս վարդապետութեան՝ միայն փոյթ և խնամ աւանդակրաց վարդապետութեանն զօրեղ է առ նոսա. այլ ամենայն ձայն արտաքոյ միաբան ձայնի հովուաց՝ կեղակարծ առ նոսա լինիցի։ Ատ կալցին անձանց միայն զպատիւ պաշտպանութեան, և զվճռոյ և զդատաստանի՝ թողցեն 'ի նոսա։ Հպատակ իւրեանց են եպիսկոպոսք, այլ ըստ հաւատոցն՝ հարք են նոցա։ Ծնունդ նոցա ընդ իշխանութեամբ գահուն արկանէ զնոսա, այլ 'ի խորհուրդս հաւատոց՝ իշխանութիւն աթոռոյն փառս անձին համարի հնազանդել իշխանութեան Եկեղեցւոյ։ Թագաւորք չեն ինչ այլ, բայց առաջին մանկունք նորա. և թագաւորքն մեր միշտ 'ի մեծ պարծանս թագին իւրեանց համարեցան զանուն անդրանիկ որդւոյ նորա։ Ոչ այլ ինչ իրաւունք են նոցա՝ բայց միայն տալ 'ի կատարումն ածել զհրամանս նորին, և կանխելով 'ի հպատակութիւն՝ լինել այլոց հաւատացելոց օրինակ հնազանդութեան։ Յորժամ կամեցան ա-

Digitized by Google

պարթանել անդր քան զսահմանդ անցանել, և յափշտակել զվարդապետութեան իրաւունս՝ զքահանայութեանն պահեստ, զայրացուցին զվէրս Եկեղեցւոյ, թող թէ չբժշկեցին. ամբարտաւան միջնորդութիւնք նոցա՝ նորանոր վէրս գործեցին, և ծնան ոճիրս նորանորս: Ամենայն հնարողութիւնք հաշտութեան 'ի խաղաղել զոգիսն ապստամբութեան և ածել 'ի միութիւն, համարձակեցուցին զնոսա յերկպառակութիւն և յստամբակութիւն. և իշխանութիւն նոցա՝ 'ի միջնորդելն միայնակ առ 'ի մօտելոյ զնոսա 'ի ճշմարտութիւնն՝ յաւերժացոյց հանապազ զմոլորութիւնսն: Գոյ նոցա պար առնուլ զտապանակաւն և պահպանել իբրև զԴաւիթ, այլ ոչ ձեռն 'ի նա արկանել: Կառուցեալ կայ գահն 'ի նեցուկ և յապաւէն սրբոյ վարդապետութեանն, բայց ոչ արժան ոչ պատշաճ նմա՝ լինել այնմ օրէնս, և ոչ ատեան՝ ուստի վճիռք նորա ելանիցեն:

Ո՜հ, եթէ կարիք և շահասիրութիւն մարդկային շպաշարէին զգահն, բարեպաշտութիւն արքայից լինէր անշուշտ՝ աներկևան յոյս Եկեղեցւոյ. բայց բազում այն է՝ զի զկրօնասիրութիւն նոցա հակառակ նոցին իսկ շահու դրդեն 'ի գործ, կամ սնոտի պատճառանօք նոցա՝ տան զհակառակսն կրօնից գործել:

ՄԱՍԻԼՆՈՆ. Փոքր քառասնորդք:



Digitized by Google

# ՎԵՐՋԱԲԱՆՔ

## ՊԱՏՈՒԷՐՔ ՅԱՂԱԳՍ ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի բեմական կամ 'ի վարդապետական ճարտասանութեան, ուր անկ է առաւել ըղձակերտ առնել ունկընդրաց զճառն և շարժել զսիրտս նոցա, վերջաբանութիւն էական մասն է ճառին. զի նա զյետին մղումն տայ ոգւոց, և ձգէ զկամս և զմիտս յօժարութեան ազատ ունկնդրաց: Ոչ նոյն կարևորութիւն է յատենական ճարտասանութեան, ուր պարտ է դատաւորի յանձին բերել զդէմս օրինաց, ուր ոչ զկամս 'ի յօժարութիւն՝ այլ զմիտս 'ի հաւանութիւն խնդրի ածել: Այլ զի մարդ է և դատաւորն ինքնին, չիցէ անօգուտ ըղձակերտ առնել և զնա 'ի նպաստ անմեղութեան և տկարութեան, արդարութեան և ճշմարտութեան. և վերջաբան սրտաշարժ չէ ինչ անարժան ճարտարխօսութեան, եթէ չիցէ 'ի կիր արկեալ 'ի յաղթանակ անիրաւութեան ստութեան և եղեռան:

Ի ջատագովութեան (յորում յոչինչ համարի զգացումն, վասն որոյ և ծաղրելի իմն է հանդէս առնել անդ սրտաշարժ ճարտասանութեան), պարտ է վերջաբանութեան գոլ համառօտ բովանդակութիւն առաջարկութեան ճառին. այս ինքն ամփոփել անդ զմասունս սփռեալս և լուսաբանեալս յընթացս ճառին, յուշ ածելով ունկընդրաց զայնոսիկ 'ի ժամ վճռոյն. և յօրինի վերջաբանս այս՝ կամ անցանելով ընդ ծայրս իրաց և մի ըստ միոջէ 'ի համար ածելով, և կամ անդրէն 'ի մէջ ածեալ զբա-

Digitized by Google

ժամանումն ճառին և բացատրելով զնիւթս պատճառաբանութեանց՝ որ զմասանց իւրաքանչիւր գլխաւորաց տարաբեալ։

Լաւ ևս է, ասէ Կիկերոն, 'ի մէջ ածել անդրէն սուղ բանիւ զպատճառս հակառակորդին, և որովք այնոքիկ հերքեալ իցեն և եղծեալ։ Ըստ այսմ օրինակի՝ ոչ զապացոյցս ևեթ ճառին, այլ և զհերքումն փաստից հակառակորդին յուշ ածեալ ունկնդրաց, իրաւունք իցեն ատենախօսին հարցանելոյ զնոսա թէ խնդրիցե՞ն այլ ևս ինչ, և կայցէ՞ մնայցէ՞ ինչ այլ առ 'ի լուծանել, կամ տարակոյս առ 'ի փարատել։ Կանոնն հանրական, զոր տայ Կիկերոն վասն այսր համառօտ բովանդակութեան ճառին, է առ 'ի յուշ ածել անդրէն զկարևոր ևեթ մասունս, և առ 'ի տալ իւրաքանչիւրոց յայնցանէ առաւելագոյն զօրութիւն, այլ ըստ կարի նուազ ընդարձակութիւն. որպէս զի ոչ ճառն նորոգեալ թուեսցի, այլ յիշատակ նորին։

Արագ արագ թուումն մասանց, սեղմ երկայրաբանութիւն, ձեռնարկութիւն՝ որ ամփոփէ զդատն ողջոյն 'ի մի կէտ տեսութեան, բաւէ ոչ դաւն ուրեք 'ի վերջաբանութիւն։ Գեղեցիկ օրինակ է առ այս Նասոյն առաջարկութիւն սահմանելոյ՝ Ուղիսեայ՛ թէ իւր անկ իցեն սպառազինութիւնք Աքիլլեայ. « Արկցին 'ի մէջ թշնամեաց զէնք դիւցազինն, և հրամայեսցին մեզ գնալ առնուլ զայնոսիկ. և որ ոք յիւրաքանչիւրոց ածցէ զնոսա, նա ինքն նոքիմբք վարեսցի »։

Այլ եթէ դատն ինքնին՝ 'ի բնէ տայցէ տեղի սաստիկ իմն ճարտասանութեան, քաղուածն այն՝ զոր Կիկերոն կոչէ Թուումն մասանց, պահանջէ զհետ իւր կիրս իմն ճարտասանական ցասման կամ կարեկցութեան։ Ցասումն է ատելի կացուցանել զանձն կամ զդատ հակառակորդին, և պարտ է նմա յառաջ գալ 'ի հանգամանաց՝ որ ծանրացուցանեն զդատն. իսկ վերջաբանութիւն աղերսական, զոր Կիկերոն կոչէ ողբոց, է առ 'ի շարժել զուն-

Digitized by Google

կլնդիրս 'ի կարեկցութիւն։ Պարտ է, ասէ նոյն ինքն, ողոքել նախ զոգիս և պատրաստել 'ի գութ. և հնարք՝ զորս պարտ է 'ի կիր առնուլ առ այն, հայթայթին յընդարձակ տկարութենէ մարդկան, և 'ի զօրութենէ բաղդին՝ որում եմքս խաղալիկք ամենեքին։ Արդ յածել 'ի մէջ զտեսութիւնս զայսոսիկ ծանր և բազմիմաստ ոճով, ասէ վարժապետս այս ճարտարխօսութեան, ցածնուն միտք մարդկեղէն և ածին 'ի կարեկցութիւն՝ նկատելով զանձանց տկարութիւն յաղէտս նմանեաց իւրեանց։

Այլ ընդ առնուլ 'ի միտ զշարժումն սրտի ունկնդրաց՝ ոչ ևս պարտ է, ասէ Կիկերոն, յերկարել զողբս. զի ըստ բանից Ապոլոնեայ ճարտարախօսի՝ Ձիք ինչ որ արագ քան զարտասուս ցամաքեսցի։

Օրինակ հոգեշարժ վերջաբանութեան է այն, զոր Կիկերոն առնէ յատենաբանութեան իւրում 'ի ջատագովութիւն Միլոնի։ Անդ ճարտարախօսն աղերսաբանութեամբ փրկէ զամբաստանեալն 'ի խոնարհելոյ յաղաչանս, և պահէ նմա զամենայն արժանապատուութիւն՝ որ անկ է առն ուսագի 'ի չարաբաստութեան։ Այլ գեր 'ի վերոյ քան զաղերսաբանութիւն է ցասումն նախակարգեալ անդ, յորում ցուցանէ նա անօրինակ ճարտարխօսութեամբ զի եթէ Միլոնի դարանեալ էր կենաց Կլոդիոսի, պարտ էր հասարակապետութեան փոխանակ պատուհասելոյ զնա՝ շնորհ ունել նմա։

Ի վարդապետական ճարտասանութեան է նպատակ ինչ շարժման սրտի 'ի վերջաբանին, որ բաղխոհական ճառից ևեթ պատկանի. այսինքն է շարժել զսիրտս ունկնդրաց 'ի կարեկցութիւն անձանց և 'ի գարշումն յիւրեանցն ախտից, կամ յարհաւիրս ընդ վտանգ անձանց։

Դուն ուրեք պատահէ ճարտարախօսի քրիստոնէի ջատագովել զդատ բացակայից. բայց միայն 'ի խօսելն զաղքատաց և զորբոց՝ որպէս Վինկենտ Պաւլայեցի, յորժամ ասէրն առ բարեպաշտ տիկնայս ունկնդիրս իւր.

Digitized by Google

Հապա տիկնայք, կարեկցութիւն և գութ ետուն ձեզ ընդունել յարդեգիրս զմանկտիդ. եղերուք դուք դոցա ըստ շնորհաց 'ի մայր, 'ի լքանել թողուլ զնոսա մարց իւրեանց ըստ բնութեան։ Տեսէք արդ թէ լքանիցէք զնոսա և դուք. դադարեցէք 'ի պահուս 'ի գոլոյ Նոցա մայր՝ առ 'ի լինել Նոցա դատաւոր։ Մահ Նոցա և կեանք են 'ի ձեռս ձեր։ Սկսայց առնուլ զկարծիս և զքուէայս. ժամ է արդ տալոյ զդատակնիքն, և յայտ առնելոյ եթէ ոչ ևս կամիք ողորմել Նոցա։ Կեցցեն Նոքա՝ եթէ կամիցիք հանապազորդել Նոցա զգթառէր խնամս ձեր, և մեռցին՝ եթէ փակիցէք 'ի Նոցանէ զգութս ձեր։

ՄԱՐՄՈՆԹԷԼ

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ
## ՅԱՂԱԳՍ ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՄԵԾԱՄԵԾԱՑ

Ամենակալ Տէր, պահապանդ մանկութեան թագաւորաց, մանաւանդ որբացեալ թագաւորաց, մերժեա զամենայն զհարբս զայսոսիկ 'ի մեծազին մանկանէս՝ զոր պահեցեր մեզ յողորմութեան քում։ Կարէ կարդալ առ քեզ որպէս երբեմն արքայն ըստ սրտի քում. Հայր իմ և մայր իմ թողին զիս։ Այն ինչ բացեալ իմ զաչս 'ի լոյս, անդէն մահ կանխահաս փակեաց զաչս Ադելայդի, որ տարաւ զիս յարգանդին, որոյ և սիրելի և մեծաշուք տիպք կերպարանացն նկարեալ կան յերեսս իմ. Նոյնպէս և զբարեպաշտօն արքայազին՝ որ հայրն է կենացս, որոյ և աստուածասէր իմաստք դրոշմեցին անջինջ 'ի սրտի իմում. Հայր իմ և մայր իմ թողին զիս։ Այլ դու, Տէր, որ հայրդ ես թագաւորաց և Աստուած հարցն իմոց, ընդ քոյով պահպանութեամբ առեր զիս, և 'ի հովանի թևոցդ և հայրագորով խնամոցդ ծածկեցեր զիս. Եւ

Digitized by Google

Տէր ընկալու զիս․ Մեծանձնդ Տէր, պահեա արդ զանմեղութիւն իւր իբրև զգանձ մեծարգի քան զթագն, զարգացո զայն ընդ հասակին․ ա՛ռ 'ի ձեռաց զսիրտ նորա, և անսուրբ հուր հեշտ ցանկութեան մի՛ երբեք պղծեսցէ զսրբարանն՝ զոր 'ի յաւիտենից քեզ սեփականեցեր․ Պահեա զամբծութիւն․ Հայեաց 'ի սերմանս ուղղութեան և ճշմարտութեան՝ զոր վարեցեր 'ի հոգի նորա․ 'ի միտս արդարութեան և իրաւանց՝ որ օր ըստ օրէ բարգաւաճին և ընդարբոյս բնածին թուին 'ի նմա․ 'ի դեռաբողբոջ ատելութիւնն առ խորամանկութիւնս և ստաբան զովեստս շողոմարարին․ և մի՛ տար երբեք թոյլ մարդահաճութեան՝ ապականել զբարեգուշակ նըշանս հանդերձեալ երջանկութեան մերոյ։

Թագաւորեսցէ 'ի մեր բարեպաշտութիւն, և 'ի փառս իւր լիցի թագաւորեալ։ Փառասիրութիւն իւր եղիցի միայն երջանկացուցանել զհպատակսն․ պարծանք իւր սիրելի քան զամենայն՝ լիցի անուն բարերար և խաղաղասէր թագաւորի․ այնչափ ևեթ մեծ եղիցի, որչափ սիրելի ժողովրդեան իւրում։ Ամենայն թագաւորաց բարեաց՝ կացցէ օրինակ, և խաղաղարարս այս իշխան՝ թողցէ ևս զհետ իւր իշխանս նմին նմանս․ Զի գոն մնացուածք առն խաղաղարարի։ Ընկալ, ո՛վ Տէր, զուխտս մեր զայսոսիկ, և լիցին մեզ առհաւատչեայ խաղաղութեան այսր կենացս, և յոյս հանդերձելոյն․ Ամէն, եղիցի։

ՄԱՍԻԼԵՈՆ․ փոքր Քառասնորդք։

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԿՐՕՆԻՑ

Թագաւորքն սուրբք որոց անուանքն գրեալ են 'ի յիշատակարանս մեր, լինիցին ցանգ մեծամեծար շուք

թագաւորութեանն, և շքեղ օրինակք դարուց 'ի դարս ուանդեալ յաջորդացն իւրեանց։

Զառաջին հայեցուածս աչաց քոց, Տէր արքայ, պչուցեալ է 'ի վարս բարեպաշտիցն այնոցիկ արքայից՝ քոյոց նախնեացդ. հանապազօր եռանդն ածեն քեզ յառաջանութիւն 'ի ձեռն մեծազօր օրինակացն։ Յիշեա զմեծն Կարոլոս և զԼուդովիկեն սուրբ, որ պայծառացուցին զճաճանչ թագիդ զոր կրես՝ աննղծական փայլմամբ արդարութեան և բարեպաշտութեան. և զայս յեղյեղեն զօր հանապազ յունկն մեծութեանդ՝ զգօնութեան խրատք։ Մի՛ և այդչափ իսկ 'ի վեր ելանէր. մերձ են յօրինակս կարևորս քեզ՝ որպէս և սիրելիս, և 'ի մօտաւորն ականէ բղխէ յերակս քո բարեպաշտութիւն՝ ընդ արեան հօր բարեպաշտի և մեծաշուք հաւու հօրդ։

Դու միայն ես, Տէր արքայ, գահու նոցին պայազատ, իցէ՞ թէ և առաքինութեանցն լինիցիս. իցէ՞ թէ մեծապանծ օրինակքդ կենդանացին 'ի քեզ նմանութեամբ առաւել քան անուամբք. իցէ՞ թէ լինիցիս և դու օրինակ յաջորդացն քոց թագաւորաց։

Եթէ գութ գորովոյ մերոյ ոչ պատրէ զմեզ, եթէ մանկութիւն այնքան խնամովք և ընդ այնպիսի ճարտար ձեռաք դաստիարակեալ, յորում բնութեան ազնուականութիւն քան զկրթութեանն կանխել յառաջել թուի զօր ամենայն, ոչ յընդունայն ըղձապատում գուշակութիւնս հանէ զտենչանս մեր, այժմէն իսկ ահա երևի մեզ այսպիսի յոյս, այժմէն տեսանեմք ցոլացեալ 'ի հեռաւոտ զառաջին նշոյլս հանդերձելոյ բարեկենդանութեան, այժմէն նախնեացդ փառաւորութիւն նկարեալ 'ի ճակատդ աւետաւորէ մեզ զմեծամեծ բարեմասնութիւնսդ։ Այդ՝ ո՛ տայր, Տէր արքայ, — և այս խղձ բովանդակէ զամենայն — ո՛ տայր թէ յաւուր միում այնպէս մեծ լինէիր, որպէս եսդ մեզ սիրելի։

Մե՛ծդ Աստուած, եթէ այս իմ ևեթ ուխտք և խնդրուածքէին, վերջինք անշուշտ՝ զորս պաշտօնն իմ, կա-

պետալ այսուհետև՝ գաղտնի խորհրդովք տեսչութեանդ՝ 'ի հոգս միոյ յեկեղեցեացդ քոց, ներէ ինձ մատուցանել քեզ 'ի վեհափայլ տեղւոջս, եթէ իմ միայն ուխտք և պաղատանք էին այսոքիկ, ո՛հ, ո՛վ եմ ես՝ զի յուսացայց թէ ելանիցեն մինչև յաթոռ քո. այլ աղերսք են այսոքիկ թագաւորացն որբոց՝ որ հովուեցին պետութեանս. և արկեալ զխոյրս իւրեանց առաջի յաւիտենական սեղանոյն առ ոտս գառինն, խնդրեն 'ի քէն վասն մեծաշուք մանկանս զպսակն արդարութեան, որում ինքեանք եղեն արժանի: Աղերսք են մանաւանդ բարեպաշտօն արքայազինն՝ ծնողի սորա, որոյ անկեալ՝ որպէս յուսամքս՝ յերկիւս առաջի երեսաց փառաց քոց, անլռելի պաղատի 'ի քէն՝ միոյ միայնոյ ժառանգիս թագին իւրոյ՝ լինել ևս ժառանգ շնորհացն և ողորմութեանց՝ որովք առ նա ինքն կանխեցեր յառաջագոյն:

Աղերսք են ամենեցուն սոցա իմոց ունկնդրացս, որոց հաւատացեալ զխնամս մանկութեան սորա, կամ կապեալք անընդմիջելի ընդ վեհափառ անձին իւրում, ածեն առաջի քո զսիրտս իւրեանց, որպէս զի մանուկս այս մեծազին, գոգցես որդի եղեալ հեծութեանց մերոց և արտասուաց, ոչ միայն անկորուստ պահպանեսցի, այլ և փրկութիւն եղիցի իւրում ժողովրդեան: Զի՞նչ ևս ասացից. աղերսք են այսոքիկ, ո՛վ Տէր, զոր ազգն ողջոյն ուղերձէ առ քեզ այսօր ընդ իմ բերան, ազգ՝ որում հովանի եղեր 'ի սկզբանէ, որ և 'ի վերայ ամենայն մեղաց իւրոց՝ մասն է տակաւին ծաղկաւէտ՝ Եկեղեցւոյ քո սրբոյ:

Փակեցե՛ս, մեծդ Աստուած. զգութս ողորմութեանց քոց՝ ընդդէմ այսչափ պաղատանաց: Աստուած զօրութեանց դարձ արդ առ մեզ. Աստուած վրիժուց Տէր: Հայեաց 'ի բարձանց երկնից, և տես՝ մի՛ զանառակութիւնս՝ զյայտնի և զգաղտնի, այլ զաղէտս առաջին քրիստոնեայ թագաւորութեանս, զայգւոյս սիրելւոյ՝ զոր ձեռն քո տնկեաց և այնչափ վկայից արեամբ առոգեցաւ. Հա-

[illegible] Արկ 'ի վերայ նորա զառաջին աչս ողորմութեանդ. և եթէ մեղք մեր ստիպեն տակաւին դարձուցանել զերեսս քո 'ի մէնջ, գոնեա անմեղութիւն շնորհաշուք մանկանս զոր ետուր 'ի վերայ մեր, հրաւիրեսցէ և տացէ զքեզ ժողովրդեան քում. Ի [illegible] Շատ իսկ տառապեցուցեր զմեզ, Աստուած ահաւոր. դարձիր ընդէա զարտասուս՝ զոր տան մեզ հոսել այնչափ զանք և հարուածք հեղեալք 'ի վերայ մեր 'ի սրտմտութենէ բարկութեան քոյ. փոխանակ աւուրցն ցաւոց և ցասման և վրիժուց՝ շնորհեա աւուրս ուրախութեան և գթութեան. ուր առաւել եղեն պատուհասքդ՝ առաւելեսցեն շնորհք քո, և ցանկալի մանուկս լիցի մեզ պարգև՝ 'ի դարման կորստեանցս:

Արա զսա, Աստուածդ մեծ, Թագաւոր ըստ սրտի քում, այս է՝ հայր ժողովրդեան իւրոյ, Եկեղեցւոյ քում պաշտպան, օրինակ վարուց աշխարհին, խաղաղարար մանաւանդ քան յաղթող ազանց. դրացեաց իւրոց միջնորդ իրաւարար՝ քան թէ ահ և երկիւղ. և զի Եւրոպէ առ հասարակ նախանձեսցի ընդ երանութիւնս մեր. և յառաքինութիւնս սորա խանդաղատեսցի առաւել, քան թէ ընդ յաղթանակս սորա և ընդ աշխարհակալութիւնս լինիցի նախանձաբեկ:

Լուր, Աստուած իմ, սիրալիր և արդար աղաչանացս. և ժամանակեան պարգև քո՝ լիցին մեզ առհաւատչեայ պատրաստելոցդ մեզ 'ի յաւիտեանս. Ամէն, եղիցի:

ՄԱՍԻԼԵՈՆ. Փոքրիկ Քառասնորդք:

Digitized by Google

## ՎԵՐՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ
## ՅԱՂԱԳՍ ՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓԱՌԱՑ

Կրօնք՝ պաշտօն բարի առ Աստուած, մտերմութիւն ամենայն պատուիրանաց զոր նայն հրամայէ մեզ առ 'ի պէտս այլոց և մեր, միտք՝ սուրբ և յստակ յամենայն խղճէ, սիրտ ուղղընթաց յամենայն ընդդիմակացաց՝ որ խոչ ընդ ոտն անկանիցին, պինդ առ ամենայն հրապոյրս՝ որ շուրջ պատիցեն ստերիւրել զնա, ամենայն ծորբելեացս զեր 'ի վերոյ և Աստուծոյ միայն հլու հպատակ, այդ աւադիկ է փառք անվրէպ, և հիմն ամենայնի՝ որ մեծ զմարդիկ յարդարիցէ։ Եթէ զխարխուդ զայդ խախտեսցես, կործանի շինուածն ողջոյն, լաւութիւնք համօրէն տապալին և չմնայ ինչ, վասն զի մեք միայն ձնամք։

Տէր արքայ, լիցի արքայութիւնդ քո զարմանալեօք ըն-քանչելի, տարցիս մինչև 'ի ծագս երկրի զփառս անուան քոյ, ամենայն աւուրքդ մէն մի նշան յաղթութեան կանգնեսցեն, յաւելցես այլ և նորանոր պսակս 'ի խոյրս թագաւորացն՝ քոյոցդ նախնեաց, տիեզերք ամենայն զովութեամբքդ հնչեսցեն, եթէ Աստուած չիցէ ընդ քեզ, եթէ փոխանակ արդարութեան և բարեպաշտութեան՝ հպարտութիւն լինիցի շունչ գործոցդ, ոչ եղիցես թագաւոր մեծ. յաջողութիւնքդ 'ի մեղս դարձցին, յաղթանակքդ, 'ի համաշխարհի աղէտս. լինիցիս ահ և երկիւղ դրացեացդ, այլ ոչ եղիցես հայր ժողովրդեան քում. կարիքդ ևեթ լինիցին քո առաքինութիւնք, և 'ի վերայ ամենայն դրուատից, զոր տացէ քեզ մարդահաճութիւն՝ անմեռ ընկերն թագաւորաց, յաչս Աստուծոյ, թերևս է ապաւանեաց, ոչ այլ ինչ թուեսցին այնոքիկ քան թէ արդարև իսկ յոռութիւնք։ Այսուհետև վասն վեհափառ մանկանս, Տէր Աստուած, փառս ոչ զմարդկայինս զայս խնդրեմ 'ի քէն, արդէն իսկ նը-

Digitized by Google

կարեալ երևի այն 'ի ճակատ իւր, նա և յերակունսն իսկ խաղայ ընդ արեան նախնեացն իւրոց Թագաւորաց. և անդստին 'ի ծննդենէն մեծ եհաւր դու զնա յաչս մարդկան, իբրև զի արարեր զնա ծնունդ արեան դիւցազանց. այլ զսա 'ի քէն փառսն: Զպարգևս բնութեան՝ որովք ազնուացուցեր զնա՝ պերճացո անեղծական փայլմամբ բարեպաշտութեան. յամենայն սիրելի հանգամանսն՝ որ այժմէն ժողովրդեան իւրում ցանկալի առնեն զնա, յաւել և զայնոսիկ որ գիտեն հաճոյ առնել զնա յաչս քո. 'ի սերունդ նորա և 'ի քաջութիւն ազգին ապառատն արա զխնամս աշխարհակարգ փառացն. ոչ այլ ինչ խնդրեմք առ 'ի քէն, մեծդ Աստուած, բայց դէտ ակն 'ի վերայ դնել պահպանութեան նորա և փըրկութեան: Նախնեացն իւրոց պատմութիւնք երաշխաւորեն մեզ զշուք և զպարգաւաճանս արքայութեան իւրոյ, այլ դու միայն ես բաւական երաշխաւոր լինել անմեղութեան և սրբութեան կենացն: Աշխարհի փառք ժառանգութիւն իմն է նմա կարգեալ 'ի հարց անտի իւրոց ըստ մարմնոյ. այլ դու, Աստուած մեծ, հայրդ ըստ հաւատոց, տուր նմա զիմաստութիւն՝ զփառս և զժառանգութիւն որդւոց քոց:

Սիրտ նորա հանապազ 'ի ձեռս քո լիցի, և սիրտ նորա մեծ ևս եղիցի քան զյաջողուածս նորա և զյաղթանակս. երկիցէ 'ի քէն՝ ահաւորդ Աստուած, և Թշնամիք իւր տարածեսցեն 'ի նմանէ, սիրեսցեն զնա իւր ժողովուրդք, կացցէ տեսիլ զարմանաքանչ 'ի դարս դարուց. և զի չմնայ ինչ մեզ յայնժամ խէԹ զփառաց իւրոց, ոչ ևս ինչ իմիք կարօտեսցուք փափաքել 'ի մեր երանութիւն. Ամէն, եղիցի:

ՄԱՍԻԼԼՈՆ. փոքր քառասնորդք:

## ՎԵՐՋԱԲԱՆ ՔԱՐՈԶԻՆ ՑԱՂԱԳՍ ԹԷ Ի ՍԻՐՏՍ ՄԵԾԱՄԵԾԱՑ ԶԻ՛ՆՉ ԱՐԳԵԼ ԼԻՆԻՑԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

*Փրկիչ իմ, այսօր սկիզբն առնես և դու թագաւորել 'ի վերայ հանուրց ազանց. վերջին հեծութիւնքդ նուիրական իմն երախայրիք են թագաւորութեանդ, և խաչիւ նուաճելոց ես զտիեզերս։ Մեծդ Աստուած, նա հաստատեսցէ զարքայութիւն պատուական մանկանս, զոր աստ առ ոտս քո տեսանես. կրօնքն սուրբ օրհնեսցէ զնուակատիս նորա և պսակեսցէ զաւուրս նորա. նախնիքն իւր մեծաշուք բազմեցուցին զայն 'ի գահ 'ի միջի մերում. նոյն ինքն պահեսցէ 'ի նմա զմանուկս վեհափառ, որում չիք ինչ տակաւին մատուցանել քեզ՝ բայց զանմեղութիւն իւր, զհարցն հաւատս, զաղէտսն որ զարքայական որբանսն պաշարեցին, և զսիրայորդոր խանդաղակաթ գորով իւրոց հնազանդելոցն։*

*Կեցո՛ զորդի սրբոց բազմաց և պաշտպանաց հաւատոցն սրբութեան. նոքա երբեմն զմահ ընդ կեանս խառնեցին և 'ի բաց եդին զթագ իւրեանց, երթալ թափել զժառանգութիւն քո. պահեա մեծագին մանկանս զիւրըն, զի կարող լինիցի յաւուր միում հովանի և պահապան լինել Եկեղեցւոյ, զոր տայ քեզ Հայր այսօր 'ի ժառանգութիւն՝ արեամբդ քով ստացեալ. դարձան եկին նոքա բարձեալք զորբանուէր աւարամասն խաչին. աւանդքն սուրբ, որով ճոխացուցին զթագաւորեալ քաղաքս զայս, բարեպաշտութեան հարցն պատուական առհաւատչեայն, ճեպեսցէ մանաւանդ այսօր զշնորհս քո 'ի թիկունս օգնականութեան սորա։ Մի՛ թողուր զժառանգ այնչափ թագաւորաց որ առաջին գտան վրէժխնդիրք անուանդ քո և փառաց։ Սուր բարկութեանդ խնայեաց 'ի սա 'ի հարուածս անդ վեհափառ տոհմին իւրոյ. տուր մեզ, մեծդ Աստուած, վայելել 'ի բարերարութեան քում, զոր այնչափ ծանրագնի գնեցաք. բա-*

Digitized by Google

բեբախտ Նշխարս այս բազմաթիւ հոյակապ գլխոց զոր-
տեսաք անկեալս միահաղոյն, դարման լիցի կորստեանց
մերոց, և սրբեսցէ զարտասուս մեր. լցո զսա զմիայնս՝
ամենայն շնորհօքդ, զոր յանսպառ գանձուդ պահեալ էիր
այնչափ իշխանաց, որ թագաւորելոց էին փոխանակ սո-
րա, և որոց անկ իսկ էր թագն. միացո 'ի սա՝ զոր ինչ
բաժանելոց էիր ընդ այլս, և արքայութիւն իւր բովանդա-
կեսցէ զամենայն օրհնութիւնս և զազգի ազգի երանու-
թիւնսն, որոց ակն ունէաք 'ի միոջէ միոջէ թագաւորու-
թեանց արքայազանցն՝ զորս օրհաս տարաժամ ևս տա-
րաւ 'ի մէնջ. որոց անշուշտ ոչ զլացար զթագն երկրաւոր՝
յոր կարգեալն էին 'ի բնէ, բայց առ 'ի հիւթել նոցա
զյաւիտենականն յերկինս. Ամէն, եղիցի:

ՄԱՍԻԼԼՈՆ. փոքր Քառասնորդք:

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻՆ ԳՈՆՑԷԻ

Եկայք, ժողովուրդք, ո՜ն եկայք այժմիկ. այլ մանա-
ւանդ եկայք իշխանք և տեարք, և որ դատիք զերկիր,
և որ զդրունս երկնից բանայք մարդկան, և առաւել
քան զբնաւս՝ դուք արքայք և տիկնայք, ազնուա-
կան շառաւիղք թագաւորաց բազմաց, լուսաւորք Գալ-
լիոյ, այլ այսօր նսեմացեալք և 'ի թուխս համակեալք
ցաւոցդ՝ իբրև մառախլապատք, եկայք տեսէք զդոյզն
ինչ որ մնայ մեզ յայնչափ 'ի մեծաշուք սերընդենէ,
յայնչափ մեծութենէ, յայնչափ փառաց. ա՛կն ար-
կէք շուրջանակի յամենայն կողմանս: Աւադիկ է զոր
կարօղ գտաւ առնել փառաւորութիւն և բարեպաշտու-
թիւն 'ի պատիւ դիւցազինն. շքեղ անուանք, արձանա-
գիրք, սնոտի նշանակք այնր՝ որ ոչ ևս է 'ի միջի, պատ-

կերք յարատարաթոր կերպարանս շուրջ զչրմաւ, և ան-
ցաւոր օրինակք ցաւոց՝ զոր ամենայնիւ հանդերձ՝ վարէ
տանիր ժամանակ. ասէնք՝ որ մինչև յերկինս ամբառնալ
թուին զբարձրաբանշան վկայութիւն չքնաթեան մերոյ. և
յամենայն պատիւս յայս՝ չէք ինչ որ 'ի մէջ պակաս
իցէ, բայց այն ևեթ՝ որում լինին: Լացէք արդ 'ի վերայ
ողորմ մնացուածոց մարդկեղէն կենաց, այլս առէք 'ի
վերայ եղուկ անմահութեանն՝ զոր ընծայեմք զիւցա-
զանց:

Այլ մեք մարդիք մանաւանդ ով դուք՝ որ հրապարակք
ընթանայք յասպարիսն, հոգիք պատերազմականք և
ամենքեք. ով ոք արժանագոյն գտաւ հրամանատար ձեզ
կալոյ. այլ յում ումեք պարկեշտագոյն գտէք զհրամա-
նատրութիւն: Աշխարեցէք ուրեմն զմեծ զօրավարն, և
սուգեցէք հեծեծելով. Աւասիկ որ առաջնորդէրն մեզ 'ի
վտանգս. ընդ սովաւ վարժեալ կրթեցան այնքան ա-
նուանի զօրապետք, զորս օրինակք իւր բարձրացուցին
յառաջին պատիւս պատերազմի. կարող էր ուրուն իւր
տակաւին վանել զմարտս, և աւասիկ 'ի լռութեան աստ
իւրում՝ անունն անգամ խրախոյս մեզ հարկանէ, և
միանգամայն ազդեցութիւն տանէ մեզ, թէ առ 'ի գտա-
նելոյ 'ի մահու ընչմար ինչ մնացեալ 'ի վտանգաց, և
չերթալոյ ամենևին անյոյս 'ի յաղթենից յարկս մեր՝
ընդ երկրաւոր արքային պարտ է պաշտել և զարքայն
երկնից: Տարայք ուրեմն պաշտօն թագաւորին այնմիկ
անմահի, որ լին է ողորմութեամբ, և զմի ևեթ հեծու-
թիւն անգամ թուեցէ զձեր, և զբաժակ մի ջուր մա-
տուցեալ յանուն իւր, քան թէ այլք բնաւ զարիւն ձեր
հեղեալ բովանդակ. և սկիզբն հաշուելոյ զժամանակ
պիտանի ծառայութեանցդ՝ առէք յօրէ յորմէ ընծայե-
ցէք զանձինս ձեր Տեառնն բարերարի:

Իսկ դուք ո՞չ գայցէք յայս տխուր մահարձանս, դուք՝
ասեմ, զորս հաճեցաւ նա հանել 'ի կարգ բարեկամաց:
Ամենեքին միահամուռ, յո՞ր չափս մտերմութեան իւրոյ

և ընկալեալ իցէ զձեզ, փառաւորեցարուք զշնորհսս, հեղէք արտասուս հանդերձ պաղատանօք, և ախորացեալք ընդ իշխանին մեծի դիւրահեշտ բարեկամութիւն և ընդ անուշակ կենացն հաղորդութիւն, պահեցէք զյիշատակ դիւցազինն՝ որոյ հաւասար էր բարութիւն իւր ընդ սըրտին արութեան։ Ո՛ տայր թէ սիրելի լինէին ձեզ միշտ խօսք զնմանէ. ո՛ տայր թէ շահէիք յառաքինութեանց նորա, և մահ նորա զոր արտասուէք՝ լինէր ձեզ 'ի մխիթարութիւն, համայն և յօրինակ բարի։

Իսկ ինձ, եթէ ներեսցի յետ այլոց ամենեցուն գալ և ինձ հատուցանել զյետին պարտս առ այս դամբարան, ո՜վ իշխան, այր արժանաւոր գովութեանց մերոց և գալոց, յաւիտեան կեցցես յուշ յիշատակիս. պատկեր քո կենդանի նկարեալ կացցէ անդ, ոչ անմեհեր քաջութեամբդ որ զյաղթութիւն առնէր ոչ, չկամիմ առնել ինչ 'ի քեզ զոր եղծանէ 'ի նմա մահ. այլ 'ի պատկերի անդ կերպարանք իցեն քեզ անմահականք. տեսից զքեզ անդ որպիսի էիրն յաւուրն յետնում ընդ ձեռամբն Աստուծոյ, յորժամ փառք նորա սկսան իբր երևել քեզ։ Անդ տեսից զքեզ առաւել յաղթական քան 'ի Փրիպուրկ և 'ի Ռոքռուա. և հիացեալ ընդ չքնաղ յաղթանակդ՝ 'ի խոստովանութիւն գոհութեան գոչեցից զգեղեցիկն բարբառ աշակերտին սիրելւոյ. Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր։ Ճշմարիտ յաղթութիւն, որ կախան դնէ ոտից մերոց զբնաւ աշխարհս՝ հաւատքն մեր են։ Վայելեա՛ արդ, իշխանդ, 'ի յաղթութիւնդ յայդ, վայելեա՛ յաւիտեան՝ անմահ զօրութեամբ պատարագիս. հանեալ ընդ յետին ճիգն ծանօթ քեզ ձայնի. դու վախճան առնիցես ամենայն ճառից այսոցիկ։ Յայսմ հետէ՝ փոխանակ զայլոց մահ ողբալոյ, մեծդ իշխան, կամիմ ուսանել 'ի քէն՝ սուրբ առնել զիմս. երանի՛ թէ 'ի սպիտակ ալեաց ասատի խորատեալ զհամարոյն՝ զոր կայ ինձ տալ ընդ պաշտաման սպասաւորութեանս, պահեցից հօտիս՝ զոր պարտիմ

Digitized by Google

անուցանել բանիւ կենաց՝ զնշխարեալ Միացորդս ձայնիս որ նուաղի և զեռանդանս՝ որ չիջանի։

ԳՈՍԻՒԷԹ

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ՈՐ ՎԱՍՆ ԱՐՔԱՅԻՆ ԴԻՈՏԱՐԱՅ

Ոչինչ յինէն կարծեմ ապախտ արարեալ, այլ թողեալ ինչ 'ի յետին մասն դատիս, որ այն ինքն է՝ ամենայնիւ ամենայն իրօք հաշտեցուցանել ճառիս զքեզ ընդ Դիոտարի։ Զի ոչ ինչ խիթամ թէ դու ցասուցուս ընդ նա, այլ կասկածեմ՝ գուցէ կարծիցես զնա գժգմեալ ինչ ընդ քեզ. որ, հաւատա ինձ, Կեսար, բացէ 'ի բաց հեռի է ամենևին. զի զոր 'ի քէնդ ունի՝ զայն ընդ միտ արկանէ, ոչ զոր կորոյսն. և ոչ տոյժ ինչ 'ի քէն կրեալ համարի զանձն. այլ բազմաց բազում ինչ քեզ ընծայել արժան դատելով, ոչինչ ըմբոստացաւ ընդ առնուլդ զայնըս յինքենէ՝ որ 'ի միւսում կողմանն գտեալ էր։ Զի եթէ Անտիոքոս, մեծն ասիացւոց թագաւոր, իբրև 'ի պարտութիւն մատնեալ առաջի Սկիպիոնի՝ մինչև 'ի Տաւրոս ևեթ թագաւորել հրաման ընկալաւ, կորուսեալ զամենայն կողմն Ասիոյ՝ որ այժմ մեր է նահանգ, սովոր է ասել՝ թէ բարի եղև նմա 'ի հռովմէական ժողովրդենէն, զի 'ի ծանր ծանր հոգոց ազատեալ՝ 'ի չափ ևեթ սահմանի արքայութեան վայելիցէ, դիւրագոյն ևս է Դիոտարայ սփոփել զանձն. զի նա զմոլորութեանն տարաւ տուգանս, սա զվրիպանացն։ Զամենայն ինչ, Կեսար, պարգևեցեր դու Դիոտարայ՝ շնորհելով նմա և որդւոյն զանուն թագաւորական։ Ի կրելն և 'ի պահել զայդ անուն, ոչ ինչ 'ի յերախտեաց հռովմէական ժողովրդեան, ոչ ինչ 'ի յարգանաց աւագանւոյն նուազեալ համարի անձին։ Մեծաւ և քաջալեր հոգւով կայ,

Digitized by Google

ոչ լիցի նկուն թշնամեաց և ոչ խօլ բամբասողին։ Բազում ինչ յառաջագոյն փառաւորեալքն մեծարելոյ վարժիցանն, և ունել 'ի մտի և յարութեան խորհուրդ՝ զոր ոչ խելք կարիցէ 'ի գերեւս տանել։ Զի որ բանս կամ որ արկած կամ որ գըրկանատրանք զամենայն զօրագլխաց զմեծաւն եղծանել մարթասցէ։ Քանզի յամենեցունց 'ի նոցանէ փառաւորեալ է, որ միանգամ յետ հանգանելոյ նոցա 'ի չափս արութեան ընդ զամպարտական երևելոյ՝ մնացին մարտս պատերազմաց յԱսիա, 'ի Պոնտոս, 'ի Կիլիկիա և յԱսորիս։ Իսկ զառաջագոյն զնմանէ բազում և մեծագործ վկայութիւնս՝ աւանդեալս 'ի հասարակաց գիրս համաձայնական ժողովրդեանս և յարձանս՝ որ հնութիւն ժամանակաց ընկլզէ, կամ որ մոռացմունք ընջեցին։ Զինչ և զառաքինութիւնս նորա ասացից, զինչ զմեծանձնութիւնսն, զմեծարոյ բարոյիցն, զանսասանելի հաստատութիւնսն, զորս գիտեմք ամենայն և խմատեմք՝ զլուխ և աւարտ բարութեան, և ամենք՝ միայն բարիս ասացին, և զայսոսիկ՝ ոչ առ բարւոք եւեթ, այլ և առ երջանիկ կեանս բաւական լինել առաքինեացն։

Զայս ամենայն նորա զմտաւ ածեալ, և զցայգ և զցերեկ 'ի նոյնս խորհելով, ոչ միայն ոչ ինչ զժգմի ընդ քեզ, — զի ոչ ապաշնորհ եւեթ, այլ և անմիտ եւս երևէր, — նա և զամենայն իսկ զհանդարտեան և զանդորրութեան ծերութեան իւրոյ շնորհս՝ գթութեանդ քո խոստովանի։ Ես զի յառաջնմէ իսկ սովին հոգւով եղե, ուշինչ յերկուանամ՝ թէ թղթովդ, զորոյ զպատճէնն ընթերցայ, և 'ի ձեռս այսր Բլեսամիոսի ետուր առ նա 'ի Տիգրանակոնէ, առաւել ևս քաջալերեցի և թափեցի զամենայն տատամնութիւն։ Քանզի պատուիրես նմա՝ բարեյոյս լինել և սրտապնդել, զոր գիտեմ թէ ոչ վայրապար սովոր ես գրել։ Քանզի յուշ զայս ինձ՝ զի և առ իս զմեզ նովին բանիւք գրեցեր, և ես ոչ ընդունայն ինչ զյուսոյ բարւոյ խրախոյս հրամանսդ 'ի նամականւոյդ ընկալայ։ Տառապիմ արդարև վասն արքային Դիոտա-

րայ, ընդ որում զբարեկամութիւն ամենայն ընկեր-հաշտութիւնս, զհիւրութիւն՝ երկոցունցս կամք զօդեցին, զմտերմութիւն՝ ընտանութիւնն եբեր, իսկ զսէրս սիրոյն կապ՝ ազատաք նորա մեծամեծք զօր ինձ և զօրաւս խնամս եհար՝ կատարեցին։ Այլ ուր վասն նորա տառապիմ, անդ և վասն արանց բազմաց հայկականց, որոց 'ի հարկէ չէք ինչ քո տուեալ ընտա ծանօթս. զի ոչ քո բարերարութիւնդ երբեք յերկիրս ինչ անկանի, ոչ առանց տարակուսի յաւիտեան 'ի միոյ մարդկանն հաւաքեալ Միայ, ոչ երկիւղ ումեք երբեք հասանէ՝ որոց զամ մի քե յերկիւղէն ազատեալքն իցեն։

Չիք ինչ հարկ, Կեսար, զոր 'ի ծանր վտանգս օրէնն է փորձ փորձել, թէ որով արդեօք օրինակաւ բանից հնար իցէ զգութ և զխնամս քո յուզել։ Չկարօտիմ ինչ. նա ինքնին գիտէ ընդ առաջ եղանել աղաչաւորաց և վտանգելոց՝ առանց ուրուք բանից հրաւիրանաց։ Դիր առաջի քո զերկոսին Թագաւորսն. և զոր աչօք ոչ կարես՝ մտօքդ տես։ Զոր զլացար սրտմտութեան, զգթութեան տացես անշուշտ։ Բազում են զթութեանդ քո արձանք յիշատակի, այլ մանաւանդ անվթար փրկութիւն այնոցիկ՝ որոց զկեանսն շնորհեցեր. որ եթէ 'ի սակաւականն փառք իցեն, առաւել ևս 'ի Թագաւորսն յիշատակեսցին։ Անունն արքայական սուրբ եղև միշտ 'ի քաղաքի աստ, իսկ ուխտակից Թագաւորացն և բարեկամաց՝ ամենասուրբ։ Զանունն զոր 'ի քում յաղթութեանդ կորուսանել կասկածեցին Թագաւորքս, առ 'ի քէն պահեալ և հաստատեալ, վստահ եմ՝ զի զնոյն ստանգեսցեն յորդւոց որդիս։ Իսկ դեսպանքս այս արքունիք, Հիերաս և Բլեսամիոս և Անտիգոնոս, քեզ և մեզ 'ի վաղուց յառաջածանօթք, 'ի փրկութիւն Թագաւորացն իւրեանց զանձինս իւրեանց տան 'ի քո ձեռս, և նովին հաւատով և առաքինութեամբ ճոխացեալ Դորիլաոս, դեռ ևս ընդ Հիերայ դեսպան առ քեզ առաքեալ. որք՝ արքային կարևոր բարեկամք, և քեզ՝ որպէս յուսամ՝ ընդունելիք։

Հարց և փորձ արա զԹլեռապետաց. իցէ՞ ինչ գրեալ առ Թագաւորն՝ ոչ քեզ 'ի փառս. Իսկ Հիերոն՝ ողջոյն իսկ զխնամս 'ի գլուխ իւր առնու, և զամենայն մեղադրութիւնն յանձին ունի փոխանակ Թագաւորին. զհզօր յիշողութիւնդ աղերսեալ, յորպատ կայ՝ թէ երբեք 'ի Դիոսայրի չամչտութեանն խառն ինչ 'ի քէն մեկնեալ իցէ. 'ի գլուխս սահմանացդ անդ առ ձեան զինքն առէ լեալ, և մինչև 'ի ծագս Նոցուն խաղացեալ. ընդ քեզ յեղանելդ 'ի լուսալեաց, 'ի զննելդ զընծայան յետ ընթբերացն. 'ի յանկողին մտանելդ. և 'ի նոյն սպառ ցանկորդեալ առ քեզ 'ի վաղիւ անդր: Վասն որոյ եթէ 'ի շարախօսութեանց անտի յայնցանէ արդարև խորամանկդեալ ինչ իցէ, ոչ խորշի թէ զեղեանն զայն նմա գրեսցես: Նմին իրի, Կ. Կեսար, խղճ լինիմ, զի դիցես 'ի մտի թէ դատաստան քո այսօր՝ կամ մեծաւ անարգանաց աղխազոր կործանումն համուցանելոց է Թագաւորացդ, կամ փրկութեամբ հանդերձ՝ բարեփառ համբաւ անարատութեան: Ցորոց միումն փափաքել՝ նոցա անողորմութեանն է, զմիւսն պահպանել՝ քում գթութեանդ:

ԿԻԿԵՐՈՆ

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ԹՐ ՎԱՍՆ ԱՐՔԻԱՅ ՔԵՐԹՈՂԻ

Վասն որոյ, դատաւորք, պահեցէք զայրդ նովին պատկառելի պատուովն՝ զոր տեսանէք սիրելի եղեալ բարեկամացն չքոյ և հնութեան, և այնքանեաւ հանճարովն՝ որչափ արժանն իցէ զայն վարկանել, զոր հանճարոյ արանց ուսմանց տեսանէք եղեալ ցանկալի. իսկ իրաւամբք դատաստանի՝ որ օրինացն շնորհիւ, բանիւ ազատ քաղաքին. Լուկուլլեայ վկայութեամբ, և արձանագրօքն Մետելլոսի հաստատեալ է: Եւ զի այս այսպէս, խըն-

Digitized by Google

գրեմք 'ի ձէնջ, դատաւորք, եթէ ոչ մարդկեղէն ևեթ, այլ և աստուածեղէն իմն ընծայութեան հարկնէ 'ի մէջ անցանել, զի զայն՝ որ զձեզ. որ զզօրագլուխս ձեր, որ զարքական հանդէսս համախմբական ժողովրդեան յաւէժ զեղազարդեաց, որ և յայս 'ի մեր և ձեր ատենին արդի վտանգս՝ խոստանայ տալ անեղծական վկայութիւն զա-վութեանց, որ և յայնմ թուայ է՝ որ միշտ առ ամենե-սեան ընդ սուրբս են համարեալ և քարոզեալ, այնպէս 'ի ձեր հաւատս ընկալջիք, որպէս զի ձերով մարդասի-րութեամբդ 'ի զարմանս լինել երևեսցի. քան 'ի վնաս՝ յերեսաց խստութեան: Զոր ինչ զգաստէս, ըստ իմում տկարութեան, համառօտ և պարզ խօսեցայ, դատա-ւորք, վստահ եմ թէ ամենեքեան հաճ և հաւան իցէք ընդ այն. իսկ զոր ոչ ըստ ատենից և ոչ ըստ դատաստա-նական օրինի զհանճարոյ առնն ճառեցի և զուս-մանէ նորա առ հասարակ, յուսամ 'ի ձեզ, դատաւորք, թէ 'ի բարւոյ մասին զայն ընդունիցիք. իսկ որ զբուն դատողութեանն պաշտօն ունի՝ զնմանէ գիտեմ ան-երկբայ:

ԿԻԿԵՐՈՆ

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ՃԱՌԻՆ ՈՐ ԸՆԴԴԷՄ Մ. ԱՆՏՈՆԻՈՍԻ

Արդ յիշեա, Մ. Անտոնիէ, զօրն զայն՝ յորում ջնջե-ցեր զբռնապետութիւն. առաջի աչացդ նկարեսցի ցըն-ծութիւն աւագանւոյն և զհամախմբական ժողովրդեանն. մայծ ընդ նմին 'ի կշիռ զշահավաճառան քո և զքոյոցդ. յայնժամ 'ի միտ առցես՝ որչափ ինչ 'ի միջի իցէ փառաց և շահուց: Բայց զոր օրինակ են որ յախտէ իմեքէ կամ թմրութեամբ զգայնոցն շաւնուն զհամ կերակրոց, նոյնպէս վատաշուքք, ընչաքաղցք, չարագործք չունին

զճաշակ ճշմարիտ փառաց: Այլ զքեզ եթէ փառք չշարժեն 'ի գործս ուղղութեան, ո՛չ և երկիւղ խոտորեցուցանէ 'ի չարեաց գործոց: Ի դատաստանաց ոչ երկնչիս. եթէ առ անմեղութեան՝ գովեմ. եթէ առ բռնութեան, չիմանամ՝ թէ աներկիւղն 'ի դատաստանաց յիմէ՞ պարտիցի զանգիտել: Զի եթէ յարանց քաջաց և յընտրական քաղաքացւոց ոչ զարհուրիս, վասն զի զինուք մերժեալ որոշեալ են 'ի մարմնոյդ, նոքին իսկ քոյքդ, հաւատաս ինձ, ոչ հանդուրժեսցեն քեզ յերկար: Իսկ զի՞նչ կեանք իցեն՝ զցայգ և զցերեկ յուրոցն իսկ 'ի խեթի և 'ի կասկածի լինել. բայց եթէ՝ կամ մեծ ես երախտեաք շնորհապարտս քեզ զնոսա կացուցեր՝ քան զոր Կեսար զամենեա՝ յորոց խողողեցաւն, կամ թէ իցես ինչ դու յիմիք 'ի համեմատութիւն ընդ նմա գալոյ արժանի: Էր 'ի նմա հանճար, մտաւորութիւն, ուշ, դպրութիւնք, խելամտութիւն, ժրութիւն. անցեալ էր ընդ հանդէսս մարտից պատերազմաց, թէպէտ և աղխտաբերս ընկերհաշտութեան, սակայն մեծամեծս. ամս ոչ սակաւ՝ թագաւորութեան ուշ եդեալ, ջանիւ մեծաւ և ահագին վտանգօք՝ զոր 'ի մտին էր 'ի գլուխ տարեալ. տրովք, յիշատակօք, առատութեամբ պարենից և խրախութեամբք զանգէտ ամբոխն ողոքեալ. զիւրսն՝ պարգևօք, զհակառակորդսն՝ գթութեան կերպարանօք զիւրև ածեալ: Զի՞ ևս այլ. է զի ահիւ սաստից, է զի երկայնմտութեամբ յարամրի 'ի ներքս մուծեալ էր՝ յազատ քաղաք այսր՝ զսովորութիւն ծառայութեան: Գոյ ինձ համեմատել զքեզ ընդ նմա յիշխանասիրութեան, իսկ յայլում ամենայնի՝ ոչ ինչ բերես նմանութիւն: Բայց 'ի բազում չարեացն, որովք յոգի խարեաց նա զընկերհաշտութիւնն, զէթ այս ինչ գտանի բարի, զի ուսաւ ժողովուրդն հռովմէական՝ որչափ ինչ ումեք հաւատս ընծայեսցէ, յո՛յս ումանս վստահ դնիցէ, յորո՛ց զգոյշ լինիցի: Արդ զայսոսիկ չածե՞ս ինչ զմտաւ, չառնո՞ւս 'ի միտ՝ թէ արանց քաջաց շատ է ուսանել քանի՛օն զեղե-

Digitized by Google

ցիկ իցէ ինքնին, երախտեաց քաղցր, անուամբ գերա-փառ, սատակել զայր բռնաւոր. որ նմա ոչն համբերին արք, միթէ քեզ տարցին: Նա՛ յետ այսորիկ, հաւատա ինձ, մի զմիով ել և ելս արասցեն ընթանալ յայս գործ, և ոչ դանդաղելոյ ժամուն կալցին ակն:

Աղէ հայեաց, աղաչեմ, զամ մի յընկերհաշտութիւնն, Մ. Անտոնիէ. արկ 'ի միտ' յորոց ծնեալդ ես, և մի ընդ որս կենցաղիսդ. ընդ իս' որպէս և քեզ կամք իցեն. ընդ ընկերահաշտիս դարձիր 'ի սէր և 'ի հաճութիւն: Այլ դքէն' դու քեզէն տեսջիր, ես զանձնէս յայտ յանդիման վկայեցից: Պահեցի զընկերհաշտութիւնն յերիտասարդութեանս, ոչ լքից 'ի ծերութեան. արհամարհեցի զսուսերսն Կատիլինայի, ոչ շրտեայց 'ի քոյոցդ. Նա աւանիկ կամակար մատուցից զանձն, եթէ մարթիցի ազատութեան քաղաքիս' իմով մահուամբ յառնել անդէն 'ի կեանս. որպէս զի ցաւք հռովմէական ժողովըրդեան' ծնցեն ուրեմն զոր երկնեանն 'ի վաղուց: Զի եթէ յառաջ քան զամս իբրև դքսան, 'ի տաճարի աստ յայսմիկ ասացի վասն առն բդեշխութեամբ պատուելոյ, թէ չէ հնար տարաժամ պատահել նմա մահու, ո՞րչափ ճըշմարտագոյն ես ասացից այժմիկ վասն ալևորիս: Այլ ինձ, Հարք ատենակալք, արդէն փափաքելի իսկ է մահ, յետ յանկ հանելոյ զպարտս պաշտամանցն' յորս վիճակեցայ և կատարեցի: Երկու ինչս միայն խնդրեմ. մի' զի 'ի մեռանելս' ազատ թողուցում զժողովուրդն հռովմէական. մեծ ևս ինչ քան զայս ինձ պարգևել չիք բնաւ դիցն անմահից. և միւս' զի իւրաքանչիւր ումեք, ըստ գործոց ձեռաց իւրոց առ ընկերհաշտութիւնն, նոյնպէս և 'ի գլուխ նորա կշռեսցին փոխարէնքն:

ԿԻԿԵՐՈՆ

---

## ՎԵՐՋԱԲԱՆ ՄԻԼՈՆԻ ՃԱՌԻՆ

Այլ որ ինչ յաղագս դատիս այսորիկ՝ չափ լիցի ցայս վայր. թէ արդեօք և արտաքոյ քան զպահման սորա և անդր իսկ քան զբաւականն բանք իմ ձգեցան: Զի՞նչ այլ մնայ, բայց յորդորք անկեալ ժտել 'ի ձէնջ, ո՜վ դատաւորք. զի շնորհիցէք առնն քաջի զներումն՝ զոր չխնդրէր նա, և ես իսկ ըստ ոչ կամաց նորա խնդրեմ զայն և ժտիմ: Եթէ 'ի հեղուլ մեր ամենեցուն զարտասուս, ոչ մի արտօսր նշմարիցէք 'ի Միլոն, եթէ միշտ զնոյն դէմս, զնոյն անայլայլակ հաստատութիւն 'ի ձայն նորա և 'ի բանս տեսանէք, մի՛ լիցի ձեզ պատկառել 'ի ձեռնմէ ներողամտութենէդ. նոյնն իսկ թերևս առաւելագոյն շնորհի գտանի դա արժանի: Զի եթէ 'ի սուսերամարտկացն կռիւս և 'ի դասս սինլքոր մարդկան՝ զերկչոտն և զաղաչաւորս սովոր եմք արհամարհել, իսկ զքաջասիրտս և զորս անվեհեր 'ի մահ դիմագրաւեն՝ ցանկամք ապրեցուցանել, և ընդ նոսա առաւել ցաւէ մեզ՝ որք ոչն զգթութիւն 'ի մէնջ խնդրիցեն, քան որ թախանձիցենն զայն, քանի՛ առաւել առ հզօր քաղաքացիս պարտ է մեզ առնել զայդ: Այլ զիս, ո՜վ դատաւորք, նուաղեցուցանեն և զսիրտ իմ կեղեքեն բանք Միլոնի, զորս լսեմ անդադար և հնչեն յունկն իմ հանապազ. Ողջամբ կացցեն քաղաքակիցք իմ, ողջամբ մնասցեն. մի՛ հասցէ նոցա վնաս, ծաղկեսցին և երանելի լիցին. կանգուն կացցէ քաղաքս մեծապայծառ, կեցցեն հայրենիք իմ սիրելիք, որպէս և վարեցանն ընդ իս. թո՛ղ զրկեցայց ես 'ի վայելից, զի չէ ինձ հնար վայելել ընդ նոսա, թող առանց իմ, այլ յիմ ձեռն վայելեսցեն քաղաքակիցք իմ զընկերհաշտութեանն խաղաղութիւն. ահա հրաժարիմ մեկնիմ ես 'ի բաց: Եթէ չիցէ ինձ մարթ զբարութիւն ընկերհաշտութեան վայելել, գէթ 'ի բաց կացից 'ի տեսոյ չարեաց նորա, և հասեալ վաղագոյն 'ի քաղաք ուրեք օրինապահ և ազատ, հանգեայց անդ:

Digitized by Google

Ո՛վ վաստակք իմ 'ի զուր ձեռնարկեալք. ո՛վ յոյս անօտի, խորհուրդք ընդունայնք։ Հազարապետս ժողովըրդեան, յորժամ 'ի տեսանել զվատթարութիւն ընկերհաշտութեան, եսու զանձն իմ 'ի վաստակել վասն ծերակուտին՝ որ առկայծէրն, վասն տապաստ Հռովմայեցւոց՝ որոց նուաղեալ էր զօրութիւն, վասն լաւորերդ՝ որք զամենայն իշխանութիւն 'ի բռնութենէ Կլաւդեան զինուց կորուսեալ էին, է՞ր ինձ բնաւ կարծել յայնժամ զի 'ի լաւացն օգնականութենէ լքեալ գտանիցիմ. յորժամ զքեզ — քանզի առ իս խօսի նա յաճախ — յորժամ զքեզ դարձուցի 'ի հայրենիս, կարէի՞ երբեք ածել զմտաւ թէ ինձ պակասեսցէ տեղի 'ի հայրենիս։ Ո՞ւր է արդ ծերակոյտն, որում էաքն պաշտպանք. ո՞ւր ասպետքըն Հռովմայեցիք, որ ընդ քեզն էին. ո՞ւր եռանդն նախանձու ազատ քաղաքաց. ո՞ւր աղաղակ Իտալիոյ. ո՞ւր ուրեմն և քոյ ձայն, Մ. Տուլլիէ, յոգունց պաշտպարան, յոգունց պաշտպանութիւն. միթէ ինձ միայնոյ, որ այս քանիցս 'ի վերայ քո զանձն 'ի մահ մատուցի, չիցէ բաւական յօգնականութիւն։

Զայսոսիկ, ո՛վ դատաւորք, ոչ լալագին՝ որպէս ես արդ, այլ նովին դիմօք՝ որպէս տեսանէքդ՝ բարբառի։ Չասէ վասն ապաշնորհ քաղաքացեացն արարեալ՝ զոր արարն, այլ միայն վասն ապիրատս ասելով զնոսա և զանգիտողս յամենայն վտանգաց։ Յուշ եւեթ առնէ ձեզ, զի յապահովութիւն կենաց մերոց՝ զռամիկն և զխառնաղանձ բազմութիւն, որ Պ. Կլաւդեայ հրապարականօքն ապառնայր գոյից ձերոց, յինքն յանկոյց. ոչ միայն յեղաշրջեալ զմիտս նորա քաջութեամբ, այլ և երիւք հայրենի ստացուածովք իւրովք զնա ողոքեալ։ Ոչ իսկ երկթայ նա, զի որ խաղաղացոյց զժողովուրդն առատաբաշխութեամբք, ոչ ածցէ զձեզ մեծամեծ վաստակօքն յընկերհաշտութիւն։ Յաւելու և զծերակուտին յայտանիկ իսկ ժամանակս տեսեալ յաճախ զկաւակամութիւն առ ինքն. և զձեր և զդատուց ձերոց խնամս, զբանս,

Digitized by Google

զգուշութիւնս տանել առ ընդ իւր յօ ուրեք և բախտն առաջնորդեսցէ նմա։ Ցնծացուցանէ ևս՝ զի քաղաքն ևեթ ձայն, որում ոչն իսկ ցանկայր, պակասեաց իւր. այլ համօրէն ժողովրդեանն հաւանութիւն՝ որում միայն ըղձանայր, բղխեալ զնա յայտ արար. և եթէ նոյն արդ ընդդէմ իւրնջիններցի, կապեալ շարութեանն, և ոչ թէ եղեան գործոյն զնա պարտաւոր կացուցէ։ Եւ զայն դարձեալ որ ճշմարիտ իսկ է, ասէ. զի արք քաջք և իմաստունք՝ ոչ այնքան վարձս ուղղագործութեանն ա-վոր են խնդրել, որքան զգործելն զուղղութիւն. և ոչ իւր անփառունակ ինչ ընդ ամենայն կեանս գործեալ. զի չիք ինչ գերապանծ քան զերծուցանել զհայրենիս 'ի վտանգաց. երանի՛ որոց այն 'ի փառս գրեցաւ 'ի քաղաքացեացն. այլ և ոչ թշուառ այնորիկ, որք բարերարութեամբք զքաղաքակիցսն զանցուցանեն. այլ քան զամենայն վարձս առաքինութեան, եթէ վարձուց պարտ իցէ ակն ունել, պայծառագոյն վարձք՝ փառքն են. սա միայն է՝ որ մեզ զկարճութիւն կենաց՝ հանդերձելոցն յիշատակաւ քաղցրացուցանէ, որ մերձաւոր զհեռաւորքս կացուցանէ, և կենդանիս զմեզ 'ի մահու անդ առնէ. սանդուղք իմն է սա, և ընդ աստիճանս սորա գոգցես յերկինս վերամբառնան մարդիկ։ Ջինէն, ասէ, խօսեսցի միշտ ժողովուրդ հռովմէականն, խօսեսցին ամենայն ազգ և ազինք. և ոչ լռեսցեն երբեք դարք։ Նա աւանիկ յայսմ իսկ ժամանակի, յորում թշնամիք իմ բորբոքեն ամենուստ զբոց նախանձու, յամենայն ակումբս զոհութիւնք մատուցանին աստուածոց, և խընդակցութիւնք մեզ, և հաշտ զմէնջ ընթանայ։ Թողում զտօնս յԵտրուրացւոց անտի կատարեալս և զտարեկանս 'ի նոցանէ կարգեալ։ Այս հարիւրերորդ օր է 'ի սպանմանէ անտի Պ. Կղաւդիոսի. միով կարծեմ աւելի. և ահա 'ի ծայրս սահմանաց տէրութեան ժողովրդեանն Հռովմայ, ոչ միայն համբաւ նորա, այլ և խնդութիւն համատարածս տարածեցաւ։ Վասն որոյ չէ ինձ փոյթ թէ

առ մարմին իմ կացցէ. զի ահա ընդ ամենայն երկիր փառք անուան իմոյ տարածեալ, և միշտ իսկ կացցէ մնասցէ:

Զայստսիկ դու առ իս յաճախ՝ անկաւր 'ի սոցանէ՝ յեղյեղէիր. և արդ ես 'ի լուր քո, Միլոն, երկրորդեմ: Արդարև զքեզ, որ զայդ արիութիւն յանձին բերես, չկարեմ գովել ըստ արժան բաւականին. այլ որչափ աստուածային իմն է առաքինութիւնդ այդ 'ի քեզ, այնչափ առաւելագոյն ցաւով անջատիմ 'ի քէն: Եւ եթէ յինէն յափշտակիս, չիցէ ինձ և ոչ սփոփումն բողոք բառնալոյ ընդդէմ այնոցիկ՝ յորոց զայդպիսի վէրս առնուցամ: Զի ոչ եթէ թշնամիք իմ յափշտակեսցեն զքեզ յինէն, այլ մտերիմ բարեկամք՝ որոց չիք չար ինչ գործեալ ինձ, այլ միշտ իսկ բարիս: Զկարէք, ով դատաւորք, այնպիսի ինչ դառն հասուցանել ինձ ցաւ. — թէպէտ և զի՞նչ քան զայս դառնագոյն — զի 'ի մոռացօնս ինձ այս տացէ արկանել որչափ ինչ բարերարեալ է ձեր առ իս: Զոր եթէ ձեր մոռացեալ իցէ, կամ ընդ իս եթէ գժդմնեալ իցէք, հի՞մ ոչ յինէն՝ այլ 'ի Միլոնէ հանէք զվրէժ: Քանզի համարեցայց կեցեալ զիս բարեբաստիկ, եթէ հասցէ ինձ մահ, չև տեսեալ զմեծ զայդ չարիս: Աստանօր մի ևեթ սփոփումն քաջալերէ զիս, Տ. Աննիէ, զի ոչ երբեք վերջացեալ զտայ առ քեզ 'ի պարտուց երախտագիտութեան և սիրոյ: Ես ընդդէմ ոխութեան հզօրաց եղէ վասն քո դիմագրաւ. ես բազում անգամ զմարմին իմ և զկեանս նշաւակ զինուց թշնամեաց քոց կացուցի. ես բազում անգամ վասն քոյ աղաչաւոր՝ յաղերս խոնարհեցայ, զինչս և զստացուածս իմ և զորդւոցն իմոց ընդ քեզ յաղէտս քո բաժանեցի. և այսօր իսկ եթէ պատրաստեալ իցէ 'ի վերայ քո բռնութիւն, եթէ վտանգ ինչ կենաց քոց կայցէ, յիս աղաչեմ դարձուցանել զայն: Զի՞նչ այլ մնաց արդ, զի՞նչ առնել ինձ կամ խօսել փոխան քոյոցդ առ իս երախտեաց, բայց զբախտ քո՝ որ զինչ և էն՝ համարել զիմ: Զհրաժարեմ, չմերժեմ

Digitized by Google

զայն. աղաչեմ ես զձեզ, ով դատաւորք, բարերարութեան՝ զոր ցուցէք ինձ յաճախ, տուք լրումն ազատութեամբ սորա, և մի՛ կորստեամբ՝ եղծումն.

Յարտասուաց իմոց ոչ շարժի Միլտոն. չհաւատայք 'ի նմա փայլէ արիութիւն։ Անդ է նմա աքսոր, ուր չիք տեղի քաղցրութեան. զմահ համարի նա կատարած բնութեան, ոչ պատուհաս։ Թողցուք զնա որպէս բնաւորեցաւն 'ի ծնէ. իսկ դուք, յի՞նչ խորհուրդս կայցէք, ով դատաւորք։ Զյիշատակ Միլտոնի պահեալ, զինքն 'ի բաց վտարիցէք. և իցէ՞ ուրեք 'ի վերայ երկրի տեղի՝ լինել ապաքինութեան սորա արժանաւոր օթևան, որպիսի աստ՝ ուր ծնաւն։ Առ ձեզ բողոքեմ, առ ձեզ՝ քաջք արանց, որք արիւն բազում վասն ընկերհաշտութեան հեղէք. առ ձեզ՝ 'ի վտանգ անպարտելւոյ ատենն և քաղաքացւոյ բողոքեմ, հազարապետք և զօրականք, որք ոչ ականատեսք միայն, այլ և սպառազէն կայք, և դատաստանիս այսմիկ վերակացուք. ապաքինութիւն այդպիսի մերժեսցի՞, վարեսցի՞. ընկեսցի՞ 'ի բաց։ Աւա՛ղ ինձ, եղո՛ւկ թշուառականիս։ Կարացեր դու, Միլտոն, 'ի ձեռն սոցա դարձուցանել զիս 'ի հայրենիս, ես ո՞չ կարացից 'ի ձեռն սոցա ունել զքեզ 'ի հայրենիս։ Զի՞նչ տաց պատասխանի որդւոց իմոց, որք միւս այլ ծնող իւրեանց զքեզ համարին. զի՞նչ և քեզ, եղբայր իմ Կուինտիէ, որ երբեմն ինձ վշտակից և կաս արդ 'ի բացեայ. չկարացի՞ ես պաշտպանել Միլտոնի, և փրկել զնա 'ի ձեռն այնոցիկ՝ որոց նըպաստիւք փրկեաց նա զմեզ։

Ես յորպիսում դատի չկարացի. — 'ի հաճոյականն ամենեցուն. և վասն ո՞յց չկարացի. — վասն այնոցիկ, որք Գ. Կլաւդիոսի մահուամբն առաւելապէս խաղաղացան. և ո՞ր աղաչանօք. — իմ իսկ։ Զի՞նչ մեղայ, յո՞ր եղեռն անկղիտացայ, ով դատաւորք. 'ի հետազօտել, 'ի յայտնել, յերևան ածել և 'ի ցրել զսպառնալիս հասարակաց կորստեան։ Յաղբերէ աստի բղխեն յիս և յիմս վիշտք ամենայն։ Ընդէ՞ր դարձուցէք զիս. թերևս զի յան-

Digitized by Google

զիմանն աչաց իմոց աքսորեսցին այնոքիկ, որ եռուն դարձուցանել զիս այսրէն։ Մի՛ հանդուրժէք այդմ, աղաչեմ. զի ծանրագոյն ինձ լիցի դարձն իմ քան զաքսոր։ Մա՞րթ իցէ դարձ ինձ զայն համարել, 'ի բաժանել իմում 'ի նոցանէ՝ յորոց ձեռն դարձայ։

Ցանկա՛րծ տային աստուածք անմահք, (ներեա ինձ հայրենիք իմ, մի՛ գուցէ որովք աստեն առ գութ Միլոնի՝ անգթանալ առ քեզ թուիցիմ), յանկա՛րծ տային դիք զի Պ. Կղոդիոս ոչ միայն կենդանի, այլ և դատաւոր և բդեաշխ և իշխանապետ կայր, քան թէ զտեսիլն զայն տեսանէին։ Ո՛վ անմահ դիք, որպիսի՛ այր քաջ և կեցուցանելոյ 'ի ձէնջ արժանի, ով դատաւորք։ Այլ Միլոն, ճն անդր, 'ի բաց տար, զիրաւացի վրէժն ելոյծ նա. մեք, եթէ հարկ այնպէս իցէ, զանիրաւն կրեսցուք։ Այրս այս, վասն հայրենեաց ծնեալ, ո՞ւր այլ ուրեք վայելչապէս մեռանիցի, եթէ ոչ 'ի հայրենիս իւր. կամ եթէ յանկա՛րծ վասն հայրենեաց, զյիշատակ արութեանն պահիցէք, և ոչ թողուցուք զի մարմնոյ նորա շիրիմ կանգնեսցի յիտալիա։ Եւ ո՞ ոք տացէ զվճիռ իւր հալածելոյ 'ի քաղաքէ աստի զայրդ զայդ, զոր 'ի մերժել ձեր՝ քաղաքք ամենայն առ իւրեանս կոչեսցեն։ Երանի՛ երկրին՝ որ զդա ընկալցի. ապաշնո՛րհ Հռովմ՝ եթէ զդա արտաքսիցէ, թշուա՛ռ՝ եթէ կորուսցէ։ Այլ կացցեն աստ բանք. հեղձամղձուկ յարտասուաց՝ չկարեմ այլ ևս խօսել, և չկամի իսկ դա արտասուօք լինել պաշտպանեալ։ Աղաչեմ զձեզ, ո՛վ դատաւորք, և պաղատիմ, զի 'ի տալ ձեր վճիռ, որ ինչ զգայքդ՝ այնմ անսայցէք։ Հաւատացէք ինձ, զի զառաքինութիւն ձեր և զարդարութիւն և զհաւատս, գովեսցէ մեծապէս նա ինքն[1], որ յընտրութեան դատաւորաց՝ զբարեկամս զիմաստնագոյնս և զարիագոյնս մեծարեաց։

ԿԻԿԵՐՈՆ

(1) Այս ինքն Պոմպէոս՝ որ չէր բարեկամ Միլոնի, և ընտրող դատաւորացն էր։

# ՑԱՆԿ

Յառաջաբան
Կանոնք արուեստի մատենագրութեան

---

## ՊԱՏՄԱԿԱՆՔ

Պատուէրք առ ճարտասանական պատմութիւն . 17
Նախամարգն պատմէ զառաջին շարժումն և զզգա-
ցումն և զգաստումն որ յետ ստեղծմանն . 20
Ուխտ Իդոմենեայ . . . . . . 26
Մոլորել Կիմոդոկեայ յանտառի և առաջնորդու-
թեամբ Եւդորի հասանել առ հայր իւր . 28
Մանկութիւն Կիւրոսի . . . . . 35
Մանկութիւն Պօղայ և Վիրգինեայ . . . 37
Փախուստ ՚ի հայրենի հողոյն . . . . 45
Անցք ՚ի ժանտատախտն Միլանու . . . . 48
Ժանտախտ Աթենայ . . . . . 51
Իդիպոս ՚ի Կիթերոն . . . . . 54
Սողոն և Կրիսոս . . . . . . 59
Մենամարտ Մերովէի ընդ Կելտացւոյն . . 63
Առումն Պասթիլլի . . . . . 66
Կոտորած Ենիչէրեաց . . . . . 69
Մարտ և մահ Կատիլինայ . . . . 70
Մետեղլոսի ընդ Յուգուրթայ պատերազմ . . 71
Առումն ամրոցի . . . . . . 75
Փիլինեան եղբարք . . . . . . 78
Կայսերութիւն Հռովմայ առ ժամանակօք գալլի-
ական Տեառն . . . . . 80

Digitized by Google

Հռովմ մատնեալ 'ի ձեռս բարբարոսաց . . 82
Ճակատամարտ Ռոքռոյ . . . . 84
Անցք ընդ Գերեզինա . . . . . 87
Մենամարտ Որատեանց և Կուրատեանց . . 90
Պատերազմ Թերմոպիլեայ . . . . 92
Մահ Եպամինոնդայ . . . . . 96
Մահ Կիկերոնի . . . . . . 98
Մահ Կուստաւ Ադոլփի արքային Շուեդաց . 100
Մահ Կարոլոսի Ա. Անգղիոյ . . . . 103
Մահ Դիւրենի . . . . . . 107
Մահ Դիւրենի . . . . . . 108
Մահ Հենրիկէի դշխոյի . . . . . 109
Մահ Մարեմայ Ստուարտայ . . . . 111
Յաջորդութիւն աշխարհակալութեանց Աղեքսանդրի . . . . . . . 116
Յուղարկաւորութիւն Իպպիասայ . . . 117
Գետնադամբանք . . . . . . 122
Մահ Գերմանիկեայ և դարձ Ագրիպպինեայ 'ի Հռովմ բերելով զաճիւն ամուսնոյն . . . 124
Յարձակել Ներուեանցն 'ի վերայ բանակին Կեսարու և արկանել շփոթս 'ի նմա . . . 129
Հռամիզդ հալածի յիւրոցն. Զենոբիա կին նորա խոցեալ 'ի նմանէ կարեվէր, փրկի մազապուր . 130
Պուլփիոն և Վարենոս, միմեանց ոսոխք, իրերաց նպաստ լինին 'ի մարտի . . . . 131
Կործանել շուրջ տասանելեաց սուսերամարտից և բիւրաւորաց Փիլթենացւոց կորնչել ընդ նովաւ կամ վիրաւորել . . . . . 133
Ճակատամարտ Փրիպուրայ . . . . 134
Պատերազմ և պարտութիւն գերմանացւոց 'ի Կեսարէ . . . . . . . 136
Պատերազմ Գերմանիկեայ ընդդէմ Արմինիոսի . 137
Ներուեանցն պարտութիւն 'ի զօրացն Կեսարու . 142

Digitized by Google

## ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

Բնական և ճարտարապետական նկարագրութիւնք և
Պատուէրք առ այս . . . . . 144
Գարուն 'ի Յունաստան . . . . . 145
Հովուական կենցաղ . . . . . 146
Բոյնք Թռչնոց . . . . . . 148
Սէր Թխամօր 'ի ձագուսն իւր . . . . 151
Երգ Թռչնոց . . . . . . . 152
Չու կամ տեղափոխութիւն Թռչնոց . . . 155
Առիւծ և վագր . . . . . . 158
Գիշեր չքնաղ . . . . . . 160
Խրախճանութիւն չինականաց . . . . 161
Քարայրն Կալիփսեայ . . . . . 164
Տօնք Անահտայ . . . . . . 166
Ասիական ափունք Վոսփորի . . . . 168
Հովիւն Յորդանանու . . . . . 169
Հովիւն Տեմպեան . . . . . . 171
Նէապոլիս . . . . . . . 174
Քաղաքն Տիւրոս . . . . . . 175
Հռովմ . . . . . . . . 177
Բեռնիկէ . . . . . . . 179
Ապառաժն Արաբիա և բարք Արաբացւոց . . 183
Անկելանոց ապիկար զինուորաց . . . 185
Ջէնք Տելեմաքայ . . . . . . 187
Խորհրդածութիւնք 'ի վերայ աւերակաց Պալմիրայ 190
Ամփոփումն գիտակաց Վարոսի և զօրականացն ան-
կելոց . . . . . . . . 193
Բանաք . . . . . . . . 194
Փոթորիկ . . . . . . . . 196
Փոթորիկ . . . . . . . . 197
Մրրիկ յանապատի . . . . . 198

Digitized by Google

Նշանակ և աւեր մրրկի 'ի կղզին Գուադելուպ . . 200
Թաթառ . . . . . . . 201
Ժայթումն Վեսուվի . . . . . 204
Կորուստ նաւատորմին և զօրաց Տիբերի յանձնառու-
թենէ նաւարկութեան . . . . 207
Նկարագիր կազմութեան նաւացն Վենետաց . 209

---

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆՔ

Սահման ճարտասանական և իմաստասիրական և
Պատուէրք առ այս . . . . . 210
Մարդ . . . . . . . . 214
Մահ . . . . . . . . 215
Զրուցատրութիւն . . . . . . 216
Ճշմարիտ արիութիւն . . . . . 217
Մոլար բարեպաշտութիւն . . . . 218
Փառասիրութիւն . . . . . . 219
Առաքինութիւն և ախտ, գործունէութիւն և ան-
գործութիւն . . . . . . 222
Գիրք Յոբայ . . . . . . 225
Աւետարանք . . . . . . 226

---

## ԱՌԱԿՔ ԵՒ ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

Նպատակ և նկարագիր առակի
և Պատուէրք առ այս . . . . 229
Գայլ և Գառն . . . . . . 230
Աղուէսք երկու . . . . . . 231
Արջ և կորիւն իւր . . . . . . 232

Digitized by Google

Պատանին Բաքոս և Պայ. . . . . 232
Կապիկ . . . . . . . 233
Բու . . . . . . . . 235
Վիշապ և Աղուէսք . . . . . 236
Առասպել և Այլաբանութիւն . . . . 237
Ոգիք . . . . . . . . 239
Ամփիարիոս և Ուղեկիցք իւր . . . . 241
Մահ և ընկերք իւր առ գահոյիւք Պլուտոնի . 242
Այլաբանութիւն քարայրի . . . . 243

---

## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆՔ

Բարոյական գիտութեան գերազանցութիւն է միակ ուսումն արժանաւոր իմաստնոյ . . 248
Աստուած աղբիւր լուսոյ և զօրութեան . . 251
Ծանօթութիւն Աստուծոյ 'ի բնութենէ . . 253
Թէ փոփոխական է ամենայն բաց յԱստուծոյ . 255
Սքանչելիք Աստուծոյ . . . . . 257
Տեսչութիւն Աստուծոյ 'ի պատմութենէ . . 259
Կարևորութիւն աղօթից . . . . . 262
Զօրութիւն աղօթից . . . . . 264
Բազմապատիկ օգտակարութիւնք քրիստոնական կրօնից . . . . . . . 265
Հաւատ, Յոյս և Սէր . . . . . 267
Բարեգործութիւն . . . . . . 270
Առաքինութիւն և Մոլութիւն . . . . 272
Գիտակցութիւն . . . . . . 273
Խիղճ մտաց . . . . . . . 275
Յետին դատաստան . . . . . 277
Ներկայն և Ապառնին . . . . . 279
Գերեզմանք . . . . . . . 280



Digitized by Google

Երջանկութիւն առաքինեաց յԵլիսեան դաշտին . 281
Մահ Աղեքսանդրի . . . . . . 284
Սէր հայրենեաց . . . . . . 286
Սրբազան պերճախօս . . . . . 290
Թագաւոր . . . . . . . 292
Աշխարհակալ . . . . . . 293
Աղէտք մարդահաճութեան . . . . 294
Նախամեծար են գիւղական կեանք քան զքաղա-
քացւոցն . . . . . . 296
Աքսորեալն . . . . . . . 298

---

## ՆԿԱՐԱԳԻՐՔ
## ԿԵՆԴԱՆԱԳԻՐՔ ԵՒ ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

Պատուէրք . . . . . . . 300
Ցոյնք ։ . . . . . . . 304
Աթենացիք . . . . . . . 305
Ցոյնք և Հռովմայեցիք . . . . . 306
Նկարագիր ազգին Սուեւաց . . . . 307
Օգոստոս և Կիննա . . . . . . 308
Կատիլինա . . . . . . . 311
Սիլլա . . . . . . . . 312
Զուգակշիռ Կեսարու և Կատոնի . . . 314
Պոմպէոս . . . . . . . 314
Պատանեկութիւն Ցուգուրթայ . . . 315
Մարիոս . . . . . . . 316
Աղեքսանդր . . . . . . . 317
Պերիկլէս . . . . . . . 319
Ալկիբիադ . . . . . . . 324
Աննիբաղ . . . . . . . 327
Պիղմալիոն . . . . . . . 329

Digitized by Google

| | |
|---|---|
| Սաւուղ | 330 |
| Քրոմուէլ | 332 |
| Լուդովիկոս ԺԲ | 333 |
| Քոլպէր | 335 |
| Զուգակշիռ Գոնտէի և Թիւրէնի | 336 |
| Նափոլէոն Մեծն | 338 |
| Հոմերոս | 340 |
| Եսքիլոս | 342 |
| Եսքիլոս, Սոփոկլ և Եւրիպիդէս | 346 |
| Իպոկրատ կամ Ստոյգ բժիշկ | 352 |
| Հերոնիմոս, Աւգոստինոս և Կոստանդին | 359 |
| Կարտեսիոս | 330 |

---

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՔ

| | |
|---|---|
| Վասն խորամանգութեան | 363 |
| Վասն զօշաքաղութեան | 364 |
| Վասն ագահութեան | 366 |
| Վասն ամբարհաւաճութեան | 367 |
| Վասն չարախօսութեան | 368 |
| Բարի Թագաւոր | 370 |
| Բռնաւոր | 371 |
| Այր բարկացող | 372 |
| Այր շողոքորթ | 374 |
| Երիքթոն կամ Գիւտ դրամոց | 374 |
| Մեծատունք աշխարհի | 376 |
| Աստուածամոռաց մեծատուն | 377 |
| Քահանայութիւն | 379 |

---

Digitized by Google

## ՆԱՄԱԿԱՆԻ


| | |
|---|---|
| Պատուէրք յաղագս Նամակագրութեան | 381 |
| Տիկին Սեվինեէ առ դուստրն իւր | 386 |
| Քրիստափոր Գոլոմպոս առ արքայն Սպանիոյ | 387 |
| Պլինիոս առ Տակիտոս | 391 |
| Սենեկա առ Լուկիլիոս | 392 |
| Յ. Յ. Ռուսսօ առ երիտասարդ ոմն որ խնդրէր բնականալ 'ի Մոնմորանսի զի օգտեսցի 'ի լուր դասախօսութեանց նորա | 396 |
| Պոմէլ առ Վոլթէռ յետ հասարակաց դժբախտութեան իւրեանց | 398 |
| Աննա որ Պուլէն առ այր իւր Հենրիկոս Ը. | 399 |
| Պետրոս Պեմպոյ առ Աւգոստինոս Ֆոլիէգգա 'ի Հռոմ | 401 |
| Տորկ. Թասսոյ առ Անտոն Գոստանդինի | 403 |
| Պետրոս Պեմպոյ առ եղբօրորդի իւր Կ. Պեմպոյ | 404 |
| Սերուիոս Սուլպիկիոս առ Կիկերոն | 404 |
| Կիկերոն առ Սերուիոս Սուլպիկիոս | 408 |
| Պլինիոս առ Բեբիոս | 410 |
| Պլինիոս առ Մարկելլինոս | 411 |
| Տ. Կիկերոն առ Տիրոն | 412 |
| Տ. Կիկերոն առ Մ. Մարիոս | 413 |
| Տ. Կիկերոն առ Սիլուիոս | 413 |
| Տ. Կիկերոն առ Պլանկիոս | 414 |
| Տ. Կիկերոն առ Տիրոն | 414 |
| Տ. Կիկերոն առ Տիրոն | 415 |
| Կ. Պլինիոս առ Փաբիոս Յուստոս | 416 |


Digitized by Google

## ՅԱՌԱՋԱԲԱՆՔ


Պատուէրք յաղագս Յառաջաբանութեան . . 417
Յառաջաբան ճառին որ ընդդէմ Կտեսիփոնի . 420
Յառաջաբան ճառին որ Յաղագս պսակին . . 423
Յառաջաբան Միլոնի ճառին . . . . 425
Յառաջաբան ճառին Ա. Լիկինիոսի Արքեայ քեր-
թողի . . . . . . . 428
Յառաջաբան ճառին որ վասն արքային Դիոտարայ . 430
Յառաջաբան երկրորդի Փիլիպպեան ճառին . 432
Յառաջաբան առաջին Կատիլինեան ճառին . . 434
Յառաջաբան Կ. Տակիտոսի Տարեգրացն . . 435
Յառաջաբան Կատիլինեան դաւակցութեան . 436
Յառաջաբան ճառին Հենրիկէի Մարքամու Գալլիոյ 439
Յառաջաբան ճառին Լուդովիկեայ Գուրպոնեան իշ-
խանին Գոնտէի . . . . . 441
Յառաջաբան ճառին Հենրիէտի Աննայի Անգղիոյ . 443
Յառաջաբան քարոզին Յաղագս օրէնակի մեծամե-
ծաց . . . . . . . . 446
Յառաջաբան Յաղթանակ կրօնից քարոզին . . 448
Յառաջաբան Հօրն Բրիտենեայ . . . , 449


---

## ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆՔ


Զուգաւորութիւն Իմաստասիրութեան ընդ Ճար-
տասանութեան . . . . . 451
Բանք Կատիլինայ առ իւրսն . . . . 453
Բանք Կատոնի ընդդէմ խորհրդոյն Կեսարու . 455
Աղէտք պատերազմաց . . . . . 460
Ծեր մի Սիրակուսացի զազատութենէ գերեաց . 461


Digitized by Google

Թէ ընտրելի է Թագաւոր խաղաղասէր քան զաջո-
ղակն միայն 'ի մարտս . . . . 463
Թագաւորի չէ բաւական զինուորական առաքինու-
թիւն եւեթ . . . . . . 466
Դիմոսթէն յաղագս պսակին . . . . 467
Դիմոսթէն յաղագս պսակին . . . . 469
Ատենաբանութիւն Սոկրատայ . . . . 470
Եսքինէս ընդդէմ Կտեսիփոնի . . . . 472
Կալավիոս շրջէ զորդին յանագորոյն խորհրդոց . 473
Յանպատրաստից ատենաբանութիւն Կրասոսի 'ի
ջատագովութիւն Պլանկիոսի . . . 474
Գերմանիկեայ և Արմինիոսի քաջալեր առ բանակս
իւրեանց . . . . . . 475
Կիկերոնի ջատագովութիւն Պլանկիոսի . . . 477
Բանախօսութիւն Վիբիոսի Վիրիոսի ընդդէմ .
որոշման ծերակուտին Կապուայ . . . 478
Կեսար խրախուսէ զզօրսն չերկնչել 'ի պատերազմե-
լոյ ընդ Գերմանացիս . . . . 479
Բանք Արիովիստայ զօրավարին Գերմանացւոյ առ
Կեսար . . . . . . . 481
Ատենախօսութիւն Մինուկիոսի . . . 483
Կիկերոն ընդդէմ Վերրեսի . . . . 483
Կիկերոն վասն Կ. Լիգարիոսի . . . . 485
Կիկերոն ընդդէմ Անտոնիոսի . . . . 486
Մեկիպսա հոգեվար առ Յուգուրթա . . . 487
Պատասխանի Տիբերի առ բողոք ծերակուտին զզեղ-
խութենէ աւագանւոյն . . . . 488
Խօսք Գերմանիկեայ առ զօրս իւր 'ի մեկնել Ագրիպ-
պինեայ առ 'ի նմանէ . . . . . 491
Մ. Տերենտիոս վասն բարեկամութեան ընդ Սէա-
նոսի ամբաստանեալ, պատասխանի տայ
վասն անձին . . . . . . 493
Դամբանական յիշխանն Գոնտէ . . . 495

Յաղագս վանդից բարեպաշտութեան մեծա֊մեծաց . . . . . . . 496

---

## ՎԵՐՋԱԲԱՆՔ

Պատուէրք յաղագս Վերջաբանութեան . . 498
Վերջաբան քարոզին՝ Յաղագս փորձութեանց մե֊ծամեծաց . . . . . . 501
Վերջաբան քարոզին՝ Յաղթանակ կրօնից . . 502
Վերջաբան քարոզին՝ Յաղագս սնոտութեան մարդ֊կային փառաց . . . . . 506
Վերջաբան քարոզին՝ Յաղագս թէ 'ի սիրոյ մեծա֊մեծաց զինչ արգել լինիցի առաքինութեան . 508
Վերջաբան դամբանականին Գոնտէի . . . 509
Վերջաբան ճառին որ վասն արքային Դիոտարայ . 512
Վերջաբան ճառին որ վասն Արքիայ քերթողի . 515
Վերջաբան ճառին որ ընդդէմ Մ. Անտոնիոսի . 516
Վերջաբան Միլոնի ճառին . . . . 519

Digitized by Google